

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

ՀԱՏՈՐ XII

ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 347.99

ԳՄԴ 67.410

Հ 247

Կազմողներ՝

Աշխեն Ղարսյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության պետ,
իրավագիտության թեկնածու

Կարեն Հակոբյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ,
իրավագիտության թեկնածու

Նանե Սահակյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

Սոնա Եսայան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական
փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ

Օքսանա Դիլբանդյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջատար
մասնագետ

Արտաշես Հարությունյան, ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության առաջին կարգի
մասնագետ

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ: ՀՈՒՆՎԱՐ-
ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018, ՀԱՏՈՐ XII.- Եր.: «ԹԱՍԿ» ՍՊԸ, 2020.- 768 էջ:

ՀՏԴ 347.99

ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-1-1085-1

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2020

Partnership for good Governance Գործընկերություն հանուն լավ կառավարման

Funded
by the European Union
and the Council of Europe



Implemented
by the Council of Europe

Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2018 թ. որոշումների ընտրանու տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի մի մասի շրջանակներում: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով 2018 թ. որոշումների ընտրանիում ներկայացված տեսանկյունները որևէ պարագայում չեն կարող համարվել Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսանկյան արտահայտում:

ՆԱԽԱԲԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններով նորովի կարգավորվեց Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանի՝ Վճռաբեկ դատարանի դերը և գործառնությունը դատական իշխանության համակարգում: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: ՀՀ Սահմանադրության վկայակոչված դրույթն ուժի մեջ մտավ 2018 թվականին՝ իր հերթին պայմանավորելով քաղաքացիադատավարական և վարչադատավարական օրենսդրությունների համապատասխան փոփոխությունները: 09.02.2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 23.03.2018 թվականի ՀՕ-212-Ն օրենքով նորովի կարգավորվեց վճռաբեկության վարույթը քաղաքացիական և վարչական գործերով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նպատակներին համահունչ օրենսդիր փոփոխության ենթարկեց վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը՝ որոշակիորեն սահմանափակելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու իրավական հնարավորությունը, քաղաքացիական գործերով առանձին դեպքերում ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանափակվեց նաև վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքը, նախատեսվեց հատուկ կարծիքի հրապարակման կառուցակարգ, վճռաբեկ բողոքների քննության գրավոր ընթացակարգը լիարժեք ծավալով ներդրվեց քաղաքացիական արդարադատության համակարգ, Վճռաբեկ դատարանի նախագահին վերապահվեց ենթակայության և ընդդատության վեճերի լուծման իրավասություն, էական փոփոխությունների ենթարկվեց նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով գործերի վերանայման վարույթը:

Վերոգրյալ փոփոխությունների արդյունքում մեկ անգամ ևս ընդգծվեց Վճռաբեկ դատարանի առանձնահատուկ դերը և նշանակությունը դատական իշխանության համակարգում. Վճռաբեկ դատարանն իրավունքի դատարան է, ինչը նշանակում է, որ դատական այս ատյանի կողմից պետք է քննության առնվեն այնպիսի գործեր, որոնցով իրավական ասելիքի անհրաժեշտություն կա՝ օրենքի միատեսակ կիրառություն կամ իրավունքի զարգացում ապահովելու առումներով: Միակ բացառությունն այս ընդհանուր կանոնից նախատեսվել է այն դեպքի համար, երբ տեղի են ունեցել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը: Վճռաբեկ բողոքների քննության և լուծման կապակցությամբ կայացվող որոշումները ոչ միայն էական նշանակություն ունեն տվյալ գործով իրավական վեճի լուծման, գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով, այլև այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ուղենիշային նշանակություն ունեն նույնանման փաստերով այլ գործերով արդարադատություն իրականացնելիս: Վճռաբեկ դատարանն իր առանձնահատուկ գործունեությամբ ոչ միայն ապահովում է բուն արդարադատության գործառնության իրականացումը, այլև նպաստում է Հայաստանի Հանրապետությունում նախադեպային մշակույթի կայացմանը և զարգացմանը: Այսօր արդեն անվիճելի է, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներն ազդակ են հանդիսանում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավասություն ունեցող մարմին-

ների համար ներկայացնելու օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ: Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կարևորությունը տեսանելի է նաև վարչական վարույթի շրջանակներում, ավելին՝ մի շարք դեպքերում Վճռաբեկ դատարանն ընդգծել է այդ վարույթների արդյունավետությունը բարձրացնելու գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը: Հատկանշական է Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների դերի բարձրացումն իրավագիտության ֆակուլտետներ ունեցող բուհերի ուսումնական գործընթացում, երբ տարբեր առարկայական դասընթացների ծրագրերի պարտադիր բաղկացուցիչ մասն են կազմում Վճռաբեկ դատարանի որոշումները:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում նախադեպային մշակույթի զարգացմանն ուղղված կարևորագույն քայլերից էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բարձր դատարանների ցանցին Վճռաբեկ դատարանի անդամակցումը, որը հնարավորություն է տալիս Վճռաբեկ դատարանին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին առնչվող սկզբունքային հարցերով ստանալ և փոխանակել անհրաժեշտ տեղեկատվություն: Երկխոսության այս ձևաչափը նպաստելու է նախադեպային իրավունքի ներդաշնակեցմանը՝ միաժամանակ կանխելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին հակասող մեկնաբանությունների կիրառումը:

Նախադեպային մշակույթի կայացման հարցում կարևոր նշանակություն ունեն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների ընտրանիները: Այսօր արդեն ընթերցողի դատին է հանձնվում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների թվով 12-րդ ընտրանին, որը ներառում է նախաբան, բովանդակություն, գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների համառոտագրումները՝ ըստ իրավական ինստիտուտների, այդ որոշումների ամբողջական տեքստերը, և լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը: Մույն ընտրանու նորամուծությունը կայանում է նրանում, որ պայմանավորված քաղաքացիադատավարական և վարչադատավարական օրենսդրությունների փոփոխություններով՝ ընտրանին ներառում է նաև 2018 թվականի ընթացքում հրապարակված հատուկ կարծիքները:

2018 թվականն առանձնացել է գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) բազմաթիվ որոշումների ընդունմամբ, որոնք, անշուշտ, ուղղված են միասնական դատական պրակտիկայի ապահովմանը և իրավունքի զարգացմանը:

Քաղաքացիական գործերով հատկապես պետք է առանձնացնել գործարքների անվավերության, ընտանեկան իրավունքի, աշխատանքային իրավունքի, սնանկության ինստիտուտի որոշ խնդրահարույց հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները: Մասնավորապես, գործերից մեկով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին: Իսկ եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով: Ուշագրավ է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում գոր-

ծառքով կողմերից յուրաքանչյուրի ստացածը վերադարձնելու առանձնահատկություններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր կանոն գործարքի անվավերության հետևանքների վերաբերյալ, այն է՝ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքերի համար, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է: Նման դեպքերում կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Որպես բացառություն՝ օրենսդիրն ինքնին նախատեսել է գույքից օգտվելը, այսինքն՝ կողմը, որն անվավերությանը նախորդող ժամանակահատվածում օգտվել է գույքից, որպես գույքից օգտվելը բնեղենով վերադարձնելու անհնարինություն՝ պարտավոր է հատուցել գույքից օգտվելու արժեքը: Փաստորեն, գույքի օգտագործման պայմանագրերի դեպքում «գործարքով սրացածը» հասկացությունը ենթակա է ավելի լայն մեկնաբանման: Նման մեկնաբանության պայմաններում «գործարքով սրացածը» նշանակում է ոչ միայն գործարքով ստացված գույքը բնեղենով, այլ նաև գույքի օգտագործման ողջ գործընթացը ներառյալ, հակառակ դեպքում՝ նշված հասկացությանը տրված ոչ համապատասխան մեկնաբանումը կարող է խեղաթյուրել իրավական նորմի բուն էությունը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձատուրն իրավունք ունի պահանջել գույքը բնեղենով, ինչպես նաև որպես վարձակալության պայմանագրի անվավերության հետևանք գույքի փաստացի տիրապետման ամբողջ ժամանակահատվածի համար գույքից օգտվելու արժեքը՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Ուղղորդող նշանակություն ունեն նաև ընտանեկան իրավունքի առանձին հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավական խնդրին, թե արդյոք ամուսինների միջև կնքված համաձայնությունը, որի առարկան հստակ չէ, կարող է հիմք հանդիսանալ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքում ամուսիններից մեկի իրավունքի դադարման համար: Զարգացնելով ամուսինների համատեղ սեփականության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես ամուսնական պայմանագրի, այնպես էլ ամուսնալուծվելիս կնքված համաձայնության առարկան պետք է լինի հստակ՝ նկատի ունենալով, որ երկուսն էլ գործարք են՝ ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն, ուստի կնքված համարվելու համար պետք է ունենան հստակ առարկա: Այլ կերպ ասած, եթե ամուսնալուծվելիս համաձայնությամբ ամուսինները որոշում են ընդհանուր գույքը բաժանել, ապա հստակ պետք է լինեն գույքը և ամուսինների բաժինները, կամ եթե կնքվում է ամուսնական պայմանագիր, ապա հստակ պետք է լինի ամուսինների կամքը, մասնավորապես՝ սահմանելու համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականությունը՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Հետևաբար, եթե ամուսինների միջև կնքված համաձայնությունը միանշանակորեն հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս առարկան, այն չի կարող հիմք հանդիսանալ ամուսիններից մեկի սեփականության իրավունքի դադարման համար:

Աշխատանքային իրավունքի առանձին հարցեր արդիական էին նաև 2018 թվականի ընթացքում: Հարկ է առանձնացնել այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադար-

ձել է այն հարցին, թե արդյոք աշխատանքային պայմանագրով պետք է սպառիչ սահմանվեն աշխատողի աշխատանքային գործառնությունները: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ չնայած աշխատանքային պայմանագրով հիմնական գործառնությունները կամ դրանց բնույթը (պաշտոնի սահմանման եղանակով) պետք է սահմանված լինեն, այդուհանդերձ, դա չի բացառում, որ աշխատողի վրա կարող են դրվել նաև այլ պարտականություններ, որոնք բխում են վերջինիս պաշտոնի բնույթից, գործատուի ներքին կարգապահական կանոններից կամ օրենսդրությունից:

Մեկ այլ գործով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համայնքի աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության հետևանքով հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը որոշելիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն օժտված չէ լիակատար հայեցողությամբ, այլ սահմանափակված է օրենսդրի սահմանած նախապատվության որոշակի կանոնները պահպանելու պարտականությամբ: Այլ խոսքով՝ համայնքային ծառայության հաստիքների կրճատման պարագայում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համապատասխան կրճատված հաստիքում աշխատող համայնքային ծառայողին այդ հաստիքից ազատելիս միաժամանակ պարտավոր է նաև քննարկել նախապատվության իրավունքով նրան նոր առաջացած հաստիքում աշխատանքի թողնելու հարցը և նախապատվության իրավունքի ու դրա պայմանների առկայության դեպքում նրան նշանակել նոր առաջացած պաշտոնում: Նույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև աշխատանքից ազատելու վերաբերյալ ծանուցման ընթացակարգի առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ աշխատանքից ազատելու ծանուցումը տրամադրվում է աշխատանքային հարաբերությունների առկայության պայմաններում՝ նկատի ունենալով, որ աշխատողը դեռևս նույն գործատուի մոտ կատարում է աշխատանք, ստանում աշխատավարձ, հնարավորություն ունենում կատարվող աշխատանքին զուգահեռ փնտրել այլ աշխատանք, ինչը չէր կարող ապահովվել, եթե հաստիքն արդեն կրճատված լիներ կամ գոյություն չունենար: Այլ կերպ ասած՝ աշխատողին ծանուցում տրվում է այն ժամանակ, երբ գործատուն որոշում է աշխատակազմում կատարել փոփոխություններ, որոնք ապագայում հանգեցնելու են կամ կարող են հանգեցնել հաստիքների կրճատման:

Հաշվետու տարվա ընթացքում կրկին արդիական էին սնանկության վարույթին առնչվող հարցերը: Այսպես, ուշագրավ է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք սնանկության գործով միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրությունը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված միջոցների ամբողջ գումարը, թե միայն պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված չափը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կառավարչի վարձատրության չափն անմիջականորեն կախվածության մեջ է գտնվում միայն պարտատերերի բավարարված պահանջների չափից, և վարձատրության չափը որոշելիս պետք է պարզել, թե որ պարտատերերի պահանջներն են բավարարվել և ինչ չափով: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նկատի ունենալով, որ ի սկզբանե կառավարչին հայտնի են միայն պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված միջոցների գումարը և վարչական ծախսերի չափը, իսկ գրավադրված գույքի դեպքում՝ միայն դրա պահպանման և փոխանցման հետ

կապված ծախսերի չափը, ապա այդ միջոցներից պետք է հանել համապատասխան վարչական ծախսերը: Դրանից հետո ստացված գումարի մի մասը պետք է ուղղվի պարտատիրոջ պահանջների բավարարմանը և կառավարչի վարձատրությանը: Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը համապատասխան բանաձևի կիրառմամբ ցույց է տվել, թե գործնականում ինչպես պետք է իրականացվի կառավարչի վարձատրության հաշվարկը:

Ուշագրավ է նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սնանկության գործով կառավարիչը պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի վճարում, կառավարչի վարձատրություն և ապահովված պարտատիրոջ պահանջների ամբողջությամբ բավարարում չկատարելու պայմաններում իրավասու է այդ միջոցներն ուղղելու այլ վճարների կատարմանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ քանի դեռ չեն վճարվել պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները, այլ պահանջների բավարարում կամ ծախսերի հատուցում (այդ թվում՝ կառավարչի օգնականի վարձատրություն) չի կարող իրականացվել:

Հիշատակման է արժանի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը սնանկության ժամանակավոր կառավարչի կողմից բողոքարկվելու իրավական հնարավորությանը: Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ թեև ընդհանուր կանոնի համաձայն՝ սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը, սակայն այդ սահմանափակումը չի վերաբերում այն դեպքին, երբ վճիռն ուղղակիորեն վերաբերում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին, մասնավորապես՝ վերջինիս վարձատրություն ստանալու իրավունքին: Ընդ որում, անգամ այդ դեպքում սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել վճիռը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայության կամ բացակայության հիմքով: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն հարցին, թե արդյոք առաջանում է սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության հարց այն դեպքերում, երբ սնանկության հիմքերի վերանալու պայմաններում կայացվել է սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանի անվճարունակությունը դադարելու կամ սնանկության հիմքերը վերանալու դեպքերում սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ կայացնելու պայմաններում սնանկության ժամանակավոր կառավարչին վարձատրություն վճարելու պարտականությունը դրված է պարտապանի վրա, իսկ սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունքն էլ չի կարող սահմանափակվել որևէ հիմքով՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը վարձատրության իրավունքը սահմանելիս այն կախվածության մեջ չի դրել որևէ հանգամանքից: Ընդ որում, այդ դեպքերի համար Վճռաբեկ դատարանը կիրառելի է համարել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այն մասին, որ երբ տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակվել է այլ անձ, ժամանակավոր կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է պարտապանի հաշվին՝ վերջին տարում պարտապանի տնօրենի տարեկան վաստակի 1/12 չափով:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել նաև

այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում որպես անվիճելի վճարային պարտավորություն կարող է դրվել օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունն այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինը նշված գումարները պարտապանից բռնագանձելու վերաբերյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշում չի կայացրել և նշված որոշումը չի դարձել անբողոքարկելի: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առանց նման որոշման կայացման և դրա՝ անբողոքարկելի դառնալու, համապատասխան պետական մարմինը չի կարող վկայակոչել պարտապանի՝ հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտավորության անվիճելիությունը:

Ուշադրության են արժանի նաև հաշվետու տարում քաղաքացիական դատավարության տարբեր խնդրահարույց հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումները: Մասնավորապես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողների կնքած պայմանագրերով նախատեսված արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում վեճը դատարան հանձնելու իրավունքի իրացման նախապայմաններին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողի՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքը չի կարող կրել սահմանափակումներ, և այդպիսի վեճը, եթե վերջինիս կողմից հանձնվել է դատարանին, պետք է ըստ էության քննվի՝ չնայած կնքված պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցապահանջի հիման վրա հարուցված գործի ընդդատության վերաբերյալ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ այն վարչական մարմինը, որի ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձանց պատճառվել է ոչ նյութական վնաս: Քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն այդ վարչական մարմնի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման, այն է՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պարտականությունն է, որը ծագում է պատշաճ վարչարարության ապահովման միջոցով մարդու հիմնարար իրավունքների երաշխավորված իրացմանն ուղղված հանրային շահի կենսագործման կապակցությամբ: Հետևաբար ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունից բխող վեճերն ընդդատյա են վարչական դատարանին և ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2018 թվականը հատկանշական էր նաև վարչական գործերով կայացված որոշումներով: Այսպես, գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ

մասով, եթե շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքը կատարվել է առաջին անգամ ինքնական շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո: Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը շենքերի և շինությունների ինքնական կառուցման կատարումը շարունակելու գանգակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացումը չի պայմանավորել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են, օրինակ, (ա) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված տուգանքի վճարված լինելը կամ չլինելը, (բ) այդ տուգանքի վճարումից հետո անցած ժամանակի տևողությունը, (գ) շենքեր և շինություններ ինքնական կառուցման կատարումը շարունակելու արարքի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված անձի» կողմից կատարված լինելը կամ չլինելը:

Ուշագրավ է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ճարտարապետահատակագծային առաջադրանքի վարչական ակտ լինելու և վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով անվավեր ճանաչվելու հարցերին: Վճռաբեկ դատարանը, վերլուծելով շինարարության թույլտվություն ստանալու գործընթացը կարգավորող մի շարք իրավադրույթներ, ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) դիտարկելով շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի համատեքստում, գտել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ չէ, քանի որ այն չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի բոլոր հատկանիշներին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է ոչ թե դրա տրամադրմանն ուղղված ինքնուրույն վարչական վարույթի, այլ՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվելիք վարչական ակտի՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի փուլերից մեկն է, և ի տարբերություն շինարարության թույլտվության՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը չի հետապնդում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ: Հետևաբար ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի կարող անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով:

Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել հարկային իրավունքի որոշ խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Այսպես, հիշատակման է արժանի այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե կարող է արդյոք աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպվելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ առաջադրվել օրենքով սահմանված լրացուցիչ հարկային պարտավորություն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտի և որպես չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի միջև գոյություն ունեն ոչ թե աշխատանքային, այլ քաղաքացիական իրավահարաբերություններ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) նկատմամբ նախկինում գործող «Եկամտային հարկի

մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ այդ կազմակերպության և որպես չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի միջև առկա իրավահարաբերությունները համապատասխանում են աշխատանքային հարաբերությունների՝ թիվ ՎՆ/3580/05/15 գործով 07.04.2018թ. որոշմամբ բացահայտված հատկանիշներին:

Մեկ այլ գործով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել կենսաթոշակատուի անձը հաստատող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքացու անձնագրի, վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով այն պայմաններում, երբ անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը չի դադարեցվել: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ կերպով սահմանել է նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը դադարեցնելու հիմքերը: Նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցումն օրենսդիրը պայմանավորել է այնպիսի իրավաբանական փաստերի առաջացմամբ, ինչպիսիք են կենսաթոշակատուի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարումը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բանկ ներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն ստորագրելու պարտականությունը կենսաթոշակատուի կողմից չկատարվելը և այլն: Այսպիսով, կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը կարող է դադարեցնել նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերի բացակայության պայմաններում կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցումը ոչ իրավաչափ միջամտություն է կենսաթոշակատուի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավասու վարչական մարմնի կողմից, առանց օրենքով սպառիչ սահմանված հիմքերի առկայության, անձի կենսաթոշակի վճարումը դադարեցնելը ոչ իրավաչափ վարչարարության դրսևորում է, որը խախտում է կենսաթոշակատուի սեփականության իրավունքը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձին հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերի շարքում օրենսդիրը չի նախատեսել կենսաթոշակատուի անձը հաստատող փաստաթղթերի, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելը, հետևաբար այդ հիմքով կենսաթոշակի վճարումը դադարեցնելն ոչ իրավաչափ է:

Ուշագրավ են նաև վարչական դատավարության առանձին հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Այսպես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք կարող է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ օրենսդրությամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերադրադրությունը վարչական դատարանում համարվել թույլատրելի ապացույց ճանապարհապարե-

կային ծառայության իրականացման ընթացքում հայտնաբերված երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը հաստատելու համար: Վճռաբեկ դատարանը ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման պահանջների վերլուծության հիման վրա գտել է, որ նման տեսագրությունն ապացուցողական ուժ չունի և չի կարող դրվել դատական ակտի հիմքում:

Առանձնահատուկ նշանակություն ունեն այն որոշումները, որոնց շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ծախսերի բաշխմանն առնչվող որոշ խնդրահարույց հարցերի: Մասնավորապես, որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով, եթե վարչական գործի վարույթը կարճվում է այդ գործի քննության ընթացքում վարչական մարմնի նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով: Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճն սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, սակայն վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով: Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը քննարկել է պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա դնելու իրավաչափությունն այն դեպքում, երբ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվել է ի վնաս հայցվորի: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու դեպքում վարչական մարմնի կրած այդ դատական ծախսը չի կարող դրվել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա: Նման իրավիճակում վերաքննիչ վարչական դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող վարչական մարմնի կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

Հարկ է առանձնացնել այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք միևնույն վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների հիման վրա հարուցված երկու գործերով վեճի իրավական հիմքերը նույնական են, եթե այդ գործերով հայցվորի կողմից վկայակոչվել են տվյալ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված տարբեր հիմքեր: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքից բխում է, որ վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է պարզել վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության

հարցը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հիմքերից կոնկրետ որն է հայցվորը վկայակոչելու որպես իր պահանջի իրավական հիմք: Հետևաբար միևնույն վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների հիման վրա հարուցված երկու գործերով վեճի իրավական հիմքերը նույնական են՝ անկախ այն հանգամանքից, որ այդ գործերով հայցվորի կողմից վկայակոչվել են տվյալ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված տարբեր հիմքեր:

Հիշատակման է արժանի նաև այն որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է արտահայտել վերաքննիչ դատարանի կողմից այնպիսի հիմքով դատական ակտ կայացնելու հնարավորության վերաբերյալ, որը քննության առարկա չի դարձվել վարչական դատարանում և վկայակոչված չէ վերաքննիչ բողոքում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով:

Ուշադրության են արժանի նաև 2018 թվականի ընթացքում միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները: Մասնավորապես, քաղաքացիական գործերով կայացված որոշումներից մեկում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու իրավական խնդրին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարագայում, երբ օրենսդիրն իրավունք է վերապահել տուժողին կամ նրա իրավահաջորդին օրենքով սահմանված կարգով ստանալ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական վնաս) փոխհատուցում, ապա նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է տրամադրել նաև երաշխիք, այսինքն՝ անհրաժեշտ է, որ հայցվորները դատարան դիմելիս ազատվեն հանցագործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից, այսպիսով՝ անհրաժեշտ է տրամադրել իրավական երաշխիքներ՝ տվյալ դեպքում պետական տուրքի վճարումից ազատելու եղանակով, ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար:

Հիշատակման է արժանի այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք վերաքննիչ դատարանը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս կաշկանդված է բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետով: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետի ընթացքում ցանկացած ժամանակ բողոք բերած անձն իրավագոր է կատարել բողոքում թույլ տված խախտումների վերացում՝ ներկայացնելով բողոքը բովանդակային առումով՝ որպես տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի մի-

ասնություն: Վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատավարական երկշաքաթյա ժամկետով և կրկին ներկայացված բողոքի կապակցությամբ իրավագոր է կայացնելու որոշում միայն այդ ժամկետն ավարտվելուց հետո:

Մեկ այլ գործով կայացված որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով կարող է արդյոք սահմանափակվել անձի դատական պաշտպանության իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորության բացակայությունը սահմանափակում է դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը: Մինչդեռ նման սահմանափակումը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն, ուստի այդ որոշումը ևս պետք է բողոքարկման ենթակա լինի:

Վարչական գործերով կայացված որոշումներից ուշագրավ է այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե արդյոք ֆիզիկական անձին մաքսային հայտարարագիր ներկայացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ վարչական մարմնի կողմից ներկայացված հայցը ենթակա է դատարանի քննությանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դնելու իրավասությունն օրենքով դատարանին վերապահված լինելու իրավական հիմք գոյություն չունի, հետևաբար ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն դնելու վերաբերյալ վարչական մարմինների կողմից ներկայացված հայցը ենթակա չէ քննության դատարանում:

Ուշադրության է արժանի նաև այն որոշումը, որում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերով հայցի ապահովման ինստիտուտի կիրառելիության հարցին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի տեսանկյունից հայցի ապահովման միջոց կիրառելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե տվյալ գործի հարուցման համար հիմք հանդիսացող հայցն ունի ճանաչողական, թե կատարողական բնույթ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե ներկայացված հայցապահանջների բնույթը, այլ հայցի ապահովման միջոց կիրառելու՝ օրենսդրի կողմից սահմանված հիմքերի առկայությունը, այսինքն՝ նման միջոցներ չձեռնարկվելու դեպքում դատական ակտի կատարումն անհնարին դարձնելու կամ դժվարացնելու հնարավորությունը:

Իհարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Լիաժողով եմ, որ սույն ընտրանին, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների հասանելիության և կիրառության ապահովմանը,

խթանելու է դատավորների և դատական ծառայողների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, իրավակիրառ հանրության այլ ներկայացուցիչների գործունեության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը: Ի վերջո, կարծում եմ, որ սույն ընտրանին լավագույնս կնպաստի հասարակության առջև Վճռաբեկ դատարանի հաշվետվողականության ու գործունեության թափանցիկության ապահովմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
Ե. Հ. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

Թիվ 12

Հունվար-դեկտեմբեր 2018

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ (ԵԶՐԱՓԱԿԻՉ)
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ.....	1
Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը.....	1
Գործարքներ.....	12
Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին	24
Պարտավորությունները դադարելը	24
Պայմանագրերից ծագող պարտավորություններ	35
Ապրանքների մատակարարում.....	35
Վարձակալություն	48
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	57
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	78
ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ	112

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Դատարան դիմելու իրավունքը.....	195
Գործերի ընդդատությունը	207

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչական պատասխանատվություն	225
Վարչարարություն և վարչական վարույթ	251
Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում	394

Հարկային իրավունք.....	410
Սոցիալական ապահովություն	441
Վարչարարությամբ պատճառված վնաս	453

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապացույցներ և ապացուցում.....	469
Դատական ծախսեր.....	481
Վարույթը վարչական դատարանում	509
Վարույթը վերաքննիչ դատարանում	525
Վարույթը վճռաբեկ դատարանում.....	536

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Դատական ծախսեր.....	550
Վարույթը վերաքննիչ դատարանում	569
Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը	605
Մնանկություն	617
Դատական ակտերի հարկադիր կատարում.....	638

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գործերի ընդդատությունը	647
Հայցի ապահովումը	657

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը

07.04.2018թ.

1. Մարի Դումաշյանը և մյուսներն ընդդեմ Վահագն Սահակյանի, քաղ. գործ թիվ էԶԳ/0056/02/13 էջ 1-11

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետո պահանջելու նախադրյալներին այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գույքը ձեռք է բերվել այն օտարելու լիազորություն չունեցող անձից:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքը ձեռք բերողը կարող է օրենսդրության տեսանկյունից դիտվել որպես բարեխիղճ ձեռք բերող, եթե գույքը ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ: Օրենսդիրն ամրագրել է այն երկնային դրույթը, որ այս պարագայում գույքը հետ չի կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որոշ նախապայմանների առկայության պարագայում, այնուամենայնիվ, հնարավորություն է նախատեսված նման գույքը հետ պահանջելու բարեխիղճ ձեռք բերողից, ինչը նպատակ է հետապնդում հավասարակշռելու նաև գույքի սեփականատիրոջ իրավունքները՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում հնարավոր է, որ գույքը վերջինիս տիրապետությունից դուրս եկած լինի անկախ սեփականատիրոջ կամքից: Այս պարագայում օրենսդիրն առաջնորդվել է այն դրույթով, որ սեփականատերը նպատակ չի ունեցել գույքը տնօրինելու օտարման եղանակով: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը սահմանել է, որ բարեխիղճ ձեռք բերողից սեփականատերն իրավունք ունի տվյալ գույքը պահանջելու հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը ձեռք է բերվել հատուցմամբ,
2. գույքը ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
3. գույքը ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,
4. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Վերահաստատելով թիվ 3-1311 (ՎԳ) քաղաքացիական գործով 05.09.2007 թվականի որոշմամբ հայտնած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ վերոգրյալ նախապայմանների միաժամանակյա առկայությունը բավարար է, որպեսզի սեփականատերը վերականգնի իր սեփականության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ գույք ձեռք բերողը հանդիսացել է բարեխիղճ ձեռք բերող: Հետևաբար նշված նախապայմանները պետք է քնննարկման առարկա դարձվեն և պարզվեն գործի քննության ընթացքում: Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ գույքն օտարելու լիազորության բացակայության դրսևորումներն օրենսդիրը հստակ չի թվարկել՝ դատարաններին հնարավորություն տալով այդ մասին հետևություններ անելու՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Մասնավորապես՝ այդ հանգամանքի մասին կարող են վկայել, օրինակ, գույքն օտարողի մոտ սեփականության իրավունքի բացակայությունը, սեփականատիրոջ անունից հանդես գալու լիազորության բացակայությունը և այլն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն իրավիճակին, երբ գույքն օտարվել է սեփականատիրոջ անունից հանդես եկող ներկայացուցչի կողմից, սակայն առանց բավարար լիազորությունների առկայության:

Վերահաստատելով թիվ ԼԳ/0423/02/08 քաղաքացիական գործով 13.03.2009 թվականի որոշմամբ հայտնած դիրքորոշումը լիազորագրի բնույթի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ լիազորագիրը՝ որպես միակողմ գործարք, նախևառաջ հանդիսանալով կամային ակտ՝ պետք է համապատասխանի լիազորողի ներքին կամքին: Հետևաբար այն պարագայում, երբ լիազորագրում արտացոլված բովանդակությունն իրականում չի համապատասխանում լիազորողի ներքին կամքին, այսինքն՝ լիազորողը նման կամահայտնությամբ

հանդես չի եկել, ապա լիազորագրի հիման վրա կատարված գործողություններին գնահատական տալիս պետք է հաշվի առնել նշված հանգամանքը: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև այն հանգամանքից, որ ներկայացուցչի կողմից ներկայացվողի անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար, ուստի եթե լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին, այսինքն՝ ներկայացվողը նպատակ չի հետապնդել առաջացնելու լիազորագրում նշված իրավահարաբերությունները, ապա նպատակ չի հետապնդել նաև դրա հիման վրա կնքելու գործարք: Այլ կերպ ասած, երբ վիճարկվում է լիազորագրի հիման վրա կնքված գործարքն այն հիմնավորմամբ, որ ներկայացվողի անունից ներկայացուցիչը բավարար լիազորություններ չի ունեցել կնքելու նման գործարք, ապա դատարանի կողմից գնահատման առարկա պետք է դարձվի նաև լիազորագրի բովանդակությունը և այն հանգամանքը, թե վերջինս որքանով է համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին և արտացոլում վերջինիս արտաքին կամահայտությունը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված հանգամանքները ենթակա են պարզման գործի դատական քննության ընթացքում, ինչն իրականացնելու համար դատարաններն օժտված են համապատասխան լիազորություններով՝ արտացոլված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ապացույցների գնահատման վերաբերյալ համապատասխան նորմերով:

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ լիազորագրերը ձեռք է բերվել խաբեությամբ, ուստի լիազորողներն իրականում նպատակ չեն ունեցել օտարելու բնակարանը: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որն ունի նախադատելի նշանակություն, արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանել ներկայացվողների իրական կամքին, որպիսի պայմաններում լիազորագրերը վիճարկելու պարտականությունն անհարկի կարող է ծանրաբեռնել կողմին՝ ստեղծելով ձևական արգելքներ և անհարկի ձգձգումներ ողջամիտ ժամկետում գործի դատական քննության իրավունքի իրացման համար:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

06.07.2018թ.

2. Համբարձում Դավթյանն ընդդեմ «ԲՏԱ Ինվեստ Բանկ» ՓԲԸ-ի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0631/02/13

էջ

12-23

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքի առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով 17.07.2015 թվականի որոշմամբ գործարքի կնքման համար անհրաժեշտ ներքին կամքի և արտաքին կամահայտության համակցության վերաբերյալ, ինչպես նաև թիվ ԵԿԴ/1671/02/09 քաղաքացիական գործով 01.07.2011 թվականի որոշմամբ խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքների վերաբերյալ հայտնած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով արձանագրել է, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գործարք են կնքում որոշակի նպատակով և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են իրենց կամքը, որն էլ պետք է արտահայտվի առանց որևէ արտաքին ազդեցության, ուստի այն դեպքերում, երբ գործարք կնքող անձն ազատ չի արտահայտել իր կամքը, արտաքին ազդեցության հետևանքով նրա կամքը խաթարվել է, նա իրավունք ունի վիճարկել այդպիսի կամահայտությամբ կնքված գործարքը: Այդ տիպի գործարքներն անվավեր ճանաչելու հիմքն արտաքին հակաիրավական գործողությունների միջոցով անձին խեղաթյուրված կամք դրսևորելուն հասցնելու հետևանքով նրա կամքին չհամապատասխանող գործարք կնքելն է:

Նման գործարք է նաև խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքը: Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ խաբեությունը գործարքի կողմերից մեկի գիտակցաբար դրսևորած անբարեխիղճ

վարքագիծն է՝ ուղղված նրան, որ գործարքի մյուս կողմն իր համար ձեռնտու պայմաններով կնքի գործարքը: Գործարքի կնքման մեջ շահագրգռված, անքարեխիղճ կողմն իր մեղավոր գործողություններով մյուս՝ տուժող կողմի մոտ ստեղծում է իրականությանը չհամապատասխանող տպավորություն գործարքի էության, առարկայի, պայմանների վերաբերյալ՝ ազդելով նման գործարք կնքելու նրա որոշման վրա: Ընդ որում, եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով, քանի որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված որակելու համար անհրաժեշտ պայման է այն, որ գործարք կնքելիս տուժող կողմի կամքը խաթարված լինի գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) մեղավոր վարքագծի՝ այդ թվում և այլ անձանց միջոցով դրսևորված գործողությունների հետևանքով: Այսպիսով, գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցչի) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարտավորությունները դադարելը

07.04.2018թ.

3. Ռոբերտ Բեջանյանն ընդդեմ Հենրիկ Գևորգյանի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0527/02/15

էջ
24-34

Խնդիր. Արդյո՞ք այլ հիմքերից ծագած պարտքը փոխառության պարտավորությամբ փոխարինելու արդյունքում ձևավորված փոխառության իրավահարաբերություններում փոխառուն կարող է անփողության հիմքով վիճարկել փոխառության պայմանագիրը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ նորացմամբ պարտավորությունը դադարելու վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ նորացումը պարտավորության դադարման ինքնուրույն հիմք է, որը կնքվում է պարտավորական հարաբերությունների երկու կողմերի համաձայնությամբ և նախատեսում է պարտավորության այլ առարկա կամ դրա կատարման այլ եղանակ: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ պարտավորության նորացման դեպքում գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը դադարում է, այնուամենայնիվ, կողմերի միջև փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները չեն դադարում, քանի որ սկզբնական պարտավորության հիմքով նրանց միջև առաջ է գալիս նոր պարտավորություն: Ընդ որում, պարտավորության նորացումը պետք է ծագի միևնույն կողմերի միջև և պետք է տարբերվի սկզբնական պարտավորությունից այլ առարկայով կամ կատարման այլ եղանակով: Միաժամանակ օրենսդիրը սպառիչ սահմանել է այն պարտավորությունները, որոնց դեպքում նորացում չի թույլատրվում, դրանք են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և ալիմենտի վճարման պարտավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորության նորացման դեպքում, ի հավաստումն գործարքի կնքման փաստի, չի պահանջվում (կամ չի ենթադրվում) որևէ գույքի կամ դրամական միջոցի փոխանցում, այլ դրա կնքման համար անհրաժեշտ է կողմերի փոխադարձ կամահայտությունը տվյալ գործարքի բոլոր էական պայմանների շուրջ: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորացմամբ նախորդում է կողմերի միջև արդեն իսկ գոյություն ունեցող՝ առուվաճառքի, գույքի վարձակալությունից կամ այլ հիմքերից ծագած պարտավորությունը, որը նորացման փաստով դադարում է՝ փոխարինվելով պարտավորության այլ առարկայով կամ կատարման այլ եղանակով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ համաձայնությունը նորացում կարող է դիտվել ոչ միայն այն դեպքում, երբ այդպիսին սահմանված է ուղղակիորեն, այլ նաև այն դեպքում, երբ այն բխում է կողմերի ընդհանուր կամքից, որն իր հերթին ենթակա է բացահայտման՝ հիմք ընդունելով պայմանագրի մեկնաբանման կանոնները, հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառու-

թյան սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորության նորացման դեպքում չի պահանջվում (կամ չի ենթադրվում) որևէ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցի փոխանցում, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածը՝ անփոփոխության հիմքով փոխառության պայմանագիրը վիճարկելու վերաբերյալ, սույն իրավիճակների համար կիրառելի չէ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքների մատակարարում

17.09.2018թ.

4. «ԴԵԿՈՐՊՐՈՖ» ՍՊԸ-ն ընդդեմ «ԿՈՐՈՎ ԲԱԶՈՒԿ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0724/02/17

Էջ

35-47

Խնդիր. Արդյո՞ք մի կողմի՝ Էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված (հաստատված) հարկային հաշիվը կարող է դիտվել բավարար կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար, եթե այդ հաշվի վրա դրված է մյուս կողմի՝ այդ հաշիվն ստանալու փաստը հաստատող Էլեկտրոնային ստորագրությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները գործարքի ձևի, ինչպես նաև գործարքի կնքման համար անհրաժեշտ ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցության վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն ապրանքների մատակարարման պայմանագրի կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի մատակարար-վաճառողի դեպքում՝ իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքների մատակարարման պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Ընդ որում, օրենսդիրը, ապրանքների մատակարարման պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, միևնույն ժամանակ որևէ նշում չի կատարել այդ ձևը չպահպանելու հետևանքների մասին, որի դեպքում գործում է վերը նշված 1-ին կանոնը, որի համաձայն՝ կողմերը զրկված չեն վեճի դեպքում ի հավաստումն ապրանքների մատակարարման պայմանագրի և դրա պայմանների գրավոր ու այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Ավելին՝ օրենսդիրը նաև չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկը՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կարող է տեղեկություններ պարունակել և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ կառավարության կողմից սահմանվել են Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման վերաբերյալ համապատաս-

խան կարգեր: Ընդ որում, էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվ դուրս գրելու իրավասություն է վերապահվել օրենքի համաձայն ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն անձանց, ովքեր հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ: Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պետք է պարունակեն տվյալ տեսակի հաշվի համար պարտադիր համարվող տեղեկությունները, այդ թվում՝ համապատասխան գործարքի մասին տեղեկությունները, ունենան չկրկնվող և սահմանված կարգով գեներացված սերիալ ու համար, որը հաշիվը նույնականացնող հիմնական վավերապայմանն է, ինչպես նաև պարտադիր վավերացվեն (հաստատվեն) նման իրավասություն ունեցող առնվազն մեկ անձի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, լրացված հարկային հաշիվը չի կարող վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ, եթե դրանում լրացված չէ հարկային հաշվում պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ (վավերապայման): Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե հարկային հաշիվը վավերացված է (հաստատված է) էլեկտրոնային ստորագրությամբ, և եթե այլ բան ապացուցված չէ, ապա դա նշանակում է, որ հարկային հաշիվը պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, իսկ այն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրած և հաստատված անձինք նման իրավասություն ունեցող անձինք են, որոնց կողմից հարկային հաշիվը վավերացնելը և հաստատելը կարող է վկայել մատակարարման հարաբերություններ առաջացնելու կամահայտնության մասին:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մատակարարման գրավոր պայմանագիր կնքված չլինելու դեպքում մատակարարման հարաբերությունները կարող են հաստատվել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթով՝ պայմանով, որ վերջինս պարունակի մատակարարման հարաբերությունների առկայությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ և ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևին համապատասխան տեղեկությունները, վավերացված և հաստատված լինի ինչպես ապրանքներ մատակարարող անձի, այնպես էլ գնորդի՝ նման փաստաթղթերը վավերացնելու կամ հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից, այդ թվում՝ վերջինիս էլեկտրոնային ստորագրությամբ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ **մատակարարման գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում մատակարարման հարաբերությունների համար էական համարվող պայմանների՝ կողմերի, ապրանքների անվանման, քանակի, գնի, մատակարարման ժամկետի մասին տեղեկություններ պարունակող հաշվարկային փաստաթուղթը կարող է գնահատվել որպես մատակարարման հարաբերությունների առկայությունը հիմնավորող գրավոր ապացույց:**

Վարձակալություն

07.12.2018թ.

5. «Ալմաբար» ՍՊԸ-ն ընդդեմ «Մաքս Կոնցեռն» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2917/02/12

Էջ

48-56

Խոսիլոր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում գործարքով կողմերից յուրաքանչյուրի ստացածը վերադարձնելու առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր կանոն գործարքի անվավերության հետևանքների վերաբերյալ, այն է՝ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքերի համար, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է: Նման դեպքերում կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Որպես բացառություն՝ օրենսդիրն ինքնին նախատեսել է գույքից օգտվելը, այսինքն՝ կողմը, որն անվավերությանը նախորդող ժամանակահատվածում օգտվել է գույքից, որպես գույքից օգտվելը բնեղենով վերադարձնելու անհնարինություն՝ պարտավոր է հատուցել գույքից օգտվելու արժեքը: Փաստորեն, գույքի օգտագործման պայմանագրերի դեպքում «գործարքով սրացածը» հասկացությունը ենթակա է ավելի լայն մեկնաբանման: Նման մեկնաբանության պայմաններում «գործարքով սրացածը» նշանակում է ոչ միայն գործարքով ստացված գույքը բնեղենով, այլ նաև գույքի օգտագործման ողջ գործընթացը ներառյալ, հակառակ դեպքում՝ նշված հասկացությանը տր-

ված ոչ համապատասխան մեկնաբանումը կարող է խեղաթյուրել իրավական նորմի բուն էությունը:

Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Վարձակալության պայմանագրի դեպքում վարձակալի ստացածը դրսևորվում է վարձակալության պայմանագրով վարձատուի կողմից տրամադրված գույքից օգտվելով, որի վերադարձը ևս չի կարող արտահայտվել բնեղենով: Հետևաբար վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու դեպքում գույքն օգտագործողի կողմից գործարքով ստացածը վերադարձնելն անհնար է, քանի որ վարձակալության դեպքում գույքը հանձնվում է օգտագործման, ուստի գործարքով ստացածը դրսևորվում է գույքից օգտվելով: Այսինքն՝ վարձակալության դեպքում վարձակալը փաստացի օգտվում է պայմանագրի առարկա հանդիսացող գույքից, և անվավերության հետևանքներ կիրառելիս վերջինս պարտավոր է սեփականատիրոջը հատուցել այդ գույքի օգտագործման արժեքը:

Վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարձակալության պայմանագրի անվավերության հետևանքների կիրառումն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

1. *վարձակալության պայմանագրով վարձակալի ստացածը դրսևորվում է գույքի օգտագործմամբ, հերևաբար՝ այն բնեղենով վերադարձնելն անհնար է,*

2. *վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձակալը պարտավոր է սեփականատիրոջը հատուցել գույքից օգտվելու արժեքը,*

3. *վարձակալության պայմանագրով վարձակալի ստացածը՝ գույքից օգտվելու արժեքը, որոշվում է Իվյալ պահին շուկայում գործող ողջամիւր գնով:*

Վերջին պայմանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը բխել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի կանոններից: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 61-րդ գլխում նախատեսված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, այնուհետ է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է: Նշված դրույթը կիրառելի է նաև վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում, քանի որ օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է, որ մատնանշված գլխի դրույթները կիրառելի են անվավեր գործարքով կատարված վերադարձնելու պահանջների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով կամ չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական վերլուծությունները և վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձատուն իրավունք ունի պահանջել գույքը բնեղենով, ինչպես նաև որպես վարձակալության պայմանագրի անվավերության հետևանք գույքի փաստացի տիրապետման ամբողջ ժամանակահատվածի համար գույքից օգտվելու արժեքը՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

07.04.2018թ.

6. Սուսաննա Խաչատրյանն ընդդեմ Վիգեն Ասլանյան Ավանեյանսի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0779/02/10

էջ

57-77

Խնդիր. 1) Արդյո՞ք ամուսինների միջև կնքված համաձայնությունը, որի առարկան հստակ չէ, կարող է հիմք հանդիսանալ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքում ամուսիններից մեկի իրավունքի դադարման համար,

2) արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի օտարման պայմանագիրը կարող է հիմք հանդիսանալ բաժնեմասի նկատմամբ իրավունքի ծագման համար, եթե պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Զարգացնելով ամուսինների համատեղ սեփականության վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դա-

տարանը սույն գործով անդրադարձել է ամուսինների համատեղ սեփականության բաժանման հնարավորությամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամուսիններն իրենց համատեղ սեփականություն հանդիսացող գույքի կարգավիճակը կարող են փոփոխել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1) ամուսնական պայմանագիր կնքելով,

2) ամուսնալուծության ընթացքում ընդհանուր գույքի բաժանման մասին համաձայնություն կնքելով և այն դատարանին ներկայացնելով,

3) որպես ընդհանուր սեփականության մասնակիցներ՝ գույքը բաժանելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածների հիմքով:

Վճռաբեկ դատարանն առավել մանրամասնեցրել է 1-ին և 2-րդ հիմքերը՝ նկատի ունենալով, որ 3-րդ հիմքի դեպքում ամուսիններ լինելու հանգամանքը որևէ առանձնահատկություն չի առաջացնում ընդհանուր կանոնին համապատասխան գույքը բաժանելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ամուսնական պայմանագրով ընդհանուր գույքի կարգավիճակը որոշվում է արտադատական կարգով, այսինքն՝ ամուսինների միջև դատական վեճից անկախ: Մինչդեռ ամուսնալուծության ընթացքում ընդհանուր գույքի բաժանման մասին համաձայնություն կնքվում և հաստատվում է դատական կարգով: Տվյալ դեպքում դատարանը հաստատում է այդ համաձայնությունը, և ամուսինների ընդհանուր գույքը բաժանվում է արդեն դատարանի վճռի հիման վրա: Ամուսնական պայմանագրի դեպքում ամուսինները կնքում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պայմաններին համապատասխանող գործարք, որը ենթարկվում է նոտարական վավերացման: Ամուսնական պայմանագրի կարգավորման առարկան ավելի լայն է. այն կարող է նախատեսել ոչ միայն ընդհանուր գույքը բաժանելուն, այլ նաև գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած նորմեր:

Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ ինչպես ամուսնական պայմանագրի, այնպես էլ ամուսնալուծվելիս կնքված համաձայնության առարկան պետք է լինի հստակ՝ նկատի ունենալով, որ երկուսն էլ գործարք են՝ ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն, ուստի կնքված համարվելու համար պետք է ունենան հստակ առարկա: Այլ կերպ ասած, եթե ամուսնալուծվելիս համաձայնությամբ ամուսինները որոշում են ընդհանուր գույքը բաժանել, ապա հստակ պետք է լինեն գույքը և ամուսինների բաժինները, կամ եթե կնքվում է ամուսնական պայմանագիր, ապա հստակ պետք է լինի ամուսինների կամքը, մասնավորապես՝ սահմանելու համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականությունը՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Ընդ որում, առարկայի մասին դրույթը պարզելիս ամուսնական պայմանագիրը և ամուսնալուծվելիս կնքվող համաձայնությունը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Հետևաբար, եթե ամուսինների միջև կնքված համաձայնությունը միանշանակորեն հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս առարկան, այն չի կարող հիմք հանդիսանալ ամուսիններից մեկի սեփականության իրավունքի դադարման համար:

2) Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասն օտարել այլ մասնակցի կամ երրորդ անձի, սակայն բաժնեմասը ձեռք բերողի համար մասնակցության իրավունքը ծագած կհամարվի պետական գրանցման պահից: Ընդ որում, մասնակցի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բաժնեմասի չափը պետք է գրանցվի ինչպես իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում, այնպես էլ փոփոխությունը պետք է արտացոլվի ընկերության կանոնադրությունում: Ըստ այդմ՝ օրենսդրությամբ սահմանվում են այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են բաժնեմասի օտարումից ծագող փոփոխությունների գրանցման համար: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման կարգավորումն ինքնանպատակ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կանոնադրությունն ընկերության իրավական կարգավիճակը սահմանող կարևորագույն փաստաթուղթ է: Կանոնադրությունը կարգավորում է հիմնադիրների (մասնակիցների) ներքին փոխհարաբերությունները, դրանով սահմանվում են, մասնավորապես, ընկերության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակը և առարկան, կառավարման և վերահսկողության մարմինները, շահույթի բաշխման կարգը և այլն: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընկերության, ընկերության մասնակիցների, ընկերության կանոնադրության (նաև փոփոխությունների) գրանցումն ինքնանպատակ չէ: Բացի այն, որ պետական գրանցումը հնարավորություն է տալիս միասնական ամբողջական տեղեկատվություն հավաքել պետության տարածքում գործող իրավաբանական անձանց մասին, այն նաև հնարավորություն է տալիս հանրությանը՝ ամբողջական տեղեկություններ ստանալ իրավաբանական անձանց մասին: Դա հատկապես կարևորվում է

առևտրային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, այդ թվում՝ ընկերությունների համար, քանի որ վերջիններիս ապագա հնարավոր կոնտրագենտները հնարավորություն են ունենում տեղեկություններ ձեռք բերել իրենց ապագա գործընկերների մասին՝ բացահայտելով վերջիններիս գործունեության նպատակները, կառավարման մարմինների արդյունավետությունը, մասնակիցների շրջանակը, ինչը ոչ պակաս կարևոր է, քանի որ մասնակիցների շրջանակով պայմանավորված՝ ապագա կոնտրագենտները կարող են հրաժարվել պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել տվյալ իրավաբանական անձի հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ անկախ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կամ հնարավոր մասնակիցների ներքին հարաբերություններից, ներքին պայմանավորվածությունից՝ բաժնեմասը ձեռք բերող անձի իրավունքը ծագում է միայն ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու, ընկերության կանոնադրությունում փոփոխություն կատարելու և այն գրանցելու պահից:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

07.04.2018թ.

7. «ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՍՊԸ-ն ընդդեմ Գազիկ Հովհաննիսյանի, քաղ. գործ թիվ ԵԱԴԳ/3614/02/15

էջ

78-94

Խնդիր. 1) Արդյո՞ք աշխատանքային պայմանագրով պետք է սպառիչ սահմանվեն աշխատողի աշխատանքային գործառնությունները,

2) ինչ ձևով, եղանակով և կարգով կարող են գործատուի կողմից հանձնարարություններ տրվել աշխատողին,

3) ինչ պայմաններ են անհրաժեշտ աշխատողի նյութական պատասխանատվության համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ օրենսդիրն աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր բոլոր պարտականությունները, որոնք կարող են սահմանված լինել ինչպես օրենսդրությամբ կամ գործատուի ներքին իրավական ակտերով, այնպես էլ աշխատանքային պայմանագրով՝ այդ թվում նաև բարեխղճորեն կատարելով աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը՝ աշխատանքային գործառնությունները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ աշխատանքային գործառնությունների սահմանմանը: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պայմանավորված աշխատանքի տարբեր տեսակների առանձնահատկություններով՝ մի դեպքում աշխատանքային գործառնությունները հնարավոր է սահմանել հստակորեն և սպառիչ կերպով, մեկ այլ դեպքում հնարավոր է միայն սահմանել գործառնությունների որոշակի շրջանակ, որի դեպքում աշխատողի վրա կարող են դրվել սահմանված գործառնությունների համանման պարտականություններ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածը պարտադիր է համարում աշխատանքային պայմանագրում (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում) պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառնությունները նշելը: Այսինքն՝ անգամ հնարավոր է աշխատանքային գործառնությունները պայմանագրում ընդհանրապես չնախատեսել, որի դեպքում աշխատանքային պարտականությունները, որպես կանոն, սահմանվում են գործատուի ներքին իրավական ակտերով (օրինակ՝ տվյալ պաշտոնի նկարագիրը սահմանող իրավական ակտով): Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ չնայած աշխատանքային պայմանագրով հիմնական գործառնություններ կամ դրանց բնույթը (պաշտոնի սահմանման եղանակով) պետք է սահմանված լինեն, այդուհանդերձ, դա չի բացառում, որ աշխատողի վրա կարող են դրվել նաև այլ պարտականություններ, որոնք բխում են վերջինիս պաշտոնի բնույթից, գործատուի ներքին կարգապահական կանոններից կամ օրենսդրությունից:

2) Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձևին, եղանակին ու կարգին, նշել է, որ աշխատանքային պայմանագրի հասկացությունից հետևում է, որ աշխատողն աշխատանք է կատարում գործատուի

համար, այլ կերպ ասած՝ կատարում է գործատուի հանձնարարությունները: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձև, եղանակ կամ կարգ, ինչը տրամաբանական է, քանի որ չնայած աշխատանքային հարաբերությունների առանձնահատկություններին՝ աշխատանքային հարաբերություններում նույնպես գործում է պայմանագրի ազատության սկզբունքը, որը, ի թիվս այլոց, ենթադրում է պայմանագրի պայմանները որոշելու ազատություն: Հետևաբար նաև նշված հանգամանքի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձևը, եղանակը, կարգը սահմանափակված չեն: Այսինքն՝ գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ կարող են տրվել ցանկացած ձևով, եղանակով և կարգով, որպիսի հանգամանքը կարող է ապացուցվել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 47-րդ հոդվածով սահմանված ապացույցների տեսակներով:

Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ այդ հանձնարարությունների ոչ պատշաճ կատարման դեպքում գործում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հետևանքները, մասնավորապես՝ այն կարող է համարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով սահմանված աշխատանքային կարգապահության խախտում, որի դեպքում կարող են կիրառվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված տույժերը, ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել նաև աշխատողի նյութական պատասխանատվության:

3) Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները վստախ հատուցման պայմանների և աշխատանքային հարաբերություններում վստախ ինստիտուտի առանձնահատկությունների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով անդրադարձել է նաև աշխատողի նյութական պատասխանատվության սահմաններին՝ նշելով, որ աշխատանքային հարաբերություններում սահմանված է աշխատողի ոչ լրիվ ծավալով՝ սահմանափակ նյութական պատասխանատվություն, բացառությամբ օրենքով հստակ սահմանված դեպքերի: Ընդ որում, այդ դեպքերի վերլուծությունից հետևում է, որ լիակատար պատասխանատվություն սահմանվում է կամ աշխատողի այնպիսի վարքագծի արդյունքում, որն առավել վտանգավոր է (վստաք պատճառվել է դիտավորությամբ, հանցավոր գործունեության արդյունքում կամ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ), կամ այնպիսի դեպքերում, որոնք սահմանված են պայմանագրով կամ օրենքով (աշխատողի հետ կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր, կամ վստաք պատճառվել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատասխանատվություն), կամ եթե վստաք պատճառվել է կոնկրետ գույքի (վստաք պատճառվել է աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաև նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետևանքով): Մնացած բոլոր դեպքերում աշխատողը կրում է ոչ լրիվ ծավալով նյութական պատասխանատվություն:

07.04.2018թ.

8. **Անահիտ Նազարյանն ընդդեմ Հրազդան համայնքի ղեկավարի, քաղ. գործ թիվ ԿԳ/1490/02/16**

էջ
95-111

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական խնդիրներին.

1) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքի կիրառման առանձնահատկություններին,

2) աշխատանքից ազատելու վերաբերյալ ծանուցման ընթացակարգի առանձնահատկություններին,

3) աշխատանքում վերականգնվելու անհնարինությանը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համատեքստում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը մեկնաբանելով՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կարգավորում են միևնույն՝ համայնքի աշխատակազմի **հաստիքների կրճատմամբ**

1 Այսուհետ՝ Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

ուղեկցվող վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության գործընթացի տարրեր փուլերը: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ դա կարգավորում է այն հարցը, թե հաստիքների կրճատումներով ուղեկցվող աշխատակազմի վերակազմակերպումը, անվանափոխությունը և կառուցվածքային փոփոխությունն ինչպես, ինչ կանոնների պահպանմամբ պետք է իրականացվի, արդյո՞ք այդ փոփոխությունը հանգեցնում է համայնքային ծառայողների պարտադիր կերպով պաշտոնից ազատելուն կամ եթե պաշտոնից ազատելը դրա պարտադիր հետևանք չէ, ապա ինչպես է ապահովվում **աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը, այսինքն՝** **դր համայնքային ծառայողները նախապատվության իրավունքով պետք է շարունակեն աշխատել կրճատման հետևանքով մնացած նվազ թվով հաստիքներում:** Մինչդեռ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է այն հարցը, թե վերը նկարագրված գործընթացն ավարտվելուց հետո ինչպես, ինչ կանոնների պահպանմամբ են համարվում աշխատակազմի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոնները, մասնավորապես սահմանելով որոշակի պահանջներին բավարարող համայնքային ծառայողներին նոր պաշտոններում նշանակելու՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությունը: Դա նշանակում է, որ **համայնքի աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության հետևանքով հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը որոշելիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն օժտված չէ լիակատար հայեցողությամբ, այլ սահմանափակված է օրենսդրի սահմանած նախապատվության որոշակի կանոնները պահպանելու պարտականությամբ:** Հակառակ մեկնաբանության պարագայում կրճատումների դեպքում օրենսդրի սահմանած աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը կդառնա ձևական պահանջ: Եթե կրճատումներով ուղեկցվող աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության ընթացքում համայնքային ծառայության բոլոր պաշտոններում նշանակումներ կատարելը թողնվեր պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությանը, ապա բոլորովին ավելորդ կլիներ որոշակի համայնքային ծառայողների համար օրենքով աշխատանքը շարունակելու նախապատվության իրավունք նախատեսելը, մինչդեռ այդ իրավունքի և դրա իրացման պայմանների սահմանում օրենսդրի կողմից որոշակի երաշխիք է՝ ուղղված կրճատումների դեպքում առավել որակյալ, փորձառու կամ սոցիալապես խոցելի անձանց աշխատանքը շարունակելու հնարավորության ապահովմանը:

Այլ խոսքով՝ **համայնքային ծառայության հաստիքների կրճատման պարագայում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը** համապատասխան կրճատված հաստիքում աշխատող համայնքային ծառայողին այդ հաստիքից ազատելիս **միաժամանակ պարտավոր է նաև քննարկել նախապատվության իրավունքով նրան նոր առաջացած հաստիքում աշխատանքի թողնելու հարցը և նախապատվության իրավունքի ու դրա պայմանների առկայության դեպքում նրան նշանակել նոր առաջացած պաշտոնում՝** համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության: Դրանից հետո միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը կարող է օրենքի նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համարել նոր առաջացած մյուս թափուր մնացած պաշտոնները՝ իր հայեցողությամբ: Եթե նախապատվության իրավունք ունեցող անձն այդ իրավունքի պահպանմամբ նշանակվում է նոր առաջացած պաշտոնում, այլևս մյուս նոր առաջացած թափուր պաշտոններում նրան նշանակելու հարց չի առաջանում, իսկ եթե նա, **ի խախտումն նախապատվության իրավունքի, չի նշանակվում կրճատման հետևանքով առաջացած նվազ թվով պաշտոններից իր նախապատվության իրավունքի պայմաններին համապատասխանող պաշտոնում, ապա նրա իրավունքի խախտումը կարող է վերացվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին նման նշանակումը պարտավորեցնելու միջոցով և ոչ թե նոր պաշտոնում վերականգնելու եղանակով:**

Ամփոփելով վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքի կրճատման դեպքում այդ հաստիքը զբաղեցնող համայնքային ծառայողը չի կարող պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ չնշանակվել նոր առաջացող թափուր պաշտոնում՝ պայմանով, որ իր անհատական հատկանիշներով համապատասխանում է այդ պաշտոնն զբաղեցնելու հա-

մար ներկայացվող պահանջներին և միևնույն խմբի միևնույն ենթախմբի մյուս համայնքային ծառայողների նկատմամբ ունի նախապատվության իրավունք: Վճռաբեկ դատարանի նման մեկնաբանությունը համահունչ է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հանրային ծառայության հիմնական սկզբունքներին:

2) Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է պարունակում աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուի կողմից աշխատողին ծանուցելու ընթացակարգի վերաբերյալ, հետևաբար կիրառելի են ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ աշխատանքից ազատելու ծանուցումը տրամադրվում է աշխատանքային հարաբերությունների ամկայության պայմաններում՝ նկատի ունենալով, որ աշխատողը դեռևս նույն գործատուի մոտ կատարում է աշխատանք, ստանում աշխատավարձ, հնարավորություն ունենում կատարվող աշխատանքին զուգահեռ փնտրել այլ աշխատանք, ինչը չէր կարող ապահովվել, եթե հաստիքն արդեն կրճատված լիներ կամ գոյություն չունենար: Այլ կերպ ասած՝ աշխատողին ծանուցում տրվում է այն ժամանակ, երբ գործատուն որոշում է աշխատակազմում կատարել փոփոխություններ, որոնք ապագայում հանգեցնելու են կամ կարող են հանգեցնել հաստիքների կրճատման: Ընդ որում, հաստիքների նախատեսված կրճատումը կարող է տարբեր պատճառներով տեղի չունենալ կամ չկատարվել՝ նախատեսվող ժամանակահատվածում: Հնարավոր են նաև դեպքեր, երբ կատարվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ընդհանուր առմամբ հաստիքների կրճատում տեղի ունենա, սակայն ծանուցված աշխատողի կոնկրետ հաստիքը չկրճատվի: Օրենսդիրը գործատուին չի պարտավորեցնում ամենայն որոշակիությամբ բոլոր աշխատողներին ծանուցել, թե կոնկրետ որ հաստիքներն են ապագայում կրճատվելու, սակայն գործատուն պարտավոր է կոնկրետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահպանել սահմանված ծանուցման ընթացակարգի պահանջները, մասնավորապես՝ ժամկետը:

Վճռաբեկ դատարանը նման մոտեցումը պայմանավորել է աշխատողների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ հնարավորություն տալով նախապես տեղեկանալ աշխատանքից հնարավոր ազատման մասին, փնտրել նոր աշխատանք, տեղեկացման ժամանակահատվածում աշխատել և ստանալ աշխատավարձ: Ընդ որում, ծանուցումն անպայմանորեն չի ենթադրում աշխատանքից ազատում՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ ծանուցումը կարող է նաև ուժը կորցրած ճանաչվել՝ չհանգեցնելով աշխատանքային պայմանագրի լուծման:

3) Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինությանը՝ փաստելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատանքում վերականգնվելու անհնարինության հիմք կարող է հանդիսանալ նաև վեճի լուծման պահին «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքի լրանալը, որի պարագայում անգամ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքից ազատված համայնքային ծառայողը չի կարող վերականգնվել նախկին աշխատանքում, ինչպես նաև չի կարող կիրառվել վերջինիս՝ աշխատանքային հարաբերությունները շարունակելու նախապատվության իրավունքը՝ նշանակելով նրան կրճատումից հետո նոր ստեղծված պաշտոնում:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

07.04.2018թ.

9. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «ՓՐԱՅՄ ԼԻԳԱ ՄԱՐԿԵՏ» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0075/04/15

էջ
112-121

Խնդիր. Արդյո՞ք սնանկության գործով միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրությունը հաշվարկելիս պետք է հիմք ընդունել պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված միջոցների ամբողջ գումարը, թե՛ միայն պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված չափը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն որոշման շրջանակներում «Մսանկության

մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը բացահայտել է պարտապանին պատկանող գույքի վաճառքից ստացված միջոցների բաշխման կարգը՝ մասնավորապես անդրադառնալով կառավարչի վարձատրության որոշման հարցին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ կառավարչի վարձատրությունը կատարվում է պարտապանի դրամական միջոցներից, պարտապանի, երրորդ անձանց գույքի վաճառքից (օտարումից) կամ ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքագրումից գոյացած միջոցներից՝ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը հստակ կարգավորել է ինչպես կառավարչի վարձատրությունը սահմանող մարմին, այնպես էլ այդ վարձատրության չափի հարցերը՝ ամրագրելով, որ վարձատրության չափը սահմանվում է դատարանի որոշմամբ՝ ելնելով պարտատերերի պահանջների բավարարման չափից որոշակի տոկոսադրույքներով: Այսինքն՝ տվյալ դեպքում կառավարչի վարձատրության չափն անմիջականորեն կախվածության մեջ է գտնվում միայն պարտատերերի բավարարված պահանջների չափից, և վարձատրության չափը որոշելիս պետք է պարզել, թե որ պարտատերերի պահանջներն են բավարարվել և ինչ չափով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինչպես սնանկության կառավարիչը՝ իրեն տրվելիք վարձատրության գումարի մասով, այնպես էլ վարչական ծախսերի հասցեատերերը՝ դրանց դիմաց տրվելիք հատուցման մասով, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իմաստով պարտատերեր (պահանջատերեր) չեն: Նշվածից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության կառավարչին հասանելիք վարձատրության գումարը և վարչական ծախսերի հասցեատերերին վճարվելիք հատուցումները չեն կարող դիտվել պահանջի բավարարում ու այդ գումարների դիմաց կառավարչին տրվել վարձատրություն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ կառավարչի վարձատրության չափը պետք է որոշվի հետևյալ կերպ.

Նկատի ունենալով այն, որ ի սկզբանե կառավարչին հայտնի են միայն պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված միջոցների գումարը և վարչական ծախսերի չափը, իսկ գրավադրված գույքի դեպքում՝ միայն դրա պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի չափը, ապա այդ միջոցներից պետք է հանել համապատասխան վարչական ծախսերը: Դրանից հետո ստացված գումարի մի մասը պետք է ուղղվի պարտատիրոջ պահանջների բավարարմանը և կառավարչի վարձատրությանը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի դեպքում հաշվարկը կորոշվի հետևյալ բանաձևով՝

$$ՄՀ = ՎԾ + ՊԳ + ԿՎ$$

Որտեղ «ՄՀ»-ն պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված **միջոցների հանրագումարն է**,

«ՎԾ»-ն՝ համապատասխան **վարչական ծախսերը**,

«ՊԳ»-ն՝ **պարտատերերի պահանջների** բավարարմանն ուղղվելիք **գումարի** չափը,

«ԿՎ»-ն՝ **կառավարչի վարձատրության չափը**, որի բանաձևն է՝

$$ԿՎ = ՊԳ \times 10\%$$

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, կառավարչի վարձատրությունը պետք է որոշվի **պարտատիրոջ պահանջների բավարարման չափից համապատասխան տոկոսադրույքի չափով**: Նկատի ունենալով, որ ի սկզբանե այդ գումարն անհայտ է, որոշակի բարդություն կարող են ներկայացնել այն դեպքերը, երբ ստացված միջոցները կազմում են այնպիսի գումար, երբ առերևույթ, առանց հաշվարկի հնարավոր չէ պարզել, թե «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված որ կետն է գործելու:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրն արդեն իսկ կատարել է այդ հաշվարկը: Հիմք ընդունելով վերոնշյալ հոդվածի կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ.

1) եթե «ՄՀ-ՎԾ»-ն փոքր է 27.500.000 ՀՀ դրամից (25.000.000+2.500.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի հաշվարկը,

2) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 27.500.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ

նակ փոքր է 54.500.000 ՀՀ դրամից (50.000.000+4.500.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի հաշվարկը,

3) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 54.500.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 81.250.000 ՀՀ դրամից (75.000.000+6.250.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի հաշվարկը,

4) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 81.250.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 107.750.000 ՀՀ դրամից (100.000.000+7.750.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի հաշվարկը,

5) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 107.750.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 523.750.000 ՀՀ դրամից (500.000.000+23.750.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետի հաշվարկը,

6) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 523.750.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան, ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» կետի հաշվարկը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «բ-գ» կետերի դեպքում գործում է նույն սկզբունքը, ինչ նույն մասի «ա» կետի դեպքում, պարզապես ստացված միջոցներից հանվում են նաև օրենքով սահմանված վարձատրության հստակ չափերը (այն է՝ «բ» կետի դեպքում՝ 2.500.000 ՀՀ դրամը, «գ» կետի դեպքում՝ 4.500.000 ՀՀ դրամը և այլն):

Օրինակ, եթե «ՄՀ-ՎԾ»-ը հավասար է 28.000.000 ՀՀ դրամի, ապա կառավարչի վարձատրությունը հաշվելու համար նախ 28.000.000 ՀՀ դրամից պետք է հանել 2.500.000 ՀՀ դրամը: Ստացված 25.500.000 ՀՀ դրամը գերազանցում է 25.000.000 ՀՀ դրամը 500.000 ՀՀ դրամով: Հետևաբար կառավարչի վարձատրությունը պետք է հաշվվի հետևյալ կերպ.

քայլ 1՝ $x + x \times 8\% = 500.000$ (որտեղ x -ը «ՊԳ»-ն է՝ պարտավորների պահանջների բավարարման ուղղվող գումարի չափը, $x \times 8\%$ -ը «ԿՎ»-ն՝ կառավարչի վարձատրության չափը),

քայլ 2՝
$$x + x \times \frac{8}{100} = 500.000,$$

քայլ 3՝
$$\frac{100 \times x + 8 \times x}{100} = 500.000,$$

քայլ 4՝
$$\frac{108 \times x}{100} = 500.000,$$

քայլ 5՝
$$108 \times x = 500.000 \times 100,$$

քայլ 6՝
$$108 \times x = 50.000.000,$$

քայլ 7՝
$$x = \frac{50.000.000}{108},$$

քայլ 8՝
$$x = 462.963$$

Այսինքն՝ 500.000 ՀՀ դրամից պարտատերերին ուղղվող գումարի չափը կկազմի 462.963 ՀՀ դրամ, որից 8%-ը՝ 37.037 ՀՀ դրամը, կուղղվի կառավարչի վարձատրությանը: Հետևաբար՝ 28.000.000 ՀՀ դրամ գումարից պարտատերերին կուղղվի 25.462.963 ՀՀ դրամ (25.000.000+462.963), իսկ կառավարչին՝ 2.537.037 ՀՀ դրամ (2.500.000+37.037):

07.04.2018թ.

10. ՀՀ ֆինանսների նախարարության Աշտարակի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Մակորչին» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԱՐԱԴ/0010/04/15

էջ

122-129

Խնդիր. Արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի վճարում, կառավարչի վարձատրություն և ապահովված պարտատիրոջ պահանջների ամբողջությամբ բավարարում չկատարելու պայմաններում իրավասու է այդ միջոցներն ուղ-

դելու այլ վճարների կատարմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները բաշխվում են սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Ընդ որում, չապահովված պահանջների բավարարման հերթականության մեջ առաջնահերթության կարգով բավարարվում է կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, **իսկ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:** Այսինքն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխումը բացառվում է, քանի դեռ չեն վճարվել **գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:** Ընդ որում, օրենսդիրը տարբերակում է մտքերը ապահովված և չապահովված պարտատերերի պահանջների բավարարման հարցում՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխումն **առաջնահերթ** նախատեսելով ավելի նեղ շրջանակի համար:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, սնանկության վարույթում պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի, ինչպես նաև կառավարչի վարձատրության արտահերթ վճարում նախատեսելով, ըստ էության նպատակ է հետապնդել կանոնակարգելու պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների վճարումը՝ դրանով իսկ սահմանելով հերթականություն՝ պարտապանի գրավադրված գույքի և այլ ակտիվների իրացման արդյունքում դրամական բավարարում ստանալու իրավունք ունեցող անձանց համար: Այսինքն՝ քանի դեռ չեն վճարվել պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները, այլ պահանջների բավարարում կամ ծախսերի հատուցում (*այդ թվում՝ կառավարչի օգնականի վարձատրություն*) չի կարող իրականացվել:

07.04.2018թ.

11. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ
«Էտտո Քիդս» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0078/04/17

էջ

130-138

Խնդիր. 1) Արդյո՞ք սնանկության ժամանակավոր կառավարիչն ունի պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ բողոքարկելու իրավունք:

2) Արդյո՞ք առաջանում է սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության հարց այն դեպքերում, երբ սնանկության հիմքերի վերանայու պայմաններում կայացվել է սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի² հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայությանը կամ բացակայությանը: Տվյալ իրավահարաբերությունում շահագրգիռ անձինք են միայն պարտապանը և պարտատերը, այլ կերպ ասած՝ այն հարցը, թե արդյո՞ք պարտապանը կճանաչվի սնանկ, թե՞ ոչ, անդրադառնում է միայն պարտապանի և պարտատիրոջ իրավունքներին: Հետևաբար օրինաչափ և արդարացված է օրենսդրի մոտեցումն այն մասին, որ նշված դատական ակտը կարող են բողոքարկել միայն պարտապանը և պարտատերը (պարտատերերը):

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ որոշակի դեպքերում դատարանի վճիռը կարող է բողոքարկվել սնանկության ժամանակավոր կառավարչի կողմից այն դեպքում, երբ վճիռն ուղղակիորեն անդրադառնում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին: Սնանկության ժամանակավոր կառավարչի կողմից վճիռը բողոքարկելու նման իրավունք ծագում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում: Այսպես, նշված նորմի համաձայն՝ եթե դիմումը դատարան

2 Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

ներկայացնելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց, կամ նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված հիմքերը վերանում են, ապա **դիմումը մերժելու մասին վճռով** դատարանը պարտավորեցնում է պարտապանին փոխհատուցել դատական ծախսերը և **վճարել ժամանակավոր կառավարչի վարձատրությունը**:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ տվյալ դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ կայացվում է կամ այն դեպքում, երբ դիմումը դատարան ներկայացնելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց, կամ այն դեպքում, երբ դիմումը դատարան ներկայացնելուց հետո «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված հիմքերը վերանում են: Նշված դեպքերում սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռն անմիջականորեն անոչվում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին այնքանով, որքանով կարգավորում է նաև վերջինիս վարձատրության հարցը: Հետևաբար սնանկության ժամանակավոր կառավարչին բողոքարկման իրավունք չտրամադրելը կխախտեր վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ³ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով⁴ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարր հանդիսացող բողոքարկման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թեև ընդհանուր կանոնի համաձայն՝ սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը, սակայն այդ սահմանափակումը չի վերաբերում այն դեպքին, երբ վճիռն ուղղակիորեն վերաբերում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին, մասնավորապես՝ վերջինիս վարձատրություն ստանալու իրավունքին: Ընդ որում, անգամ այդ դեպքում սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել վճիռը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայության կամ բացակայության հիմքով:

2) Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության ժամանակավոր կառավարչին թեև վերապահված են սահմանափակ լիազորություններ, ինչպիսիք են գույքագրման կազմակերպումը, պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար միջոցների ձեռնարկումը, պարտապանի ֆինանսական վիճակի, սնանկության պատճառների, պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեության և ապրանքային շուկայում նրա դրության վերլուծումը, այնուամենայնիվ դատարանի կողմից որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակվելիս վերջինիս համար արդեն իսկ ծագում է վարձատրության իրավունքը, որը պետք է իրացվի պարտապանի միջոցների հաշվին վերը թվարկված սահմանափակ լիազորություններն իրականացնելիս կամ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարան ներկայացնելուց հետո մերժվում է:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանի անվճարունակությունը դադարելու կամ սնանկության հիմքերը վերանալու դեպքերում սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ կայացնելու պայմաններում սնանկության ժամանակավոր կառավարչին վարձատրություն վճարելու պարտականությունը պարտապանի վրա դնելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովելու սնանկության վարույթի օբյեկտիվությունը և մասնակիցների միջև շահերի հավասարակշռումը, քանի որ վերը նշված դեպքերում օրենքի ուժով ծագում է սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունքը, որը չի կարող կատարվել պարտատիրոջ հաշվին, այլապես կստացվի մի իրավիճակ, երբ պարտապանի դրսևորած վարքագիծն հետևանքով առաջացած դատավարական հետևանքները պետք է կրի պարտատերը: Մասնկության ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունքն էլ չի կարող սահմանափակվել որևէ հիմքով՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը վարձատրության իրավունքը սահմանելիս այն կախվածության մեջ չի դրել որևէ հանգամանքից: Այլ կերպ ասած՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքերի առկայության դեպքում սնանկության ժամանակավոր կառավարիչը պետք է ստանա վարձատրություն:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ միաժամանակ անդրադարձել է նաև այն հարցին, թե ինչ կարգով պետք է որոշվի ժամանակավոր կառավարչի վարձատրության չափը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը վրա հասնելու պայմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով ժամանակավոր կառավարչի վարձատրության չափի հաշ-

3 ՀՀ Սահմանադրությունը վկայակոչված է 2015 թվականի փոփոխություններով:

4 Այսուհետ՝ Կոնվենցիա:

վարկման ելակետային պայմաններ ուղղակիորեն չի նախատեսել՝ ամրագրելով միայն, որ փոխհատուցումն իրականացվում է պարտապանի հաշվին: Այդուհանդերձ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված հիմքերով դիմումը մերժելը չպետք է արգելք լինի ժամանակավոր կառավարչին վարձատրելու համար այն պատճառաբանությամբ, որ վարձատրության հստակ չափ սահմանված չէ: Վճարելի դատարանի գնահատմամբ օրենսդրական այսպիսի բացը հաղթահարելու մեխանիզմներ օրենսդիրն ամեն դեպքում նախատեսել է: Մասնավորապես՝ տվյալ դեպքում կիրառման է ենթակա «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այն մասին, որ երբ տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակվել է այլ անձ, ժամանակավոր կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է պարտապանի հաշվին՝ վերջին տարում պարտապանի տնօրենի տարեկան վաստակի 1/12 չափով: Վճարելի դատարանը փաստել է, որ ինչպես «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով, այնպես էլ նույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ժամանակավոր կառավարչի լիազորությունները դադարում են համապատասխանաբար պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու կամ պարտապանին սնանկ ճանաչելու պահից: Այսինքն՝ երկու դեպքում էլ ժամանակավոր կառավարիչն իր լիազորություններն իրականացնում է նույն ժամանակահատվածում՝ սնանկ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելը: Հետևաբար Վճարելի դատարանի գնահատմամբ տրամաբանական և հիմնավորված է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը կիրառել նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում:

01.06.2018թ.

12. «ԷՅՉԷՄԲԻՄԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «Մանչո Գրուպ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԿԴՆ/0261/04/16

ԷԶ

139-148

Խնդիր. Արդյո՞ք անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները հիմք են պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս պահանջների անվիճելիության համար:

Վճարելի դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն ընդգծել է, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող առանձին փուլերից բաղկացած գործընթաց է, իսկ անձին սնանկ ճանաչելու վարույթն այդ փուլերից առաջինն է, որի շրջանակներում դատարանի կողմից ըստ էության ենթակա է պարզման անձին սնանկ ճանաչելու՝ օրենքով սահմանված հիմքերի առկայությունը: Ըստ այդմ էլ՝ Վճարելի դատարանը գտել է, որ վերը նշված փուլի շրջանակներում ապացուցման են ենթակա միայն անձի վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առկայազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելը: Այսինքն՝ անձին սնանկ ճանաչելու վարույթի ընթացքում դատարանը չի պարզում անձի վճարային պարտավորության հիմքում ընկած պահանջների հիմնավորվածությունը և օրինականությունը:

Վճարելի դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորել է նաև «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավադրույթով, ըստ որի՝ հրավիրված դատական նիստի ընթացքում պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանը պարզում է յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը սնանկության վարույթի մեկ այլ փուլի՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու գործընթացի համար սահմանել է այլ իրավակարգավորում, որն անկախ է անձին սնանկ ճանաչելու փուլից, այն է՝ դատարանը յուրաքանչյուր պահանջի օրինականության և հիմնավորվածության հիմքում ընկած հանգամանքները պարզում է անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռից անկախ՝ առանձին քննություն իրականացնելով յուրաքանչյուր պահանջի վերաբերյալ:

Վճարելի դատարանը գտել է, որ անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով բացառապես գնահատվում են վճռի կայացման պահին անձին սնանկ ճանաչելու հիմքերը, և դրանց առկայությունը չի կարող կաշկանդել սնանկության հետագա ընթացքը՝ բացառելով պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Այսպիսով՝ Վճարելի դատարանը եզրահանգել է, որ անձին սնանկ ճանաչելու մասին

օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված պարտավորության անվիճելիությունը պարտատերերի կողմից ներկայացված պահանջների քննարկման և հաստատման փուլում չունի որևէ ապացուցողական նշանակություն այդ պահանջների օրինականության և հիմնավորվածության գնահատման տեսանկյունից, քանի որ ներկայացված պահանջների օրինականության և հիմնավորվածության ստուգումը սնանկության այլ փուլի խնդիրն է և ենթադրում է անձին սնանկ ճանաչելու վճռից անկախ ապացույցներով այդ հատկանիշների բացահայտում և հիմնավորում:

31.08.2018թ.

13. Տիգրան Մարտիրոսյանի ընդդեմ Սուրեն Մադուհի, քաղ. գործ թիվ ԵՇԳ/0133/04/14

Խնդիր. 1) Արդյո՞ք սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված դատական ակտը վերացվելու պայմաններում գործի նոր քննության ժամանակ հարկադրված սնանկության դիմումի քննության համար կարող են էական նշանակություն ունենալ պարտապանին՝ սնանկ ճանաչելու դիմումում նշված այլ պարտավորությունները:

2) Պարտապանին սնանկ ճանաչելու վճիռը հետագայում, մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բեկանվելու պայմաններում արդյո՞ք ինքնըստինքյան վերացված են համարվում սնանկության վարույթում կայացված այլ դատական ակտերը, մասնավորապես՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները հարկադրված սնանկության վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ քանի դեռ առկա է **օրինական ուժի մեջ մտած չկատարված վերջնական դատական ակտ**, որով հաստատվել է որոշակի պարտավորություն, նշված պարտավորությունը վիճարկվել չի կարող (բացառությամբ հաշվանց կատարելու հնարավորության դեպքի): Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պարտավորության անվիճելիությունը կարող է վերանալ, եթե միայն վերացվի համապատասխան դատական ակտը (օրինակ՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով):

Վճռաբեկ դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատարանը պարտապանին սնանկ է ճանաչում **հարկադրված սնանկության դիմումի հիման վրա**, ինչը, հիմք ընդունելով քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչականության սկզբունքը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշանակում է, որ հարկադրված սնանկության դիմումը պետք է պարունակի դիմումի հիմքերն ու հիմնավորումները, իսկ սնանկության գործը քննող դատարանը չի կարող դուրս գալ դիմումի հիմքերի շրջանակից: Այլ կերպ ասած, եթե սնանկության դիմումում նշված է կոնկրետ վճարային պարտավորություն, ապա դատարանը պետք է գնահատի միայն վերջինիս անվիճելիությունը և ըստ այդմ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պայմանների առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման դիրքորոշումը թխում է նաև հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումներից:

Հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հարկադրված սնանկության դիմումում նշված հիմքերը, մասնավորապես՝ կոնկրետ վճարային պարտավորությունը, կաշկանդում են դատարանին՝ քննելու միայն դիմումում նշված հանգամանքների՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանությունը: Նման դեպքերում նույնպես գործի նոր քննության ընթացքում դատարանը պետք է առաջնորդվի սնանկության դիմումի հիմքերով անգամ այն պարագայում, երբ գործում առկա են այլ ապացույցներ պարտապանի պարտավորությունների վերաբերյալ, այդ թվում՝ եթե անգամ հաստատված է պահանջների վերջնական ցուցակը:

2) Անդրադառնալով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատվելուց հետո սնանկ ճանաչելու մասին վճիռը որևէ հիմքով (մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով) բեկանվելու դեպքերին՝ Վճռաբեկ դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա արձանագրել է, որ սնանկության վարույթը բաղկացած է մի քանի փուլերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու նպատակները, և որոնք, որպես կանոն, եզրափակվում են համապատասխան դատական ակտի կայացմամբ: Այսպես, սնանկության վերաբերյալ դիմումի ընդունելության հարցի քննարկման արդյունքում դատարանը կայացնում է, օրինակ, դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, որից հետո դատարանն իրականացնում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված գործողությունները՝ ուղղված սնանկության վարույթի հետագա գործողությունների կատարման ապահովմանը: Սնանկ ճանաչելու հարցի լուծման փուլը կարող է ավարտվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կայացմամբ: Առանձին փուլ է

Էջ
149-162

նաև պարտատերերի պահանջների հաստատումը, որը նույնպես սնանկության վարույթի առանցքային փուլերից է, և դրա հիման վրա է կատարվում պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը սահմանում է պահանջների հաստատման կարգը: Մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան **սնանկության մասին հայտարարությունից հետո**՝ մեկամսյա ժամկետում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ պահանջների հաստատման փուլը սկսվում է **միայն պարտապանին սնանկ ճանաչելուց հետո**: Հետևաբար, եթե որևէ պատճառով (մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով) վերանում է սնանկ ճանաչելու հարցի քննության արդյունքում կայացված պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դա ենթադրում է հետագա փուլերի, այդ թվում՝ պահանջների հաստատման փուլի շարունակման անտրամաբանությունը: Այսինքն՝ եթե պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն այլևս գոյություն չունի, պարտապանը սնանկ համարվել չի կարող, հետևաբար առարկայագուրկ են դառնում նաև հետագա բոլոր փուլերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վճիռի վերացումը հանգեցնում է սնանկության հետագա փուլերի դադարմանը և դրանց արդյունքում կայացված դատական ակտերի, այդ թվում՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման վերացման:

06.12.2018թ.

14. Երևան համայնքն ընդդեմ Քնարիկ Հովհաննիսյանի, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0210/04/17

Էջ

163-178

Խնդիր. 1) Օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորության կամ դրա մի մասի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքում պետք է դրվի անմիջականորեն օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պահանջը, թե՛ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2) Արդյո՞ք պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում որպես անվիճելի վճարային պարտավորություն կարող է դրվել օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունն այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինը նշված գումարները պարտապանից բռնագանձելու վերաբերյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշում չի կայացրել և նշված որոշումը չի դարձել անբողբարկելի:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները պարտապանի հարկադրված սնանկության հիմքերի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով անդրադարձել է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պահանջը պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դնելու այն դեպքերին, երբ չվճարված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը չի կատարվել:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելը հարկ վճարողի պարտականությունն է, և եթե հարկ վճարողը սահմանված ժամկետում դրանք չի վճարում, ապա այն կարող է բռնագանձվել նաև դատական կարգով:

Վճռաբեկ դատարանն առանձնացրել է այն դեպքերը, երբ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրված է պարտապանի՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը, սակայն դրա վերաբերյալ առկա է չվճարված հարկի, տուրքի կամ պարտադիր այլ վճարի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված հարկի, տուրքի կամ այլ վճարի գումար դիտարկվելուց, այն դառնում է համապատասխան պետական մարմնի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում հարկ վճարողն արդեն խախտում է վճիռի պարտավորության և կատարելիության հատկանիշները: Վճռա-

բեկ դատարանը փաստել է, որ նման պայմաններում պարտապահին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում պետք է դրվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, այն է՝ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, քանի որ նման պայմաններում հարկ վճարողը ոչ թե պարզապես հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարները չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը: Նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դեպքում այլևս չի քննարկվում տվյալ գումարի՝ որպես չկատարված դրամական պարտավորության ծագման հիմքը, այլ **քննարկվում է միայն դատական ակտով հաստատված հստակ դրամական պարտավորությունը, որը չի կատարվել:**

2) Երկրորդ հարցադրման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ անդադարձել է վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի կիրառման առանձնահատկություններին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրվել են պարտապահի՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պարտավորությունները, ապա պարտավորությունների փաստացի կատարված չլինելու հանգամանքի վկայակոչումը միայն բավարար չի կարող լինել պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու համար, քանի որ համապատասխան վարչական մարմինը, հիմք ընդունելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի իրավակարգավորումը, պետք է կայացներ չվճարված հարկերը բռնագանձելու մասին որոշում: Նշվածը մի կողմից հնարավորություն կտար որոշակիացնելու պարտավորությունների բնույթը, իսկ մյուս կողմից հնարավորություն կընձեռներ վարչական ակտի հասցեատիրոջը հնարավոր անհամաձայնության դեպքում օրենքով սահմանված կարգով վիճարկել համապատասխան վարչական ակտը:

Այսինքն՝ վերոգրյալից հետևում է, որ այդպիսի որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չեն կարող բռնագանձվել իրավապարտության կամ համայնքի, ինչից բխում է, որ առանց նման որոշման՝ գումարի բռնագանձման իրավասությունը չի կարող իրացվել: Հետևաբար առանց նման որոշման կայացման և դրա՝ անբողոքարկելի դառնալու, համապատասխան պետական մարմինը չի կարող վկայակոչել պարտապահի՝ հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտավորության անվիճելիությունը:

07.12.2018թ.

15. Կարինե Ղազարյանը և մյուսներն ընդդեմ Իգոր Մանդելի, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0009/04/16

էջ

179-194

Խնդիր. 1) Արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով հանդիսանում է շահագրգիռ անձ և ունի սնանկության վարույթում անցկացված աճուրդի արդյունքները վիճարկելու իրավունք:

2) Արդյո՞ք սնանկության գործով աճուրդին մասնակցելու լիազորություն տալու կապակցությամբ փաստաբանին տրված լիազորագիրը կարող է մեկնաբանվել նաև որպես դատական ներկայացուցչություն իրականացնելու լիազորագիր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1) Վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով շահագրգիռ անձ հանդիսանալու վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթում ևս աճուրդի արդյունքները վիճարկելու հնարավորություն պետք է ունենան միայն շահագրգիռ անձինք, որոնց շահագրգռվածությունը պետք է որոշվի լուրի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալու փաստով, ինչպես նաև հնարավոր իրավունքներ ձեռք բերելու համար բավարար նախադրյալներ առկա լինելու փաստով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ սնանկության վարույթում աճուրդի արդյունքների վիճարկման հարցում շահագրգռվածության որոշման հարցի նկատմամբ նույնպես կիրառելի են Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները: Տվյալ դեպքում նույնպես աճուրդի վիճարկման հիմքում պետք է լինի պահանջ ներկայացնողի իրավական շահագրգռվածությունը, այլ խոսքով՝ դատարանը պետք է պարզի, թե նման պահանջ ներկա-

յացնողի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, ու ներկայացված պահանջի նպատակն արդյոք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյոք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել պահանջ ներկայացրած անձի իրավունքները:

Նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սնանկության գործով կառավարչի կողմից աճուրդի արդյունքների վիճարկման հնարավորություն ունենալու հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սնանկության գործով կառավարիչը սնանկության վարությամբ հանդես է գալիս որպես պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռող, վերջինս սնանկության վարությամբ սեփական շահեր չունի: Մասնական գործով կառավարիչն իրականացնում է միայն «Մասնական մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, որոնց նպատակը սնանկության վարության ընթացքի արդյունքի ապահովումն է: Պատահական չէ, որ որպես սակարկությունների կազմակերպիչ՝ վերջինս իրավունք չունի մասնակցել սակարկություններին, ուստի չի կարող ունենալ շահագրգռվածություն աճուրդի հանված լոտի նկատմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ սնանկության գործով կառավարիչը, շահագրգիռ անձ չհանդիսանալու հիմքով, իրավունք չունի վիճարկել սնանկության վարության շրջանակներում անցկացված աճուրդի արդյունքները:

2) Հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ լիազորագրի՝ որպես միակողմ գործարքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ տարբերակել է քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցելու նպատակով տրված լիազորագրերը դատական ներկայացուցչություն իրականացնելու նպատակով տրված լիազորագրերից: Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ լիազորողն իրավունք ունի քաղաքացիական հարաբերություններին, այդ թվում՝ սնանկության վարությամբ աճուրդին և հետագա գործընթացներին մասնակցելու համար լիազորել ցանկացած անձի, ով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով քաղաքացիների համար սահմանված իրավասությունների շրջանակներում իրավունք ունի կնքել գործարք: Օրենսդիրը որևէ արգելք չի սահմանել նշված հարաբերություններին փաստաբան հանդիսացող ֆիզիկական անձի կողմից մասնակցության համար, հետևաբար անձը կարող է լիազորել նաև փաստաբանին՝ հանդես գալու իր անունից քաղաքացիաիրավական հարաբերություն հանդիսացող սնանկության վարությամբ աճուրդի գործընթացին:

Այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը կարևորել է, որ անգամ փաստաբանին տրված լիազորագիրը, որով վերջինս լիազորվել է մասնակցելու սնանկության գործով անցկացվող աճուրդին, անպայմանորեն չի ենթադրում, որ լիազորողը փաստաբանին օժտել է նաև իր անունից սնանկության վարության շրջանակներում դատական ներկայացուցչություն իրականացնելու և մասնավորապես սնանկության վարությամբ կայացվող դատական ակտերը բողոքարկելու լիազորությամբ, առավել ևս, որ դատական ակտերի բողոքարկման լիազորությունը պետք է հատուկ նշվի լիազորագրում: Հետևաբար լիազորությունների շրջանակը պարզելու համար էական նշանակություն ունի լիազորողի կամքի բացահայտումը, որն էլ պետք է իրականացվի դատարանների կողմից՝ պարզելու համար, թե արդյոք քաղաքացիական հարաբերություններին մասնակցելու համար տրված լիազորագիրը պարունակում է նաև դատական ներկայացուցչություն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորություններ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

07.04.2018թ.

16. Սվետլանա Գևորգյանն ընդդեմ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3817/02/16

էջ

195-206

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողների կնքած պայմանագրերով նախատեսված արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում վեճ դատարան հանձնելու իրավունքի իրացման նախապայմաններին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերահաստատելով նախկինում հայտնած իրավական դիրքորոշումներն անձի իրավական պաշտպանության միջոցների վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ արբիտրաժ) նույնպես իրականացնում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառնություն, ուստի արբիտրաժային կարգով գործերի քննումն ու լուծումը հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերից մեկը: Վկայակոչելով պաշտպանության այս ձևի իրականացման ընթացակարգը՝ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը վեր է հանել Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով հայցն առանց քննության թողնելու հետևյալ նախադրյալները.

1) դատարան ներկայացված հայցը վերաբերում է այնպիսի վեճի, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն,

2) կողմերից մեկը հղում է կատարում Կոմիտեի վեճի արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը (ներկայացնում է միջնորդություն),

3) միջնորդությունը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը,

4) արբիտրաժային համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել:

Հետևաբար կողմերից մեկի կողմից հայցը՝ Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, առանց քննության թողնելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարանը պետք է պարզի վերոգրյալ նախադրյալների միաժամանակյա առկայությունը և միայն դրանց առկայության պայմաններում՝ որոշում կայացնի հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոգրյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը սահմանել է **բացառություն:** Մասնավորապես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, եթե այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել, **բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը:**

Վկայակոչված նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատարանները քննարկման առարկա պետք է դարձնեն նաև այն հարցը, թե արդյոք արբիտրաժային համաձայնության առկայությունը սահմանափակում է կողմի՝ դատարան դիմելու իրավունքը՝ քննարկման առարկա դարձնելով նաև օրենքով սահմանված վերապահումները:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ նմանաբնույթ կարգավորում նախատեսված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողների կնքած պայմանագրերով նախատեսված արբիտրաժային համաձայնությունը, որը կարող է լինել ինչպես պայմանագրում ներառված վերապահման ձևով, այնպես էլ որպես դրա բաղկացուցիչ մաս, հավելված կամ պայմանագրի կնքելու գործընթացի պայման, չի զրկում սպառողին պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքից, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Նույն մասի դրույթները տարածվում են նաև ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարան դիմելու իրավունքը կարող է սահմանափակվել:

Վկայակոչված նորմի բովանդակությունից բխում է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձանց համար օրենսդիրը վերապահել է հայեցողական լիազորություն՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը հանձնելու դատարանին կամ արբիտրաժին՝ անկախ պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությունից, որը կարող է լինել ինչպես պայմանագրում ներառված վերապահման ձևով, այնպես էլ՝ որպես դրա բաղկացուցիչ մաս, հավելված կամ պայմանագրի կնքելու գործընթացի պայման: Այսինքն՝ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձը զրկված չէ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքից, ավելին՝ նույն մասի դրույթները տարածվում են նաև ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարան դիմելու իրավունքը կարող

է սահմանափակվել: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձին տվել է բացարձակ հայեցողական լիազորություն՝ տնօրինչականության սկզբունքից ելնելով որոշելու, թե պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճի լուծումը քաղաքացիական իրավունքների պաշտպանության ինչպիսի ձևով իրականացնել՝ դատական, թե հասարակական (արբիտրաժային)՝ ոչ իրավաչափ համարելով այդ իրավունքի ցանկացած սահմանափակում: Նշված ընդհանուր սկզբունքից օրենսդիրը կատարել է բացառություն միայն այն դեպքերի համար, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Այս պարագայում միայն դատարանն անվերապահորեն կարող է հայցը թողել առանց քննության Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով՝ վերջ թվարկված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական շրջանառության մասնակից ֆինանսական կազմակերպության հետ նրա մատուցած ծառայություններից (բանկային գործառնություններից) օգտվելու վերաբերյալ պայմանագիր կնքած ֆիզիկական անձ սպառողի համար նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման մասով պետությունն ընդհանուր կանոնից բացառություն է կատարել, և հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը՝ որոշակի պայմանների առկայության դեպքում որպես այդ իրավունքի պաշտպանությունն իրականացնող ճանաչել է նաև ընդհանուր իրավասության դատարաններին՝ այն պայմանավորելով նաև նրանով, որ իրավունքներն այս ձևով պաշտպանելու դեպքում վեճի քննությունը և լուծումն իրականացվում է օրենքով հստակ սահմանված դատավարական կարգով, ու կայուն երաշխիքներ են ստեղծվում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, կողմերի դատավարական իրավունքների իրացումն ապահովելու համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողի՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարանն հանձնելու իրավունքը չի կարող կրել սահմանափակումներ, և այդպիսի վեճը, եթե վերջինիս կողմից հանձնվել է դատարանին, պետք է ըստ էության քննվի՝ չնայած կնքված պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

07.04.2018թ.

17. Լուսինե Հովսեփյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0441/02/16

էջ

207-224

Խնդիր. 1) Ինչպիսի վարչական և դատավարական գործողությունների միջոցով անձը կարող է իրացնել ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքը,

2) ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցապահանջի հիման վրա հարուցված գործն ընդդատյա է արդյո՞ք ընդհանուր իրավասության դատարանին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր կանոնի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցումը տեղի է ունենում դատական կարգով: Միևնույն ժամանակ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 5-րդ մասում այդ ընդհանուր կանոնից կատարել է բացառություն՝ սահմանելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց՝ վարչարարություն հանդիսացող ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ հոդ-

վածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածով ու նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավադրույթների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ նշված օրենսդրական ակտերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի (այդ թվում՝ նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտների հարցում նախատեսվել են նույնանման իրավական կարգավորումներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի (այդ թվում՝ նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դեպքում՝ համապատասխան համայնքը: Իր հերթին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի (այդ թվում՝ նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ համապատասխան համայնքը:

Մինչև նյի ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում՝ նաև՝ ոչ նյութական) հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի (այդ թվում՝ նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականությունը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը նախատեսել է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից լրիվ կամ մասնակիորեն մերժվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել իր խախտված իրավունքների ինչպես վարչական, այնպես էլ դատական պաշտպանության մասնավորապես, դատարանի առջև բարձրացնելով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև պահանջելով պարտավորեցնել համապատասխան վարչական մարմնին ընդունելու շահագրգիռ անձի դիմումով հայցվող համապատասխան բարենպաստ վարչական ակտը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված նմանատիպ վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը հետևյալ պատճառարանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ այն վարչական մարմինը, որի ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձանց պատճառվել է ոչ նյութական վնաս: Քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն այդ վարչական մարմնի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման, այն է՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պարտականությունն է, որը ծագում է պատշաճ վարչարարության ապահովման միջոցով մարդու հիմնարար իրավունքների երաշխավորված իրացման ուղղված հանրային շահի կենսագործման կապակցությամբ: ***Հերևաբար ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունից բխող վեճերն ընդդատյա են վարչական դատարանին և ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:***

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև այդ դիմումով հայցվող ոչ նյութական վնասի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու հարցը վարչական դատարանի առջև կարող է բարձրացվել ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը ՀՀ իրավական համակարգում իրացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախևառաջ ոչ նյութական վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջով,

3) ոչ նյութական վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելու պարտավորեցնելու պահանջով,

4) ոչ նյութական վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով վարչական դատարան դիմելու միջոցով:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

07.04.2018թ.

18. Ֆելիքս Մելսակյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԴ/1961/05/15

էջ
225-235

Խնդիր. Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքը կատարվել է առաջին անգամ ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով Սասունիկ Մշեցյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի թիվ ՎԴ/9692/05/13 վարչական գործով 02.12.2016 թվականին և Արտյոմ Խոջոյանն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի թիվ ՎԴ5/0137/05/15 վարչական գործով 27.12.2017 թվականին կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության կարող է ենթարկվել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարած անձը: Ընդ որում, շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու զանցանքի համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց

հետո տվյալ անձի կողմից այդ նույն շինարարական աշխատանքները շարունակելու դեպքում վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կապարտումը շարունակելու* զանցանքի համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ անձը համարվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված», թե՛ ոչ:

Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել օրենսդրի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով ձևակերպված զանցակազմի օբյեկտիվ կողմի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ նշված զանցակազմն առաջանում է, եթե առաջին անգամ կատարված ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկված անձը շարունակում է ինքնակամ կերպով կատարել նույն շինարարական աշխատանքները՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվելուց հետո: Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկն արգելված արարքի՝ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու, կատարման ժամանակն է. շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը չի սահմանել ժամանակի որևէ պահ, որից հետո կատարված՝ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքն այլևս չի առաջացնում վարչական պատասխանատվություն: Այսինքն՝ սահմանելով շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի համար վարչական պատասխանատվություն առաջանալու այն պայմանը, որ տվյալ արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո, օրենսդիրը չի սահմանել այդ պահից հաշվարկվող այնպիսի ժամկետ, որի լրանալուց հետո շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի կատարումն այլևս չի առաջացնում վարչական պատասխանատվություն: Այլ կերպ ասած՝ ամեն դեպքում շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից նշված արարքը շարունակելը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բավարար է վերջինիս օրենսդրի կողմից սահմանված առավել խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Հետևաբար շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի կատարման ժամանակը վարչական պատասխանատվության առաջացման տեսանկյունից էական նշանակություն ունի միայն այն առումով, որ քննարկվող ոչ իրավաչափ արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ ցանկացած ժամանակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածում սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում անձը համարվում է վարչական տույժի ենթարկված: Այդ պայմանները հանգում են հետևյալին. (1) այս կամ այն զանցանքի համար անձի նկատմամբ նշանակված վարչական տույժը՝ որպես պատասխանատվության միջոց, կատարված է, (2) վարչական տույժի կատարումից հետո մեկ տարվա ընթացքում տվյալ անձը չի կատարել նոր վարչական իրավախախտում: Ընդ որում, վկայակոչված իրավակարգավորման համատեքստում անձին վարչական տույժի ենթարկված կամ չենթարկված համարելու հարցը պայմանավորված չէ առաջին անգամ կատարված զանցանքի համար նշանակված վարչական տույժը կատարվելուց հետո մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ կատարված զանցանքի նույնական կամ նույնասեռ լինելով: Այսինքն՝ անձը համարվում է վարչական տույժի ենթարկված, եթե որևէ զանցանքի համար նշանակված վարչական տույժը կատարվելուց հետո մեկ տարվա ընթացքում թույլ է տվել կամ նույն զանցանքը կամ որևէ այլ վարչական իրավախախտում:

Համադրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ և

38-րդ հոդվածների վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքն առաջին անգամ ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո կատարելու հանգամանքը որևէ կերպ չի ազդում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված զանցանքի համար վարչական պատասխանատվության առաջացման վրա: Այլ կերպ՝ *շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու* զանցանքի համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկված անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված» համարվելու կամ չհամարվելու հանգամանքն էական նշանակություն չունի՝ *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կապարտումը շարունակելու* համար վարչական պատասխանատվության առաջացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կապարտումը շարունակելու* զանցակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացումը չի պայմանավորել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են, օրինակ, (ա) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված տուգանքի վճարված լինելը կամ չլինելը, (բ) այդ տուգանքի վճարումից հետո անցած ժամանակի տևողությունը, (գ) շենքեր և շինություններ ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու արարքի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված անձի» կողմից կատարված լինելը կամ չլինելը:

07.04.2018թ.

19. Աշոտ Գրիգորյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳԴ/0839/05/16

էջ
236-250

Խնդիր. Արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարման համար, եթե վերջինիս սեփականության իրավունքով պատկանող և մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը նշել է, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է պայմանականորեն բաց թողնվող ապրանքի հասկացությունը. ի թիվս այլոց, պայմանականորեն բաց թողնված է համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքը, որի համար տրամադրվել են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Ընդ որում, նշված սահմանափակումների էությունն այն է, որ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ ունեցող ապրանքը կարող է օգտագործվել միայն այդ արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով: Ավելին՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ արտոնություններ ունեցող և պայմանականորեն բաց թողնված ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ, իսկ այդ արտոնությունների կիրառմամբ պայմանավորված սահմանափակումները դադարում են ապրանքները բաց թողնելուց երեք տարի հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային սահմանով պայմանականորեն բաց թողնված ապրանքների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման արտոնությունների տրամադրման առնչությամբ սահմանված՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ: Մաքսային նշված կանոններն անմիջականորեն վերաբերում են պետության ֆինանսական շահերին և նպատակաուղղված են մաքսային վճարների վճարման պարտականության կատարման ապահովմանը, քանի որ ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման արդյունքում չի

ապահովվում տվյալ ապրանքի և տրանսպորտային միջոցի մասով մաքսատուրքերի և հարկերի գծով պետական թյուջեի մուտքերը: Նշված իրավախախտման կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ ապօրինի տնօրինված, օգտագործված կամ այլ անձանց հանձնված ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի չափով:

Ելնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումներից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի հատկանիշները հանգում են հետևյալին.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի օբյեկտը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի առարկան մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն են:

3. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի սուբյեկտը մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների ներմուծողն է (որպես կանոն՝ սեփականատերը):

4. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող հետևյալ արարքներից որևէ մեկով.

- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օտարում,
- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործում,
- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների հանձնում:

5. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ վերը նշված արարքները կատարվում են մաքսային մարմնի թույլտվության բացակայության պայմաններում:

6. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

7. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումը կատարվում են արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի կողմից թույլ տրված արարքում վերոգրյալ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը բացառում է ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Մասնավորապես՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումն առաջացնում են վարչական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ այդ արարքները կատարվել են նշված ապրանքների ու տրանսպորտային միջոցների համար արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով: Այլ կերպ ասած՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումը ոչ բոլոր դեպքերում է առաջացնում վարչական պատասխանատվություն ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի հիմքով: Նշված արարքների համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության այն դեպքում, երբ վերջինս օգտագործել է կամ հանձնել

է այդ ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն այնպիսի նպատակով, որը տարբերվում է դրանց համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն օգտագործելու կամ հանձնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում պետք է ձեռք բերվեն բավարար ապացույցներ, ի թիվս այլոց, նաև այն մասին, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների սեփականատերն օգտագործել կամ հանձնել է դրանք այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ պայմանականորեն բաց թողնվող ապրանքներից է նաև Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը, որի նկատմամբ կիրառվում է մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) գծով արտոնություն: Այդ արտոնությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը և այն ձևակերպել «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով: Այլ կերպ ասած՝ քննարկվող արտոնությունը հետապնդում է այն նպատակը, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձը հնարավորություն ունենա շարունակելու մինչև ՀՀ տեղափոխվելն արդեն իսկ իրեն պատկանող գույքի օգտագործումն իր անձնական կարիքների համար նաև Հայաստանի Հանրապետության տարածքում՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման պարտականության:

Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ մաքսային օրենսդրության իմաստով անձնական օգտագործման գույքը ֆիզիկական անձանց պատկանող և ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ կարիքների համար նախատեսված ապրանքներն են, այդ թվում նաև՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը: Ընդ որում, տրանսպորտային միջոցը համարվում է անձնական օգտագործման, եթե այն օգտագործվում է բացառապես անձնական նպատակներով, չի օգտագործվում վարձով փոխադրումների, ինչպես նաև վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրումների համար:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձի կողմից ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի համար «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնության տրամադրման նպատակը հանգում է հետևյալին. այդպիսի տրանսպորտային միջոցը մաքսային հսկողության տակ գտնվելու ընթացքում պետք է օգտագործվի բացառապես անձնական նպատակներով և չի կարող օգտագործվել վարձու փոխադրումների, ինչպես նաև վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրումների համար: Հակառակ պարագայում վերանում է նշված արտոնության տրամադրման դրեկտիվ անհրաժեշտությունը, քանի որ տրանսպորտային միջոցով վարձու փոխադրումներ իրականացնելը, ինչպես նաև այն արդյունաբերական կամ առևտրային փոխադրումների նպատակով օգտագործելը որևէ կերպ չեն կարող համապատասխանել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց պատկանող անձնական օգտագործման գույքը Հայաստանի Հանրապետություն ներմուծելիս մաքսային վճարների գծով տրամադրվող արտոնությունների միջոցով պետության կողմից հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենայի (տրանսպորտային միջոցի) համար մաքսային վճարների գծով տրամադրված արտոնության նպատակն իրավակիրառ պրակտիկայում չի կարող ստանալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որի համաձայն՝ այդպիսի ավտոմեքենան Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային

ընթացակարգով ձևակերպելուց հետո կարող է շահագործվել բացառապես դրա սեփականատիրոջ կողմից: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարել այն պատճառաբանությամբ, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանակ ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենայի մաքսային ձևակերպման արտոնությունը տրամադրվում է ոչ թե այն պայմանով, որ այդ ավտոմեքենան շահագործվի բացառապես սեփականատիրոջ կողմից, այլ այն պայմանով, որ այդ ավտոմեքենան շահագործվի բացառապես անձնական կարիքների համար՝ առանց վարձատրության դիմաց կամ առևտրային կամ արդյունաբերական նպատակներով փոխադրումներ իրականացնելու:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանակ ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենան սեփականատիրոջ թույլտվությամբ այլ անձանց կողմից անձնական նպատակներով ժամանակավոր շահագործումը չի կարող որակվել որպես այդ տրանսպորտային միջոցի՝ արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով օգտագործում կամ հանձնում: Այլ կերպ ասած՝ եթե Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանակ ֆիզիկական անձին պատկանող մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող անձնական օգտագործման ավտոմեքենան ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ, ապա դա չի համարվում տրանսպորտային միջոցի՝ արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով օգտագործում կամ հանձնում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ անձը ենթակա չէ վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարման համար, եթե վերջինիս սեփականության իրավունքով պատկանող և մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

30.11.2018թ.

20. Գեորգի Թովմայանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ/3310/05/15

էջ

251-263

Խնդիր. Ճարտարապետահատակագծային առաջադրանքն արդյո՞ք կարող է համարվել վարչական ակտ և անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քաղաքաշինական գործունեության բնագավառում կառուցապատողի վերջնական նպատակը շինարարության իրականացումն է, որը կարող է կատարվել միայն շինարարության թույլտվության հիման վրա, իսկ շինարարության թույլտվությունն էլ կարող է տրվել միայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա: Այսինքն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի առկայությունը շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախապայման է: Հետևաբար ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու հայտով իրավասու մարմինն դիմած կառուցապատողի իրական շահագրգռվածությունն ու մտադրությունն ուղղված է ոչ թե սոսկ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալուն, այլ՝ շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվություն ստանալուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրվում է շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում: Շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթն առանձին տեսակի, բարդ ընթացակարգով իրականացվող վարչական վարույթ է, որը հարուցվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն) ստանալու վերաբերյալ համապատասխան համայնքին ներկայացված կառուցապա-

տողի հայտի (դիմումի) հիման վրա, ինչին վարույթի ընթացիկ փուլում հաջորդում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը և մյուս գործողությունների կատարումը, իսկ վարույթը եզրափակվում է վարչական ակտի (շինարարության թույլտվության) ընդունմամբ: Շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման փուլն ունի առաջնահերթ նշանակություն, քանի որ այդ փաստաթղթով կառուցապատողը հնարավորություն է ստանում ձեռնարկելու շինարարության օբյեկտի նախագծային աշխատանքները և մշակելու համապատասխան նախագծային փաստաթղթերը: Փաստորեն, ճարտարապետահատակագծային առաջադրանքի իրավաբանական բնույթը հանգում է հետևյալին. այդ փաստաթուղթը շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի հետագա իրականացման համար անհրաժեշտ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր ձեռք բերելու և նշված վարչական վարույթն իր տրամաբանական ավարտին հասցնելու նախադրյալն է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի տրամադրվում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվելիք վարչական ակտի՝ շինարարության թույլտվության տրամադրման ապահովմանը:

Այսպիսով, ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի համատեքստում դիտարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

1) ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանվում են կառուցապատվող օբյեկտի նախագծման պարտադիր պահանջները, պայմանները և սահմանափակումները, և այն հիմք է հանդիսանում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար,

2) ճարտարապետահատակագծային առաջադրանքով կառուցապատվող օբյեկտի նախագծման պարտադիր պահանջների և պայմանների սահմանումը և դրանց համապատասխան ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակումը վերջիվերջո միտված են շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը, այսինքն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախադրյալներից մեկն է,

3) ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է ոչ թե դրա տրամադրմանն ուղղված ինքնուրույն վարչական վարույթի, այլ՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում,

4) ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվելիք վարչական ակտի՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի փուլերից մեկն է,

5) ի տարբերություն շինարարության թույլտվության՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը չի հետապնդում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ չէ, քանի որ այն չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի բոլոր հատկանիշներին: Մասնավորապես՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի ընդունվում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով: Հետևաբար ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի կարող անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով: Այլ կերպ ասած՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվություն) չի կարող վարչական կամ դատական կարգով անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, քանի որ այն Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ թե վարչական ակտ է, այլ վարչական ակտի՝ շինարարության թույլտվության ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացիկ փուլում տրամադրվող փաստաթուղթ, որն անհրաժեշտ նա-

խաղըյալ է հանդիսանում այդ վարույթի եզրափակման՝ շինարարության թույլտվության տրամադրման համար:

07.04.2018թ.

21. Արմեն Թումանյանն ընդդեմ Կոտայքի մարզպետի, վարչ. գործ թիվ ՎՂԴ/8765/05/13

էջ
264-281

Խնդիր. (1) Արդյո՞ք մարզպետն ունի ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կահավորանքի, այդ թվում նաև՝ ճանապարհային նշանների ձեռքբերման, տեղադրման ու շահագործման պարտականություն, (2) չկարգավորվող խաչմերուկները ճանապարհային նշաններով չկահավորելու փաստն ինքնին բավարար է արդյո՞ք համապատասխան լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ անգործություն դրսևորելու փաստի հաստատման համար, (3) արդյո՞ք ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման հարցում իրավասու վարչական մարմինների անգործության իրավաչափությունը ճանաչման հայցի շրջանակներում գնահատելիս վարչական դատարանը պետք է անդրադառնա այդ անգործության և դրա հետևանքով առաջացած ենթադրյալ վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությամբ կարող է պայմանավորվել ճանաչման հայց ներկայացնելու հայցվորի շահագրգռվածությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախկինում գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կահավորանքի, այդ թվում նաև՝ ճանապարհային նշանների, ձեռքբերման, տեղադրման ու շահագործման լիազորությամբ օժտված հանրային իշխանության մարմինը տվյալ ավտոմոբիլային ճանապարհների գտնվելու համապատասխան մարզի մարզպետն է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև համապատասխան մարզի տարածքում գտնվող մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կահավորանքի, այդ թվում նաև՝ ճանապարհային նշանների ձեռքբերման, տեղադրման ու շահագործման լիազորությունը վերապահված է տվյալ մարզի մարզպետին, սակայն այդ հանգամանքը չի կարող ընկալվել որպես այդ մարզի տարածքի բոլոր մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների բոլոր հատվածների անվերապահ և միաժամանակյա կահավորման պարտականություն:

Այսպես, նախևառաջ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նախկինում գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում ճանապարհային նշանների տեղակայման վայրերը որոշվում են համապատասխան մարզի մարզպետի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ: Ավելին՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մարզպետը, կրելով պարտականություն ճանապարհային նշաններով կահավորել իր իրավասության ներքո գտնվող ճանապարհահատվածները, որոշում է, թե ինչ առաջնահերթությամբ կահավորել դրանք: Նման աշխատանքներ կատարելիս մարզպետը պարտավոր է հաշվի առնել որոշակի իրավաչափ հանգամանքներ, մասնավորապես՝ տեղանքի առանձնահատկությունները, առավել վտանգավոր այն հատվածները, որտեղ վթարների հավանականությունն առավել բարձր է, տարածքի բանուկ հատված համարվելու հանգամանքները և այլ հատկանիշներ՝ նպատակ ունենալով ճանապարհները կահավորել ըստ կարևորության առաջնահերթության: Այսինքն՝ մարզպետը կարող է նախապատվությունը տալ ճանապարհի այն հատվածներին, որոնց՝ ճանապարհային նշաններով կահավորումն առավել կարևոր է: Հետևաբար ճանապարհի որոշակի հատվածներ նպատակահարմարությունից ելնելով չկահավորելը չի ենթադրում, որ իրավագոր վարչական մարմնի կողմից անվերապահորեն թույլ է տրվել ոչ իրավաչափ անգործություն: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ճանապարհային նշանները հանդիսանում են ճանապարհային երթևեկությունը կարգավորող միջոցներ, որոնք ճանապարհային երթևեկության մասնակիցներին հարորդում են որոշակի տեղեկություններ, ինչի հաշվառմամբ վերջիններս կանոնակարգում են իրենց գործողությունները: Ուստի ճանապարհային նշաններով ավտոմոբիլային ճանապարհների կահավորում իրականացնելու լիազորությունը կոչված է ապահովելու ճանապարհային երթևեկության բնականոն ընթացքն ու անվտանգությունը: Հետևաբար համա-

պատասխան մարզպետը պարտավոր է ըստ առաջնահերթության ապահովել ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների՝ երթևեկության անվտանգության տեսանկյունից առավել կարևոր հատվածների կահավորումը ճանապարհային նշաններով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ եթե ռոջանտորեն առկա է ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որոշակի հատված կոնկրետ ճանապարհային նշաններով կահավորելու անհրաժեշտություն, մինչդեռ համապատասխան մարզի մարզպետը և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը չեն ընդունել որոշում ճանապարհի այդ հատվածում ճանապարհային տվյալ նշանի տեղակայման մասին, ապա այդ դեպքում ևս կարող է բարձրանալ համապատասխան մարզի մարզպետի ոչ իրավաչափ անգործության հարցը:

Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հատվող ճանապարհների հատման մասում ճանապարհային նշանների բացակայության դեպքում վարորդները և ճանապարհային երթևեկության մասցած մասնակիցները պետք է պահպանեն ճանապարհային նշանների բացակայության դեպքում գործող համապատասխան ճանապարհային երթևեկության կանոնները, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ այն դեպքում, երբ խաչմերուկում բացակայում են ճանապարհային նշանները, գործում է հավասարազոր ճանապարհների խաչմերուկների համար նախատեսված կանոնը, որի դեպքում ոչ ռեկազնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին:

Փաստորեն, ՀՀ օրենսդրության տեսանկյունից իրավաչափ է համարվում այն իրավիճակը, որ ոչ բոլոր ճանապարհներն են կահավորված ճանապարհային նշաններով: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ նման ճանապարհային հատվածներում չեն գործում երթևեկության որոշակի կանոններ, և դրանք չպետք է պահպանվեն, քանի որ ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսվել է հավասարազոր ճանապարհների խաչմերուկների համար նախատեսված կանոնը, որն ամեն դեպքում ենթակա է պահպանման նմանաբնույթ ճանապարհով երթևեկող վարորդների կողմից: Այլ կերպ ասած՝ այն պարագայում, երբ խաչմերուկում առկա չէ լուսացույց կամ որևէ այլ ճանապարհային նշան, ապա վարորդները պետք է առաջնորդվեն այն կանոնով, որ հատվող ճանապարհները հանդիսանում են հավասարազոր ճանապարհներ, և այդ հատվածով երթևեկությունը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով հավասարազոր ճանապարհների համար նախատեսված ճանապարհային երթևեկության կանոնները: Փաստորեն, ճանապարհային նշաններ չտեղադրելն իրենից ներկայացնում է ճանապարհահատվածի կարգավորման առանձնահատուկ դրսևորում, որի դեպքում հատվող ճանապարհները վերածվում են հավասարազոր ճանապարհների:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ճանապարհային երթևեկության նշաններից որևէ մեկի կիրառմամբ ճանապարհն այն հատող ճանապարհի նկատմամբ գլխավոր դարձնելու դեպքում երկրորդական ճանապարհում սովորաբար տեղադրվում են համապատասխան ճանապարհային նշաններ, որոնք վկայում են այդ ճանապարհի՝ երկրորդական լինելու մասին: Այդպիսի նշաններ են համարվում ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 1 Ձևի 2-րդ գլխում սահմանված՝ 2.4. «*Ձիջեք ճանապարհը*» ճանապարհային նշանը, որի համաձայն՝ վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով (...) ընթացող տրանսպորտային միջոցներին, և 2.5. «*Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է*» ճանապարհային նշանը, որի համաձայն՝ արգելվում է երթևեկել առանց «Կանգ» գծից առաջ (դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի եզրից առաջ) կանգնելու: Վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով (...) ընթացող տրանսպորտային միջոցներին (...): Փաստորեն, որևէ ճանապարհ առավելության նշանների կիրառմամբ դրա հետ հատվող ճանապարհի նկատմամբ գլխավոր դարձնելու դեպքում հատվող ճանապարհը, որպես կանոն, կահավորվում է նաև 2.4. «*Ձիջեք ճանապարհը*» կամ 2.5. «*Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է*» նշաններով, որոնք այդ ճանապարհով երթևեկող վարորդների համար սահմանում են պարտականություն՝ զիջելու ճանապարհը գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ գլխավոր ճանապարհը կահավորված է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով, իսկ հատվող ճանապարհը չի կահավորվում այն երկրորդական ճանապարհի համարելու նշաններով, ապա հնարավոր է, որ տվյալ ճանա-

պարհներով երթևեկող վարորդների համար սկսեն գործել երկու իրարամերձ կանոններ: Այսպես, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհով երթևեկող վարորդի վրա կարող է տարածվել ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ կետը, որի համաձայն՝ երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին՝ անկախ դրանց հետագա երթևեկության ուղղությունից: Մինչդեռ այդ ճանապարհի հետ հատվող և 2.4. «Զիջեք ճանապարհը» կամ 2.5. «Երթևեկությանն առանց կանգառի արգելվում է» նշաններով չկահավորված ճանապարհով երթևեկող վարորդի վրա կարող է տարածվել ճանապարհային երթևեկության կանոնների 98-րդ կետը, որի համաձայն՝ հավասարազոր ճանապարհների խաչմերուկում ոչ ռելազացիոն տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցներին: Նշված իրավիճակի առաջացումը պայմանավորված է այն հանգամանքով, թե որ փողոցներից են տվյալ տրանսպորտային միջոցները մուտք գործել խաչմերուկ, և որ ուղղությամբ են դրանք շարժվել, և նկարագրված է հետևյալ օրինակում. ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհով երթևեկող Ա վարորդը ողջամրորեն ենթադրում է, որ ինքը երթևեկում է գլխավոր ճանապարհով, և այդ ճանապարհի հետ հատվող մյուս ճանապարհով (որը կահավորված չէ որևէ նշանով) երթևեկող տրանսպորտային միջոցի Բ վարորդը պարզավոր է ճանապարհը զիջել Ա-ին՝ անգամ եթե Բ-ն Ա-ի վրանք տրանսպորտային միջոցին է մոտենում աջ կողմից, իսկ առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհի հետ հատվող ճանապարհով երթևեկող Բ վարորդը ողջամրորեն ենթադրում է, որ ինքն անցնում է հավասարազոր ճանապարհների խաչմերուկով, և իրեն ձախից մոտեցող տրանսպորտային միջոցի Ա վարորդը պարզավոր է ճանապարհը զիջել Բ-ին:

Այսինքն՝ բերված օրինակում գլխավոր ճանապարհի վրա այն այդպիսին դարձնող նշանի առկայության և միաժամանակ այդ ճանապարհի հետ հատվող ճանապարհի վրա այն երկրորդական դարձնող նշանի բացակայության պայմաններում այդ ճանապարհներով երթևեկող վարորդների համար ճանապարհային երթևեկության ռեժիմի միասնականությունը խաթարվում է: Այդ դեպքում վարորդները ստիպված են լինում ենթարկվել ճանապարհային երթևեկության հակասական կանոնների, ինչը կարող է հանգեցնել ճանապարհային երթևեկության պատահարների:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ նախկինում գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության հատվող ճանապարհներում դրանք մեկը մյուսի նկատմամբ գլխավոր և երկրորդական դարձնող ճանապարհային նշանների տեղադրման հարցում հնարավոր է հետևյալ իրավիճակների առաջացումը.

1) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինը չեն ընդունել որևէ որոշում մարզային (տեղական) նշանակության ճանապարհների հատման խաչմերուկի հատվածն առավելության ճանապարհային նշաններով կահավորելու վերաբերյալ: Այդ դեպքում տվյալ խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդներին վրա տարածվում է ճանապարհային երթևեկության կանոնների 98-րդ կետով նախատեսված հավասարազոր ճանապարհների հատման խաչմերուկի անցման կանոնը՝ ապահովելով երթևեկության միասնական ռեժիմն ու անվտանգությունը:

2) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինն ընդունել են համատեղ որոշում մարզային նշանակության ճանապարհի վրա այն գլխավոր ճանապարհի դարձնող առավելության նշան տեղադրելու վերաբերյալ՝ առանց անդրադարձնալու դրա հետ հատվող ճանապարհի վրա ճանապարհը զիջելու նշանի տեղադրման հարցին: Նշված իրավիճակում միայն մեկ ճանապարհի վրա առավելության ճանապարհային նշանի տեղադրման պատճառով հնարավոր է, որ խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդների վրա տարածվեն ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ և 98-րդ կետերով սահմանված հակասական կանոնները, ինչի պատճառով գլխավոր ճանապարհի վրա այն այդպիսին դարձնող նշանի առկայության և միաժամանակ այդ ճանապարհի հետ հատվող ճանապարհի վրա այն երկրորդական դարձնող նշանի բացակայության պայմաններում այդ ճանապարհներով երթևեկող վարորդների համար ճանապարհային երթևեկ-

կության ռեժիմի միասնականությունը կարող է խաթարվել:

3) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմինն ընդունել են համատեղ որոշում մարզային (տեղական) նշանակության հատվող ճանապարհների վրա համապատասխան առավելության նշաններ տեղադրելու մասին, որի համաձայն՝ Ա ճանապարհի վրա պետք է տեղադրվի այն գլխավոր ճանապարհ դարձնող ճանապարհային նշան, իսկ Բ ճանապարհի վրա՝ ճանապարհը զիջելու համապատասխան նշան: Տվյալ պարագայում մարզպետի կողմից ոչ իրավաչափ անգործություն կարող է դրսևորվել այն պայմաններում, եթե վերջինս ոչ պատշաճ կերպով է կատարել իր և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմնի համատեղ որոշմամբ սահմանված՝ Ա և Բ ճանապարհների խաչմերուկի հատվածում ճանապարհային նշանների տեղադրման իր պարտականությունը, ինչը հանգեցրել է այնպիսի իրավիճակի առաջացման, որ այդ ճանապարհներով խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդների վրա տարածվում են ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ և 98-րդ կետերով սահմանված հակասական կանոնները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը: Այսինքն՝ նշված հայցատեսակի առարկան այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը, ինչպես նաև կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելն է:

Օրենսդիրը, ի լրումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի, նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է ճանաչման հայցով դատարան դիմելու համար իրավական շահագրգռվածության հատուկ կանոն, որի համաձայն՝ հայցվորը պետք է արդարացիորեն շահագրգռված լինի համապատասխան վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ: Ավելին՝ օրենսդիրը բացահայտել է ճանաչման հայց ներկայացնելու համար հայցվորի արդարացիորեն շահագրգռված լինելու պայմանը՝ դրա առկայությունը պայմանավորելով հետևյալ հանգամանքներով.

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ,

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում,

3) վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ ներկայացնելը նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատարանը պարտավոր է պարզել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձի իրավական շահագրգռվածությունը՝ հիմք ընդունելով վերոգրյալ չափանիշները: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձը համարվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով «շահագրգիռ անձ»՝ վերոգրյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայց հարուցելու համար բավարար է, որ հայցվորն արդարացիորեն շահագրգռված լինի իր կողմից ներկայացվող պահանջի բավարարման հարցում, ինչը ենթակա է հաստատման վերը նկարագրված հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ պայմանների առկայությունը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններից. դրանց առկայության մասին կարող են վկայել ինչպես հայցվորի ներկայացրած դիրքորոշումները, փաստարկներն ու ապացույցները, այնպես էլ վիճելի իրավահարաբերության բնույթն ու բովանդակությունը:

Գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված այն գործերի քննության առանձնահատկություններին, որոնց հարուցման համար հիմք է հանդիսացել հայցվորի արդարացի շահագրգռվածության՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանը, այն է՝ գույքային վնասի հատուցում

պահանջելու հայցվորի մտադրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման նախադրյալը համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ ճանաչված լինելն է: Հենց այդ նպատակով էլ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պայմանը վերաբերում է ընդամենը գույքային վնասի հատուցում պահանջելու հայցվորի մտադրությանը: Այսինքն՝ այդ հայցատեսակով նախատեսված հայցի հարուցումն օրենսդիրը կապում է ոչ թե հայցվորին պատճառված վնասների հատուցման ենթակա լինելու հանգամանքի հետ, այլ հայցվորի կողմից ապագայում վնասների հատուցում պահանջելու ցանկության, կամահայտնության հետ: Հետևաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձի կողմից գույքային վնասի հատուցում պահանջելու վերաբերյալ հատակորեն արտահայտված մտադրությունը բավարար է վերջինիս մոտ իրավական շահագրգռվածության առկայությունը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գույքային վնասի հատուցում պահանջելու հայցվորի մտադրությամբ պայմանավորված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերի քննության շրջանակները սահմանափակված են բացառապես այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության պարզմամբ: Այսպես, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման կառուցակարգի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտով կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությամբ կամ անգործությամբ պատճառված վնասների հատուցման իրավունքը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործով կայացված վերջնական դատական ակտով համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչվելուց հետո: Ընդ որում, համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը դատական կարգով ճանաչվելուց հետո անձը վնասների հատուցման պահանջով պետք է դիմի ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած համապատասխան վարչական մարմնին, և վնասի հատուցման պահանջի իրավաչափությունը ենթակա է քննարկման այդ դիմումի հիման վրա տվյալ վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի ընթացքում:

Փաստորեն, վնասի առկայությունը և վնասի ու ոչ իրավաչափ վարչարարության միջև առկա պատճառահետևանքային կապի առկայությունը ենթակա են քննարկման ոչ թե վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտը, նրանց կատարած գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցի հիման վրա հարուցված դատական գործի շրջանակներում, այլ վնասի հատուցման դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում, իսկ դրա արդյունքում վարչական մարմնի կողմից ընդունված համապատասխան որոշման իրավաչափությունը ենթակա է գնահատման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցապահանջի հիման վրա հարուցված բոլորովին այլ դատական գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի, գործողության կամ անգործության ու դրանց հետևանքով առաջացած հնարավոր վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության կամ բացակայության հարցի պարզումը դուրս է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դատարանը պարտավոր է գնահատել բացառապես այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության իրավաչափությունը և չի կարող քննարկման առարկա դարձնել վարչական ակտի, գործողության կամ անգործության ու դրանց հետևանքով առաջացած հնարավոր վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության կամ

բացակայության հարցը:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ս. Անտոնյանը, Գ. Հակոբյանը և Ռ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հատուկ կարծիքի հեղինակներն արձանագրել են, որ ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման հարցում համապատասխան մարզի մարզպետի դրսևորած վարքագծի իրավաչափությունը գնահատելիս դատարանները նախ և առաջ պետք է պարզեն ճանապարհների համապատասխան հատվածները ճանապարհային նշաններով կահավորելու նախապայմանների առկայության հարցը, քանի որ ճանապարհների համապատասխան հատվածները ճանապարհային նշաններով չկահավորելու փաստն ինքնին բավարար չէ համապատասխան լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից դրսևորած անգործությունը ոչ իրավաչափ որակելու համար: Այսինքն՝ ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման հարցում համապատասխան մարզի մարզպետի դրսևորած վարքագծին իրավական գնահատական տալու համար դատարանները պետք է անդրադառնան այդ լիազորությունների իրականացման նպատակով մարզպետի կողմից ձեռնարկված գործողություններին, և պարզեն, թե համապատասխան մարզի մարզպետն ու ՀՀ ոստիկանության իրավասու մարմինը արդյո՞ք ընդունել են տվյալ ճանապարհային նշանի տարաբաշխումը հաստատելու մասին որոշում, թե ոչ, և եթե ընդունել են, արդյո՞ք ձեռնարկվել են համապատասխան միջոցներ այդ որոշման պահանջները կատարելու ուղղությամբ:

Այսպիսով, հատուկ կարծիքի հեղինակները գտել են, որ համապատասխան մարզի մարզպետի կողմից թույլ տրված անգործությունը կարող է ոչ իրավաչափ ճանաչվել հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության պարագայում՝

1) եթե համապատասխան մարզի մարզպետի կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշման թիվ 3 հավելվածի 12-րդ կետի 2-րդ պարբերության և 13-րդ կետի պահանջները, այն է՝ չեն կազմվել տեղակայվող նշանների տեղակայման վայրերի տարաբաշխումը և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (...) ճանապարհային ոստիկանության համապատասխան մարմնի հետ համատեղ չի ընդունվել այդ նշանների տարաբաշխումը հաստատելու և կազմակերպելու մասին որոշում, կամ

2) եթե համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինն ընդունել են տվյալ ճանապարհային նշանի տարաբաշխումը հաստատելու մասին որոշում, սակայն այդ նշանի տեղադրման ուղղությամբ համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել, կամ

3) եթե համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինն ընդունել են տվյալ ճանապարհային նշանի տարաբաշխումը հաստատելու մասին որոշում, դրա հիման վրա նշանը տեղադրվել է, սակայն համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել այն պահպանելու ուղղությամբ (օրինակ՝ ճանապարհային նշանը բացակայում է արդեն իսկ տեղադրված վայրից և այլն):

07.04.2018թ.

22. Արամ Գրիգորյանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/6295/05/14

Էջ
282-292

Խնդիր. Ո՞ր պահից է հաշվարկվում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու հանձնարարագրով այդ ուսումնասիրության համար սահմանված ժամկետը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման նպատակով ուսումնասիրություն իրականացնելու համար հարկային մարմինն իրավասու է իրականացնել հսկիչ գնում, որը տնտեսվարող սուբյեկտի մոտ կարող է իրականացվել նախկինում գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մա-

սին» ՀՀ օրենքի՝ «Հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգը» վերտա-
նությամբ 2-րդ հավելվածի 1.3-րդ կետում սպառիչ կերպով սահմանված համապատասխան
հիմքերից որևէ մեկի անկայության դեպքում: Ընդ որում, օրենքի այդ հավելվածի 1.4-րդ կետով
սահմանված կանոնից հետևում է, որ հսկիչ գնումն իրականացվում է բացառապես հարկային
մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարա-
րագրի հիման վրա, որում, ի թիվս այլնի, պետք է նշվեն նաև հսկիչ գնում իրականացնելու
ժամկետները: Փաստորեն, հսկիչ գնում իրականացնելու՝ հարկային մարմնի պաշտոնատար
անձի լիազորության անկայության հիմքը հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տես-
չության պետի գրավոր հանձնարարագրին է, իսկ նշված լիազորությամբ համապատասխան
պաշտոնատար անձն օժտված է համարվում միայն հանձնարարագրում նշված ժամկետով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ օրենսդիրը սահմանել է հանձնա-
րարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետների վերաբերյալ նշում կատարելու պար-
տադիր պահանջ: Այսինքն՝ հանձնարարագիրը պետք է բովանդակի այն ժամկետը, որի ըն-
թացքում տվյալ տնտեսվարող սուբյեկտի մոտ կարող է իրականացվել հսկիչ գնում, և որի
ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձն իրավասու է իրականացնել այդ հսկիչ
գնումը: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ օրենսդիրը սահմանել է հանձնարարագրում
հսկիչ գնում իրականացնելու ժամկետների վերաբերյալ նշում կատարելու պարտադիր պա-
հանջ, սակայն այդ ժամկետների սկզբի վերաբերյալ հանձնարարագրում նշում կատարելու
պահանջ չի նախատեսել:

Անդրադառնալով հսկիչ-դրամարկդային մեքենաների շահագործման կանոնների պահ-
պանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու նպատակով հրապարակված
հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբի վերաբերյալ նշում կատա-
րելու իրավակարգավորման բացակայությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն
չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և չի կարող երաշխավորել
իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ վարչական մարմնի գործողու-
թյունների կանխատեսելիությունն ու իրավապիտությունը: Այդ առումով Վճռաբեկ դատա-
րանն անհրաժեշտ է համարել հսկիչ-դրամարկդային մեքենաների շահագործման կանոնների
պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու հանձնարարագրում հսկիչ
գնում իրականացնելու ժամկետի սկզբի վերաբերյալ նախկինում գործող խմբագրությամբ
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.4-րդ կետի ոչ բավարար հստակությունը լրացնել սեփական մեկ-
նաբանություններով՝ նպատակ ունենալով նպաստելու քննարկվող իրավահարաբերություն-
ների ոլորտում իրավունքի զարգացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավաբանական նշանակություն ունեցող
ժամկետը ժամանակի որոշակի հատվածն է, որն ունի հստակ սկիզբ և ավարտ: Այսինքն՝
իրավաբանորեն նշանակալի ժամկետը սկսում է հոսել ժամանակի կոնկրետ պահից, որով
պայմանավորված է այդ ժամկետի տևողության հաշվարկը: Հետևաբար նախկինում գոր-
ծող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման
և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 1.4-րդ կետով սահմանված՝ հսկիչ գնում
իրականացնելու մասին հանձնարարագրում ժամկետը նշելու իմպլերատիվ պահանջը կարող
է բովանդակային առումով կատարված համարվել, եթե հսկիչ գնում կատարելու հանձնարա-
րագրում նշված են ժամկետի վերը նշված երկու պարտադիր բաղադրիչները, այն է՝ ժամկետի
սկզբնակետը և տևողությունը: Նշված բաղադրիչներից որևէ մեկի բացակայությունը ենթադ-
րում է հանձնարարագրում՝ ժամկետը նշելու պահանջի չկատարում, որպիսի պայմաններում,
ըստ էության, գործնականում անհնարին է դառնում որոշել ժամկետի ավարտը, հետևաբար
նաև՝ պարզել, թե արդյոք հսկիչ գնումն իրականացրած հարկային տեսուչները հսկիչ գնումը
կատարելու պահին օժտված են եղել համապատասխան լիազորությամբ: Այլ կերպ ասած՝ հս-
կիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբի և տևողության վերաբերյալ հանձնարարագրում
նշում կատարված լինելու պայմաններում է միայն հնարավոր պարզել այն հարցը, թե հար-
կային տեսուչները լիազորված են եղել արդյոք կատարելու հսկիչ գնում այն կատարելու օրվա
դրությամբ:

Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Եվրոպական
դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ
դատարանը գտել է, որ հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագրում ժամկետի
երկու պարտադիր բաղադրիչներից մեկի՝ ժամկետի սկզբնակետի վերաբերյալ նշում կատար-
ված չլինելու պարագայում հսկիչ գնումն իրականացնելու ժամանակահատվածի սկզբնակետ
պետք է դիտարկել հանձնարարագրին ուժի մեջ մտնելու և դրանում նշված պաշտոնատար
անձանց մոտ հսկիչ գնում իրականացնելու լիազորությունների ծագման օրը, քանի որ մի-

այն նման մոտեցման պայմաններում է հնարավոր ապահովել իրավական կանխատեսելիությունը քննարկվող իրավահարաբերության բոլոր մասնակիցների՝ վարչական մարմնի պաշտոնատար անձանց և տնտեսվարող սուբյեկտների համար: Այս առումով կարևորվում է նաև այն հարցի պարզումը, թե որ օրն է հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագիրը մտնում ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը բովանդակում է համապատասխան պարտականություն (հանձնարարություն)՝ դրանում նշված պաշտոնատար անձանց համար, ուստի դրա ուժի մեջ մտնելու հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են վերը նշված իրավանքում նշված ամրագրված կանոնները: Իսկ նշված իրավադրույթներից հետևում է, որ հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիրը՝ դրանում նշված պաշտոնատար անձանց համար ուժի մեջ է մտնում նրանց հանձնվելու օրվան հաջորդող օրվանից, հետևաբար նշված օրվանից էլ ծագում է հսկիչ գնում իրականացնելու վերջիններիս լիազորությունը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբնականի վերաբերյալ նշում կատարված չլինելու պարագայում հսկիչ գնման նպատակով ուսումնասիրություն իրականացնելու ժամկետը սկսում է հոսել այդ հանձնարարագիրը համապատասխան պաշտոնատար անձանց հանձնելու օրվան հաջորդող օրը: Այլ կերպ ասած՝ հսկիչ գնումը պետք է սկսվի և ավարտվի հանձնարարագրում նշված ժամկետում, որը հաշվարկվում է հանձնարարագրում նախատեսված օրվանից, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանձնարարագրին ուժի մեջ մտնելու, այն է՝ հանձնարարագիրը համապատասխան պաշտոնատար անձանց հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

30.11.2018թ.

23. «Արայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/11476/05/13

էջ

293-325

Խնդիր. (1) Մինչև 01.01.2013 թվականը գործող օրենսդրության տեսանկյունից կար՝ ող է արդյոք իրավաչափ համարվել այն ստուգման ակտը, որի ընդունմանն ուղղված ստուգման վարույթը կասեցվել է, իսկ հետագայում վարչական մարմինը երկարաձգել է ստուգման կասեցման ժամկետը, (2) կարո՞ղ է արդյոք իրավաչափ համարվել նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի և նախկինում գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ առաջադրող ստուգման ակտը, եթե այդ իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ իրավական և փաստական հանգամանքների առկայությունը չի հիմնավորվում արժանահավատ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ստուգումը՝ որպես վարչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի տարատեսակ, պրոցեսուալ բնույթ կրող գործողությունների ամբողջություն է, որի արդյունքը, եզրափակումը կամ ավարտն առանձին տեսակի գրավոր վարչական ակտի՝ ստուգման ակտի ընդունումն է: Հետևաբար ստուգման հետ կապված վարույթի ընթացքում կատարված գործողություններից յուրաքանչյուրը կարող է ազդեցություն ունենալ ստուգման ակտի իրավաչափության գնահատման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելու համար հարկային մարմինը կարող է իրականացնել ստուգում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված ընթացակարգերի, այդ թվում՝ ստուգման ժամկետների պահպանմամբ՝ ապահովելով նաև տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելու օրենսդրական պահանջի կատարումը: Այսինքն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) պետք է հրապարակի ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր, որտեղ, ի թիվս այլնի, պետք է նշում կատարի նաև ստուգման ժամկետի, ստուգման իրավական

հիմքերի վերաբերյալ: Այնուհետև ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ (եթե բացակայում են այս կանոնից շեղվելու օրենքով նախատեսված դեպքերը) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը հանձնել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, իսկ վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ընդ որում, ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը, ուստիև տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ անարգել մուտք գործելու, ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ պահանջելու և վերցնելու և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ լիազորությունները ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք իրավասու են իրականացնելու միայն այդ օրվանից սկսած: Մինչև ժամանակ ստուգումների ընթացքին չխոչընդոտելու, ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները կատարելու, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով փաստաթղթերը, տվյալները ներկայացնելու, դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ տրամադրելու, ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ստուգվող սուբյեկտի պարտականությունները նույնպես ծագում են ստուգումը փաստացի սկսելու օրվանից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև ստուգման ժամկետը երկարաձգելու կամ կասեցնելու դեպքերն ու կարգը, համաձայն որի՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Մինչև ժամանակ ստուգման ընթացքը կարող է կասեցվել, եթե առկա է լինում հետևյալ հիմքերից որևէ մեկը.

1. առաջացել է ստուգման ընթացքում առանձին տեղեկություններ ճշտելու անհրաժեշտություն,

2. ստուգման առնչվող փաստաթղթերն առգրավվել են հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճիռի հիման վրա,

3. տեղի է ունեցել տարերային աղետ,

4. տեղի է ունեցել ստուգումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանք:

Ընդ որում, ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ, իսկ ստուգման ընթացքի կասեցումը կարող է իրականացվել միայն ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր գեկուցագրի հիման վրա: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ մտնելու կանոն, համաձայն որի՝ ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունների միասնական կարգավորումը, այդ թվում՝ ստուգման վարույթի տևողության, դրա երկարաձգման և կասեցման հետ կապված կանոնների սահմանումը միտված է իրավական որոշակիության սկզբունքի պահպանմանը: Նշված կանոնների միջոցով, փաստորեն, տնտեսավարող սուբյեկտին տրվել է ստուգման համար սահմանված ժամկետների ավարտից հետո վարչական մարմնի կողմից իր գործունեությանն այլևս չմիջամտելու երաշխիք: Ուստի վարչական մարմինը պարտավոր է պահպանել ստուգման հետ կապված վարչական վարույթի ժամկետները, իսկ դրանց երկարաձգումն ու կասեցումը՝ իրականացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են ստուգումն իրականացնել ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետում, սակայն ստուգման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության առաջանալու կամ ստուգման ընթացքը կասեցնելու օրենքով նախատեսված հիմքեր առաջանալու դեպքում վերջիններս պետք է գրավոր հիմնավորում կամ գրավոր գեկուցագրի ներկայացնեն համապատասխան պետական մարմնի ղեկավարին (փոխարինող պաշտոնատար անձին), որն էլ պետք է ընդունի ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգ-

ման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ: Ընդ որում, ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ընդունած հրամանի կամ հանձնարարագրի մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը՝ դրանից բխող իրավական հետևանքներն առաջացնելու, մասնավորապես ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտի ուժի մեջ մտնելն ապահովելու համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ստուգման ընթացքը կասեցվում է ստուգման իրականացումն անհնարին դարձնող հանգամանքների բերմամբ, ինչից հետևում է, որ ստուգման ընթացքի կասեցման ժամանակահատվածում կասեցվում են նաև ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ստուգողական գործողություններ իրականացնելու լիազորությունները: Վճռաբեկ դատարանի նշված իրավական դիրքորոշումը բխում է նաև ստուգման ընթացքը կասեցնելու օրենսդրական հիմքերից: Օրինակ, եթե առկա է առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն, որը ձեռք բերելու ուղղությամբ կատարվելիք գործողությունները կարող են կրել տևական բնույթ, ապա ստուգումը կարող է կասեցվել մինչև այդ տեղեկությունները ստանալը: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է բացառապես այն տեղեկություններին, որոնք պետք է ձեռք բերվեն ստուգման վարույթի մասնակից չհանդիսացող սուբյեկտից: Ինչ վերաբերում է ստուգումը կասեցնելու մյուս հիմքերին, մասնավորապես՝ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելուն կամ տարերային աղետին կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքներին, ապա դրանք վարույթն իրականացնող մարմնի և վարույթի մասնակցի կամքից անկախ տեղի ունեցող իրադարձություններ են. այդ հիմքերով վարչական վարույթի կասեցման ընթացում ևս ստուգումն իրականացնող անձինք իրավասու չեն ստուգմանն ուղղված որևէ գործողություն կատարելու:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ նախկինում գործող խմբագրության համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ նշված օրենքը մինչև 01.01.2013 թվականը չի նախատեսել որևէ դրույթ ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ նախկինում գործող խմբագրությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը մինչև 01.01.2013 թվականը նախատեսել էր միայն ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ժամկետը կասեցնելու, այլ ոչ թե ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորություն: Ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորությունը նախատեսվել է միայն 19.12.2012 թվականին ընդունված և 01.01.2013 թվականից ուժի մեջ մտած ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-242-Ն ՀՀ օրենքով, որով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը ենթարկվել է փոփոխության, ինչի արդյունքում նախատեսվել է նաև ստուգման կասեցման ժամկետը երկարաձգող անհատական իրավական ակտ ընդունելու վերաբերյալ իրավադրույթ: Փաստորեն, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ստուգում իրականացնող վարչական մարմինների՝ ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու լիազորությունը սահմանվել է միայն 01.01.2013 թվականից հետո:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքով բարձրացված երկրորդ հարցին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի (մասնավորապես՝ ստուգման ակտի) վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերով պատասխանող վարչական մարմինը պետք է ապացուցի, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) հարկ վճարողի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և հարկ վճարողի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային կապի առկայության, ինչպես նաև (4) հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու համար

օրենքով նախատեսված չափանիշները հիմք ընդունելու և (5) այդ հաշվարկը ՀՀ կառավարության՝ նախկինում գործող 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով կատարված լինելու փաստական հանգամանքների առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում ապացուցման ընդհանուր կանոններից բխում է, որ հարկային մարմնի կողմից ապահովադրի սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ ապահովադրի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն առաջադրող վարչական ակտի (մասնավորապես՝ ստուգման ակտի) վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերով պատասխանող վարչական մարմինը պետք է ապացուցի, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) ապահովադրի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և ապահովադրի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային կապի առկայության, ինչպես նաև (4) ապահովադրի սոցիալական վճարների օբյեկտների և սոցիալական վճարների պարտավորությունների հաշվարկը ՀՀ կառավարության՝ նախկինում գործող 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշմամբ սահմանված կարգով կատարված լինելու փաստական հանգամանքների առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են նախկինում գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմամբ ապահովադրի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն առաջադրելու համար:

07.04.2018թ.

24. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Երվանդ Ալեյանի, վարչ. գործ թիվ ՎԴ-2/0016/05/16

էջ

326-342

Խնդիր. Արդյո՞ք անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված՝ ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գումարները հարկ վճարողից գանձելու վերաբերյալ որոշում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի ընդունումը պայմանավորված է հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմին) լիազորում է արձակել միակողմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն, վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտություն է առաջանում բոլոր այն դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին: Այսինքն՝ վարչական ակտի միջոցով համապատասխան իրավաբանական փաստերի առկայության դեպքում իրավական նորմերով սահմանված վերացական հանրային սուբյեկտով իրավունքները կամ պարտականությունները ստանում են անհատականացված ուղղվածություն՝ վերագրվում են կոնկրետ հասցեատերերի՝ ձեռք բերելով պարտադիր կատարման ենթակա լինելու հատկանիշ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից վարչական մարմնի համար իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և վարչական ակտ ընդունելու իմպերատիվ լիազորություն նախատեսված լինելու դեպքերից մեկն ամրագրված էր նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին)՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 29.1-րդ հոդվածով:

Անդրադառնալով նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածոց

սահմանված իրավադրույթների վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարել նշել, որ օրենքին համապատասխան սահմանված հարկեր մուծելը յուրաքանչյուրի սահմանադրաիրավական պարտականությունն է (2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդված և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մաս): Օրենսդիրն իր հերթին հարկ վճարողների համար սահմանել է հարկերը ժամանակին վճարելու պարտականություն (նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «դ» կետ), որի չկատարման դեպքում իրավասու վարչական մարմինը՝ հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը, նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի ուժով լիազորված է որոշում կայացնել հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորությունները կամովին չկատարվելու դեպքում այդ պարտավորության հարկադիր կատարումը գործող օրենսդրության պայմաններում հնարավոր է իրականացնել միայն համապատասխան անբողոքարկելի վարչական ակտի առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշման հարկադիր կատարման միջոցով իրավասու վարչական մարմինը հնարավորություն է ստանում փաստացի ապահովել հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարների մուտքը պետական կամ համայնքային բյուջե, իսկ նման որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չեն կարող բռնագանձվել հոգուտ պետության կամ համայնքի:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ առաջադրվում է պետական կամ համայնքային բյուջե գանձման ենթակա հարկային պարտավորություն, սակայն այդ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվում հարկադիր կատարման. դրա փոխարեն, կիրառելով նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված լիազորությունը՝ վարչական մարմինը կայացնում է ևս մեկ վարչական ակտ, որն իր էությամբ նույնությամբ կրկնում է արդեն իսկ անբողոքարկելի դարձած վարչական ակտի բովանդակությունը և ուղղված է հանրային իրավունքի բնագավառում արդեն իսկ անբողոքարկելի դարձած վարչական ակտի կողմից լուծված միևնույն հարցի լուծմանը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հատուկ ընդգծել, որ վարչական մարմնի նման գործելաճոհ չի կարող իրավաչափ համարվել, քանի որ այն միտված է անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա առաջադրված հանրային իրավական դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետի արհեստական երկարաձգմանը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի դրսևորած այդօրինակ վարքագիծն ամբողջությամբ հակասում է իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավունքի սուբյեկտների, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտի հասցեատերերի համար պետք է կանխատեսելի և որոշակի լինի, որ իրենց նկատմամբ ընդունված հանրային իրավական դրամական պահանջ պարտնականող վարչական ակտը ենթակա է լինելու հարկադիր կատարման այդ վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ անբողոքարկելի վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետների վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումների սահմանումն ուղղակիորեն բխում է իրավական որոշակիության սկզբունքից, քանի որ նշված ժամկետների ավարտից հետո այդ վարչական ակտերը որևէ եղանակով (թե՛ դատական, թե՛ արտադատական) այլևս հարկադիր կատարման ենթակա չեն: Այսինքն՝ եթե հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվում հարկադիր կատարման, ապա այդ ժամկետի ավարտից հետո տվյալ վարչական ակտի հասցեատիրոջ մոտ առաջանում է լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդ վարչական ակտն այլևս հարկադիր կատարման ենթակա չէ: Քննարկվող իրավիճակում հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտ ընդունած վարչական մարմնի հետագա վարքագիծը կանխատեսելի է դառնում այդ վարչական ակտի հասցեատիրոջ համար, քանի որ վերջինիս մոտ կարող է

ձևավորվել համոզմունք առ այն, որ իր նկատմամբ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված հանրային իրավական դրամական պահանջն այլևս չի կարող ներկայացվել հարկադիր կատարման:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ արդեն իսկ գոյություն ունեցող և անբողոքարկելի դարձած վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման փոխարեն ևս մեկ վարչարարություն իրականացնելու և այդ նույն հանրային իրավական դրամական պահանջը միևնույն անձի նկատմամբ առաջադրելու վերաբերյալ ևս մեկ վարչական ակտ կայացնելու վարչական մարմնի գործելակերպը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ և չի ապահովում առավել սեղմ ժամկետում առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար վարչական մարմնի տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի նման վարքագիծը հակառակ է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այլ նաև վարչարարության համաչափության և տնտեսավարության սկզբունքներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտի առկայության պայմաններում այդ նույն հարկային պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել ևս մեկ վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերը պետք է մեկնաբանել այնպես, որ հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու հարկային մարմնի լիազորությունը կիրառելի է միայն այն հարկային պարտավորությունների մասով, որոնք դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, այսինքն՝ դեռևս որևէ վարչական ակտով առաջադրված չեն համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ: Քննարկվող իրավադրույթների հակառակ մեկնաբանման դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ իրավական համակարգում միաժամանակ գոյություն են ունենում և գործում են միևնույն հանրային իրավական դրամական պահանջին վերաբերող երկու տարբեր վարչական ակտեր, ինչը խաթարում է հանրային իրավահարաբերությունների կայունությունն ու այդ բնագավառում իրավական անվտանգությունը:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հարկ վճարողի տվյալ հարկային պարտավորությունները դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, օրինակ՝ ստուգման ակտով, և առաջացել են, օրինակ, հարկային մարմնի ներկայացրած հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) հիման վրա կամ անմիջականորեն օրենքի ուժով (գույքահարկ, հողի հարկ): Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ հարկ վճարողների հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրված են վարչական ակտով, ապա նախկինում գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի չէ: Նշված իրավիճակի պայմաններում հարկային պարտավորությունների գծով հանրային իրավական դրամական պահանջն արդեն իսկ հաստատված է վարչական ակտով, որն անբողոքարկելի դառնալուց հետո ենթակա է հարկադիր կատարման: Հետևաբար քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ նոր որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

30.11.2018թ

25. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, «ՕՉՈԱ» ՍՊԸ-ն և «Մտարտ-Մեդիա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ հատուկ քննչական ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/0243/05/15.

էջ
343-360

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել պետական մարմինների կողմից պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց վերաբերյալ տեղեկություն տրամադրելու առանձնահատկությունների մասին՝ անդրադառնալով այն իրավական հարցին, թե արդյո՞ք պետական մարմինը, որի տիրապետության տակ գտնվում է հայցվող տեղեկությունը՝ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց վերաբերյալ, իրավունք ունի մերժելու դրա տրամադրումը՝ հիմք ընդունելով անձնական տեղեկության պահպանման անհրաժեշտությունը:

07.04.2018թ.

26. Աիդա Զաքարյանը և Լևոն Խուրշուդյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ/3665/05/14

էջ

361-377

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել այն իրավական հարցի վերաբերյալ, թե կարո՞ղ է արդյո՞ք համայնքի ղեկավարն իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ վարչական ակտում փոփոխություններ կատարել և ավելացնել այլ ֆիզիկական անձանց՝ որպես անշարժ գույքի սեփականատերերի տվյալներ այն պայմաններում, երբ այդ ֆիզիկական անձինք տվյալ անշարժ գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներ չունեն, իսկ նշված վարչական ակտի հասցեատիրոջ սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում:

26.12.2018թ.

27. Վիլսոն Թորոյանն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ ՎԳ5/0409/05/13

էջ

378-393

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածության նկատմամբ գույքային իրավունքների դատական պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ՝ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե կարո՞ղ է արդյո՞ք ֆիզիկական անձն իրեն հատկացված համայնքային սեփականություն համարվող բնակարանի նկատմամբ օժտված լինել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ուժով պաշտպանվող գույքային իրավունքով, որը վերջինիս մոտ առաջացնում է այդ բնակարանի օտարման որոշումները դատական կարգով վիճարկելու իրավական շահագրգռվածություն, եթե տվյալ անձի օգտագործման իրավունքն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ստացել պետական գրանցում, ինչպես նաև տվյալ անձն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի օգտվել այդ բնակարանի սեփականաշնորհման իրավունքից:

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

30.11.2018թ.

28. Նորիկ Տեր-Գրիգորյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/9420/05/13

էջ

394-409

Խնդիր. (1) Արդյո՞ք անշարժ գույքի սեփականության իրավունքի նոր գրանցման նպատակով կատարված սեփականության իրավունքի գործող պետական գրանցման չեղարկումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ, (2) արդյո՞ք առկա են եղել խնդրո առարկա բնակարանի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարման հիմքերը, այն դեպքում, երբ դրա հիմքում ընկած գործարքն անվավեր ճանաչելու հայցապահանջն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մերժվել է:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման երկու ռեժիմ՝ 1) դատական ակտի հիման վրա՝ առանց մինչ այդ տեղի ունեցած իրավաբանական փաստերի ուժով նոր պետական գրանցում կատարելու անհրաժեշտության և 2) մինչ այդ տեղի ունեցած իրավաբանական փաստերի հիման վրա իրավունքի

նոր պետական գրանցում կատարելու նպատակով: Ընդ որում, երբ բացակայում է իրավունքի նոր պետական գրանցման անհրաժեշտությունը, վարչական մարմնի տվյալ ակտը վերջնականապես կարգավորում է կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցը (դադարում է կոնկրետ անձի սեփականության իրավունքը), հետևաբար այդ պարագայում այն իրավադադարեցնող վարչական ակտ է: Մինչդեռ երբ իրավունքի գրանցման չեղարկումը կատարվում է նոր պետական գրանցում իրականացնելու նպատակով, իրավունքի չեղարկումն ինքնին դեռևս ամբողջությամբ չի կարգավորում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցը, այլ այդ հարցը վերջնականապես կարգավորվում է միայն իրավունքի նոր պետական գրանցմամբ, հետևաբար այդ պայմաններում իրավունքի պետական գրանցումը չեղարկելը չի համապատասխանում վարչական ակտի այն հատկանիշին, որ այն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այսինքն՝ կոնկրետ անձին առնչվող գործը չի կարող համարվել կարգավորված, քանի դեռ չի կատարվել իրավունքի նոր պետական գրանցումը: Նման պայմաններում վարչական ակտ է հանդիսանում իրավունքի նոր պետական գրանցումը, քանի որ դրանով է ավարտվում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ գործի կարգավորումը, իսկ իրավունքի պետական գրանցման չեղարկումը հանդես է գալիս իբրև ընթացիկ գործողություն, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը, այն է՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ անձին առնչվող գործի կարգավորմանը:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ե. Խունդկարյանը, Ռ. Հակոբյանը և Գ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավական նորմերի վերլուծության արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1) մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն անհատական ակտ է, քանի որ հասցեագրված է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, ում սեփականության իրավունքը դադարել է դատական ակտի հիման վրա, այսինքն՝ ունի հատկապես որոշված հասցեատեր, և ուղղված է վերջինիս սեփականության իրավունքի վերացմանը,

2) մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն ունի արտաքին ներգործություն, քանի որ առնչվում է այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ովքեր կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չեն գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած իրավահարաբերությունները,

3) մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ Կադաստրի կողմից իրավական նորմերի հիման վրա կատարված միակողմանի կարգադրություն է՝ ուղղված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց,

4) մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական անձանց համար, քանի որ դրանով վարչական մարմինը, վերացնելով անձի սեփականության իրավունքը, վատթարացնում է վերջինիս իրավական և փաստացի

5) մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական անձանց համար, քանի որ դրանով վարչական մարմինը, վերացնելով անձի սեփականության իրավունքը, վատթարացնում է վերջինիս իրավական և փաստացի

դրությունը:

Հատուկ կարծիքում ընդգծվել է, որ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը տեղի էր ունենում ոչ թե նոր սեփականության իրավունքի պետական գրանցմանն ուղղված վարչական վարույթի, այլ առանձին վարույթի շրջանակներում: Իսկ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գույքի նկատմամբ գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումից մինչև այդ գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի պետական գրանցումը կարող էր անցնել որոշակի ժամանակահատված:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ հատուկ կարծիք ունեցող դատավորները հանգել են այն եզրակացության, որ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ է, քանի որ այն համապատասխանում է վարչական ակտին բնորոշ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր որակական հատկանիշներին:

Այսպիսով, մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը՝ որպես վարչական ակտ, ունի իր ընդունման յուրահատուկ հիմքերը, ընթացակարգը, ինչպես նաև այդ վարչական ակտի ընդունումը հայցելու իրավունք ունեցող սուբյեկտների առանձնահատուկ կազմը: Ընդ որում, մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը՝ որպես վարչական ակտ, կարող է ինքնուրույն վիճարկվել վարչական կամ դատական կարգով, իսկ վերը նշված հանգամանքները կանխորոշում են այդ վարչական ակտի իրավաչափության գնահատման սահմանները:

Հատուկ կարծիքի հեղինակները գտել են, որ ինչպես ցանկացած վարչական ակտի, այնպես էլ սեփականության իրավունքի պետական գրանցման՝ դատական կարգով վիճարկվելու դեպքում դրա իրավաչափությունը դատարանը ստուգում է վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկման հայցի մերժման կամ բավարարման հարցը լուծելիս դատարանը մասնավորապես պետք է պարզի, թե պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում հաստատվել է արդյոք այն հանգամանքը, որ իրավունքի գրանցում հայցող անձն ունի կոնկրետ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, որը ենթակա է եղել պետական գրանցման՝ ըստ ներկայացված (վարույթի ընթացքում ձեռք բերված) իրավահաստատող փաստաթղթերի և այլ ապացույցների: Միևնույն ժամանակ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումից հետո կատարված սեփականության իրավունքի նոր պետական գրանցման վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանի իրավասու չէ անդրադառնալու սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման իրավաչափության հարցին՝ ելնելով այդ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածից:

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

07.04.2018թ.

29. «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/3580/05/15

էջ

410-425

Խնդիր. (1) Կարող է արդյոք աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չնկատելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատ-

մամբ առաջադրվել օրենքով սահմանված լրացուցիչ հարկային պարտավորություն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտի և որպես չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի միջև գոյություն ունեն ոչ թե աշխատանքային, այլ քաղաքացիական իրավահարաբերություններ, (2) աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը կարող է արդյոք իրավաչափ համարվել այն պայմաններում, երբ վարչական մարմինը խախտել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու իր պարտականությունը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման համար օրենսդիրը նախատեսել է հետևյալ հիմքերը. (1) գրավոր աշխատանքային պայմանագիր կամ (2) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունների ծագման վերոգրյալ հիմքերից որևէ մեկի բացակայության դեպքում իրականացվող աշխատանքը համարվում է անօրինական: Փաստորեն, օրենսդրի տեսանկյունից՝ առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի իրականացվող աշխատանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում որակվում է որպես անօրինական աշխատանք, որը գործատուի համար առաջացնում է նախկինում գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ֆիզիկական անձինք որևէ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) հետ կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա վերջինիս համար կատարում են աշխատանք կամ մատուցում են ծառայություններ, որոնք որոշակի ընդհանրություններ ունեն աշխատանքային հարաբերությունների հետ, սակայն նրանց միջև առկա հարաբերություններն իրականում կրում են ոչ թե աշխատանքային, այլ՝ քաղաքացիաիրավական բնույթ: Այդ իսկ պատճառով նախկինում գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավադրույթի կիրառության համար գործնականում էական նշանակություն ունի աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերությունների հստակ տարանջատման հարցը: Նշված հարցի կարևորությունն այն է, որ անձին որպես որևէ կազմակերպությունում (տնտեսավարող սուբյեկտում) օրենքով սահմանված կարգով չձևակերպված աշխատող համարելու և դրա հիման վրա նախկինում գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքների առաջացման կարևորագույն նախադրյալն այդ անձի և տվյալ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) միջև աշխատանքային հարաբերությունների փաստացի առկայությունն է: Այսինքն՝ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) նկատմամբ նշված իրավադրույթի ուժով եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ որպես այդ կազմակերպությունում չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձն իրականում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ աշխատանքային իրավահարաբերություններն աշխատանքային պայմանագրի հիման վրա ծագող հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են ֆիզիկական անձանց վարձու աշխատանքի կազմակերպման, կիրառման և պաշտպանության հետ: Աշխատանքային իրավահարաբերությունները տարբերվում են քաղաքացիաիրավական հարաբերություններից հետևյալ հիմնական առանձնահատկություններով.

- 1) աշխատանքային հարաբերություններում, որպես կանոն, վարձու աշխատողն ընդգրկվում է կազմակերպության աշխատանքային կոլեկտիվ և անձնական աշխատանքով մասնակցում է նրա գործունեությանը,
- 2) աշխատանքային իրավահարաբերության առարկան որոշակի տեսակի աշխատանքի կատարումն է, դրա բուն ընթացքը,
- 3) աշխատանքային իրավահարաբերություններում աշխատողն իր աշխատանքը կատարում է՝ ենթարկվելով գործատուի մոտ սահմանված աշխատանքային ռեժիմին,
- 4) աշխատանքային իրավահարաբերություններում աշխատանքի կազմակերպման և պաշտպանության պարտականությունը դրված է գործատուի վրա,
- 5) աշխատանքային իրավահարաբերություններին բնորոշ է տևական, շարունակական և կայուն բնույթը,

6) աշխատանքային իրավահարաբերությունները բացառապես հատուցելի են:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ չափանիշներին բավարարելու դեպքում կազմակերպությունում չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի և այդ կազմակերպության միջև գոյություն ունեցող հարաբերությունը կարող է որակվել որպես աշխատանքային և առաջացնել դրանից բխող բոլոր իրավաբանական հետևանքները: Այլ կերպ ասած՝ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) նկատմամբ նախկինում գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ այդ կազմակերպության և որպես չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի միջև առկա իրավահարաբերությունները համապատասխանում են աշխատանքային հարաբերությունների վերոգրյալ հատկանիշներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով վարչական մարմինների վրա դրված՝ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու պարտականությունը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է իրականացնել այն բոլոր իրավաբանական և փաստական հանգամանքների մանրամասն և ամբողջական քննություն, որոնք կարող են էական նշանակություն ունենալ վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի համար: Բացի այդ, վարչական մարմինը պետք է յուրաքանչյուր կոնկրետ գործով ձեռք բերի ամբողջական և հավաստի տեղեկատվություն ընդունվելիք որոշման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ:

Այս իմաստով գործի փաստական հանգամանքների քննարկման բազմակողմանիությունը նշանակում է, որ վարչական մարմինը պետք է հաշվի առնի այս կամ այն փաստական հանգամանքի վերաբերյալ վարույթի մասնակիցների կողմից ներկայացված դիրքորոշումները և ապացույցները: Գործի փաստական հանգամանքների քննարկման լրիվությունը ենթադրում է, որ վարչական մարմինը պետք է իրականացնի վարույթի ընթացքում ձեռք բերված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ստուգում, փաստերի առկայության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Իսկ գործի փաստական հանգամանքների քննարկման օբյեկտիվությունը ենթադրում է, որ վարչական մարմինը գործի փաստական հանգամանքները քննարկելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և պարտավոր է անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել ապացույցների հետազոտման ընթացքում՝ գերծ մնալով գործի ելքի վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից հետևում է, որ վարչական մարմինը պարտավոր է սեփական ուժերով ու միջոցներով պարզել իր կողմից քննվող գործի բոլոր փաստական հանգամանքները՝ հիմնվելով նաև վարույթի մասնակիցների կողմից ներկայացված տվյալների ու տեղեկությունների վրա: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի կողմից այս պարտականության չկատարումը կամ թերի կատարումն ընթացակարգային սխալ է, որը հանգեցնում է վարչական ակտի ոչ իրավաչափության:

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող ունենալու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար վարչական մարմինը պարտավոր է այդ տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվող ստուգման ընթացքում ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Վարչական մարմինը, մասնավորապես, պարտավոր է հաշվի առնել աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված դիրքորոշումները և ապացույցները՝ կատարելով իր կողմից ձեռք բերված, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Միայն այդ դեպքում վարչական մարմինը կարող է վարույթի ընթացքում ձեռք բերված որևէ ապացույց համարել ոչ արժանահավատ և չլինել իր կողմից ընդունվող վարչական ակտի հիմքում՝ հստակ պատճառաբանելով իր այդ դիրքորոշումը:

30.11.2018թ.

30. «ԱՍԹ-ԵՄՎԱԼ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/1881/05/15

էջ

426-440

Խնդիր. Կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը հաշվետու տարվա մի մասում գրանցված է եղել որպես անհատ ձեռնարկատեր, սակայն այդ ժամանակահատվածում որպես անհատ ձեռնարկատեր տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն չի իրականացրել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով «Անջելա տուր» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/9770/05/13 վարչական գործով 28.12.2015 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ այդ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետուն, բաժնեմաս, փայքաբաժին) պատկանում է այնպիսի ֆիզիկական անձի, որը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված այն իրավակարգավորումը: Այդ օրենսդրական կանոնի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ֆիզիկական անձը համարվում է անհատ ձեռնարկատեր պետական հաշվառման պահից մինչև այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման կամ պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահը: Փաստորեն, օրենսդիրը ֆիզիկական անձի՝ անհատ ձեռնարկատեր համարվելու հանգամանքը կախվածություն մեջ է դրել որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառում ունենալու փաստի առկայությունից կամ բացակայությունից: Ֆիզիկական անձի՝ անհատ ձեռնարկատեր համարվելու հանգամանքը պայմանավորված չէ վերջինիս կողմից տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու փաստով: Այսինքն՝ անկախ ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից, վերջինս համարվում է անհատ ձեռնարկատեր հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) տվյալ ֆիզիկական անձը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր,
- 2) տվյալ ֆիզիկական անձի գործունակությունը կամ իրավունակությունը դադարած չէ,
- 3) տվյալ ֆիզիկական անձի որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված չէ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ այդ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետուն, բաժնեմաս, փայքաբաժին) պատկանում է այնպիսի ֆիզիկական անձի, որը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր, որի գործունակությունը կամ իրավունակությունը դադարած չէ, և որի՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված չէ: Ընդ որում, տվյալ դեպքում որևէ իրավաբանական նշանակություն չունի այն հանգամանքը, որ տվյալ անհատ ձեռնարկատերը փաստացի որևէ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն չի իրականացնում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ նախկինում գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված՝ ավելացված արժեքի հարկի շեմը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով կարող է չկիրառվել միայն այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում առկա է եղել այդ իրավադրույթով սահմանված և վերը նկարագրված իրավաբանական փաստակազմը:

Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 23-րդ և 32-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումները: Այդ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված հաշվետու ժամանակաշրջանի համար՝ հիմք ընդունելով այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը: Ընդ որում, ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժա-

մանակաշրջանը, որպես կանոն, եռամսյակն է: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը վերաբերում է այն դեպքին, երբ տվյալ հարկ վճարողի՝ օրենքով սահմանված գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն ՀՀ դրամը: Այդ դեպքում տվյալ հարկ վճարողի համար ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում մեկ ամիսը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ տնտեսվարող սուբյեկտը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել, որպես կանոն, միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը: Այլ կերպ ասած՝ տնտեսվարող սուբյեկտը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել, որպես կանոն, միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը, իսկ որոշ դեպքերում (օրենքով սահմանված գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում 100 միլիոն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում) միայն այն ամիսների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը: Այն դեպքում, երբ, օրինակ, եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանի ռեժիմի ներքո գործող տնտեսվարող սուբյեկտի մոտ տարվա ընթացքում ծագում է և (կամ) դադարում է ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտականություն առաջացնող՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված հիմքը, ապա տվյալ տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել ոչ թե ամբողջ տարվա համար, այլ տարվա միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում վերոգրյալ իրավադրույթով սահմանված հիմքն առկա է եղել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ նախկինում գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված՝ ավելացված արժեքի հարկի շեմը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով չկիրառվելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի մոտ ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտականությունը ծագում է ըստ ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանների. այդ պարտականությունը՝

- վերաբերում է ոչ թե ամբողջ տարվան, այլ այդ տարվա այն հաշվետու ժամանակաշրջաններին, որոնց ընթացքում առկա է եղել մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված հիմքը, և

- չի կարող տարածվել այդ տարվա այն հաշվետու ժամանակաշրջանների վրա, որոնց ընթացքում նշված հիմքը գոյություն չի ունեցել:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

30.11.2018թ.

31. Արմեն Մելկումյան ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/2168/05/14

էջ

441-452

Խնդիր. Արդյո՞ք հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել կենսաթոշակատուի անձը հաստատող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքացու անձնագրի, վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով այն պայմաններում, երբ անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը չի դադարեցվել:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Օրենսդիրը,

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրելով պետական կենսաթոշակների տեսակները, դրանց շարքում սահմանել է նաև հաշմանդամության կենսաթոշակը, որը դասվում է աշխատանքային կենսաթոշակների շարքին («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իմաստով ֆիզիկական անձանց կենսաթոշակ նշանակելը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս անարգել օգտվելու կենսաթոշակ ստանալու իր իրավունքից: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք կարող են ձեռք բերել հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին բժշկատոցի պալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմնի կողմից ճանաչվել են հաշմանդամ և ունեն որոշակի աշխատանքային ստաժ: Ընդ որում, հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում և վճարվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից հետևում է, որ նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը կատարվում է երկու եղանակով՝ կանխիկ ու անկանխիկ: Ընդ որում, կենսաթոշակի վճարման անկանխիկ եղանակը ենթադրում է կենսաթոշակի գումարի փոխանցում կենսաթոշակառուի անվամբ օրենքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության բանկային հաշվին: Միևնույն ժամանակ օրենսդիրը նշված օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների համար սահմանել է տարեկան առնվազն մեկ անգամ բանկ ներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն ստորագրելու պարտականություն:

Վճարելի դատարանը փաստել է, որ օրենսդիրը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ կերպով սահմանել է նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը դադարեցնելու հիմքերը: Նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցում օրենսդիրը պայմանավորել է այնպիսի իրավաբանական փաստերի առաջացմամբ, ինչպիսիք են կենսաթոշակառուի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարումը, կենսաթոշակառուին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարվելը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բանկ ներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն ստորագրելու պարտականությունը կենսաթոշակառուի կողմից չկատարվելը և այլն:

Այսպիսով, կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը կարող է դադարեցնել նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Վճարելի դատարանը գտել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերի բացակայության պայմաններում կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցումը ոչ իրավաչափ միջամտություն է կենսաթոշակառուի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավասու վարչական մարմնի կողմից, առանց օրենքով սպառիչ սահմանված հիմքերի առկայության, անձի կենսաթոշակի վճարումը դադարեցնելը ոչ իրավաչափ վարչարարության դրսևորում է, որը խախտում է կենսաթոշակառուի սեփականության իրավունքը:

Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ անձին հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերի շարքում օրենսդիրը չի նախատեսել կենսաթոշակառուի անձը հաստատող փաստաթղթերի, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության» 3-րդ կետի իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Վճարելի դատարանը եզրահանգել է, որ իրավակիրառ պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ կենսաթոշակի նշանակումից հետո՝ կենսաթոշակի վճարման ենթա-

կա լինելու ժամանակահատվածի ընթացքում, կենսաթոշակատուի անձնագրի վավերականության ժամկետն ավարտվում է: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքում, երբ տվյալ կենսաթոշակատուի անձնագիրը, որը տրվել է 10 տարի ժամկետով, կենսաթոշակի նշանակման պահին վավերական է եղել, սակայն կենսաթոշակի վճարման ժամանակահատվածի ընթացքում նշված տասնամյա ժամկետը լրացել է, և կենսաթոշակատուի անձնագիրը դարձել է անվավեր: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ քննարկվող իրավիճակի առաջացումը չի կարող հիմք հանդիսանալ կենսաթոշակի վճարումը դադարեցնելու համար, քանի որ նշանակված կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, իսկ կենսաթոշակատուի անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելն այդ հիմքերի շարքում նախատեսված չէ:

Ամիդիելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման ենթակա լինելու ժամանակահատվածի ընթացքում կենսաթոշակատուի անձնագրի վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով կենսաթոշակի վճարումն իրավասու վարչական մարմնի կողմից դադարեցնելը ոչ իրավաչափ վարչարարություն է, որը հանգեցնում է կենսաթոշակատուի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի խախտման:

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍ

30.11.2018թ.

32. Այդա Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչ. գործ թիվ ՎԴ/0832/05/16

էջ

453-468

Խնդիր. Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հարցը ինչ կառուցակարգով կարող է քննվել դատարանում, և ինչ պայմանների առկայության դեպքում կարող է բավարարվել այդ վնասի հատուցմանն ուղղված հայցապահանջը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ համապատասխան համայնքը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետություն կամ համայնքի մոտ առաջացել է վնասի հատուցման պարտականությունը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը նախատեսել է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը: Այլ կերպ ասած, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, որոնք այդ պարտականությունը կատարում են համապատասխան վարչական մարմնին ներկայացված՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշված դիմումը քննարկելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն բավարարելու մասին որոշում ընդունելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից լրիվ կամ մասնակիորեն մերժվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել իր խախտված իրավունքների ինչպես վարչական, այնպես էլ դատական պաշտպանության, մասնավորապես՝ դատարանի առջև բարձրացնելով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև պահանջելով պարտավորեցնել համապատասխան վարչական մարմնին ընդունելու շահագրգիռ անձի դիմումով հայցվող համապատասխան բարենպաստ վարչական ակտը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված նմանատիպ վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը: Ընդ որում, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև այդ դիմումով հայցվող վնասի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու հարցը վարչական դատարանի առջև կարող է բարձրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով: Այդ հայցատեսակի միջոցով շահագրգիռ անձը կարող է պահանջել պարտավորեցնել ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած վարչական մարմնին ընդունելու դրա հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է այդ վարչական մարմնի կողմից: Տվյալ դեպքում շահագրգիռ անձի ներկայացրած հայցը ներառում է նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշումը վիճարկելու պահանջը: Ընդ որում, վերոհիշյալ պահանջներով վարչական դատարան ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պատասխանող է հանդես գալիս այն վարչական մարմինը, որը լրիվ կամ մասնակիորեն մերժել է իր կողմից դրսևորված ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին շահագրգիռ անձի դիմումը, քանի որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի հատուցման պարտականությունը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանողն այն վարչական մարմինն է (...), որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը ՀՀ իրավական համակարգում իրացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախևառաջ վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ վնասի հատուցման պահանջով,

3) վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով վարչական դատարան դիմելու միջոցով:

Վերահաստատելով վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պայմանների վերաբերյալ Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/1761/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ պատճառական կապն արտացոլում է երևույթների անհրաժեշտ ծագումնաբանական կապը, երբ մի երևույթը՝ պատճառը, որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջացնում է մյուսը՝ հետևանքը: Ընդ որում, կոնկրետ ոչ իրավաչափ վարչարարությամբ վնաս պատճառելու իրավահարաբերությունում վնասի հատուցման նախապայմանների առկայության հարցը լուծելիս էական է իրավական նշանակություն ունեցող պատճառական կապի առկայության հարցը պարզելը: Իսկ պատճառական կապն ունի իրավական նշանակություն, երբ վնաս պատճառողի վարքագիծը վնասակար հետևանքի հնարավորությունը դարձրել է իրականություն կամ պայմանավորել է այդ հետևանքի առաջացման կոնկրետ հնարավորությունը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար պատճառական կապի առկայության հարցում էական է այն հանգամանքը, թե վարչական մարմնի ոչ իրավաչափ վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունն արդյո՞ք անմիջականորեն հանգեցրել են ֆիզիկական կամ իրավաբանական անձին հասցված վնասի առաջացմանը, թե՛ ոչ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

07.04.2018թ.

33. Գազիկ Կոչոյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/5059/05/15

Էջ

469-480

Խնդիր. Ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ օրենսդրությամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերարտադրությունը կարող է արդյո՞ք վարչական դատարանում համարվել թույլատրելի ապացույց ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում հայտնաբերված երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսել երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելու համար: Նշված հոդվածում նկարագրված արարքը, ըստ էության, դրսևորվում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության այն կանոնի խախտմամբ, որի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ճանապարհային երթևեկության սահմանված արագության գերազանցումը՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, հաճախ հայտնաբերվում է ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս: Միաժամանակ օրենսդիրը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասում հստակ ամրագրել է, որ երթևեկության սահմանված արագության գերազանցման համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ: Ըստ այդմ, տրանսպորտային միջոցների վարորդների կողմից նշված իրավախախտման կատարման փաստը կարող է հայտնաբերվել և ամրագրվել միայն հատուկ՝ տեխնիկական միջոցներով: Իսկ ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում ոստիկանության կողմից

տեխնիկական միջոցների օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ, որի վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար նախատեսված տեխնիկական միջոցներից են նաև արագաչափը և տեսախցիկը: Ընդ որում, ՀՀ կառավարությունն արգելել է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար այնպիսի տեխնիկական (չափիչ) միջոցների, մասնավորապես՝ արագաչափի կամ տեսախցիկի, օգտագործումը, որոնք չեն անցել չափաբանական ստուգում կամ ունեն ժամկետանց ստուգման վկայական կամ սերտիֆիկացված չեն կամ նախատեսված չեն ոստիկանության հաշվեցուցակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված են ապացույցների թույլատրելիության ընդհանուր և հատուկ կանոնները: Այսպես, ապացույցների թույլատրելիության ընդհանուր կանոնի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում: Ապացույցների թույլատրելիության այս կանոնը վերաբերում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված ձևական-ընթացակարգային պահանջների պահպանվածությունը և ենթադրում է. (ա) աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից, (բ) ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելու օրենքով առաջադրված պահանջները, (գ) պատշաճ ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն պատշաճ ձևակերպման, (դ) լիազորված սուբյեկտ՝ ապացույցը պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից: Բացի վերոգրյալ ընդհանուր կանոնից, գոյություն ունի նաև ապացույցի թույլատրելիության հետևյալ հատուկ կանոնը. եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված է, որ գործի հանգամանքները պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, ապա այդ հանգամանքները չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այսինքն՝ որոշ դեպքերում ապացույցը կարող է անթույլատրելի համարվել նաև այն պատճառով, որ այն չի հանդիսանում տվյալ փաստական հանգամանքը հաստատելու համար օրենքով կամ այլ իրավական ակտերով կանխորոշված «անհրաժեշտ» ապացույց՝ այն որոշակի ապացույցը, որով, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, կարող է հաստատվել տվյալ փաստական հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս հայտնաբերված՝ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու արարքի համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վարչական մարմինը կրում է այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի, մասնավորապես՝ պատասխանատվության ենթարկված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստի, ապացուցման բեռը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս հայտնաբերված՝ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու արարքը կարող է ամրագրվել ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցների օգտագործմամբ ձեռք բերված համապատասխան ապացույցի (լուսանկար, տեսագրություն և այլն) միջոցով: Այլ կերպ ասած՝ պատասխանատվության ենթարկված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը կարող է հաստատվել կամ հերքվել այնպիսի ապացուցման միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցների օգտագործմամբ ձեռք բերված լուսանկարը կամ տեսագրությունը, որոնք իրենց բովանդակությամբ հնարավորություն են ընձեռում դատարանին առնվազն նույնականացնելու տրանսպորտային միջոցը, ինչպես նաև պարզելու վերջինիս երթևեկության արագությունը: Հետևաբար խնդրո առարկա փաստական հանգամանքը հաստատելու համար վարչական մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցներով ամրագրված համապատասխան ապացույցը, որը ձեռք է բերվել վարչական վարույթի ընթացքում և համապատասխանում է դրա թույլատրելիության բոլոր չափանիշներին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի և 47-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ տեսագրությունը և լուսանկարը վարչական դատավարությունում դասվում են օրենքով նախատեսված իրեղեն ապացույցների շարքին: Վճռաբեկ դատարանը գտել է, որ պատասխանատվության ենթարկ-

ված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստն ամրագրող տեսագրության կամ լուսանկարի՝ որպես իրեղեն ապացույցի թույլատրելիության չափանիշներից մեկը դրա ձեռքբերման միջոցների իրավաչափությունն է, որը հանգում է հետևյալին. Նշված ապացույցը պետք է ստացված լինի այնպիսի տեխնիկական միջոցով, որը համապատասխանում է ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցներին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝

- 1) այդ տեխնիկական միջոցները՝ արագաչափը կամ տեսախցիկը, անցել են չափաբանական ստուգում,
- 2) արագաչափի կամ տեսախցիկի վկայականն իրավախախտման հայտնաբերման պահին չի եղել ժամկետանց,
- 3) արագաչափը կամ տեսախցիկն իրավախախտման հայտնաբերման պահին եղել են սերտիֆիկացված,
- 4) արագաչափը կամ տեսախցիկը նախատեսված են ոստիկանության հաշվեցուցակով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած այն փաստը, որ վերջինս գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը, ապացուցելու համար վարչական դատարան ներկայացված տեսագրությունը քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում պետք է համապատասխանի ապացույցների թույլատրելիության, ի թիվս այլնի, նաև վերոգրյալ պահանջներին: Ընդ որում, տվյալ տեսագրությունը պետք է ստացված լինի անմիջականորեն ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից և չպետք է հանդիսանա այդ միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերադառնությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստն ապացուցելու համար վարչական դատարան ներկայացված տեսագրությունն իրենից ներկայացնում է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերադառնությունը, ապա այն չի կարող համարվել թույլատրելի ապացույց՝ դրա ձեռքբերման միջոցների իրավաչափության պահանջները պահպանված չլինելու հիմքով: Նման տեսագրությունն ապացուցողական ուժ չունի և չի կարող դրվել դատական ակտի հիմքում, քանի որ քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը կարող է հաստատվել միայն ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված և ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման պահանջներին համապատասխանող տեխնիկական միջոցից անմիջականորեն ստացված տեսագրությամբ:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՍԵՐ

30.11.2018թ.

34. Հայկ Օհանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչ. գործ թիվ 4Գ-1115/05/16

էջ

481-495

Խնդիր. Արդյո՞ք պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով, եթե վարչական գործի վարույթը կարճվում է այդ գործի քննության ընթացքում վարչական մարմնի նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մի կողմից դատարաններում պետական տուրք գանձելու հանրային շահի և մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի իրավաչափ շահի միջև պատշաճ հավասարակշռություն երաշխավորելու նպատակով օրենսդիրը որոշակի կատեգորիայի գործերով որոշակի կատեգորիայի անձանց համար նախատեսել է պետական տուրքի գծով արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով: Այդ արտոնությունը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, որն ամրագրում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու հիմքերը՝ սահմանելով դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի բավական լայն շրջանակ: Նշված դեպքերից մեկն այն է, որ ֆիզիկական անձն օրենքի ուժով ազատված է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության արդյունքում կայացրած դատական ակտով դատարանը լուծում է նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի, այդ թվում նաև՝ պետական տուրքի բաշխման հարցերը:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՄԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում անդրադառնալ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքերում դատական ծախսերի բաշխման հարցին այն պարագայում, երբ հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճն սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ դեպքում պատասխանող վարչական մարմնի վրա կարող են դրվել միայն այն դատական ծախսերը, որոնք կատարվել են կամ կատարվելու են հայցվորի կողմից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված այն օրենսդրական կանոնը, որի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, պարտավոր է հատուցել այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կատարել է: Ընդ որում, կողմը պարտավոր է հատուցել մյուս կողմի կրած դատական ծախսերը ողջամիտ չափով, այսինքն՝ միայն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նշված կարգավորումը հստակորեն ընդգծում է դատական ծախսերի հատուցման պարտականության սահմանները, որոնք հանգում են հետևյալին.

1) որպես կանոն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որը գործի ելքում դատավարական իմաստով պարտվել է, այսինքն՝ այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կամ այն կողմը, որի վրա դատարանի կողմից օրենքով սահմանված դեպքերում դրվում է այդ պարտականությունը, օրինակ՝ պատասխանող վարչական մարմինը՝ վերջինիս նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում,

2) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է կամ կրելու է դատարան դիմելու (դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու) համար,

3) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել դատական ծախս կատարած կողմի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 10.07.2018 թվականի թիվ ՄԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին ընդհանուր տրամաբանությունը, արձանագրել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու հանգամանքը վկայում է այն մասին, որ հայցվոր ֆիզիկական անձը դատարան դիմելու համար պետական տուրք

չի վճարում, այսինքն՝ պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չի կատարում և ապագայում չի կատարելու: Հետևաբար, վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս չի կարող կրել հայցադիմումի համար սահմանված, սակայն չվճարված պետական տուրքը պետությունը հատուցելու պարտականություն:

Վճարել դատարանը փաստել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք հայցվորը կրել է կամ կրելու է դատարան դիմելու համար: Մինչդեռ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորը դատարան դիմելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարում և չի կատարելու:

Մյուս կողմից, վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հայցվորին հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Մինչդեռ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայում է: Հետևաբար քննարկվող իրավիճակում դատարանը գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ պարտավոր է լուծված համարել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը:

Միևնույն ժամանակ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել հատուկ ընդգծել, որ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն վարչական գործերի նկատմամբ, որոնք հարուցվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա, և հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է այդ վարչական ակտի վիճարկման պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից: Մնացած բոլոր դատական գործերի նկատմամբ այս իրավական դիրքորոշումները կիրառելի չեն, քանի որ Վճարել դատարանը սույն որոշմամբ առաջնորդվել է ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշման ընդհանուր տրամաբանությամբ, որը վերաբերում է բացառապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության սահմանադրականության հարցին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճարել դատարանը հանգել է հետևյալ եզրակացության.

1) Եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճն սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա,

2) Եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությունը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

Սույն որոշման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորներ Ռ. Հակոբյանը և Գ. Հակոբյանը ներկայացրել են հատուկ կարծիք, որում, մասնավորապես, արտահայտվել են հետևյալ իրավական դիրքորոշումները.

Հայաստանի Հանրապետությունում դատական ծախսերի ոլորտում գործող իրավակարգավորումների, ինչպես նաև տնականորեն արմատացած իրավակիրառ պրակտիկայի տրամաբանությունից հետևում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու և դրա հետևանքով դատական վեճն ըստ էության սպառվելու պարագայում պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հատուցել տվյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված այն պետական տուրքի գումարը, որի վճարման պարտականությունից հայցվոր ֆիզիկական անձն ազատված է օրենքի ուժով: Այլ կերպ ասած՝ կաշկանդված լինելով դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությունը, պետությունը վարչական պատասխանատվության ենթարկված անձին ընձեռել է առանց պետական տուրքի դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորություն, որպիսի պարագայում սակայն չի կարող ոտնահարվել պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահը, ուստի պետք է փոխհատուցվեն պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, ինչն իր հերթին կանխարգելիչ նշանակություն կունենա վարչական մարմինների կողմից ոչ իրավաչափ վարչական ակտեր ընդունելու կամ դատավարական իրավունքները չարաշահելու համար:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ հատուկ կարծիքի հեղինակները հանգել են հետևյալ եզրակացության.

- եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճն սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի, այդ թվում պետական տուրքի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա,

- եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի, այդ թվում պետական տուրքի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր է պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

30.11.2018թ.

35. Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչ. գործ թիվ ՎԳ/1390/05/17

էջ
496-508

Խնդիր. Արդյո՞ք վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա կարող է դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն այն դեպքում, երբ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվել է ի վնաս հայցվորի:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավակիրառ պրակտիկայում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու հանգամանքը վկայում է այն մասին, որ հայցվոր ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դատարան դիմելու համար պետական տուրք չեն վճարում, այսինքն՝ պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չեն կատարում: Հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չեն կատարում նաև վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս, ինչպես նաև վերաքննիչ վարչական դատարանի վերջնական դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելիս: Այսինքն՝ այն դեպքում, երբ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք օրենքի ուժով ազատված են հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից, ապա վերջիններս պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված են նաև այդ

գործով իրենց համար անբարենպաստ դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոք ներկայացնելու համար:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց է դատական ծախսերի բաշխման հարցն այն իրավիճակում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման պահանջի հիման վրա հարուցված դատական գործը վարչական դատարանում լուծվում է հայցվորի օգտին, վարչական դատարանի դատական ակտը վերադաս դատական ատյան է բողոքարկվում ոչ թե հայցվորի, այլ պատասխանող վարչական մարմնի կողմից, և այդ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվում է ի վնաս հայցվորի: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել իրավական դիրքորոշումներ ձևավորել հենց այդ խնդրահարույց իրավիճակի վերաբերյալ՝ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՄԴՌ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են, մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն իրավիճակին, երբ հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ոչ առևտրային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հայցը վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտով լրիվ կամ մասնակիորեն բավարարվում է, և այդ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվում է պատասխանող վարչական մարմնի կողմից: Այդ դեպքում պատասխանող վարչական մարմինն ազատված չէ վերաքննիչ բողոքի համար պետական տուրք վճարելու պարտականությունից և պարտավոր է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով: Այդ իրավիճակում, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի, պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքը բավարարելու և վարչական դատարանի վճիռը բեկանելու, փոփոխելու և հայցը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը, անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, չի կարող պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականությունը դնել պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր կողմի վրա:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրահրավանջում բովանդակությունը հանգում է հետևյալին. վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված անույն կողմերը՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 10.07.2018 թվականի թիվ ՄԴՌ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները ներդնել վարչական գործերով իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ Վճռաբեկ դատարանը հանգել է հետևյալ եզրակացության. եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված անույն կողմերի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից: Այդ դեպքում վերաքննիչ վարչական դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող վարչական մարմնի կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հատուկ ընդգծել, որ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ արտահայտված վերոգրյալ իրավական

դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն վարչական գործերի նկատմամբ, որոնք հարուցվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա, և հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է այդ վարչական ակտի վիճարկման պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.11.2018թ.

36. Վարագդատ Մկրտչյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման, վարչ. գործ թիվ ՎԴ/4502/05/15

էջ
509-524

Խնդիր. Արդյո՞ք միևնույն վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների հիման վրա հարուցված երկու գործերով վեճի իրավական հիմքերը նույնական են, եթե այդ գործերով հայցվորի կողմից վկայակոչվել են տվյալ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված տարբեր հիմքեր:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը գտել է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է հայց հարուցելու իրավունքի այն ընդհանուր բացասական նախադրյալի հետ, որը վերաբերում է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությանը: Այսպես, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի: Փաստորեն, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը հանգեցնում է հայց հարուցելու իրավունքի բացակայության:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վերոգրյալ դատավարական կարգավորումները բխում են դատական ակտերի պարտադիրության *res judicata* հանրաճանաչ իրավական սկզբունքի էությունից, որը համարվում է իրավունքի գերակայության անկյունաքարային սկզբունքի՝ իրավական որոշակիության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները վկայում են այն մասին, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում անձը չի կարող ունենալ դատարանի մատչելիության իրավունք, քանի որ այդ պարագայում դատական գործի հարուցումն ըստ էության վերաձևվում է նախկինում քննված գործի քողարկված վերաբացման, ինչն անթույլատրելի է արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից: Այդ իսկ պատճառով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանել է, որ անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ թե՛ նախկինում, թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված է, որ ճանաչման հայցատեսակով անձը կարող է դատարանից պահանջել ճանաչել վարչական ակտի առոչինչ լինելը: Իսկ վարչական ակտի առոչնչության հիմքերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում: Փաստորեն, նախկինում գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով և ներկայումս գործող համաձայն օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի շրջանակներում վարչական ակտի առոչինչ լինելը կարող է ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում նշված հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական

վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ առ ոչինչ վարչական ակտերն ընդունվում են այնպիսի ակնհայտ կոպիտ խախտումներով, որ դրանք, որպես այդպիսին, իրավունքի տեսանկյունից գոյություն չունեն և իրենց ընդունման պահից սկսած չեն կարող առաջացնել իրավական հետևանքներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախկին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների ուժով հայցվորը պարտավոր էր հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը: Չնայած ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը կարող է հայցադիմումում վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի այն կոնկրետ կետը, որն իր կարծիքով հիմք է հանդիսանում վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու համար:

Մինևույն ժամանակ ասվածը չի նշանակում, որ վարչական դատարանը վարչական ակտի առոչնչության հարցը պարզելիս կաշկանդված է միայն հայցվորի մատնանշած կոնկրետ իրավական հիմքով: Ընդհակառակը՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է քննարկել այն հարցը, թե առկա է արդյոք այն ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկը, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում: Փաստորեն, վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ հայցվորի կողմից այդ հիմքերից մեկը, մի քանիսը կամ բոլորը վկայակոչված լինելուց կամ չլինելուց:

Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու՝ վարչական դատավարության առանձնահատուկ սկզբունքը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ առ ոչինչ վարչական ակտերն այդպիսին են հանդիսանում հենց օրենքի ուժով, իսկ վարչական դատարանն ընդամենը ճանաչում է այդ վարչական ակտերի առ ոչինչ լինելը: Հետևաբար վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է ձեռնարկել համարժեք միջոցներ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայությունը պարզելու ուղղությամբ և դրանցից որևէ մեկը հայտնաբերելու պայմաններում պարտավոր է վճիռ կայացնել այդ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին՝ անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքի առկայությունից կամ բացակայությունից:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ուշադրություն դարձնել այն դատավարական կարգավորումների վրա, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր գործով կիրառման ենթակա իրավական նորմերն ի վերջո որոշում է դատարանը դատական ակտ կայացնելիս: Վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանի իրավասությանն է վերապահված վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում նախատեսված կոնկրետ հիմքի՝ տվյալ գործով կիրառելիության հարցի լուծումը: Այլ կերպ ասած, թե՛ նախկին, թե՛ ներայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական դատարանն է որոշում, թե վարչական ակտի առոչնչության իրավական հիմքերը սահմանող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերից որն է ենթակա կիրառման տվյալ գործով:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքից բխում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է պարզել վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հիմքերից կոնկրետ որն է հայցվորը վկայակոչել որպես իր պահանջի իրավական հիմք: Հակառակ պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա»,

«բ», «գ», «դ» կետերում նախատեսված ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկով ընդունված, այսինքն՝ օրենքի ուժով առ ոչինչ համարվող վարչական ակտի առ ոչինչ լինելը դատարանի կողմից կարող է չճանաչվել՝ հայցվորի կողմից ոչ ճիշտ իրավական հիմք ընտրված լինելու պատճառով: Մինչդեռ նման իրավիճակի առաջացումը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի համատեքստում անթույլատրելի է:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.11.2018թ.

37. ԱՉ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության, վարչ. գործ թիվ ՎԴ/2976/05/15

էջ

525-535

Խնդիր. Կարող է արդյոք վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնել այնպիսի հիմքով, որը քննության առարկա չի դարձվել վարչական դատարանում և վկայակոչված չէ վերաքննիչ բողոքում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տնօրինչականության սկզբունքը վարչական դատավարության առանձին փուլերում ունի որոշակի առանձնահատուկ դրսևորումներ: Նշվածը պայմանավորված է վարչական դատավարությունում դատարանի դերով, որը գործը քննում է ի պաշտոնե: Այսպես, վարչական դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու գործառնություն ենթադրում է, մասնավորապես, հետևյալը.

1) Վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով: Նշվածից հետևում է, որ թեև դատարանը պարտականություն է կրում անդրադառնալ դատավարության մասնակիցների ներկայացրած բոլոր ապացույցներին, միջնորդություններին, առաջարկություններին, բացատրություններին և առարկություններին, սակայն սահմանափակված չէ դրանցով:

2) Վարչական դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Այսինքն՝ դատարանը, կաշկանդված չլինելով վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով, ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար: Ընդ որում, անհրաժեշտ է փաստել, որ վարչական դատավարությունը պետք է ընթանա այնպես, որ բացահայտվեն գործի իրական փաստերը: Նշված առաքելությունն իրականացնելու համար դատարանն օժտված է համապատասխան լիազորություններով, որոնք պետք է համարժեք օգտագործվեն քննարկվող գործառնության իրականացնելու համար: Ըստ այդմ, գործի իրական փաստերը բացահայտելը վարչական դատարանի ոչ թե հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը:

3) Վարչական դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները,

համարել ոչ բավարար փաստական տվյալները:

4) Վարչական դատարանը պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Նշված լիազորությունը նույնպես բխում է այն հանգամանքից, որ դատարանը կրում է գործի իրական փաստերն ամբողջությամբ բացահայտելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն՝ հայցադիմումում մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված տույքեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ: Հստ այդպես, վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնե քննելու համար: Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի կարգավորումից, որով սահմանվում է, որ վարչական դատարանը նախնական դատական նիստում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը:

Այսպես, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում նախնական դատական նիստում պարզելով վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը, վարչական դատարանը մատնանշման իր լիազորությունն իրացնելիս պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի իրավաչափության վրա ազդեցություն ունեցող հնարավոր բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արդյո՞ք պահպանվել են այդ ակտի ընդունման ուղղված վարչական վարույթի ընթացակարգային բոլոր կանոնները, և արդյո՞ք ճիշտ են մեկնաբանվել ու կիրառվել վարչական ակտի հիմքում ընկած նյութական իրավունքի նորմերը: Այլ կերպ ասած՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշի նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար և առաջարկի հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով: Միաժամանակ հաշվի առնելով տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և դրա կիրառելիությունը նաև վարչական դատավարությունում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս հետագա դատավարական գործողությունների իրականացման ժամանակ վարչական դատարանը կաշկանդված է Հաիագրգիտ անձի կամահայտությամբ: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ հայցվորը դատարանի կողմից մատնանշման լիազորության իրականացումից հետո պնդում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատվում է միայն որոշակի իրավական նորմի և ըստ այդմ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, վարչական դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացնի և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտի իրավաչափությունը գնահատի միայն այդ իրավական և փաստական հիմքերի շրջանակներում: Մինչդեռ այն դեպքում, երբ հայցվորը ևս գտնում է, որ դատարանը վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով, դատարանը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում պարտավոր է ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում:

Ջարգացնելով ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեկերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով 18.07.2014 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատա-

րանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար:

Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանը, մի կողմից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով:

Փաստորեն, վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու («ex officio») սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

30.11.2018թ.

38. Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այսայաններն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԳ/7463/05/13

էջ

536-549

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորել բողոքարկվող դատական ակտում և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում իրավական նորմերին տրված մեկնաբանությունների հակասության՝ որպես օրենքի միատեսակ կիրառության համար նշանակություն ունենալու հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի գնահատման և դրա առկայության կամ բացակայության հարցը որոշելու առանձնահատկությունների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի գործառնություն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովում է: 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը հստակեցվել է և սահմանվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իրականացնում է, inter alia, օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնություն՝ դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով: Օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնության առաջին հերթին ենթադրում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կատարված իրավական նորմերի մեկնաբանությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների կայունություն, կանխատեսելիություն, ինչպես նաև դրանց պարտադիր կիրառություն նույնսանման փաստական հանգամանքներ ունեցող բոլոր դատական գործերի համար:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ 07.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով օրենսդիրը վերանայել է 21.02.2007 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավադրույթը և սահմանել է, որ ստորադաս դատարանները կարող են կոնկրետ գործով որևէ իրավական նորմ կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նույնսանման փաստերով գործի շրջանակներում այդ իրավական նորմին տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ միայն այն դեպքում, երբ հիմնավորում են ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որևէ իրավական նորմին տրված մեկնաբանությունը կրկին պարտադիր է ստորադաս դատարանի համար նույնսանման

փաստերով գործով, իսկ այդ մեկնաբանություններից տարբերվող մոտեցման ցուցաբերումը ստորադաս դատարանի համար առաջացնում է այդպիսի շեղումը հիմնավորելու լրացուցիչ պարտականություն:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառնությունը վարչական դատավարությունում առարկայացվում և կոնկրետացվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների միջոցով: Այսպես, մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տեսանկյունից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերից մեկն այն էր, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, իսկ 09.04.2018 թվականից հետո գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տեսանկյունից՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ թե՛ մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, թե՛ 09.04.2018 թվականից հետո գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումն օրենքի [և այլ նորմատիվ իրավական ակտերի] միատեսակ կիրառության համար կարող է ունենալ էական նշանակություն այն դեպքում, երբ, *inter alia*, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերոգրյալ հիմքի առկայությունը պարտավոր է հիմնավորել վճռաբեկ բողոք բերած անձը՝ վճռաբեկ բողոքում, մասնավորապես, հիմնավորելով, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով վճռաբեկ դատարանի դատական ակտը և մեջբերելով դրա հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդված): Այնուհանդերձ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է, որ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է կամ հանգում է այն հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Այսինքն՝ բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանն է իրավասու որոշել, թե արդյոք բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, թե՛ ոչ: Փաստորեն, վճռաբեկ բողոքի ընդունելիության քննարկվող հիմքի առկայության կամ բացակայության վերաբերյալ վերջնական գնահատական տալու իրավասությունը վերապահված է բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանին:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

24.09.2018թ.

1. Հակոբ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության և մյուսների,
քաղ. գործ թիվ ԱՐԴ/3937/02/17

էջ

550-557

Խնդիր. Վճարել դատարանն անդրադարձել է հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու իրավական խնդրին:

Վճարել դատարանի դիրքորոշումը. Վճարել դատարանը փաստել է, որ օրենսդիրը, որպես պետական տուրքի վճարման արտոնություն, այն է՝ պետական տուրքի վճարումից ազատելու նախապայման, ի թիվս այլնի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով առանձնացրել է նաև այն հայցվորներին, որոնց հանցագործությամբ վնաս է պատճառվել: Ընդ որում, վերը նշված հիմքով պետական տուրքի վճարումից ենթակա են ազատման ինչպես քաղաքացիական դատավարության կարգով, այնպես էլ քրեական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացրած անձինք, եթե հանցագործության հետևանքով կրել են վնասներ:

Վճարել դատարանը գտել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված արտոնությունների սահմանում օրենսդրի կողմից պայմանավորված է այն ընդհանուր օրինաչափությամբ, համաձայն որի՝ հատկապես հաշվի են առնվում նման արտոնություն տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, ի թիվս այլնի, հանցագործության հետևանքով վնաս կրած անձանց փոխհատուցում ստանալու իրավունքը: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների պաշտպանությունը, այդ իրավունքի լիարժեք իրականացումը պայմանավորելով անձի սահմանադրորեն և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման հետ, ինչն իր հերթին պահանջում է բավարար դատավարական երաշխիքներ:

Վճարել դատարանը նաև փաստել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Վճարել դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, 80-րդ հոդվածի 4-րդ կետի համակարգային վերլուծության արդյունքում արձանագրել է, որ ինչպես տուժողը, այնպես էլ տուժողի իրավահաջորդն իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով ստանալ ՀՀ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում: Ընդ որում, օրենսդիրը չի որոշակիացրել, թե ինչ վնասի դեպքում է հնարավոր ստանալ վնասի փոխհատուցում, այսինքն՝ փոխհատուցման ենթակա է ինչպես նյութական, այնպես էլ բարոյական վնասը:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների և ՀՀ սահմանադրական դատարանի 05.11.2013 թվականի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների վերլուծությունից բխում է, որ բարոյական վնասի հատուցումը կարող է իրականացվել երկու ռեժիմով՝ ոչ նյութական բնույթի գործողություններով և նյութական հատուցմամբ: Ընդ որում, երբ անձը պահանջում է բարոյական վնասի նյութական հատուցում, ապա առկա չէ որևէ հիմք պահանջվող նյութական վնասի հատուցումը իրականացնելու այլ իրավական եղանակով, քան գույքային վնասի հատուցումը, քանի որ երկու դեպքում էլ հատուցումը ենթակա է իրականացման նյութական արտահայտությամբ: Հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ «հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման հայցերով» արտահայտությունը պետք է ենթարկվել տարածական մեկնաբանության, ըստ որի՝ հայցվորները պետական տուրքի վճարումից ազատվում են նաև այն դեպքերում, երբ հայց (բողոք) են ներկայացնում բարոյական վնասի նյութական հատուցման վերաբերյալ:

Այսպիսով՝ Վճարել դատարանը գտել է, որ հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի նյութական հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու հարցը նույնպես անհրաժեշտ է գնահատել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ հայցվորին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից ազատելը հանդիսանում է երաշխիք տուժողի՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն պարագայում, երբ օրենսդիրը իրավունք է վերապահել տուժողին կամ նրա իրավահաջորդին օրենքով սահմանված կարգով ստանալ ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական վնաս) փոխհատուցում, ապա նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է տրամադրել նաև երաշխիք, այսինքն՝ անհրաժեշտ է, որ հայցվորները դատարան դիմելիս ազատվեն հանցագործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից, այսպիսով՝ անհրաժեշտ է տրամադրել իրավական երաշխիքներ՝ տվյալ դեպքում պետական տուրքի վճարումից ազատելու եղանակով, ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար:

24.09.2018թ.

2. Ստեփան Ոսկանյանն ընդդեմ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2967/02/17

Էջ

558-568

Խնդիր. Արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն պարագայում, երբ բանկի կնիքն առկա չէ փաստաթղթի վրա:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվել է վճարահաշվարկային փաստաթղթի հասկացությունը, մասնավորապես՝ նշելով, որ այն ՀՀ օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և բանկային կանոններով սահմանված կարգով կազմված և հավաստված (վավերացված) ցանկացած թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթն է, որը պարունակում է կարգադրություն վճարահաշվարկային համակարգի մասնակցին՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու կամ փոխանցելու վերաբերյալ:

Այսինքն՝ վճարահաշվարկային համակարգի միջոցով անձն իրավասություն է ստանում կատարելու համապատասխան վճարումներ, ի հավաստում որի՝ տրամադրվում է համատասխան վճարահաշվարկային փաստաթուղթ (օրինակ՝ վճարման հանձնարարական, վճարման պահանջագիր և այլն): Ընդ որում, վճարահաշվարկային փաստաթուղթը կարող է լինել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային: Միաժամանակ օրենսդիրը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով սահմանել է նաև վճարման հանձնարարականի՝ որպես վճարահաշվարկային փաստաթղթի հասկացությունը, ըստ որի այն բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով բանկին տրված հանձնարարությունն է՝ վճարել կամ հանձնարարել այլ բանկի՝ վճարել շահառուին հաստատագրված կամ հաշվարկվող գումար:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ի ապահովում վերը նշված օրենքների կիրառման՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կանոնակարգվել են վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները: Մասնավորապես, որպես ընդհանուր կանոն՝ էլեկտրոնային եղանակով ստեղծված վճարահաշվարկային փաստաթղթի ներկայացման համար նախատեսվել են մի շարք վավերապայմաններ, որոնցից է նաև «ստորագրություն» վավերապայմանը: Ըստ այդմ էլ՝ էլեկտրոնային եղանակով վճարահաշվարկային փաստաթղթի ներկայացման դեպքում **որպես ստորագրություն կիրառվում է ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված՝ գործարքն իրականացնող անձին նույնականացնող ծածկագրի և (կամ) այլ միջոցի տրամադրումը:** Ընդ որում, ստորագրություն վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե հաճախորդը տալիս է իր համաձայնությունը գործարքն իրականացնելու համար՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ համապատասխան հրահանգ տալու միջոցով: Ավելին, նույն կարգով որպես հատուկ կանոն սահմանվել է նաև «վճարման հանձնարարականին» (վճարահաշվարկային փաստաթուղթ) վերաբերող վավերապայմանները, որի 25-րդ կետում որպես վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝

գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին տույնականացնող դրոշմակնիքի, ստորագրության առկայության վավերացված պարտադիր է միայն այն դեպքերում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է թղթային եղանակով: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, դրա նկատմամբ կիրառելի չէ վերը նշված կանոնը:

Սույն գործով վերաքննիչ դատարանը վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ վերաքննիչ բողոքին կցված պետական տուրքի վճարման հանձնարարագրում այն կատարված լինելու մասին տեղեկություն չի պարունակվում (բացակայում է բանկի անունից կատարվելիք ստորագրությունը): Մինչդեռ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ պետական տուրքի վճարումը կատարվել է էլեկտրոնային եղանակով, իսկ վճարման հանձնարարականում ստացող ֆինանսական կազմակերպության իրավասու անձի ստորագրության առկայության վավերացված պարտադիր է միայն այն դեպքերում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է թղթային եղանակով:

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

05.03.2018թ.

3. Գեորգի Ավետիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանիտար-կան և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, քաղ. գործ թիվ ԵԷԴ/0327/02/17

էջ
569-578

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս կաշկանդված է բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միմիայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում թերությունները շտկելու և բողոք ներկայացնելու համար ժամկետ չի տրամադրվում: Ընդ որում, նշված երկշաբաթյա ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դրանք, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում: Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել նաև, որ օրենսդրի կողմից գործածվող «բողոք» եզրույթը պետք է դիտարկել որպես վերաքննիչ բողոքի բովանդակային տարրերի՝ տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի միասնություն, ինչը բխում է նաև այն հանգամանքից, որ այդ երկու տարրերը սահմանված են մեկ հոդվածով և կազմում են մեկ տրամաբանական միասնություն, իսկ դրանցից որևիցե մեկի կապակցությամբ թույլ տրված խախտումը հիմք է վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով թիվ ՍԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով հայտնած իրավական դիրքորոշումը, արձանագրել է հետևյալը. օրենսդիրը, սահմանելով բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն, վերաքննիչ բողոքարկման ընդհանուր ժամկետը երկարաձգել է երկշաբաթյա ժամկետով՝ երաշխավորելով դատարանի մատչելիության իրավունքը: Դատավարական այս կարգը, սակայն, բացարձակ բնույթ չի կրում և վերաբերում է միայն բողոքի այն թերություններին, որոնք իրենց բնույթով շտկման ենթակա են և չեն բացառում վերաքննության հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ այդպիսի թերությունները կարող էին և թույլ տրված չլինել բողոքարկման ընդհանուր ժամկետի ընթացքում, այդուհանդերձ, վերաքննիչ դատարանի կողմից այդպիսիք արձանագրվելու դեպքում անձը պետք է հնարավորություն ունենա շտկելու դրանք: Օրենսդրի կողմից սահմանված երկշաբաթյա ժամկետը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն անհրաժեշտ ժամանակահատվածն

է, որի շրջանակներում անձը կարող է բողոքում թույլ տրված խախտումները վերացնել և բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան՝ դրանով իսկ հնարավորություն ունենալով իրապես իրացնել իր բողոքարկման իրավունքը: Միաժամանակ նկատի ունենալով, որ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետը, ըստ էության, բողոքարկման ընդհանուր ժամկետի շարունակությունն է, հետևաբար դրա նկատմամբ ենթակա են կիրառման այն նույն իրավակարգավորումները, որոնք վերաբերելի են ընդհանուր ժամկետում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանը:

Վերոգրյալից հետևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը, ստանալով վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, պետք է հնարավորություն ունենա երկշաբաթյա ժամկետում վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել՝ խախտումները վերացված տարբերակով, ինչը ենթադրում է, որ բողոք բերած անձը հնարավորություն պետք է ունենա բողոքը ներկայացնել բողոքի տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի հետ միասին: Նշված պահանջը կատարելու համար օրենքով սահմանված է դատավարական ժամկետ, այն է՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետ, որի ընթացքում ցանկացած ժամանակ բողոք բերած անձն իրավագոր է կատարել բողոքում թույլ տված խախտումների վերացում՝ ներկայացնելով բողոքը բովանդակային առումով՝ որպես տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի միասնություն: Ընդ որում, վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատավարական երկշաբաթյա ժամկետով և կրկին ներկայացված բողոքի կապակցությամբ իրավագոր է կայացնելու որոշում միայն այդ ժամկետն ավարտվելուց հետո: Հակառակ դեպքում՝ կսահմանափակվի բողոք բերած անձի՝ բողոքում թույլ տված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքը՝ խաթարելով անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքը:

01.06.2018թ.

4. «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ն ընդդեմ Բագրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0748/02/16

Էջ

579-587

Խնդիր. Վճռաբեկ դատարանն անդրադարձել է լիազորագրի գործողության ժամկետը լրացած լինելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերադարձման անթույլատրելիությանը միայն այն հիմքով, որ առաջին բողոքի ներկայացման ժամանակ թույլ է տրվել որևէ խախտում:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտը կոչված է ապահովելու գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է դատական ներկայացուցչություն իրականացնելու լայն շրջանակ՝ չսահմանափակելով դրա գործառնությունը դատավարական այս կամ այն փուլում, այս կամ այն դատական ատյանում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական դատավարությունում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար ներկայացուցիչը պետք է ունենա օրենքով սահմանված կարգով տրված լիազորություն, ինչն իր հերթին հնարավորություն կտա ներկայացուցչին ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ ներկայացվող դատական պաշտպանության իրավունքը: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր գործով դատարանները պետք է պարզեն դատավարական գործողություններ իրականացնելու համար անձին տրված լիազորագրի պատշաճ ձևակերպված լինելու հանգամանքը (արդյո՞ք այն տրվել է օրենքով սահմանված կարգով), արդյո՞ք պահպանված է լիազորագրի գործողության ժամկետը և այլն: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարզում է, որ դատավարական գործողություններ իրականացնելու համար տրված լիազորագիրը ներկայացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ դադարել է լիազորագրի գործողության ժամկետը, ապա դատարանն իրավասու է կիրառել դրանից բխող դատավարական հետևանքները:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, արձանագրել է, որ գործին մասնակցող անձինք դատական ակտն իրավասու էին բողոքարկել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով տրված և ձևակերպված լիազորագրի հիման վրա: Ըստ այդմ էլ վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ընդ որում, այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը պարզում է, որ վերաքննիչ բողոքը ստորագրված չէ կամ ներկայացուցչի ներկայացված լիազորագիրը

չի համապատասխանում օրենքով սահմանված կարգին, կամ դադարել է ներկայացված լիազորագրի գործողություն ժամկետը, Վերաքննիչ դատարանն իրավասու է նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքը՝ նույն հոդվածի 3-րդ կետի հիմքով սահմանելով ժամկետ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը՝ թերությունները շտկելու համար որոշակի ժամկետի տրամադրմամբ վերադարձնելը նպատակ է հետապնդում հնարավորություն տալ դատական ակտը բողոքարկած անձին վերացնելու մատնանշված թերությունները և այն կրկին՝ առանց թերությունների ներկայացնել: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք ներկայացրած անձն օրենքով սահմանված ժամկետում վերացնում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված թերությունները և կրկին այն ներկայացնում է՝ թույլ չտալով վերաքննիչ բողոքի նոր թերություններ, ապա կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա չէ վերադարձման միայն այն հիմքով, որ առաջին բողոքի ներկայացման ժամանակ թույլ է տրվել որևէ խախտում: Այլ կերպ ասած՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելիս Վերաքննիչ դատարանն իրավասու չէ հղում կատարել առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտմանը, եթե այն վերաքննիչ բողոք բերած անձի կողմից արդեն իսկ վերացվել է:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերադարձրել է պատասխանողների ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ նկատի ունենալով, որ լրացած է եղել լիազորագրի գործողության ժամկետը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կցվել է, մասնավորապես, 07.08.2017 թվականին Բագրատ Մարությանի կողմից Հերմինե Ավետիսյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը: Վերաքննիչ դատարանը կրկին վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ մասնավորապես պատճառաբանելով, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կից լիազորագիրը տրվել է Բագրատ Մարությանի կողմից 07.08.2017 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը նախկինում ներկայացվել էր 07.07.2017 թվականին, ինչից էլ հետևում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահի դրությամբ համապատասխան լիազորություններ ունենալու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Բագրատ Մարությանի մասով վերաքննիչ բողոքն առաջին անգամ վերադարձնելիս Վերաքննիչ դատարանը հստակ մատնանշել է վերաքննիչ բողոքում թույլ տրված թերությունը, ինչն էլ հետագայում կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով վերացվել է: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, Բագրատ Մարությանի մասով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելով, վկայակոչել է առաջին անգամ վերաքննիչ բողոքում թույլ տրված թերությունը, ինչն օրենքով սահմանված ժամկետում Բագրատ Մարությանի կողմից արդեն իսկ վերացվել էր:

20.07.2018թ.

5. Արաքսի Մխիթարյան ընդդեմ «Ֆաբերլիկ Զակավկալեն» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԵՇԴ/1639/02/13

էջ
588-595

Խնդիր. Արդյո՞ք վերաքննիչ դատարանն իրավասու է իրականացնելու քննություն՝ պարզելու, թե արդյո՞ք պատշաճ ձևով ներկայացված անդորրագրով հավաստվում է, որ կողմին ուղարկվել է վերաքննիչ բողոքի օրինակը, թե՛ մեկ այլ փաստաթուղթ:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված սահմանադրական նշված նորմի բովանդակությունը կազմում են հետևյալ հիմնարար պահանջները՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները որոշվում են Սահմանադրությամբ և օրենքներով,

2. այդ լիազորությունները (գործառնություններ, իրավունքներն ու պարտականությունները) կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրության այլ ակտերին,

3. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ և ձեռնպահ մնալ այդ ակտերով չնախատեսված կամ դրանց պահանջներին հակասող որևէ գործողությունից,

4. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց օրինական գործողություններից բխող պահանջները պարտադիր են կատարման այն սուբյեկտների համար, որոնց հասցեագրված են:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով նաև թիվ ԵԷԴ/0327/02/17 քաղաքացիական գործով 05.03.2018 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև փաստելով, որ ցանկացած դատավարական գործողություն կարող է կատարվել միայն նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում, գտել է, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ընդունելության հարցի քննարկման փուլում առերևույթ գնահատում է բողոքին կից ներկայացվող փաստաթղթերին առաջադրված պահանջների պահպանվածությունը: Մասավորապես՝ նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը պարտավորեցնում էր վերաքննիչ բողոք բերած անձին վերաքննիչ բողոքին կից ներկայացնել նաև բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցներ: Ընդ որում, օրենսդիրը կարևորել էր բողոքի պատճենն ուղարկելու, այլ ոչ թե գործին մասնակցող այլ անձի կողմից այն ստանալու փաստը՝ որպես բողոքը վարույթ ընդունելու նախապայման դիտելով բողոքի պատճենը գործին մասնակցող այլ անձին ուղարկելու վերաբերյալ ապացույցի ներկայացումը: Նման ապացույցի ներկայացման պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ կողմին ուղարկվել է հենց վերաքննիչ բողոքի պատճենը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող դատավարական կարգավորումների պայմաններում վերաքննիչ դատարանն իրավասություն չունի իրականացնելու քննություն՝ պարզելու համար այն հարցը, թե արդյոք պատշաճ ձևով ներկայացված անդորրագրով հավաստվում է, որ կողմին ուղարկվել է վերաքննիչ բողոքի օրինակը, թե՛ մեկ այլ փաստաթուղթ:

10.12.2018թ.

6. Սուսաննա Հակոբյանն ընդդեմ «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի, քաղ. գործ թիվ ԿԴ/0641/02/17

Էջ

596-604

Խնդիր. Արդյո՞ք Վերաքննիչ դատարանը կարող է վերադարձնել վերաքննիչ բողոքն այն դեպքում, երբ փոստային անդորրագրում հասցեատիրոջ հասցեն թեև նշվել է թերություններով, սակայն թերություններն այնպիսին չեն, որ կասկածի տակ դնեն բողոքաբերի կողմից իր դատավարական պարտականությունը կատարված լինելը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով թիվ ԵԱԲԴ/0212/04/16 քաղաքացիական գործով 25.12.2017 թվականի որոշմամբ նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ ցանկացած պարագայում դատարանը պարտականություն է կրում ստուգելու՝ արդյոք բողոք բերած անձը բողոքն ուղարկել է գործին մասնակցող այլ անձանց, և արդյոք այն ուղարկվել է ճիշտ հասցեով, քանի որ դրա հիման վրա է դատարանն ապահովում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի պատշաճ իրականացումը: Նշված պահանջը չպահպանելու դեպքում վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձն ըստ էության կատարել է նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի պահանջը, և բողոքն ուղարկվել է գործին մասնակցող անձանց թեկուզև որևէ թերությամբ նշված հասցեով, սակայն թերությունն այնպիսին չէր, որ խոչընդոտեր փոստային առաքանու հանձնումը հասցեատիրոջը, ապա միայն այդ հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելը գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականության դրսևորում է և կհանգեցնի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի անհարկի սահմանափակման:

Վճռաբեկ դատարանը նաև կարևորել է, որ կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքի պահպանության անհրաժեշտությունից ելնելով՝ վերաքննիչ բողոք ներկայացնող անձը պարտավոր էր վերաքննիչ բողոքն ուղարկել նաև գործին մասնակցող այլ անձանց, ընդ որում, այնպիսի պատշաճ հասցեով, որը կապահովեր վերջիններիս կողմից բողոքի ստացումը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարության մասնակցի վրա պատշաճ հասցեով բողոքն այլ անձանց ուղարկելու պարտականությունն այնպիսի սահմանափակում չէ, որը խաթարի դատարանի մատչելիության իրավունքը:

Անդրադառնալով սույն գործով նշված պարտականությունը բողոքաբերի կողմից կատարված լինելուն՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված փոստային անդորրագրից պարզ է դառնում, որ թեև հասցեատիրոջ հասցեն նշվել է թերություններով, սակայն թերություններն այնպիսին չեն, որ միանշանակ կերպով կասկածի տակ դնեն բողոքաբերի կողմից իր դատավարական պարտականությունը կատարված լինելու հանգամանքը հատկապես այն պարագայում, երբ առաքանու հասցեատերը

ևս հաստատել է փոստային առաքանին ստանալու հանգամանքը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ ոչ էական թերություններ պարունակող փոստային անդորրագիրը չհամարելով որպես բողոքը գործին մասնակցող այլ անձանց ուղարկած լինելը հավաստող ապացույց՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է բողոքաբերի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Արդյունքում բողոքաբերը զրկվել է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ գործնականում չի ապահովվել բողոքարկման ընթացակարգի միջոցով ենթադրյալ դատական սխալի բացահայտումը և ուղղումը:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

20.07.2018թ.

7. Գեղանուշ Հարությունյան, քաղ. գործ թիվ ԱՐԴ/4024/02/17

էջ
605-616

Խնդիր. Ինչպիսի՞ հանգամանքների առկայության պայմաններում է Հայաստանի Հանրապետության դատարանն իրավասու քննելու Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների միջև Ռուսաստանի Դաշնությունում գրանցված ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նախ և առաջ անդրադարձել է ենթակայության ինստիտուտին՝ մասնավորապես արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից է դատարանի մատչելիության իրավունքը, որի վարույթային երաշխիքներից է ենթակայության ինստիտուտը: Ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումն օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր: Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ քաղաքացիական գործի հարուցման հիմքը նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումն է: Ընդ որում, հայցի ներկայացումը այն դատարանի կողմից վարույթ ընդունելը պայմանավորված է մի շարք դատավարական հանգամանքներով, որոնց չպահպանելը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմք է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել փաստել, որ հայցադիմումը վարույթ ընդունելու գործընթացը դատավարության առաջին, հիմնական և ինքնուրույն փուլերից մեկն է, որի ընթացքում դատավորը միանձնյա ստուգում է հայցն օրենքով սահմանված կարգով հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացված լինելու հանգամանքը, պարզում է վեճի բնույթը և այն դատարանի քննությանը ենթակա լինելը, անհրաժեշտ փաստաթղթերը հայցադիմումին կցված լինելը և դատավարական օրենսգրքով սահմանված այլ հանգամանքներ: Այսինքն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պարզման ենթակա չեն հայցադիմումում ձևակերպված՝ հայցի հիմքի և առարկայի հետ կապված վիճելի նյութաիրավական պահանջի օրինականությունն ու հիմնավորվածությունը. նշվածը ստուգվում է հայցի ըստ էության քննության փուլում, ինչի արդյունքում դատարանը բավարարում է կամ մերժում է ներկայացված հայցը: Մինչդեռ այն դեպքում, երբ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պարզում է, որ տվյալ վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, դատարանը որոշում է կայացնում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

Վերագրյալ վերլուծությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի՝ ՀՀ իրավասու դատարաններին ենթակաության խնդրին:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը երաշխավորել է նաև օտարերկրյա ան-

ձանց դատական պաշտպանության իրավունքը՝ նրանց իրավունք վերապահելով իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար՝ գործերի ենթակայությանը՝ համապատասխան դիմելու Հայաստանի Հանրապետության դատարաններ, եթե տվյալ գործով պատասխանող կողմը Հայաստանի Հանրապետությունում ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Միաժամանակ օրենսդիրն օտարերկրյա անձանց հնարավորություն է տվել հավասարապես օգտվելու ՀՀ քաղաքացիներին և իրավաբանական անձանց վերապահված դատավարական իրավունքներից ու կրելու դատավարական պարտականություններ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության դատարանները նրանց մասնակցությամբ դատավարությունը պետք է իրականացնեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ օրենքների նորմերին համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ միջազգային պայմանագրերի նորմերի գերակայության սկզբունքը, կարևորել է օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի ենթակայությունը պարզելիս համապատասխան միջազգային պայմանագրի առկայության և դրանում ենթակայության հարցերը կարգավորող դրույթների բացահայտումը: Պետությունները, մասնավորապես, մի կողմից ելնելով ինքնիշխանության սկզբունքից, մյուս կողմից միջազգային համագործակցության անհրաժեշտությամբ պայմանավորված, միջազգային պայմանագրերով կարող են նախատեսել կարգավորումներ, որոնք տարբերվում են տվյալ հարցերի շուրջ ներպետական կարգավորումներից: Ընդ որում, միջազգային պայմանագրերի նորմերի և ներպետական դատավարական նորմերի վերաբերելի կարգավորումների հակասության դեպքում պետք է կիրառվեն համապատասխան միջազգային պայմանագրի դրույթները:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ընտանիքի անդամների՝ ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորում են ընտանեկան օրենսդրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով, իսկ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Ընդ որում, ամուսինների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա իրականացումը ՀՀ ընտանեկան օրենսգրքով վերապահված է համապատասխան պետական մարմիններին կամ խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Տվյալ դեպքում օրենսդիրը որոշակի բացառություն է նախատեսել ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջների մասով՝ սահմանելով, որ եթե ամուսիններից մեկը չի իմացել ամուսնության կեղծ լինելու մասին, ապա վերջինս իրավունք ունի իր անձնական ոչ գույքային իրավունքները պաշտպանելու նպատակով՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով, **բացառապես դիմելու դատարան:** Այսինքն՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով վեճը լուծող միակ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետությունում դատարանն է:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունը, անդրադարձել է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև Ռուսաստանի Դաշնությունում գրանցված ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանին ենթակա լինելու հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ թե Հայաստանի Հանրապետությունը, և թե Ռուսաստանի Դաշնությունը վավերացրել և մասնակցում են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականին Մինսկում ստորագրված կոնվենցիային (այսուհետ՝ Մինսկի կոնվենցիա):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Մինսկի կոնվենցիան կարգավորել է Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի քաղաքացիների, ինչպես նաև նրա տարածքում բնակվող անձանց միջև ամուսնաբնական հարաբերություններից բխող վեճերի նկատմամբ համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրության կիրառելիության և տվյալ վեճը լուծող մարմինների իրավասության հարցերը: Այսպես, ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով իրավասու մարմինը որոշվում է՝ հաշվի առնելով կիրառման ենթակա օրենսդրությունը, մասնավորապես այն, թե որ Պայմանավորվող կողմի օրենսդրությունն է ենթակա կիրառման՝ հիմք ընդունելով Մինսկի կոնվենցիայի

27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոնները: Հետևաբար նմանատիպ վեճերով նախ և առաջ պետք է պարզել կիրառելի օրենսդրության հարցը, ըստ այդմ նաև՝ վեճը լուծող իրավասու մարմինը, որպիսին Հայաստանի Հանրապետությունում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հանդիսանում է դատարանը: Ընդ որում, եթե հայցադիմումի ընդունելության փուլում ներկայացված փաստական տվյալների հիման վրա հնարավոր չէ բացահայտել Մինսկի կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոններից որևէ մեկի առկայությունը, այդուհանդերձ, հայցադիմումի ընդունումը միայն այդ հիմքով մերժվել չի կարող, քանի որ կիրառվելիք սահմանափակումն այդ դեպքում համաչափ չի լինի հետապնդվող նպատակի հետ և անհարկի կսահմանափակի անձի դատարանի մատչելության իրավունքը: Նման իրավիճակում, ելնելով անձի դատարանի մատչելության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից, կիրառման ենթակա են ներպետական վերաբերելի դատավարական նորմերը: Նշվածը, սակայն, չի սահմանափակում ներպետական դատավարական կանոնների համապատասխան հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում դարձյալ Մինսկի կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոններից որևէ մեկի առկայությունը ստուգելու և արդեն իսկ հարուցված գործի պայմաններում համապատասխան դատավարական հետևանքը կիրառելու իրավական հնարավորությունը:

ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

01.06.2018թ.

8. «ԷՅՁ-ԷՍ-ԲԻ-ՄԻ բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «Մանչո Գրուպ» ՍՊԸ-ի, քաղ. գործ թիվ ԿԴ1/0261/04/16

Էջ
617-624

Խնդիր. Արդյո՞ք բողոքարկման ենթակա է սնանկության գործի քննության ընթացքում առանձին պարտատիրոջ (պարտատերերի) մասով կայացված սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Զարգացնելով թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով 27.12.2017 թվականի որոշմամբ հայտնած դիրքորոշումն այն մասին, որ սնանկության վարույթում կասեցման հնարավորություն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումն ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի ապահովելու «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով կանոնակարգված՝ պարտատերերի պահանջների դատական կարգով հաստատման գործընթացը, այդ թվում՝ պարտատիրոջ (պարտատերերի) պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս բավարար երաշխիքներ ստեղծել պարտապանի, պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Ընդ որում, օրենսդիրն առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմքերի հետ:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քաղաքացիական գործի վարույթի կասեցման հիմքերն օբյեկտիվորեն պետք է խոչընդոտեն ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը քննության առնելու և տվյալ պահանջով պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու գործընթացին: Այլ կերպ ասած՝ առանձին պահանջի (պահանջների) մասով սնանկության գործի վարույթը ենթակա է կասեցման, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված և ի հայտ եկած քաղաքացիական գործի կասեցման հիմքերն այնպիսին են, որ հնարավորություն չեն տալիս սնանկության գործընթացի այդ փուլում կայացնել օրենքով սահմանված, այն է՝ պարտատերերի կամ առանձին պարտատիրոջ պահանջի (պահանջների) մասով վերջնական ցուցակը հաստատելու մասին համապատասխան որոշում:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման համար պետք է ներկայացվի պատճառարանված միջնորդություն, որը դատարանի կողմից քննարկվելու արդյունքում ենթակա է բավարարման կամ մերժման: Ըստ այդմ էլ՝ դատարանը վերը նշված հարցով կայացնում է կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու, կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու մերժելու մասին որոշում:

Անդրադառնալով այդ որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկելիության հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մասնկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը» վերտառությամբ 20-րդ հոդվածը սահմանում է սնանկության գործի քննության ընթացքում կայացվող դատական ակտերի բողոքարկումը: Ընդ որում, վերը նշված հոդվածով օրենսդիրը հնարավորություն է տվել բողոքարկելու սնանկության գործի քննության ընթացքում կայացվող ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը: Մասնավորապես՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում, որպես ընդհանուր կանոն, ամրագրվել է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները նույնպես ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով վերը նշված օրենսդրական կարգավորումները, գտել է, որ սնանկության գործի ընթացքում կայացվող պահանջի կասեցումը մերժելու մասին որոշումը նույնպես ենթակա է բողոքարկման՝ ի տարբերության նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելը մերժելու վերաբերյալ որոշման:

04.10.2018թ.

9. Գարիկ Իսրայելյան, քաղ. գործ թիվ ԵՇԳ/0072/04/17

Խտրիլ. Արդյո՞ք գործին մասնակից չդարձված անձինք, ովքեր ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովող գույքի (այդ թվում՝ գրավի առարկա հանդիսացող) սեփականատեր են (այդ թվում՝ գրավատու), կարող են բողոքարկել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը նախ և առաջ արձանագրել է, որ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համեմատ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ կանոններ սահմանված լինելու դեպքում սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Նկատի ունենալով, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն, սակայն սահմանված չէ այդ որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ բան սահմանված չլինելու հիմնավորմամբ սնանկության գործի վարումը՝ տվյալ դեպքում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը պարզելու հարցը, ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը բխեցրել է, որ գործին մասնակից չդարձված անձինք գործին մասնակցող անձանց իրավունքներից, տվյալ դեպքում՝ առաջին ստյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքից օգտվում են այն դեպքում, երբ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 11.01.2011 թվականի թիվ ՍԴԴ-932 որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը նախկին իրավական կարգավորման շրջանակներում դիտել է ոչ թե որպես գործն ըստ էության լուծող, այլ միջանկյալ դատական ակտ, որը Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ կարող էր բողոքարկվել միայն գործին մասնակցող անձանց կողմից:

Անդրադառնալով պահանջների հաստատման գործընթացին գրավատուի մասնակցության հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ և 46-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է սնանկության գործով ներկայացվող պահանջների հաստատման որոշակի ընթացակարգ: Օրենսդիրը նաև նախատեսել է որոշակի երաշխիքներ երրորդ անձի համար,

ում պատկանող գույքով ապահովված է պարտատիրոջ պահանջը: Մասնավորապես նախատեսվել է իր գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու հնարավորություն՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ վճարում կատարելով: Կարևոր երաշխիք է նաև այն, որ երրորդ անձին պատկանող գույքի հաշվին պարտատիրոջ պահանջը բավարարվելու դեպքում երրորդ անձն ընդգրկվում է պարտատերերի կազմում:

Անդրադառնալով պահանջների հաստատման փուլում երրորդ անձի՝ տվյալ դեպքում գրավատուի մասնակցությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում ենթակա են կիրառման ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումները՝ կապված սեփականության իրավունքի պաշտպանության և դատական պաշտպանության իրավունքների հետ:

ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ թեև «Մասնկության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի պարտավորեցնում սնանկության գործով կառավարչին՝ ապահովված պահանջների դեպքում ծանուցելու նաև երրորդ անձանց, ում գույքով է ապահովված համապատասխան պահանջը, իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է միայն **կառավարչի, պարտապանի և պարտատերերի** կողմից պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություն ներկայացնելու հնարավորություն, այդուհանդերձ անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ երրորդ անձը (մասնավորապես գրավատուն) պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկացված լինելու ներկայացված պահանջի մասին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առարկություն՝ նկատի ունենալով, որ ապահովված պահանջի հաստատումն ուղղակիորեն առնչվում է երրորդ անձի սեփականության իրավունքին և այդ իրավունքի դատական պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը համապատասխանում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 19.07.2016 թվականի թիվ ՄԴՌ-1294 որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը: Նշված որոշմամբ քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի (Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը) սահմանադրականությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես կարևորել է, որ օրենսդրի կողմից գրավատուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության անբավարարման դեպքում **նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը**: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ նույն տրամաբանությունն է գործում նաև մասնավորապես գրավով ապահովված պահանջը հաստատելու գործընթացում: Գրավատուն պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկանալու սնանկության վարչություն իր գույքով ապահովված պահանջ ներկայացված լինելու վերաբերյալ:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև մամուլի միջոցով երրորդ անձի ծանուցման՝ իրապես ծանուցված լինելու հնարավորությանը: Վճռաբեկ դատարանը գտնել է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 27.01.2015 թվականի թիվ ՄԴՌ-1189 որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ, որով, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ նշված դիրքորոշումը կիրառելի է նաև պահանջների հաստատման գործընթացում գրավատուների տեղեկացվածության վերաբերյալ: Եթե օբյեկտիվորեն գրավատուն հնարավորություն չի ունեցել տեղեկացված լինելու սնանկության վարչություն ներկայացված պահանջի վերաբերյալ, ապա վերջինիս պետք է տրվի հնարավորություն ներկայացնելու իր առարկությունները՝ ներկայացված պահանջի վերաբերյալ: Հակառակ իրավական դիրքորոշման պարագայում սահմանափակվում է ոչ միայն անձի սեփականության, այլ նաև դատական պաշտպանության իրավունքը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը գործին մասնակից չդարձված գրավատուների կողմից բողոքարկելու հնարավորությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

Թեև Նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ գործին մասնակից չդարձված անձինք կարող էին բողոքարկել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այդուհանդերձ, նկատի ունենալով, որ 2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանին վերապահվել է նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու լիա-

գործություն, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով գրավատուներին պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը բողոքարկելու հնարավորություն տալը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և համապատասխանաբար ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի կողմից բացահայտված անձի դատական պաշտպանության իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ բողոքարկվող դատական ակտն ուղղակիորեն շոշափում է գրավատուների սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը նաև կարևորել է, որ նախորդ օրենսդրական կարգավորումը փոփոխվել է 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, և փաստորեն գործող կարգավորման պայմաններում գործին մասնակից չհարձված անձինք կարող են բողոքարկել նաև պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը՝ նկատի ունենալով, որ վերջինս «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված բողոքարկման ենթակա դատական ակտ է:

Վերահաստատելով թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով 12.07.2018 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանի հայտնած այն դիրքորոշումը, որ իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է **մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը**, սույն գործով Վճռաբեկ դատարանը, կարևորելով օրենքի նկատմամբ իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունը, արձանագրել է, որ անհրաժեշտ է գրավատուներին վերապահել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ նկատի ունենալով, որ հակառակ դեպքում սահմափակվում են վերջիններիս սեփականության և դատական պաշտպանության իրավունքները:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

07.12.2018թ.

10. Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի, քաղ. գործ թիվ ԵԱՆԴ/0563/02/16

Էջ

638-646

Խնդիր. Կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով կարող է արդյոք սահմանափակվել անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանը Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որի կարևոր բաղադրիչներից մեկն, ի թիվս այլնի, բողոքարկման իրավունքն է: Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական ակտերի բողոքարկման դատավարական ինստիտուտն իրավական այնպիսի միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

Անդրադառնալով կատարողական թերթի տրամադրումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա չէր որևէ կանոնակարգում կատարողական թերթի տրամադրումը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավական հնարավորության վերաբերյալ: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել վերը նշված հարցին անդրադառնալ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի յուսի ներքո: Այսպես, կատարողական վարույթի հարուցման հիմքում ընկած է կատարողական թերթը, որը տրվում է դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանի կողմից: Կատարողական թերթի տրամադրումը նպատակ ունի ապահովել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը, ըստ այդմ էլ՝ այն ոչ միայն երաշխավորում է դատական ակտի պարտադիրության սկզբունքը, այլ նաև ապահովում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված յուրաքանչյուր անձի արդար

դատաբնության իրավունքի լիարժեք իրականացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորելով վերաբնության կարգով բողոքարկման ենթակա ակտերի հետ կապված իրավահարաբերությունները, չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը՝ դրանով իսկ սահմանափակելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը: Մինչդեռ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 13.12.2016 թվականի թիվ ՄԴՈ-1330 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում, որպիսի պայմաններում կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է վերաբնության կարգով բողոքարկման: Ընդ որում, նշված որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով: Վճռաբեկ դատարանի նշված հետևությունը բխել է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ արտահայտված իրավական վերլուծությունից, ըստ որի՝ կատարողական թերթը կազմում է գործն ըստ էության լուծող դատական ակտի օրգանական մասը, հետևաբար այն ենթարկվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրենքով նախատեսված բողոքարկման ընդհանուր կանոնին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումն ու այդ սահմանափակմամբ հետապնդվող նպատակը չեն կարող լինել իրավաչափ, քանի որ չեն ապահովում դատարանի մատչելիության, արդար դատաբնության իրավունքն արդյունավետորեն իրացնելու ու արդար դատաբնության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու հնարավորությունը:

Ամփոփելով վերագրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԳՈՐԾԵՐԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

12.09.2018թ.

11. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Արկադի Բարսեղյանի, վարչ. գործ թիվ ՎԴ-3/0186/05/16

Էջ

647-656

Խնդիր. Ֆիզիկական անձին մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտավորեցնելու վերաբերյալ վարչական մարմնի կողմից ներկայացված հայցը ենթակա է արդյոք դատարանի քննությանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով 20.07.2017թ. որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումները՝ վեճը դատարանում քննության ենթակա լինելու հարցի վերաբերյալ, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «*հայցը ենթակա է դատարանում քննության*» արտահայտության նշանակությունը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը (հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա է Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Այլ կերպ ասած՝ Նշված իրավադրույթով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժվում է այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու է լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը: Եթե գործը ենթակա է դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու է խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության վարչադատավարական կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, որի 3-րդ հոդվածն ամրագրում է այն հարցերի շրջանակը, որոնցով վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան: Այդ դեպքերից մեկը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և հանգում է հետևյալին. *վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին:* Նշված օրենսդրական կարգավորումը սահմանում է վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացված հայցի՝ դատական ենթակայության հատուկ կանոն, որի համաձայն՝ այդ հայցը կարող է ենթակա լինել դատարանում քննության հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցի առարկան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջն է,

2) վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց զրկելու կամ նրանց վրա վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պահանջվող պարտականությունները դնելու իրավասությունն օրենքով վերապահված է դատարանին:

Փաստորեն, վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու հայցը ենթակա է դատարանում քննության միայն այն դեպքում, երբ օրենքով դատարանն օժտված է այդ հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց զրկելու կամ այդ հայցով պահանջվող պարտականությունները նրանց վրա դնելու իրավասությամբ: Հակառակ պարագայում՝ այն դեպքում, երբ որևէ օրենքով դատարանին հատուկ վերապահված է վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պա-

հանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գրկելու կամ այդ հայցով պահանջվող պարտականությունները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա դնելու իրավասություն, ապա վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից գրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի համապատասխան իրավադրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար հայտարարատուն պարտավոր է ներկայացնել այդ ապրանքների մաքսային հայտարարագիր, որը պարունակում է ապրանքների ու ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ տվյալներ և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են ապրանքների բացթողման համար: Ընդ որում, որպես կանոն, Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի մինչև ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքների մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դրվում է իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի ուժով, և դրա համար որևէ մարմնի կողմից հատուկ որոշում կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Այլ կերպ ասած՝ ապրանքների մաքսային ընթացակարգով ձևակերպման կամ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված այլ դեպքերում հայտարարատուն կրում է այդ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, որը վերջինիս վրա ինքնուստիքյան դրվում է այդ միջազգային պայմանագրի ուժով՝ առանց որևէ հանրային-իշխանական մարմնի, այդ թվում նաև՝ դատարանի կողմից հատուկ անհատական իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության: Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ *Մաքսային միության մաքսային օրենսգրքը սահմանել է, որ այդ պարտականությունը չկատարվելու համար հայտարարատուն կրում է Մաքսային միության անդամ երկրների ազգային օրենսդրությամբ սահմանված պարասխմաարվություն:*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկվող պատասխանատվությունը սահմանված է ՀՀ մաքսային օրենսգրքով (194-րդ և 203-րդ հոդվածներ): Մաքսային կանոնների վերոգրյալ խախտման համար ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցը հանդիսանում է վարչական տույժի տարատեսակ, իսկ նույն օրենսգրքի 38-րդ գլխի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝ նույն գլխին չհակասող մասով: Իր հերթին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: Վերոգրյալից հետևում է, որ սահմանված ժամկետում հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու համար վարչական տույժի ենթարկվելը հայտարարատուին չի ազատում իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պարտականությունից:

Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքը, սահմանելով հայտարարատուի՝ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը, չի նախատեսել որևէ կարգավորում դատական կարգով այդ պարտականությունը կատարելուն անձին հարկադրելու վերաբերյալ: Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դատական կարգով դնելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում նախատեսված չէ նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով կամ այլ միջազգային պայմանագրերով: Փոխարենը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքը սահմանել է, որ այդ պարտականությունը չկատարելու համար հայտարարատուն կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իրավահարաբերության ծագման պահին մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներում և միջազգային

ապամանագրերում (մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքում) գոյություն չունի այնպիսի իրավակարգավորում, որի համաձայն՝ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դնելու իրավասությունը վերապահված է դատարանին: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դատարանն իրավահարաբերության ծագման պահին մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներով և միջազգային պայմանագրերով (մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով) օժտված չէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն դնելու իրավասությամբ: Հետևաբար ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դնելու իրավասությունն օրենքով դատարանին վերապահված լինելու իրավական հիմք գոյություն չունի: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն դնելու վերաբերյալ վարչական մարմինների կողմից ներկայացված հայցը ենթակա չէ քննության դատարանում:

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

01.06.2018թ.

12. «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնաբեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչ. գործ թիվ ՎԴ/5719/05/16

Էջ

657-664

Խնդիր. Արդյո՞ք հայցի ապահովման ինստիտուտը կիրառելի է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերով:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը: Ուստի հայցի ապահովման միջոց ձեռնարկելիս դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնի գործում առկա բոլոր այն հանգամանքները, որոնք հիմնավորում են հայցի ապահովում չձեռնարկելու պարագայում դատական ակտի կատարման անհնարինությունը կամ դժվարացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է վարչական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտի կիրառության շրջանակներն ու հիմքերը: Այսպես, նշված իրավադրույթի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հայցի ապահովումը կիրառվում է օրենքով հստակ կանխորոշված հետևյալ հայցատեսակների հիման վրա հարուցված գործերով:

1) պարտավորեցման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդված),

2) գործողության կատարման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդված),

3) ճանաչման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդված):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատավարությունում հայցի ապահովման միջոցները կարող են կիրառվել վերը թվարկված հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի քննության շրջանակներում՝ անկախ տվյալ հայցապահանջի բնույթից: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից հայցի ապահովման միջոց կիրառելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե տվյալ գործի հարուցման համար հիմք հանդիսացող հայցն ունի ճանաչողական, թե կատարողական բնույթ: Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե ներկայացված հայցապահանջների բնույթը, այլ հայցի ապահովման միջոց կիրառելու՝ օրենսդրի կողմից սահմանված հիմքերի առկայությունը, այսինքն՝ նման միջոցներ չձեռնարկվելու դեպքում դատական ակտի կատարումն անհնարին դարձնելու կամ դժվարացնելու հնարավորությունը:

Տվյալ դեպքում Դատարանը, մերժելով հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը, նշել է, որ սեփականության իրավունքի պետական

գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի բավարարման վերաբերյալ դատական ակտը կատարում չի պահանջում, ուստի օբյեկտիվորեն չի կարող ծագել նաև դրա կատարման անհնարինություն կամ կատարման գործընթացի դժվարացման հավանականություն: Հետևաբար Դատարանը գտել է, որ սույն գործով հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վերաքննիչ դատարանը բավարարել է հայցվորի վերաքննիչ բողոքը և վերացնելով Դատարանի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը՝ բավարարել է հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը՝ փաստելով նաև, որ ճանաչման հայցի դեպքում հայցի ապահովման միջոցները կիրառելի են, քանի որ այդ հայցատեսակն օրենսդրի կողմից ներառված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով հայցվորի կողմից ներկայացված՝ սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հիմնական հայցապահանջը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հանդիսանում է ճանաչման հայց: Հետևաբար սույն գործով կարող են կիրառվել հայցի ապահովման միջոցներ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ հայցի ապահովման միջոց կարող է կիրառվել պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի դեպքում՝ անկախ տվյալ հայցապահանջի բնույթից: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարել Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հայցի ապահովման ինստիտուտը կիրառելի է սույն գործով ներկայացված հայցատեսակի շրջանակներում:

Մինչև սույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը բացակայել են: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ սույն գործով հայցվորը, ներկայացնելով հայցի ապահովում կիրառելու միջնորդություն, չի ներկայացրել որևէ փաստական հիմք կամ հիմնավորում, որը կարող է վկայել այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը չարգելելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը, ևս չի մատնանշել որևէ փաստական հիմնավորում այն մասին, որ անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը չարգելելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտել է, որ անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը կամ չկատարումը չի կարող առնչվել նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ դատական ակտի կատարման հետ: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումների բովանդակությունը:

Փաստորեն, սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որով ըստ էության հաստատվում են առ ոչինչ վարչական ակտի՝ ընդունման պահից իրավաբանական ուժ չունենալու և կատարման կամ կիրառման ենթակա չլինելու հանգամանքները, ինքնին պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, իսկ առ ոչինչ ճանաչված վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետևաբար սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարման հնարավորության և անշարժ գույքի օտարման կամ գրավադրման արգելքի միջև իրավաբանական կապ առկա չէ: Այսինքն՝ սույն գործով հայցվորի կողմից պահանջվող հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայել է:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՌԻԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ (ԵԶՐԱՓԱԿԻՉ)
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0056/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ա. Հունանյան

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0056/02/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների ընդդեմ Վահագն Սահակյանի, երրորդ անձ Երևանի «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքը վերականգնելու պահանջների մասին, և ըստ Վահագն Սահակյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների՝ անշարժ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանները պահանջել են 13.06.2012 թվականին կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչել և վերականգնել իրենց սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վահագն Սահակյանը պահանջել է պարտավորեցնել Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյաններին ազատել Երևանի Արտաշիսյան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը և այն հանձնել իրեն:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Չիչոյան) 16.12.2014 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ն. Բարսեղյան, Ս. Միքայելյան, Հ. Ենոքյան) 17.04.2015 թվականի որոշմամբ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուրանյան) (այսուհետ՝ Դատարան) 31.01.2017 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.05.2017 թվականի որոշմամբ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.01.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետը և 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ խաբեությանը և հանցավոր եղանակով Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյաններից վերցվել է լիազորագիր, որի միջոցով կնքվել է վիճարկվող առուվաճառքի պայմանագիրը: Նշվածը հաստատվում և հիմնավորվում է սույն գործում առկա՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.10.2013 թվականի թիվ ԵՇԴ/0006/01/13 օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ըստ որի՝ Սամվել Գասպարյանը, չարաշահելով տուժողներ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների վստահությունը, նրանց

բնակարանի մակերեսը մեծացնելու համար թույլտվություն ստանալու պատրվակով, խաբեությամբ, նոտարական վավերացմամբ նրանցից ձեռք է բերել լիազորագիր, որի օգնությամբ 13.06.2012 թվականին կնքել է առուվաճառքի պայմանագիր, որով վաճառել է սեփականության իրավունքով վերջիններիս պատկանող՝ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը՝ խարդախությամբ հափշտակելով առանձնապես խոշոր չափերի գույք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.05.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների կողմից 26.05.2012 թվականին Սամվել Գասպարյանին տրված, նոտարական կարգով վավերացված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է իր հայեցողությամբ տնօրինել՝ օգտագործել, իր նախընտրած պայմաններով և գնով վաճառել, փոխանակել, վարձով, անհատույց օգտագործման հանձնել կամ իր հայեցողությամբ որոշված պայմաններով, ցանկացած բանկում և ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ, ցանկացած վարկառուի կամ փոխառուի ստանալիք վարկի կամ փոխառության դիմաց գրավ դնել և գրավից հանել, սեփականության իրավունքով նրանց պատկանող՝ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ հասցեում գտնվող բնակարանը, իրենց անունից կնքել և ստորագրել նախավճարի, առուվաճառքի, տարածամեկետ վճարումով առուվաճառքի, վարձակալության, անհատույց օգտագործման պայմանագրեր **(հատոր 1-ին, գ.թ. 21)**.

2) Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումաշյանների անունից նոտարական կարգով վավերացված լիազորագրի հիման վրա որպես վաճառող հանդես եկող Սամվել Գասպարյանի և որպես գնորդ հանդես եկող Վահագն Սահակյանի միջև 13.06.2012 թվականին կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Սամվել Գասպարյանը վաճառել է, իսկ Վահագն Սահակյանը որպես սեփականություն 8.200.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը **(հատոր 1-ին, գ.թ. 7)**.

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 18.06.2012 թվականին տրված թիվ 18062012-01-0724 վկայականի համաձայն՝ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանի նկատմամբ գրանցվել է Վահագն Սահակյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 8)**.

4) Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/0006/01/13 քրեական գործով 17.10.2013 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հիմնավորվել է, որ Սամվել Գասպարյանը, չարաշահելով տուժող Մարի Ղումաշյանի վստահությունը, նրա բնակարանի մակերեսը մեծացնելու համար թույլտվություն ստանալու պատրվակով 26.05.2012 թվականին խաբեությամբ, նոտարական վավերացմամբ նրանից ձեռք է բերել լիազորագիր, որի օգնությամբ 13.06.2012 թվականին առուվաճառքի պայմանագրով Մարի Ղումաշյանին պատկանող՝ 9.600.000 ՀՀ դրամ արժողությամբ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը 20.500 ԱՄՆ դոլարով վաճառել է Վահագն Սահակյանին՝ խարդախությամբ հափշտակելով տուժող Մարի Ղումաշյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի գույքը **(հատոր 1-ին, գ.թ. 124-133)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքը բարեխիղճ ձեռք բերողից հեղ պահանջելու նախադրյալներին այն դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գույքը ձեռք է բերվել այն օտարելու լիազորություն չունեցող անձից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Վկայակոչված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ գույքը ձեռք բերողը կարող է օրենսդրության տեսանկյունից դիտվել որպես բարեխիղճ ձեռք բերող, եթե գույքը ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ: Օրենսդիրն ամրագրել է այն ելակետային դրույթը, որ այս պարագայում գույքը հետ չի կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ նախապայմանների առկայության պարագայում, այնուամենայնիվ, հնարավորություն է նախատեսված նման գույքը հետ պահանջելու բարեխիղճ ձեռք բերողից, ինչը նպատակ է հետապնդում հավասարակշռելու նաև գույքի սեփականատիրոջ իրավունքները՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում հնարավոր է, որ գույքը վերջինիս տիրապետությունից դուրս եկած լինի անկախ սեփականատիրոջ կամքից: Այս պարագայում օրենսդիրն առաջնորդվել է այն դրույթով, որ սեփականատերը նպատակ չի ունեցել գույքը տնօրինելու օտարման եղանակով: Ըստ այդմ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին կետը սահմանել է, որ բարեխիղճ ձեռք բերողից սեփականատերն իրավունք ունի տվյալ գույքը պահանջելու հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝

1. գույքը ձեռք է բերվել հատուցմամբ,
2. գույքը ձեռք է բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից,
3. գույքը ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին,
4. սեփականատերը կամ գույքը տիրապետողը կորցրել են գույքը, կամ այն նրանցից հափշտակվել է, կամ դուրս է եկել նրանց տիրապետումից այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջելու իրավական հարցին, արձանագրել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջնե-

րին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել նրա կամքից անկախ պատճառներով (*յրե՛ս, Լատուս Ամիրյանն ընդդեմ Եղիասբեթ Ալավերդյանի, Գոհար Պողոսյանի թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ նախապայմանների միաժամանակյա առկայությունը բավարար է, որպեսզի սեփականատերը վերականգնի իր սեփականության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ գույք ձեռք բերողը հանդիսացել է բարեխիղճ ձեռք բերող: Հետևաբար նշված նախապայմանները պետք է քննարկման առարկա դարձվեն և պարզվեն գործի քննության ընթացքում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գույքը օտարելու լիազորության բացակայության դրսևորումներն օրենսդիրն հստակ չի թվարկել՝ դատարաններին հնարավորություն տալով այդ մասին հետևություններ անելու՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Մասնավորապես՝ այդ հանգամանքի մասին կարող են վկայել, օրինակ, գույքն օտարողի մոտ սեփականության իրավունքի բացակայությունը, սեփականատիրոջ անունից հանդես գալու լիազորության բացակայությունը և այլն:

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավիճակին, երբ գույքն օտարվել է սեփականատիրոջ անունից հանդես եկող ներկայացուցչի կողմից, սակայն առանց բավարար լիազորությունների առկայության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) (*յրենս, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ լիազորագիրը՝ որպես միակողմ գործարք, նախևառաջ հանդիսանալով կամային ակտ՝ պետք է համապատասխանի լիազորողի ներքին կամքին: Հետևաբար այն պարագայում, երբ լիազորագրում արտացոլված բովանդակությունն իրականում չի համապատասխանում լիազորողի ներքին կամքին, այ-

սինքն՝ լիազորողը նման կամահայտնությամբ հանդես չի եկել, ապա լիազորագրի հիման վրա կատարված գործողություններին գնահատական տալիս պետք է հաշվի առնել նշված հանգամանքը: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև այն հանգամանքից, որ ներկայացուցչի կողմից ներկայացվողի անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար, ուստի եթե լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին, այսինքն՝ ներկայացվողը նպատակ չի հետապնդել առաջացնելու լիազորագրում նշված իրավահարաբերությունները, ապա նպատակ չի հետապնդել նաև դրա հիման վրա կնքելու գործարք: Այլ կերպ ասած, երբ վիճարկվում է լիազորագրի հիման վրա կնքված գործարքն այն հիմնավորմամբ, որ ներկայացվողի անունից ներկայացուցչը բավարար լիազորություններ չի ունեցել կնքելու նման գործարք, ապա դատարանի կողմից գնահատման առարկա պետք է դարձվի նաև լիազորագրի բովանդակությունը և այն հանգամանքը, թե վերջինս որքանով է համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին և արտացոլում վերջինիս արտաքին կամահայտնությունը:

Նշված հանգամանքները ենթակա են պարզման գործի դատական քննության ընթացքում, ինչն իրականացնելու համար դատարաններն օժտված են համապատասխան լիազորություններով՝ արտացոլված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերով: Մասնավորապես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող յուրաքանչյուր փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ՝ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական

ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (յո՛ւն, «Շենքերի կառավարում» համապիտույթունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (յո՛ւն, *Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյունիան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանները, հիմք ընդունելով ապացույցների գնահատման վերոգրյալ կանոնները, պետք է առաջնորդվեն նաև այն հանգամանքով, որ որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի: Այսինքն՝ բոլոր ապացույցները պետք է գնահատվեն գործն ըստ էության լուծող դատական ակտով՝ ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան: Նշված ընդհանուր կանոնից օրենսդիրը կատարել է բացառություն: Այդ բացառություններից է, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դրույթը, որի համաձայն՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած **դատավճիռը** պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց՝ **հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք**:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատավճռի նախադատելիության հարցին՝ արձանագրելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն ունի միայն հանցագործության քաղաքացիաիրավական հետևանքներին վերաբերող քաղաքացիական գործ քննող դատարանի համար հետևյալ շրջանակներում.

1. արդյո՞ք կատարվել են որոշակի գործողություններ (հանցագործության օբյեկտիվ կողմը),

2. արդյո՞ք այդ գործողությունները կատարվել են տվյալ անձի կողմից (հանցագործության սուբյեկտ) (յո՛ւն, *Կարապետ Գրաչյանն ընդդեմ Արտմ Ղազազյանի թիվ 3-1091(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա Ղումայանների կողմից 26.05.2012 թվականին Սամվել Գասպարյանին տրված, նոտարական կարգով վավերացված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է իր հայեցողությամբ տնօրինել՝ օգտագործել, իր նախընտրած պայմաններով և գնով վաճառել, փոխանակել, վարձով, անհատույց օգտագործման հանձնել կամ իր հայեցողությամբ որոշված պայմաններով, ցանկացած բանկում և ֆիզիկական կամ իրավաբանական անձի մոտ, ցանկացած վարկառուի կամ փոխառուի ստանալիք վարկի կամ փոխառության դիմաց գրավ դնել և գրավից հանել սեփականության իրավունքով նրանց պատկանող՝ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ հասցեում գտնվող բնակարանը, իրենց անունից կնքել և ստորագրել նախավճարի, առուվաճառքի, տարածամեկտ վճարումով առուվաճառքի, վարձակալության, անհատույց օգտագործման պայմանագրեր: Հետագայում Մարի, Մամիկոն, Գայանե և Անժելա

Ղումաշյանների անունից նոտարական կարգով վավերացված լիազորագրի հիման վրա որպես վաճառող հանդես եկող Սամվել Գասպարյանի և որպես գնորդ հանդես եկող Վահագն Սահակյանի միջև 13.06.2012 թվականին կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Սամվել Գասպարյանը վաճառել է, իսկ Վահագն Սահակյանը որպես սեփականություն 8.200.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը: Ըստ ՀՀ կառավարությանն առնաթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 18.06.2012 թվականին տրված թիվ 18062012-01-0724 վկայականի՝ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանի նկատմամբ գրանցվել է Վահագն Սահակյանի սեփականության իրավունքը: Երևանի Շենքավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/0006/01/13 քրեական գործով 17.10.2013 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հիմնավորվել է, որ Սամվել Գասպարյանը, չարաշահելով տուժող Մարի Ղումաշյանի վստահությունը, նրա բնակարանի մակերեսը մեծացնելու համար թույլտվություն ստանալու պատրվակով 26.05.2012 թվականին խաբեությամբ, նոտարական վավերացմամբ նրանից ձեռք է բերել լիազորագիր, որի օգնությամբ 13.06.2012 թվականին առուվաճառքի պայմանագրով Մարի Ղումաշյանին պատկանող՝ 9.600.000 ՀՀ դրամ արժողությամբ Երևանի Արտաշիայան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը 20.500 ԱՄՆ դոլարով վաճառել է Վահագն Սահակյանին՝ խարդախությամբ հափշտակելով տուժող Մարի Ղումաշյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի գույքը:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով և հակընդդեմ հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ «վիճելի գործարքը կնքվել է Մարի Ղումաշյանի, Մամիկոն Ղումաշյանի, Գայանե Ղումաշյանի և Անժելա Ղումաշյանի կողմից Սամվել Գասպարյանին 26.05.2012 թվականին տրված, նոտարական կարգով վավերացված լիազորագրի հիման վրա, որը սկզբնական հայցով հայցվորների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի հիմքով երբևէ չի վիճարկվել»: Միաժամանակ դատարանն արձանագրել է, որ «թիվ ԵՇԴ/0006/01/13 քրեական գործով հիմնավորվել է 26.05.2012 թվականին տրված և նոտարական կարգով վավերացված լիազորագիրը խաբեությամբ, վստահությունը չարաշահելու միջոցով ձեռք բերելու փաստը, որպիսի հանգամանքը չի կարող դիտվել որպես 13.06.2012 թվականին կնքված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը խաբեությամբ կնքված լինելու փաստը հիմնավորող ապացույց, քանի որ սկզբնական հայցով հայցվորների կողմից Սամվել Վահանի Գասպարյանին 26.05.2012 թվականին տրված, նոտարական կարգով վավերացված լիազորագիրը (գործարքը) վիճարկված չլինելու պայմաններում, դրա հիման վրա կնքված առուվաճառքի պայմանագիրը խաբեությամբ կնքված լինելու հանգամանքը սույն գործով որևէ կերպ չի ապացուցվել»:

Վերաքննիչ դատարանը, «հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով քրեական գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռներով նախադատելի նշանակություն ունեն միայն որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք», գտել է, որ «17.10.2013 թվականի թիվ ԵՇԴ/0006/01/13 դատավճռով հաստատված փաստերն առանց լիազորագիրն անվավեր ճանաչելու պահանջ Դատարանին ներկայացնելու՝ անվավեր չեն դարձնում լիազորագիրը»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «լիազորագիրը չվիճարկվելու և անվավեր ճանաչված լինելու մասին այլ ապացույցների բացակայության պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի ուժով լիազորագրի հիմքով կնքված առու-

վաճառքի պայմանագիրն անմիջական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում սույն գործով հայցվոր կողմի համար»:

Մինչդեռ վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջիններս անտեսել են այն հանգամանքը, որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.10.2013 թվականի թիվ ԵՇԴ/0006/01/13 դատավճռով հաստատվել է, որ Սամվել Գասպարյանը, չարաշահելով տուժող Մարի Ղումաշյանի վստահությունը, նրա բնակարանի մակերեսը մեծացնելու համար թույլտվություն ստանալու պատրվակով, 26.05.2012 թվականին խաբեությամբ, նոտարական վավերացմամբ նրանից ձեռք է բերել լիազորագիր, որի միջոցով 13.06.2012 թվականին առուվաճառքի պայմանագրով Մարի Ղումաշյանին պատկանող՝ 9.600.000 ՀՀ դրամ արժողությամբ Երևանի Արտաշիսյան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ բնակարանը 20.500 ԱՄՆ դոլարով վաճառել է Վահագն Սահակյանին՝ խարդախությամբ հափշտակելով տուժող Մարի Ղումաշյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի գույքը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով սույն գործը քննող դատարանների համար առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, որն ունի նախադատելի (պրեյուդիցիալ) նշանակություն, քանի որ առկա է ինչպես հանցագործության օբյեկտիվ կողմը, այնպես էլ՝ հանցագործության սուբյեկտը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Սամվել Գասպարյանը վիճելի գույքն օտարելիս առերևույթ ունեցել է լիազորություն իր հայեցողությամբ տնօրինելու սեփականության իրավունքով հայցվորներին պատկանող՝ Երևանի Արտաշիսյան փողոցի թիվ 47/19 շենքի 15-րդ հասցեում գտնվող բնակարանը, սակայն դատավճռով հաստատված նախադատելի փաստերից հետևում է, որ լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանել ներկայացվողների իրական կամքին:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «լիազորագիրը չվիճարկվելու և անվավեր ճանաչված լինելու մասին այլ ապացույցների բացակայության պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի ուժով լիազորագրի հիմքով կնքված առուվաճառքի պայմանագիրն անմիջական իրավունքներ ու պարտականություններ է ստեղծում սույն գործով հայցվոր կողմի համար», Վճռաբեկ դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ վերը նշված պատճառաբանությունները հիմք ընդունելով, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նման դիրքորոշումն անհիմն է, քանի որ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.10.2013 թվականի թիվ ԵՇԴ/0006/01/13 դատավճռով հաստատվել է, որ 26.05.2012 թվականին Սամվել Գասպարյանին տրված, նոտարական կարգով վավերացված լիազորագիրը ձեռք է բերվել խաբեությամբ, ուստի լիազորողներն իրականում նպատակ չեն ունեցել օտարելու բնակարանը: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որն ունի նախադատելի նշանակություն, արդեն իսկ հաստատվել է այն հանգամանքը, որ լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանել ներկայացվողների իրական կամքին, որպիսի պայմաններում լիազորագիրը վիճարկելու պարտականությունն անհարկի կարող է ծանրաբեռնել կողմին՝ ստեղծելով ձևական արգելքներ և անհարկի ձգձգումներ ողջամիտ ժամկետում գործի դատական քննության իրավունքի իրացման համար, ինչը և անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ «ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 12.12.2017 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի հիմքով 25.01.2018 թվականից Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարարությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.10.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.05.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի համար

սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.10.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0631/02/13
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0631/02/13
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ԲՏԱ Ինվեստ Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Հայէ-կոնոմբանկ» ԲԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.04.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Համբարձում Դավթյանի ընդդեմ «ԲՏԱ Ինվեստ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ), «Սար Կապիտալ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), «Ա-Բադրա-մյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ թիվ 80-07-9 ԱԳ/Գ անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) և գույքի հանձման պայմանագրերը, ինչպես նաև սեփականության իրա-վունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ հայցվորի սեփականության իրավունքը վերականգնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Համբարձում Դավթյանը պահանջել է անվավեր ճանաչել թիվ 80-07-9 ԱԳ/Գ անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) և գույքի հանձման պայմանագրերը, ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցումը և որպես անվավերության հետ-ևանք՝ վերականգնել հայցվորի սեփականության իրավունքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) 11.03.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Միքայելյան, Ն. Բարսեղյան, Հ. Ենոքյան) 19.06.2015 թվականի որոշմամբ Համբարձում Դավթյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.03.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ավիհյան) (այսուհետ՝ Դատարան) 20.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Բանկի, Համբարձում Դավթյանի և Կազմակերպության միջև 15.02.2008 թվականին նոտարական կարգով կնքված թիվ 80-07-9 ԱԳ/Գ անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) մասին պայմանագիրը, որպես անվավերության հետևանք՝ անվավեր են ճանաչվել Բանկի (ցեղենտ) և Ընկերության (ցեսիոներ) միջև 27.12.2008 թվականին կնքված 8-3 իրավունքների գիշման (ցեսիա) պայմանագիրը՝ Համբարձում Դավթյանի գրավի պայմանագրի պահանջի իրավունքի մասով, Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ Հրանտ Ղամբարյանի (հանձնող) և Ընկերության (ընդունող) միջև 27.12.2012 թվականին կնքված գույքի հանձնման մասին պայմանագիրը և Կոմիտեի կողմից քաղաք Երևան, Նոր Նորքի Վիկտորիա փողոցի (9 մ/շ-ի 27 շենքի) 91 շենքի թիվ 7-րդ բնակարանի հանդեպ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.04.2017 թվականի որոշմամբ Բանկի իրավահաջորդ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.10.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկի իրավահաջորդ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համբարձում Դավթյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գրավի գործարքի կողմեր հանդիսացել են Բանկը և Համբարձում Դավթյանը, ուստի գործարքը խաբեությամբ կնքված համարելու համար պետք է ապացույցներ ներկայացվեին, որ խաբեությունը տեղի է ունեցել Բանկի կողմից, մինչդեռ նման ապացույցներ չեն ներկայացվել: Գրավի գործարքի կնքումը եղել է հայցվորի կամքի արտահայտությունը, իսկ նման պայմաններում Բանկը չի կարող պատասխանատու լինել, քանի որ գրավի պայմանագրի կնքման հարցում հայցվորի կամքի արտահայտությունն ակնհայտ է: Ուստի վիճելի գույքը Բանկում գրավ դնելիս հայցվորը գիտակցաբար ստորագրել է գրավի պայմանագիրը, և Բանկը որևէ կերպ չի ազդել հայցվորի՝ նման որոշում կայացնելու վրա:

Վերաքննիչ դատարանը նաև հաշվի չի առել, որ Դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ, որպես անվավերության հետևանք, անվավեր ճանաչել ցեսիայի պայմանագիրը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.04.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով հաստատվել է խարդախության հանցակազմը, հետևաբար նաև՝ սույն գործով վիճարկվող գործարքը խաբեությամբ, վստահությունը չարաշահելու միջոցով կնքելու հանգամանքը, իսկ այն փաստը, որ Բանկը չի հանդիսացել մոլորեցնող, չի կարող որևէ նշանակություն ունենալ, քանի որ սույն իրավահարաբերության մեջ կարևոր է խաբեության ճանապարհով գործարքի կնքումը և օրենքով սահմանված կարգով դրա հետևանքը, որն էլ Դատարանի կողմից իրավացիորեն կիրառվել է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կազմակերպության (վարկատու) և Համբարձում Դավթյանի (վարկառու) միջև 04.02.2008 թվականին կնքված թիվ 34 վարկային պայմանագրի համաձայն՝ Համբարձում Դավթյանին հատկացվել է 610.000 ՀՀ դրամ վարկ մինչև 12 ամիս մարման պայմանով, ամսական 3,5 տոկոսադրույքով, իսկ որպես վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների ապահովման միջոց, թիվ 34 գրավատոմսի հիման վրա, գրավադրվել է Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը (**հատոր 1-ին գ.թ. 14**).

2) Բանկի (գրավառու)՝ մի կողմից, Համբարձում Դավթյանի (գրավատու) և Կազմակերպության (վարկառու)՝ մյուս կողմից, միջև 15.02.2008 թվականին նոտարական կարգով կնքված թիվ 80-07-9 ԱԳ/Գ անշարժ գույքի գրավի մասին (հիփոթեք) պայմանագրի 1.1 կետով վարկառու Կազմակերպության պարտավորությունների կատարման համար գրավադրվել է Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը՝ 73քմ ընդհանուր մակերեսով, իսկ վարկառուին հատկացվել է 600.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Նշված պայմանագրից ծագող Բանկի գրավի իրավունքը գրանցվել է 20.02.2008 թվականին (**հատոր 1-ին գ.թ. 15-16, 79**).

3) Բանկի (ցեղենտ) և Ընկերության (ցեփոններ) միջև 27.12.2008 թվականին կնքված թիվ 8-3 իրավունքների զիջման (ցեսիա) պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ ցեղենտը զիջել, իսկ ցեփոններն ընդունել է պարտապան Կազմակերպության հետ ցեղենտի կնքած վարկային և գրավի պայմանագրերից բխող պահանջի իրավունքը ողջ ծավալով, այդ թվում՝ Համբարձում Դավթյանի հետ կնքած գրավի պայմանագրից ծագող պահանջի իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 63-71**).

4) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) թիվ ԵԿԴ/0019/04/11 քաղաքացիական գործով 19.07.2011 թվականի որոշմամբ Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ Հ. Ղամբարյանին, ի թիվս այլնի, թույլատրվել է Կազմակերպության պարտավորությունների դիմաց Ընկերությունում գրավադրված, Համբարձում Դավթյանին պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը, որպես սեփականություն,

հանձնել Ընկերությանը **(հատոր 1-ին, գ.թ. 80-81)**.

5) Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ Հրանտ Ղամբարյանի (հանձնող) և Ընկերության (ընդունող) միջև 27.12.2012 թվականին կնքված գույքի հանձնման պայմանագրի համաձայն՝ Կազմակերպության պարտավորությունների դիմաց Ընկերությանն է հանձնվել Համբարձում Դավթյանին պատկանող՝ Երևանի Նոր Նորքի վարչական շրջանի Վիլյուսի փողոցի թիվ 91 շենքի 7-րդ բնակարանը **(հատոր 1-ին, գ.թ. 17)**.

6) Կոմիտեի կողմից 04.02.2013 թվականին տրված թիվ 04022013-01-2103 վկայականի, ինչպես նաև 06.03.2013 թվականին տրված թիվ ԱՏ-04/03/2013-2-0301 գույքի առանձին որակական, քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Երևանի Նոր Նորքի Վիլյուս փողոցի (9-րդ զանգված, 27 շենք) թիվ 91 շենքի 7-րդ բնակարանի նկատմամբ գրանցվել է Ընկերության սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 18, 82)**.

7) Թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած 18.11.2009 թվականի դատավճռով Արսեն Բաղդամյանը, Սուսաննա Խաչյանը և Արթուր Ավալյանը մեղավոր են ճանաչվել համապատասխան հոդվածներով և դատապարտվել են ազատազրկման նաև նրա համար, որ 2008 թվականի հունվար ամսվա վերջին Արսեն Բաղդամյանն Արթուր Ավալյանի և Սուսաննա Խաչյանի հետ նախնական համաձայնությամբ, անշարժ գույքի գրավի դիմաց 610.000 ՀՀ դրամ վարկ ստանալու խնդրանքով Կազմակերպություն դիմած Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը խաբեությամբ հափշտակելու դիտավորությամբ, նրա բնակարանը Բանկում գրավ դնելու, նույն գումարի վարկ ստանալու և նրան տրամադրելու պատրվակով, չարաշահելով նրա վստահությունը, 15.02.2008 թվականին նրան ներկայացրել է Բանկ, որտեղ Բանկի գործադիր տնօրեն Ռասուլ Կասանովի և Համբարձում Դավթյանի միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) մասին թիվ 80-07-9ԱԳ/Գ պայմանագրով Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը, թվով երեք այլ գույքի հետ միասին, գրավ է դրվել որպես Բանկի և Կազմակերպության միջև 15.08.2007 թվականին կնքված վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց: Արսեն Բաղդամյանը Համբարձում Դավթյանին նրա բնակարանի գրավի դիմաց ստացած գումարից տրամադրել է 610.000 ՀՀ դրամ, որով հափշտակել է Համբարձում Դավթյանի առանձնապես խոշոր չափի՝ 17.100.000 ՀՀ դրամ արժողության Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը:

Նշված գործարքը Համբարձում Դավթյանից գաղտնի պահելու, նրա հետ կնքած գործարքին օրինական տեսք տալու և ապօրինի ձեռնարկատիրությամբ տրամադրված վարկի դիմաց տոկոսադրույք գանձելու նպատակով է 04.02.2008 թվականին Համբարձում Դավթյանի և Կազմակերպության միջև կնքվել թիվ 34 վարկային ապօրինի պայմանագիրը, որի համաձայն՝ Համբարձում Դավթյանը Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանի գրավի դիմաց Կազմակերպությունից մեկ տարի ժամկետով, 3,5 տոկոսով ստացել է 610.000 ՀՀ դրամ վարկ: Կազմակերպության տնօրենի անունից պայմանագիրը ստորագրել է Սուսաննա Խաչյանը **(հատոր 2-րդ, գ.թ. 142-181)**.

8) «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կանոնադրության համաձայն՝ Բանկի իրավահաջորդ է համարվում «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն **(հատոր 5-րդ, գ.թ. 20)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքի առանձնահատկություններին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) **համաձայնեցված կամքի արտահայտությունը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է՝ նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու

պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտություն» հասկացությունները: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել բացահայտել նշված հասկացությունների բովանդակությունը: «Կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը: «Կամահայտությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այլ կերպ ասած՝ **գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտության համակցությունն է:** Ընդ որում, օրենքով նախատեսված դեպքերում կնքված գործարքում կամքի և կամահայտության անհամապատասխանությունը կարող է հանգեցնել այդ գործարքի անվավերությանը: Այդպիսի անհամապատասխանությունը կարող է պայմանավորված լինել ինչպես **գործարքը կնքած անձանց** անձնական հատկանիշներով, այնպես էլ արտաքին ներգործության ազդեցությամբ (*յրեն, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաս» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Անդրադառնալով խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ խաբեությունն անձին **գիտակցաբար մոլորության մեջ գցելն է՝ նրա հետ գործարք կնքելու նպատակով:** Գործարքը, լինելով կամային ակտ, ենթադրում է, որ **կողմերից ոչ մեկը** չպետք է այնպիսի միջոցներ գործադրի, որպեսզի մյուս կողմը չիմանա կամ սխալ պատկերացնի այն հանգամանքները, որոնք նրա համար վճռական նշանակություն կարող են ունենալ գործարքը կնքելիս: Խաբեությամբ կնքված գործարքներում մեկ կողմի անբարեխղճությունն անպայման ենթադրվում է (*յրեն, Վլադիմիր Գրիգորյանն ընդդեմ Ռոզա Թովմասյանի և մյուսների թիվ ԵՇԴ/1671/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները գործարք են կնքում որոշակի նպատակով և այդ նպատակին հասնելու համար արտահայտում են իրենց կամքը, որն էլ պետք է արտահայտվի առանց որևէ արտաքին ազդեցության, ուստի այն դեպքերում, երբ գործարք կնքող անձն ազատ չի արտահայտել իր կամքը, արտաքին ազդեցության հետևանքով նրա կամքը խաթարվել է, նա իրավունք ունի վիճարկել այդպիսի կամահայտությամբ կնքված գործարքը: Այդ տիպի գործարքներն անվավեր ճանաչելու հիմքն արտաքին հակաիրավական գործողությունների միջոցով անձին խեղաթյուրված կամք դրսևորելուն հասցնելու հետևանքով նրա կամքին չհամապատասխանող գործարք կնքելն է:

Նման գործարք է նաև խաբեության ազդեցության ներքո կնքված գործարքը: Զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ խաբեությունը գործարքի կողմերից մեկի գիտակցաբար դրսևորած անբարեխիղճ վարքագիծն է՝ ուղղված նրան, որ գործարքի մյուս կողմն իր համար ձեռնտու պայմաններով կնքի գործարքը: Գործարքի կնքման մեջ շահագրգռված, անբարեխիղճ կողմն իր մեղավոր գործողություններով մյուս՝ տուժող կողմի մոտ ստեղծում է իրականությանը չհամապատասխանող տպավորություն գործարքի էության, առարկայի, պայմանների վերաբերյալ՝ ազդելով նման գործարք կնքելու նրա որոշման վրա: Ընդ որում,

եթե տուժող կողմի կամքը խաթարվել է գործարքի կողմ (ներկայացուցիչ) չհանդիսացող այլ անձանց կողմից՝ առանց գործարքի կողմի որևէ կերպ մասնակցության, ապա գործարքը չի կարող վիճարկվել խաբեության հիմքով, քանի որ գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված որակելու համար անհրաժեշտ պայման է այն, որ գործարք կնքելիս տուժող կողմի կամքը խաթարված լինի գործարքի մյուս կողմի (ներկայացուցիչ) մեղավոր վարքագծի՝ այդ թվում և այլ անձանց միջոցով դրսևորված գործողությունների հետևանքով: Այսպիսով, գործարքը խաբեության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով անվավեր ճանաչվելու համար տուժող կողմը պետք է որոշակի ապացույցներ ներկայացնի իր կամքը խաթարվելու հարցում գործարքի մյուս կողմի (ներկայացուցիչ) կողմից անձամբ կամ այլ անձանց միջոցով մեղավոր վարքագծով (գործողությամբ կամ անգործությամբ) մասնակցության մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպության և Համբարձում Դավթյանի միջև 04.02.2008 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որով նաև գրավադրվել է Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը: Բանկի (գրավառու)՝ մի կողմից, Համբարձում Դավթյանի (գրավատու) և Կազմակերպության (վարկառու)՝ մյուս կողմից, միջև 15.02.2008 թվականին կնքված անշարժ գույքի գրավի մասին (հիպոթեք) պայմանագրով վարկառու Կազմակերպության պարտավորությունների կատարման համար գրավադրվել է Երևան քաղաքի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը: Թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն՝ 2008 թվականի հունվար ամսվա վերջին Արսեն Բաղդասարյան Արթուր Ավայանի և Սուսաննա Խաչյանի հետ նախնական համաձայնությամբ, անշարժ գույքի գրավի դիմաց 610.000 ՀՀ դրամ վարկ ստանալու խնդրանքով Կազմակերպություն դիմած Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը խաբեությամբ հափշտակելու դիտավորությամբ, նրա բնակարանը Բանկում գրավ դնելու, նույն գումարի վարկ ստանալու և նրան տրամադրելու պատրվակով, չարաշահելով նրա վստահությունը, 15.02.2008 թվականին նրան ներկայացրել է Բանկ, որտեղ բանկի գործադիր տնօրեն Ռասուլ Կասանովի և Համբարձում Դավթյանի միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիպոթեքի) մասին թիվ 80-07-9ԱԳ/Գ պայմանագրով Համբարձում Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը, թվով երեք այլ գույքի հետ միասին, գրավ է դրվել որպես Բանկի և Կազմակերպության միջև 15.08.2007 թվականին կնքված վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոց: Նշված գործարքը Համբարձում Դավթյանից գաղտնի պահելու, նրա հետ կնքած գործարքին օրինական տեսք տալու և ապօրինի ձեռնարկատիրությամբ տրամադրված վարկի դիմաց տոկոսադրույք գանձելու նպատակով 04.02.2008 թվականին Համբարձում Դավթյանի և Կազմակերպության միջև կնքվել է վերոգրյալ վարկային պայմանագիրը: Բանկի և Ընկերության միջև 27.12.2008 թվականին կնքված իրավունքների զիջման (ցեսիա) պայմանագրով Կազմակերպության հանդեպ Բանկի ունեցած իրավունքը՝ ներառյալ Համբարձում Դավթյանին պատկանող գույքի գրավի իրավունքը, փոխանցվել է Ընկերությանը: Հետագայում Կազմակերպության պարտավորությունների դիմաց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.07.2011 թվականի որոշման և 27.12.2012 թվականի գույքի հանձնման մասին պայմանագրով Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի 7-րդ բնակարանը որպես սեփականություն փոխանցվել է Ընկերությանը:

Դատարանը, հիմք ընդունելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով դատավճռով հաստատված հանգամանքները՝ մասնավորապես խաբեության փաստը, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածով, հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.11.2009 թվականի դատավճռով հաստատվել են որոշակի գործողությունների կատարման փաստը և դրանք կատարած անձանց շրջանակը, այն է՝ Արսեն Բադրամյանի, Արթուր Ավալյանի և Սուսաննա Խաչյանի կողմից Համբարձում Դավթյանին պատկանող անշարժ գույքը խաբեությամբ Բանկում գրավ դնելու, վարկ ստանալու հանգամանքները, այսինքն՝ հիմնավորվել է գործարքների անվավերության այնպիսի հիմքի առկայությունը, ինչպիսին է խաբեությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ Երևանի Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի թիվ 7 բնակարանը Համբարձում Դավթյանի տիրապետումից դուրս է եկել իր վատահոյությունը չարաշահելու միջոցով՝ խաբեության եղանակով, ինչը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, այսինքն՝ նշված անշարժ գույքը Համբարձում Դավթյանի տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից, հետևաբար այն ենթակա է վերադարձման անգամ բարեխիղճ ձեռքբերողից: Անդրադառնալով այն փաստարկին, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ Համբարձում Դավթյանին մոլորեցնողը եղել է Արսեն Բադրամյանը և ոչ թե Բանկը, Վերաքննիչ դատարանը նշել է, որ քանի որ դատավճռով հաստատվել է գործարքը խաբեությամբ կնքված լինելու հանգամանքը և դրա հետևանքը, ուստի այդ հանգամանքը վեճը լուծելիս էական նշանակություն ունենալ չի կարող և դատական ակտը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս, Ռուզաննա Թորոպյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*տե՛ս, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատր* -

րյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

15.02.2008 թվականին կնքված Գրավի պայմանագրով Համբարձում Դավթյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Նորքի 9-րդ զանգվածի թիվ 27 շենքի թիվ 7 բնակարանը (ներկայումս՝ Երևանի Նոր Նորքի Վիլնյուս փողոցի թիվ 91 շենքի 7-րդ բնակարան) **Կազմակերպության 600.000 ԱՄՆ դոլարի չափով վարկի պարտավորության կատարման ապահովման նպատակով գրավադրել է Բանկում:** Համբարձում Դավթյանը, որպես խաբեության ազդեցության ներքո կնքված գործարք, 15.02.2008 թվականին կնքված Գրավի պայմանագիրը վիճարկել է այն հիմքով, որ թիվ ԵԿԴ/0223/01/09 քրեական գործով 18.11.2009 թվականի դատավճռով հաստատված է այն հանգամանքը, որ Կազմակերպության տնօրեն Արսեն Բաղրամյանը չարաշահել է իր վստահությունը, և ինքը խաբեության ազդեցության տակ ստորագրել է 15.02.2008 թվականի Գրավի պայմանագիրը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող գրավի պայմանագրի կողմերը **Բանկը և Համբարձում Դավթյանն են**, սակայն Համբարձում Դավթյանը որևէ ապացույցով չի հիմնավորել, որ **Բանկի կողմից դրսևորած խաբեության արդյունքում կամ վերջինիս իմացությամբ է** խեղաթյուրվել իր կամքը: Հայցվորի վկայակոչած ապացույցը՝ դատավճիռը, վերաբերում է այլ անձանց դրսևորած վարքագծին, իսկ Բանկի՝ տվյալ անձանց գործողություններին ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունենալու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել: Այլ խոսքով՝ որպեսզի հիմնավորվեր 15.02.2008 թվականի գրավի պայմանագրի անվավերությունը խաբեության հիմքով, Համբարձում Դավթյանը պետք է ապացուցեր, որ **գործարքի կողմ հանդիսացող Բանկն է** ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այդ թվում՝ այլ անձանց միջոցով) խաբեության միջոցով հանգեցրել իր կողմից գործարքը կնքելուն: Հետևաբար սույն գործով առկա ապացույցներով չի հիմնավորվում, որ գրավի պայմանագրի կնքման ժամանակ Բանկը որևէ կերպ ազդել է Համբարձում Դավթյանի կամահայտնության վրա, և որ գրավի պայմանագիրը կնքվել է Բանկի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն դրսևորած խաբեության ազդեցությամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 15.02.2008 թվականի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջը բավարարման ենթակա չէր, որպիսի պայմաններում մերժման էին ենթակա նաև մյուս պահանջները՝ նկատի ունենալով, որ դրանք բխում էին վերոգրյալ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջից: Մինչդեռ ստորադաս դատարանները կիրառման ենթակա նյութաիրավական նորմի սխալ մեկնաբանության հիմքով սխալ եզրահանգման են եկել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր էր՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում (*տե՛ս, օրինակ Լուսինե Իսրաելյանն ընդդեմ Կարեն Խաչատրյանի և մյուսների թիվ ԵԿԴ/3430/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանն անվավեր է ճանաչել նաև Բանկի (ցեղենտ) և Ընկերության (ցեսիոներ) միջև 27.12.2008 թվականին կնքված 8-3 իրավունքների զիջման (ցեսիա) պայմանագիրը՝ Համբարձում Դավթյանի գրավի պայմանագրի պահանջի իրավունքի մասով, նման հայցապահանջ ներկայացված չլինելու պայմաններում՝ արդյունքում խախտելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը և նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, ինչը ևս անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և փոփոխման, իսկ Համբարձում Դավթյանի հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Համբարձում Դավթյանից հոգուտ Բանկի իրավահաջորդ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 80.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Բացի այդ, Համբարձում Դավթյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 40.000 ՀՀ դրամ՝ որպես Համբարձում Դավթյանի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.03.2015 թվականի վճռի դեմ 11.04.2015 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.04.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Համբարձում Դավթյանի հայցն ընդդեմ «ԲՏԱ Ինվեստ Բանկ» ՓԲԸ-ի, «Սար Կապիտալ» ՍՊԸ-ի, «Ա-Բաղրամյան» ՍՊԸ-ի, «Ա-Բաղրամյան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Արսեն Զիտյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ թիվ 80-07-9 ԱԳ/Գ անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) և գույքի հանձնման պայմանագրերը, ինչպես նաև սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, և որպես անվավերության հետևանք՝ հայցվորի սեփականության իրավունքը վերականգնելու պահանջների մասին, մերժել:

2. Համբարձում Դավթյանից հոգուտ «ԲՏԱ Ինվեստ Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար և 80.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Համբարձում Դավթյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես

Համբարձում Դավթյանի կողմից 11.04.2015 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի համար նախատեսված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0527/02/15

Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ա. Հունանյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0527/02/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ Բեջանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռոբերտ Բեջանյանի ընդդեմ Հենրիկ Գևորգյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Հենրիկ Գևորգյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ռոբերտ Բեջանյանի՝ 16.12.2011 թվականին ստորագրված փոխառության պայմանագիրը չկնքված ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռոբերտ Բեջանյանը պահանջել է Հենրիկ Գևորգյանից բռնագանձել 32.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաև կետանցի օրվանից՝ 16.12.2012 թվականից մինչև պարտավորության դադարման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հենրիկ Գևորգյանը պահանջել է 16.12.2011 թվականին ստորագրված փոխառության պայմանագիրը ճանաչել չկնքված:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 15.11.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.04.2017 թվականի որոշմամբ Հենրիկ Գևորգյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.11.2016 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Բեջանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հենրիկ Գևորգյանի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատում: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կողմերի միջև իրականում տեղի է ունեցել պարտքի նորացում, որպիսի պայմաններում չի պահանջվում, որ որպես ապացույց ներկայացվի «սկզբնապես գոյություն ունեցող պարտավորությունը հաստատող» որևէ ապացույց: Եթե պահպանվի «սկզբնապես գոյություն ունեցող պարտավորությունը հաստատող» փաստաթուղթը, ապա կստացվի, որ պարտքի նորացումից հետո նույն պարտքի վերաբերյալ առկա են երկու տարբեր փաստաթղթեր, այսինքն՝ առկա են երկու տարբեր պարտավորություններ, առավել ևս, որ փոխառության պայմանագիրը չի նախատեսում նախկինում ունեցած պարտքերի մասին հիշատակելու անհրաժեշտություն, այլապես կողմերը պետք է պահպանեին այն փաստաթղթերը, որոնցով դադարել են պարտավորությունները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.04.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 15.11.2016 թվականի վճիռն:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործի պարագայում նախկինում որևէ պարտավորություն չի եղել, Հենրիկ Գևորգյանը երբևէ գումար չի ստացել, և պայմանագրի ստորագրումից առաջ գումար ստանալու մասին որևէ ապացույց դատարան չի ներկայացվել, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ առկա չէ սկզբնական պարտավորություն, հետևաբար խոսք չի կարող լինել նաև դրա նորացման մասին: Մասնավորապես՝ պահանջվող 32.000.000 ՀՀ դրամից 9.000.000 ՀՀ դրամը Ռոբերտ Բեջանյանը ներկայացնում է որպես իրավաբանական ծառայության դիմաց վճարման ենթակա գումար, որի վերաբերյալ, սակայն, չի ներկայացվել որևէ թույլատրելի ապացույց: Որևէ թույլատրելի ապացույց չի ներկայացվել նաև մինչ պայմանագրի ստորագրումը տարբեր ժամանակահատվածներում 23.000.000 ՀՀ դրամ հանրագումարով փոխառության տրամադրման վերաբերյալ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հենրիկ Գևորգյանի և Ռոբերտ Բեջանյանի միջև 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1-ին կետի համաձայն՝ Հեն-

րիկ Գևորգյանը 16.12.2011 թվականին առանց տոկոսի, փոխառությամբ քաղաքացի Ռոբերտ Բեջանյանից ստացել է 32.000.000 ՀՀ դրամ՝ 16.12.2012 թվականին միանվագ վերադարձնելու պայմանով (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

2) ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գ. Ղազարյանի՝ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 09.07.2015 թվականի որոշման համաձայն՝ Նախաքննության ընթացքում Հենրիկ Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ նշված փոխառության պայմանագիրն իրական չէ, քանի որ ինքը Ռոբերտ Բեջանյանից գումար չի վերցրել, սակայն հնարավոր է, որ նշված պայմանագրում առկա ստորագրությունը լինի իրենը, քանի որ Ռոբերտ Բեջանյանը «Հայփոստ» ՓԲ ընկերության հետ կապված քաղաքացիական գործով, հանդիսանալով իր փաստաբանը, հաճախ է իրեն տվել թղթեր, իսկ ինքն առանց կարդալու ստորագրել է: Նախաքննության ընթացքում Ռոբերտ Բեջանյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ նշված պայմանագիրը կնքվել է իր և Հենրիկ Գևորգյանի փոխադարձ համաձայնությամբ, քանի որ Հենրիկ Գևորգյանն իրեն փաստաբանական ծառայության դիմաց պարտք է եղել 9.000.000 ՀՀ դրամ և բացի դրանից՝ տարբեր ժամանակահատվածներում վերցրել է պարտքով գումարներ, որոնց ընդհանուր չափը կազմել է 23.000.000 ՀՀ դրամ, և իրենք երկուսով պայմանավորվել են, որ պարտքի գումարի չափն ընդհանուր կազմում է 32.000.000 ՀՀ դրամ, և փոխադարձ համաձայնությամբ կնքել են նշված պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 103-104**):

3) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժանմունքի ավագ քննիչ Գ. Ղազարյանի կողմից կազմված «Առերեսման մասին» 12.04.2015 թվականի արձանագրության համաձայն՝ Հենրիկ Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռոբերտ Բեջանյանի կատարած փաստաբանական ծառայության համար իրենց պայմանավորվածության համաձայն «Հայփոստ» ընկերությունից բռնագանձվելիք գումարը ստանալու դեպքում պետք է վճարեր 9.000.000 (ինը միլիոն) ՀՀ դրամը (**հատոր 1-ին, գ.թ. 135-139**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի, այն է՝ փոխառության պարտավորությամբ պարտքի նորացման առանձնահատկությունների վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անորոշապես հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք այլ հիմքերից ծագած պարտքը փոխա-

ռության պարտավորությամբ փոխարինելու արդյունքում ձևավորված փոխառության իրավահարաբերություններում փոխառուն կարող է անփողության հիմքով վիճարկել փոխառության պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վսաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կողմերից մեկի պահանջով թույլատրվում է դադարեցնել պարտավորությունը միայն օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորությունը դադարում է կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը նույն անձանց միջև մեկ այլ պարտավորությամբ փոխարինելու մասին համաձայնությամբ, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ (նորացում): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և ալիմենտի վճարման պարտավորությունների նկատմամբ նորացում չի թույլատրվում, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նորացումը դադարեցնում է սկզբնական պարտավորության հետ կապված լրացուցիչ պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ առուվաճառքից, գույքի վարձակալությունից կամ այլ հիմքերից ծագած պարտքը կարող է փոխարինվել փոխառության պարտավորությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փոխառության պարտավորությունում **պարտքը փոխարինվում է նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ (հոդված 430) և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով (հոդված 878):**

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ, անդրադառնալով պարտավորության դադարմանը և այլ հիմքերից ծագած պարտքը փոխառության պարտավորությամբ փոխարինման հնարավորությանը, գտել է, որ պարտավորության դադարման ձև է նաև պարտավորության դադարումը նորացմամբ, որը կնքվում է նորացման վերաբերյալ պահանջների պահպանմամբ և փոխառության պայմանագիր կնքելու համար նախատեսված ձևով: Նշվածից հետևում է, որ այն դեպքում, երբ կողմերի միջև գոյություն ունեցող պարտավորությունը նորացվում է փոխառության պարտավորությամբ, ապա նորացումը կարգավորվում է ինչպես նորացման, այնպես էլ փոխառության վերաբերող նորմերով (յուն, Վալերինա Գևորգյանն ընդդեմ Գեղամ Գևորգյանի թիվ ԵԿԿ/1179/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Ջարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանը հարկ է համարում հավելել, որ նորացումը պարտավորության դադարման ինքնուրույն հիմք է, որը կնքվում է պարտավորական հարաբերությունների երկու կողմերի համա-

ձայնությամբ և նախատեսում է պարտավորության այլ առարկա կամ դրա կատարման այլ եղանակ: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ պարտավորության նորացման դեպքում գոյություն ունեցող սկզբնական պարտավորությունը դադարում է, այնուամենայնիվ, կողմերի միջև փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները չեն դադարում, քանի որ սկզբնական պարտավորության հիմքով նրանց միջև առաջ է գալիս նոր պարտավորություն: Ընդ որում, պարտավորության նորացումը պետք է ծագի միևնույն կողմերի միջև և պետք է տարբերվի սկզբնական պարտավորությունից այլ առարկայով կամ կատարման այլ եղանակով: Միաժամանակ օրենսդիրը սպառիչ սահմանել է այն պարտավորությունները, որոնց դեպքում նորացում չի թույլատրվում, դրանք են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման և ավիմենտի վնասման պարտավորությունները:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի 1-ին կետի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ պարտավորության նորացման դեպքում, ի հավաստումն գործարքի կնքման փաստի, չի պահանջվում (կամ չի ենթադրվում) որևէ գույքի կամ դրամական միջոցի փոխանցում, այլ դրա կնքման համար անհրաժեշտ է կողմերի փոխադարձ կամահայտությունը տվյալ գործարքի բոլոր էական պայմանների շուրջ: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորացմանը նախորդում է կողմերի միջև արդեն իսկ գոյություն ունեցող՝ առուվաճառքի, գույքի վարձակալությունից կամ այլ հիմքերից ծագած պարտավորությունը, որը նորացման փաստով դադարում է՝ փոխարինվելով պարտավորության այլ առարկայով կամ կատարման այլ եղանակով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համաձայնությունը նորացում կարող է դիտվել ոչ միայն այն դեպքում, երբ այդպիսին սահմանված է ուղղակիորեն, այլ նաև այն դեպքում, երբ այն բխում է կողմերի ընդհանուր կամքից, որն իր հերթին ենթակա է բացահայտման՝ հիմք ընդունելով պայմանագրի մեկնաբանման կանոնները, հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխառուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխառուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փոխառուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխառուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածների վերլուծությանը՝ դիրքորոշում հայտնելով այն մասին, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխատուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից: Փոխառության պայմանագրից բխող իրավահարաբերություններում փոխատուին իրավունք է վերապահված վիճարկել փոխառության պայմանագիրն այն դեպքում, երբ նա ապացուցում է, որ փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով (*Կրեն, Վահե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵԲԴ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*Կրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր ապացույցներ են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի խկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ թեև քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, **այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը** (*Կրեն՝ս, Վարթկես Հագոսիյանն ընդդեմ Անահիտ Հակոբջանյանի և մյուսների թիվ*

ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի որոշումը):

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելիս և հակընդդեմ հայցը մերժելիս, հաշվի առնելով կողմերի ցուցմունքները, արձանագրել է, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել պարտքի նորացում և «սույն պարագայում պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ և 430-րդ հոդվածների պահանջները, իսկ հակընդդեմ հայցով հայցվոր կողմն այլ ապացույց, քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 09.07.2015 թվականի որոշումից զատ, չի ներկայացրել: Մինչդեռ տվյալ դեպքում հակընդդեմ հայցով հայցվոր կողմը պետք է ապացույցներ ներկայացներ, որ առհասարակ գումար չի վերցրել հայցվորից, որ պարտավորության նորացում տեղի ունենալ չէր կարող, քանի որ վերջինս սկզբնական հայցով հայցվորի հանդեպ չուներ չկատարված որևիցե պարտավորություն»: Միաժամանակ Դատարանը գտել է, որ սույն գործի փաստերով հաստատվում է, որ Հենրիկ Գևորգյանը Ռոբերտ Բեջանյանին 32.000.000 ՀՀ դրամ վերադարձնելու պարտավորություն ունի, հետևաբար գումարի բռնագանձման պահանջն իրավաչափ է և ենթակա է բավարարման:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելով և գործը նոր քննության ուղարկելով, պատճառաբանել է, որ «գործի նյութերում բացակայում է փոխառության պայմանագրի առկայությունը հավաստող հիմնական նյութափրավական փաստը ապացուցող և սկզբնապես գոյություն ունեցող պարտավորությունը հաստատող և օրենքի ուժով թույլատրելի համարվող փոխառության պայմանագիրը կամ փոխառուի տված ստացականը կամ փոխառուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար տալը հավաստող այլ փաստաթուղթ»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հավելել է, որ «Դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել կողմերի միջև պարտավորության նորացման համար անհրաժեշտ հիմնական պայմանի՝ կողմերի միջև գոյություն ունեցող սկզբնական պարտավորության առկայության կամ բացակայության հարցը: Մինչդեռ Դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 886-րդ հոդվածի ուժով պարտքի նորացման փաստը հաստատելիս պարտավոր էր անդրադառնալ սկզբնական պարտավորության առկայության հարցի քննարկմանը»:

Վերը նշված իրավական վերլուծությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործում առկա ապացույցների, մասնավորապես՝ Հենրիկ Գևորգյանի և Ռոբերտ Բեջանյանի միջև 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության մասին պայմանագրի, «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» 09.07.2015 թվականի որոշման, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ շրջանների քննչական բաժանմունքի ավագ քննիչ Գ. Ղազարյանի կողմից կազմված «Առերեսման մասին» 12.04.2015 թվականի արձանագրության համադրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ, ըստ էության, կողմերն ընդունել են, որ Հենրիկ Գևորգյանի մոտ առաջացել է այլ հիմքից ծագած պարտքը Ռոբերտ Բեջանյանին վճարելու պարտավորություն, որը 16.11.2011 թվականին փոխարինվել է փոխառության պարտավորության: Մասնավորապես՝ վերը նշված ապացույցներով Հենրիկ Գևորգյանն ըստ էության ընդունել է, որ Ռոբերտ Բեջանյանը եղել է իր փաստաբանը, և նրանց միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Հենրիկ Գևորգյանը պետք է Ռոբերտ Բեջանյանին վճարեր

9.000.000 (ինը միլիոն) ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հենրիկ Գևորգյանը և Ռոբերտ Բեջանյանը, 16.12.2011 թվականին կնքելով փողի փոխառության մասին պայմանագիրը՝ դրանում ներառելով 32.000.000 ՀՀ դրամից 9.000.000 ՀՀ դրամը, ըստ էության, այլ հիմքից ծագած պարտավորությունը փոխարինել են փոխառության պարտավորությամբ, որը Հենրիկ Գևորգյանի կողմից պատշաճ չի կատարվել:

Ինչ վերաբերում է Հենրիկ Գևորգյանի այն փաստարկին, որ 9.000.000 ՀՀ դրամն ինքը փոխառությամբ չի ստացել Ռոբերտ Բեջանյանից, որպիսի պայմաններում 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության պայմանագիրն այդ գումարի մասով պետք է ճանաչել չկնքված, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտավորության նորացման դեպքում չի պահանջվում (կամ չի ենթադրվում) որևէ գույքի, այդ թվում՝ դրամական միջոցի փոխանցում, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածը վերը նշված գումարի չափի մասով կիրառելի չէ:

Անդրադառնալով 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության պայմանագրի 32.000.000 ՀՀ դրամից 23.000.000 ՀՀ դրամ Ռոբերտ Բեջանյանից չստանալու վերաբերյալ Հենրիկ Գևորգյանի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Հենրիկ Գևորգյանը հայցվորից իրականում չի ստացել փոխառության պայմանագրով սահմանված 23.000.000 ՀՀ դրամը, իսկ միայն հայցվորի և պատասխանողի կողմից նախաքննության ընթացքում 23.000.000 ՀՀ դրամի չափի վերաբերյալ տրված հակասական ցուցմունքները հիմք չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 882-րդ հոդվածի ուժով 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության պայմանագիրը 23.000.000 ՀՀ դրամի մասով չկնքված ճանաչելու համար, առավել ևս, որ Հենրիկ Գևորգյանը 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության մասին պայմանագրում իր ստորագրությամբ հավաստել է 23.000.000 ՀՀ դրամը ստացած լինելու հանգամանքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հենրիկ Գևորգյանի կողմից գումարի ստացման փաստի հերքումը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունը չկատարելու համար, քանի որ 16.12.2011 թվականին կնքված փողի փոխառության պայմանագրում նշված և վերադարձման ենթակա 32.000.000 ՀՀ դրամից 9.000.000 ՀՀ դրամի չափով պարտավորությունը փոխարինվել է (նորացվել է) փոխառությամբ, իսկ 23.000.000 ՀՀ դրամի չստացման փաստը Հենրիկ Գևորգյանը չի ապացուցել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ռոբերտ Բեջանյանի հայցը ենթակա էր բավարարման, իսկ Հենրիկ Գևորգյանի հակընդդեմ հայցը՝ մերժման, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել էր Դատարանը, ինչն էլ անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերը նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիա-

գործությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է **գույքային պահանջի գործերով**՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով, **իսկ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով**՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է **գույքային պահանջի գործերով**՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, **իսկ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով**՝ բազային տուրքի քսանապատիկի չափով:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարել բողոքի բավարարման արդյունքում օրինական ուժ է տրվում Դատարանի 15.11.2016 թվականի վճռին, այսինքն՝ Ռոբերտ Բեջանյանի հայցը բավարարվում է, իսկ Հենրիկ Գևորգյանի հակընդդեմ հայցը՝ մերժվում, Վճարել դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը, գտնում է, որ Հենրիկ Գևորգյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 970.000 ՀՀ դրամ: Ընդ որում, 970.000 ՀՀ դրամից 960.000 ՀՀ դրամը ($32.000.000 \cdot 3\%$)՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա գույքային պահանջով պետական տուրքի գումար, իսկ 10.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա ոչ գույքային բնույթի պահանջով պետական տուրքի գումար, ինչպես նաև 17.12.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 32.000.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի երեք տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և Վերաքննիչ դատարանի 27.01.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար: Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է նաև, որ Հենրիկ Գևորգյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 980.000 ՀՀ դրամ, որից 960.000 ՀՀ դրամը ($32.000.000 \cdot 3\%$)՝ որպես վճարել բողոքի համար վճարման ենթակա գույքային պահանջով պետական տուրքի գումար, իսկ 20.000 ՀՀ դրամը՝ որպես վճարել բողոքի համար վճարման ենթակա ոչ գույքային բնույթի պահանջով պետական տուրքի գումար, ինչպես նաև 17.12.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 32.000.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի երեք տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 20.000 ՀՀ դրամ ($1.000.000 - 980.000$)՝ որպես վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.04.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.11.2016 թվականի վճռին:

2. Հենրիկ Գևորգյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 970.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 17.12.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 32.000.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի երեք տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Հենրիկ Գևորգյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 980.000 ՀՀ դրամ, ինչպես նաև 17.12.2012 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 32.000.000 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի երեք տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0724/02/17
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ա. Սմբատյան

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0724/02/17
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 17-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ԴԵԿՈՐՊՐՈՖ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Արման Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.10.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ «ԿՈՐՈՎ ԲԱԶՈՒԿ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 5.706.600 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված գումար, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած սույն գործով հայցադիմումը Կազմակերպության կողմից ստանալուն հաջորդող 8-րդ օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուրսյան) (այսուհետ՝ Դատարան) 23.05.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.10.2017 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է,

և Դատարանի 23.05.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 296-րդ և 521-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ Ա5091136791 հարկային հաշիվը Կազմակերպության կողմից վավերացված է, քանի որ առկա է «Հակոբ Հակոբյան» նշումը, նրա հանրային ծառայության համարանիշը, որը նշանակում է, որ Հակոբ Հակոբյանը տվյալ պահին ունեցել է Կազմակերպության անունից հարկային հաշիվներ վավերացնելու լիազորություն, և նրա էլեկտրոնային ստորագրությունը գրանցված ու հաշվառված է եղել համապատասխան հարկային մարմնում, հակառակ դեպքում Հակոբ Հակոբյանը պարզապես տեխնիկապես չէր կարող վավերացնել այդ հարկային հաշիվը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ վերը նշված հարկային հաշվի առկայության հիմքով Ընկերության և Կազմակերպության միջև առաջացել են որոշակի իրավունքներ ու պարտականություններ, անհիմն հետևություն է արել այն մասին, որ նրանց միջև մատակարարման իրավահարաբերություններ չեն ծագել: Մատակարարման իրավահարաբերության առկայության համար պարտադիր չէ, որ դրա կողմերի միջև կնքվի հենց «պայմանագիր» վերնագիրը կրող փաստաթուղթ: Թիվ Ա5091136791 հարկային հաշիվը պարունակում է բոլոր հիմնական պայմանները՝ մատակարարվող ապրանքի ստույգ տեսականին, քանակը, գինը, Ընկերության կողմից ապրանք հանձնելու պարտավորությունը, ապրանքի ընդունման փաստը և հանձնված ապրանքի դիմաց Կազմակերպության կողմից վճարելու պարտավորությունը:

Վերաքննիչ դատարանը, դուրս գալով իր իրավասության սահմաններից, հետևություն է արել այն մասին, որ թիվ Ա5091136791 հարկային հաշիվը քաղվածք է, մինչդեռ Դատարանն իր դատական ակտի որևէ հատվածում նման եզրահանգում չի կատարել, այլ բավարարվել է միայն նշումով, որ այդ հարկային հաշիվը չի կարող ապացուցել մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.10.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝ Ընկերությունը 15.06.2015 թվականին էլեկտրոնային եղանակով դուրս է գրել Կազմակերպությանն ընդհանուր 5.706.600 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ մատակարարելու վերաբերյալ թիվ Ա5091136791 էլեկտրոնային հարկային հաշիվը: Նշված հարկային հաշիվը

վավերացվել է (հաստատվել է) ում Արտավազդ Մարտիրոսյանի էլեկտրոնային ստորագրությամբ՝ Ընկերության անունից, իսկ հաշվի ստացումը Կազմակերպության կողմից հաստատվել է ում Հակոբ Հակոբյանի կողմից՝ այդ հաշվի վրա դրված էլեկտրոնային ստորագրությամբ: Հարկային հաշիվը պարունակում է ապրանքներ մատակարարող (առաքող) և ապրանքներ ձեռք բերող անձանց տվյալները, մատակարարվող ապրանքների անվանումը, չափման միավորը, քանակը, միավորի գինը, արժեքը, ԱԱՀ դրույքաչափը, ԱԱՀ գումարը, ընդհանուր արժեքը (**գ.թ. 11, 12**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ու 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կողմերի միջև մատակարարման հարաբերությունների առկայության փաստի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անհրադանալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք մի կողմի՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված և էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված (հաստատված) հարկային հաշիվը կարող է դիմելով բավարար կողմերի միջև մատակարարման իրավահարաբերության առկայության փաստը հաստատված որակելու համար, եթե այդ հաշվի վրա դրված է մյուս կողմի՝ այդ հաշիվն սրանալու փաստը հաստատող էլեկտրոնային ստորագրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից

պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (քազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ (...): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը կնքվում է կողմերից մեկի օֆերտան (պայմանագիր կնքելու առաջարկը) ուղարկելու և մյուս կողմի դրա ակցեպտի (առաջարկը ընդունելու) միջոցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկված անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենքին համապատասխան, պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է նաև հանձնել գույք, պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը հանձնելու պահից (հոդված 177):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն եղևում է պայմանագրի կողմից: (...) Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է նույն օրենսգրքի 454 հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օֆերտա ստա-

ցած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարարվաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսելով գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ *չգրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից*,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության (*լրեն, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիա-*

կան գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով նշված հասկացությունների բովանդակությունը, արձանագրել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը, իսկ «կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այսինքն՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է (*տե՛ս, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համիաս» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի մատակարար-վաճառողի դեպքում՝ իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ապրանքների մատակարարման պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Ընդ որում, օրենսդիրը, ապրանքների մատակարարման պայմանագրի համար պարտադիր համարելով գրավոր ձևը, միևնույն ժամանակ որևէ նշում չի կատարել այդ ձևը չպահպանելու հետևանքների մասին, որի դեպքում գործում է վերը նշված 1-ին կանոնը, որի համաձայն՝ կողմերը գրկված չեն վեճի դեպքում ի հավաստումն ապրանքների մատակարարման պայմանագրի և դրա պայմանների գրավոր ու այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Ավելին՝ օրենսդիրը նաև չի սահմանել գրավոր ապացույցների սպառիչ ցանկը՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխանող ցանկացած գրավոր ապացույց, որը կարող է տեղեկություններ պարունակել և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող

այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 11.10.2010 թվականին ընդունված, 01.01.2011 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «Հարկային հաշիվների դուրսգրման, հարկային հաշիվների սերիայի և համարի գներացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1504-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման կարգի (հավելված 1) (այսուհետ՝ Կարգ 1) 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կանոնակարգվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման հետ կապված հարցերը, ինչպես նաև սահմանվում են համակարգչային տեխնիկայի կիրառմամբ հարկային հաշիվների դուրսգրման ձևերը, էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների լրացման նպատակով կիրառվող համակարգչային ծրագրերի աշխատանքի հիմնական սկզբունքները, էլեկտրոնային հարկային հաշիվների վավերացման և հարկային մարմնի հարկային հաշիվների համակարգ ծրագրային միջոցներով տեղեկատվություն ներկայացնելու կարգերը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով: (...)

Կարգ 1-ի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվներ դուրս են գրվում հարկային մարմնի հարկային հաշիվների համակարգի միջոցով: Հարկային մարմնի հարկային հաշիվների համակարգը ծրագրային համակարգ է, որում ներառվում են հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրսգրումն ապահովող, հարկային հաշիվների մասին տեղեկությունների համադրման և այլ հարակից ծրագրեր, ինչպես նաև հարկային հաշիվների, դրանց մասին և հարկային հաշիվների շրջանառությանն առնչվող այլ տեղեկությունների էլեկտրոնային դարաններ (բազաներ):

Կարգ 1-ի 5-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պետք է պարունակեն չլրկնվող և սահմանված կարգով գներացված սերիա և համար (այսուհետ՝ սերիա-համար), որը հաշիվը նույնականացնող հիմնական վավերապայմանն է:

Կարգ 1-ի 6-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պարտադիր վավերացվում (հաստատվում) են նման իրավասություն ունեցող առնվազն մեկ անձի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվ դուրս գրելու իրավասություն ունեն օրենքի համաձայն ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ ապրանքի մատակարարում համարվող գործարք իրականացնելու և հարկ վճարողի հաշվառման համար ունենալու դեպքում, որոնք, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 2 հավելվածին համապատասխան, հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ:

Կարգ 1-ի 21-րդ կետի համաձայն՝ հարկային հաշվում այն դուրս գրողին վերաբերող պարտադիր լրացման ենթակա տվյալները՝ անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճա-

րողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն), գտնվելու վայրը լրացվում են հարկային հաշիվների համակարգի միջոցով՝ տեղեկատվական բազայում առկա տվյալներով:

Կարգ 1-ի 23-րդ կետի համաձայն՝ հարկ վճարողը հարկային հաշիվ դուրս գրելու համար ծրագրում ընտրում է ծրագրով նախատեսված՝ հարկային հաշվի տեսակը (ապրանքի մատակարարման, ակցիզային հարկով հարկվող ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման) և ձևը (հարկ վճարողի անունից, հատուկ, մատակարարի անունից, հանձնարարողի (պրինցիպալի) անունից, համատեղ գործերը վարողի անունից, ԱԱՀ-ի վերադարձի, ճշգրտող հաշիվ) և լրացնում այն: (...):

Կարգ 1-ի 25-րդ կետի համաձայն՝ լրացված հարկային հաշիվը չի կարող վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ, եթե դրանում լրացված չէ հարկային հաշվում պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ (վավերապայման):

Կարգ 1-ի 26-րդ կետի համաձայն՝ հարկային հաշիվը ենթակա չէ վավերացման, եթե դրանում բացակայում են դրանում լրացման ենթակա նվազագույն տվյալները: Հարկային հաշվի նվազագույն տվյալներ են համարվում դրանում ավելացված արժեքի հարկով հարկված (ավելացված արժեքի հարկի գումարի և դրույքաչափի նշումով) որևէ գործարքի մասին հարկային հաշվի հաշվարկային մասում լրացվող տվյալները:

Կարգ 1-ի 27-րդ կետի համաձայն՝ լրացված ինտերնետային հարկային հաշիվը վավերացվում է ինտերնետային ցանցում վավերականությունը հաստատվող էլեկտրոնային ստորագրությամբ և ստանում է սերիա-համար:

Կարգ 1-ի 33-րդ կետի համաձայն՝ ինտերնետային հարկային հաշիվների դուրսգրման ծրագիրն ինտերնետային ցանցում ռեժիմում հնարավորություն է տալիս դիտելու իր և այլ անձանց կողմից տվյալ հարկ վճարողի անվամբ (որպես ապրանքների գնորդ կամ ծառայություններ ստացող կամ հանձնակատարի, գործակալի կամ համատեղ գործունեության մասնակցի կողմից) դուրս գրված հարկային հաշիվները, հաստատելու էլեկտրոնային հարկային հաշվի ստացումը՝ հարկային հաշվում դնելով էլեկտրոնային ստորագրություն:

ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված «Հարկային հաշիվների սերիայի և համարի գեներացման կարգի» (հավելված 3) (այսուհետ՝ Կարգ 2) 1-ին կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրվող հարկային հաշիվները համարակալվում են հարկային հաշիվների համարակալման միասնական համակարգի (ծրագրի) կողմից գեներացված սերիա-համարներով:

Կարգ 2-ի 3-րդ կետի համաձայն՝ սերիա-համարները բաղկացած են հայերեն այբուբենի մեկ մեծատառ ունեցող սերիայից և տասանիշ թվից բաղկացած համարից:

Կարգ 2-ի 4-րդ կետի համաձայն՝ հարկային հաշիվների համարը բաղկացած է նույնականացնող ութ նիշից և 2-նիշանոց ստուգիչ նիշերից: Ստուգիչ նիշերով հարկային հաշվի համարն ստուգվում է ծրագրի միջոցով:

05.12.2013 թվականին ընդունված, 28.12.2013 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1364-Ն որոշման հավելվածով հաստատված «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգի» (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կարգա-

վորվում են առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվարկային փաստաթղթեր) էլեկտրոնային եղանակով դուրսգրման հետ կապված հարաբերությունները:

Հավելվածի 2.1-րդ կետի համաձայն՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-ին հոդվածի կիրառման իմաստով՝

1) էլեկտրոնային եղանակով դուրսգրման ենթակա հաշվարկային փաստաթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հաշվարկային փաստաթղթերին ներկայացվող պահանջներին և վավերապայմաններին համապատասխանող հարկային հաշիվը, նույն կարգի NN 1, 2 և 3 ձևերին համապատասխան լրացված հաշվարկային փաստաթղթերը (...):

Հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ հաշվարկային փաստաթղթեր էլեկտրոնային եղանակով դուրս գրելու և (կամ) ստացած հաշվարկային փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու իրավասություն ունեն «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 2 հավելվածին համապատասխան՝ հարկային մարմնից էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ անկախ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու կամ չհամարվելու հանգամանքից, անկախ իրականացվող գործունեության հարկման կարգից (հաստատագրված կամ արտոնագրային վճարով):

Հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ լրացված հաշվարկային փաստաթուղթը չի կարող վավերացվել, եթե դրանում լրացված չեն պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ (վավերապայման) և լրացման ենթակա նվազագույն տվյալները: Հաշվարկային փաստաթղթում պարտադիր լրացման ենթակա տվյալները սահմանվում են համապատասխան փաստաթղթի լրացման կարգով: Հաշվարկային փաստաթղթի լրացման ենթակա նվազագույն տվյալներ են համարվում փաստաթղթի հաշվարկային մասում առնվազն մեկ գործարքի մասին տվյալները: Լրացված հաշիվ-ապրանքագրերը պետք է պարունակեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջներով սահմանված տվյալներն ու վավերապայմանները:

05.12.2013 թվականին ընդունված, 28.12.2013 թվականին ուժի մեջ մտած և 23.06.2018 թվականին ուժը կորցրած «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1364-Ն որոշմամբ սահմանված է նաև արտադրանքների, ապրանքների առաքման հաշիվ-ապրանքագրի ձևը (Ձև 1), որի համաձայն՝ նշված հաշվարկային փաստաթուղթը ներառում է, մասնավորապես, հետևյալ տեղեկությունները՝ փաստաթղթի դուրսգրման ամսաթիվը, առաքման ամսաթիվը, պայմանագրի կնքման ամսաթիվը, արտադրանք, ապրանք առաքողի և այն ձեռք բերողի տվյալները, մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը և այլն:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ կառավարության կողմից սահմանվել են էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման վերաբերյալ համապատասխան կարգեր: Ընդ որում, էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվ դուրս գրելու իրավասություն է վերապահվել օրենքի համաձայն ավելացված արժեքի հարկ վճարող համարվող այն

անձանց, ովքեր հարկային մարմնից ստացել են էլեկտրոնային ծածկագիր և գաղտնաբառ: Էլեկտրոնային եղանակով դուրս գրվող բոլոր հարկային հաշիվները պետք է պարունակեն տվյալ տեսակի հաշվի համար պարտադիր համարվող տեղեկությունները, այդ թվում՝ համապատասխան գործարքի մասին տեղեկությունները, ունենան չրկվող և սահմանված կարգով գներացված սերիա ու համար, որը հաշիվը նույնականացնող հիմնական վավերապայմանն է, ինչպես նաև պարտադիր վավերացվեն (հաստատվեն) նման իրավասություն ունեցող առնվազն մեկ անձի էլեկտրոնային ստորագրությամբ: Ընդ որում, լրացված հարկային հաշիվը չի կարող վավերացվել էլեկտրոնային ստորագրությամբ, եթե դրանում լրացված չէ հարկային հաշվում պարտադիր լրացման ենթակա որևէ տվյալ (վավերապայման): Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հարկային հաշիվը վավերացված է (հաստատված է) էլեկտրոնային ստորագրությամբ, և եթե այլ բան ապացուցված չէ, ապա դա նշանակում է, որ հարկային հաշիվը պարունակում է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, իսկ այն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրած և հաստատված անձինք նման իրավասություն ունեցող անձինք են, որոնց կողմից հարկային հաշիվը վավերացնելը և հաստատելը կարող է վկայել մատակարարման հարաբերություններ առաջացնելու կամահայտնության մասին:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումներով սահմանված իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մատակարարման գրավոր պայմանագրի կնքված չլինելու դեպքում մատակարարման հարաբերությունները կարող են հաստատվել էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթով՝ պայմանով, որ վերջինս պարունակի մատակարարման հարաբերությունների առկայությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ և ՀՀ կառավարության կողմից հաստատված ձևին համապատասխան տեղեկությունները, վավերացված և հաստատված լինի ինչպես ապրանքներ մատակարարող անձի, այնպես էլ գնորդի՝ նման փաստաթղթերը վավերացնելու կամ հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից, այդ թվում՝ վերջինիս էլեկտրոնային ստորագրությամբ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մատակարարման գրավոր պայմանագրի բացակայության պայմաններում մատակարարման հարաբերությունների համար էական համարվող պայմանների՝ կողմերի, ապրանքների անվանման, քանակի, գնի, մատակարարման ժամկետի մասին տեղեկություններ պարունակող հաշվարկային փաստաթուղթը կարող է գնահատվել որպես մատակարարման հարաբերությունների առկայությունը հիմնավորող գրավոր ապացույց:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 15.06.2015 թվականին էլեկտրոնային եղանակով դուրս է գրել Կազմակերպությանն ընդհանուր 5.706.600 ՀՀ դրամ արժողությամբ ապրանքներ մատակարարելու վերաբերյալ թիվ Ա5091136791 էլեկտրոնային հարկային հաշիվը: Ընկերության կողմից դուրս գրված թիվ Ա5091136791 էլեկտրոնային հարկային հաշիվը վավերացվել է (հաստատվել է) ում Արտավազ Մարտիրոսյանի էլեկտրոնային ստորագրությամբ: Թիվ Ա5091136791 էլեկտրոնային հարկային հաշվի ստացումը հաստատվել է ում Հակոբ Հակոբյանի կողմից այդ հաշվի վրա դրված էլեկտրոնային ստորագրությամբ: Հարկային հաշիվը պարունակում է ապրանքներ մատակարարող (առաքող) և ապրանքներ ձեռք բերող անձանց տվյալները, մատակարարվող ապրանքների անվանումը, չափման միավորը, քանակը, միավորի գինը, արժեքը, ԱԱՀ դրույքաչափը, ԱԱՀ գումարը, ընդհանուր արժեքը:

Դատարանը, պատճառաբանելով, որ «Ընկերության կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց առ այն, որ իր և Կազմակերպության միջև կնքվել է մա-

տակարարման պայմանագիր, որի հիման վրա վերջինս Ընկերությանը մատակարարել է 5.706.600 դրամի ապրանք», «Կազմակերպության կողմից 15.06.2015 թվականին դուրս գրված ապրանքների մատակարարման Ա5091136791 հարկային հաշիվը չի կարող ապացուցել մատակարարման հարաբերությունների առկայությունը», «որպես ստացող հարկային հաշվի մեջ նշվել է «Հակոբ Հակոբյան»-ը, որի առնչությունը Կազմակերպությանը որևէ կերպ չի հիմնավորվել», Ընկերության հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «կողմերի միջև պայմանագրային հարաբերություններ կարող են առաջանալ գրավոր կնքված պայմանագրի հիման վրա, մինչդեռ Ընկերությունը չի ներկայացրել գրավոր կնքված և ստորագրված պայմանագիր, հետևաբար չի ապացուցել այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքվել է մատակարարման պայմանագիր, իսկ ներկայացված հարկային հաշվի քաղվածքը սահմանված կարգով ստորագրված և կնքված չէ ստացողի կողմից», «ներկայացված հարկային հաշվով չի հաստատվում ապրանքները ստանալու փաստը, քանի որ այն ստորագրված և կնքված է միայն Ընկերության կողմից, որի պարագայում այն չի կարող համարվել վճարման հիմք», «գործում առկա հարկային հաշվի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որպես ստացող նշված է Հակոբ Հակոբյանը, ով Կազմակերպության անունից գործողություններ իրականացնելու, այդ թվում՝ ապրանքն ստանալու լիազորությամբ օժտված չի եղել», Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարելու որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա (յո՛ւն, «Շենքերի կառավարում» համալիրությունն ընդդեմ Մասիս Ղազանչյանի թիվ

ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրե՛ս, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատում՝ անտեսելով այն հանգամանքը, որ չնայած Ընկերությունը սույն գործով չի ներկայացրել Կազմակերպության հետ հենց ապրանքների մատակարարման պայմանագիր վերնագիրը կրող համապատասխան ձևով փաստաթուղթ, սակայն դրա չներկայացնելը, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, չի կարող հանգեցնել իրականում կողմերի միջև գոյություն ունեցած ապրանքների մատակարարման վերաբերյալ պայմանագրի անվավերությանը: Տվյալ դեպքում Ընկերությունը, օգտվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով իրեն վերապահված իրավունքից, ի հաստատումն Կազմակերպության հետ ապրանքների մատակարարման իրավահարաբերությունների փաստի առկայության, ներկայացրել է այլ գրավոր ապացույց՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվ, որը կարող է տեղեկություններ պարունակել և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու, թե այդ հաշիվն արդյո՞ք ուղղված եղել է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն, թե՛ ոչ, սույն գործով կողմերը հստակորեն դրսևորել են իրենց կամահայտությունն ապրանքների մատակարարման պայմանագիր կնքելու վերաբերյալ, թե՛ ոչ, այդ կամքն ուղղված եղել է Ընկերության դեպքում՝ իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) Կազմակերպությանը հանձնելուն, իսկ վերջինիս դեպքում՝ այդ ապրանքներն ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն, և արդյո՞ք այդ պարտավորությունը փաստացի կատարված է: Նշված հարկային հաշիվը պետք է գնահատել՝ նաև պարզելու համար, թե արդյո՞ք այն համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված և սույն որոշմամբ բացահայտված պահանջներին, այդ թվում՝ նաև՝ թե արդյո՞ք հարկային հաշիվը վավերացվել և հաստատվել է նման իրավասություն ունեցող անձանց կողմից, թե՛ ոչ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները չեն իրականացրել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն՝ խախտելով Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածը, որպիսի պայմաններում առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի ներկայացման և վարույթ ընդունման պահին գործող հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Նախկին օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և վերը նշված հարցերը պարզելու նպատակով գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համա-

ձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի, այդ թվում նաև վճռաբեկ բողոքի համար Շնկերության կողմից վճարված պետական տուրքի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.10.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2917/02/12
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2917/02/12
Նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԻԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ալմաքար» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Սարգիս Միրաքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ալմաքար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «Մաքս Կոնցեռն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի «Մաքս Կոնցեռն» ՍՊԸ-ի ընդդեմ «Ալմաքար» ՍՊԸ-ի՝ գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 34.560.000 ՀՀ դրամ՝ որպես անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինությամբ պայմանավորված դրամական հատուցում:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 17.280.000 ՀՀ դրամ՝ որպես անվավեր գործարքով ստացված գումար: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության

դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 05.04.2017 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.11.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.04.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Սարգիս Միրաքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ և 304-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 130-րդ, 130.1-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անհիմն հետևություն է արել այն մասին, որ հայցվորը չի ապացուցել այն հանգամանքը, որ վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքը հնարավոր չէ բնեղենով վերադարձնել սեփականատիրոջը, մինչդեռ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե ինչ է իրենից ներկայացնում անվավեր ճանաչված վարձակալության պայմանագրի դեպքում «գործարքով ստացվածը» արտահայտությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 2011 թվականից սկսած յուրաքանչյուր ամիս վարձակալության պայմանագրով նախատեսված վարձավճարի վճարման վերաբերյալ հարկային հաշիվների առկայությունը հաստատում է, որ վարձակալության հանձնված գույքը շարունակել և շարունակում է տիրապետվել պատասխանողի կողմից: Հակառակ դեպքում այն պահից սկսած, երբ գույքը բնեղենով վերադարձված լիներ սեփականատիրոջը, վարձատրի կողմից վարձակալին վարձավճարի վճարման պահանջ ներկայացնելը կդառնար անիմաստ: Մինչդեռ հայցվորի կողմից վարձավճարի վճարման մասին հարկային հաշիվները շարունակել են ներկայացվել ընդհուպ մինչև կողմերի միջև կնքված պայմանագրին անվավեր ճանաչելու մասին դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության (Վարձատու) և Կազմակերպության (Վարձակալ) միջև 09.07.2009 թվականին կնքված վարձակալության պայմանագրով Վարձատուն պարտավորվել է վճարի

դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնել Վարձատուին պատկանող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում գտնվող 42քմ, 90քմ և 160քմ մակերեսներով արտադրամասերը, որոնք տեղաբաշխված են 0,2645հա մակերեսով հողամասի վրա: Պայմանագրով յուրաքանչյուր ամսվա վարձավճարը սահմանվել է 720.000 ՀՀ դրամ, իսկ պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 09.07.2009 թվականից մինչև 09.07.2055 թվականը **(հատոր 1-ին, գ.թ. 23-24):**

2) 30.08.2011-30.07.2015 թվականների թվով 48 հարկային հաշիվների համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպությանը մատուցվել են ծառայություններ՝ ընդհանուր 34.560.000 ՀՀ դրամի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 6-22, հատոր 2-րդ, գ.թ. 54-85):**

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 09.04.2013 թվականի թիվ ԱՏ-05/04/2013-2-0090 տեղեկանքի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում գտնվող և Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը 09.07.2009 թվականին վարձակալության պայմանագրով տրվել է Կազմակերպությանը, որն էլ 01.08.2009 թվականին նշված գույքը ենթավարձակալության պայմանագրով տվել է «Գեգամետ ալյու» ՍՊԸ-ին **(հատոր 1-ին, գ.թ. 84):**

4) ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ-4/0243/02/13 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Կազմակերպության մասնակից Խաչիկ Վաղինակի Մանուկյանի ընդդեմ Ընկերության և Կազմակերպության՝ գործարքն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 26.11.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ընկերության և Կազմակերպության միջև 09.07.2009 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը ճանաչվել է անվավեր **(հատոր 2-րդ, գ.թ. 86-92):**

5) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ-1/0072/04/16 քաղաքացիական գործով 25.11.2016 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ **(հատոր 2-րդ, գ.թ. 113-117):**

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում գործարքով կողմերից յուրաքանչյուրի սրացածը վերադարձնելու առանձնահատկություն-

ներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վստա պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալության պայմանագրով վարձատուր պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Օրենքով կարող են սահմանվել գույքի տեսակներ, որոնց վարձակալության հանձնելը չի թույլատրվում կամ սահմանափակված է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 61-րդ գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, կամ ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ գործարքն անվավեր է դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք). այդպիսի գործարքն անվավեր է կնքելու պահից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է ընդհանուր կանոն գործարքի անվավերության հետևանքների վերաբերյալ, այն է՝ կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Միևնույն ժամանակ օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքերի համար, երբ ստացածը բնեղենով վերադարձնելն անհնար է: Նման դեպքերում կողմը պարտավոր է հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Որպես բացառություն՝ օրենսդիրն ինքնին նախատեսել է գույքից օգտվելը, այսինքն՝ կողմը, որն անվավերությանը նախորդող ժամանակահատվածում օգտվել է գույքից, որպես գույքից օգտվելը բնեղենով վերադարձնելու անհնարիություն՝ պարտավոր է հատուցել գույքից օգտվելու արժեքը: Փաստորեն, գույքի օգտագործման պայմանագրերի դեպքում «գործարքով սրացածը» հասկացությունը ենթակա է ավելի լայն մեկնաբանման: Նման մեկնաբանության պայմաններում «գործարքով սրացածը» նշանակում է ոչ միայն գործարքով ստացված գույքը բնեղենով, այլ նաև գույքի օգտագործման ողջ գործընթացը ներառյալ, հակառակ դեպքում՝ նշված հասկացությանը տրված ոչ համապատասխան մեկնաբանումը կարող է խեղաթյուրել իրավական նորմի բուն էությունը:

Վարձակալության պայմանագրով վարձատուս պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Վարձակալության պայմանագրի դեպքում վարձակալի ստացածը դրսևորվում է վարձակալության պայմանագրով վարձատուի կողմից տրամադրված գույքից օգտվելով, որի վերադարձը ևս չի կարող արտահայտվել բնեղենով: Հետևաբար վարձակալության պայմանագիրն անվավեր ճանաչելու դեպքում գույքն օգտագործողի կողմից գործարքով ստացածը վերադարձնելն անհնար է, քանի որ վարձակալության դեպքում գույքը հանձնվում է օգտագործման, ուստի գործարքով ստացածը դրսևորվում է գույքից օգտվելով: Այսինքն՝ վարձակալության դեպքում վարձակալը փաստացի օգտվում է պայմանագրի առարկա հանդիսացող գույքից, և անվավերության հետևանքներ կիրառելիս վերջինս պարտավոր է սեփականատիրոջը հատուցել այդ գույքի օգտագործման արժեքը:

Վերոնշյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարձակալության պայմանագրի անվավերության հետևանքների կիրառումն ունի հետևյալ առանձնահատկությունները՝

- 1. վարձակալության պայմանագրով վարձակալի սրացածը դրսևորվում է գույքի օգտագործմանը, հետևաբար՝ այն բնեղենով վերադարձնելն անհնար է,*
- 2. վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձակալը պարտավոր է սեփականատիրոջը հատուցել գույքից օգտվելու արժեքը,*
- 3. վարձակալության պայմանագրով վարձակալի սրացածը՝ գույքից օգտվելու արժեքը, որոշվում է րվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:*

Վերջին պայմանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի կանոններից: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 61-րդ գլխում նախատեսված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ

անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է: Նշված դրույթը կիրառելի է նաև վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում, քանի որ օրենսդիրը ուղղակիորեն սահմանում է, որ մատնանշված գլխի դրույթները կիրառելի են անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով կամ չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավական վերլուծությունները և վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում վարձատրու իրավունք ունի պահանջել գույքը բնեղենով, ինչպես նաև որպես վարձակալության պայմանագրի անվավերության հետևանք գույքի փաստացի տիրապետման ամբողջ ժամանակահատվածի համար գույքից օգտվելու արժեքը՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 09.07.2009 թվականի վարձակալության պայմանագրով Ընկերությունը Կազմակերպության ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում գտնվող 42քմ, 90քմ և 160քմ մակերեսներով արտադրամասերը: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է 09.07.2009 թվականից մինչև 09.07.2055 թվականը: 31.08.2011-30.07.2015 թվականների թվով 48 հարկային հաշիվների համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպությանը մատուցվել են ծառայություններ՝ ընդհանուր 34.560.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 09.04.2013 թվականի թիվ ԱՏ-05/04/2013-2-0090 տեղեկանքի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը 09.07.2009 թվականին վարձակալության պայմանագրով տրվել է Կազմակերպությանը: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 26.11.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Ընկերության և Կազմակերպության միջև 09.07.2009 թվականին կնքված վարձակալության պայմանագիրն անվավեր է ճանաչվել: ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2016 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ դատաքննությամբ ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը վերջինիս բնեղենով անհնար է վերադարձնել կամ առհասարակ չի վերադարձվել, որպիսի հանգամանքը թույլ կտար Ընկերությանը դրա փոխարեն պահանջել դրամական փոխհատուցում: Հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճելով՝ Դատարանն արձանագրել է, որ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2016 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ, հետևաբար սույն քաղաքացիական գործի վարույթն ազդում է սնանկության վարույթի վրա, ուստի հակընդդեմ հայցը ենթակա է կարճման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ հայցվորը չի ներկայացրել ապացույց առ այն,

որ անվավեր ճանաչված վարձակալության պայմանագրով նախատեսված անշարժ գույքը չի վերադարձվել իրեն կամ հնարավոր չէ այն բնեղենով վերադարձնել, որպիսի իրավաչափ եզրահանգման է եկել նաև Դատարանը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ թեև 31.08.2011-30.07.2015 թվականների թվով 48 հարկային հաշիվների համաձայն՝ Ընկերության կողմից Կազմակերպությանը մատուցվել են ծառայություններ՝ ընդհանուր 34.560.000 ՀՀ դրամի չափով, այնուամենայնիվ, հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով չի ապացուցել այն հանգամանքը, որ վարձակալության տրամադրված անշարժ գույքը հնարավոր չէ վերադարձնել սեփականատիրոջը:

Մինչդեռ վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչված փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս, Ռուզաննա Թորոպյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԶԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հաստատված համարելով այն փաստը, որ Ընկերությունը չի ներկայացրել ապացույց առ այն, որ անվավեր ճանաչված վարձակալության պայմանագրով նախատեսված անշարժ գույքը չի վերադարձվել իրեն կամ հնարավոր չէ այն բնեղենով վերադարձնել, ըստ էության, ճիշտ չեն գնահատել գործի լուծման համար նշանակություն ունեցող մյուս փաստերը: Այսինքն՝ ստորադաս դատարանները գործարքի անվավերության հետևանքները՝ գործարքով ամբողջ ստացածը վերադարձնելը, փաստացի կապել են միայն վարձակալության պայմանագրի առարկայի բնեղենով վերադարձի հետ, մինչդեռ ինչպես արդեն նշվեց, գործարքով ստացածն այս դեպքում ենթակա է լայն մեկնաբանության: Մասնավորապես՝ գործարքով ստացածը նշանակում է ոչ միայն գործարքով ստացած գույքը բնեղենով, այլ նաև գույքից օգտվելու գործընթացը, որի արժեքը ևս ենթակա է հատուցման:

Նման պայմաններում ստորադաս դատարանները լրիվ ու բազմակողմանի քննություն չեն իրականացրել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը պարզելու ուղղությամբ, հետևաբար առկա է գործի նոր քննության անհրաժեշտություն՝ վարձակալության պայմանագրի անվավերության դեպքում «գործարքով ստացվածը» և դրա արժեքը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքի ներկայացման և վարույթ ընդունման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ գործը նոր քննության է ուղարկվում միայն Ընկերության հայցի մասով, նկատի ունենալով, որ գործի վարույթը՝ Կազմակերպության հակընդդեմ հայցի մասով, կարճվել է և դատական ակտն այդ մասով վերաքննության, համապատասխանաբար նաև՝ վճռաբեկության կարգով չի բողոքարկվել:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.11.2017 թվականի որոշումը և գործն ըստ հայցի «Ալմաքար» ՍՊԸ-ի ընդդեմ «Մաքս Կոնցեռն» ՍՊԸ-ի՝ գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջի մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0779/02/10
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0779/02/10
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.05.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Խաչատրյանի ընդդեմ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը համատեղ սեփականություն ճանաչելու, իր բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և կատարված պետական գրանցումները մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սուսաննա Խաչատրյանը պահանջել է Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը, Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 15-րդ օժանդակ տարածքը և Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակն օրենքի ուժով ճանաչել Սուսաննա Խաչատրյանի և Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք, ճանաչել Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը վերոնշյալ անշարժ գույքերի 1/2 բաժինների նկատմամբ, մասնակի անվավեր ճանաչել Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանի նկատմամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի անվամբ 25.12.2009 թվականին սեփականության իրավունքի պետական գրանցման միասնական մատյանի 00018 համարի

տակ կատարված գրանցումը, սեփականության իրավունքի պետական գրանցման միասնական մատյանի 00017 համարի տակ կատարված Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակի գրանցումը և 26.12.2009 թվականին Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 15-րդ օժանդակ տարածքի նկատմամբ 00023 համարի տակ կատարված գրանցումը, օրենքի ուժով ճանաչել «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի բաժնեմասում Վիգեն Ասլանյան Ավանեսյանսին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը Սուսաննա Խաչատրյանի և Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք և ճանաչել Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի բաժնեմասում Վիգեն Ասլանյան Ավանեսյանսին սեփականության իրավունքով պատկանող 55 տոկոս բաժնեմասի 1/2 բաժնի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) 23.06.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ս. Միքայելյան, Ն. Տավարացյան, Ն. Բարսեղյան) 10.07.2014 թվականի որոշմամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2010 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուրոյան) 18.09.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Խառատյան, Կ. Հակոբյան, Տ. Նազարյան) 21.04.2016 թվականի որոշմամբ Սուսաննա Խաչատրյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ալիխյան) (այսուհետ՝ Դատարան) 02.02.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «մասնակի անվավեր ճանաչել Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի անվամբ կատարված՝ Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանի, Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 15-րդ օժանդակ տարածքի և Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումները և 1/2 բաժնեմասով ճանաչել Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանի, Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 15-րդ օժանդակ տարածքի և Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակի նկատմամբ: «Մերի թայմ կոնսայլթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյանի միջև 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագրով Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի կողմից ձեռք բերված 51 տոկոս բաժնեմասի 1/2 մասի նկատմամբ ճանաչել Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը: Հայցը՝ մնացած մասով, մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.05.2017 թվականի որոշմամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.02.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սուսաննա Խաչատրյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 199-րդ, 201-րդ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Դատարանը և Վերաքննիչ դատարանն անտեսել են, որ Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության Թեհրանի ընտանեկան դատարանի 273 բաժանմունքի 20.10.2010 թվականի թիվ 0951 վճռով հաստատվել է ամուսնության գրանցման արդյունքում գոյացած գույքային և նյութական իրավունքների դիմաց ամուսնությունից բխող իրավունքների գումարը Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի կողմից Սուսաննա Խաչատրյանին վճարելու և այն վերջինիս կողմից ստանալու հանգամանքը: Նշված վճիռը ճանաչվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ, ուստի այն պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց ու քաղաքացիների համար և ենթակա է կատարման ՀՀ ամբողջ տարածքում:

Ստորագրած դատարաններն անտեսել են, որ վերոնշյալ վճռով ամրագրված 14.06.2010 թվականի համաձայնագրով սահմանված «ամուսնության գրանցման արդյունքում գոյացած գույքային և նյութական իրավունքների դիմաց ամուսնությունից բխող իրավունքների գումար» արտահայտությունը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածով և 197-րդ հոդվածով սահմանված ռեժիմի կիրառմանը, այն է՝ ընդհանուր համատեղ սեփականության մասնակցին նրան հասանելիք բաժնի արժեքի հատուցմամբ ընդհանուր գույքում նրա սեփականության իրավունքի դադարմանը: Այսինքն՝ ամսական 10.000.000 դիալը, որը Վիզեն Ասլանյան Ավանեսյանը երկուսուկես տարի վճարել է Սուսաննա Խաչատրյանին, նույն վճռի համաձայն՝ վերաբերում է Սուսաննա Խաչատրյանի՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքում նրա ունեցած մասի դիմաց Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի կողմից այդ մասի արժեքը վճարելուն և դրա հիմքով այդ մասի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը դադարելուն:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, օրինական և հիմնավորված համարելով Դատարանի եզրահանգումը, իր հերթին թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի խախտում, քանի որ ամուսինների համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ ամուսինների փոխադարձ համաձայնությամբ այլ իրավական ռեժիմ սահմանված լինելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում, որով արդեն իսկ լուծվել է ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի հարցը և հաստատված է համարվել, որ Սուսաննա Խաչատրյանը ստացել է ամուսնությունից բխող իրավունքների գումարը, քողարկված

կերպով կրկնակի քննության է ենթարկել արդեն իսկ մեկ անգամ լուծված գործը՝ կասկածի տակ դնելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ճանաչված Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության Թեհրանի ընտանեկան դատարանի 273 բաժանմունքի 20.10.2010 թվականի 0951 համարով դատական ակտը, որով և անտեսվել է այդ ակտի պարտադիր բնույթը:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 176-րդ հոդվածները, «Սահմանափակ պարտասխանարվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը, նույն հոդվածի 4-րդ կետը, 11-րդ հոդվածի 7-րդ կետը, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհար ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հերկյալ փաստարկներով.

Ստորադաս դատարանները հիմք են ընդունել այն հանգամանքը, որ «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի մասնակիցներ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյան Ավանեյանսի միջև 17.11.2006 թվականին կնքվել է բաժնեմասի օտարման պայմանագիր, որի համաձայն՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ն Վիգեն Ասլանյան Ավանեյանսին է վաճառել «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ունեցած 51 տոկոս բաժնեմասը: Մինչդեռ Դատարանը և Վերաքննիչ դատարանն անտեսել են, որ իրավունքները մինչև այժմ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չեն ստացել: Ավելին, «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի՝ 27.04.2007 թվականի փոփոխությամբ գրանցված կանոնադրության համաձայն՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ն «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 51 տոկոս բաժնեմասի սեփականատերն է, իսկ Վիգեն Ասլանյան Ավանեյանսը՝ միայն 4 տոկոս բաժնեմասի սեփականատերը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը, Դատարանի եզրահանգումն օրինական և հիմնավորված համարելով, խախտել է ինչպես վերը նշված նյութական իրավունքի նորմերի, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, քանի որ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի հիմնադրման պայմանագիրը, կանոնադրությունը, այդ թվում՝ 27.04.2007 թվականի փոփոխությամբ գրանցված կանոնադրությունը՝ հանգելով Վիգեն Ասլանյան Ավանեյանսի կողմից «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի 51 տոկոս բաժնեմասը ձեռք բերելու և այն ամուսինների ընդհանուր համատեղ սեփականությունը հանդիսանալու մասին սխալ հետևության:

Ավելին, Դատարան չի ներկայացվել ապացույց այն մասին, որ Վիգեն Ասլանյան Ավանեյանսի կողմից վճարում է կատարվել բաժնեմասի դիմաց, ինչպես նաև ապացույց այն մասին, որ «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի հետագա գործունեությանը «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ն մասնակից չի դարձվել, որոնցով կհիմնավորվեր, որ վաճառող ընկերության իրավունքներն իրականում դադարած են: Այսինքն՝ 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագիրը, պայմանավորված

դրանից ծագող իրավունքների պետական գրանցում չունենալու հանգամանքով, չի կարող հիմք հանդիսանալ բաժնեմասի նկատմամբ Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի սեփականության իրավունքը ծագած համարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.05.2017 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխաանի հիմնավորումները

Բողոք բերած անձի վկայակոչած 14.06.2010 թվականի համաձայնագիրը չի վերաբերում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի 1/2 մասի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքից հրաժարվելուն, քանի որ այն արդեն օրենքի ուժով պատկանել է Սուսաննա Խաչատրյանին: Սույն համաձայնագրով կողմերի կամքն ուղղված է եղել ամուսնական կապի հետևանքով ապագայում առաջանալիք կենցաղային բնույթի հարցերի կարգավորմանը, այլ ոչ թե այն բոլոր իրավունքներին, որոնք օրենքի ուժով արդեն իսկ ամուսիններից որևէ մեկի սեփականությունն են:

Համաձայնագրում վկայակոչվել են առանց իրավական կոնկրետության վերացական արտահայտություններ, ինչի ուժով այն չի կարող գնահատվել որպես սեփականության իրավունքից հրաժարում, քանի որ Սուսաննա Խաչատրյանն օրենքի ուժով արդեն իսկ վիճելի գույքի 1/2 բաժնի սեփականատեր է, այլ ոչ թե դրա նկատմամբ հավակնություն ունեցող անձ:

Ամուսինների գույքի ռեժիմը կարող էր սահմանվել ամուսնական պայմանագրով, իսկ սույն գործով վերացական համաձայնագիրը, որում ընդհանրապես նշում չկա համատեղ սեփականության ռեժիմը դադարեցնելու մասին, չի կարող դիտվել ամուսնական պայմանագիր:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության Ամուսնության պալատ տարածքային բաժնի 26.05.2006 թվականի թիվ ԱԱ 037499 ամուսնության վկայականի համաձայն՝ Վիզեն Ասլանյան Ավանեսյանսը և Սուսաննա Խաչատրյանն ամուսնացել են 26.05.2006 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

2) «Մասիսավան Բրենչ» ՍՊԸ-ի՝ որպես վաճառողի և Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի՝ որպես գնորդի միջև 23.12.2009 թվականին կնքված անշարժ գույքերի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Մասիսավան Բրենչ» ՍՊԸ-ն վաճառում է սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Վ. Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը, Երևանի Վ. Անտառային փողոցի 127/5 շենքի թիվ 15 օժանդակ տարածքը և Երևանի Վ. Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակը, իսկ գնորդը գնում է այդ անշարժ գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 35**):

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 26.12.2009 թվականին տրված թիվ 2562974 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Վերին Անտառային փողոցի 127/5 շենքի թիվ 15 օժանդակ տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Վիզեն Ասլանյան Ավանեսյանսին: Գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010065-16 մատյանի 00023 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 19-21**):

4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 25.12.2009 թվականին տրված թիվ 2562975 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է Վիգեն Ասլանյան Ավանեսյանսին: Գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-0065-16 մատյանի 00017 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 22-24**):

5) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 25.12.2009 թվականին տրված թիվ 2562976 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Վիգեն Ասլանյան Ավանեսյանսին: Գրանցված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010065-16 մատյանի 00018 համարի տակ (**հատոր 1-ին, գ.թ. 25-27**):

6) 28.12.1993 թվականին կնքված հիմնադիր պայմանագրի և 30.12.1993 թվականին հաստատված «Արարատ-Ասլան» համատեղ ձեռնարկության կանոնադրության համաձայն՝ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսին է պատկանում ընկերության կանոնադրական կապիտալի 4 տոկոս բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 19-49**):

7) «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի մասնակիցներ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյանի միջև 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագրի համաձայն՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ն Վիգեն Ասլանյանին է վաճառել «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ունեցած 51 տոկոս բաժնեմասը՝ 28.359.774 ՀՀ դրամ անվանական արժեքով (**հատոր 1-ին, գ.թ. 30**):

8) «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 22.11.2006 թվականի արձանագրության համաձայն՝ ժողովը միաձայն որոշել է «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ին իր դիմումի համաձայն հանել ընկերության մասնակիցների կազմից, օրենքով սահմանված կարգով նրա հետ կատարել վերջնահաշվարկ, ընկերության կանոնադրության մեջ կատարել նրա բաժնեմասի փոխանցման և ընկերությունից դուրս գալու հետ կապված փոփոխությունը (**հատոր 1-ին, գ.թ. 28-29**):

9) «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի՝ 27.04.2007 թվականի փոփոխությամբ գրանցված կանոնադրության համաձայն՝ «ՄԵՐԻԹԱՅՄ ՔՈՆՍԱԼԹՆՍԻ ԼԹԴ»-ն «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի 51 տոկոս բաժնեմասի սեփականատերն է, իսկ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը՝ 4 տոկոս բաժնեմասի սեփականատերը (**հատոր 1-ին, գ.թ. 9-18**):

10) Իրանի Իսլամական Հանրապետության Արդարադատության նախարարության ակտերի և կալվածների գրանցման պետական կազմակերպության կողմից 07.12.2010 թվականին տրված թիվ 090865 ամուսնալուծության վկայականի համաձայն՝ ապահարզան տվող Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսը (Բաջատրյան) և ապահարզան տրվող Վիգեն Ասլանյան Ավանեսյանսն ամուսնալուծվել են: Ամուսնալուծության պայմանների և պայմանավորվածությունների համաձայն՝ օժիտի կամ ծախսերի հոգալու (սաֆադե) առումով հավակնություններ չկան (**հատոր 3-րդ, գ.թ. 11-13**):

11) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-

թյան դատարանի «Այլ պետության դատարանի որոշումը ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունները քննության առնելու մասին» 01.04.2016 թվականի որոշման համաձայն՝ ՀՀ տարածքում ճանաչվել և թույլատրվել է կատարել Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի ընտանեկան դատարանի 273 բաժանմունքի 20.10.2010 թվականի 0951 համարով վճիռը: Որոշմամբ հղում է կատարվել Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության վճռին, համաձայն որի. ««Սեյեդե Ֆաթեմե Հոսեյնիի դատապաշտպանությամբ տիկին Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսի (Խաչատրյան) հայցն ընդդեմ Հովիկ Բեհբուի դատապաշտպանությամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի, որի հիմքն է 05.03.1383 (20.05.2004 թվական) թվականի համար 3 ամուսնական վկայականը, որը տրվել է Հայաստանի հյուպատոսարանից, հենվելով քաղաքացիական օրենքի համար 1133 հոդվածին՝ դատարանը արձակում է համատեղ կյանքի անհնարիության հետևյալ վճիռը և հայտարարում է, որ կինն օժիտ չունի, բայց դատարանից դուրս կայացած համաձայնությամբ տղամարդը կնոջն է վճարել (հատկացրել) ապրուստի համար անհրաժեշտ և ամուսնությունից բխող իրավունքների գումարը: Օժիտի կամ ծախսերի հոգալու (նաֆաղե) առումով հավակնություններ չկան, համատեղ կյանքից երեխա չունեն: Բաժանման կրոնական կարգը կատարված է: Թեհրանի դատական իշխանություն, անշարժ գույքի և փաստաթղթերի գրանցման կազմակերպության 14.06.2010 թվականի թիվ 139818 փաստաթղթի (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) համաձայն՝ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսը (Խաչատրյան) և Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը, ներկա գտնվելով Թեհրանի համար 19 պաշտոնական նոտարական գրասենյակում և ներկայանալով համախորհուրդ, պայմանավորվել են հետևյալի մասին. «...3. Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը համաձայնեց երկու և կես տարվա ժամկետով ամսական 10.000.000 դրամ վճարել կնոջը՝ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսին (Խաչատրյան) Հայաստանում, Անգլիայում և Իրանում գրանցված քրիստոնեական պաշտոնական ամուսնության կապի արդյունքում գոյացած պարտավորությունների և ընթացիկ ծախսերի համար, և տիկինը, ընդունելով վերոնշյալ պայմանները՝ ստորագրում է սույն փաստաթուղթը՝ հայտարարելով, որ իր բոլոր նյութական ստանալիքները, որոնք բխում են ամուսնական կապի արդյունքում ունեցած բոլոր տեսակի հավակնություններից, հայտարարում է, որ ապագայում ևս իր կողմից որևէ կարգի հավակնություն չի հնչելու, պարոնն իր հերթին, որպես գումարի վճարման երաշխիք՝ ստորագրեց համապատասխան չեկերը և սույն համաձայնագրի ստորագրումից հետո հանձնեց տիկնոջը...»»: Նշված որոշումը ստացել է օրինական ուժ (**հատոր 6-րդ, գ.թ. 69-70**):

12) Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության անշարժ գույքի և փաստաթղթերի գրանցման կազմակերպությունում 14.06.2010 թվականին Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսի (Խաչատրյան) և Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի միջև կնքված համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ սույն համաձայնագրի կետերի կատարման ուղղությամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսն ամուսնությունից բխող իր բոլոր նյութական և ֆինանսական պարտավորությունները կատարել է և ամբողջությամբ հաշվեփակ է արված, և նա այսուհետ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսի (Խաչատրյան) նյութական և ֆինանսական պահանջները բավարարելու ոչ մի պարտավորություն չունի (**հատոր 3-րդ, գ.թ. 19-21**):

13) Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը 15.07.2010-14.12.2012 թվականներն ընկած ժամանակահատվածում Սուսաննա Խաչատրյանին է փոխանցել ամսական 10.000.000 դրամ (**հատոր 4-րդ, գ.թ. 12-42**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքում ամուսինների համաձայնությամբ ամուսիններից մեկի իրավունքը դադարեցնելու հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի օտարման պայմանագրից բխող իրավունքների ծագման վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

3) ստորադաս դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 176-րդ հոդվածների, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1. *արդյո՞ք ամուսինների միջև կնքված համաձայնությունը, որի առարկան հսկայի է, կարող է հիմք հանդիսանալ ընդհանուր համարել սեփականության իրավունքում ամուսիններից մեկի իրավունքի դադարման համար,*

2. *արդյո՞ք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի օտարման պայմանագիրը կարող է հիմք հանդիսանալ բաժնեմասի նկատմամբ իրավունքի ծագման համար, եթե պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:*

1. Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով անհիմն է հեղույթ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն (...) ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական պայմանագի-

ըը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես միջև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: (...) Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: (...) Ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ միջև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանվում կամ նրանցից մեկի բաժինն առանձնացվում է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը նախապես որոշելուց հետո: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելիս և դրանից բաժին առանձնացնելիս համատեղ սեփականության մասնակիցների բաժինները համարվում են հավասար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ մասնակիցների համաձայնությամբ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու և դրանից բաժին առանձնացնելու հիմքերը և կարգը սահմանվում են նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում և օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր, թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը՝ բացի ամուսնության ընթացքում մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքի (*լրեն, Ռաֆայել Աբազյանը և Անժիկ*

Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենտրոն» նուրարական տարածքի նուրարի թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ ամուսինների ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է բաժանվել ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծվելուց հետո (*Կեն, Սամվել Մելիքյանն ընդդեմ Առլեն Ավաքյանի թիվ ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը *Սյունիսյալ Հովակիմյանն ընդդեմ Արտաշես Դավթյանի և մյուսների* գործով անդրադարձել է ամուսնական պայմանագրի էությանը և արձանագրել, որ ամուսնական պայմանագիրը գործարք է, որն ունի առանձնահատուկ սուբյեկտային կազմ և կարգավորման առարկա: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել բացառապես ամուսնացող կամ արդեն իսկ ամուսնացած անձանց միջև՝ համապատասխանաբար ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ամուսնական պայմանագրի կարգավորման առարկան ամուսինների գույքային դրությունն է: Մասնավորապես, կնքելով նման պայմանագիր, ամուսինները կարող են փոփոխել համատեղ սեփականության օրենքով սահմանված ռեժիմը՝ նախատեսելով ամուսնության ընթացքում ձեռք բերվող գույքի նկատմամբ ամուսինների բաժնային կամ յուրաքանչյուրի անհատական սեփականության իրավունքը: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նաև որոշել միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտների ստեղծմանը մասնակցելու, նրանցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսերը հոգալու կարգը:

Վերը շարադրվածը վկայում է ամուսնական պայմանագրի կարգավորիչ գործառնության մասին: Ամուսնական պայմանագիրը, սակայն, իրականացնում է ոչ միայն կարգավորիչ, այլև՝ ապահովող գործառնություն: Ամուսնական պայմանագրի ապահովող գործառնությունը նախևառաջ արտահայտվում է ամուսիններից յուրաքանչյուրի գույքային ինքնուրույնության երաշխավորմամբ, որը հատկապես կարևորվում է քաղաքացիական շրջանառությանը մասնակցելիս, ինչպես նաև ամուսնության լուծման դեպքում (*Կեն, թիվ ԵԿԴ/1791/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ամուսինների համատեղ սեփականության բաժանման հնարավորությանը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամուսիններն իրենց համատեղ սեփականություն հանդիսացող գույքի կարգավիճակը կարող են փոփոխել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- 1) ամուսնական պայմանագիր կնքելով,
- 2) ամուսնալուծության ընթացքում ընդհանուր գույքի բաժանման մասին համաձայնություն կնքելով և այն դատարանին ներկայացնելով,
- 3) որպես ընդհանուր սեփականության մասնակիցներ՝ գույքը բաժանելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 199-րդ հոդվածների հիմքով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առավել մանրամասնեցնել 1-ին և 2-րդ հիմքերը՝ նկատի ունենալով, որ 3-րդ հիմքի դեպքում ամուսիններ լինելու հանգամանքը որևէ առանձնահատկություն չի առաջացնում ընդհանուր կանոնին համապատասխան գույքը բաժանելու համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ամուսնական պայմանագրով ընդհանուր գույքի կարգավիճակը որոշվում է արտադատական կարգով, այսինքն՝ ամուսինների միջև դատական վեճից անկախ: Մինչդեռ ամուսնալուծության ընթացքում ընդհանուր գույքի բաժանման մասին համաձայնություն կնքվում և հաստատվում է դատական կարգով: Տվյալ դեպքում դատարանը հաստատում է այդ համաձայնությունը, և ամուսինների ընդհանուր գույքը բաժանվում է արդեն դատարանի վճռի հիման վրա: Ամուսնական պայմանագրի դեպքում ամուսինները կնքում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պայմաններին համապատասխանող գործարք, որը ենթարկվում է նոտարական վավերացման: Ամուսնական պայմանագրի կարգավորման առարկան ավելի լայն է. այն կարող է նախատեսել ոչ միայն ընդհանուր գույքը բաժանելուն, այլ նաև գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած նորմեր:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ ինչպես ամուսնական պայմանագրի, այնպես էլ ամուսնալուծվելիս կնքված համաձայնության առարկան պետք է լինի հստակ՝ նկատի ունենալով, որ երկուսն էլ գործարք են՝ ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն, ուստի կնքված համարվելու համար պետք է ունենան հստակ առարկա: Այլ կերպ ասած, եթե ամուսնալուծվելիս համաձայնությամբ ամուսինները որոշում են ընդհանուր գույքը բաժանել, ապա հստակ պետք է լինեն գույքը և ամուսինների բաժինները, կամ եթե կնքվում է ամուսնական պայմանագիր, ապա հստակ պետք է լինի ամուսինների կամքը, մասնավորապես՝ սահմանելու համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականությունը՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Ընդ որում, առարկայի մասին դրույթը պարզելիս ամուսնական պայմանագիրը և ամուսնալուծվելիս կնքվող համաձայնությունը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Հետևաբար, եթե ամուսինների միջև կնքված համաձայնությունը միանշանակորեն հնարավորություն չի տալիս պարզել վերջինիս առարկան, այն չի կարող հիմք հանդիսանալ ամուսիններից մեկի սեփականության իրավունքի դադարման համար:

Մույն գործի փաստերի համաձայն՝ Վիզեն Ասլանյան Ավանեսյանսը և Մուսաննա Խաչատրյանը ամուսնացել են 26.05.2006 թվականին, իսկ ամուսնալուծվել՝ 07.12.2010 թվականին: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում Վիզեն Ասլանյան Ավանեսյանսը ձեռք է բերել Երևանի Վ. Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը, նույն շենքի թիվ 15 օժանդակ տարածքը և թիվ 1 ավտոտնակը: Կողմերն ամուսնալուծվել են Իրանի Իսլամական Հանրապետությունում: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Այլ պետության դատարանի որոշումը ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունները քննության առնելու մասին» 01.04.2016 թվականի որոշման համաձայն՝ ՀՀ տարածքում ճանաչվել և թույլատրվել է կատարել Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի ընտանեկան դատարանի 273 բաժանմունքի 20.10.2010 թվականի 0951 համարով վճիռը: Որոշմամբ հղում է կատարվել Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության վճռին, համաձայն որի. «...դատարանը արձակում է համատեղ կյանքի անհնարիության հետևյալ վճիռը և հայտարարում է, որ կինն օժիտ չունի, բայց դատարանից դուրս կայացած համաձայնությամբ տղամարդը կնոջն է վճարել (հատկացրել) ապրուստի համար անհրաժեշտ և ամուսնությունից բխող իրավունքների գումարը: Օժիտի կամ ծախսերի հոգալու (սաֆադել) առումով հավակնություններ չկան, համատեղ կյանքից երեխա չունեն: Բաժանման կրոնական կարգը կա-

տարված է: Թեհրանի դատական իշխանություն, անշարժ գույքի և փաստաթղթերի գրանցման կազմակերպության 14.06.2010 թվականի թիվ 139818 փաստաթղթի (այսուհետ նաև Համաձայնագիր) համաձայն՝ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանը (Խաչատրյան) և Վիգեն Ասլանյան Ավանեսյանը, ներկա գտնվելով Թեհրանի համար 19 պաշտոնական նոտարական գրասենյակում և ներկայանալով համախորհուրդ, պայմանավորվել են հետևյալի մասին. «...3. Վիգեն Ասլանյան Ավանեսյանը համաձայնեց երկու և կես տարվա ժամկետով ամսական 10.000.000 դիալ վճարել կնոջը՝ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանին (Խաչատրյան) Հայաստանում, Անգլիայում և Իրանում գրանցված քրիստոնեական պաշտոնական ամուսնության կապի արդյունքում գոյացած պարտավորությունների և ընթացիկ ծախսերի համար և տիկինը ընդունելով վերոնշյալ պայմանները՝ ստորագրում է սույն փաստաթուղթը՝ հայտարարելով, որ **իր բոլոր նյութական ստանալիքները, որոնք բխում են ամուսնական կապի արդյունքում ունեցած բոլոր տեսակի հավակնություններից, հայտարարում է, որ ապագայում ևս իր կողմից որևէ կարգի հավակնություն չի հնչելու**, պարոնն իր հերթին, որպես գումարի վճարման երաշխիք՝ ստորագրեց համապատասխան չեկերը և սույն համաձայնագրի ստորագրումից հետո հանձնեց տիկնոջը...» »: Նշված որոշումը ստացել է օրինական ուժ: Իրանի Իսլամական Հանրապետության դատական իշխանության անշարժ գույքի և փաստաթղթերի գրանցման կազմակերպությունում 14.06.2010 թվականին Սուսաննա Ասլանյան Ավանեսյանի (Խաչատրյան) և Վիգեն Ասլանյան Ավանեսյանի միջև կնքված համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ նույն համաձայնագրի կետերի կատարման ուղղությամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանն ամուսնությունից բխող իր բոլոր նյութական և ֆինանսական պարտավորությունները կատարել է և ամբողջությամբ հաշվեկալ է արված, և նա այսուհետ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանի (Խաչատրյան) նյութական և ֆինանսական պահանջները բավարարելու ոչ մի պարտավորություն չունի:

Դատարանը, նախնառաջ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածով, հիմք է ընդունել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի որոշմամբ հաստատված Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի ընտանեկան դատարանի վճռի բովանդակությունը և գտել, որ «ամուսնական կապի արդյունքում գոյացած պարտականություններ» հասկացությունն անորոշ է, որպիսի հանգամանքը խոչընդոտում է նշված եզրույթի բովանդակության վերաբերյալ որևէ հստակ եզրահանգման գալու: Անդրադառնալով «նյութական ստանալիքները, որոնք բխում են ամուսնական կապի արդյունքում ունեցած բոլոր տեսակի հավակնություններից» եզրույթին՝ Դատարանն արձանագրել է, որ «ստանալիքներ», «հավակնություններ» եզրույթները ենթադրում են, որ դրանք պետք է առաջանան ապագայում, այլ ոչ արդեն իսկ ծագած իրավունքների նկատմամբ, ինչպես նաև նյութական ստանալիքներ կամ հավակնություններ կարող է լինել միայն այլ անձի գույքի նկատմամբ: Այսինքն՝ Սուսաննա Խաչատրյանը չէր կարող որևէ «ստանալիք» կամ «հավակնություն ունենալ» արդեն իսկ օրենքի ուժով իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ: Ուստի Դատարանը եզրահանգել է, որ Համաձայնագրով կողմերը համաձայնության չեն եկել ամուսնության ընթացքում համատեղ ձեռք բերված գույքը բաժանելու մասին:

Վերաքննիչ դատարանը, վճիռն օրինական ուժի մեջ թողնելով և հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունները, հավելել է, որ Սուսաննա Խաչատրյանը Վիգեն Ասլանյան Ավանեսյանի հետ հավասարապես դարձել է ձեռք բերված գույքի նկատմամբ

սեփականատեր, և եթե կողմերը շարունակեին իրենց ամուսնական հարաբերությունները, մինևույն է, Սուսաննա Խաչատրյանը նշված գույքի սեփականատեր է հանդիսանում: Ուստի Վերաքննիչ դատարանը փաստել է, որ «նյութական ստանալիք» և «հավակնություններ» հասկացությունները վերաբերում են միայն հետագայում, ապագայում գույք կամ գումար ստանալու ուղղությամբ որոշակի գործողություններ կատարելուն, հետևաբար անձն իր ունեցած, իր սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ չի կարող հավակնություններ ունենալ:

Վերը նշված իրավական դիրքորոշման համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը Երևանի Վ. Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը, նույն շենքի թիվ 15 օժանդակ տարածքը և թիվ 1 ավտոտնակը ձեռք է բերել Սուսաննա Խաչատրյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, հետևաբար նշված անշարժ գույքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով ընդհանուր համատեղ սեփականություն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հիմնական վիճելի հարցը համաձայնագրի առարկան է, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք ամուսնու հետ ամուսնալուծությունից առաջ համաձայնագիր կնքելով՝ Սուսաննա Խաչատրյանը հրաժարվել է ամուսնու հետ համատեղ սեփականությունում իր ունեցած իրավունքից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործում առկա է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի «Այլ պետության դատարանի որոշումը ճանաչելու և հարկադիր կատարումը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունները քննության առնելու մասին» 01.04.2016 թվականի որոշումը, որով ճանաչվել է Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի ընտանեկան դատարանի 273 բաժանմունքի 20.10.2010 թվականի 0951 համարով վճիռը, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի հիմքով նախևառաջ անհրաժեշտ է հիմք ընդունել վերոնշյալ որոշմամբ մեջբերված համաձայնագրի տեքստը: Այսպես, վերոնշյալ վճռի համաձայն՝ «դատարանից դուրս կայացած համաձայնությամբ տղամարդը կնոջն է վճարել (հատկացրել) **ապրուստի համար անհրաժեշտ** և ամուսնությունից բխող իրավունքների գումարը: Օժիտի կամ **ծախսերի հոգալու** (նաֆաղե) առումով հավակնություններ չկան», «Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը համաձայնեց երկու և կես տարվա ժամկետով ամսական 10.000.000 դիալ վճարել կնոջը՝ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսին (Խաչատրյան), ... ամուսնության կապի արդյունքում գոյացած **պարտավորությունների և ընթացիկ ծախսերի համար**», Սուսաննա Խաչատրյանը հայտարարել է, որ «**իր բոլոր նյութական ստանալիքները, որոնք բխում են ամուսնական կապի արդյունքում ունեցած բոլոր տեսակի հավակնություններից**, հայտարարում է, որ ապագայում ևս իր կողմից որևէ կարգի **հավակնություն չի հնչելու**»:

Բացի այդ, գործում առկա են ամուսինների միջև կնքված համաձայնագրի թվով 3 թարգմանություններ, որոնցից Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում համաձայնագրի այն թարգմանությունը, որը վկայակոչվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2016 թվականի որոշմամբ: Նշված համաձայնագրի 6-րդ կետի համաձայն՝ նույն համաձայնագրի կետերի կատարման ուղղությամբ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսն ամուսնությունից բխող **իր բոլոր նյութական և ֆինան-**

սակն Կարտավորությունները կատարել է և ամբողջությամբ հաշվեփակ է արված, և նա այսուհետ Սուսաննա Ասլանյան Ավանեսյանսի (Խաչատրյան) **նյութական և ֆինանսական պահանջները բավարարելու** ոչ մի Կարտավորություն չունի:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում համաձայնագրով պայմանավորվածություն ձեռք բերած կողմերի իրական կամքը պարզելու նպատակով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով սահմանված՝ պայմանագրի մեկնաբանման կանոնները: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին, նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը՝ կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*յո՛ւս*, «Կարապ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ՇԴՄ/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածին համապատասխան մեկնաբանելով համաձայնագիրը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերջինիս առարկան պետք է լիներ հստակ, որպեսզի հիմք ընդունվեր ամուսինների համատեղ սեփականության ռեժիմը փոփոխելու համար: Մինչդեռ համաձայնագիրը չի պարունակում հստակ կարգավորում այն մասին, որ Սուսաննա Խաչատրյանը հրաժարվում է **կոնկրետ անշարժ գույքի** նկատմամբ **օրենքի ուժով** իրեն պատկանող իրավունքից: Ընդ որում, համաձայնագրի բովանդակությունից չի կարելի նաև եզրակացնել, որ Սուսաննա Խաչատրյանը հրաժարվում է **ցանկացած գույքի նկատմամբ իր ունեցած իրավունքից**: Վճռաբեկ դատարանը համաձայնագրի վկայակցված դրույթների մեկնաբանության արդյունքում փաստում է, որ համաձայնագիրը վերաբերել է ամուսինների միջև ֆինանսական Կարտավորություններին՝ կապված ամուսնու կողմից կնոջ ծախսերը հոգալու հետ, ինչի մասին է վկայում նաև այն, որ համաձայնագրի կնքումից հետո՝ 15.07.2010-14.12.2012 թվականներն ընկած ժամանակահատվածում, Վիգեն Ասլանյան Ավանեսյանը Սուսաննա Խաչատրյանին է փոխանցել ամսական 10.000.000 ուիալ: Ինչ վերաբերում է «նյութական ստանալիքներ», «բոլոր տեսակի հավակնություններ» արտահայտություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատա-

րաններն իրավաչափորեն եզրահանգել են, որ անձը չի կարող սպասելիք, հավակնություն ունենալ արդեն իսկ իրեն պատկանող գույքի նկատմամբ: Հետևաբար համաձայնագրի առարկան հստակ և որոշակի չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կողմերի միջև չի կնքվել ամուսնական պայմանագիր կամ այլ համաձայնություն՝ ընդհանուր համատեղ սեփականության ռեժիմը փոփոխելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի և Սուսաննա Խաչատրյանի համատեղ ամուսնության ընթացքում ձեռք է բերվել Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին բնակարանը, Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 1-ին ավտոտնակը, Երևանի Վերին Անտառային փողոցի թիվ 127/5 շենքի 15-րդ օժանդակ տարածքը, որոնց 1/2-ի նկատմամբ ստորադաս դատարաններն իրավացիորեն ճանաչել են Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը՝ որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք: Ուստի չի հիմնավորվել այս պահանջի մասով դատական սխալի առկայությունը:

Վերոնշյալ պատճառաբանություններով հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

2. Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հեղինակ պարճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները **ծագում են դրանց գրանցման պահից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը **ծագում է դրա գրանցման պահից:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի հիմնադիրները կնքում են պայմանագիր, որով որոշում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և նրա կառավարման իրենց մասնակցության պայմանները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի հաստատած կանոնադրությունն է:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընկերության հիմնադիր փաստաթուղթ է հանդիսանում նրա հիմնադիրների (մասնակիցների) կողմից հաստատված կանոնադրությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ (...) ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի՝

ա) ընկերության անվանումը.

բ) ընկերության գտնվելու վայրը.

գ) ընկերության կանոնադրական կապիտալի չափը, մասնակիցների բաժնեմասերի չափերը.

դ) տեղեկություններ ընկերության մասնակիցների մասին (...):

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընկերության կանոնադրությունում փոփոխությունները կատարվում են ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության կանոնադրությունում

կատարված փոփոխությունները երրորդ անձանց համար **իրավաբանական ուժ են ձեռք բերում նրանց պետական գրանցման պահից**, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին տեղյակ պահելուց հետո:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ **անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում նրա՝ որպես այդպիսին գրանցվելու պահից:**

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ընկերության մասնակիցներն իրավունք ունեն, ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում, ի թիվս այլ տեղեկությունների, գրառվում են մասնակիցների կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ, մասնակիցների՝ իրավաբանական անձի մասնակից դառնալու, մասնակցության չափի փոփոխության և մասնակցությունը դադարեցնելու տարին, ամիսը, ամսաթիվը:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընկերության բաժնեմասի կամ դրա մասի օտարման դեպքում պետական գրանցում կատարելու համար շահագրգիռ անձը ներկայացնում է՝

1) դիմում, որը պետք է պարունակի նոր մասնակիցների մասին տեղեկություններ՝ անձնագրային տվյալները՝ ֆիզիկական անձի դեպքում, կամ գրանցման համարը՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի դեպքում.

2) բաժնեմասի կամ դրա մասի օտարման հիմքը (պայմանագիր, դատարանի վճիռ և այլն).

3) ընկերության տնօրենի գրավոր հավաստումը ընկերության մասնակիցների նախապատվության իրավունքի (դրա առկայության դեպքում) իրականացման՝ օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգը պահպանելու մասին: Եթե ընկերության մասնակցի բաժնեմասը փոխանցվում է նոտարական կարգով վավերացված պայմանագրով, ապա սույն մասում նշված հավաստումը չի ներկայացվում.

4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ.

5) եթե բաժնեմասի սեփականատեր պետք է դառնա օտարերկրյա իրավաբանական անձ, ապա, ի հավելումն նույն մասի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերի՝ նաև քաղվածք տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ հումապատասխան քաղվածքները)՝ վավերացված և հայերեն թարգմանված.

6) եթե բաժնեմասի սեփականատեր պետք է դառնա օտարերկրյա ֆիզիկական անձ, ապա պետական գրանցման համար, նույն մասի 1-ին կետով նախատեսված փաստաթղթ-

թերից բացի՝ տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասն օտարել այլ մասնակցի կամ երրորդ անձի, սակայն բաժնեմասը ձեռք բերողի համար մասնակցության իրավունքը ծագած կհամարվի պետական գրանցման պահից: Ընդ որում, մասնակցի վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ բաժնեմասի չափը պետք է գրանցվի ինչպես իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից ընկերության մասնակիցների գրանցամատյանում, այնպես էլ փոփոխությունը պետք է արտացոլվի ընկերության կանոնադրությունում: Ընդ որում, օրենսդրությամբ սահմանվում են այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են բաժնեմասի օտարումից ծագող փոփոխությունների գրանցման համար: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման կարգավորումն ինքնանպատակ չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերոնշյալ հոդվածները, արձանագրում է, որ կանոնադրությունն ընկերության իրավական կարգավիճակը սահմանող կարևորագույն փաստաթուղթ է: Կանոնադրությունը կարգավորում է հիմնադիրների (մասնակիցների) ներքին փոփոխաբերությունները, դրանով սահմանվում են, մասնավորապես, ընկերության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակը և առարկան, կառավարման և վերահսկողության մարմինները, շահույթի բաշխման կարգը և այլն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընկերության, ընկերության մասնակիցների, ընկերության կանոնադրության (նաև փոփոխությունների) գրանցումն ինքնանպատակ չէ: Բացի այն, որ պետական գրանցումը հնարավորություն է տալիս միասնական ամբողջական տեղեկատվություն հավաքել պետության տարածքում գործող իրավաբանական անձանց մասին, այն նաև հնարավորություն է տալիս հանրությանը՝ ամբողջական տեղեկություններ ստանալ իրավաբանական անձանց մասին: Դա հատկապես կարևորվում է առևտրային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, այդ թվում՝ ընկերությունների համար, քանի որ վերջիններիս ապագա հնարավոր կոնտրագենտները հնարավորություն են ունենում տեղեկություններ ձեռք բերել իրենց ապագա գործընկերների մասին՝ բացահայտելով վերջիններիս գործունեության նպատակները, կառավարման մարմինների արդյունավետությունը, մասնակիցների շրջանակը, ինչը ոչ պակաս կարևոր է, քանի որ մասնակիցների շրջանակով պայմանավորված՝ ապագա կոնտրագենտները կարող են հրաժարվել պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել տվյալ իրավաբանական անձի հետ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ անկախ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կամ հնարավոր մասնակիցների ներքին հարաբերություններից, ներքին պայմանավորվածությունից՝ բաժնեմասը ձեռք բերող անձի իրավունքը ծագում է միայն ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու, ընկերության կանոնադրությունում փոփոխություն կատարելու և այն գրանցելու պահից:

Սույն գործով «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի մասնակիցներ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյան Ավանեյանսի միջև 17.11.2006 թվականին բաժնեմասի օտարման պայմանագրի համաձայն՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ն Վիգեն Ասլանյան Ավանեյանսին է վաճառել «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ունեցած 51 տոկոս բաժնեմասը՝ 28.359.774 ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընդ որում, ընկերության

մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 22.11.2006 թվականի արձանագրության համաձայն՝ ժողովը միաձայն որոշել է «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ին իր դիմումի համաձայն հանել ընկերության մասնակիցների կազմից, ընկերության կանոնադրության մեջ կատարել նրա բաժնեմասի փոխանցման և ընկերությունից դուրս գալու հետ կապված փոփոխությունը: «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի՝ 27.04.2007 թվականի փոփոխությամբ գրանցված կանոնադրության համաձայն՝ «ՄԵՐԻԹԱՅՄ ՔՈՆՍԱԼԹՆՄԻ ԼԹԴ»-ն «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի 51 տոկոս բաժնեմասի սեփականատերն է, իսկ Վիգեն Ասլանյան Ավանեսյանսը՝ 4 տոկոսի բաժնեմասի սեփականատերը:

Դատարանը պատճառաբանել է, որ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի միջև 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման չներկայացնելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ նույն պայմանագրով ձեռք բերված 51 տոկոս բաժնեմասերի 1/2-ի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու համար և գտել է, որ սույն պայմանագրի կնքման պահից արդեն իսկ ծագել է Սուսաննա Խաչատրյանի համատեղ սեփականության իրավունքը ձեռք բերված բաժնեմասերի 51 տոկոսի նկատմամբ, քանի որ հակառակ դեպքում կխախտվի անձի սեփականության իրավունքի ճանաչման սահմանադրական իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի վերաքննիչ բողոքը մերժելով և արդյունքում Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, պատճառաբանել է, որ 17.11.2006 թվականին բաժնեմասի օտարման պայմանագիրը կնքվել է օրենքի պահանջներին համապատասխան, այն է՝ վաճառողը գնորդին է փոխանցել իր ունեցած 51 տոկոս բաժնեմասը, իսկ գնորդը ընդունել է այդ բաժնեմասը և դրա դիմաց վճարել 28.359.774 ՀՀ դրամ: «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի 27.04.2007 թվականի փոփոխությամբ գրանցված կանոնադրության մեջ նշված պայմանագրի հիման վրա պատասխանող Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի անվամբ փոփոխված բաժնեմասի մասին գրանցում չկատարելու հանգամանքը պետք է մեկնաբանել սուբյեկտիվ գործոններով, ինչի արդյունքում չպետք է խախտվի Սուսաննա Խաչատրյանի գույքային իրավունքները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ է, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք

է կիրառվի հենց այդ նորմը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել բազմակողմանի հետազոտության մասին (*յրե՛ս, Ալվարո Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների և մյուսների թիվ ԿԴ03/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*յրեն, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԿ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*յրեն, Սվետլանա Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԿ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ գործում առկա չէ ապացույց այն մասին, որ իրականում տեղի է ունեցել բաժնեմասի օտարում, որի արդյունքում 51 տոկոս բաժնեմասի նկատմամբ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի իրավունքը կդադարեր և կծագեր Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի իրավունքը: Այսինքն՝ առկա չէ ապացույց այն մասին, որ ամուսինների համատեղ կյանքի ընթացքում 17.11.2006 թվականին բաժնեմասի օտարման պայմանագրից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում, որը պարտադիր պայման է սեփականության իրավունքը ծագելու համար: Հետևաբար սույն պահանջի մասով առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու համար, թե արդյոք ամուսինների համատեղ կյանքի ընթացքում (այդ թվում՝ 27.04.2007 թվականից հետո) 17.11.2006 թվականի պայմանագրից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, թե՛ ոչ, որից հետո միայն կարող է քննարկվել Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքի ճանաչման հարցը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիզեն Ասլանյանի միջև 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագրով Վիզեն Ասլանյան Ավանեսյանսի կողմից «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ձեռք բերված 51 տոկոս բաժնեմասի 1/2 բաժնի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասով, բեկանելու և գործն այդ մասով նոր քննության ուղարկելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանում և գործը նոր քննության է ուղարկում միայն «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն

ՄՊԸ-ի կանոնադրական կապիտալում ձեռք բերված 51 տոկոս բաժնեմասի 1/2 բաժնի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով՝ նկատի ունենալով, որ 4 տոկոս բաժնեմասի մասով Սուսաննա Խաչատրյանի հայցը Դատարանի վճռով մերժվել է և այդ մասով բողոքարկում չի իրականացվել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ «ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 12.12.2017 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի հիմքով 25.01.2018 թվականից Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վիգեն Ավանյան Ավանեսյանսը վճռաբեկ բողոքի համար վճարել է 220.000 ՀՀ դրամի չափով պետական տուրք: Տվյալ դեպքում սույն գործով քննության առարկա է հանդիսանում տասնմեկ ոչ գույքային պահանջ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն՝ մեկ ոչ գույքային պահանջի մասով, և այդ մասով գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին այդ մասով հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում: Ինչ վերաբերում է մյուս ոչ գույքային պահանջներին, ապա նկատի ունենալով, որ այդ պահանջները բավարարելու մասով ստորադաս դատարանների դատական ակտերը թողնվում են օրինական ուժի մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցն այդ պահանջների մասով պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.05.2017 թվականի որոշման՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վար-

չական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.02.2017 Վճիռը՝ «Մերի թայմ կոնսալթի» ՍՊԸ-ի և Վիգեն Ասլանյանի միջև 17.11.2006 թվականին կնքված բաժնեմասի օտարման պայմանագրով Վիգեն Ասլանյան Ավանեսյանսի կողմից «Արարատ-Ասլան» հայ-անգլիական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ձեռք բերված 51 տոկոս բաժնեմասի 1/2 բաժնի նկատմամբ Սուսաննա Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Բեկանված մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/3614/02/15
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/3614/02/15

Նախագահող դատավոր՝

Տ. Նազարյան

Դատավորներ՝

Ա. Պետրոսյան

Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝
Ընկերություն) ներկայացուցիչ Ռուստամ Բադալյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քա-
ղաքացիական դատարանի 26.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության
ընդդեմ Գազիկ Հովհաննիսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Գազիկ Հովհաննիսյանից բռնագան-
ձել 3.578.150 ՀՀ դրամ և այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ
հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 25.09.2015 թվականից
մինչև վճռի կատարման օրը:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (դատավոր՝ Ա. Փիլոսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.08.2016 թվականի վճռով
հայցը բավարարվել է: Դատարանը վճռել է. «Գազիկ Հովհաննիսյանից հոգուտ Ընկերու-
թյան բռնագանձել 3.578.150 ՀՀ դրամ՝ որպես աշխատողի կողմից պատճառված վնասի հա-
տուցում: Գազիկ Հովհաննիսյանից հոգուտ Ընկերության բռնագանձել 72.000 ՀՀ դրամ՝ որ-
պես նախապես վճարված պետական տուրքի գումար: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառմամբ՝ սկսած 25.09.2015 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահին ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների պարտքի գումարի՝ 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկել և Գազիկ Հովհաննիսյանից հոգուտ Ընկերության բռնագանձել տոկոսներ, իսկ հոգուտ պետական բյուջեի բռնագանձել հաշվարկվող տոկոսների երկու տոկոսը՝ որպես պետական տուրքի գումար»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.12.2016 թվականի որոշմամբ Գազիկ Հովհաննիսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.08.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գազիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ հայցվորը չի ապացուցել պատասխանողի դրսևորած հակաիրավական վարքագիծը՝ չհիմնավորելով հայցվորի կողմից պատասխանողին 3.578.150 ՀՀ դրամի չափով գնում կատարելու մասին հանձնարարություն տալու փաստը, անտեսել է, որ գործում առկա տեղեկանքներով հիմնավորվում է պատասխանողին փոխանցված գումարների չափը և ժամանակագրությունը, փոխանցման բանկային անդորրագրերի վրա նշված է փոխանցման նպատակը՝ առհաշիվ: Այսինքն՝ հայցվորի դրամական միջոցները փոխանցվել են պատասխանողին առհաշիվ՝ հայցվորի կարիքների համար որոշ գործողություններ կատարելու համար: Բացի այդ, Ընկերությունը ծանուցում է տվել պատասխանողին դրամական գումարները վերադարձնելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ պատասխանողը ոչ միայն չի հերքել 3.578.150 ՀՀ դրամի չվերադարձման փաստը, այլ նաև ընդունել է խախտման փաստը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վնասի հատուցման պայմաններից հակաիրավական վարքագծի դրսևորման ևս մեկ հիմք է վկայակոչվել, այն է՝ պատասխանողը բարեխիղճ չի վերաբերվել Ընկերության գույքին:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ հայցվորի կողմից չի ներկայացվել ապացույց այն մասին, որ գործատուն աշխատողին տվել է հանձնարարություն գնումներ կատարելու վերաբերյալ, անտեսել է, որ աշխատանքային պայմանագրի համաձայն՝ աշխատողը պարտավորվել է կատարել իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան աշխատանքային պարտականություններ, կատարել ղեկավարի ընթացիկ հանձնարարությունները: Բացի այդ, պատասխանողի կողմից 2011-2015 թվականների ընթացքում որոշակի պարբերականությամբ ներկայացվել են հաշվետվություններ առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ, Ընկերության 24.09.2015 թվականի ծանուցման և 30.09.2015 թվականի գրության մեջ շեշտվել է, որ 3.578.150 ՀՀ դրամը փոխանցվել է գնումներ կատարելու համար, իսկ պատասխանողն այս հանգամանքը չի հերքել: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել գործով

ձեռքբերված ապացույցները, հաշվի չի առել գործատուի կողմից աշխատողին հանձնարարություն տալու առանձնահատկությունները՝ հանգեցնել սխալ եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.08.2016 թվականի վճռին:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Հայցվորի և պատասխանողի միջև կնքված աշխատանքային պայմանագրում առկա չէ որևէ դրույթ այն մասին, որ պատասխանողի անմիջական պարտականությունների մեջ է մտել գնումներ կատարելը: Դեկավարի ընթացիկ հանձնարարությունների կատարման փաստը չի նշանակում, որ աշխատողը դրանով իսկ պարտավորված է եղել համակարգված ձևով, որպես աշխատանքային պարտականություն, առանց ղեկավարի նոր համապատասխան հանձնարարության, կատարել նախկինում տրված հանձնարարությանը նման հանձնարարություն: Դա նաև չի նշանակում, որ նման հանձնարարության բացակայության պայմաններում նմանատիպ հանձնարարության չկատարման հանգամանքը կարող է դիտվել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում, որպիսի հանգամանքները պատշաճ գնահատվել են Վերաքննիչ դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանն իրավացիորեն փաստել է, որ առկա չի եղել գնումներ կատարելու վերաբերյալ հանձնարարություն, որի պարագայում փաստել է, որ առկա չէ վնասի հատուցման պարտադիր վավերապայմաններից մեկի՝ ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու հանգամանքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Գազիկ Հովհաննիսյանի միջև 30.06.2010 թվականին կնքված թիվ 1/0610 աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Գազիկ Հովհաննիսյանն աշխատանքի է ընդունվել որպես վարորդ: Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Գազիկ Հովհաննիսյանը, ի թիվս այլ պարտականությունների, պարտավորվել է կատարել տվյալ պահին իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան աշխատանքային պարտականությունները և կատարել իր ղեկավարների ընթացիկ հանձնարարությունները (**հատոր 1-ին, գ.թ. 49-50**).

2) Ընկերության տնօրենի կողմից Գազիկ Հովհաննիսյանին ուղղված 24.09.2015 թվականի ծանուցման համաձայն՝ առհաշիվ եղանակով վերջինիս բանկային հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ՝ ընթացիկ գնումներ կազմակերպելու համար: Փոխանցված գումարներից 3.578.150 ՀՀ դրամով որևէ գնում չի իրականացվել: Ծանուցմամբ Գազիկ Հովհաննիսյանը տեղեկացվել է մինչև 25.09.2015 թվականը գումարները բանկային փոխանցմամբ կամ Ընկերության հետ համաձայնեցված այլ եղանակով Ընկերությանը փոխանցելու անհրաժեշտության մասին: Գազիկ Հովհաննիսյանը 24.09.2015 թվականին ստացել է նվաճած ծանուցումը (**հատոր 1-ին, գ.թ. 7**).

3) Ընկերության տնօրենի կողմից Գազիկ Հովհաննիսյանին ուղղված և վերջինիս կողմից 30.09.2015 թվականին ստացված գրության համաձայն՝ Գազիկ Հովհաննիսյանին տրված հանձնարարականները կատարելու, մասնավորապես Ընկերության կարիքների համար գնումներ կատարելու նպատակով, Ընկերության կողմից պարբերաբար փոխանցված առհաշիվ դրամական միջոցներին առնչվող հարցերի ուսումնասիրության համար ստեղծվել է հանձնաժողով, որի ուսումնասիրություններն ի հայտ են բերել մի շարք խախտումներ:

Գրությամբ առաջարկվել է ներկայացնել գրավոր բացատրություն դրանց կապակցությամբ մինչև պահանջը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը (**հատոր 2-րդ, գ.թ. 6**).

4) Գագիկ Հովհաննիսյանը 01.10.2015 թվականին Ընկերությանը դիմում է ներկայացրել՝ հայտնելով, որ որպես վարորդ՝ ամեն ինչ արել է Ընկերության տնօրինությանը և աշխատակիցներին գոհացնելու նպատակով: Հայտնել է, որ իր աշխատանքը թերի է եղել ծանրաբեռնվածության պատճառով, քանի որ կատարել է իր հաստիքից դուրս աշխատանքներ, և խախտումներն առաջացել են լարված աշխատանքի արդյունքում: Նշված դիմումով Գագիկ Հովհաննիսյանն անդրադարձել է նաև իր կողմից ձեռքբերված ապրանքների գներին և քանակին (**հատոր 2-րդ, գ.թ. 7**).

5) 06.10.2015 թվականի «Աշխատողին կարգապահական տույժի ենթարկելու մասին» Ընկերության հրամանի համաձայն՝ Գագիկ Հովհաննիսյանի նկատմամբ աշխատանքային կարգապահության խախտումների համար կիրառվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգապահական տույժը՝ գործատուի նախաձեռնությամբ 06.10.2015 թվականին լուծվել է Գագիկ Հովհաննիսյանի հետ 30.06.2010 թվականին կնքված թիվ 1/0610 աշխատանքային պայմանագիրը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 9-րդ կետերով սահմանված՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու և անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու հիմքերով (**հատոր 2-րդ, գ.թ. 8**).

6) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի և «Ալքա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից 06.06.2016 թվականին տրված տեղեկանքների և գործում առկա վճարման հանձնարարականների համաձայն՝ 13.01.2015-19.09.2015 թվականներն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից Գագիկ Հովհաննիսյանի հաշվին փոխանցվել է ընդհանուր առմամբ 9.259.100 ՀՀ դրամ: Վճարման նպատակը նշվել է «առհաշիվ գումար» (**հատոր 1-ին, գ.թ. 8-48, հատոր 2-րդ, գ.թ. 9-10**).

7) Գագիկ Հովհաննիսյանն Ընկերությանը ներկայացրել է հաշվետվություններ առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ 01.01.2015-31.01.2015 թվականների ժամանակահատվածի համար՝ 503.550 ՀՀ դրամ ծախսելու կապակցությամբ: Ներկայացվել են նաև առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ հաշվետվություններ՝ 01.12.2011-15.12.2011, 16.12.2011-26.12.2011, 26.12.2011-31.12.2011, 01.04.2012-10.04.2012, 10.04.2012-17.04.2014, 25.04.2012-30.04.2012, 12.03.2013-31.03.2013, 01.05.2014-31.05.2014 թվականների ժամանակահատվածների համար: Նշված հաշվետվությունների համաձայն՝ ձեռք են բերվել տարբեր տնտեսական ապրանքներ (**հատոր 2-րդ, գ.թ. 12-13, 17-18, 22-23, 27-32, 36-41**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ աշխատողի աշխատանքային գործառնությունների, աշխատողին տրվող հանձնարարությունների և դրանք չկատարելու հետևանքների, ինչպես նաև աշխատողի նյութական պատասխա-

նատվության պայմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին՝

- *արդյո՞ք աշխատանքային պայմանագրով պետք է սպառիչ սահմանվեն աշխատողի աշխատանքային գործառնություններ,*

- *ինչ ձևով, եղանակով և կարգով կարող են գործատուի կողմից հանձնարարություններ փրվել աշխատողին,*

- *ինչ պայմաններ են անհրաժեշտ աշխատողի նյութական պարասխանաբանության համար:*

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ **ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին**, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, **գործել բարեխիղճ և ողջամիտ**: (...): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների իրականացմամբ և պարտականությունների կատարմամբ չպետք է խախտվեն այլ անձանց՝ օրենքներով պաշտպանվող իրավունքներն ու շահերը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է **գործատուի համար** կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողից պահանջելու կատարել աշխատանքային պայմանագրով **հնախատեսված** աշխատանքներ միայն նույն օրենսգրքով և օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է **բարեխղճորեն** կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանք

քային կարգապահությունը, (...) **բարեխղճորեն** վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (գործատուի ներքին իրավական ակտը) կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրն աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել **օրինականության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ**: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ՝ այլ պարտադիր կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմաներին (*տե՛ս, Արմինե Աբելյանն ընդդեմ անհապ ձեռնարկատեր Հովհաննես Դանիելյանի թիվ ԿԴ/0125/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր բոլոր պարտականությունները, որոնք կարող են սահմանված լինել ինչպես օրենսդրությամբ կամ գործատուի ներքին իրավական ակտերով, այնպես էլ աշխատանքային պայմանագրով՝ այդ թվում նաև բարեխղճորեն կատարելով աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը՝ աշխատանքային գործառնությունները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ աշխատանքային գործառնությունների սահմանմանը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պայմանավորված աշխատանքի տարբեր տեսակների առանձնահատկություններով՝ մի դեպքում աշխատանքային գործառնությունները հնարավոր է սահմանել հստակորեն և սպառիչ կերպով, մեկ այլ դեպքում հնարավոր է միայն սահմանել գործառնությունների որոշակի շրջանակ, որի դեպքում աշխատողի վրա կարող են դրվել սահմանված գործառնություններին համանման պարտականություններ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածը պարտադիր է համարում աշխատանքային պայմանագրում (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում) պաշտոնի անվանումը **և (կամ)** աշխատանքային գործառնությունները նշելը: Այսինքն՝ անգամ հնարավոր է աշխատանքային գործառնությունները պայմանագրում ընդհանրապես չնախատեսել, որի դեպքում աշխատանքային պարտականությունները, որպես կանոն, սահմանվում են գործատուի ներ-

քին իրավական ակտերով (օրինակ՝ տվյալ պաշտոնի նկարագիրը սահմանող իրավական ակտով): Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ չնայած աշխատանքային պայմանագրով հիմնական գործառնությունները կամ դրանց բնույթը (պաշտոնի սահմանման եղանակով) պետք է սահմանված լինեն, այդուհանդերձ, դա չի բացառում, որ աշխատողի վրա կարող են դրվել նաև այլ պարտականություններ, որոնք բխում են վերջինիս պաշտոնի բնույթից, գործատուի ներքին կարգապահական կանոններից կամ օրենսդրությունից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձևին, եղանակին ու կարգին, արձանագրում է հետևյալը.

Աշխատանքային պայմանագրի հասկացությունից հետևում է, որ աշխատողն աշխատանք է կատարում **գործատուի համար**, այլ կերպ ասած՝ կատարում է գործատուի հանձնարարությունները: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը չի նախատեսում գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձև, եղանակ կամ կարգ, ինչը տրամաբանական է, քանի որ չնայած աշխատանքային հարաբերությունների առանձնահատկություններին՝ աշխատանքային հարաբերություններում նույնպես գործում է պայմանագրի ազատության սկզբունքը, որը, ի թիվս այլոց, ենթադրում է պայմանագրի պայմանները որոշելու ազատություն: Հետևաբար նաև նշված հանգամանքի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ տալու ձևը, եղանակը, կարգը սահմանափակված չեն: Այսինքն՝ գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ կարող են տրվել ցանկացած ձևով, եղանակով և կարգով, որպիսի հանգամանքը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցների տեսակներով:

Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարում նշել, որ այդ հանձնարարությունների ոչ պատշաճ կատարման դեպքում գործում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հետևանքները, մասնավորապես՝ այն կարող է համարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով սահմանված աշխատանքային կարգապահության խախտում, որի դեպքում կարող են կիրառվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված տույժերը, ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեցնել նաև աշխատողի նյութական պատասխանատվության:

2) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմը (գործատուն կամ աշխատողը), չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուս կողմին: Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներն են իրավունքը խախտված անձի այն ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար՝ նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրա-

վունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառով անձի կողմից: (...): Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառված անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով բազմիցս արձանագրել է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (*յրե՛ս, օրինակ, Նալբալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից վնաս կրած անձի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, վնաս պատճառողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների և ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է վնաս կրած անձը, իսկ պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է ենթադրյալ վնաս պատճառած անձը (*յրե՛ս, «Էքսոլթ» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0036/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը Նելլի Մկրտչյանն ընդդեմ «Երևան հյուրանոց» ԲԲԸ-ի գործով անհրաժեշտ է համարել առավել մանրամասն անդրադառնալ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին:

Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չախտատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև ան-

ձի սուրբեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուրբեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:

Վերը նշված դիրքորոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

- 1) պատճառված է վնաս.
- 2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով.
- 3) առկա է պատճառական կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև.
- 4) առկա է խախտողի մեղքը.
- 5) խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ.

6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ: Նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

- 1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.
- 2) նյութերի գերաձախս թույլ տալու հետևանքով.
- 3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում.
- 4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից.
- 5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով.
- 6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են հետևյալ-

լին՝ պատճառված վնասի համար պատասխանատվության վերը շարադրված պայմաններին ավելանում են ևս երկու պայման, այն է՝ վնաս պատճառողն ու տուժողն իրավունքների խախտման պահին եղել են **աշխատանքային հարաբերությունների մեջ**, և **վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ**: Ընդ որում, պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս տարրերն աշխատողի նյութական պատասխանատվության դեպքում հարկ է դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համատեքստում, որը թվարկում է աշխատողի նյութական պատասխանատվության դեպքերը՝ սպառիչ սահմանելով վնաս պատճառելուն ուղղված հակաիրավական վարքագծի դրսևորումները (*տե՛ս, թիվ ԵԿԴ/2600/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Անդրադառնալով աշխատողի նյութական պատասխանատվության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, բացառությամբ նույն օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, եթե՝

- 1) վնասը պատճառվել է դիտավորությամբ.
- 2) վնասը պատճառվել է աշխատողի հանցավոր գործունեության հետևանքով.
- 3) աշխատողի հետ կնքվել էր լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր.

4) վնասը պատճառվել է աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաև նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետևանքով.

5) վնասը պատճառվել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատասխանատվություն.

6) վնասը պատճառվել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հատուցման ենթակա վնասը ներառում է իրական վնասը և բաց թողնված օգուտը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքային հարաբերություններում սահմանված է աշխատողի ոչ լրիվ ծավալով՝ սահմանափակ նյութական պատասխանատվություն, բացառությամբ օրենքով հստակ սահմանված դեպքերի: Ընդ որում, այդ դեպքերի վերլուծությունից հետևում է, որ լիակատար պատասխանատվություն սահմանվում է կամ աշխատողի այնպիսի վարքագծի արդյունքում, որն առավել վտանգավոր է (վնասը պատճառվել է դիտավորությամբ, հանցավոր գործունեության արդյունքում կամ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ), կամ այնպիսի դեպքերում, որոնք սահմանված են պայմանագրով կամ օրենքով (աշխատողի հետ կնքվել է լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր, կամ վնասը պատճառվել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատաս-

խանատվություն), կամ եթե վնասը պատճառվել է կոնկրետ գույքի (վնասը պատճառվել է աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի և անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաև նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետևանքով): Մնացած բոլոր դեպքերում աշխատողը կրում է ոչ լրիվ ծավալով նյութական պատասխանատվություն:

Վնասեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Գազիկ Հովհաննիսյանի միջև կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն՝ Գազիկ Հովհաննիսյանն աշխատանքի է ընդունվել որպես վարորդ և, ի թիվս այլ պարտականությունների, պարտավորվել է կատարել տվյալ պահին իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան աշխատանքային պարտականությունները և կատարել իր ղեկավարների ընթացիկ հանձնարարությունները: Ընկերությունը գրությամբ Գազիկ Հովհաննիսյանին հայտնել է, որ ընթացիկ գնումների համար վերջինիս փոխանցված դրամական միջոցներից 3.578.150 ՀՀ դրամով որևէ գնում չի իրականացվել: Գազիկ Հովհաննիսյանը գրավոր կերպով հայտնել է, որ իր աշխատանքը թերի է եղել ծանրաբեռնվածության պատճառով, քանի որ կատարել է իր հաստիքից դուրս աշխատանքներ, և խախտումներն առաջացել են լարված աշխատանքի արդյունքում: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի և «Ալբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքների և գործում առկա վճարման հանձնարարականների համաձայն՝ 13.01.2015-19.09.2015 թվականներն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից Գազիկ Հովհաննիսյանի հաշվին փոխանցվել է ընդհանուր առմամբ 9.259.100 ՀՀ դրամ: Գազիկ Հովհաննիսյանը 01.01.2015-31.01.2015 թվականների ժամանակահատվածի համար առհաշիվ 503.550 ՀՀ դրամ ծախսելու կապակցությամբ Ընկերությանը ներկայացրել է հաշվետվություններ:

Սույն գործով Դատարանը բավարարել է հայցը՝ հաստատված համարելով, որ Գազիկ Հովհաննիսյանի աշխատանքային պարտականություններն աշխատանքային պայմանագրի 2.1-րդ կետի հիմքով ներառել են նաև Ընկերության համար տնտեսական ապրանքների ձեռքբերումը: Դատարանը, հաստատված համարելով, որ փոխանցված 3.578.150 ՀՀ դրամի դիմաց Ընկերությունը տնտեսական ապրանքներ չի ստացել, եզրահանգել է, որ Գազիկ Հովհաննիսյանը, աշխատանքային պայմանագրով ստանձնելով Ընկերության համար տնտեսական ապրանքներ ձեռք բերելու պարտականություն, դրա դիմաց ստանալով համապատասխան գումար, չի կատարել իր պարտականությունը և իր գործողություններով հանգեցրել է Ընկերության գույքի կորստին, ինչը դրսևորվել է Ընկերության գույքի նվազմամբ՝ 3.578.150 ՀՀ դրամի չափով: Այսինքն՝ Գազիկ Հովհաննիսյանի կողմից դրսևորվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ օրինաչափ վարքագիծ, որն առաջացրել է վնաս՝ 3.578.150 ՀՀ դրամի չափով: Դատարանը հաստատված է համարել, որ առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածով սահմանված՝ նյութական պատասխանատվության բոլոր պայմանները:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով Դատարանի վճիռը, հաստատված է համարել, որ պատասխանողը ստանձնել է պարտականություն՝ կատարելու նաև իր ղեկավարի ընթացիկ հանձնարարությունները: Վերաքննիչ դատարանը գտել է, որ թեպետ աշխատանքային պայմանագրում կարող էր նշված չլինել աշխատողի՝ գնումներ կատարելու պարտականության վերաբերյալ, սակայն այդպիսի հանձնարարություն վերջինիս կարող էր

տրվել իր ղեկավարի կողմից, որպիսի պայմաններում արդեն կծագեր նրա՝ տրված հանձնարարությունը կատարելու պարտականությունը: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ հայցվոր կողմը կրել է այն հանգամանքի ապացուցման բեռը, որ առկա է եղել գործատուի համապատասխան հանձնարարությունը՝ ուղղված աշխատողին՝ կատարել գնումներ, և որ 3.578.150 ՀՀ դրամը փոխանցվել է հենց այդ նպատակով, մինչդեռ Դատարանին նման ապացույց չի ներկայացվել: Վերաքննիչ դատարանը գտել է, որ պատասխանողի կողմից ժամանակ առ ժամանակ գնումներ կատարելը, դրա վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելը դեռևս չի կարող հիմնավորել այն, որ գնումներ կատարելը մտել է վերջինիս պարտականությունների մեջ, և որ կոնկրետ հանձնարարության բացակայության պայմաններում նախկինում կատարված նմանատիպ գործողություններ չկատարելու հանգամանքը չի կարող դիտվել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և այդ պարտականության չկատարման արդյունքում համարվել, որ վնաս է պատճառվել գործատուին:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տես, Ռուզաննա Թորոսյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների

լույսի ներքո արձանագրում է, որ կողմերի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, որում նախատեսվել է աշխատողի պարտականությունը՝ կատարել ղեկավարի ընթացիկ հանձնարարությունները: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ աշխատանքային պայմանագրով չի սահմանվել հանձնարարությունների տրման հստակ ձև, եղանակ կամ կարգ: Հետևաբար գնումներ կատարելու հանձնարարություն տված լինելու հանգամանքը կարող էր հաստատվել ապացույցի ցանկացած տեսակով: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև սույն գործով չեն ներկայացվել ուղղակի ապացույցներ այն մասին, որ Ընկերության ղեկավարության կողմից Գազիկ Հովհաննիսյանին տրվել են կոնկրետ հանձնարարություններ գնումներ կատարելու վերաբերյալ, սակայն գործում առկա գրավոր ապացույցների համակողմանի գնահատման արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերության կողմից գումարներ են փոխանցվել Գազիկ Հովհաննիսյանին՝ տնտեսական ապրանքներ ձեռք բերելու համար, գնումներ կատարելու գործառնություն իրականացնելը չի ժխտել նաև Գազիկ Հովհաննիսյանը՝ մասնավորապես գրավոր դիմում ներկայացնելով Ընկերությանը: Ավելին՝ Գազիկ Հովհաննիսյանը փորձել է հիմնավորել, որ իր պարտականությունը բարելավող է կատարել: Բացի այդ, Գազիկ Հովհաննիսյանը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացրել կատարած գնումների վերաբերյալ: Վերոգրյալ ապացույցների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով հիմնավորվում է Գազիկ Հովհաննիսյանի կողմից գնումներ կատարելու աշխատանքային գործառնություն ունենալը և Գազիկ Հովհաննիսյանի կողմից գործառնության հանձնարարությամբ պարբերաբար ապրանքներ ձեռք բերելու հանգամանքը, որպիսի իրավաչափ եզրահանգման է եկել նաև Դատարանը:

Անդրադառնալով Գազիկ Հովհաննիսյանի նյութական պատասխանատվության առաջացման պայմաններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանն իրավացիորեն եզրահանգել է, որ պատճառված վնասը սույն դեպքում դրսևորվել է գույքի կորստով, այն է՝ պատասխանողին փոխանցվել է 9.259.100 ՀՀ դրամ՝ գնումներ կատարելու համար, սակայն գնումներ չեն կատարվել 3.578.150 ՀՀ դրամի չափով: Այսինքն՝ աշխատողի անօրինական գործունեությունը տվյալ դեպքում դրսևորվել է նրանով, որ այն հանգեցրել է գործատուի գույքի կորստի: Դատարանն իրավացիորեն նաև արձանագրել է, որ առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածով սահմանված՝ նյութական պատասխանատվության բոլոր պայմանները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև մեղքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը կրում է վնաս պատճառողը՝ տվյալ դեպքում Գազիկ Հովհաննիսյանը, ով այդ կապակցությամբ ապացույցներ չի ներկայացրել, այդուհանդերձ քանի որ սույն գործով քննարկվում է աշխատողի լրիվ ծավալով նյութական պատասխանատվության հարցը, որի հիմքը տվյալ դեպքում աշխատողի դիտավորությունն է, ուստի Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Գազիկ Հովհաննիսյանի դիտավորությանը: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Գազիկ Հովհաննիսյանն ունեցել է գնումներ կատարելու աշխատանքային պարտականություն, որը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր կատարել բարելավողորեն: Վճռաբեկ դատարանն արդեն իսկ հաստատված է համարել, որ գնումները պատշաճ չեն կատարվել, մասնավորապես՝ աշխատողն իրեն փոխանցված գումարների ամբողջ ծավալով գնում չի կատարել, ինչպես նաև չի վերադարձրել չծախսված գումարները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման արարքը կարող էր դրսևորվել բացառապես դիտավորությամբ, ուստի առկա է աշխատողի լրիվ ծավալով նյութական պատասխանատվության հիմք: Այլ կերպ ասած՝ Ընկերության կողմից

ներկայացված ապացույցներով հիմնավորվել է վերջինիս պահանջը, որպիսի իրավաչափ եզրահանգման հանգել է նաև Դատարանը: Հետևաբար Դատարանը կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ անդրադառնալով 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները բռնագանձելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վճարի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Եթե օրենքով կամ պայմանագրով վճարի հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար, ապա նույն կետով նախատեսված կարգը չի գործում միայն տվյալ ժամանակահատվածում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*Կրեն, օրինակ, Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գզիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը դրամական պարտավորությունը խախտելու համար նախատեսված պատասխանատվության ընդհանուր կանոն է: Այսինքն՝ նշված կարգավորումը գործում է դրամական պարտավորությունների խախտման բոլոր այն դեպքերում, երբ այլ կարգավորում նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Ընդ որում, եթե այլ կարգավորում նախատեսված է կոնկրետ ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածի ավարտից հետո նույնպես գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ընդհանուր կանոնը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգավորումը՝ որպես ընդհանուր կանոն, չի գործում այն դեպքերում, երբ պատասխանատվության հստակ չափ և կարգավորում նախատեսվում է օրենքով կամ պայմանագրով՝ որպես հատուկ կանոն (*Կրեն, Ռազմիկ Ուզունյանն ընդդեմ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/3908/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով վերը նշված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը 24.09.2015 թվականի ծանուցմամբ (որը Գագիկ Հովհաննիսյանը ստացել է նույն օրը) պա-

հանջել է գումարները վերադարձնել մինչև 25.09.2015 թվականը, որը, սակայն, Գագիկ Հովհաննիսյանը չի վերադարձրել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև Դատարանի այն հետևությունը, որ ենթակա է բավարարման նաև վերադարձման ենթակա գումարի մնացորդին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տոկոսները հաշվարկելու և բռնագանձելու հայցվորի պահանջը, որը պետք է հաշվարկել սկսած 25.09.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարզապատասխանությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապատասխանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գնելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համա-

ձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում բեկանվում է Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ է տրվում Դատարանի վճռին, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը, գտնում է, որ Գագիկ Հովհաննիսյանից հոգուտ Ընկերության պետք է բռնագանձել 127.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ Գագիկ Հովհաննիսյանը վերաքննիչ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, իսկ պետական տուրքի մնացած մասի վճարումը Վերաքննիչ դատարանի 17.10.2016 թվականի որոշմամբ հետաձգվել է (հատոր 2-րդ, գ.թ. 94), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 87.345 ՀՀ դրամ ($3.578.150 \cdot 3\% - 20.000$) և սկսած 25.09.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և Վերաքննիչ դատարանի 17.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գագիկ Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման նաև սկսած 01.03.2017 թվականից (վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու օրվանից) մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար, բայց ոչ ավելի քան 873.000 ՀՀ դրամ ($1.000.000 - 127.000$)՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի չվճարված մասի գումար՝ նկատի ունենալով, որ 25.09.2015-01.03.2017 թվականների ժամանակահատվածի տոկոսների բռնագանձման պահանջի մասով վճռաբեկ բողոքի համար Ընկերության կողմից պետական տուրքը նախապես վճարվել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.08.2016 թվականի վճռին:

2. Գագիկ Հովհաննիսյանից հոգուտ «ՀԱՅԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ» ՍՊԸ-ի բռնագանձել 127.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Գագիկ Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 87.345 ՀՀ դրամ և սկսած 25.09.2015 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.10.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի չվճարված մասի գումար:

Գագիկ Հովհաննիսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել սկսած 01.03.2017 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը 3.578.150 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար, բայց ոչ ավելի քան 873.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված պետական տուրքի չվճարված մասի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/1490/02/16

Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան

Դատավորներ՝ Ա. Սմբատյան

Ս. Միքայելյան

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/1490/02/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հրազդան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ներկայացուցիչ Գոռ Մաթևոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.08.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անահիտ Նազարյանի ընդդեմ Համայնքի ղեկավարի՝ պաշտոնից ազատելու մասին 01.07.2016 թվականի թիվ 39 կարգադրությունն առոչինչ և անվավեր ճանաչելու, Անահիտ Նազարյանին պաշտոնում վերականգնելու և օրենքով սահմանված վճարումները բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Անահիտ Նազարյանը պահանջել է առոչինչ և անվավեր ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնից իրեն ազատելու մասին Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանի 01.07.2016 թվականի թիվ 39 կարգադրությունը, պարտավորեցնել Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանին ապահովել իր նախապատվության իրավունքը և նշանակել նախկինում իր ենթակայության տակ գտնված, սակայն Համայնքի ավագանու 28.04.2016 թիվ 32 որոշմամբ կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վերանվանված բաժնի պետի պաշտոնին, Հրազդան համայնքապետարանից բռնագանձել հայցվորի միջին աշխատավարձը՝

հարկադիր պարապորդում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Խաչիկյան) (այսուհետ՝ Դատարան) 26.01.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.08.2017 թվականի որոշմամբ Անահիտ Նազարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 26.01.2017 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել Համայնքի ղեկավարի 01.07.2016 թվականի թիվ 39 կարգադրությունը, Անահիտ Նազարյանը վերականգնվել է Համայնքի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի հարցերի բաժնի պետի պաշտոնում, ինչպես նաև որոշվել է Համայնքից հոգուտ Անահիտ Նազարյանի բռնագանձել հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վերջինիս միջին աշխատավարձի գումարը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համայնքի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը, 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետը, 34-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ և 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորը թե՛ հայցադիմումում, և թե՛ վերաքննիչ բողոքում նշել է, որ հաստիքը կրճատվել է, սակայն ուներ վերակառուցված կամ նոր ստեղծված աշխատատեղում աշխատելու նախապատվության իրավունք, մինչդեռ Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ Անահիտ Նազարյանի հաստիքը չի կրճատվել, այն դեպքում, երբ հայցվորի հաստիքը կրճատված լինելու փաստը վերաքննիչ բողոքով չի վիճարկվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ նախկինում գոյություն են ունեցել երկու ստորաբաժանումներ, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է առանձին բաժնի պետ, բաժինները վերակազմակերպումից հետո վերացել են, և դրանց փոխարեն ստեղծվել է մեկ բաժին՝ մեկ բաժնի պետով, որպիսի պայմաններում ակնհայտ է առնվազն մեկ բաժնի պետի հաստիքը կրճատված լինելու հանգամանքը: Ավելին՝ տեղի է ունեցել ոչ թե առանձին հաստիքների կրճատում, այլ աշխատակազմի վերակազմակերպում՝ ամբողջ աշխատակազմի նոր կառուցվածքի հաստատում, պաշտոնների անվանացանկի նոր խմբագրությամբ հաստատում: Տեղի ունեցած կառուցվածքային փոփոխության արդյունքում առաջացել է նոր պաշտոն՝ նոր ծածկագրով, կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վերանվանված բաժնի պետի պաշտոնը մինչև Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի թիվ 32 որոշումն աշխատակազմի կառուցվածքում առկա չի եղել:

Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ Անահիտ Նազարյանի 65 տարին լրացել է 03.01.2017 թվականին, այսինքն՝ վերջինս օրենքի ուժով այլևս իրավունք չունի աշխատել որպես համայնքային ծառայող, մինչդեռ վերականգնվել է համայնքային ծառայության պաշտոնում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Համայնքի ղեկավարի 28.04.2016 թվականի ծանուցմամբ Անահիտ Նազարյանին իրազեկվել է իր զբաղեցրած հաստիքի հնարավոր կրճատման, հետևաբար նաև՝ 01.07.2016 թվականից աշխատանքից ազատվելու մասին: Օրենսդրի տրամաբանությունն ուղղված է նրան, որ հաստիքի կրճատման և աշխատանքային պայմանագրի լուծման պահերը պետք է համընկնեն միմյանց, հետևաբար ծանուցումը պետք է կատարվի մինչև հաստիքի կրճատումը, այլ ոչ թե կրճատումից հետո:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Համայնքի ավագանու որոշումը պատճենի տեսքով ներկայացնելը չի նշանակում որոշման գոյության բացակայություն: Ավելին՝ հայցվորը կասկածի տակ չի դրել Համայնքի ավագանու որոշման բովանդակությունը կամ դրանով կարգավորված հարաբերությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.08.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 26.01.2017 թվականի վճռին կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի «Հայաստանի Հանրապետության Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 32 որոշմամբ հաստատվել են Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հավելվածների (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

2) Համայնքի ղեկավարի կողմից Անահիտ Նազարյանին հասցեագրված 28.04.2016 թվականի ծանուցագրի համաձայն՝ աշխատակազմի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության պատճառով հնարավոր է Անահիտ Նազարյանի հաստիքի կրճատում: Վերջինս ծանուցվել է, որ 01.07.2016 թվականից ազատվելու է աշխատանքից. հիշյալ ծանուցագիրն Անահիտ Նազարյանին հանձնվել է 28.04.2016 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 4, 14**):

3) Համայնքի ղեկավարի 01.07.2016 թվականի թիվ 39 կարգադրության համաձայն՝ ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 115-րդ հոդվածով՝ Անահիտ Նազարյանը 01.07.2016 թվականից ազատվել է համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնից (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

4) Հրագրանի համայնքապետարանի աշխատակազմում նախկինում (2009 թվականի պաշտոնի անձնագրով) գոյություն ունեցող կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ու ներկայումս (2016 թվականի պաշտոնի անձնագրով) առկա կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետի պաշտոններն ունեն տարբեր ծածկագրեր, միմյանցից տարբերվում են պաշտոնատար անձանց ենթակայությամբ և գործառնության պարտականություններով: Մասնավորապես՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետը ենթակա և հաշվետու էր աշխատակազմի քարտուղարին, իսկ կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետը՝ համայնքի ղեկավարին և (կամ) աշխատակազմի քարտուղարին: Կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետը մասնակցում է հոգաբար-

ծության և խնամակալության հանձնաժողովի աշխատանքներին, իրականացնում լիազորություններ դատարանում և հարկադիր կատարման մարմիններում, որպիսի գործառնություններ նախատեսված չէին կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի համար (**հատոր 1-ին, գ.թ. 64-65**):

5) Անահիտ Նազարյանի կողմից հայցադիմումին կից ներկայացված ՀՀ քաղաքացու թիվ AK0336592 անձնագրի համաձայն՝ Անահիտ Նազարյանի 65 տարին լրացել է 03.01.2017 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

6) 12.01.2017 թվականին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչ փաստաբան Մարատ Կոստանյանը պնդել է **Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանին հայցվորի նախապատվության իրավունքն ապահովելուն պարտավորեցնելու** պահանջը և որպես հիմնավորում հայտնել, որ կազմել է համեմատական տեղեկագիր հայցվորի ու Գեղամ Միքայելյանի անհատական հատկանիշների վերաբերյալ, որը ևս մեկ անգամ հիմնավորում է **հայցվորի նախապատվության իրավունք ունենալը** (**հատոր 1-ին, դատական նիստի արձանագրություն, գ.թ. 123-128**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածների խախտումների հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդիրներին.

1) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապայմանության իրավունքի կիրառման առանձնահատկություններին,

2) աշխատանքից ազատելու վերաբերյալ ծանուցման ընթացակարգի առանձնահատկություններին,

3) աշխատանքում վերականգնվելու անհնարինությանը՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համադրությամբ:

1) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պար-

բերության համաձայն՝ աշխատակազմի վերակազմակերպումը, անվանափոխությունը և կառուցվածքային փոփոխությունը, ինչպես նաև աշխատակազմի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումների անվանափոխությունը համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունենում հաստիքների կրճատում: Նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոնների միևնույն խմբի միևնույն ենթախմբի մեկից ավելի պաշտոններ ունեցող աշխատակազմի կամ դրա կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման նշված **հաստիքներից մեկի կամ մի քանիսի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը** տրվում է համապատասխանաբար աշխատակազմի կամ դրա կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման համայնքային ծառայության պաշտոնների համապատասխան խմբի ենթախմբի պաշտոն զբաղեցնող հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված համայնքային ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ այն համայնքային ծառայողին, որն ունի համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ որն ունի համայնքային ծառայության առավել երկար ստաժ:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ աշխատակազմի **վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով** համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոններն անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ կարող են համալրվել վերակազմակերպված կամ կառուցվածքային փոփոխություններ կրած համապատասխան աշխատակազմի կամ կառուցվածքային (առանձնացված) ստորաբաժանման, նույն օրենքի 10-րդ հոդվածի պահանջները բավարարող և այդ մասին գրավոր համաձայնություն տված, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող այն անձանց (**այդ թվում՝ վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության կապակցությամբ հաստիքների կրճատման հետևանքով զբաղեցրած պաշտոններից ազատված անձանց**) միջոցով, ովքեր համարվում են համայնքային ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունեն տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված համայնքային ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու են առավելագույնը համայնքային ծառայության իրենց զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ ենթախմբի պաշտոն: Նույն մասի 2-րդ պարբերության համաձայն՝ նույն մասում նշված ժամկետի ավարտից հետո թափուր մնացած պաշտոններն զբաղեցվում են մրցույթով:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայության վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված հանրային ծառայության հիմնական սկզբունքները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրային ծառայության հիմնական սկզբունքներն են՝ 1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների գերակայությունը, (...) 3) հանրային ծառայության կայունությունը, (...), 8) հանրային ծառայողների արհեստավարժությունը, (...) 9) հանրային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը (...):

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը մեկնաբանելով դրա-

նում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կարգավորում են մինևսայն՝ համայնքի աշխատակազմի **հաստիքների կրճատմամբ ուղեկցվող վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության գործընթացի տարրեր փուլերը**։ Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ դա կարգավորում է այն հարցը, թե հաստիքների կրճատումներով ուղեկցվող աշխատակազմի վերակազմակերպումը, անվանափոխությունը և կառուցվածքային փոփոխությունն ինչպես, ինչ կանոնների պահպանմամբ պետք է իրականացվի, արդյո՞ք այդ փոփոխությունը հանգեցնում է համայնքային ծառայողներին պարտադիր կերպով պաշտոնից ազատելուն կամ եթե պաշտոնից ազատելը դրա պարտադիր հետևանք չէ, ապա ինչպես է ապահովվում **աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը, այսինքն՝ ո՞ր համայնքային ծառայողները նախապատվության իրավունքով պետք է շարունակեն աշխատել կրճատման հետևանքով մնացած նվազ թվով հաստիքներում**։ Մինչդեռ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է այն հարցը, թե վերը նկարագրված գործընթացն ավարտվելուց հետո ինչպես, ինչ կանոնների պահպանմամբ են համալրվում աշխատակազմի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության հետևանքով ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոնները, մասնավորապես սահմանելով որոշակի պահանջներին բավարարող համայնքային ծառայողներին նոր պաշտոններում նշանակելու՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությունը։ Դա նշանակում է, որ **համայնքի աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության հետևանքով հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը որոշելիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն օժտված չէ լիակատար հայեցողությամբ, այլ սահմանափակված է օրենսդրի սահմանած նախապատվության որոշակի կանոնները պահպանելու պարտականությամբ**։ Հակառակ մեկնաբանության պարագայում կրճատումների դեպքում օրենսդրի սահմանած աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը կդառնա ձևական պահանջ։ Եթե կրճատումներով ուղեկցվող աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության ընթացքում համայնքային ծառայության բոլոր պաշտոններում նշանակումներ կատարելը թողնվեր պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությանը, ապա բոլորովին ավելորդ կլիներ որոշակի համայնքային ծառայողների համար օրենքով աշխատանքը շարունակելու նախապատվության իրավունք նախատեսելը, մինչդեռ այդ իրավունքի և դրա իրացման պայմանների սահմանումն օրենսդրի կողմից որոշակի երաշխիք է՝ ուղղված կրճատումների դեպքում առավել որակյալ, փորձառու կամ սոցիալապես խոցելի անձանց աշխատանքը շարունակելու հնարավորության ապահովմանը։

Այլ խոսքով՝ **համայնքային ծառայության հաստիքների կրճատման պարագայում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը** համապատասխան կրճատված հաստիքում աշխատող համայնքային ծառայողին այդ հաստիքից ազատելիս **միաժամանակ պարտավոր է նաև քննարկել նախապատվության իրավունքով նրան նոր առաջացած հաստիքում աշխատանքի թողնելու հարցը և նախապատվության իրավունքի ու դրա պայմանների առկայության դեպքում նրան նշանակել նոր առաջացած պաշտոնում**՝ համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի

1-ին մասի 2-րդ պարբերության: Դրանից հետո միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը կարող է օրենքի նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համալրել նոր առաջացած մյուս թափուր մնացած պաշտոնները՝ իր հայեցողությամբ: Եթե նախապատվության իրավունք ունեցող անձն այդ իրավունքի պահպանմամբ նշանակվում է նոր առաջացած պաշտոնում, այլևս մյուս նոր առաջացած թափուր պաշտոններում նրան նշանակելու հարց չի առաջանում, իսկ եթե նա, **ի խախտումն նախապատվության իրավունքի, չի նշանակվում կրճատման հետևանքով առաջացած նվազ թվով պաշտոններից իր նախապատվության իրավունքի պայմաններին համապատասխանող պաշտոնում, ապա նրա իրավունքի խախտումը կարող է վերացվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին նման նշանակումը պարտավորեցնելու միջոցով և ոչ թե նոր պաշտոնում վերականգնելու եղանակով:**

Վերոգրյալից հետևում է, որ համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ և կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքի կրճատման դեպքում այդ հաստիքը զբաղեցնող համայնքային ծառայողը չի կարող պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ չնշանակվել նոր առաջացող թափուր պաշտոնում՝ պայմանով, որ իր անհատական հատկանիշներով համապատասխանում է այդ պաշտոնն զբաղեցնելու համար ներկայացվող պահանջներին և միևնույն խմբի միևնույն ենթախմբի մյուս համայնքային ծառայողների նկատմամբ ունի նախապատվության իրավունք: Վճռաբեկ դատարանի նման մեկնաբանությունը համահունչ է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հանրային ծառայության հիմնական սկզբունքներին:

2) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ չեն սահմանված:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է հաստիքների կրճատումը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել նույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել

ոչ ուշ, քան երկու ամիս առաջ: (...) Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով (...) նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշվում են՝ 1) աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին, 2) աշխատանքից ազատելու տարին, ամիսը, ամսաթիվը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակահատվածներում նոր աշխատանք փնտրելու համար գործատուն պետք է աշխատողին **տրամադրի ազատ ժամանակ**: Տրամադրվող ժամանակի տևողությունը չի կարող պակաս լինել ծանուցման ժամանակահատվածում ներառվող **աշխատաժամանակի տասը տոկոսից**: Աշխատանք փնտրելու համար ազատ ժամանակը տրամադրվում է աշխատողի առաջարկած ժամանակացույցով: Այդ ժամանակահատվածում **պահպանվում է աշխատողի միջին աշխատավարձը**, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ, **և գործատուն չի լուծել պայմանագիրը**: Այդ ժամկետում չեն հաշվարկվում աշխատողի արձակուրդի և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը կարգավորում չի պարունակում աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուի կողմից աշխատողին ծանուցելու ընթացակարգի վերաբերյալ, հետևաբար կիրառելի են ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոգրյալ կարգավորումները:

Վերը նշված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ աշխատանքից ազատելու ծանուցումը տրամադրվում է աշխատանքային հարաբերությունների առկայության պայմաններում՝ նկատի ունենալով, որ աշխատողը դեռևս նույն գործատուի մոտ կատարում է աշխատանք, ստանում աշխատավարձ, հնարավորություն ունենում կատարվող աշխատանքին զուգահեռ փնտրել այլ աշխատանք, ինչը չէր կարող ապահովվել, եթե հաստիքն արդեն կրճատված լիներ կամ գոյություն չունենար: Այլ կերպ ասած՝ աշխատողին ծանուցում տրվում է այն ժամանակ, երբ գործատուն որոշում է աշխատակազմում կատարել փոփոխություններ, որոնք ապագայում հանգեցնելու են կամ կարող են հանգեցնել հաստիքների կրճատման: Ընդ որում, հաստիքների նախատեսված կրճատումը կարող է տարբեր պատճառներով տեղի չունենալ կամ չկատարվել նախատեսվող ժամանակահատվածում: Հնարավոր են նաև դեպքեր, երբ կատարվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ընդհանուր առմամբ հաստիքների կրճատում տեղի ունենա, սակայն ծանուցված աշխատողի կոնկրետ հաստիքը չկրճատվի: Օրենսդիրը գործատուին չի պարտավորեցնում ամենայն որոշակիությամբ բոլոր աշխատողներին ծանուցել, թե կոնկրետ որ հաստիքներն են ապագայում կրճատվելու, սակայն գործատուն պարտավոր է կոնկրետ աշխատանքային պայմանագիրը լուծելիս պահպանել սահմանված ծանուցման ընթացակարգի պահանջները, մասնավորապես՝ ժամկետը:

Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը պայմանավորված է աշխատողների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ հնարավորություն տալով նախապես տեղեկանալ

աշխատանքից հնարավոր ազատման մասին, փնտրել նոր աշխատանք, տեղեկացման ժամանակահատվածում աշխատել և ստանալ աշխատավարձ: Ընդ որում, ծանուցումն անպայմանորեն չի ենթադրում աշխատանքից ազատում՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ ծանուցումը կարող է նաև ուժը կորցրած ճանաչվել՝ չհանգեցնելով աշխատանքային պայմանագրի լուծման:

3) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» կետի համաձայն՝ համայնքային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է համայնքային ծառայության պաշտոն գրադեցնելու՝ նույն օրենքով սահմանված առավելագույն տարիքի լրանալը:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոն գրադեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքային ծառայության պաշտոն գրադեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում համայնքային ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ընդունած իրավական ակտով ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել գրադեցնել իր պաշտոնը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթ) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

ՀՀ վճարելի դատարանը, *Ջոյա Ծալուրյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի* գործով կայացրած որոշմամբ անդրադառնալով նշված հոդվածի կիրառման դեպքին, դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանել է աշխատանքում չվերականգնելու գործատուի իրավական հնարավորությունը՝ վերապահելով դատարանին այդ վարքագծի իրավաչափության գնահատ-

ման իրավասություն՝ որոշելու տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական կամ այլ պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների **վերականգնման անհնարիությունը** կոնկրետ գործի փաստերից ելնելով (*տե՛ս, թիվ 3-496(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

Բացի այդ, *Քրիստինա Ներիշն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի* գործով վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծված լինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով աշխատանքում վերականգնելու առանձնահատկություններին՝ արձանագրելով, որ՝

1. ոչ բոլոր դեպքերում է, որ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքի պայմանները փոփոխելը, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելը կարող է հիմք հանդիսանալ աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու համար.

2. այդ կանոնից բացառություն է այն դեպքը, երբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում անգամ վերը նշված խախտումների փաստը հաստատված համարելու պայմաններում աշխատողին չվերականգնել նախկին աշխատանքում, եթե դա անհնարին է նաև տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով: Այս դեպքում նախկին աշխատանքում վերականգնելու փոխարեն դատարանը գործատուին պարտավորեցնում է հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարել հատուցում՝ նրա միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով.

3. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասում խոսքը գնում է **միայն նախկին աշխատանքում վերականգնվելու մասին**, այսինքն՝ այն աշխատանքում, որն աշխատողը հրամանի կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարել է աշխատանքից ազատվելու հրամանն արձակելու պահի դրությամբ (*տե՛ս, թիվ ԵԱԲԴ/1879/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Ջարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ վերոգրյալ հոդվածի վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը *Խորեն Նասիբյանն ընդդեմ «Բնարերակո» ՍՊԸ-ի* գործով եզրակացրել է, որ նշված հոդվածով օրենսդիրը, անդրադառնալով աշխատանքային պայմանագրի վերաբերյալ վեճերին, կարգավորել է աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում աշխատողների խախտված իրավունքների վերականգնման դեպքերը՝ առանձնացնելով երկու խումբ իրավիճակներ.

1. աշխատողը վերականգնվում է իր նախկին աշխատանքում՝ ստանալով հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձ,

2. աշխատողը չի վերականգնվում նախկին աշխատանքում՝ ստանալով հատուցումներ հարկադիր պարապյուրդի ամբողջ ժամանակահատվածի, ինչպես նաև աշխատանքում չվերականգնվելու դիմաց:

Վերոնշյալ երկրորդ իրավիճակը հնարավոր է հետևյալ դեպքերում.

1. առկա են տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներ, մասնավորապես՝ նման իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ գործատուի վարչակազմակերպչական կառուցվածքում գոյություն չունի այնպիսի հաստիքային միավոր, որտեղ նախկինում աշխատել է աշխատողը, և առկա չէ աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք (յրեն, օրինակ, Անասուրա Գիշյանը, Նորայր Եղիկյանն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/0605/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2009 թվականի որոշումը):

2. Գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունները վերականգնելն անհնարին է այլ պատճառներով: Ընդ որում, նշված հիմքի կիրառման համար օրենսդիրը կոնկրետ դեպքեր չի նախատեսել՝ հնարավորություն տալով դատարաններին յուրաքանչյուր դեպքում գործի փաստական հանգամանքների շրջանակներում գնահատել աշխատանքում աշխատողի վերականգնման անհնարինությունը (յրեն, թիվ ԵԿԴ/3295/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատանքում վերականգնվելու անհնարինության հիմք կարող է հանդիսանալ նաև վեճի լուծման պահին «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքի լրանալը, որի պարագայում անգամ առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքից ազատված համայնքային ծառայողը չի կարող վերականգնվել նախկին աշխատանքում, ինչպես նաև չի կարող կիրառվել վերջինիս՝ աշխատանքային հարաբերությունները շարունակելու նախապատվության իրավունքը՝ նշանակելով նրան կրճատումից հետո նոր ստեղծված պաշտոնում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի որոշմամբ հաստատվել են Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Համայնքի ղեկավարի կողմից 28.04.2016 թվականին Անահիտ Նազարյանին հասցեագրված՝ վերջինիս հաստիքի՝ 01.07.2016 թվականից հնարավոր կրճատման վերաբերյալ ծանուցագրի համաձայն՝ վերջինս 01.07.2016 թվականից ազատվելու է աշխատանքից: Համայնքի ղեկավարի 01.07.2016 թվականի կարգադրությամբ Անահիտ Նազարյանը 01.07.2016 թվականից ազատվել է համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնից՝ հաստիքի կրճատման հիմքով: Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմում նախկինում (2009 թվականի պաշտոնի անձնագրով) գոյություն ունեցող կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ու ներկայումս (2016 թվականի պաշտոնի անձնագրով) առկա կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետի պաշտոններն ունեն տարբեր ծածկագրեր, միմյանցից տարբերվում են պաշտոնատար անձանց ենթակայությամբ և գործառնության պարտականություններով: Անահիտ Նազարյանին ՀՀ համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան է շնորհվել 07.07.2008 թվականին: Գեղամ Միքայելյանին ՀՀ համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան է շնորհվել 28.12.2015 թվականին: Անահիտ Նազարյանի 65 տարին լրացել է 03.01.2017 թվականին: Անահիտ Նազարյանը, ի

թիվս այլ պահանջների, դատարանից պահանջել է **պարտավորեցնել Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանին ապահովել իր նախապատվության իրավունքը** և նշանակել կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վերանվանված բաժնի պետի պաշտոնին:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել ոչ թե առանձին հաստիքների կրճատում, այլ աշխատակազմի վերակազմակերպում՝ նոր կառուցվածքի հաստատում, պաշտոնների անվանացանկի նոր խմբագրությամբ հաստատում: Տեղի ունեցած կառուցվածքային փոփոխության արդյունքում առաջացել է նոր պաշտոն՝ նոր ծածկագրով: Հայցվորի ակնկալած՝ Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի թիվ 32 որոշմամբ կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վերանվանված բաժնի պետի պաշտոնը մինչև նշված որոշումը Համայնքի աշխատակազմի կառուցվածքում առկա չի եղել: Միաժամանակ Դատարանը պատճառաբանել է, որ Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված նոր կառուցվածքում առաջացած կրթության, մշակույթի և սպորտի հարցերով բաժնի պետի պաշտոնում այս կամ այն աշխատակցի ընտրության իրավունքը վերապահված է համայնքի ղեկավարին, և վերջինս պարտավոր է պահպանել միայն այդ պաշտոնում նշանակվող անձի համար տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները, և գտել է, որ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը տվյալ դեպքում կիրառելի չէ, այսինքն՝ նախապատվության իրավունքի հարցը սույն իրավահարաբերությունում քննարկման առարկա չի կարող դառնալ: Բացի այդ, Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից նշված ավագանու որոշման դեռևս ուժի մեջ մտած չլինելու պարագայում տրված ծանուցման փաստը հիմք չէ վերջինիս աշխատանքից ազատելու հրամանն անվավեր ճանաչելու համար, քանի որ Անահիտ Նազարյանն աշխատանքից ազատվել է 01.07.2016 թվականին, այսինքն՝ Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի որոշումն ամբողջությամբ ուժի մեջ մտնելու պահից:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում հայցվորին ուղարկված ծանուցման մեջ նշվել է Համայնքի ավագանու թիվ 32 որոշմամբ հաստիքի հնարավոր կրճատման մասին, մինչդեռ ծանուցմամբ պետք է փաստարկվեր, որ նշված որոշմամբ հաստիքը կրճատվել է և կցվեր համապատասխան որոշումը: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, քանի որ հայցվորը տեղեկացվել է իր հաստիքի հնարավոր կրճատման, այլ ոչ թե կրճատման մասին, ուստի պատասխանողը չի պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, հետևաբար ծանուցումն իրավաչափ համարվել չի կարող: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի որոշումը ստորագրված չէ, ներկայացված է պատճենի տեսքով, ինչպես նաև առկա չէ Համայնքի ավագանու կողմից կայացված որոշում, քանի որ ներկայացված որոշման եզրափակիչ մասում նշված է ոչ թե Համայնքի ավագանու անդամների, այլ Համայնքի ղեկավարի անուն-ազգանունը: Նշված որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածները, որոնցով հաստատվել են Հրազդանի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, քաղաքացիական գործի նյութերում բացակայում են, ուստի Դատարանը չէր կարող հանգել այն հետևության, որ Անահիտ Նազարյանի հաստիքը կրճատվել է: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ աշխատանքում վերականգնելու հայցվորի պահանջը ենթակա էր բավարարման: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ հայցվորի զբաղեցրած Համայնքի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի հաստիքն ըստ էության չի կրճատվել, այլ միայն անվանափոխվել է Հրազդանի քաղա-

քային համայնքի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի հարցերի բաժնի պետի հաստիքի, քանի որ երկու հաստիքներն իրենց գործառույթներով ու պարտականություններով նույնն են:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով ստորադաս դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես, Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Սեդա Մարգարյանի թիվ ԵԱԽԴ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարում վերահաստատել հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած հետևյալ դիրքորոշումը.

Հայցի առարկան այն նյութափրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա: Հայցի իրավական հիմքն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը (*տես, օրինակ, Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ

առարկյան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից (*տես, Ա/Չ Էդմոնդ Ասարյանը և Կարինե Բաղջյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն քաղաքացիական գործը հարուցվել է Անահիտ Նազարյանի կողմից ներկայացված՝ իրեն համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի պաշտոնից ազատելու մասին Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանի 01.07.2016 թվականի թիվ 39 կարգադրությունն առոչինչ և անվավեր ճանաչելու, **Համայնքի ղեկավար Արամ Դանիելյանին հայցվորի նախապատվության իրավունքն ապահովելուն** պարտավորեցնելու և նախկինում հայցվորի ենթակայության տակ գտնված, սակայն Համայնքի ավագանու 28.04.2016 թիվ 32 որոշմամբ կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վերանվանված բաժնի պետի պաշտոնին նշանակելուն պարտավորեցնելու, ինչպես նաև Համայնքից հայցվորի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապորդում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար բռնագանձելու հայցապահանջների հիման վրա: Հետևաբար սույն գործով հայցվորը պահանջել է **ապահովել իր նախապատվության իրավունքի իրացումը**՝ հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը:

Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել ոչ թե առանձին հաստիքների կրճատում, այլ աշխատակազմի վերակազմակերպում՝ նոր կառուցվածքի հաստատում, պաշտոնների անվանացանկի նոր խմբագրությամբ հաստատում, իսկ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը չէր կարող հանգել այն հետևության, որ Անահիտ Նազարյանի հաստիքը կրճատվել է:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Անահիտ Նազարյանի հաստիքի կրճատված լինելուն, արձանագրում է հետևյալը. Համայնքի ավագանու 28.04.2016 թվականի որոշման, Համայնքի ղեկավարի կողմից 28.04.2016 թվականին Անահիտ Նազարյանին հասցեագրված՝ վերջինիս հաստիքի՝ 01.07.2016 թվականից հնարավոր կրճատման վերաբերյալ ծանուցագրի, Համայնքի ղեկավարի 01.07.2016 թվականի կարգադրության բովանդակության վերլուծությունից, ինչպես նաև Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմում նախկինում գոյություն ունեցող կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ու աշխատակազմի վերակազմակերպումից հետո առկա կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետի պաշտոնների անձնագրերի բովանդակությունից բխում է, որ Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում նախկինում գոյություն ունեցող երկու բաժինները՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժինը և առողջապահության, ֆիզկուլտուրայի և

սպորտի բաժինը, դարձել են մեկ՝ կրթության, մշակույթի և սպորտի բաժին: Այլ կերպ ասած՝ կառուցվածքային փոփոխությունը հանգեցրել է բաժիններից մեկի պետի հաստիքի կրճատման: Ընդ որում, նոր ձևավորված պաշտոնը նախկինում գործող պաշտոնից տարբերվում է պաշտոնատար անձանց ենթակայությամբ և գործառության պարտականություններով: Այսինքն՝ հիմնավորվում է, որ **հաստիքների կրճատման հետևանքով ստեղծվել է նոր հաստիք**: Հետևաբար նման պայմաններում դատարանների եզրահանգումները հիմնավորված չեն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հաստիքները կրճատված լինելու պարագայում քննության առարկա պետք է դառնար հայցվորի ներկայացրած պահանջը՝ նախապատվության իրավունքի ապահովումը: Մինչդեռ Դատարանն անհիմն կերպով եզրահանգել է, որ սույն գործով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ: Վերաքննիչ դատարանը, դուրս գալով ինչպես հայցվորի ներկայացրած հայցի հիմքի և առարկայի շրջանակներից, այնպես էլ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից, գտել է, որ հաստիքների կրճատված լինելու վերաբերյալ ապացույցները պատշաճ չեն, ընդհանրապես գնահատման չի արժանացրել նախապատվության իրավունքի հարցը, եզրահանգել է, որ հայցվորի զբաղեցրած հաստիքն ըստ էության չի կրճատվել, և որոշել է հայցվորին վերականգնել աշխատանքում այն դեպքում, երբ հայցվորն ինքն է պահանջել ապահովել իր նախապատվության իրավունքը: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը թեև փաստել է, որ հաստիքների կրճատում տեղի չի ունեցել, սակայն որոշել է հայցվորին «վերականգնել» նոր ստեղծված պաշտոնում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով դատարանների կողմից պատշաճ քննություն չի իրականացվել՝ պարզելու համար հայցվորի ներկայացրած **հայցի հիմքի և առարկայի շրջանակներում** հայցի հիմնավորվածությունը, որպիսի պայմաններում առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ մասնավորապես պարզելու հայցվորի՝ սույն գործով նախապատվության իրավունք ունենալու հանգամանքը:

Միաժամանակ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ Անահիտ Նազարյանին տրված ծանուցումն իրավաչափ համարվել չի կարող, Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի տրամաբանությունից պարզ է դառնում, որ աշխատանքից ազատելու ծանուցումը տրամադրվում է աշխատանքային հարաբերությունների առկայության և ենթադրաբար կրճատման ենթակա հաստիքների գոյության պայմաններում: Հետևաբար կրճատումների մասին որոշումը կրճատվող աշխատողներին ուղարկելու (տրամադրելու) պահանջ առաջադրելով՝ Վերաքննիչ դատարանը գործատուին ծանուցեցել է օրենքով չնախատեսված պարտականությամբ:

Ինչ վերաբերում է կրճատումների մասին գործում գտնվող ապացույցների բացակայության, դրանց պատճեններ կամ ոչ պատշաճ ապացույցներ հանդիսանալու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, ապա դրանք ևս անհիմն են, քանի որ ապացույցների իսկությունը կողմերը չեն վիճարկել, ավելին՝ նրանք ընդունել են այդ ապացույցներով հաստատվող փաստերի գոյությունը և դրանք դրել իրենց պահանջների և առարկությունների հիմքում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Անահիտ Նազարյանի՝ համայնքային ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար օրենքով սահմանված

առավելագույն տարիքը լրացած լինելու պարագայում հայցն ամբողջությամբ բավարարելու հնարավորության հարցին:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում, փաստում է, որ Անահիտ Նազարյանի 65 տարին լրացած լինելու պայմաններում վերջինիս պահանջն ամբողջությամբ բավարարվել չէր կարող: Հետևաբար, եթե անգամ գործի նոր քննության արդյունքում պարզվի, որ Անահիտ Նազարյանն օրենքի խախտմամբ է աշխատանքից ազատվել, ապա վերջինս բոլոր դեպքերում չի կարող նշանակվել նոր առաջացած պաշտոնում՝ նկատի ունենալով պաշտոնավարելու համար օրենսդրական արգելք հանդիսացող առավելագույն տարիքի հասած լինելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործի նոր քննության ընթացքում պետք է պարզվի հայցվորի՝ նոր առաջացած պաշտոնում նշանակվելու նախապատվության իրավունքի առկայության կամ բացակայության հարցը, որպիսի հանգամանքի ուժով էլ վերջինիս աշխատանքից ազատելու օրինականությունն ու հարկադիր պարագայորդի գումար վճարելու պահանջի հիմնավորվածությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որի արդյունքում՝ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.08.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0075/04/15
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0075/04/15
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ա. Սմբատյան
Հ. Ենոքյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) դիմումի ընդդեմ «ՓՐԱՅՄ ԼԻԳԱ ՄԱՐԿԵՏ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2017 թվականի որոշման դեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2015 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2015 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 07.08.2017 թվականին որոշում է կայացրել կառավարչի ներկայացրած թիվ 2 միջանկյալ բաշխման ծրագիրն անփո-

փոխ թողնելու մասին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.12.2017 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.08.2017 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 80-րդ և 82-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կառավարչի վարձատրությունը հաշվարկվում է պարտատերերի բավարարված պահանջների չափից ելնելով, և վարձատրության բազան ոչ թե գույքի իրացումից ստացված ամբողջ գումարն է, այլ դրա՝ պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված մասը: Տվյալ դեպքում պարտապանի գույքի իրացումից ստացված գումարը կազմել է 45.521.910 ՀՀ դրամ, իսկ պարտատերերի պահանջների բավարարման ենթակա չափը՝ 40.557.627 ՀՀ դրամ, հետևաբար կառավարչի վարձատրության չափը ենթակա է որոշման ոչ թե գույքի իրացումից ստացված գումարի, այլ՝ պարտատերերի պահանջների բավարարման ենթակա չափից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կառավարչի վարձատրության չափի հարցը կարգավորվում է միայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով, մինչդեռ Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ և 82-րդ հոդվածների դրույթները, հանգել է ոչ իրավաչափ հետևության:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ կառավարիչն ինքն իրեն համարել է պարտատեր և իր պահանջը բավարարելու համար ևս իր կողմից վարձատրվել է որպես պարտատեր այն դեպքում, երբ սնանկության գործով կառավարիչը վարձատրվում է իր կողմից կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.12.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.07.2015 թվականի որոշմամբ Հովհաննես Եղյանը նշանակվել է Ընկերության սնանկության գործով կառավարիչ **(հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 5, 6)**.

2) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.12.2015 թվականի որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը՝ ըստ հետևյալ առաջնահերթության և ապահովվածության **(հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 7-9)**

- | | | |
|-------------------------|------------------------|-----------------------|
| 2. «Ամերիաբանկ» ՓԲԸ | - 753.851,21 ԱՄՆ դոլար | - ապահովված պահանջ |
| 3. Բանկ (պետական տուրք) | - 500.000 ՀՀ դրամ | - չապահովված «դ» հերթ |
| 4. ՀՀ ՖՆ Կենտրոն ՀՏ | - 19.677.898 ՀՀ դրամ | - չապահովված «է» հերթ |
| 5. «Ալթերեյդ-Մոֆթ» ՍՊԸ | - 659.556 ՀՀ դրամ | - չապահովված «է» հերթ |

3) Բանկի հանդեպ Ընկերության ունեցած դրամական պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավադրված՝ Երևանի Հանրապետության փողոցի թիվ 51, 53 շենքի 10-րդ և նույն շենքի 22-րդ հասցեներում գտնվող գույքը վաճառվել է ընդհանուր 45.521.910 ՀՀ դրամով (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 25, 27**).

4) սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը Դատարան է ներկայացրել իր կողմից հաստատված հետևյալ բովանդակությամբ միջանկյալ բաշխման թիվ 2 ծրագիրը՝ Բանկ (ապահովված պահանջ) - 40.557.627 ՀՀ դրամ,
Կառավարչի վարձատրություն - 4.141.753 ՀՀ դրամ,
Վարչական ծախսեր - 282.530 ՀՀ դրամ,
Վարչական աշխատողի աշխատավարձ - 540.000 ՀՀ դրամ, պահումներով՝ 408.240 ՀՀ դրամ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 11-16**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարտապանի գույքի իրացումից ստացված միջոցները բաշխելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև Նախկին օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 80-րդ և 82-րդ հոդվածները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը, վերահասարարելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում անդրադառնալ սնանկության գործով միջանկյալ բաշխման ծրագրով կառավարչի վարձատրության հաշվարկման առանձնահատկություններին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին, իսկ անդորրագրերը հանձնվում են կառավարչին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և

պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պարտատերը (պարտատերերը) բաշխման ծրագրի օրինակն ստանալու կամ հայտարարությունը հրապարակելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բաշխման ծրագրի վերաբերյալ գրավոր առարկություն է ներկայացնում դատարան, ապա դատավորն առարկությունն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է կայացնում կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագրին անփոփոխ թողնելու, փոփոխելու կամ մերժելու վերաբերյալ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, այդ թվում՝

- գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը (սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները),

- վարչական աշխատողների աշխատավարձը, եկամտային հարկի վճարումները և պարտադիր սոցիալական վճարները,

- վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը,

- պարտադիր սոցիալական վճարները,

- աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների վերաբերյալ փաստաթղթերի արխիվացման ծախսերը...:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարչի վարձատրությունը կատարվում է պարտապանի դրամական միջոցներից, պարտապանի, երրորդ անձանց գույքի վաճառքից (օտարումից) կամ ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքագրումից գոյացած միջոցներից, չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի վարձատրությունը սահմանվում է դատարանի որոշմամբ, պարտատերերի պահանջների բավարարման չափի հետևյալ տոկոսադրույքներով՝

ա) մինչև 25 միլիոն դրամ՝ 10 տոկոս.

բ) 25-50 միլիոն դրամ՝ 2.500.000 դրամին գումարած 25 միլիոն դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը.

գ) 50-75 միլիոն դրամ՝ 4.500.000 դրամին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող գումարի 7 տոկոսը.

դ) 75-100 միլիոն դրամ՝ 6.250.000 դրամին գումարած 75 միլիոն դրամը գերազանցող գումարի 6 տոկոսը.

ե) 100-500 միլիոն դրամ՝ 7.750.000 դրամին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող

գումարի 4 տոկոսը.

զ) 500 միլիոն դրամից ավելին՝ 23.750.000 դրամին գումարած 500 միլիոն դրամը գերազանցող գումարի 3 տոկոսը:

ՀՀ վճարելի դատարանը, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «ՓՐԱՅՄ ԼԻԳԱ ՄԱՐԿԵՏ» ՓԲԸ-ի գործով որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավական նորմերի մեկնաբանությանը, արձանագրել է, որ սնանկության գործով կառավարչի կողմից պարտապանին պատկանող գույքի վաճառք իրականացնելուց հետո դրանից ստացված միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին, որոնք բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան:

Մինևույն ժամանակ օրենսդիրը որոշակի բացառություն է կատարել այն գույքի վաճառքն իրականացնելուց հետո ստացված միջոցների բաշխման մասով, որը գրավ է դրվել սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների դիմաց՝ արձանագրելով, որ նման գույքի վաճառքի դեպքում ստացված միջոցներից արտահերթ վճարվում են միայն գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը, որից բխում է, որ մնացած գումարն ուղղվում է ապահովված պահանջի բավարարմանը: Ավելին՝ օրենսդիրն արտահերթ վճարման ենթակա ծախսերի մեջ որպես վարչական ծախս ներառել է միայն գրավի առարկա գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը՝ բացառելով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում նշված՝ մնացած վարչական ծախսերի, այդ թվում՝ գույքի տնօրինման համար անհրաժեշտ ծախսերի (սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները), վարչական աշխատողների աշխատավարձի, եկամտային հարկի վճարումների և պարտադիր սոցիալական վճարների, վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերի, պարտադիր սոցիալական վճարների, աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների վերաբերյալ փաստաթղթերի արխիվացման ծախսերի ներառումը վարչական ծախսերի մեջ:

Նույն որոշմամբ ՀՀ վճարելի դատարանը նշել է, որ կառավարչի վարձատրությունը կատարվում է պարտապանի դրամական միջոցներից, պարտապանի, երրորդ անձանց գույքի վաճառքից (օտարումից) կամ ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքագրումից գոյացած միջոցներից՝ չներառելով գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների գումարը: Ընդ որում, վարձատրության չափը սահմանվում է դատարանի որոշմամբ՝ ելնելով պարտատերերի պահանջների բավարարման չափից որոշակի տոկոսադրույքներով: Այսինքն՝ տվյալ դեպքում կառավարչի վարձատրության չափն անմիջականորեն կախվածության մեջ է գտնվում միայն պարտատերերի բավարարված պահանջների չափից, և վարձատրության չափը որոշելիս պետք է պարզել, թե որ պարտատերերի պահանջներն են բավարարվել և ինչ չափով:

Մինևույն ժամանակ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ինչպես սնանկության կառավարիչը՝ իրեն տրվելիք վարձատրության գումարի մասով, այնպես էլ վարչական ծախսերի հասցեատերերը՝ դրանց դիմաց իրենց տրվելիք հատուցման մասով, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով նույն որոշման մեջ նշված պատճառաբանությամբ պարտատերեր (պահանջատերեր) չեն, իսկ սնանկության կառավարչին հասանելիք վարձատրության գումարը և վարչական ծախսերի հասցեատերերին վճարվելիք հատուցումները չեն կարող

դիտվել պահանջի բավարարում ու այդ գումարների դիմաց կառավարչին տրվել վարձատրություն:

Դրանից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ կառավարչի վարձատրության չափը պետք է որոշվի հետևյալ կերպ.

Նկատի ունենալով այն, որ ի սկզբանե կառավարչին հայտնի են միայն պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված միջոցների գումարը և վարչական ծախսերի չափը, իսկ գրավադրված գույքի դեպքում՝ միայն դրա պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի չափը, ապա այդ միջոցներից պետք է հանել համապատասխան վարչական ծախսերը: Դրանից հետո ստացված գումարի մի մասը պետք է ուղղվի պարտատիրոջ պահանջների բավարարմանը և կառավարչի վարձատրությանը:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը եկել է հետևության, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի դեպքում հաշվարկը պետք է կատարել հետևյալ բանաձևով՝

$$ՄՀ = ՎԾ + \text{ՊԳ} + \text{ԿՎ}$$

Որտեղ «ՄՀ»-ն պարտապանի դրամական միջոցների, պարտապանի և երրորդ անձանց գույքի վաճառքից կամ ակտիվների հավաքագրումից ստացված **միջոցների հանրագումարն** է,

«ՎԾ»-ն՝ համապատասխան **վարչական ծախսերը**,

«ՊԳ»-ն՝ **պարտատերերի պահանջների** բավարարմանն ուղղվելիք **գումարի** չափը,

«ԿՎ»-ն՝ **կառավարչի վարձատրության չափը**, որի բանաձևն է՝

$$\text{ԿՎ} = \text{ՊԳ} \times 10\%$$

Կառավարչի վարձատրությունը պետք է որոշվի **պարտատիրոջ պահանջների բավարարման չափից համապատասխան տոկոսադրույքի չափով**: Նկատի ունենալով, որ ի սկզբանե այդ գումարն անհայտ է, որոշակի բարդություն կարող են ներկայացնել այն դեպքերը, երբ ստացված միջոցները կազմում են այնպիսի գումար, երբ առերևույթ, առանց հաշվարկի հնարավոր չէ պարզել, թե «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված որ կետն է գործելու:

Այս դեպքի համար ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրն արդեն իսկ կատարել է այդ հաշվարկը: Հիմք ընդունելով վերոնշյալ հոդվածի կարգավորումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ.

1) եթե «ՄՀ-ՎԾ»-ն փոքր է 27.500.000 ՀՀ դրամից (25.000.000+2.500.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի հաշվարկը,

2) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 27.500.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 54.500.000 ՀՀ դրամից (50.000.000+4.500.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի հաշվարկը,

3) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 54.500.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 81.250.000 ՀՀ դրամից (75.000.000+6.250.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի հաշվարկը,

4) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 81.250.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 107.750.000 ՀՀ դրամից (100.000.000+7.750.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի հաշվարկը,

5) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 107.750.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան և միաժամանակ փոքր է 523.750.000 ՀՀ դրամից (500.000.000+23.750.000), ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետի հաշվարկը,

6) եթե «ՄՀ-ՎԾ»-ն մեծ է 523.750.000 ՀՀ դրամից կամ հավասար է դրան, ապա կիրառվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «զ» կետի հաշվարկը:

Ընդ որում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի «բ-զ» կետերի դեպքում գործում է նույն սկզբունքը, ինչ նույն մասի «ա» կետի դեպքում, պարզապես ստացված միջոցներից հանվում են նաև օրենքով սահմանված վարձատրության հստակ չափերը (այն է՝ «բ» կետի դեպքում՝ 2.500.000 ՀՀ դրամը, «զ» կետի դեպքում՝ 4.500.000 ՀՀ դրամը և այլն):

Օրինակ, եթե «ՄՀ-ՎԾ»-ը հավասար է 28.000.000 ՀՀ դրամի, ապա կառավարչի վարձատրությունը հաշվելու համար նախ 28.000.000 ՀՀ դրամից պետք է հանել 2.500.000 ՀՀ դրամը: Ստացված 25.500.000 ՀՀ դրամը գերազանցում է 25.000.000 ՀՀ դրամը 500.000 ՀՀ դրամով: Հետևաբար կառավարչի վարձատրությունը պետք է հաշվվի հետևյալ կերպ.

$$\text{քայլ 1՝ } x + x \times 8\% = 500.000$$

(որտեղ x -ը «ՊԳ»-ն է՝ պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղվող գումարի չափը, $x \times 8\%$ -ը «ԿՎ»-ն՝ կառավարչի վարձատրության չափը),

$$\text{քայլ 2՝ } x + x \times \frac{8}{100} = 500.000,$$

$$\text{քայլ 3՝ } \frac{100 \times x + 8 \times x}{100} = 500.000,$$

$$\text{քայլ 4՝ } \frac{108 \times x}{100} = 500.000,$$

$$\text{քայլ 5՝ } 108 \times x = 500.000 \times 100,$$

$$\text{քայլ 6՝ } 108 \times x = 50.000.000,$$

$$\text{քայլ 7՝ } x = \frac{50.000.000}{108},$$

$$\text{քայլ 8՝ } x = 462.963$$

Այսինքն՝ 500.000 ՀՀ դրամից պարտատերերին ուղղվող գումարի չափը կկազմի 462.963 ՀՀ դրամ, որից 8%-ը՝ 37.037 ՀՀ դրամը, կուղղվի կառավարչի վարձատրությանը: Հետևաբար 28.000.000 ՀՀ դրամ գումարից պարտատերերին կուղղվի 25.462.963 ՀՀ դրամ (25.000.000+462.963), իսկ կառավարչին՝ 2.537.037 ՀՀ դրամ (2.500.000+37.037) (տե՛ս, թիվ ԵԿԳ/0075/04/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի հանդեպ Ընկերության ունեցած դրամական պարտավորության կատարումն ապահովելու նպատակով գրավադրված գույքը վաճառվել է ընդհանուր 45.521.910 ՀՀ դրամով: Մասնկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը Դատարան է ներկայացրել իր կողմից հաստատված հետևյալ բովանդակությամբ միջանկյալ բաշխման թիվ 2 ծրագիրը՝

Բանկ (ապահովված պահանջ) – 40.557.627 ՀՀ դրամ,
Կառավարչի վարձատրություն – 4.141.753 ՀՀ դրամ,
Վարչական ծախսեր – 282.530 ՀՀ դրամ,
Վարչական աշխատողի աշխատավարձ – 540.000, պահումներով՝ 408.240 ՀՀ դրամ:

Դատարանը, քննության առնելով կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման թիվ 2 ծրագրի դեմ Կոմիտեի բերած առարկությունը, 07.08.2017 թվականին որոշում է կայացրել միջանկյալ բաշխման ծրագիրն անփոփոխ թողնելու մասին՝ պատճառաբանելով նաև, որ կառավարչի վարձատրության չափի հաշվարկը կատարվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ բավարարվող պահանջի չափի մեջ ներառելով նաև պարտատերերի պահանջների բավարարման չափի՝ օրենքով սահմանված համապատասխան տոկոսը՝ նկատի ունենալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պահանջը:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «մասնկության գործով կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագրում ընդգրկված կառավարչի վարձատրության չափի հաշվարկը կատարվել է համապատասխան իրավանքների դրույթների պահպանմամբ», «կառավարչի վարձատրության գումարը, որպես չապահովված պահանջ, ընդգրկվում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» հերթում: Այսինքն, չնայած բողոք բերած անձի փաստարկների, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» հերթում ընդգրկվող կառավարչի վարձատրության գումարի չափը հաշվարկվում է նույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնների պահպանմամբ», ու գտնելով, որ «միջանկյալ բաշխման ծրագիրը կազմվել է վերոգրյալ իրավանքների դրույթների պահպանմամբ», Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 07.08.2017 թվականի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, վաճառված գույքը՝ բաղկացած երկու միավորից, հանդիսացել է գրավի առարկա: Դրա իրացումից ստացված ընդհանուր 45.521.910 ՀՀ դրամը բավարար չէ ապահովված պարտատեր Բանկի պահանջն ամբողջովին բավարարելու համար՝ հաշվի առնելով հաստատված պահանջների վերջնական ցուցակում նշված Բանկի պահանջի չափը: Նման պայմաններում միջանկյալ բաշխման ծրագիրը պետք է կազմվեր այնպես, որ այդ գույքի վաճառքն իրականացնելուց հետո ստացված միջոցներից արտահերթ պետք է վճարվեին վարչական ծախսերից միայն գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, այնուհետև կառավարչի վարձատրությունը՝ դրա մեջ չներառելով գույքի իրացումից ծագած հարկային պարտավորությունների գումարը, և ապա Բանկի ապահովված պա-

հանջը: Տվյալ դեպքում, քանի որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իմաստով տվյալ գույքի մասով միակ պարտատերը (ապահովված պարտատերը) Բանկն է, ուստի կառավարչի վարձատրության չափն անմիջականորեն պետք է կախվածության մեջ դրվեր միայն այն հանգամանքից, թե ինչ չափով է բավարարվում Բանկի պահանջը:

Դրա հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջանկյալ բաշխման ծրագիրը պետք է կազմվեր այնպես, որ՝

1) առաջին հերթին վճարման ենթակա լինեին գրավի առարկա գույքի պահմանման և փոխանցման հետ կապված ծախսերը՝ բացառելով մնացած վարչական ծախսերը դրանց մեջ ներառելը.

2) երկրորդ հերթին վճարման ենթակա լինեին կառավարչի վարձատրության գումարը՝ այն հանգամանքի հաշվառմամբ, թե ինչ չափով է բավարարվելու միակ պարտատեր Բանկի ապահովված պահանջը 1-ին կետում նշված գումարը վճարելուց հետո՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ սահմանված հաշվարկը,

3) երրորդ հերթին վճարման ենթակա լինեին Բանկի պահանջը:

Մինչդեռ գրավի առարկա գույքի իրացումից ստացված 45.521.910 ՀՀ դրամից՝

1) 282.530 ՀՀ դրամը նշվել է որպես վարչական ծախս վճարման ենթակա գումար, որը բացի օրենքով նախատեսված վարչական ծախսերից, ներառում է նաև այլ ծախսեր (հիմք՝ հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 15-ում առկա թիվ 2 հավելվածը).

2) 540.000 ՀՀ դրամը՝ որպես վարչական աշխատողների աշխատավարձ վճարման ենթակա գումար (հիմք՝ հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 16-ում և գ.թ. 17-ում առկա թիվ 3 և թիվ 4 հավելվածները)՝ առանց նշելու, թե որքանով են այդ վարչական աշխատողների ստանձնած աշխատանքային պարտականություններն առնչվում վճարման ենթակա միակ վարչական ծախս՝ գույքի պահպանման և փոխանցման հետ, ու ներկայացնելու ապացույցներ այդ պարտականությունները կատարված լինելու վերաբերյալ.

3) 4.141.753 ՀՀ դրամը՝ որպես կառավարչի վարձատրություն վճարման ենթակա գումար (հիմք՝ հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 14-ում առկա թիվ 1բ հավելվածը)՝ անտեսելով այն, որ նշված գումարի չափը կազմում է պարտատիրոջ բավարարվելիք պահանջի շուրջ 10,2 տոկոսն այն դեպքում, երբ նման հաշվարկը հակասում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հաշվարկին.

4) 40.557.627 ՀՀ դրամը՝ որպես ապահովված պահանջատեր Բանկին վճարման ենթակա գումար (հիմք՝ հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 13-ում առկա թիվ 1ա հավելվածը)՝ վերջինիս պակաս վճարելով նրան հասանելիք գումարից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 80-րդ և 82-րդ հոդվածները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ Նախկին օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 21.12.2017 թվականի որոշումը բեկանելու և գործը՝ Հնկերության սնակության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ներկայացրած թիվ 2 միջանկյալ բաշխման ծրագիրը քննարկելու մասով, նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 09.02.2018 թվակա-

նին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.12.2017 թվականի որոշումը և գործը՝ «ՓՐԱՅՄ ԼԻԳԱ ՄԱՐԿԵՏ» ՓԲԸ-ի սնակության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ներկայացրած միջանկյալ բաշխման թիվ 2 ծրագիրը քննարկելու մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0010/04/15
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0010/04/15
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան
Դատավորներ՝ Ա. Խառատյան
Կ. Հակոբյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի ՀՀ ֆինանսների նախարարության Աշտարակի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ «Մակորշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 04.02.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.04.2016 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 09.02.2017 թվականի «Մասնկության գործով միջոցների բաշխման միջանկյալ ծրագրի դեմ պարտատիրոջ առարկությունների քննության վերաբերյալ» որոշմամբ Բանկի առարկությունների քննարկման արդյունքում Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիրոսյանի կողմից հաստատված և 13.01.2017 թվա-

կանին Դատարան ներկայացված՝ պարտապանի միջոցների միջանկյալ բաշխման ծրագիրը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2017 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.02.2017 թվականի «Մասնկության գործով միջոցների բաշխման միջանկյալ ծրագրի դեմ պարտատիրոջ առարկությունների քննության վերաբերյալ» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կառավարչի օգնականի աշխատավարձը չի կարող ներառվել միջանկյալ բաշխման ծրագրում, քանի որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են միայն **գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:**

Թեև Բանկը քվեարկել է օգնականի հաստիքի նախատեսման օգտին, սակայն դրանից չի հետևում, որ կառավարիչը պետք է օգնականի վարձատրությունը նախատեսի գրավադրված գույքի վաճառքից ստացված գումարի հաշվին, քանի որ օրենքով դա ուղղակիորեն արգելված է, հետևաբար նշված գումարը բաշխման ծրագրով նախատեսելը հակասում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքին:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է, որ Դատարանը չի կատարել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, հակառակ պարագայում ակնհայտ կդառնար, որ սնանկության գործով կառավարչի կողմից գույքի պահպանության նպատակով կնքված աշխատանքային պայմանագրերն անվավեր են, քանի որ չեն կնքվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված պայմանների պահպանմամբ: Բացի այդ, դրանք ձևական բնույթ են կրում, քանի որ թեև պայմանագրերում սահմանված է, որ աշխատողը պարտավորվում է վերահսկել գույքի պահպանության վայրը և թույլ չտալ այլ անձանց մուտքը պահպանվող տարածք, սակայն տվյալ դեպքում կառավարիչն անօրինական կերպով վարձակալության է հանձնել գրավադրված գույքը՝ առանց գրավառուի համաձայնության, այդ ընթացքում տարածք է մուտք գործել վարձատու, ով այդ իրավունքը չի ունեցել: Ավելին, վարձակալության հանձնելու ժամանակահատվածի համար պահպանությունը պետք է իրականացվեր վարձակալի կողմից, ուստի հաշվարկված գումար

ընթացակա չէր հաստատման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի կողմից 13.01.2017 թվականին Դատարան ներկայացված «Բաշխման մասին հաշվետվության» (այսուհետ՝ Հաշվետվություն) համաձայն՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող և Բանկում գրավադրված HZS-60 բետոնահանգույցը Դատարանի 26.07.2016 թվականի որոշմամբ կրկնաճուրղով վաճառվել է 55.868.500 ՀՀ դրամով: Ընկերության սնանկության գործով հատուկ հաշվին առկա է 57.426.185 ՀՀ դրամ (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 14**).

2) Հաշվետվությանը կից միջանկյալ բաշխման ծրագրի համաձայն՝ 56.303.827 ՀՀ դրամ բաշխվող գումարից 3.160.000 ՀՀ դրամը հաշվարկվել է որպես վարչական ծախս, այդ թվում՝ 600.000 ՀՀ դրամ՝ տարածքի վարձակալության գումար, 1.980.000 ՀՀ դրամ՝ գույքի պահպանության գումար, 480.000 ՀՀ դրամ՝ վարչական աշխատողի ծախս, 100.000 ՀՀ դրամ՝ այլ ծախսեր: Բանկի պահանջի մասնակի մարմանն է ուղղվել 46.779.069 ՀՀ դրամ: Բաշխման ծրագրի Հավելված 3-ի համաձայն՝ գույքի պահպանության իրականացման համար պայմանագրեր են կնքվել 2 պահակների հետ, որոնց համար 9 ամսվա ընթացքում հաշվարկվել է 1.980.000 ՀՀ դրամ աշխատավարձ: 21.04.2016 թվականին տեղի ունեցած պարտատերերի ժողովում հաստատվել է կառավարչի օգնականի հաստիք՝ ամսական 80.000 ՀՀ դրամով և 6 ամսվա համար հաշվարկվել է 480.000 ՀՀ դրամ աշխատավարձ (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 15-16**):

3) 23.05.2016 թվականի Ընկերության պարտատերերի 1-ին ժողովի արձանագրության համաձայն՝ որոշվել է հաստատել կառավարչի օգնականի հաստիք՝ 80.000 ՀՀ դրամ աշխատավարձով: Քվեարկությանը կողմ է քվեարկել նաև Բանկի ներկայացուցիչը (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 20-23**):

4) 12.04.2016 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանն աշխատանքային պայմանագրեր է կնքել Գագիկ Աղաջանյանի և Արթուր Մանուկյանի հետ: Այդ պայմանագրերի համաձայն՝ վերջիններս ստանձնել են Ընկերությանը պատկանող՝ Երևանի Արին Բերդ 6 հասցեում գտնվող գույքի պահպանությունը՝ ամսական 110.000 ՀՀ դրամ աշխատավարձի դիմաց (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 10, 12**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտի-

կա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանների կողմից «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը պարտապանի գրավադրված գույքի իրացումից սրացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի վճարում, կառավարչի վարձատրություն և ապահովված պարտավորոջ պահանջների ամբողջությամբ բավարարում չկատարելու պայմաններում իրավասու է այդ միջոցներն ուղղելու այլ վճարների կատարմանը:

Վերոգրյալի համատեքստում քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հերկյալ պարճատարանությամբ.

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են նույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, այդ թվում՝

- գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը (սնանկության դիմումը ներկայացնելու օրվանից մինչև ֆինանսական առողջացման ծրագրի նախագծի հաստատումն ընկած ժամանակահատվածում ֆինանսավորումները),

- վարչական աշխատողների աշխատավարձը, եկամտային հարկի վճարումները և պարտադիր սոցիալական վճարները,

- վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը,

- պարտադիր սոցիալական վճարները,

- աշխատավարձի, եկամտային հարկի և պարտադիր սոցիալական վճարների վերաբերյալ փաստաթղթերի արխիվացման ծախսերը:

Վերը նշված հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները բաշխվում են համապատասխան հերթակա-
նությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Ըստ որում, չապահովված պահանջների բավարարման հերթականության մեջ առաջնահերթության կարգով բավարարվում է կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, **իսկ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:** Այսինքն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրա-

վաղրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխումը բացառվում է, քանի դեռ չեն վճարվել **գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը**: Ընդ որում, օրենսդիրը տարբերակում է մտցրել ապահովված և չապահովված պարտատերերի պահանջների բավարարման հարցում՝ գրավաղրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխումն **առաջնահերթ** նախատեսելով ավելի նեղ շրջանակի համար:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, սնանկության վարույթում պարտապանի գրավաղրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի, ինչպես նաև կառավարչի վարձատրության արտահերթ վճարում նախատեսելով, ըստ էության նպատակ է հետապնդել կանոնակարգելու պարտապանի պարտավորությունների դիմաց գրավաղրված գույքի իրացումից ստացված միջոցների վճարումը՝ դրանով իսկ սահմանելով հերթականություն՝ պարտապանի գրավաղրված գույքի և այլ ակտիվների իրացման արդյունքում դրամական բավարարում ստանալու իրավունք ունեցող անձանց համար: Այսինքն՝ քանի դեռ չեն վճարվել պարտապանի գրավաղրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները, այլ պահանջների բավարարում կամ ծախսերի հատուցում չի կարող իրականացվել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությանը պատկանող և Բանկում **գրավաղրված** գույքը վաճառվել է 55.868.500 ՀՀ դրամով: Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի կողմից Դատարան ներկայացված միջանկյալ բաշխման ծրագրի համաձայն՝ որպես վարչական ծախս հաշվարկվել է 3.160.000 ՀՀ դրամ, որից՝ 480.000 ՀՀ դրամ՝ որպես կառավարչի օգնականի աշխատավարձ: Բանկի պահանջի մասնակի մարմանն է ուղղվել 46.779.069 ՀՀ դրամ:

Դատարանը, Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի կողմից հաստատված և 13.01.2017 թվականին Դատարան ներկայացված պարտապանի միջոցների միջանկյալ բաշխման ծրագիրն անփոփոխ թողնելով, պատճառաբանել է, որ Բանկը պարտատերերի առաջին ժողովում գրավաղրված գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերի, այդ թվում՝ կառավարչի օգնականի վարձատրության վերաբերյալ, իր համաձայնությունն է տվել, որն արտահայտվել է տվյալ հարցի քվեարկությանը մասնակցելով և քվեարկության արդյունքում ժողովի համապատասխան որոշման ընդունմամբ:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ 21.04.2016 թվականին տեղի ունեցած պարտատերերի ժողովում Բանկը կողմ է քվեարկել կառավարչի օգնականի հաստիքի սահմանման համար, ինչի արդյունքում էլ հաստատվել է կառավարչի օգնականի հաստիքը՝ ամսական 80.000 ՀՀ դրամ աշխատավարձով: Ավելին, Բանկը, տեղյակ լինելով, որ Ընկերությանը պատկանող բոլոր գույքերը, շրջանառու և դրամական միջոցներն ամբողջությամբ գրավաղրված են Բանկում, կողմ է քվեարկել օգնականի հաստիք սահմանելու առաջարկությանը՝ չներկայացնելով որևէ առարկություն կամ վերապահում:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նշված հոդվածում ամրագրված է իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ օրինականության սկզբունքը: Օրինականության սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքների վրա, այլ խոսքով՝ Սահմանադրությունը կամ օրենքը պետք է լիազորի պետական մարմին գործելու կամ չգործելու:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին *(տե՛ս, Ալվարո Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների և մյուսների թիվ ԿԴՅ03/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում հաշվի չեն առել այն հանգամանքը, որ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ինչպես նաև բավարարվում են ապահովված պարտատիրոջ պահանջները: Այսինքն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխումն **այլ ուղղություններով բացառվում է, քանի դեռ չեն վճարվել գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը և կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները**: Սույն գործի պարագայում Ընկերությանը պատկանող և Բանկում գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցները՝ 55.868.500 ՀՀ դրամը, ամբողջությամբ պետք է ուղղվեին գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսեր հատուցելուն, կառավարչին վարձատրելուն և ապահովված պարտատիրոջ պահանջներն **ամբողջությամբ** բավարարելուն, ինչը տեղի չի ունեցել: Փոխարենը, Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանը, գրավադրված գույքի իրացումից

ստացված միջոցներից բաշխում է նախատեսել նաև կառավարչի օգնականի վարձատրության համար, ինչը հաստատվել է դատարանների կողմից, այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրությունը նման կարգավորում չի նախատեսել և դրա կիրառումը հակասում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Հետևաբար անգամ Բանկի կողմից պարտատերերի ժողովին առարկություն չներկայացնելը չէր կարող արգելք հանդիսանալ դատարանների համար՝ առաջնորդվելու օրինականության սկզբունքով և կիրառելու «Մասնկության մասին» ՀՀ օրենքով հստակ կերպով սահմանված կարգավորումը՝ գրավադրված գույքից ստացված միջոցների բաշխման ուղղությունների վերաբերյալ, ուստի Բանկի բողոքն այս հիմքով հիմնավոր է:

2) վճարեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության սնանկության գործով կառավարչի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագրով սահմանված 3.160.000 ՀՀ դրամ վարչական ծախսերի մեջ ներառվել է նաև 1.980.000 ՀՀ դրամ գույքի պահպանության գումար՝ հիմք ընդունելով կառավարչի կողմից Գագիկ Աղաջանյանի և Արթուր Մանուկյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրերով սահմանված վարձատրությունը:

Դատարանը գտել է, որ Բանկը գրկված չէ պայմանագրերը վիճարկելու հնարավորությունից, իսկ պայմանագրերի անվավերության և այդ հիմքով վճարումներ կատարելու իրավական արգելքների մասին Բանկի փաստարկները ենթադրական են: Դատարանը պատճառաբանել է, որ կառավարիչը ներկայացրել է աշխատանքային պայմանագրերը և դրա հիման վրա կատարված վճարումների վերաբերյալ հաշվարկները, ուստի ներկայացված ծրագիրը բխում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, գտել է, որ կառավարչի կողմից ներկայացվել են գույքի պահպանման նպատակով պահակների հետ կնքված աշխատանքային պայմանագրեր, աշխատողների հետ վճարումներ կատարելու փաստը հավաստող ապացույցներ, որպիսի ծախսերը ենթակա են վճարման պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցների հաշվին: Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ նշված աշխատանքային պայմանագրերը կնքվել են աշխատանքային օրենսդրության պահանջների խախտմամբ, ուստի անվավեր են, Վերաքննիչ դատարանն այն համարել է անհիմն, քանի որ այդ պայմանագրերն օրենքով սահմանված կարգով չեն վիճարկվել, անվավեր չեն ճանաչվել:

Անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճարեկ դատարանը փաստում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդ-

վածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, **քննվում են նույն սնանկության գործի շրջանակում**: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված կարգավորումը չի ենթադրում ցանկացած հարցի քննություն սնանկության գործի շրջանակում, եթե նման **պահանջ** դատարանին չի ներկայացվել: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքային պայմանագրերն օրենքով սահմանված կարգով չեն վիճարկվել, որպիսի պայմաններում դրանք չեն կարող անվավեր համարվել միջանկյալ բաշխման ծրագրի քննության ժամանակ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկայակոչված պայմանագրերի կնքումը նպատակ է հետապնդել պահպանելու գրավադրված գույքը, հետևաբար Ընկերության պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման հետ կապված ծախսերը, ինչպիսին հանդիսացել են երկու պահակներին վճարված աշխատավարձերը, իրավաչափ են և բխում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Հետևաբար Բանկի բողոքն այն հիմքով, որ դատարանների կողմից այս մասով պատշաճ քննություն չի իրականացվել, հիմնավոր չէ: Ուստի չի հիմնավորվում այս հիմքով դատական սխալի առկայությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 10.05.2017 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու և գործը՝ կառավարչի օգնականի վարձատրությունը միջանկյալ բաշխման ծրագրում ներառելու հարցը քննարկելու մասով, նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2017 թվականի որոշման՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 09.02.2017 թվականի որոշումը՝ վարչական աշխատողին 480.000 ՀՀ դրամ վճարելու մասով «Մակրոշին» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հենրիկ Մարտիկյանի ներկայացրած միջանկյալ բաշխման ծրագիրն անփոփոխ թողնելու մասով, օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով գործն ուղարկել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0078/04/17
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0078/04/17

Նախագահող դատավոր՝ Մ. Հարթենյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Գ. Խանդանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Էտտո Քիդա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Ընկերության՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է Ընկերությանը սնանկ ճանաչել:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Նարինյան) (այսուհետ՝ Դատարան) 20.03.2017 թվականի որոշմամբ դիմումը վարույթ է ընդունվել:

Դատարանի 04.04.2017 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Արամայիս Իսպիրյանը:

Դատարանի 08.06.2017 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.09.2017 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառա-

վարիչ Արամայիս Իսպիրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 08.06.2017 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսել է սնանկության գործով ժամանակավոր կառավարչի վարձատրության հստակ կարգ, ինչը սույն պարագայում պետք է տեղի ունենար պարտապանի հաշվին, քանի որ Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ Ընկերության, վերջինիս տնօրենի, գույքի և հաշվապահական փաստաթղթերի հայտնաբերման ուղղությամբ, որի արդյունքում հայտնաբերվել են Ընկերության տնօրենի բնակության և Ընկերության գործունեության հասցեները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2017 թվականի որոշումը և «դատական ակտ կայացնելու միջոցով պարտավորեցնել Ընկերությանը վճարելու սնանկության գործով կառավարչի վարձատրությունը՝ սկսած 04.04.2017 թվականից մինչև վճռի ուժ ստանալը»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանը, ղեկավարվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 1-ին մասով, 19.04.2017 թվականին որոշում է կայացրել պարտապան Ընկերության, տնօրենի, գույքի և հաշվապահական փաստաթղթերի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին (**Հավելված հատոր 1-ին, գ.թ. 49-50**).

2) Դատարանը, հաշվի առնելով Ընկերության կողմից Դատարան առարկություն ներկայացնելու հանգամանքը, 18.05.2017 թվականի որոշմամբ նշանակել է դատական նիստ (**Հավելված հատոր 1-ին, գ.թ. 65**).

3) Դատարանը 08.06.2017 թվականի վճռով մերժել է Կոմիտեի դիմումը՝ միաժամանակ անդադարադադար դատական ծախսերին և ժամանակավոր կառավարչի վարձատրությանը (**Հավելված հատոր 1-ին, գ.թ. 79-81**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ

տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադրանալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *արդյո՞ք անանկության ժամանակավոր կառավարիչն ունի պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը բողոքարկելու իրավունք,*

2) *արդյո՞ք առաջանում է անանկության ժամանակավոր կառավարչի վարձարության հարց այն դեպքերում, երբ անանկության հիմքերի վերանալու պայմաններում կայացվել է անանկության դիմումը մերժելու մասին վճիռ:*

1) 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Kreuz v. Poland* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յուեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Եվրոպական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և **եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն** (յոեն, *օրինակ, Khalfaoui v. France* գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետեր 35-36, *Papon v. France* գործով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ **օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը** (յոեն, *Dumitru Gheorghe v. Romania* գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, **որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է:** Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յոեն, *Սուսաննա Արարայրի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրզոյանի Միրզոյանի թիվ ԱՐԱԴ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ կետի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: (...) Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը կարող են բողոքարկել **պարտապանը, պարտատերը (պարտատերերը):**

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի լույսի ներքո մեկնաբանելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին դատարանի վճիռը վերաբերում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայությանը կամ բացակայությանը: Տվյալ իրավահարաբերությունում շահագրգիռ անձինք են միայն պարտապանը և պարտատերը, այլ կերպ ասած՝ այն հարցը, թե արդյոք պարտապանը կճանաչվի սնանկ, թե՛ ոչ, անդրադառնում է միայն պարտապանի և պարտատիրոջ իրավունքներին: Հետևաբար օրինաչափ և արդարացված է օրենսդրի մոտեցումն այն մասին, որ նշված դատական ակտը կարող են բողոքարկել միայն պարտապանը և պարտատերը (պարտատերերը):

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ որոշակի դեպքերում դատարանի վճիռը կարող է բողոքարկվել սնանկության ժամանակավոր կառավարչի կողմից այն դեպքում, երբ վճիռն ուղղակիորեն անդրադառնում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին: Մասնկության ժամանակավոր կառավարչի կողմից վճիռը բողոքարկելու նման իրավունք ծագում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում: Այսպես, նշված նորմի համաձայն, եթե դիմումը դատարան ներկայացնելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց, կամ նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված հիմքերը վերանում են, ապա **դիմումը մերժելու մասին վճռով** դատարանը պարտավորեցնում է պարտապանին փոխհատուցել դատական ծախսերը և **վճարել ժամանակավոր կառավարչի վարձատրությունը:**

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ կայացվում է կամ այն դեպքում, երբ դիմումը դատարան ներկայացնելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց, կամ այն դեպքում, երբ դիմումը դատարան ներկայացնելուց հետո «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված հիմքերը վերանում են: Նշված դեպքերում սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռն անմիջականորեն առնչվում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին այնքանով, որքանով կարգավորում է նաև վերջինիս վարձատրության հարցը: Հետևաբար սնանկության ժամանակավոր կառավարչին բողոքարկման իրավունք չտրամադրելը կխախտեր վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարր հանդիսացող բողոքարկման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թեև ընդհանուր կանոնի համաձայն՝ սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռը, սակայն այդ սահմանափա-

կումը չի վերաբերում այն դեպքին, երբ վճիռն ուղղակիորեն վերաբերում է սնանկության ժամանակավոր կառավարչի իրավունքներին, մասնավորապես՝ վերջինիս վարձատրություն ստանալու իրավունքին: Ընդ որում, անգամ այդ դեպքում սնանկության ժամանակավոր կառավարիչը չի կարող բողոքարկել վճիռը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի և անվճարունակության հատկանիշների առկայության կամ բացակայության հիմքով:

2) «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումը վարույթ ընդունելու մասին դատավորը կայացնում է որոշում: Դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ՝ նույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով, **դատարանը՝ նշանակում է սնանկության ժամանակավոր կառավարիչ:** (...)

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության ժամանակավոր կառավարիչը՝

ա) միջնորդություն է ներկայացնում դատարան՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված սահմանափակումների կիրառման համար.

բ) մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահն իրականացնում է նույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «ե», «զ» և «ժա.1» կետերով նախատեսված լիազորությունները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով և նույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «ե», «զ» և «ժա.1» կետերով սահմանված են սնանկության ժամանակավոր կառավարչի լիազորությունները: Մասնավորապես՝ սնանկության ժամանակավոր կառավարչի միջնորդությամբ դատարանի որոշմամբ կարող է կիրառվել պարտապանի կամ նրա տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ցանկացած անհրաժեշտ սահմանափակում, եթե դրանց չկիրառման արդյունքում կարող է էապես նվազել պարտապանի գույքը, սնանկության ժամանակավոր կառավարիչն է կազմակերպում գույքագրում, միջոցներ ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար, վերլուծում պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում, օրենքով սահմանված կարգով դիմում շարժական գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները գրանցելու համար:

Վերը նշված հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սնանկության ժամանակավոր կառավարչին թեև վերապահված են սահմանափակ լիազորություններ, ինչպիսիք են գույքագրման կազմակերպումը, պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար միջոցների ձեռնարկումը, պարտապանի ֆինանսական վիճակի, սնանկության պատճառների, պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեության և ապրանքային շուկայում նրա դրության վերլուծումը, այնուամենայնիվ դատարանի կողմից որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակվելիս վերջինիս համար արդեն իսկ ծագում է վարձատրության իրավունքը, որը պետք է իրացվի պարտապանի միջոցների հաշվին վերը թվարկված սահմանափակ լիազորություններն իրականացնելիս կամ այն դեպքում, երբ սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարան ներկայացնելուց հետո մերժվում է:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանի անվճարունակությունը դադարելու կամ

սնանկության հիմքերը վերանայու դեպքերում սնանկության դիմումը մերժելու մասին վճիռ կայացնելու պայմաններում սնանկության ժամանակավոր կառավարչին վարձատրություն վճարելու պարտականությունը պարտապանի վրա դնելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովելու սնանկության վարույթի օբյեկտիվությունը և մասնակիցների միջև շահերի հավասարակշռումը, քանի որ վերը նշված դեպքերում օրենքի ուժով ծագում է սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունքը, որը չի կարող կատարվել պարտատիրոջ հաշվին, այլապես կստացվի մի իրավիճակ, երբ պարտապանի դրսևորած վարքագծի հետևանքով առաջացած դատավարական հետևանքները պետք է կրի պարտատերը: Մանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության իրավունքն էլ չի կարող սահմանափակվել որևէ հիմքով՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը վարձատրության իրավունքը սահմանելիս այն կախվածության մեջ չի դրել որևէ հանգամանքից: Այլ կերպ ասած՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքերի առկայության դեպքում սնանկության ժամանակավոր կառավարիչը պետք է ստանա վարձատրություն:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչ կարգով պետք է որոշվի ժամանակավոր կառավարչի վարձատրության չափը «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը վրա հասնելու պայմաններում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով ժամանակավոր կառավարչի վարձատրության չափի հաշվարկման ելակետային պայմաններ ուղղակիորեն չի նախատեսել՝ ամրագրելով միայն, որ փոխհատուցումն իրականացվում է պարտապանի հաշվին: Այդուհանդերձ, «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված հիմքերով դիմումը մերժելը չպետք է արգելք լինի ժամանակավոր կառավարչին վարձատրելու համար այն պատճառաբանությամբ, որ վարձատրության հստակ չափ սահմանված չէ: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ օրենսդրական այսպիսի բացը հաղթահարելու մեխանիզմներ օրենսդիրն ամեն դեպքում նախատեսել է: Մասնավորապես՝ տվյալ դեպքում կիրառման է ենթակա «Մանկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումն այն մասին, որ երբ տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակվել է այլ անձ, ժամանակավոր կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է պարտապանի հաշվին՝ վերջին տարում պարտապանի տնօրենի տարեկան վաստակի 1/12 չափով: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով, այնպես էլ նույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ժամանակավոր կառավարչի լիազորությունները դադարում են համապատասխանաբար պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու կամ պարտապանին սնանկ ճանաչելու պահից: Այսինքն՝ երկու դեպքում էլ ժամանակավոր կառավարիչն իր լիազորություններն իրականացնում է նույն ժամանակահատվածում՝ սնանկ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև պարտապանին սնանկ ճանաչելը կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տրամաբանական և հիմնավորված է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը կիրառել նաև «Մանկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 17.03.2017 թվականին Կոմիտեն դիմում է ներկայացրել Ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին: Դատարանի 20.03.2017 թվականի որոշմամբ Կոմիտեի դիմումն ընդունվել է վարույթ, իսկ 04.04.2017 թվականի որոշմամբ Ըն-

կերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Արամայիս Իսպիրյանը: Դատարանը 19.04.2017 թվականին որոշում է կայացրել Ընկերության, տնօրենի, գույքի և հաշվապահական փաստաթղթերի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

Դատարանը Կոմիտեի դիմումը մերժելիս, անդրադառնալով սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրությանը, «հաշվի առնելով, որ նշանակումից մեկ ամիս անց սնանկ ճանաչելու դիմումը մերժվում է, և այդ ժամանակահատվածում ժամանակավոր կառավարիչը փաստացի աշխատանք չի կատարել», գտել է, որ «ժամանակավոր կառավարչի վարձատրության փոխհատուցման հարց չի առաջանում»:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանի վերաքննիչ բողոքը մերժելով, պատճառաբանել է, որ «սույն գործով չի իրականացվել ժամանակավոր կառավարչի՝ օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որպիսի պայմաններում «վարձատրության փոխհատուցման հարց չառաջանալու վերաբերյալ» Դատարանի եզրահանգումը գնահատել է իրավաչափ և գործի հանգամանքներից բխող:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ վերջիններս նյութական իրավունքի նորմի սխալ մեկնաբանման արդյունքում հաշվի չեն առել այն հանգամանքը, որ սնանկության ժամանակավոր կառավարչի համար դատարանի կողմից որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակվելիս արդեն իսկ ծագում է վարձատրության իրավունքը, որը վերջինիս կողմից սահմանափակ լիազորություններն իրականացնելիս կամ սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարան ներկայացնելուց հետո դիմումը մերժելու մասին վճիռ կայացնելու պայմաններում պետք է իրացվի պարտապանի միջոցների հաշվին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սխալ մեկնաբանելով համապատասխան նյութական նորմը, սխալ եզրահանգման են եկել սնանկության ժամանակավոր կառավարչի վարձատրության հարցի վերաբերյալ, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 20.09.2017 թվականի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանին վարձատրություն նշանակելու հարցը և դրա չափը քննարկելու նպատակով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով, որ «ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 12.12.2017 թվականի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի հիմքով 25.01.2018 թվականից Երևան քաղաքում գործում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, գտնում է, որ գործը պետք է նոր քննության ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռարենկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2017 թվականի որոշումը և գործը՝ «Էտտո Քիդս» ՍՊԸ-ի սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արամայիս Իսպիրյանին վարձատրություն նշանակելու հարցը քննարկելու մասով, ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵՆԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-1/0261/04/16
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-1/0261/04/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱՎՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Մանչո Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Գնել Մուդնեցյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2017 թվականի որոշման դեմ՝ Ընկերության սնանկության գործով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) պահանջի հաստատման մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու միջնորդության վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Ընկերությանը սնանկ ճանաչել:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2017 թվականի վճռով դիմումը բավարարվել է, և Ընկերությունը սնանկ է ճանաչվել: Մասնկության գործով կատարվել է նշանակվել Վարազդատ Ասատրյանը:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) «Թիվ ԿԴ-1/0261/04/16 սնանկության գործի վարույթը Բանկի և «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Բանկ ՓԲ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջների մասով կասեցնելու միջնորդությունը քննության առնելու մասին» 09.06.2017 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցիչ Գնել Մուդնեցյանի դիմումը՝ սնանկության գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, բավարարվել է մասնակիորեն. որոշվել է՝ թիվ ԿԴ-1/0261/04/16 սնանկության գործի վարույթը՝ Բանկի պահանջի մասով, կասեցնել մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտերի կայացումը:

Մասնկության գործի վարույթը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Բանկ ՓԲ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով կասեցնելու վերաբերյալ, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2017 թվականի (այսուհետ՝ Վե-րաքննիչ դատարան) որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, և Դատարանի 09.06.2017 թվականի որոշումը՝ Բանկի պահանջի մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու մասով, վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնա-վորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը, 20.1-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է իրավահարաբերու-թյան ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պարտապան Ընկերությունը ներկայացրել է ապացույց քաղաքացիական դատավարության կարգով քննվող այլ գործի առկայության վերաբերյալ, որի շրջանակներում վիճարկվում է պարտատիրոջ կողմից սնանկության գոր-ծի շրջանակներում ներկայացված ու պահանջի հիմքում դրված Բանկի և Ընկերության միջև 06.05.2016 թվականին կնքված թիվ LGL20160166 «Վարկային ծառայության» (վարկային) պայմանագիրը, այսինքն՝ մի պայմանագիր, որն անվավեր ճանաչվելու պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով կարող են անվավեր ճա-նաչվել դրա ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերը, որոնց պարագայում պարտատիրոջ ներկայացրած պահանջը՝ որպես ապահովված պահանջ, առնվազն ապա-հովվածության մասով կարող է դառնալ առարկայազուրկ: Ավելին, արդյունքում փոփոխման կենթարկվի նաև պահանջատիրոջ պահանջի չափը, քանի որ 06.05.2016 թվականին կնքված թիվ LGL20160166 «Վարկային ծառայության» (վարկային) պայմանագրի անվավերության դեպքում չեն կարող հաշվարկվել և Բանկի պահանջում ներառվել դրանով նախատեսված գույքային բնույթի սանկցիաները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը՝ պարտապանի սնանկության հատկանիշը համարելով որ-պես Դատարանի կողմից հաստատված փաստ, քանի որ Դատարանի 14.03.2017 թվականի վճռով հաստատված է համարվել այն հանգամանքը, որ 20.12.2016 թվականի դրությամբ Ըն-կերության ընդհանուր պարտքը Բանկի հանդեպ թիվ LGL20160166 վարկային պայմանագ-րով կազմում է 7.545.966,99 ԱՄՆ դոլար, իսկ վճարային պարտավորությունների կետանցը կազմում է 60 օրից ավելի: Այսինքն՝ տվյալ պարագայում Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է պարտավորության առկայությունը որպես պարտապանի սնան-կության հատկանիշ, այլ ոչ թե պարտապանի պարտքի առկայությունը (դրա չափով, առաջ-նահերթությամբ, ապահովվածությամբ)՝ որպես հիմնավոր և օրինական փաստ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «ամբողջությամբ վերաց-նել Վերաքննիչ դատարանի 28.08.2017 թվականի որոշումը և «Էյչ-Էս-ԲԻ-ՍԻ Բանկ Հայաս-

տան» ՓԲԸ-ի պահանջի մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու պարտապանի միջնորդությունը բավարարելու մասով օրինական ուժ տալ (թողնել անփոփոխ) Դատարանի 09.06.2017 թվականի սնանկության գործի վարույթը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջների մասով կասեցնելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմանը»:

3. Վճռաբեկ դատարանի պարանառարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները հիմք են պարտավորների պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս պահանջների անվիճելիության համար:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն՝

ա) պահանջը ներկայացնող պարտատիրոջ՝

- իրավաբանական անձի համար՝ անվանումը և գտնվելու վայրը,

- ֆիզիկական անձի համար՝ անունը և բնակության վայրը.

բ) պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև կատարման ժամկետը.

գ) պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վստասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով.

դ) պահանջը հիմնավորող հանգամանքները:

Պահանջին կից ներկայացվում են այն հիմնավորող փաստաթղթերը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրա-

պարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարիչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլով՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերը նշված հոդվածի իրավական վերլուծությանը: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ սնանկության վարույթում օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու ինչպես պարտատերերի շահերի պաշտպանությունը, այնպես էլ՝ ելնելով սնանկ ճանաչված պարտապանի շահերից, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու նրա կենսունակությունը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման և դրանց հիմնավորվածության ստուգման որոշակի կառուցակարգ: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկության ներկայացումից քննության առնել դատարան ներկայացրած յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի **բացառելու սնանկության վարույթում հիմնավորված պահանջների ընդգրկումը**, քանի որ այդպիսի պահանջների ընդգրկումը կհանգեցնի ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտմանը, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանները պետք է առաջին հերթին հաշվի առնեն այն հանգամանքը, որ հաստատման են ենթակա միայն այն պահանջները, որոնց **առկայության և չափի վերաբերյալ ներկայացված են բավարար ապացույցներ**, ընդ որում, ապացույցների բավարար լինելը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր գործով այն ենթակա է գնահատման՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթում պահանջների վերջնական ցուցակի հաստատումը սնանկության վարույթի առանցքային փուլերից է, որի հիման վրա կատարվում է պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը: Հատկանշական է, որ սնանկության վարույթը ևս պարտավորությունների կատարման և քաղաքացիական

շրջանառությունում գույքային պատասխանատվության ապահովման հարկադրական եղանակներից է, որի շրջանակներում կատարվում է պարտատերերի պահանջների բավարարումը, իսկ սնանկության ավարտի վերաբերյալ դատական ակտով առաջանում են կոնկրետ քաղաքացիաիրավական հետևանքներ ինչպես վարույթի մասնակիցների, այնպես էլ՝ սնանկության վարույթում պահանջ չներկայացրած, հետևաբար մասնակից չդարձած անձանց համար: **Հետևաբար առարկությունների քննարկման արդյունքում պահանջի օրինականությունը որոշելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն պարտատիրոջ կողմից պահանջը հիմնավորող հանգամանքների հիմնավորվածությանը՝ դրանով իսկ ապահովելով** պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման իրավական հիմնավորվածությունը (յո՛ւն, «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ի դիմումն ընդդեմ Սարգիս Գասպարյանի թիվ ԿԳ/0033/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականի ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մանկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մանկության մասին» ՀՀ օրենքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը» վերառողությամբ 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործի վարույթն առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի վարույթի կասեցումը գործի քննու-

թյան ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը: Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացակարգով:

Այսպիսով, օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորությունն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու հիմքին: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, (իրավահարաբերության ծագման պահին գործող) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարիությունը (*տե՛ս, Վերա Ազիզյանն ընդդեմ Նունե Սարգսյանի թիվ ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.01.2010 թվականի որոշումը*):

Դիմելով դատարան, Բանկը՝ որպես պարտատեր, խնդրել է Ընկերության նկատմամբ իր պահանջները հաստատել և գրանցել հետևյալ հերթականությամբ՝ 8.433.638,72 ԱՄՆ դոլարը և 31.792.603 ՀՀ դրամը՝ որպես ապահովված պահանջ, 500.000 ՀՀ դրամը՝

որպես դատական ծախս և 471.578,95 ԱՄՆ դոլարը՝ որպես պահովված պահանջ: «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ Բանկ ՓԻ ԷԼ ՄԻ» ընկերությունը՝ որպես պարտատեր, խնդրել է Ընկերության նկատմամբ իր 14.411.998,08 ԱՄՆ դոլարի պահանջը հաստատել և գրանցել որպես ապահովված պահանջ:

Ընկերության ներկայացուցիչը միջնորդել է վերը ներկայացված պահանջների մասով կասեցնել սույն սնանկության գործի վարույթը մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17, թիվ ԵԿԴ/1963/02/17 և թիվ ԵԿԴ/1982/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտ կայացնելը:

Դատարանը, մասնակիորեն բավարարելով Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը և կասեցնելով թիվ ԿԴԻ/0261/04/16 սնանկության գործի վարույթը Բանկի պահանջների մասով, մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտ կայացնելը, պատճառաբանել է, որ ըստ վերը նշված քաղաքացիական գործերով Ընկերության կողմից ներկայացված հայցադիմումների՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 17.10.2014 թվականի թիվ LGL 20141263 և 06.05.2016 թվականի թիվ LGL 20160166 վարկային ծառայության պայմանագրերը, որոնք ընկած են Բանկի պահանջի գրանցման հիմքում, որպիսի պայմաններում մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով դատական ակտ կայացնելը սույն սնանկության գործի շրջանակներում Բանկի պահանջների քննությունը դառնում է անհնարին: Միաժամանակ Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող վարկային պայմանագրերն անվավեր ճանաչվելու դեպքում կարող են անվավեր ճանաչվել նաև դրանց ապահովման միջոց հանդիսացող գրավի պայմանագրերը, որպիսի պարագայում նման հիմնավորումներով պահանջ ներկայացրած պարտատիրոջ պահանջը կարող է դառնալ հիմնագուրկ և գրանցման ոչ ենթակա: Հետևաբար Դատարանը գտել է, որ սույն սնանկության գործի շրջանակներում Բանկի պահանջները չեն կարող դառնալ քննության առարկա, քանի դեռ մեկ այլ դատարանում առկա քաղաքացիական գործերով չի որոշվել այդ պահանջի հիմքում ընկած վարկային պայմանագրերի վավերության հարցը:

Վերաքննիչ դատարանը, Բանկի վերաքննիչ բողոքը բավարարելով և Բանկի պահանջների մասով վերացնելով դատական ակտը, արձանագրել է, որ Դատարանի 14.03.2017 թվականի վճռով (որով ընկերությունը ճանաչվել է սնանկ) հաստատված է համարվել այն հանգամանքը, որ 20.12.2016 թվականի դրությամբ Ընկերության ընդհանուր պարտքը Բանկի հանդեպ միայն թիվ LGL 20160165 վարկային պայմանագրի մասով կազմում է 7.545.966,99 ԱՄՆ դոլար, իսկ վճարային պարտավորության կետանցը կազմում է 60 օրից ավելի: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ պարտապանի կողմից ներկա պահին այլ դատարաններում վիճարկվող պայմանագրերից մեկը հանդիսանում է այն պայմանագիրը, որի հիմքում ընկած պարտավորությունն արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է Դատարանի կողմից կայացված և օրինական ուժի մեջ մտած՝ անձին սնանկ ճանաչելու մասին վճռով, որն այլ դատարանի կողմից վերանայման ենթակա չէ: Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ հարուցված քաղաքացիական գործերով առկա չէ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ իրավական հարցադրում, որը կարող էր անհնարին դարձնել դիմողի ներկայացված պահանջների քննարկման անհնարինությունը, հետևաբար սույն գործի քննությունը հնարավոր է առանց վերը նշված գործերով վերջնական դատական ակտ կայացնելը՝ **հաշվի առնելով այն փաստը, որ Դատարանն արդեն օրինական ուժի մեջ մտած վճռով հաս-**

պարտված է համարել պարտապանի պարտքը դիմողի հանդեպ:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիության հարցին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում **վճարային պարտավորության անվիճելիությունը**, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին՝ բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունն առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ (*տե՛ս, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարոյանի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող առանձին փուլերից բաղկացած գործընթաց է, իսկ անձին սնանկ ճանաչելու վարույթն այդ փուլերից առաջինն է, որի շրջանակներում դատարանի կողմից ըստ էության ենթակա է պարզման անձին սնանկ ճանաչելու՝ օրենքով սահմանված հիմքերի առկայությունը: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված փուլի շրջանակներում ապացուցման են ենթակա միայն անձի **վճարային պարտավորության անվիճելիությունը**, այդպիսի պարտավորության առնվազն

60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելը: Այսինքն՝ անձին սնանկ ճանաչելու վարույթի ընթացքում դատարանը չի պարզում անձի **վճարային պարտավորության հիմքում ընկած պահանջների հիմնավորվածությունը և օրինականությունը:**

Վճռաբեկ դատարանի վերը նշված հետևությունը պայմանավորված է նաև «Մանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավադրույթով, ըստ որի՝ հրավիրված դատական նիստի ընթացքում պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանը պարզում է յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը սնանկության վարույթի մեկ այլ փուլի՝ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու գործընթացի համար սահմանել է այլ իրավակարգավորում, որն անկախ է անձին սնանկ ճանաչելու փուլից, այն է՝ դատարանը յուրաքանչյուր պահանջի օրինականության և հիմնավորվածության հիմքում ընկած հանգամանքները պարզում է անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռից անկախ՝ առանձին քննություն իրականացնելով յուրաքանչյուր պահանջի վերաբերյալ:

Այսպիսով, վերը նշվածի հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ՀՀ Կոստայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2017 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված՝ Ընկերության պարտավորության առկայությունը դիտել է որպես վերանայման ոչ ենթակա փաստական հանգամանք: Մինչդեռ ելնելով վերը նշված իրավական դիրքորոշումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով բացառապես գնահատվել են վճռի կայացման պահին անձին սնանկ ճանաչելու հիմքերը, և դրանց առկայությունը չի կարող կաշկանդել սնանկության հետագա ընթացքը՝ բացառելով պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջի օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված պարտավորության անվիճելիությունը պարտատերերի կողմից ներկայացված պահանջների քննարկման և հաստատման փուլում չունի որևէ ապացուցողական նշանակություն այդ պահանջների օրինականության և հիմնավորվածության գնահատման տեսանկյունից, քանի որ ներկայացված պահանջների օրինականության և հիմնավորվածության ստուգումը սնանկության այլ փուլի խնդիրն է և ենթադրում է անձին սնանկ ճանաչելու վճռից անկախ ապացույցներով այդ հատկանիշների բացահայտում և հիմնավորում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Ընկերությունը թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով վիճարկում է 17.10.2014 թվականի թիվ LGL 2014I263 և 06.05.2016 թվականի թիվ LGL 20160166 վարկային ծառայության պայմանագրերը, որոնք ընկած են սույն գործով Բանկի ներկայացրած պահանջների գրանցման հիմքում: Այսինքն՝ վկայակոչված գործերով հայցերի բավարարումը կամ մերժումն ուղղակիորեն անդրադառնալու է սույն սնանկության գործով ներկայացված պահանջների օրինականության, հիմնավորվածության, չափի և առաջնահերթության վրա: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է Դատարանի այն եզրահանգումը, որ

սույն գործի շրջանակներում Բանկի պահանջները չեն կարող դառնալ քննության առարկա, քանի դեռ մեկ այլ դատարանում առկա քաղաքացիական գործերով չի որոշվել այդ պահանջների հիմքում ընկած վարկային պայմանագրերի վավերության հարցը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածներով սահմանված՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ, 405-րդ և 406-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2017 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի պահանջի մասով թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործի վարույթը կասեցնելու մասով օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործի վարույթը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ Բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջների մասով կասեցնելու միջնորդությունը քննության առնելու մասին» 09.06.2017 թվականի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0133/04/14
Նախագահող դատավոր՝ Ա. Հունանյան
Դատավորներ՝ Ա. Մկրտչյան
Կ. Հակոբյան

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0133/04/14
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի օգոստոսի 31-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սուրեն Սադոնի ներկայացուցիչ Տիգրան Մուրա-
դյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.11.2017 թվականի
որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Մարտիրոսյանի ընդդեմ Սուրեն Սադոնի՝ պարտապանին
սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Մարտիրոսյանը պահանջել է Սուրեն Սադոնին ճանաչել
սնանկ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դա-
տավոր՝ Ա. Կուբանյան) 20.02.2015 թվականի վճռով Տիգրան Մարտիրոսյանի դիմումը բա-
վարարվել է:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
29.04.2015 թվականի որոշմամբ հաստատվել է Սուրեն Սադոնի սնանկության գործով պա-
հանջների վերջնական ցուցակը, իսկ 03.06.2015 թվականի որոշմամբ Տիգրան Մարտիրո-
սյանի ընդգրկվել է Սուրեն Սադոնի սնանկության գործով պահանջների վերջնական ցու-
ցակում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Հ. Ենոքյան, Ս. Միքայել-

յան, Գ. Խանդանյան) 20.04.2016 թվականի որոշմամբ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2015 թվականի որոշման դեմ Սուրեն Սահակի վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Ա. Պետրոսյան, Տ. Նազարյան, Կ. Զիլինգարյան) 26.12.2016 թվականի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքի հիմքով Սուրեն Սահակի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Զիչոյան) (այսուհետ՝ Դատարան) 06.07.2017 թվականի վճիռով Տիգրան Մարտիրոսյանի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.11.2017 թվականի որոշմամբ Տիգրան Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 06.07.2017 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության (դատավոր Ա. Հունանյանի կողմից շարադրվել է հատուկ կարծիք):

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուրեն Սահակի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 32-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Սուրեն Սահակին սնանկ ճանաչելու պահանջի հիմքում դրված է եղել բացառապես թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով 28.06.2013 թվականի վճիռը, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2016 թվականի որոշմամբ բեկանվել է, իսկ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2016 թվականի վճիռով գործի վարույթը կարճվել է, մինչդեռ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2016 թվականի որոշմամբ թիվ ԵՇԴ/0133/04/14 սնանկության գործով 20.02.2015 թվականի վճիռը բեկանվելուց և ամբողջ ծավալով նոր քննության ուղարկվելուց հետո Տիգրան Մարտիրոսյանը որևէ ձևով չի փոխել Սուրեն Սահակին սնանկ ճանաչելու պահանջի հիմքը:

Մասնկ ճանաչելու դիմումի հիմքում դրված դատական ակտը բեկանվելու և գործի վարույթը կարճվելու պայմաններում վերացել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված այն վճարային պարտավորությունը, որը ճանաչված էր օրինական ուժի մեջ մտած վճռով:

Ինչ վերաբերում է թիվ ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործով վճիռին, ապա Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ ԵԱԲԴ/4146/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2016 թվականի որոշմամբ նշված վճիռն ըստ էության վերացել է, քանի որ ճանաչվել է Տիգրան Մարտիրոսյանի հանդեպ Սուրեն Սահակի

ունեցած պարտքի այլ չափ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.11.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.07.2017 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ըստ հայցի Տիգրան Մարտիրոսյանի ընդդեմ Սուրեն Սադոնի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է: Դատարանը, մասնավորապես, վճռել է. «Սուրեն Սադոնից հօգուտ Տիգրան Մարտիրոսյանի բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և նախապես վճարված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառմամբ 12.03.2010 թվականից մինչև պարտավորության կատարման օրը 20.000 ԱՄՆ դոլարին հաշվարկել և բռնագանձել տոկոսագումար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան»: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

2) Ըստ հայցի Տիգրան Մարտիրոսյանի ընդդեմ Սուրեն Սադոնի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է: Դատարանը, մասնավորապես, վճռել է. «Սուրեն Սադոնից հօգուտ Տիգրան Մարտիրոսյանի բռնագանձել 19.000.000 ՀՀ դրամ և նախապես վճարված 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառմամբ 13.05.2010 թվականից մինչև պարտավորության կատարման օրը 19.000.000 ՀՀ դրամին հաշվարկել և բռնագանձել տոկոսագումար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքին համապատասխան՝ բռնագանձումը տարածելով գրավադրված՝ Երևանի Շիրակի փողոցի 70-րդ շենքի թիվ 54 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա»: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 2-րդ, գ.թ. 12-14**):

3) Սույն գործով Տիգրան Մարտիրոսյանի ներկայացրած՝ Սուրեն Սադոնին սնանկ ճանաչելու դիմումի, ինչպես նաև Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճռի հիմքում դրվել է թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով 28.06.2013 թվականի վճռով հաստատված պարտավորությունը (**հատոր 1-ին, գ.թ. 2-3, 81-83**):

4) Թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2013 թվականի վճռի դեմ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացրել Սուրեն Սադոնը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2016 թվականի որոշմամբ Սուրեն Սադոնի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով 28.06.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության (**հատոր 3-րդ, 44-47**):

5) Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2016 թվականի վճռով թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 3-րդ, գ.թ. 52-54**):

6) Սույն գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2015 թվականի որոշմամբ Տիգրան Մարտիրոսյանն ընդգրկվել է Սուրեն Սադոնի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակում՝ 29.840.000 ՀՀ դրամի և 10.000 ՀՀ դրամի չափով՝ որպես ապահովված պահանջ՝ հիմքում դնելով թիվ ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործով 28.06.2013 թվականի վճիռը, և 31.800 ԱՄՆ դոլարի և 10.000 ՀՀ դրամի չափով՝ որպես չապահովված պահանջ՝ հիմքում դնելով թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով 28.06.2013 թվականի վճիռը (**հատոր 2-րդ, գ.թ. 132-134**):

7) Ըստ հայցի Սուրեն Սադոնի ընդդեմ Տիգրան Մարտիրոսյանի, երրորդ անձինք Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, թիվ ԵԱԲԴ/4146/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 25.11.2016 թվականի որոշմամբ անդրադառնալով նաև թիվ ԵՇԴ/0619/02/12 և թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործերով դատական ակտերին, արձանագրել է. «...թեև գործի նյութերից հետևում է, որ Սուրեն Սադոնի և Տիգրան Մարտիրոսյանի միջև 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագիրը, որով Սուրեն Սադոնը, ի ապահովումն Երևան քաղաքում կողմերի միջև 12.03.2010 թվականին կնքված 19.000.000 ՀՀ դրամի փոխառության պայմանագրի, գրավադրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Երևանի Շիրակի 70-րդ շենքի թիվ 54 հասցեում գտնվող անշարժ գույքը, իսկ Տիգրան Մարտիրոսյանը գրավ է վերցրել նշված անշարժ գույքը, ստորագրվել է վերջիններիս կողմից, պահպանվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 263-րդ հոդվածի դրույթները, բացի այդ, գործարքը ստացել է նոտարական վավերացում, իսկ գործարքից ծագող Տիգրան Մարտիրոսյանի իրավունքները՝ պետական գրանցում, այդուհանդերձ գործի նյութերով հիմնավորվել է, որ ի սկզբանե կողմերի միջև պարտավորական հարաբերություններ են ծագել որպես փոխառություն տրված 11.700.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ, և որ 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագրով կողմերն իրականում նպատակ են ունեցել ապահովել Սուրեն Սադոնի կողմից Տիգրան Մարտիրոսյանին փոխառությամբ տրամադրված ոչ թե **19.000.000 ՀՀ դրամի, այլ՝ ընդհանուր գումարով 30.000 ԱՄՆ դոլարին համարժեք 11.700.000 ՀՀ դրամի** վերադարձելիությունը: Ընդ որում, Տիգրան Մարտիրոսյանն իր տված 30.000 ԱՄՆ դոլարի դիմաց մինչև 2011 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում Սուրեն Սադոնից որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 6.570.000 ՀՀ դրամին համարժեք 18.000 ԱՄՆ դոլար»: Սույն որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը որոշել է. «...Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 12.05.2016 թվականի թիվ ԵԱԲԴ/4146/02/15 վճիռը բեկանել և փոփոխել՝ Սուրեն Սադոնի հայցը բավարարել: Կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ. շինծու գործարք հանդիսանալու հիմքով անվավեր ճանաչել Սուրեն Սադոնի կողմից 09.03.2010 թվականին կազմված գրությունը, ինչպես նաև Սուրեն Սադոնի և Տիգրան Մարտիրոսյանի միջև 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագիրը և որպես անվավերության հետևանք՝ Սուրեն Սադոնի կողմից 09.03.2010 թվականին կազմված գրությունը, ինչպես նաև Սուրեն Սադոնի և Տիգրան Մարտիրոսյանի միջև 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագիրը դիտել կնքված Տիգրան Մարտիրոսյանի կողմից Սուրեն Սադոնին տրամադրված 11.700.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար պարտքով

գումարի կապակցությամբ...» (**հատոր 3-րդ, գ.թ. 85-92**):

8) Սույն սնանկության գործի նոր քննությունն իրականացվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2016 թվականի որոշմամբ նոր երևան եկած հանգամանքների հիմքով սնանկ ճանաչելու մասին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2016 թվականի վճիռը բեկանելու արդյունքում (**հատոր 3-րդ, գ.թ. 98-100**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սնանկության դիմումի և սնանկ ճանաչելու վճռի հիմքում դրված դատական ակտը բեկանվելու պայմաններում պարտապանի հետագա սնանկության հարցի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սնանկ ճանաչելու վճիռը հետագայում բեկանվելու պայմաններում սնանկության վարույթում կայացված դատական ակտերի, մասնավորապես՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշման հետագա իրավական գործողության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

3) ստորադաս դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ և 32-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) արդյոք սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված դատական ակտը վերացվելու պայմաններում գործի նոր քննության ժամանակ հարկադրված սնանկության դիմումի քննության համար կարող են էական նշանակություն ունենալ պարտապանին՝ սնանկ ճանաչելու դիմումում չնշված այլ պարտավորությունները,

2) պարտապանին սնանկ ճանաչելու վճիռը հետագայում, մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով բեկանվելու պայմաններում արդյոք ինքնուրուիքյան վերացված են համարվում սնանկության վարույթում կայացված այլ դատական ակտերը, մասնավորապես՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը:

1) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության

գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը, (...)

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան, ավելացնելու կամ նվազեցնելու հայցային պահանջների չափը մինչև առաջին ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու հա-

մար (յրեն, «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Գևորգ Հարությունի թիվ ԵՇԴ/0009/04/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հարկադրված սնանկության դեպքում պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով, որ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, միաժամանակ սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նույնիսկ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում պարտավորությունն անվիճելի է: Այդ հիմքերն են՝

- երբ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

- երբ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

- երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

- երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը (յրեն, ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնի հարկային տեսչությունն ընդդեմ Ա/2 Մկրտիչ Հարությունյանի թիվ ԿԴ2/0078/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նման մոտեցումը պայմանավորված է դատական ակտերի պարտադիրության հատկանիշով, այսինքն՝ քանի դեռ առկա է **օրինական ուժի մեջ մտած չկատարված վերջնական դատական ակտ**, որով հաստատվել է որոշակի պարտավորություն, նշված պարտավորությունը վիճարկվել չի կարող (բացառությամբ հաշվանց կատարելու հնարավորության դեպքի): Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պարտավորության անվիճելիությունը կարող է վերանալ, եթե միայն վերացվի համապատասխան դատական ակտը (օրինակ՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով):

Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վերլուծությունից պարզ է դառնում, որ դատարանը պարտապանին սնանկ է ճանաչում **հարկադրված սնանկության դիմումի հիման վրա**, ինչը, հիմք ընդունելով քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչականության սկզբունքը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշանակում է, որ հարկադրված սնանկության դիմումը պետք է պարունակի դիմումի հիմքերն ու հիմնավորումները, իսկ սնանկության գործը քննող դատարանը չի կարող դուրս գալ դիմումի հիմքերի շրջանակից: Այլ կերպ ասած, եթե սնանկության դիմումում նշված է կոնկրետ վճարային պարտավորություն, ապա դատարանը պետք է գնահատի միայն վերջինիս անվիճելիությունը և ըստ այդմ՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պայմանների առկայությունը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև հայցի հիմքի և առարկայի վե-

րաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումներից: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Հայցի փաստական հիմքում դրված իրավաբանական փաստերը միայն վերացական հիմք են պահանջ ներկայացնելու համար: Քաղաքացիական դատավարության շրջանակներում դրանք պետք է նաև հիմնավորվեն: Այդ գործընթացը ներառվում է ապացուցման գործընթացում: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների մատնանշումը հայցադիմումի մեջ համարվում է տվյալ հիմքով հայցի ներկայացում (*տե՛ս, Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա (*տե՛ս, ԱԶ Էդմոնդ Ասարյանը և Կարինե Բաղժյանն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2924/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հարկադրված սնանկության դիմումում նշված հիմքերը, մասնավորապես՝ կոնկրետ վճարային պարտավորությունը, կաշկանդում են դատարանին՝ քննելու միայն դիմումում նշված հանգամանքների՝ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին համապատասխանությունը: Նման դեպքերում նույնպես գործի նոր քննության ընթացքում դատարանը պետք է առաջնորդվի սնանկության դիմումի հիմքերով անգամ այն պարագայում, երբ գործում առկա են այլ ապացույցներ պարտապահի պարտավորությունների վերաբերյալ, այդ թվում՝ եթե անգամ հաստատված է պահանջների վերջնական ցուցակը:

2) Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատվելուց հետո սնանկ ճանաչելու մասին վճիռը որևէ հիմքով (մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով) բեկանվում է:

Վճռաբեկ դատարանը նախնառաջ արձանագրում է, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից պարզ է դառնում, որ սնանկության վարույթը բաղկացած է մի քանի փուլերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու նպատակները, և որոնք, որպես կանոն, եզրափակվում են համապատասխան դատական ակտի կայացմամբ: Այսպես, սնանկության վերաբերյալ դիմումի ընդունելության հարցի քննարկման արդյունքում դատարանը կայացնում է, օրինակ, դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում, որից հետո դատարանն իրականացնում է «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված գոր-

ծողությունները՝ ուղղված սնանկության վարույթի հետագա գործողությունների կատարման ապահովմանը: Մասնակ ճանաչելու հարցի լուծման փուլը կարող է ավարտվել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կայացմամբ: Առանձին փուլ է նաև պարտատերերի պահանջների հաստատումը, որը նույնպես սնանկության վարույթի առանցքային փուլերից է, և դրա հիման վրա է կատարվում պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը սահմանում է պահանջների հաստատման կարգը: Մասնավորապես՝ նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան **սնանկության մասին հայտարարությունից հետո՝** մեկամսյա ժամկետում:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ պահանջների հաստատման փուլը սկսվում է **միայն պարտապանին սնանկ ճանաչելուց հետո**: Հետևաբար, եթե որևէ պատճառով (մասնավորապես՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով) վերանում է սնանկ ճանաչելու հարցի քննության արդյունքում կայացված պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ դա ենթադրում է հետագա փուլերի, այդ թվում՝ պահանջների հաստատման փուլի շարունակման անտրամաբանությունը: Այսինքն՝ եթե պարտապանին սնանկ ճանաչելու վճիռն այլևս գոյություն չունի, պարտապանը սնանկ համարվել չի կարող, հետևաբար առարկայագույրվ են դառնում նաև հետագա բոլոր փուլերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու վճռի վերացումը հանգեցնում է սնանկության հետագա փուլերի դադարմանը և դրանց արդյունքում կայացված դատական ակտերի, այդ թվում՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման վերացման:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Մարտիրոսյանի ներկայացրած՝ Սուրեն Սադոնին սնանկ ճանաչելու դիմումի, ինչպես նաև Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 20.02.2015 թվականի վճռի հիմքում դրվել է **միայն թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով** 28.06.2013 թվականի վճռով հաստատված պարտավորությունը: Թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2013 թվականի վճռով Տիգրան Մարտիրոսյանի հայցն ընդդեմ Սուրեն Սադոնի՝ 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և դրա նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների գումարը բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ: Հետագայում նշված վճռի դեմ **նոր երևան եկած հանգամանքի** հիմքով վերաքննիչ բողոք է ներկայացրել Սուրեն Սադոնը, և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2016 թվականի որոշմամբ նշված վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության արդյունքում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2016 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Բացի այդ, թիվ ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2013 թվականի վճռով Տիգրան Մարտիրոսյանի հայցը բավարարվել է՝ դատարանը, մասնավորապես, վճռել է Սուրեն Սադոնից հօգուտ Տիգրան Մարտիրոսյանի բռնագանձել

19.000.000 ՀՀ դրամ և դրա նկատմամբ հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների գումարը: Թիվ ԵԱԲԴ/4146/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 25.11.2016 թվականի որոշմամբ որոշել է կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ շինծու գործարք հանդիսանալու հիմքով անվավեր ճանաչել Սուրեն Սադոնի կողմից 09.03.2010 թվականին կազմված գրությունը, ինչպես նաև Սուրեն Սադոնի և Տիգրան Մարտիրոսյանի միջև 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագիրը և որպես անվավերության հետևանք՝ Սուրեն Սադոնի կողմից 09.03.2010 թվականին կազմված գրությունը, ինչպես նաև Սուրեն Սադոնի և Տիգրան Մարտիրոսյանի միջև 12.03.2010 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի (գրավի) պայմանագիրը դիտել կնքված Տիգրան Մարտիրոսյանի կողմից Սուրեն Սադոնին տրամադրված 11.700.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար պարտքով գումարի կապակցությամբ:

Դատարանը, Տիգրան Մարտիրոսյանի դիմումի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ այն դատական ակտը, որը դրվել էր Սուրեն Սադոնին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում, բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից, իսկ Դատարանի կողմից այդ գործի վարույթը կարճվել է, ուստի նման պայմաններում դիմողի կողմից չի ներկայացվել պարտապանի վճարային պարտավորության առկայության որևէ այլ հիմքի վերաբերյալ որևէ ապացույց, և Դատարանը գտել է, որ նման պայմաններում դիմումը հիմնավոր չէ:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պատճառաբանել է, որ Դատարանում գործի քննության շրջանակներում դիմողի կողմից ներկայացված են եղել թիվ ԵՇԴ/0620/02/12 և ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած երկու վճիռներ, որոնց համաձայն՝ Սուրեն Սադոնն անվիճելի պարտավորություններ է ունեցել Տիգրան Մարտիրոսյանի հանդեպ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ այս ամենը Դատարանի կողմից հաշվի չի առնվել, ուստի Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն չի հետազոտել ու գնահատել գործի փաստական հանգամանքները, ներկայացված ապացույցները, որի արդյունքում խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը և տեղի է ունեցել սեփականության իրավունքին (օրինական սպասելիքի) ոչ իրավաչափ միջամտություն: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Տիգրան Մարտիրոսյանի օգտին առկա են եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, այդ թվում՝ նրա պահանջները հաստատվել են սույն գործով և ընդգրկված են պահանջների վերջնական ցուցակում, ինչն առաջացրել է Տիգրան Մարտիրոսյանի համար իրավական որոշակիություն, և նա իրավաչափորեն կարող էր կանխատեսել և ակնկալել իր սեփականությունից (օրինական ակնկալիքից) անարգել օգտվելու ու դրա նկատմամբ միջամտություն չունենալու իրավունքը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սուրեն Սադոնին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրվել է միայն թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով կայացված գումարի բռնագանձման դատական ակտը: Նման հանգամանքի առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմումի հիմքում ընկած անվիճելի պարտավորությունը վերացել է, քանի որ վերացվել է այն հաստատող դատական ակտը: Ավելին, սույն գործի նոր քննության պայմաններում էլ գործի վարույթը կարճվել է: Հետևաբար սույն սնանկության գործի նոր քննության ժամանակ այլևս առկա չի եղել թիվ ԵՇԴ/0620/02/12 քաղաքացիական գործով կայացված վերջնական դատական

ակտը, որով հաստատվում է Սուրեն Սադոնի՝ Տիգրան Մարտիրոսյանի նկատմամբ ունեցած պարտավորության անվիճելիությունը, իսկ դիմումի փաստական հիմքում այլ պարտավորություններ չեն նշվել: Հետևաբար վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանը պարտավոր էր քննել սնանկության դիմումը **միայն այդ դիմումում նշված հիմքերի շրջանակներում**, որը և կատարել է՝ իրավաչափորեն մերժելով դիմումը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը՝ նյութական իրավունքի նորմի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի

սխալ մեկնաբանման, ինչպես նաև դատավարական իրավունքի նորմի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի խախտման արդյունքում հանգել է ոչ իրավաչափ եզրահանգման:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Տիգրան Մարտիրոսյանի կողմից ներկայացված են եղել թիվ ԵՇԴ/0620/02/12 և ԵՇԴ/0619/02/12 քաղաքացիական գործերով օրինական ուժի մեջ մտած երկու վճիռներ, որոնք հետագայում հիմք են հանդիսացել Տիգրան Մարտիրոսյանի պահանջների գրանցման համար, և որ դիմումը մերժելու արդյունքում խախտվել է իրավական որոշակիության սկզբունքը և տեղի է ունեցել սեփականության իրավունքին (օրինական սպասելիքի) ոչ իրավաչափ միջամտություն, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական և իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը: Բացի այդ, օրենքը պետք է ձևակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ (*լրեն, Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61*):

ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1213 որոշումը): Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (*լրեն, ՀՀ սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմա-

նադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (*յրենս, ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄԴՈ-1270 որոշումը*):

Վերոգրյալի հիման վրա անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, փաստում է, որ սնանկ ճանաչելու մասին (սնանկության գործընթացի սկիզբն ազդարարող) վճռի վերացման պայմաններում չեն կարող իրավաբանական հետևանքներ առաջացնել այն դատական ակտերը, որոնք կայացվել են այդ վճռի հիման վրա: Հետևաբար, եթե բեկանվել է սնանկ ճանաչելու վճիռը, ապա գործի նոր քննության ընթացքում պարտապանը դեռևս սնանկ չի համարվում, ուստի դադարում է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման հետագա իրավական գործողությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում պարտապանի պարտավորությունների վերաբերյալ սնանկության դիմումում այլ հիմքերի բացակայության պատճառով սնանկ ճանաչելու դիմումի մերժումը որևէ կերպ չի խախտում իրավական որոշակիության սկզբունքը կամ հանգեցնում սեփականության իրավունքի (օրինական սպասելիքի) ոչ իրավաչափ միջամտության՝ նկատի ունենալով, որ օրենսդրի տրամաբանությունից հստակ և որոշակի է, որ առանց պարտապանին սնանկ ճանաչելու՝ սնանկության վարույթում հետագա գործողությունները (այդ թվում՝ պահանջների հաստատումը) առարկայագուրկ են: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավուն-

քի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապարզությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոնների համաձայն:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման և օրինական ուժ է տրվում Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2017 թվականի վճռին, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի իրավակարգավորումը, գտնում է, որ Տիգրան Մարտիրոսյանից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.03.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.11.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2017 թվականի վճռին:

2. Տիգրան Մարտիրոսյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.08.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.03.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ
Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

ԵԱԲԴ/0210/04/17
Լ. Գրիգորյան
Գ. Խանդանյան
Հ. Ենոքյան

Մասնկության գործ թիվ ԵԱԲԴ/0210/04/17
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով Քնարիկ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի՝
Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք)՝ Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու պա-
հանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է Քնարիկ Հովհաննիսյանին ճանաչել
սնանկ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան)
(այսուհետ՝ Դատարան) 12.02.2018 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
04.07.2018 թվականի որոշմամբ Քնարիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և
Դատարանի 12.02.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քնարիկ Հովհաննիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել և փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված թիվ 78656399644095738, թիվ 786563996455095744 և թիվ 286564011615095644 տեղեկանքները վերաբերել են **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեում** գտնվող հողամասի՝ 2014-2017 թվականների հողի հարկին, **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում** գտնվող հողամասի՝ 2010-2017 թվականների հողի հարկին և գույքահարկին, որոնց մի մասի վերաբերյալ արդեն իսկ առկա են եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նշված պարտավորությունների մի մասը փաստացի կատարվել է, իսկ մյուս մասի վերաբերյալ կայացված դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթը սահմանված ժամկետում չի ներկայացվել հարկադիր կատարման:

Բացի այդ, ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ Համայնքը չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ չի կայացրել որոշում՝ այդ գումարները բռնագանձելու մասին, որը պետք է կայացվեր իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի ուժով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.07.2018 թվականի որոշումը և այն փոփոխել՝ դիմումը մերժել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված թիվ 78656399644095738, թիվ 786563996455095744 և թիվ 286564011615095644 տեղեկանքների համաձայն՝ Քնարիկ Հովհաննիսյանի պարտավորությունը 14.11.2017 թվականի դրությամբ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով կազմել է 3.355 ՀՀ դրամ (2014-2017 թվականների համար), **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով՝ 1.369.488 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար), իսկ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեի** գույքահարկի գծով՝ 147.384 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար) (**հատոր 1-ին, գ.թ. 08-10**):

2) ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/1368/05/13 վարչական գործով 23.10.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի սեփականատեր Քնարիկ Հովհաննիսյանից 2008-2012 թվականների համար հողի հարկի գծով 336.683 ՀՀ դրամ հարկային

պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 290.820 ՀՀ դրամ, այդ թվում՝ 237.096 ՀՀ դրամ ապառք, 53.724 ՀՀ դրամ տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 64-68**):

3) ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/12190/05/13 վարչական գործով 18.06.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության սեփականատեր Քնարիկ Հովհաննիսյանից 2008-2013 թվականների համար գույքահարկի գծով 152.135 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 98.255 ՀՀ դրամ, այդ թվում՝ 69.636 ՀՀ դրամ ապառք, 28.619 ՀՀ դրամ տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 53-58**):

4) ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/1368/05/13 և թիվ ՎԴ/12190/05/13 վճիռների հիման վրա տրվել են կատարողական թերթեր (**հատոր 1-ին, գ.թ. 58, 62**):

5) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի բաժնի հարկադիր կատարող Սոնա Գյոզյանի 12.10.2016 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշմամբ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/12190/05/13 վճռով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը՝ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվելու հիմքով, կարճվել է (**հատոր 1-ին, գ.թ. 50**):

6) ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/1368/05/13 վճռի հիման վրա տրված կատարողական թերթի՝ հարկադիր կատարման ներկայացված լինելու վերաբերյալ ապացույցներ առկա չեն:

7) Համայնքի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի ուժով Քնարիկ Հովհաննիսյանից Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հողատարածքի հողի հարկի (2013-2017 թվականների համար) և գույքահարկի (2014-2017 թվականների համար), ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշեն Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեի հողի հարկի (2014-2017 թվականների համար) չվճարված գումարների բռնագանձման մասին որոշում չի կայացվել:

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը՝ որպես անվիճելի պարտավորություն վկայակոչելու առանձնահատկությունների վերաբերյալ կարող է էական նշանակություն ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Մասնակության

մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի խախտման արդյունքում առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդադատնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) օրենքով սահմանված հարկեր, փոքրեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորության կամ դրա մի մասի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի առկայության պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու հիմքում պետք է դրվի անմիջականորեն օրենքով սահմանված հարկեր, փոքրեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պահանջը, թե՛ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտը,

2) արդյո՞ք պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում որպես անվիճելի վճարային պարտավորություն կարող է դրվել օրենքով սահմանված հարկեր, փոքրեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունն այն դեպքում, երբ իրավաւոր պետական մարմինը նշված գումարները պարտապանից բռնագանձելու վերաբերյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշում չի կայացրել և նշված որոշումը չի դարձել անբողոքարկելի:

1) «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտնող վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, փոքրեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ փյույալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքի բյուջեների նկատմամբ դրամային պարտավորություններով (այդ թվում՝ հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարումների գծով) համապատասխան իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները պարտապանին սնանկ ճանաչելու նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դիմել դատարան հետևյալ դեպքերում և ժամկետներում՝ լիազորված պետական համապատասխան մարմինը՝ հարկերի, տուրքերի, մաքսատուրքերի, այլ պարտադիր վճարումների կամ վարչարարությունից ծագած տուգանքների գծով վճարումն ուշացնելու դեպքում պարտավորության հայտնաբերման պահին հաջորդող 6 ամսվա ընթացքում:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հարկադրված սնանկության դեպքում պարտապանը սնանկ է ճանաչվում, եթե նա թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Ընդ որում, օրենսդիրը, ամրագրելով, որ վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, միաժամանակ սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում նույնիսկ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում պարտավորությունն անվիճելի է: Այդ հիմքերն են՝

- երբ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

- երբ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

- երբ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

- երբ պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 25.02.2008 թվականի թիվ ՍԴՈ-735 որոշմամբ անդրադառնալով «Մանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով «անվճարունակություն» հասկացությանը, նշել է, որ «անվճարունակությունը» մի վիճակ է, երբ պարտապանն ընդհանուր առմամբ անկարող է վճարելու իր պարտքերը՝ պարտավորությունները կատարելու համար նախատեսված ժամկետներում, կամ երբ պարտապանի պարտավորությունների ընդհանուր գումարը գերազանցում է նրա ակտիվների արժեքը: Այսինքն՝ անվճարունակությունը նշանակում է վճարելու կարողության բացակայություն: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքը հիմնվում է «անվճարունակության կանխավարկածի» վրա, այն է՝ եթե պարտապանն ի վիճակի չէ կատարելու ժամկետանց վճարային պարտավորությունները, ապա ի սկզբանե ենթադրվում է, որ նա փաստացիորեն անվճարունակ է, և այդ ենթադրությունը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ ժամկետանց պարտավորությունը չի կատարվել կամ վիճարկվել ու հերքվել: Ընդ որում, «անվճարունակության կանխավարկածն» իր հերթին հիմնվում է պարտապանի «բարեխղճության և պարտաճանա-

չության կանխավարկածի» վրա, այսինքն՝ եթե պարտապանը չի կատարում իր պարտավորությունները, ապա ի սկզբանե պարտավորության չկատարումը բացատրվում է ոչ թե նրա անբարեխղճությամբ, այլ վճարում կատարելու կարողության բացակայությամբ:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ելնելով անձին սնանկ ճանաչելու տարբեր հիմքերի առանձնահատկություններից՝ օրենսդիրն անձին սնանկ ճանաչելու յուրաքանչյուր հիմքի համար սահմանել է տարբեր կարգավորումներ: Այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե սնանկության դիմումի հիմքում «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված որ հիմքն է ընկած, կիրառվում է տվյալ հիմքին բնորոշ օրենսդրական կարգավորումը: ՀՀ վճարելի դատարանը նշել է, որ օրենսդիրը կարգավորում է սահմանել այն դեպքերի համար, երբ սնանկության դիմումի հիմքում դրված է «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը: Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ սնանկության դիմումի հիմքում ընկած է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, իսկ պարտապանը ողջամիտ ժամկետում չի կատարում այդ վճռից բխող իր պարտավորությունը, ապա պարտատերն իրավասու է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու երկու եղանակով, այն է՝ կամ սնանկության դիմումով դիմել դատարան, կամ օրենքով սահմանված ժամկետում օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնել հարկադիր կատարման: Ընդ որում, այն դեպքում, երբ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարզվում է, որ գույքը բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության դիմում ներկայացնել դատարան:

ՀՀ վճարելի դատարանը հավելել է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ սնանկության հիմքում դրված է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, ապա պարտատերը սնանկության դիմումը դատարան պետք է ներկայացնի վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված կարգով կատարման ներկայացնելու ժամկետի սահմաններում: ՀՀ վճարելի դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարային պարտավորություն սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում կատարման չներկայացնելու դեպքում տվյալ վճռից բխող իրավունքներն ու պարտականությունները ենթակա չեն իրականացման: ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է նաև, որ յուրաքանչյուր գործով սնանկության դիմումը քննելիս դատարանները պետք է նախևառաջ պարզեն սնանկության դիմումի հիմքում ընկած՝ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայությունը, որից հետո միայն բացահայտեն համապատասխան հիմքի (հիմքերի) հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հիմքի համար օրենսդրի կողմից

սահմանված իրավակարգավորումները (յրե 'ս, ՀՀ ֆինանսների նախարարությունն ընդդեմ Ա/Ձ Մկրտիչ Հարությունյանի թիվ ԿԴ2/0078/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությանը՝ որպես անձին սնանկ ճանաչելու հիմքին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ պարտապանից գումար պահանջելու և հետագայում սնանկ ճանաչելու պարտատիրոջ իրավունքի ծագման հիմքում ընկած է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվում, պարտատերը զրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Նշվածի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն հետևության, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը բացակայում է (յրե 'ս, «Արդշինքանկ» ԲԲԸ-ն ընդդեմ «Արոր-Բագրայր» արտադրական կոոպերատիվի թիվ ՀԲԴ4/0024/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ ըստ Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված թիվ 786563996444095738, թիվ 786563996455095744 և թիվ 286564011615095644 տեղեկանքների՝ Քնարիկ Հովհաննիսյանի պարտավորությունը 14.11.2017 թվականի դրությամբ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով կազմել է 3.355 ՀՀ դրամ (2014-2017 թվականների համար), **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով՝ 1.369.488 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար), իսկ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեի** գույքահարկի գծով՝ 147.384 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար):

ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/1368/05/13 վարչական գործով 23.10.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ **Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի** սեփականատեր Քնարիկ Հովհաննիսյանից **2008-2012 թվականների** համար հողի հարկի գծով 336.683 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 290.820 ՀՀ դրամ, այդ թվում՝ 237.096 ՀՀ դրամ ապառք, 53.724 ՀՀ դրամ տույժ: ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/12190/05/13 վարչական գործով 18.06.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ **Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում** գտնվող շինության սեփականատեր Քնարիկ Հովհաննիսյանից **2008-2013 թվականների** համար գույքահարկի գծով 152.135 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 98.255 ՀՀ դրամ, այդ թվում՝ 69.636 ՀՀ դրամ ապառք, 28.619 ՀՀ դրամ տույժ:

ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/1368/05/13 և թիվ ՎԴ/12190/05/13 վճիռների հիման վրա տրվել են կատարողական թերթեր:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի բաժնի հարկադիր կատարող Սոնա

Գյոզգյանի 12.10.2016 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշմամբ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/12190/05/13 վճռով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը՝ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվելու հիմքով, կարճվել է, իսկ թիվ ՎԴ/1368/05/13 վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել:

Դատարանը, բավարարելով Համայնքի դիմումը, նշել է, որ տվյալ դեպքում Քնարիկ Հովհաննիսյանի կողմից չի ներկայացվել վերաբերելի ապացույց, որով կհիմնավորվի, որ պարտավորությունները Համայնքի նկատմամբ մարված են: Մինչդեռ Համայնքի կողմից ներկայացված հաշվարկների տեղեկանքների համաձայն՝ Քնարիկ Հովհաննիսյանի պարտքը «14.11.2017 թվականի դրությամբ գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ինչպես նաև պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը»:

Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի նշված պատճառաբանությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավական վերլուծությունների լույսի ներքո հարկ է համարում նշել հետևյալը.

Համայնքը Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրել է այն հանգամանքը, որ վերջինս, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող, չի կատարել իր պարտավորությունները, որը Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի աշխատակազմի կողմից ներկայացված թիվ 786563996444095738, թիվ 786563996455095744 և թիվ 286564011615095644 տեղեկանքների համաձայն՝ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով կազմել է 3.355 ՀՀ դրամ (2014-2017 թվականների համար), **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում** գտնվող հողամասի հողի հարկի գծով՝ 1.369.488 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար), իսկ **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի թիվ 10 հասցեի** գույքահարկի գծով՝ 147.384 ՀՀ դրամ (2010-2017 թվականների համար): Այսինքն՝ Համայնքը դիմումի հիմքում դրել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետը, այն է՝ պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/1368/05/13 վարչական գործով 23.10.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի սեփականատեր Քնարիկ Հովհաննիսյանից **2008-2012 թվականների** համար հողի հարկի գծով 336.683 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հօգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 290.820 ՀՀ դրամ, այդ թվում՝ 237.096 ՀՀ դրամ ապառք, 53.724 ՀՀ դրամ տույժ:

ՀՀ վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/12190/05/13 վարչական գործով 18.06.2014 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով Երևան համայնքի հայցը՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության սեփականատեր Քնարիկ Հովհան-

նիսյանից 2008-2013 թվականների համար գույքահարկի գծով 152.135 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ Քնարիկ Հովհաննիսյանից հոգուտ Երևան համայնքի բռնագանձվել է 98.255 ՀՀ դրամ, այդ թվում՝ 69.636 ՀՀ դրամ ապառք, 28.619 ՀՀ դրամ տույժ:

Վերոգրյալից հետևում է, որ Քնարիկ Հովհաննիսյանի՝ Համայնքի կողմից 14.11.2017 թվականի դրությամբ ներկայացված պարտավորությունների մի մասի վերաբերյալ, այն է՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի 2010-2012 թվականներին հաշվեգրված հողի հարկի, Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության՝ 2010-2013 թվականներին հաշվեգրված գույքահարկի մասերով, առկա են օրինական ուժի մեջ մտած վճիռներ:

Նկատի ունենալով սույն գործով վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պահանջը պարտականին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դնելու այն դեպքերին, երբ չվճարված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը չի կատարվել:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա հավանաբար կհանգեցնի այնպիսի իրողության, որն անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*տե՛ս, Բուրդուշու ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40, «Գլուր» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության և մյուսների թիվ ԳԿ/0171/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելը հարկ վճարողի պարտականությունն է, և եթե հարկ վճարողը սահմանված ժամկետում դրանք չի վճարում, ապա այն կարող է բռնագանձվել նաև դատական կարգով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում առանձնացնել այն դեպքերը, երբ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրված է պարտապանի՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունը, սակայն դրա վերաբերյալ առկա է չվճարված հարկի, տուրքի կամ պարտադիր այլ վճարի բռնագանձման վճիռ, որը չի կատարվել: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ արդեն իսկ առկա է նման վճիռ, այդ գումարը դադարում է պարզապես չվճարված հարկի, տուրքի կամ այլ վճարի գումար դիտարկվելուց, այն դառնում է համապատասխան պետական մարմնի օգտին բռնագանձման ենթակա գումար, որը չվճարելու դեպքում հարկ վճարողն արդեն խախտում է վճռի պարտադիրության և կատարելիության հատկանիշները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում պետք է դրվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը, այն է՝ վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով, քանի որ նման պայմաններում հարկ վճարողը ոչ թե պարզապես հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարները չի վճարում, այլ խախտում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված դրամական պարտավորությունը: Նշված մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դեպքում այլևս չի քննարկվում տվյալ գումարի՝ որպես չկատարված դրամական պարտավորության ծագման հիմքը, այլ **քննարկվում է միայն դատական ակտով հաստատված հստակ դրամական պարտավորությունը, որը չի կատարվել:**

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Համայնքի՝ Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում, ըստ էության, Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի 2010-2012 թվականների համար հողի հարկի, Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության 2010-2013 թվականների համար գույքահարկի մասերով դրվել է ՀՀ վարչական դատարանի 23.10.2014 թվականի՝ թիվ ՎԴ/1368/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռով և ՀՀ վարչական դատարանի 18.06.2014 թվականի՝ թիվ ՎԴ/12190/05/13 օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված վճարային պարտավորությունը: Հետևաբար Համայնքի պահանջի իրավաչափությունը պետք է դիտարկել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի լույսի ներքո:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/1368/05/13 և թիվ ՎԴ/12190/05/13 վճիռների հիման վրա տրվել են կատարողական թերթեր:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի բաժնի հարկադիր կատարող Սոնա Գյոզյանի 12.10.2016 թվականի «Կատարողական վարույթը կարճելու մասին» որոշմամբ ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/12190/05/13 վճռով տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթը՝ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվելու հիմքով, կարճվել է, իսկ թիվ ՎԴ/1368/05/13 վճռի հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/12190/05/13 վճռով ճանաչված վճարային պարտավորությունը մարված է: Այսինքն՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության 2010-2013 թվականների համար գույքահարկի մասերով պարտավորությունները չեն կարող դրվել

Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/1368/05/13 վճռով ճանաչված վճարային պարտավորությանը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դրա հիման վրա տրված կատարողական թերթը կատարման ներկայացնելու վերաբերյալ ապացույցներ չեն ներկայացվել: Այսինքն՝ պարտատերը բաց է թողել վճիռը մեկ տարվա ընթացքում կատարման ներկայացնելու ժամկետը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում, երբ պարտապանից գումար պահանջելու և հետագայում սնանկ ճանաչելու պարտատիրոջ իրավունքի ծագման հիմքում ընկած է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, և նշված դատական ակտն օրենքով սահմանված մեկ տարվա ժամկետում կատարման չի ներկայացվում, պարտատերը գրկվում է այդ իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից, իսկ պարտապանն ազատվում է նույն վճռով սահմանված պարտավորությունից: Այսինքն՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով պարտապանին սնանկ ճանաչելու հիմքը բացակայում է: Ուստի Երևան քաղաքի՝ Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի 2010-2012 թվականների համար հողի հարկի մասերով պարտավորությունները չէին կարող դրվել Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում:

2) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ (ա) անձի դիմումը, բողոքը, (բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ **վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը** կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառնիչ կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝ (1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով վարչական մարմնին համապատասխան վարչական ակտ ընդունելու իմպերատիվ կամ հայեցողական լիազորություն վերապահված լինելու դեպքում: Իրացնելով իր այդ լիազորությունը՝ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ:

Նախկին որոշումներում անդրադառնալով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտի հասկացությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*տե՛ս, Վարդիթեր Ավդյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի ընդունումը պայմանավորված է հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմնին) լիազորում է արձակել մի-

ակոդմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն, վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտություն է առաջանում բոլոր այն դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին: Այսինքն՝ վարչական ակտի միջոցով համապատասխան իրավաբանական փաստերի առկայության դեպքում իրավական նորմերով սահմանված վերացական հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները ստանում են անհատականացված ուղղվածություն՝ վերագրվում են կոնկրետ հասցեատերերի՝ ձեռք բերելով պարտադիր կատարման ենթակա լինելու հատկանիշ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից վարչական մարմնի համար իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և վարչական ակտ ընդունելու իմպերատիվ լիազորություն նախատեսված լինելու դեպքերից մեկն ամրագրված էր իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին) ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 29.1-րդ հոդվածով:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: (...) Պարտավոր անձի կողմից գումարը գանձելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով (հոդվածներ 87-89) սահմանված կարգով (...):

Անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանն առաջին հերթին հարկ է համարում նշել, որ օրենքին համապատասխան սահմանված հարկեր մուծելը յուրաքանչյուրի սահմանադրաիրավական պարտականությունն է (2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդված և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մաս): Օրենսդիրն իր հերթին հարկ վճարողների համար սահմանել է հարկերը ժամանակին վճարելու պարտականություն (իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «դ» կետ), որի չկատարման դեպքում իրավասու վարչական մարմինը՝ հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի ուժով լիազորված է որոշում կայացնել հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ գտել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորություննե-

ըը կամովին չկատարվելու դեպքում այդ պարտավորության հարկադիր կատարումը գործող օրենսդրության պայմաններում հնարավոր է իրականացնել միայն համապատասխան անբողոքարկելի վարչական ակտի առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշման հարկադիր կատարման միջոցով իրավասու վարչական մարմինը հնարավորություն է ստանում փաստացի ապահովել հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարների մուտքը պետական կամ համայնքային բյուջե, իսկ **նման որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չեն կարող բռնագանձվել հոգուտ պետության կամ համայնքի** (յո՛ւն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Երվանդ Ալեյանի թիվ ՎՊ2/0016/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում, երբ սնանկ ճանաչելու դիմումի հիմքում Համայնքի կողմից դրվել են պարտապանի՝ օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականությունից բխող պարտավորությունները, ապա պարտավորությունների փաստացի կատարված չլինելու հանգամանքի վկայակոչումը միայն բավարար չէր կարող լինել պարտավորության անվիճելիությունը հաստատված համարելու համար, քանի որ համապատասխան վարչական մարմինը, հիմք ընդունելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի իրավակարգավորումը, պետք է կայացներ չվճարված հարկերը բռնագանձելու մասին որոշում: Նշվածը մի կողմից հնարավորություն կտար որոշակիացնելու պարտավորությունների բնույթը, իսկ մյուս կողմից հնարավորություն կընձեռներ վարչական ակտի հասցեատիրոջը հնարավոր անհամաձայնության դեպքում օրենքով սահմանված կարգով վիճարկել համապատասխան վարչական ակտը:

Այսինքն՝ վերոգրյալից հետևում է, որ այդպիսի որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չէին կարող բռնագանձվել հոգուտ պետության կամ համայնքի, ինչից բխում է, որ առանց նման որոշման՝ գումարի բռնագանձման իրավասությունը չէր կարող իրացվել: Հետևաբար առանց նման որոշման կայացման և դրա՝ անբողոքարկելի դառնալու, համապատասխան պետական մարմինը չէր կարող վկայակոչել պարտապանի՝ հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտավորության անվիճելիությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Համայնքի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի հիմքով Քնարիկ Հովհաննիսյանից Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հողատարածքի հողի հարկի (2013-2017 թվականների համար) և գույքահարկի (2014-2017 թվականների համար), ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշեն Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեի հողամասի հողի հարկի (2014-2017 թվականների համար) չվճարված գումարների բռնագանձման մասին որոշում չի կայացվել:

Դատարանը հաստատված է համարել այն, որ Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու դիմումի հիմքում դրված պարտավորությունները բխել են վերջինիս՝ օրենքով սահմանված հարկեր վճարելու պարտականությունից, իսկ Քնարիկ Հովհաննիսյանը բավարար հիմքեր չի ունեցել առարկելու նշված պարտավորության դեմ, ներառյալ՝ հաշվանցի հնարա-

վորությունը:

Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հիմնավոր է համարել նշված պատճառաբանությունը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությանը, հարկ է համարում նշել, որ Քնարիկ Հովհաննիսյանի՝ չվճարված հողի հարկի և գույքահարկի վերաբերյալ իրավասու մարմինը չի կայացրել որոշում նշված գումարները բռնագանձելու վերաբերյալ: Տվյալ պարագայում Համայնքը չէր կարող վկայակոչել Քնարիկ Հովհաննիսյանի մոտ առկա պարտավորությունները՝ հողի հարկի և գույքահարկի մասով, առանց անբողոքարկելի դարձած վարչական ակտի գոյության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում բացակայում է Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու համար անհրաժեշտ՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանցը, քանի որ մի դեպքում ենթադրյալ պարտավորության մի մասը, այն է՝ Քնարիկ Հովհաննիսյանի՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հողատարածքի հողի հարկի (2013-2017 թվականների համար) և գույքահարկի (2014-2017 թվականների համար), ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշեն Ե-6 թաղամասի թիվ 1 հասցեի հողամասի հողի հարկի (2014-2017 թվականների համար) չկատարված հարկային պարտավորությունների փաստը, հաստատված չէ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշմամբ (անբողոքարկելի վարչական ակտով), իսկ մյուս դեպքում՝ Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի 2010-2012 թվականներին հաշվեգրված հողի հարկի, Երևան քաղաքի Նուբարաշեն 4-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող շինության՝ 2010-2013 թվականներին հաշվեգրված գույքահարկի մասով, օրինական ուժի մեջ մտած թիվ ՎԴ/12190/05/13 վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը կատարված է, իսկ թիվ ՎԴ/1368/05/13 վճիռը կատարման ներկայացնելու վերաբերյալ ապացույց գործում առկա չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապարզությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա է բեկանման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, գտնում է, որ Երևան համայնքից հոգուտ Քնարիկ Հովհաննիսյանի պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2018 թվականի որոշումը և այն փոփոխել. Երևան համայնքի դիմումը՝ Քնարիկ Հովհաննիսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Երևան համայնքից հոգուտ Քնարիկ Հովհաննիսյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Մնանկության գործ թիվ ԵԱԲԴ/0009/04/16

Նախագահող դատավոր՝

Լ. Գրիգորյան

Դատավորներ՝

Մ. Հարթենյան

Գ. Խանդանյան

Մնանկության գործ թիվ ԵԱԲԴ/0009/04/16

2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԼԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Է. ՄԵԴԻԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Օվսաննա Սարգսյանի ներկայացուցիչներ Գևորգ Պողոսյանի և Ջարուխի Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Կարինե Ղազարյանի, Արուսյակ Ավետիսյանի, Անուշ Նազարյանի, Ազիզ Ստեփանյանի, Մելանյա Նազարյանի, Նինա Պողոսյանի, Ալվարդ Արզումանյանի, Նազիկ Թադևոսյանի, Ռիմա Աղաջանովայի (այսուհետ՝ Դիմումատուներ)՝ Իգոր Մանդելին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Դիմումատուները պահանջել են Իգոր Մանդելին սնանկ ճանաչել: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.05.2016 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Բունիաթյան) (այսուհետ՝ Դատարան) 12.04.2017 թվականի «Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու և գույքի վաճառքը հրապարակային սա-

կարկություններով իրականացնելը թույլատրելու մասին» որոշմամբ Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի միջնորդությունը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել 04.04.2017 թվականին կայացած լուտի վերաբերյալ աճուրդը և 04.04.2017 թվականի աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Որպես լուտի վերաբերյալ աճուրդի անվավերության հետևանք՝ անվավեր է ճանաչվել Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի և աճուրդում հաղթող ճանաչված Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանի միջև կնքված բաժնեմասի առուվաճառքի մասին պայմանագիրը: Դատարանը պարտավորեցրել է սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանին աճուրդում հաղթող ճանաչված անձին ամբողջությամբ վերադարձնել վերջինիս կողմից վճարված գումարը: Միաժամանակ Դատարանը թույլատրել է կառավարիչ Վարդգես Բալաբեկյանին հրապարակային սակարկություններով մեկ լուտով վաճառել պարտապան Իգոր Մանդելին պատկանող «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ում (այսուհետ՝ Ընկերություն) ունեցած 50,4 տոկոս բաժնեմասը, որը գտնվում է ք. Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց փողոց 14 շենք 110 և 112 սպասարկման սրահ հասցեներում:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.01.2018 թվականի որոշմամբ Օվսաննա Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.04.2017 թվականի «Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու և գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելը թույլատրելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Օվսաննա Սարգսյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Իգոր Մանդելը և Դիմումատուները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 16-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 3-րդ, 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ աճուրդի կազմակերպիչ է հանդիսացել սնանկության գործով կառավարիչը, ով իրավունք չունի մասնակցել հրապարակային սակարկությանը, ուստի լուտի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալ չէր կարող, ինչպես նաև չէր կարող ապագայում ձեռք բերել հնարավոր իրավունքներ: Այսինքն՝ սնանկության գործով կառավարիչը չէր կարող համարվել աճուրդի և դրա արդյունքում կնքված պայմանագրի անվավերության պահանջ ներկայացնելու շահագրգիռ անձ: Մինչդեռ աճուրդը և դրա արդյունքում կնքված պայմանագիրը կարող են անվավեր ճանաչվել միայն շահագրգիռ անձի կողմից ներկայացված հայցի հիման վրա: Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել Դատարանի կողմից միջանկյալ դատական ակտով գործարքի անվավեր ճանաչումն այն պարագայում, երբ այն կայացվել է ոչ թե հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում, այլ աճուրդի կազմակերպիչ՝ սնանկության գործով կառավարչի

միջնորդության հիման վրա:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Օվսաննա Սարգսյանի կողմից 03.04.2017 թվականին լիազորագիր է տրվել Գևորգ Պողոսյանին՝ աճուրդին մասնակցելու հետ կապված գործողություններ կատարելու համար: Լիազորագիրը չի պարունակել դատական ակտերի բողոքարկման լիազորություն: Ավելին, Դատարանը պարտավոր էր որոշումը տրամադրել հենց իրեն, այլ ոչ թե Գևորգ Պողոսյանին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ Դատարանը 04.12.2017 թվականին կայացրել է սնանկության վարույթն ավարտելու մասին վճիռ, և դա այն դեպքում, որ 18.01.2018 թվականին դատական նիստի ընթացքում Օվսաննա Սարգսյանի ներկայացուցիչը Վերաքննիչ դատարանին հայտնել է, որ նշված վճիռը բողոքարկվել է, հետևաբար այն չի կարող արգելք հանդիսանալ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.01.2018 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ «վերացնել Դատարանի 12.04.2017 թվականի որոշումը՝ 04.04.2017 թվականի աճուրդը համարել կայացած, Օվսաննա Սարգսյանին համարել որպես աճուրդում հաղթած մասնակից, իսկ վերջինիս հետ կնքած պայմանագիրը՝ վավեր»:

2.1 Իգոր Մանդելի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դիմումատուները 17.11.2017 թվականին գրավոր ձևով հրաժարվել են իրենց պահանջներից, հետևաբար Իգոր Մանդելի և պարտատերերի միջև վեճը բացակայում է: Նման պարագայում սնանկության վարույթը պետք է ավարտվի, ուստի դատական գործընթացներ պարտադրելը պարտապանի և պարտատերերի իրավունքների կոպիտ խախտում է: Ինչ վերաբերում է սնանկության գործով կառավարչի և Օվսաննա Սարգսյանի միջև առկա վեճին, ապա այն պետք է քննարկվի այնպիսի ընթացակարգով կամ առանձին վարույթով, որ չխոչընդոտի սնանկության գործով պարտապանի և պարտատիրոջ իրավունքների անարգել իրացմանը:

2.2 Դիմումատուների վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Աճուրդն առաջին իսկ փուլից օրենքին հակասող և անվավեր է եղել, քանի որ լուրջ չի գնահատվել օրենքին համապատասխան: Բացի այդ, վճռաբեկ բողոքը բավարարվելու դեպքում աճուրդով նշված գումարը պետք է բախշվի պարտատերերի միջև, մինչդեռ 17.11.2017 թվականին սույն գործով բոլոր պարտատերերը հրաժարվել են իրենց պահանջներից, ուստի վերացել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով նշված սնանկության հիմքերը: Ստորադաս դատարանները դատական սխալ թույլ չեն տվել, քանի որ տվյալ դեպքում անվավեր է ճանաչվել ոչ թե գործարք, այլ աճուրդ, որը վիճարկելու լիազորություն ունենալը բխում է կառավարչի լիազորություններից:

Դիմումատուների անունից 26.09.2018 թվականին Արման Մնացականյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխանի լրացում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 17.03.2017 թվականին www.azdarar.am կայքում հրապարակված աճուրդի մասին հրապարակային ծանուցման համաձայն՝ 15.03.2017 թվականին Իգոր Մանդելի գույքի աճուրդը

չի կայացել հայտ չլինելու պատճառով: 04.04.2017 թվականին ժամը 10:00-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում կանցկացվի Իգոր Մանդելին սեփականության իրավունքով պատկանող Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի բաց դասական եղանակով աճուրդ՝ 1 լոտով: Լոտի մեկնարկային գինը սահմանվել է 57.000.000 ՀՀ դրամ: Ընկերությունը գտնվում է ք. Երևան, Շենգավիթ, Բագրատույաց փողոց 14 շենքի 110 և 112 սպասարկման սրահ հասցեներում (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 79**):

2) Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանի կողմից 03.04.2017 թվականին ներկայացվել է աճուրդի մասնակցության հայտ (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 2**):

3) Օվսաննա Սարգսյանի կողմից 03.04.2017 թվականին երեք ամիս ժամկետով Գևորգ Պողոսյանին նոտարական վավերացմամբ տրված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է ներկայացնել Օվսաննա Սարգսյանի իրավունքները և շահերը երրորդ անձանց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (...) առջև, այդ թվում՝ ՀՀ դատական բոլոր առյաններում, (...) իր անունից մասնակցել 04.04.2017 թվականին սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի կողմից հայտարարված (ծանուցված) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում անցկացվող Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի բաց դասական եղանակով աճուրդին, ինչի նպատակով՝ ներկայացնել աճուրդի մասնակցության հայտեր, (...), սակարկությունների ընթացքում ներկայացնել գնային հայտեր (կատարել առաջարկներ), ստորագրել արձանագրություններ, կնքել առուվաճառքի պայմանագրեր, (...), վճարել մասնակցության վճարը, նախավճարը, լոտի գինը (...) (**Հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 5**):

4) 04.04.2017 թվականի աճուրդի արդյունքների մասին արձանագրության համաձայն՝ Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանը, առաջարկելով Իգոր Մանդելին պատկանող Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի համար 57.000.000 ՀՀ դրամ աճուրդային ամենաբարձր գինը, ճանաչվել է աճուրդի հաղթող (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 81**):

5) Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի և Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանի միջև կնքվել է Իգոր Մանդելին պատկանող Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի առուվաճառքի մասին պայմանագիր (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 82**):

6) 11.04.2017 թվականի միջնորդությամբ Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանը պահանջել է չեղյալ հայտարարել 04.04.2017 թվականի աճուրդը և թույլ տալ անցկացնել նոր աճուրդ՝ հիմք ընդունելով աճուրդի կազմակերպման ժամանակ իր կողմից խախտումներ թույլ տալու հանգամանքը՝ մասնավորապես այն, որ հայտարարությունը հրապարակել է միայն www.azdarar.am կայքում, որում գույքի ամբողջական նկարագիրն արտացոլված չի եղել: Բացի այդ, աճուրդի արդյունքում գույքը վաճառվել է 57.000.000 ՀՀ դրամով, որը նախնական գնի 62,9 տոկոսն է: Կառավարիչը հայտնել է, որ ցածր գնի պատճառ կարող է լինել այն, որ հայտարարությունը չի հրապարակել 1000 և ավելի տպաքանակ ունեցող մամուլում, ինչպես նաև չի ներկայացվել գույքի լրիվ նկարագիրը: Միաժամանակ կառավարիչը հայտնել է, որ ավելի բարձր գնով վաճառվելու դեպքում կապահովվի նաև կառավարիչի ավելի բարձր վարձատրություն (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 83-84**):

7) 14.04.2017 թվականի և 18.04.2017 թվականի ստացականների համաձայն՝ Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանի Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանից առձեռն ստացել է համապատասխանաբար 15.000.000

ՀՀ դրամ և 42.570.000 ՀՀ դրամ (ընդամենը՝ 57.570.000 ՀՀ դրամ) (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 103-104**):

8) 12.04.2017 թվականին Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանը Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանին է տրամադրել Դատարանի 12.04.2017 թվականի որոշումը (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 102**):

9) Օվսաննա Սարգսյանը 18.05.2017 թվականին Վերաքննիչ դատարանին է ներկայացրել վերաքննիչ բողոք՝ միաժամանակ խնդրելով հարգելի համարել վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառները և վերականգնել բաց թողնված ժամկետը, քանի որ հիվանդության պատճառով գրկված է եղել անձամբ կամ ներկայացուցչի միջոցով բողոք ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ Օվսաննա Սարգսյանը հայտնել է, որ Դատարանը որոշումը բողոքը ներկայացնելու պահի դրությամբ պատշաճ կարգով իրեն չի ուղարկել (**Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 18-27**):

10) Վերաքննիչ դատարանը 08.06.2017 թվականի որոշմամբ բավարարել է վերոգրյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ (**Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 31**):

11) Օվսաննա Սարգսյանը 21.06.2017 թվականին հասարակ գրավոր ձևով լիազորագիր է տվել փաստաբաններ Գևորգ Պողոսյանին և Եղիշե Կիրակոսյանին, իսկ 22.08.2017 թվականին՝ փաստաբան Զարուհի Մկրտչյանին՝ իր անունից դատավարական գործողություններ իրականացնելու, այդ թվում՝ դատական ակտերը բողոքարկելու լիազորությամբ (**Հավելվածի հատոր 3-րդ, գ.թ. 104-105, հատոր 4-րդ, գ.թ. 10-11**):

12) Վերաքննության փուլում Վերաքննիչ դատարանին է ներկայացվել Դատարանի 04.12.2017 թվականի վճիռը՝ Իգոր Մանդելի սնանկության գործն ավարտելու մասին (**Հավելվածի հատոր 5-րդ, գ.թ. 10-13**):

13) 18.01.2018 թվականի դատական նիստի ընթացքում Օվսաննա Սարգսյանի ներկայացուցիչ Գևորգ Պողոսյանը Վերաքննիչ դատարանին հայտնել է, որ Դատարանի 04.12.2017 թվականի վճիռը բողոքարկվել է և ցանկություն է հայտնել Վերաքննիչ դատարանին ներկայացնել վերաքննիչ բողոքի պատճենը, որին ի պատասխան՝ նախագահող դատավորը հայտնել է, որ քանի որ բողոքը ներկայացվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին, այն ներկայացնելու անհրաժեշտություն առկա չէ (**Հավելվածի հատոր 5-րդ, գ.թ. 69-72, 75**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սնանկության գործով կառավարչի կողմից աճուրդի արդյունքները վիճարկելու իրավունք ունենալու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ

օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 53-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *արդյո՞ք սնանկության գործով կառավարիչը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով հանդիսանում է շահագրգիռ անձ և ունի սնանկության վարույթում անցկացված աճուրդի արդյունքները վիճարկելու իրավունք.*

2) *արդյո՞ք սնանկության գործով աճուրդին մասնակցելու լիազորություն տալու կապակցությամբ փաստաբանին տրված լիազորագիրը կարող է մեկնաբանվել նաև որպես դատական ներկայացուցչություն իրականացնելու լիազորագիր:*

1) «Մանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և **դատարանի թույլտվությամբ՝** հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքը թույլատրվում է միայն պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելուց հետո, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

«Մանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իր միջնորդությունը կառավարիչը ներկայացնում է դատարան՝ այդ մասին երեք օր առաջ տեղեկացնելով պարտատերերին նույն օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Միջնորդության մեջ նշվում են գույքի գտնվելու վայրը, գույքի նկարագրությունը, աճուրդի առաջարկվող մեկնարկային գինը, աճուրդի անցկացման օրը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարչի միջնորդությունն ստանալու ութերորդ օրը դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից

մեկը՝

ա) գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան:

բ) գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին՝ չբավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան:

գ) կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել նույն օրենքով սահմանված պահանջները:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պարտապանին պատկանող գույքի վաճառքն իրականացվում է «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները. հրապարակային սակարկությունների կազմակերպիչ կամ կազմակերպիչ՝ աճուրդ (մրցույթ) անցկացնող գույքի սեփականատեր, գույքային իրավունքների տիրապետող, ինչպես նաև պայմանագրով կամ **օրենքով հրապարակային սակարկություններ կազմակերպելու լիազորություններով օժտված անձ կամ մարմին (...):**

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **սակարկություններին չեն կարող մասնակցել սակարկությունների կազմակերպիչը**, իրավաբանական անձ համարվող կազմակերպչի հիմնադիրները (մասնակիցները), կազմակերպչի աշխատակիցները, իսկ մրցույթների դեպքում՝ նաև մրցութային հանձնաժողովի անդամները:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ մասի համաձայն՝ եթե սակարկություններով վաճառվելիք լոտն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե լոտն իրավունք է, այդ թվում՝ աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու առաջարկ, ինչպես նաև օգտագործման իրավունք, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրությունը ստորագրելու պահից նրան է անցնում համապատասխան պայմանագիր կնքելու իրավունքը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: (...):

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ **լոտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը**, և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով: Նույն օրենքի 3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված կանոններ:

րի խախտմամբ անցկացված աճուրդը **շահագրգիռ անձի** պահանջով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շահագրգռվածությունը դատարան ներկայացված որևէ պահանջի քննության նախապայման է, ուստի դատարանը պետք է պարզի բոլոր քննվող գործերով հայցվորի շահագրգռվածության հարցը: Դատարան դիմելով՝ հայցվորը պետք է հիմնավորի, իսկ դատարանը՝ պարզի, թե հայցվորի ո՞ր իրավունքներն են իրականում խախտվել և ի՞նչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, ու ներկայացված հայցի նպատակն արդյո՞ք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյո՞ք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել հայցվորի իրավունքները (կամ, համապատասխան դեպքերում, նրան պատճառված վնասը փոխհատուցել): Հայցվորն իրավունք ունի դատարան դիմելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգնման համար (յո՛ւս, *Սյրիսյրինգ Արմինիսարապտենկանյորո Ֆայնենշլ Փերֆորմանս Հոլդինգս հիմնադրամը*, «*Լուքսթենա Լիմիթեդ*» ընկերությունը, «*Յուկոս Ինթերնեյշնլ UK B.V.*» ընկերությունը և Արմեն Միքայելյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արաբկիրի տարածքային բաժնի և «Նեֆտեննայա կոմպանիա «Ռոսնեֆտ»» ԲԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/1494/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.10.2011 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի իմաստով ով կարող է հանդիսանալ շահագրգիռ անձ, նշել է, որ անձի մոտ շահագրգռվածությունը պետք է առկա լինի **աճուրդի հանված լոտի նկատմամբ**: Ընդ որում, շահագրգռված լինելը կարող է պայմանավորված լինել ինչպես լոտի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալու փաստով, այնպես էլ հնարավոր իրավունքներ ձեռք բերելու համար բավարար նախադրյալներ առկա լինելու փաստով: Վերջին դեպքում անհրաժեշտ է իրավաբանական այնպիսի փաստերի ամբողջություն, որոնք իրենց համակցությամբ կարող են բավարար լինել նպաստելու անձի մոտ ապագայում լոտի նկատմամբ իրավունքներ ծագելուն (յո՛ւնս, «Մուսիսյան» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Արարարի մարզպետարանի և Նորիկ Մախասյանի թիվ ԱՎԴ1/0338/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սնանկության վարույթում ևս աճուրդի արդյունքները վիճարկելու հնարավորություն պետք է ունենան միայն շահագրգիռ անձինք, որոնց շահագրգռվածությունը պետք է որոշվի լոտի նկատմամբ սուբյեկտիվ իրավունքներ ունենալու փաստով, ինչպես նաև հնարավոր իրավունքներ ձեռք բերելու համար բավարար նախադրյալներ առկա լինելու փաստով: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության վարույթում աճուրդի արդյունքների վիճարկման հարցում շահագրգռվածության որոշման հարցի նկատմամբ նույնպես կիրառելի են իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումները: Տվյալ դեպքում նույնպես աճուրդի վիճարկման հիմքում պետք է լինի պահանջ ներկայացնողի իրավական շահագրգռվածությունը, այլ խոսքով՝ դատարանը պետք է պարզի, թե նման

պահանջ ներկայացնողի որ իրավունքներն են իրականում խախտվել և ինչ անբարենպաստ հետևանքների են հանգեցրել այդ խախտումները, ու ներկայացված պահանջի նպատակն արդյոք իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու վերականգնումն է, և հնարավոր է արդյոք ընտրված միջոցով պաշտպանել կամ վերականգնել պահանջ ներկայացրած անձի իրավունքները:

Նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սնանկության գործով կառավարչի կողմից աճուրդի արդյունքների վիճարկման հնարավորություն ունենալու հարցին՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության գործով կառավարիչը սնանկության վարությամբ հանդես է գալիս որպես պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռող, վերջինս սնանկության վարությամբ սեփական շահեր չունի: Սնանկության գործով կառավարիչն իրականացնում է միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, որոնց նպատակը սնանկության վարությամբ բնականոն ընթացքի ապահովումն է: Պատահական չէ, որ որպես սակարկությունների կազմակերպիչ՝ վերջինս իրավունք չունի մասնակցել սակարկություններին, ուստի և չի կարող ունենալ շահագրգռվածություն **աճուրդի հանված լոտի նկատմամբ:**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սնանկության գործով կառավարիչը, շահագրգիռ անձ չհանդիսանալու հիմքով, իրավունք չունի վիճարկել սնանկության վարության շրջանակներում անցկացված աճուրդի արդյունքները:

2) ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու դատավարական գործողություններ, բացառությամբ (...) 8) բողոքարկելու դատական ակտը (...): Նույն հոդվածում նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Համանման դրույթներ են պարունակվում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 55-րդ և 56-րդ հոդվածներով:

Նախկին որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը) (*յրեն, Վարդուշ Ղազարյանն ընդդեմ Գևորգ Ղազարյանի թիվ ԼԴ/0423/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ լիազորագիրը՝ որպես միակողմ գործարք, **նախևառաջ հանդիսանալով կամային ակտ**՝ պետք է համապատասխանի լիազորողի **ներքին կամքին**: Հետևաբար այն պարագայում, երբ լիազորագրում արտացոլված բովանդակությունն իրականում չի համապատասխանում լիազորողի ներքին կամքին, այսինքն՝ լիազորողը նման կամահայտությամբ հանդես չի եկել, ապա լիազորագրի հիման վրա կատարված գործողություններին գնահատական տալիս պետք է հաշվի առնել նշված հանգամանքը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև այն հանգամանքից, որ ներկայացուցչի կողմից ներկայացվողի անունից լիազորագրի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար, ուստի եթե լիազորագրի բովանդակությունը չի համապատասխանում ներկայացվողի ներքին կամքին, այսինքն՝ ներկայացվողը նպատակ չի հետապնդել առաջացնելու լիազորագրում նշված իրավահարաբերությունները, ապա նպատակ չի հետապնդել նաև դրա հիման վրա կնքելու գործարք (*յրեն, Մարի Ղումաշյանը և մյուսներն ընդդեմ Վահագն Սահակյանի թիվ ԵՇԿ/0056/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում տարբերակել քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցելու նպատակով տրված լիազորագրերը դատական ներկայացուցչություն իրականացնելու նպատակով տրված լիազորագրերից: Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ լիազորողն իրավունք ունի քաղաքացիական հարաբերություններին, այդ թվում՝ սնանկության վարույթում աճուրդին և հետագա գործընթացներին մասնակցելու համար լիազորել ցանկացած անձի, ով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով քաղաքացիների համար սահմանված իրավասություններից չի զրկվում: Օրենսդիրը որևէ արգելք չի սահմանել նշված հարաբերություններին փաստաբան հանդիսացող ֆիզիկական անձի կողմից մասնակցության համար, հետևաբար անձը կարող է լիազորել նաև փաստաբանի՝ հանդես գալու իր անունից քաղաքացիաիրավական հարաբերություն հանդիսացող սնանկության վարույթում աճուրդի գործընթացին:

Այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ անգամ փաստաբանին տրված լիազորագիրը, որով վերջինս լիազորվել է մասնակցելու սնանկության գործով անցկացվող աճուրդին, անպայմանորեն չի ենթադրում, որ լիազորողը փաստաբանին օժտել է նաև իր անունից սնանկության վարույթի շրջանակներում դատական ներկայացուցչություն իրականացնելու և մասնավորապես սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը բողոքարկելու լիազորությամբ, առավել ևս, որ դատական ակտերի բողոքարկման լիազորությունը պետք է հատուկ նշվի լիազորագրում: Հետևաբար լիազորությունների շրջանակը պարզելու համար էական նշանակություն ունի լիազորողի կամքի բացահայտումը, որն էլ պետք է իրականացվի դատարանների կողմից՝ պարզելու համար, թե արդյոք քաղաքացիական հարաբերություններին մասնակցելու համար տրված լիազորագիրը պարունակում է նաև դատական ներկայացուցչություն իրականացնելու համար անհրաժեշտ լիազորություններ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 04.04.2017 թվականին նշանակվել է սնանկ ճանաչված Իգոր Մանդելին սեփականության իրավունքով պատկանող՝ Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի բաց դասական եղանակով աճուրդ, որին 03.04.2017 թվականին մասնակցության հայտ է ներկայացրել Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանը: Օվսաննա Սարգսյանի կողմից 03.04.2017 թվականին երեք ամիս ժամկետով Գևորգ Պողոսյանին նոտարական վավերացմամբ տրված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է ներկայացնել Օվսաննա Սարգսյանի իրավունքները և շահերը երրորդ անձանց՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (...) առջև, այդ թվում՝ ՀՀ դատական բոլոր ատյաններում, (...) իր անունից մասնակցել 04.04.2017 թվականին սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի կողմից հայտարարված (ծանուցված) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում անցկացվող Ընկերության 50,4 տոկոս բաժնեմասի բաց դասական եղանակով աճուրդին, ինչի նպատակով՝ ներկայացնել աճուրդի մասնակցության հայտեր, (...), սակարկությունների ընթացքում ներկայացնել գնային հայտեր (կատարել առաջարկներ), ստորագրել արձանագրություններ, կնքել առուվաճառքի պայմանագրեր, (...), վճարել մասնակցության վճարը, նախավճարը, լուտի գինը (...): 04.04.2017 թվականի աճուրդի արդյունքների մասին արձա-

նագրության համաձայն՝ Օվսաննա Սարգսյանը ճանաչվել է հաղթող, և վերջինիս ներկայացուցիչ Գևորգ Պողոսյանի հետ կնքվել է բաժնեմասի առուվաճառքի մասին պայմանագիր: 11.04.2017 թվականի միջնորդությամբ Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանը պահանջել է չեղյալ հայտարարել 04.04.2017 թվականի աճուրդը և թույլ տալ անցկացնել նոր աճուրդ՝ հիմք ընդունելով աճուրդի կազմակերպման ժամանակ իր կողմից խախտումներ թույլ տալու հանգամանքը: Միաժամանակ կառավարիչը հայտնել է, որ ավելի բարձր գնով վաճառվելու դեպքում կապահովվի նաև կառավարչի ավելի բարձր վարձատրություն:

12.04.2017 թվականի «Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու և գույքի վաճառքը հրապարակային սակարկություններով իրականացնելը թույլատրելու մասին» որոշմամբ բավարարելով Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի միջնորդությունը՝ Դատարանը նշել է, որ վերջինս շահագրգիռ անձ է, քանի որ առավել բարձր գնով գույքի վաճառքից կախված է վերջինիս հավելյալ վարձատրությունը: Դատարանն արձանագրել է, որ աճուրդն անցկացվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի կանոնների խախտմամբ, ուստի պետք է անվավեր ճանաչել 04.04.2017 թվականին կայացված լոտի վերաբերյալ աճուրդը:

Դատարանի նշված որոշումը 12.04.2017 թվականին Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանը տրամադրել է Օվսաննա Սարգսյանի լիազորված անձ Գևորգ Պողոսյանին:

Օվսաննա Սարգսյանը 18.05.2017 թվականին Վերաքննիչ դատարանին է ներկայացրել վերաքննիչ բողոք՝ միաժամանակ խնդրելով հարգելի համարել վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառները և վերականգնել բաց թողնված ժամկետը: Վերաքննիչ դատարանը 08.06.2017 թվականի որոշմամբ բավարարել է վերոգրյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Վերաքննության փուլում Օվսաննա Սարգսյանը լիազորել է փաստաբան Գևորգ Պողոսյանին՝ իր անունից դատական ներկայացուցչություն իրականացնելու համար:

Վերաքննիչ դատարանը, Օվսաննա Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժելով, հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումները: Վերաքննիչ դատարանը նաև արձանագրել է, որ բողոքը ենթակա է մերժման նաև այն հիմնավորմամբ, որ ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ, իսկ ժամկետը վերականգնելու միջնորդության հիմքում ներկայացված հանգամանքներն իրականությանը չեն համապատասխանում, որպիսի փաստը հնարավոր է եղել պարզել Դատարանի կողմից լրացուցիչ նյութեր ստանալուց հետո: Վերաքննիչ դատարանը նշել է, որ Օվսաննա Սարգսյանի ներկայացուցիչը լիազորված է եղել վերջինիս ներկայացնելու բոլոր դատական ատյաններում, ինչը նշանակում է, որ վերջինիս կողմից որոշումն ստանալու պահից Օվսաննա Սարգսյանը հնարավորություն է ունեցել բողոքարկելու դատական ակտը: Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ սույն գործով պահանջատերերը հրաժարվել են սնանկության վարույթից, որի հիմքով Դատարանը կայացրել է սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վճիռ, իսկ Օվսաննա Սարգսյանն ամբողջությամբ ստացել է վճարված գումարը, ուստի վերջինիս իրավունքը չի խախտվել:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը, գտնում է, որ դրանք հիմնավոր չեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ սնանկության գործով կառա-

վարիչը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով աճուրդի արդյունքները վիճարկելու հարցում շահագրգիռ անձ չի կարող համարվել, հետևաբար վերջինս չէր կարող ներկայացնել սնանկության վարույթում անցկացված աճուրդի վիճարկման պահանջ: Ընդ որում, կառավարչի ավելի բարձր վարձատրությունը չի կարող բավարար հիմք համարվել շահագրգռվածության առկայության համար, քանի որ շահագրգռվածությունը պետք է լինի լոտի նկատմամբ: Հետևաբար սույն գործով ստորադաս դատարանները նյութական իրավունքի նորմերի սխալ մեկնաբանման արդյունքում հաշվի չեն առել այն հանգամանքը, որ սնանկության կառավարչը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պարզապես հրապարակային սակարկությունների կազմակերպիչ է, ով իրավունք չունի մասնակցել սակարկություններին, լոտի նկատմամբ չունի սուբյեկտիվ իրավունքներ և ապագայում ևս չի կարող ձեռք բերել իրավունքներ: Այսինքն՝ ենթադրաբար «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ անցկացված աճուրդը սնանկության գործով կառավարչի պահանջով չէր կարող անվավեր ճանաչվել, քանի որ վերջինս չի հանդիսանում շահագրգիռ անձ: Հետևաբար ստորադաս դատարանները խախտել են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը և 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ սնանկության գործով կառավարչին դիտելով շահագրգիռ անձ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը մերժելու մյուս հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Օվսաննա Սարգսյանի կողմից ի սկզբանե Գևորգ Պողոսյանին լիազորագիր է տրվել վիճարկված աճուրդին մասնակցելու համար: Ընդ որում, լիազորագիրը չի պարունակել դատական ակտերը բողոքարկելու լիազորություն: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի բացահայտել 03.04.2017 թվականին լիազորագիր տալիս Օվսաննա Սարգսյանի իրական կամքը՝ պատշաճ գնահատման չարժանացնելով նշված ապացույցը և հաշվի չառնելով, որ Օվսաննա Սարգսյանը Գևորգ Պողոսյանին չէր լիազորել սույն սնանկության գործով դատական ներկայացուցչություն իրականացնելու և մասնավորապես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար, ուստի Օվսաննա Սարգսյանի վերաքննիչ բողոքը չէր կարող մերժվել այն հիմքով, որ վերջինս ներկայացուցիչը ստացել է Դատարանի որոշումը և կարող էր բողոքարկել այն:

Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք, հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան (*տե՛ս, ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչությունն ընդդեմ Գայանե Սողոմոնյանի թիվ ՎԴ/8923/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.01.2015 թվականի որոշումը*):

Հետևաբար նկատի ունենալով, որ սույն գործում առկա չէ ապացույց այն մասին, որ Դատարանի կողմից 12.04.2017 թվականի որոշումը պատշաճ կերպով հանձնվել է Օվսաննա Սարգսյանին, Վերաքննիչ դատարանը վերոնշյալ հիմքով վերաքննիչ բողոքը մերժելիս թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում՝ սահմանափակելով Օվսաննա Սարգսյանի՝

դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչ համարվող դատական ակտերի բողոքարկման իրավունքը:

Ինչ վերաբերում է սնանկության գործն ավարտված լինելու հիմնավորմամբ վերաքննիչ բողոքը մերժելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորվածությանը, ապա Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ Վերաքննիչ դատարանն առնվազն բանավոր կերպով տեղյակ է եղել սնանկության գործն ավարտելու մասին վճռի բողոքարկված լինելու մասին, իսկ բողոքաբերի ներկայացրած ապացույցը հրաժարվել է ընդունել՝ հայտնելով, որ Վերաքննիչ դատարանը տեղեկացված է այդ ապացույցի մասին: Հետևաբար Վերաքննիչ դատարանի՝ նշված հիմքով բողոքը մերժելու վերաբերյալ եզրահանգումն անհիմն է:

Անդրադառնալով սնանկության կառավարչի կողմից լուտի վերաբերյալ աճուրդը՝ միջնորդության, այլ ոչ թե հայցի միջոցով անվավեր ճանաչելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հիմքը բողոքաբերի կողմից չի ներկայացվել վերաքննիչ բողոքում, այսինքն՝ Վերաքննիչ դատարանը նշված հիմքով Դատարանի 12.04.2017 թվականի որոշումը չի վերանայել: Ուստի հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումն այն մասին, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա եզրափակիչ դատական ակտն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում, Վճռաբեկ դատարանը բողոքի նշված հիմքին չի անդրադառնում:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանների փաստարկները:

Անդրադառնալով Դիմումատուների անունից Արման Մնացականյանի կողմից 26.09.2018 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանի լրացմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ բողոքի պատասխանն ստորագրում է պատասխանը ներկայացրած անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է գործը վարելու նրա լիազորությունները հավաստող լիազորագիրը, եթե այն առկա չէ գործում:

Բացի 31.05.2018 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանից, որը ստորագրված է և՛ դիմումատուների, և՛ Արման Մնացականյանի կողմից, Արման Մնացականյանը 26.09.2018 թվականին Դիմումատուների անունից ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխանի լրացում: Գործի նյութերի համաձայն՝ դիմումատու Կարինե Ղազարյանի կողմից Արման Մնացականյանին լիազորագիր տրվել է 27.05.2015 թվականին՝ երեք տարի ժամկետով (Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 12), իսկ մնացած դիմումատուների կողմից՝ 11.06.2015 թվականին՝ երեք տարի ժամկետով (Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 11): Հետևաբար Վճռաբեկ

դատարանը փաստում է, որ Դիմումատուների անունից 26.09.2018 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանը ներկայացվել է Դիմումատուների կողմից տվյալ պահին հանդես գալու լիազորություն չունեցող անձի կողմից:

Նկատի ունենալով, որ Դիմումատուների ներկայացուցիչ Արման Մնացականյանը 09.11.2018 թվականին դիմում է ներկայացրել դատարան, որին կցել է Դիմումատուների կողմից իրեն 07.09.2017 թվականին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը, վճռաբեկ բողոքի պատասխանի լրացման ներկայացման կարգը պահպանած լինելու հանգամանքը Վճռաբեկ դատարանը հարկ է համարում գնահատել 09.11.2018 թվականի դրությամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն Արման Մնացականյանը ստացել է 24.05.2018 թվականին (հիմք՝ 31.05.2018 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանին կից ներկայացված ծրար): Հետևաբար վճռաբեկ բողոքի պատասխան (այդ թվում՝ պատասխանի լրացման տեսքով) կարող էր ներկայացվել մինչև 15.06.2018 թվականը ներառյալ (հաշվարկում ներառված չեն ոչ աշխատանքային օրերը): Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան վճռաբեկ բողոքի պատասխանի լրացումը ներկայացվել է 09.11.2018 թվականին՝ սահմանված ժամկետի խախտմամբ: Հետևաբար Վճռաբեկ դատարանը չի գնահատում ներկայացված պատասխանի լրացումը:

Այսպիսով սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտվում է բավարար՝ սույն վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարարությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.01.2018 թվականի որոշումը և փոփոխել այն. Իգոր Մանդելի սնանկության գործով կառավարիչ Վարդգես Բալաբեկյանի 04.04.2017 թվականի աճուրդը չեղյալ հայտարարելու և նոր աճուրդ անցկացնելու մասին 11.04.2017 թվականի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3817/02/16**
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3817/02/16

Նախագահող դատավոր **Լ. Գրիգորյան**
Դատավորներ՝ **Մ. Հարթենյան**
Գ. Խանդանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.09.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սվետլանա Գևորգյանի ընդդեմ Բանկի՝ գումար բռնագանձելու և որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սվետլանա Գևորգյանը պահանջել է ճանաչել Բանկի հետ 13.09.2012 թվականին կնքված կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր իրավունքների խախտման փաստը, Բանկից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Բանկին պարտադրել իրականացնել վերը նշված պայմանագրի հիման վրա գոյացած պարտավորությունների վերահաշվարկ և համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ընդհանուր ծախսը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափիսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.02.2017 թվականի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

07.09.2017 թվականի որոշմամբ Սվետլանա Գևորգյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 24.02.2017 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սվետլանա Գևորգյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետը, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը, 8-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանել է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է նաև արբիտրաժային տրիբունալը, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով ևս իրավունքների պաշտպանության միջոց է՝ դատարան, որին ենթակա են քննության ոչ միայն առևտրային, այլ նաև՝ ցանկացած բնույթի վեճեր:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Սվետլանա Գևորգյանի և Բանկի միջև կնքված պայմանագրի 9.5 կետի համաձայն՝ նույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Բանկը Դատարանին գրավոր հայտնել է վեճն արբիտրաժի միջոցով կարգավորելու իր իրավունքից չհրաժարվելու և Դատարանում գործը քննելու իր առարկության մասին, ինչը հիմք է հայցն առանց քննության թողնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.09.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.02.2017 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշմանը:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Տվյալ պարագայում Սվետլանա Գևորգյանը հանդիսանում է ֆինանսական կազմակերպության (Բանկի) ծառայություններից օգտվող սպառող, և այդ կարգավիճակից ելնելով՝ վերջինիս օրենսդրորեն տրված է հայեցողություն իր իրավունքների պաշտպանության համար հայց հարուցելու կամ ընդհանուր իրավասության դատարան, կամ դիմելու արբիտրաժային տրիբունալ: Այդ հնարավորությունը հստակ ամրագրված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով և կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Մինչդեռ

սույն գործով Բանկը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն որ կողմերի միջև արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը, հետևաբար օրենքով նախատեսված նախապայմանները բացակայում են:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը օրինական է և հիմնավոր ու ենթակա չէ բեկանման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Բանկի և Սվետլանա Գևորգյանի միջև 13.09.2012 թվականին կնքված թիվ ՎՊ 12/191-47 կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Բանկը պարտավորվել է նույն պայմանագրով նախատեսված պայմաններով Սվետլանա Գևորգյանին տրամադրել 2.500.000 ՀՀ դրամի չափով կրեդիտ/վարկ, իսկ Սվետլանա Գևորգյանը պարտավորվել է վերադարձնել այն և տոկոսներ վճարել դրա դիմաց: Պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ կրեդիտը համարվում է նպատակային և տրամադրվում է անձնական սպառողական նպատակներով օգտագործելու համար: Պայմանագրի 9.5 կետի համաձայն՝ նույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին, որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան (**հատոր 1-ին, գ.թ. 17-21**).

2) Սվետլանա Գևորգյանը հայց է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ճանաչել Բանկի հետ 13.09.2012 թվականին կնքված կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր իրավունքների խախտման փաստը, Բանկից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Բանկին պարտադրել իրականացնել վերը նշված պայմանագրի հիման վրա գոյացած պարտավորությունների վերահաշվարկ և համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ընդհանուր ծախսը (**հատոր 1-ին, գ.թ. 3-7**).

3) Բանկը 11.11.2016 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ հայցը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով առանց քննության թողնելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 26-28**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում քաղաքացիական իրավունքների պաշտպանու-

թյունն ընդհանուր իրավասության դատարանի կողմից իրականացվելու հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողների կնքած պայմանագրերով նախատեսված արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում վեճը դատարան հանձնելու իրավունքի իրացման նախապայմաններին:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յոեն, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Բացի այդ, Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ

ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում. արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու, կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (*յրեն, Իլիանն ընդդեմ Թուրքիայի (22277/93) գործով Եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 97*):

Անձի՝ վերոնշյալ իրավունքների ապահովման երաշխիքներն իրենց դրսևորումն են ստացել ներպետական օրենսդրության համապատասխան նորմերում: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությամբ համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, նշել է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքներից է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այդ իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ստեղծել անհրաժեշտ և գործունե կառուցակարգեր՝ ուղղված նշված իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացմանը: Մասնավորապես, քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը գործող իրավակարգավորման պայմաններում կարող է իրականացվել դատական, վարչական և հասարակական (արբիտրաժային) ձևերով... (*յրեն՝ Սեյրան և Ռուզաննա Մանթաշյանները, Իսկուհի Ավագյանն ընդդեմ «Պրոմեթեյ Բանկ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1910/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերոգրյալից հետևում է, որ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ արբիտրաժ) նույնպես իրականացնում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գործառնություն, ուստի արբիտրաժային կարգով գործերի քննումն ու լուծումը հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերից մեկը: Ընդ որում, պաշտպանության այս ձևի իրականացման ընթացակարգը մանրամասն կարգավորված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով: Այսպես՝

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը պայմանագրային կամ ոչ պայմանագրային որոշակի իրավահարաբերության կապակցությամբ կողմերի միջև կնքված համաձայնությունն է՝ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերն արբիտրաժի լուծմանը հանձնելու վերաբե-

ըյալ: Արբիտրաժային համաձայնությունը կարող է կնքվել ինչպես պայմանագրում արբիտրաժային վերապահման, այնպես էլ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնագրի) ձևով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով «առևտրային» հասկացությունը ներառում է քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը: Առևտրային բնույթը, առանց սահմանափակման, մասնավորապես ներառում է բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված վեճերը, ապրանքների մատակարարման և փոխանակման ու ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն օրենքը տարածվում է նաև առևտրային բնույթ չունեցող վեճերի վրա, եթե օրենքով նախատեսված է վեճն արբիտրաժային կարգով լուծելու հնարավորություն:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, եթե այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել, բացառությամբ, եթե արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը (արբիտրաժային համաձայնությանը), և այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնության առկայությունը օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարան դիմելու իրավունքը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից բխում է, որ վեճն արբիտրաժին ենթակա լինելու հանգամանքը պայմանավորված է տվյալ վեճի բնույթով և վեճի կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնության առկայությամբ: Օրենսդիրն արբիտրաժի ենթակայությանն է վերապահել քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը՝ միևնույն ժամանակ օրենքով նախատեսված դեպքերում չբացառելով առևտրային բնույթ չունեցող վեճերի լուծումը ևս արբիտրաժային կարգով: Արբիտրաժի ենթակայությանն օրենքով հանձնված գործերը քննվում և լուծվում են վերջինիս կողմից, եթե առկա է այդ մասին կողմերի համաձայնությունը: Իսկ արբիտրաժի իրավասությանը հանձնված գործերի քննությունը և լուծումը, համաձայն ընդհանուր կանոնի, դատա-

կան կամ այլ կարգով բացառվում է, եթե առկա է վավեր արբիտրաժային համաձայնություն, արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել և կողմը հղում է կատարում նշված համաձայնությանը: Նման իրավիճակում արդեն իսկ հարուցված գործի պայմաններում դատարանը հայցը թողնում է առանց քննության:

Վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով իրավասու է հայցը թողնել առանց քննության հետևյալ նախադրյալների միաժամանակյա առկայության դեպքում.

1) *դատարան ներկայացված հայցը վերաբերում է այնպիսի վեճի, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն:* Ընդ որում, արբիտրաժային համաձայնությունը պետք է ձևակերպված լինի գրավոր, կարող է վերաբերել ինչպես կողմերի միջև առկա, այնպես էլ հնարավոր (ծագելիք) վեճերի լուծմանը և իր բնույթով պետք է լինի վավեր համաձայնություն.

2) *կողմերից մեկը հղում է կատարում տվյալ վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա համաձայնությանը (ներկայացնում է միջնորդություն):* Արբիտրաժային համաձայնության առկայությունը և դրա մասին դատարանի իրազեկվածությունը դեռևս բավարար չէ հայցն առանց քննության թողնելու համար: Անհրաժեշտ է, որ կողմերից մեկը հղում կատարի այդպիսի համաձայնությանը: Ընդ որում, այս կապակցությամբ օրենսդիրը սահմանել է հայեցողական լիազորություն՝ կողմին հնարավորություն ընձեռելով հղում կատարել համաձայնությանը կամ հանդես չգալ նման միջնորդությամբ, ինչը բխում է նաև տնօրինչականության սկզբունքից: Այլ կերպ ասած՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ իրավագոր չէ հայցն առանց քննության թողնել, այլ նշված հարցը կարող է դատարանի կողմից քննարկման առարկա դարձվել միայն այն պարագայում, երբ կողմը միջնորդության միջոցով հղում է կատարել նշված համաձայնությանը.

3) *միջնորդությունը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը:* Այսինքն՝ օրենսդիրը սահմանել է որոշակի ժամանակամիջոց, որի ընթացքում կողմը կարող է հանդես գալ նման միջնորդությամբ, այն է՝ նման միջնորդությունը պետք է բերվի ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծությունը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս արձանագրելու, որ «վեճի էություն» եզրույթի տակ պետք է հասկանալ դրա բուն էությունը՝ նյութաիրավական տեսանկյունից, իսկ որպես կողմի առաջին հայտարարության ներկայացում պետք է դիտարկել դրա վերաբերյալ ցանկացած դիրքորոշում ներկայացնելը, որը կարող է դրսևորվել ինչպես հայցադիմումի պատասխան, առարկություն ներկայացնելով, այնպես էլ դատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ թույլատրելի միջոցներով: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումները բխում են նաև ողջամիտ ժամկետում գործերի քննության, դատական ռեսուրսները ողջամիտ օգտագործելու սկզբունքներից, որոնք երկեստային բնույթ ունեն.

4) *արբիտրաժային համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել:* Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արբիտրաժային համաձայնության հիման վրա արբիտրաժին դիմելու հնարավորությունը վերացած չլինելու հանգամանքը պետք է նկատի ունենալ օբյեկտիվ առումով, և այն չպետք է կախված լինի կողմերի կամքից (օրինակ՝ առևտրային արբիտրաժը, որին հանձնվել է գործի քննությունը, չի դադարեցրել իր գործունեությունը, առևտրային արբիտրաժի կանոնադրությամբ նման վեճերի քննությունը դեռևս հնարավոր է իրականացնել տվյալ արբիտրաժային դա-

տարանում և այլն):

Հետևաբար կողմերից մեկի կողմից հայցը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, առանց քննության թողնելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարանը պետք է պարզի վերոգրյալ նախադրյալների միաժամանակյա առկայությունը և միայն դրանց առկայության պայմաններում՝ որոշում կայացնի հայցն առանց քննության թողնելու վերաբերյալ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ ընդհանուր կանոնից օրենսդիրը սահմանել է **բացառություն**: Մասնավորապես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, եթե այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարանն զիջելու հնարավորությունը չի վերացել, **բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնության առկայությունն օրենքով սահմանված դեպքերում չի սահմանափակում կողմի՝ դատարանն զիջելու իրավունքը**:

Վկայակոչված նորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ դատարանները քննարկման առարկա պետք է դարձնեն նաև այն հարցը, թե արդյոք արբիտրաժային համաձայնության առկայությունը սահմանափակում է կողմի՝ դատարանն զիջելու իրավունքը՝ քննարկման առարկա դարձնելով նաև օրենքով սահմանված վերապահումները:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ նմանաբնույթ կարգավորում նախատեսված է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողների կնքած պայմանագրերով նախատեսված արբիտրաժային համաձայնությունը, որը կարող է լինել ինչպես պայմանագրում ներառված վերապահման ձևով, այնպես էլ որպես դրա բաղկացուցիչ մաս, հավելված կամ պայմանագիր կնքելու գործընթացի պայման, չի զրկում սպառողին պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարանն հանձնելու իրավունքից, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Նույն մասի դրույթները տարածվում են նաև ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարանն զիջելու իրավունքը կարող է սահմանափակվել:

Վկայակոչված նորմի բովանդակությունից բխում է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձանց համար օրենսդիրը վերապահել է հայեցողական լիազորություն՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը հանձնելու դատարանին կամ արբիտրաժին՝ անկախ պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությունից, որը կարող է լինել ինչպես պայմանագրում ներառված վերապահման ձևով, այնպես էլ՝ որպես դրա բաղկացուցիչ մաս, հավելված կամ պայմանագիր կնքելու գործընթացի պայման: Այսինքն՝ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձը զրկված չէ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարանն հանձնելու իրավունքից, ավելին՝ նույն մասի դրույթները տարածվում են նաև ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարանն զիջելու իրավունքը կարող է սահմանափակվել: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը ֆինանսական կազ-

մակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձին տվել է բացարձակ հայեցողական լիազորություն՝ տնօրինչականության սկզբունքից ելնելով որոշելու, թե պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճի լուծումը քաղաքացիական իրավունքների պաշտպանության ինչպիսի ձևով իրականացնել՝ դատական, թե հասարակական (արբիտրաժային)՝ ոչ իրավաչափ համարելով այդ իրավունքի ցանկացած սահմանափակում: Նշված ընդհանուր սկզբունքից օրենսդիրը կատարել է բացառություն միայն այն դեպքերի համար, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Այս պարագայում միայն դատարանն անվերապահորեն կարող է հայցը թողել առանց քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով՝ վերը թվարկված վավերապայմանների միաժամանակյա առկայության պարագայում:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական շրջանառության մասնակից ֆինանսական կազմակերպության հետ նրա մատուցած ծառայություններից (բանկային գործառնություններից) օգտվելու վերաբերյալ պայմանագիր կնքած ֆիզիկական անձ սպառողի համար նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման մասով պետությունն ընդհանուր կանոնից բացառություն է կատարել, և հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը՝ որոշակի պայմանների առկայության դեպքում որպես այդ իրավունքի պաշտպանությունն իրականացնող ճանաչել է նաև ընդհանուր իրավասության դատարաններին՝ այն պայմանավորելով նաև նրանով, որ իրավունքներն այս ձևով պաշտպանելու դեպքում վեճի քննությունը և լուծումն իրականացվում է օրենքով հստակ սահմանված դատավարական կարգով, ու կայուն երաշխիքներ են ստեղծվում գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու, կողմերի դատավարական իրավունքների իրացումն ապահովելու համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառողի՝ պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը դատարան հանձնելու իրավունքը չի կարող կրել սահմանափակումներ, և այդպիսի վեճը, եթե վերջինիս կողմից հանձնվել է դատարանին, պետք է ըստ էության քննվի՝ չնայած կնքված պայմանագրով նախատեսված արբիտրաժային համաձայնությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի և Սվետլանա Գևորգյանի միջև 13.09.2012 թվականին կնքվել է թիվ ՎՊ 12/191-47 կրեդիտավորման (վարկավորման) պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Բանկը պարտավորվել է նույն պայմանագրով նախատեսված պայմաններով Սվետլանա Գևորգյանին տրամադրել 2.500.000 ՀՀ դրամի չափով կրեդիտ/վարկ, իսկ Սվետլանա Գևորգյանը պարտավորվել է վերադարձնել այն և տոկոսներ վճարել դրա դիմաց, իսկ Պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ կրեդիտը համարվում է նպատակային և տրամադրվում է անձնական սպառողական նպատակներով օգտագործելու համար: Պայմանագրի 9.5 կետի համաձայն՝ պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերի

լուծումը, բացառելով Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին, որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան:

Սվետլանա Գևորգյանը հայց է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ճանաչել Բանկի հետ 13.09.2012 թվականին կնքված կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր իրավունքների խախտման փաստը, Բանկից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Բանկին պարտադրել իրականացնել վերը նշված պայմանագրի հիման վրա գոյացած պարտավորությունների վերահաշվարկ և համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ընդհանուր ծախսը: Բանկը 11.11.2016 թվականին միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ հայցը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով առանց քննության թողնելու մասին:

Դատարանը, պատճառաբանելով նաև, որ «սույն գործով կողմերի միջև առկա վեճն իր բնույթով առևտրային վեճ է, առկա է կողմերի միջև արբիտրաժային համաձայնություն, Բանկը դիմել է Դատարան հայցն առանց քննության թողնելու խնդրանքով, չի սպառվել արբիտրաժային համաձայնության հիման վրա արբիտրաժային դատարան դիմելու հնարավորությունը», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 3-րդ կետով, 24.02.2017 թվականին որոշում է կայացրել հայցն առանց քննության թողնելու մասին:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «պայմանագրերի կողմերը, ազատ լինելով իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում, այնուամենայնիվ, կատարել են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված պահանջը, և իրենց այդ ազատությունը ենթարկել են սահմանափակման՝ նախատեսելով, որ վեճերը լուծման համար Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին հանձնելը կատարվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժ» համապատասխան», «սույն գործով ներկայացված պահանջը ենթակա է քննության Դատարանում, մինչդեռ անտեսելով վերը նշված իրավադրույթների իմպերատիվ պահանջը, ինչպես նաև սխալ գնահատելով կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությունը, Դատարանը ոչ ճիշտ հետևության է հանգել հայցն առանց քննության թողնելու հիմքի առկայության վերաբերյալ, ինչն ազդել է գործի ելքի վրա», 07.09.2017 թվականի որոշմամբ Սվետլանա Գևորգյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 24.02.2017 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը բեկանել է, և գործն ուղարկել է նոր քննության:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Բանկի և Սվետլանա Գևորգյանի միջև 13.09.2012 թվականին կնքված թիվ ՎՊ 12/191-47 կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրով վերջինս Բանկից նույն պայմանագրով նախատեսված պայմաններով ստացել է 2.500.000 ՀՀ դրամի չափով վարկ՝ պարտավորվե-

յով վերադարձնել այն և տոկոսներ վճարել դրա դիմաց: Պայմանագրի 1.6 կետի համաձայն՝ կրեդիտը համարվել է նպատակային և տրամադրվել է անձնական սպառողական նպատակներով օգտագործելու համար: Նշված փաստերից բխում է, որ Սվետլանա Գևորգյանը հանդիսացել է ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ սպառող:

Սվետլանա Գևորգյանը հայց է ներկայացրել Դատարան՝ պահանջելով ճանաչել Բանկի հետ 13.09.2012 թվականին կնքված կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր իրավունքների խախտման փաստը, Բանկից բռնագանձել 300.000 ՀՀ դրամ, ինչպես նաև Բանկին պարտադրել իրականացնել վերը նշված պայմանագրի հիման վրա գոյացած պարտավորությունների վերահաշվարկ և համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ընդհանուր ծախսը, որպիսի պահանջը Սվետլանա Գևորգյանի և Բանկի միջև 13.09.2012 թվականին կնքված թիվ ՎՊ 12/191-47 կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրից բխող և դրա հետ կապված վեճ է:

Այսինքն՝ տվյալ դեպքում Սվետլանա Գևորգյանը հանդես է եկել որպես ֆիզիկական անձ սպառող, ով օգտվել է ֆինանսական կազմակերպություն Բանկի՝ վարկ տրամադրելու ձևով մատուցած ծառայությունից (իրականացված գործառնությունից): Նրանց միջև կնքված պայմանագրում, մինչև նրանց միջև սույն գործով վեճը ծագելը, վերապահման ձևով ներառվել է համապատասխան արբիտրաժային համաձայնություն, որի էությունից բխում է, որ սույն հայցի հիմքում նշված վեճը ևս ենթակա է հանձնման Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին: Մասնավորապես՝ Բանկի և Սվետլանա Գևորգյանի միջև 13.09.2012 թվականին կնքված թիվ ՎՊ 12/191-47 կրեդիտավորման (վարկավորման) պայմանագրի 9.5 կետով նախատեսվել է, որ նույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին, որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված արբիտրաժային համաձայնությունը Սվետլանա Գևորգյանին չի զրկում նրանց միջև վերը նշված պայմանագրից բխող և դրա հետ կապված վեճն ընդհանուր իրավասության դատարան հանձնելու իրավունքից և վերջինս, իրացնելով իրեն վերապահված հայեցողական լիազորությունը, պայմանագրից բխող վեճը հանձնել է դատարանի քննությանը: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի 24.02.2017 թվականի «Հայցն առանց քննության թողնելու մասին» որոշումը, եկել է ճիշտ եզրահանգման:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայությունը, ուստի՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրի-

նական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի դատական ակտը սխալ է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Վճռաբեկ բողոքի պատրասխանում քերված փաստարկները հիմնավորվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խեղամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է՝ հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք քերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են՝ սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, որպիսի պարագայում սույն գործը Վերաքննիչ դատարանի որոշման ուժով ենթակա է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.09.2017 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0441/02/16
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Ա. Հունանյան
Ա. Մկրտչյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0441/02/16**
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԼԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լուսինե Հովսեփյանի ներկայացուցիչներ Արամազդ Կիվիրյանի և Ծովիկար Բալայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լուսինե Հովսեփյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ազատությունից ապօրինի զրկելու հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Հովսեփյանը պահանջել է Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ ոստիկանության կողմից իրեն անազատության մեջ ապօրինի պահելու հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.04.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.07.2017 թվականի որոշմամբ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ոստիկանու-

թյան, վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 10.04.2017 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ սույն քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Լուսինե Հովսեփյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 40-րդ, 109-րդ, 205-րդ, 213-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 162.1-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ, 100-րդ, 102-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարճատաքանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Լուսինե Հովսեփյանը հայց ներկայացնելիս ղեկավարվել է բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներով, որոնցով սահմանված չէ, որ անձը պարտականություն ունի նախքան Հայաստանի Հանրապետության դեմ ոչ նյութական վնասի հատուցման պահանջով հայց ներկայացնելը, այդ վնասի փոխհատուցման պահանջով դիմել վնասը պատճառած վարչական մարմնին: Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածով սահմանված նորմը սույն գործով կիրառելի չէ, քանի որ Լուսինե Հովսեփյանի պահանջը ներկայացված է ոչ թե ՀՀ ոստիկանության, այլ՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Ընդ որում, Լուսինե Հովսեփյանն անհրաժեշտ և նպատակահարմար չի գտել իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցումը պահանջել վարչական կարգով, քանի որ այդ պահանջը հավանաբար կմերժվեր ՀՀ ոստիկանության կողմից: Փաստորեն, սույն քաղաքացիական գործի վարույթը կարճվելու հետևանքով Լուսինե Հովսեփյանը մեկընդմիջտ գրկվել է իրեն պատճառված բարոյական վնասի հատուցում ստանալու իրավունքից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով վերաքննիչ բողոքը բերվել է ՀՀ ոստիկանության կողմից, մինչդեռ սույն գործով պատասխանող կողմ է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունը, այլ ոչ թե ՀՀ ոստիկանությունը, հետևաբար ՀՀ ոստիկանության վերաքննիչ բողոքը չէր կարող ընդունվել Վերաքննիչ դատարանի վարույթ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 04.07.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 10.04.2017 թվականի վճիռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Թիվ ՎԴ/9046/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 09.07.2015 թվականի վճռով Լուսինե Հովսեփյանի հակընդդեմ հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, մասնակիորեն

բավարարվել է և Լուսինե Հովսեփյանին 04.09.2013 թվականին վարչական ձերբակալման ռեժիմում երեք ժամից ավելի պահելուն ուղղված ՀՀ ոստիկանության գործողությունները ճանաչվել են ոչ իրավաչափ: ՀՀ վարչական դատարանի վճիռն այդ մասով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 13-47**):

4. Վճռաբեկ դատարանի պայմանադրականությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման կառուցակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *ինչպիսի՞ վարչական և դատավարական գործողությունների միջոցով անձը կարող իրացնել ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պայմանավորված ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքը,*

2) *ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պայմանավորված ոչ նյութական վնասի հատուցման հայցապահանջի հիման վրա հարուցված գործն ընդդիմադրելով արդյո՞ք ընդհանուր իրավասության դատարանին:*

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտի հրապարակման հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառով ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները. (1) կյանքի իրավունքը. (2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը. (3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը. (4) արդար դատաքննության իրավունքը. (5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը. (6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը. (7) հավաքների և միավորման ազատության իրավունքը. (8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը. (9) սեփականության իրավունքը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Վերը նշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը մարդու հիմնարար իրավունքների շարքում ամրագրել է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, այդ թվում նաև՝ վարչարարությամբ, պատճառված վնասի հատուցման իրավունքը՝ այդ վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանելու իրավասությունը վերապահելով օրենսդրին:

ՀՀ սահմանադրական դատարանը, դեռևս 05.11.2013 թվականի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի երաշխավորված իրացման անհրաժեշտության հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը: Ազատությունից ապօրինի զրկելու կամ ապօրինի խուզարկության դեպքում անձին պատճառված վնասը չի կարող մեխանիկորեն հանգեցվել սոսկ կրած ֆիզիկական կամ նյութական վնասի փոխհատուցմանը, քանզի տվյալ դեպքում տուժած անձին տրամադրված փոխհատուցումը համարժեք չի լինի վերջինիս կրած հոգեկան տառապանքներին: Միաժամանակ ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանցով

պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը և չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված հարաբերությունների ընդհանուր իրավակարգավորումները նախատեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ իրավակարգավորումների մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ոչ նյութական վնասի հատուցում կարելի է պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմնարար իրավունքներից որևէ մեկի կամ միաժամանակ մի քանիսի խախտման դեպքում. դրանցից է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը: ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հատուցման է ենթակա միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից պատճառված ոչ նյութական վնասը: Ընդ որում, վերոնշյալ անձանց կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում. այն պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից (*տե՛ս, Մամիկոն Սյրեխանյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցումը տեղի է ունենում դատական կարգով: Այլ կերպ ասած, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով շահագրգիռ անձը, որպես ընդհանուր կանոն, կարող է անմիջապես դիմել դատարան: Մինևնույն ժամանակ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 5-րդ մասում այդ ընդհանուր կանոնից կատարել է բացառություն՝ սահմանելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց՝ վարչարարություն հանդիսացող ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այլ կերպ ասած, եթե ոչ նյութական վնասը պատճառվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով, ապա այդ դեպքում կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված վարչական մարմինների և

մասնավոր անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող կանոնները:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը (...) կարգավորում է (...) վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝ վարչական մարմիններ՝ (ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ. (բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ. (գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման նույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության (...) հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝ (ա) Հայաստանի Հանրապետությունը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում. (բ) համապատասխան համայնքը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պա-

տիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 07.11.2017 թվականի թիվ ՄԴՈ-1383 որոշմամբ անդրադառնալով հանրային իշխանության մարմինների ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձանց պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ անձանց հասցված վնասի (գույքային և ոչ գույքային բնույթի) հետ կապված հարաբերությունները՝ պայմանավորված հանրային իշխանության մարմինների գործունեությամբ, իրավակարգավորման ենթարկելիս առաջնահերթ հիմք են ընդունվել ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածով երաշխավորված՝ այդպիսի վնասի հատուցման իրավունքի բովանդակությունը և դրա իրացման ու պաշտպանության իրավական ընդհանուր սկզբունքները, մասնավորապես. անձն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով, անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը նախատեսել է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում պահանջելու նախապայման, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն կարող է հետևել վարչարարության հետևանքով վնաս պատճառած մարմնին հատուցման պահանջ ներկայացնելը: Այսինքն՝ պահանջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ նման նորմատիվ պայմանը հետապնդում է իրավական հիմնավոր նպատակ և միտված է պատճառված վնասի հատուցման (վարչական կամ դատական կարգով) Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացման համար իրավական բարենպաստ պայմաններ (նախադրյալներ) ստեղծելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման կառուցակարգին, իր նախկին որոշումներում ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (*տե՛ս, ժորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանա-*

քեռ-Ջեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածով ու նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավադրույթների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ նշված օրենսդրական ակտերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտների հարցում նախատեսել են նույնանման իրավական կարգավորումներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դեպքում՝ համապատասխան համայնքը: Իր հերթին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ համապատասխան համայնքը:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականությունը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը նախատեսել է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը: Այլ կերպ ասած, Հայաստանի Հանրապետությունից կամ համայնքից ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցումը կարող է պահանջվել այն վարչական մարմնից, որի ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառվել է այդ վնասը: Տվյալ դեպքում ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցելու պարտականությունը կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, որոնք այդ պարտականությունը կատարում են համապատասխան վարչական մարմինն ներկայացված՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշված դիմումը քննարկելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն բավարարելու մասին որոշում ընդունելու միջոցով:

Նախկինում կայացված որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ և 102-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վնասի հա-

տուցման պահանջի մասին անձի դիմումի նկատմամբ կիրառելի են օրենքով վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, իսկ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը վարչական մարմինը քննարկում և լուծում է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումների քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Փաստորեն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է (յոեն, *Էրիկ Վարդանյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դիմելով համապատասխան վարչական մարմնին՝ շահագրգիռ անձը հայցում է իր պահանջի բավարարման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում: Մյուս կողմից, իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժվում է համապատասխան վարչական մարմնի կողմից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին որոշումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է միջամտող վարչական ակտ, քանի որ այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված՝ վարչական ակտի հասկացությանը բնորոշ բոլոր հատկանիշներին (*վարչական ակտի հասկացության մասին առավել մանրամասն տե՛ս Ռոբերտ Հովհաննիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից լրիվ կամ մասնակիորեն մերժվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել իր խախտված իրավունքների ինչպես վարչական, այնպես էլ դատական պաշտպանության՝ մասնավորապես, դատարանի առջև բարձրացնելով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև պահանջելով պարտավորեցնել համապատասխան վարչական մարմնին ընդունելու շահագրգիռ անձի դիմումով հայցվող համապատասխան բարենպաստ վարչական ակտը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված նմանատիպ վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր իրավա-

սության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի: Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդդատությունը՝ որպես դատավարական ինստիտուտ, դատավարական նորմերի այնպիսի համակցություն է, որոնք կարգավորում են դատարանի քննությանը ենթակա բոլոր գործերի բաշխումը ՀՀ դատական իշխանության առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև: Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր իրավասության դատարանի ընդդատության շրջանակն ընդգրկում է բոլոր գործերը՝ բացառությամբ վարչական դատարանի քննությանը վերապահված գործերի, իսկ վարչական դատարանի ընդդատության շրջանակը ներառում է հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, դատական գործերի տարանջատումը քաղաքացիականի և վարչականի պայմանավորված է այդ գործերով վիճելի իրավահարաբերության բնույթով. կոնկրետ գործի՝ առարկայական ընդդատության հարցը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել այդ գործով վիճելի իրավահարաբերության բնույթը, այսինքն՝ այն հարցը, թե արդյոք տվյալ գործը ծագում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճից: Այսպիսով, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին: Այսպես, ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշման՝ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակ-

ցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը (տե՛ս, «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մերավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները):

Հաշվի առնելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ այն վարչական մարմինը, որի ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձանց պատճառվել է ոչ նյութական վնաս: Քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն այդ վարչական մարմնի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման, այն է՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պարտականությունն է, որը ծագում է պատշաճ վարչարարության ապահովման միջոցով մարդու հիմնարար իրավունքների երաշխավորված իրացմանն ուղղված հանրային շահի կենսագործման կապակցությամբ: Հետևաբար ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունից բխող վեճերն ընդդատյա են վարչական դատարանին և ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև այդ դիմումով հայցվող ոչ նյութական վնասի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու հարցը վարչական դատարանի առջև կարող է բարձրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով շահագրգիռ անձը կարող է պահանջել պարտավորեցնել ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած վարչական մարմնին ընդունելու դրա հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է այդ վարչական մարմնի կողմից: Տվյալ դեպքում շահագրգիռ անձի ներկայացրած հայցը ներառում է նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշումը վիճարկելու պահանջը: Ընդ որում, վերոհիշյալ պահանջներով վարչական դատարան ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պատասխանող է հանդես գալիս այն վարչա-

կան մարմինը, որը լրիվ կամ մասնակիորեն մերժել է իր կողմից դրսևորված ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու մասին շահագրգիռ անձի դիմումը, քանի որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի (այդ թվում նաև՝ ոչ նյութական) հատուցման պարտականությունը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանողն այն վարչական մարմինն է (...), որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից չքննարկվելու պարագայում առաջանում է օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիան, որի ուժով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական մարմնի կողմից չընդունված բարենպաստ վարչական ակտը՝ վնասի հատուցում տրամադրելու մասին, կարող է համարվել ընդունված, եթե առկա են դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ընդ որում, նշված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում այդ վարչական ակտից բխող իրավունքները դրա հասցեատիրոջ կողմից կարող են արդյունավետ կերպով իրացվել, եթե տվյալ անձին տրամադրվի հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունված լինելը հավաստող համապատասխան փաստաթուղթը: Այդ նպատակին է ծառայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակը, որի համաձայն՝ հայցվորը կարող է պահանջել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը (*վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կապակցությամբ քննարկվող իրավական կառուցակարգի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Էրիկ Վարդանյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը ՀՀ իրավական համակարգում իրացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախևառաջ ոչ նյութական վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատա-

րած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմինն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջով,

3) ոչ նյութական վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) ոչ նյութական վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով վարչական դատարան դիմելու միջոցով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ թիվ ՎԴ/9046/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 09.07.2015 թվականի վճռով, որը մտել է օրինական ուժի մեջ, ոչ իրավաչափ է ճանաչել Լուսինե Հովսեփյանին վարչական ձեռքակալման ռեժիմում 04.09.2013 թվականին երեք ժամից ավելի պահելուն ուղղված ՀՀ ոստիկանության գործողությունները: Լուսինե Հովսեփյանը, առանց ոչ իրավաչափ վարչարարությամբ իրեն պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու պահանջով ՀՀ ոստիկանությանը դիմելու, հայցադիմում է ներակայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ ոստիկանության կողմից իրեն անազատության մեջ ապօրինի պահելու հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում:

Դատարանը բավարարել է Լուսինե Հովսեփյանի հայցը՝ թիվ ՎԴ/9046/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 09.07.2015 թվականի վճռով հաստատված հանգամանքները սույն գործով նախադատելի համարելով:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ոստիկանության, վերաքննիչ բողոքը և կարճել սույն գործի վարույթը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը (ինչը տվյալ դեպքում առկա է), ինչից հետո անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վնասի հատուցումը պահանջել դատական կարգով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում

է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն քաղաքացիական գործը հարուցվել է Լուսինե Հովսեփյանի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է Հայաստանի Հանրապետությունից բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ ոստիկանության կողմից իրեն անազատության մեջ ապօրինի պահելու հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում: Ընդ որում, ՀՀ ոստիկանության կողմից Լուսինե Հովսեփյանին անազատության մեջ պահելու հարցի իրավաչափությունը քննարկման առարկա է դարձել թիվ ՎԴ/9046/05/13 վարչական գործի շրջանակներում, որն ըստ էության լուծող դատական ակտով՝ 09.07.2015 թվականի վճռով, ՀՀ վարչական դատարանը Լուսինե Հովսեփյանին վարչական ձերբակալման ռեժիմում 04.09.2013 թվականին երեք ժամից ավելի պահելուն ուղղված ՀՀ ոստիկանության գործողությունները ճանաչել է ոչ իրավաչափ (ՀՀ վարչական դատարանի նշված վճիռը մտել է օրինական ուժի մեջ):

Փաստորեն, տվյալ դեպքում Լուսինե Հովսեփյանին առերևույթ պատճառված ոչ նյութական վնասն առաջացել է ՀՀ ոստիկանության կողմից Լուսինե Հովսեփյանին վարչական ձերբակալման ռեժիմում 04.09.2013 թվականին երեք ժամից ավելի պահելուն ուղղված ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ձերբակալման հետ կապված հարաբերությունների ընդհանուր իրավակարգավորումն օրենսդիրը սահմանել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն՝ (...) Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում (...):

Նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ (...):

Վկայակոչված իրավադրոյթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ վարչական ձերբակալումը հանդիսանում է վարչական հարկադրանքի միջոց, որի նպատակը վարչական իրավախախտումների կանխումը կամ անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթի իրականացման քնականոն ընթացքի ապահովումն է: Վարչական ձերբակալումը հանդիսանում է իրավասու վարչական մարմինների կողմից իրականացվող այնպիսի գործողություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ՝ ֆիզիկական անձը որոշակի ժամկետով զրկվում է ազատությունից: Այլ կերպ ասած՝ վարչական ձերբակալումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված վարչարարության հասկացությանը, որը բնորոշվում է որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետ-

լանքներ: Հետևաբար անձին ոչ իրավաչափ վարչական ձեռքակալման արդյունքում պատճառված ոչ նյութական վնասը համարվում է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնաս, որը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավական վերլուծություններից բխում է, որ Լուսինե Հովսեփյանը, սույն գործով դիմելով դատարան, հետապնդել է ՀՀ ոստիկանության ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում իրեն առերևույթ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու նպատակ: Մինչդեռ Լուսինե Հովսեփյանը չի պահպանել ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իր ենթադրյալ իրավունքի իրացման պատշաճ ընթացակարգը: Մասնավորապես՝ Լուսինե Հովսեփյանին վարչական ձեռքակալման ռեժիմում 04.09.2013 թվականին երեք ժամից ավելի պահելուն ուղղված ՀՀ ոստիկանության գործողությունները դատական կարգով ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո Լուսինե Հովսեփյանը ոչ նյութական վնասի հատուցման պահանջով պետք է դիմեր ոչ իրավաչափ գործողություն կատարած վարչական մարմնին՝ ՀՀ ոստիկանությանը: ՀՀ ոստիկանության կողմից ոչ նյութական վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքում Լուսինե Հովսեփյանը կարող էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ՀՀ ոստիկանությանը ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով: Սակայն Լուսինե Հովսեփյանը, շրջանցելով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իր ենթադրյալ իրավունքի իրացման վերոգրյալ պատշաճ ընթացակարգը, իրեն վարչական ձեռքակալման ռեժիմում երեք ժամից ավելի պահելուն ուղղված՝ ՀՀ ոստիկանության գործողությունները դատական կարգով ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո միանգամից դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Իսկ ըստ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավահարաբերությունից բխող վեճերն ընդդատյա են վարչական դատարանին և ենթակա են քննության ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար սույն գործով Լուսինե Հովսեփյանի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի առջև բարձրացված վեճը, որը բխում է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման հետ կապված հանրային իրավահարաբերությունից, ընդդատյա չէ ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի՝ առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված լինելը տվյալ գործի քննության ընթացքում պարզվելու դեպքում ընդհանուր իրավասության դատարանը, ի տարբերություն վարչական դատարանի, իրավասու չէ այն հանձնել այլ դատարանի քննությանը: Տվյալ պարագայում ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, որի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: Այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ գործի քննության ընթացքում պարզվում է, որ այն վարույթ է ընդունվել առարկայական ընդդատության կանոնների խախտմամբ, ընդհանուր իրավասության դատարանը պարտա-

վոր է վճիռ կայացնել գործի վարույթը կարճելու մասին այն հիմքով, որ տվյալ գործը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության (յրեն, Գործիչիսան Իշիկյանն ընդդեմ «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՄՆԵՐ» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա էր կարճման այն հիմքով, որ վեճը ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանում քննության, քանի որ սույն գործով վեճը բխում է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման հետ կապված հանրային իրավահարաբերությունից և ընդդատյա չէ ընդհանուր իրավասության դատարանին: Փաստորեն, Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է կայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ ՀՀ ոստիկանությունն իրավասու չէր վերաքննիչ բողոք ներկայացնել սույն գործով պատասխանող Հայաստանի Հանրապետության անունից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության անունից դատարանում հանդես գալու հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության անունից Հայաստանի Հանրապետության դատարաններում հանդես գալու իրավունք վերապահալու մասին» թիվ 372-Ն որոշմամբ, որի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության նախարարներին, Հայաստանի Հանրապետության կառավարության աղբյուրներ պետական կառավարման մարմինների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ լիազորել իրենց համակարգի աշխատողներին կամ այլ անձանց հանդես գալու Հայաստանի Հանրապետության կառավարության անունից՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության անունից վերաքննիչ բողոք բերելու ՀՀ ոստիկանության լիազորության առկայության կամ բացակայության հարցը պետք է գնահատվի ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 372-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումների համատեքստում:

Սույն գործում առկա՝ 03.08.2016 թվականի թիվ 02/13.3/11362-16 գրությունից հետևում է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 372-Ն որոշումը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանին հայտնել է սույն գործով ներկայացուցիչ մասնակցությունն ապահովելու ՀՀ վարչապետի հանձնարարության մասին (**հատոր 1-ին, գ.թ. 70**): Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված գրությունը հաստատում է իր համակարգի աշխատողներին կամ այլ անձանց ՀՀ կառավարության անունից դատարանում հանդես գալու լիազորություն տրամադրելու՝ ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 372-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանության պետին վերապահված իրավունքի իրացման իրավական նախադրյալի՝ ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարության առկայությունը: Հետևաբար սույն գործով ՀՀ ոստիկանության պետն իրավասու էր դատարաններում Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու ինչպես անձամբ, այնպես էլ իր համակարգի աշխատողների կամ այլ անձանց միջոցով:

ՀՀ ոստիկանության պետը, օգտվելով իր այդ լիազորությունից, 28.04.2017 թվականին լիազորել է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնի ավագ տեսուչ Արթուր Պիվազյանին սույն քաղաքացիական գործով ներկայացնել վերաքննիչ բողոքը (**հատոր 2-րդ, գ.թ. 13**): Վերջինս էլ ստորագրել և 05.05.2017 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ դրան կցելով վերը նշված լիազորագիրը: Փաստորեն, ՀՀ ոստիկանության պետի տված լիազորագրի հիման վրա ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության իրավական պաշտպանության բաժնի ավագ տեսուչ Արթուր Պիվազյանի կողմից ստորագրված վերաքննիչ բողոքը համարվում է սույն գործով պատասխանող Հայաստանի Հանրապետության անունից պատշաճ կերպով ներկայացված վերաքննիչ բողոք: Ուստի բողոքը բերած անձանց այն փաստարկը, որ ՀՀ ոստիկանության վերաքննիչ բողոքը չպետք է ընդունվեր Վերաքննիչ դատարանի վարույթ, անհիմն է:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, կարճելով սույն քաղաքացիական գործի վարույթը, կայացրել է իրավաչափ դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության (...):

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ սույն քաղաքացիական գործի վարույթը՝ կարճման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Լուսինե Հովսեփյանի կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարը՝ 6.000 ՀՀ

դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2017 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1961/05/15

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԳ/1961/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.10.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ֆելիքս Մելիքյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ 29.04.2015 թվականի թիվ Վ-15/4 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ֆելիքս Մելիքյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 03.02.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 07.10.2016 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.02.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:
 Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ֆելիքս Մելխակյանի ներկայացուցիչ Կարապետ Բաղալյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ, 154-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել ու գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, որոնք հաստատում են այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի թիվ Վ-20/4 որոշմամբ Ֆելիքս Մելխակյանի նկատմամբ տուգանքի նշանակումից հետո վերջինս շարունակել է ինքնակամ շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց գտնվող շինության (կցակառույցի) տանիքին ինքնակամ իրականացնելով շվաքարանի կառուցման շինարարական աշխատանքներ: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի կիրառումն անհիմն է, քանի որ վարչական վարույթի նյութերով ապացուցվում է Ֆելիքս Մելխակյանի կողմից թույլ տրված արարքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի առկայությունը:

Վերադրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.10.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայրը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Ֆելիքս Մելխակյանին վերագրվող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցանքը հայտնաբերելու պահին վերջինս չի համարվել նախկինում տույժի ենթարկված անձ, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար նշանակված տույժի կատարումից անցել է ավելի քան մեկ տարի, և այդ ընթացքում Ֆելիքս Մելխակյանը որևէ իրավախախտում չի կատարել: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, վերհանելով գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտելով ապացույցները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի կիրառմամբ իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) կողմից 22.05.2013 թվականին կազմված թիվ 009979 արձանագրության համաձայն՝ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց առանց հողօգտագործման իրավունքի և քաղաքաշինական համապատասխան

փաստաթղթերի Ֆելիքս Մելսակյանի իրականացրել է կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքներ, ինչը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի հատկանիշներին (**հատոր 1-ին, գ.թ. 40**):

2) Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ Վ-20/4 որոշման համաձայն՝ Ֆելիքս Մելսակյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա, կցակառույցի կառուցման ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 41**):

3) «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի 24.07.2013 թվականի անդորրագրի համաձայն՝ Ֆելիքս Մելսակյանի կողմից հոգուտ Երևան համայնքի կատարվել է 400.000 ՀՀ դրամի չափով վճարում՝ որպես Վարչության 22.05.2013 թվականի թիվ 009979 արձանագրությամբ հայտնաբերված վարչական իրավախախտման համար նշանակված տուգանքի գումար (**հատոր 1-րդ, գ.թ. 45**):

4) Վարչության կողմից 08.04.2015 թվականին կազմված թիվ 019274 արձանագրության համաձայն՝ 01.04.2015 թվականին հայտնաբերվել է, որ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց Ֆելիքս Մելսակյանի նկատմամբ 22.05.2013 թվականին կազմված թիվ 009979 արձանագրության հիման վրա Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի թիվ Վ-20/4 որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Ֆելիքս Մելսակյանը շարունակել է շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ շինության տանիքին իրականացվել են շվաքարանի կառուցման շինարարական աշխատանքներ, ինչը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի հատկանիշներին (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

5) Քաղաքապետարանի «Թիվ Վ-15/4 գործի քննության վերաբերյալ» 29.04.2015 թվականի արձանագրության համաձայն՝ Ֆելիքս Մելսակյանի ներկայացուցիչը բացատրություն է տվել այն մասին, որ անձրևաջրերի՝ տուն լցվելու պատճառով Ֆելիքս Մելսակյանը կառուցել է տանիք՝ ժամանակավոր ծածկ, որի համար չի ունեցել շինարարության թույլտվություն (**հատոր 1-ին, գ.թ. 25-26**):

6) Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշման համաձայն՝ Ֆելիքս Մելսակյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.500.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի թիվ Վ-20/4 որոշմամբ Ֆելիքս Մելսակյանի նկատմամբ տուգանքի նշանակումից հետո վերջինս շարունակել է ինքնակամ շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց գտնվող շինության (կցակառույցի) տանիքին ինքնակամ իրականացվել են շվաքարանի կառուցման շինարարական աշխատանքներ (**հատոր 1-ին, գ.թ. 23-24**):

4. Վճարելի դատարանի պարճառարանությունները և եզրահանգումները

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու զանցակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ և 154-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքը կատարվել է առաջին անգամ ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույն) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝ եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել, ապա այդ անձը համարվում է վարչական տույժի չենթարկված:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առա-

ջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքներ կատարել շարունակելը նույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար: Ընդ որում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու զանցակազմի հետևյալ դրսևորումները.

1) սեփականության կամ հոգստագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը (բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան),

2) գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա բնակելի տուն ինքնակամ կառուցելը,

3) հոգստագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ թեև վկայակոչված իրավախախտումներից յուրաքանչյուրն ունի միայն իրեն բնորոշ առանձնահատկությունները (արարքի կատարման վայրը, կառուցվող շինության տեսակը, արարքը կատարող սուբյեկտը, կիրառվող սանկցիան), սակայն դրանց համար ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում այդ զանցակազմերը կարող են առկա լինել միայն ինքնակամ կառույցի (շենքի, շինության) կառուցման պարագայում: Ըստ այդմ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված բոլոր արարքներն ընդգրկվում են շենքեր ու շինություններ ինքնակամ կառուցելու զանցանքի միասնական հասկացության մեջ, որի ոտնձգության օբյեկտը քաղաքաշինության բնագավառում օրենսդրությամբ սահմանված իրավակարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է (*տես, Սասունիկ Սշեցյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի թիվ ՎԴ/9692/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների, այդ թվում նաև՝ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու համար՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով տուգանք նշանակելուց հետո: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ այս վարչական իրա-

վախախտումն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հետևյալ արարքով. շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է կատարել այն նույն ինքնակամ շինարարությունը, որի համար նախկինում ենթարկվել է վարչական պատասխանատվության: Փաստորեն, օրենսդիրը նախատեսել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայմանն ինքնակամ շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելու և վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո դրանց կատարումը շարունակելու փաստական հանգամանքների միաժամանակյա առկայությունն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված վարչական իրավախախտման հասարակական վտանգավորությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ինքնակամ շինարարական աշխատանքների համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձը շարունակում է նույն օբյեկտի շինարարությունը՝ նպատակ ունենալով այն ավարտին հասցնել և ապահովել այդ ինքնակամ կառույցի շահագործման հնարավորությունը, ինչը քաղաքաշինական տեսանկյունից կարող է լուրջ սպառնալիքներ առաջացնել մարդկանց կյանքի և առողջության համար: Հետևաբար ինքնակամ շինարարական աշխատանքների համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելուց հետո այնպիսի շինարարական աշխատանքի կատարումը, որն ուղղված է տվյալ ինքնակամ շինությունն ավարտական տեսքի բերելուն և շահագործման համար պիտանի դարձնելուն, պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով (*տե՛ս, Արսյուն Խոջոյանն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի թիվ ՎՂ5/0137/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության կարող է ենթարկվել նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը կատարած անձը: Ընդ որում, *շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու* զանցանքի համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո տվյալ անձի կողմից այդ նույն շինարարական աշխատանքները շարունակելու դեպքում վերջինս ենթակա է վարչական պատասխանատվության *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու* զանցանքի համար՝ անկախ այն հանգամանքից, թե այդ անձը համարվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված», թե՛ ոչ:

Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում օրենսդրի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով ձևակերպված զանցակազմի օբյեկտիվ կողմի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ նշված զանցակազմն առաջանում է, եթե առաջին անգամ կատարված ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկված անձը շարունակում է ինքնակամ կերպով կատարել նույն շինարարական աշխատանք-

ները՝ **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվելուց հետո**: Փաստորեն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասում նկարագրված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկն արգելված արարքի՝ շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու, կատարման ժամանակն է. շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնական շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը չի սահմանել ժամանակի որևէ պահ, որից հետո կատարված՝ շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքն այլևս չի առաջացնում վարչական պատասխանատվություն: Այսինքն՝ սահմանելով շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի համար վարչական պատասխանատվություն առաջանալու այն պայմանը, որ տվյալ արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնական շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո, օրենսդիրը չի սահմանել այդ պահից հաշվարկվող այնպիսի ժամկետ, որի լրանալուց հետո շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի կատարումն այլևս չի առաջացնում վարչական պատասխանատվություն: Այլ կերպ ասած՝ ամեն դեպքում շենքեր և շինություններ ինքնական կառուցելու համար վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից նշված արարքը շարունակելը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բավարար է վերջինիս օրենսդրի կողմից սահմանված առավել խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Հետևաբար շենքերի և շինությունների ինքնական կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքի կատարման ժամանակը վարչական պատասխանատվության առաջացման տեսանկյունից էական նշանակություն ունի միայն այն առումով, որ քննարկվող ոչ իրավաչափ արարքը պետք է կատարվի նախկինում իրականացված ինքնական շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ ցանկացած ժամանակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածում սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում անձը համարվում է վարչական տույժի չենթարկված: Այդ պայմանները հանգում են հետևյալին. (1) այս կամ այն զանցանքի համար անձի նկատմամբ նշանակված վարչական տույժը՝ որպես պատասխանատվության միջոց, կատարված է, (2) վարչական տույժի կատարումից հետո մեկ տարվա ընթացքում տվյալ անձը չի կատարել նոր վարչական իրավախախտում: Ընդ որում, վկայակոչված իրավակարգավորման համատեքստում անձին վարչական տույժի ենթարկված կամ չենթարկված համարելու հարցը պայմանավորված չէ առաջին անգամ կատարված զանցանքի համար նշանակված վարչական տույժը կատարվելուց հետո մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ կատարված զանցանքի նույնական կամ նույնասեռ լինելով: Այսինքն՝ անձը համարվում է վարչական տույժի ենթարկված, եթե որևէ

զանցանքի համար նշանակված վարչական տույժը կատարվելուց հետո մեկ տարվա ընթացքում թույլ է տվել կամ նույն զանցանքը կամ որևէ այլ վարչական իրավախախտում:

Համադրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ և 38-րդ հոդվածների վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման շինարարական աշխատանքները շարունակելու արարքն առաջին անգամ ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո կատարելու հանգամանքը որևէ կերպ չի ազդում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված զանցանքի համար վարչական պատասխանատվության առաջացման վրա: Այլ կերպ՝ *շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու* զանցանքի համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկված անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված» համարվելու կամ չհամարվելու հանգամանքն էական նշանակություն չունի՝ *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու* համար վարչական պատասխանատվության առաջացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու* զանցակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացումը չի պայմանավորել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են, օրինակ, (ա) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված տուգանքի վճարված լինելը կամ չլինելը, (բ) այդ տուգանքի վճարումից հետո անցած ժամանակի տևողությունը, (գ) շենքեր և շինություններ ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու արարքի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված անձի» կողմից կատարված լինելը կամ չլինելը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ դեռևս 2013 թվականին Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա, առանց հողօգտագործման իրավունքի և քաղաքաշինական համապատասխան փաստաթղթերի Ֆելիքս Մեխակյանն իրականացրել է կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքներ: Նշված արարքի համար Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ Վ.-20/4 որոշմամբ Ֆելիքս Մեխակյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 400.000 ՀՀ դրամի չափով: Ֆելիքս Մեխակյանը կատարել է նշված վարչական ակտով նշանակված 400.000 ՀՀ դրամ տուգանքի վճարումը: Այնուհետև՝ 01.04.2015 թվականին, Վարչության աշխատակիցների կողմից հայտնաբերվել է, որ Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի թիվ Վ.-20/4 որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո Ֆելիքս Մեխակյանը շարունակել է ինքնակամ շինարարական աշխատանքները, մասնավորապես՝ Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց գտնվող շինության (կցակառույցի) տանի-

քին իրականացրել է շվաքարանի կառուցման ինքնակամ շինարարական աշխատանքներ: Նշված արարքի համար Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշմամբ Ֆելիքս Մելսակյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.500.000 ՀՀ դրամի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ֆելիքս Մելսակյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշումը:

Դատարանը բավարարել է Ֆելիքս Մելսակյանի հայցը՝ պատճառաբանելով, որ վիճարկվող վարչական ակտի ընդունման պահին լրացել է Ֆելիքս Մելսակյանի նկատմամբ նշանակված տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ժամկետը, և վարչական վարույթի նյութերում բացակայում է որևէ ապացույց նշված ժամանակահատվածում նոր իրավախախտում կատարված լինելու վերաբերյալ: Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով Ֆելիքս Մելսակյանը համարվել է վարչական տույժի չենթարկված, հետևաբար վերջինիս նկատմամբ չէր կարող կիրառվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը: Ըստ այդմ, Դատարանը գտել է, որ Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշումն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանման և կիրառման հետևանքով և ենթակա է վերացման:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը և անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, ըստ էության հիմնավոր է համարել Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները՝ գտնելով, որ *«(...) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման առկայությունը պարզելու նպատակով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը կարարելը շարունակելու վերաբերյալ փաստերը պարզելիս էական է նաև այն հանգամանքի պարզումը, թե նշված արարքներն այդ անձի կողմից շարունակվել են կարարվել վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում, թե՛ ոչ (...)»:*

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ֆելիքս Մելսակյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կատարումը շարունակելու* զանցանքի համար: Իսկ Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ *շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու* զանցանքի համար առաջին անգամ վարչական պատասխանատվության ենթարկված անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույ-

ծի ենթարկված» համարվելու կամ չհամարվելու հանգամանքն էական նշանակություն չունի *շենքերի և շինությունների ինքնակամ կառուցման կարարումը շարունակելու* համար վարչական պատասխանատվության առաջացման համար: Հետևաբար այն հանգամանքը, որ Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշմամբ Ֆելիքս Մելսակյանին վերագրվող արարքը կատարվել է Երևանի Առաքելյան փողոցի թիվ 2ա հասցեի տան դիմաց գտնվող կցակառույցի ինքնակամ շինարարական աշխատանքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի քաղաքապետի 26.06.2013 թվականի թիվ Վ-20/4 որոշմամբ նշանակված վարչական տույժի կատարումից մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո, որևէ կերպ չի ազդում սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափության վրա: Այլ կերպ ասած՝ այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշման ընդունման պահին Ֆելիքս Մելսակյանը չի համարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված անձ», չէր կարող վճռորոշ նշանակություն ունենալ այդ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու համար, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Փաստորեն, Դատարանը, ոչ իրավաչափորեն է հանգել այն եզրակացության, որ Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի խախտմամբ և այդ հիմքով ենթակա է անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պարզառարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտը՝ Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշումը, Դատարանի կողմից անվավեր է ճանաչվել միայն այն հիմքով, որ Ֆելիքս Մելսակյանը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, քանի որ վերջինս չի համարվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 38-րդ հոդվածի իմաստով «վարչական տույժի ենթարկված անձ»: Մինչդեռ սույն գործով Ֆելիքս Մելսակյանը Ծառայության պետի 29.04.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ» թիվ Վ-15/4 որոշման վիճարկման հայցի հիմքում դրել է նաև մի շարք այլ փաստարկներ ու հիմնավորումներ (մասնավորապես՝ վիճարկվող ակտն ընդունվել է ոչ իրավասու պաշտոնատար անձի կողմից, վարչական ակտով վերագրվող արարք չի կատարվել...), որոնց վերաբերյալ քննություն չի իրականացվել, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի մնացած հիմքերն ու հիմնավորումները քննության առարկա դարձնելու, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոն («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու և վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն ան-

հրաժեշտ է ուղարկել նոր քննության:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.10.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0839/05/16

Նախագահող դատավոր՝

Դատավորներ՝

Ա. Աբովյան

Ա. Բաբայան

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0839/05/16

2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.05.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աշոտ Գրիգորյանի ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի 04.12.2015 թվականի թիվ 127 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի որոշումը վերացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Գրիգորյանը պահանջել է վերացնել Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 04.04.2016 թվականի որոշմամբ վերակազմակերպման հիմքով ՀՀ ֆինանսների նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 22.07.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.05.2017 թվականի որոշմամբ Աշոտ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 22.07.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Աշոտ Գրիգորյանի ներկայացուցիչ Մեկնյա Սամսոնյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը և 2-րդ կետը, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 249-րդ հոդվածի 11-րդ մասը, ինչպես նաև խախտել է ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Աշոտ Գրիգորյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենայի մաքսային ձևակերպումը կատարվել է ՀՀ մշտական ​​​​քնակության ժամանող անձնական օգտագործման ապրանքների ներմուծման համար օրենքով սահմանված արտոնության կիրառմամբ: Այդ արտոնությամբ պայմանավորված՝ տվյալ ավտոմեքենան համարվել է պայմանականորեն բաց թողնված ապրանք. այն կարող էր օգտագործվել միայն արտոնության տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով և չէր կարող փոխանցվել այլ անձանց: Մինչդեռ սույն գործով հաստատվում է, որ նշված ավտոմեքենան ոչ թե ծառայել է Աշոտ Գրիգորյանի անձնական օգտագործման համար, այլ շահագործվել է այլ անձի՝ Մայա Տոնոյանի կողմից, ինչը հակասում է արտոնության տրամադրման պայմաններին: Հետևաբար Աշոտ Գրիգորյանն իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի հիմքով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.05.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.07.2016 թվականի վճիռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործում առկա է Աշոտ Գրիգորյանի կողմից ներմուծված անձնական օգտագործման ավտոմեքենայի շահագործման հետ կապված սահմանափակումները խախտելու, այդ ավտոմեքենայի նկատմամբ կիրառված արտոնության տրամադրման պայմաններին հակասող նպատակով այլ անձանց հանձնելու վերաբերյալ որևէ ապացույց: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավաչափորեն է հանգել այն եզրակացության, որ Աշոտ Գրիգորյանի արարքում բացակայում են ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցակազմի հատկանիշները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Աշոտ Գրիգորյանը 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպել է 26.260.403 ՀՀ դրամ մաքսային արժեքով «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան՝ օգտվելով մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման համար մաքսային վճարումների գծով օրենքով նախատեսված արտոնությունից: Մինչև նույն ժամանակ նշված արտոնության կիրառման ուժով առանց մաքսային մարմնի թույլտվության՝ այդ ավտոմեքենայի օտարումը մինչև 23.09.2018 թվականն արգելվել է (**հատոր 1-ին, գ.թ. 54, հատոր 2-րդ, գ.թ. 32**):

2) ՀՀ ֆինանսների նախարարության մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության կողմից 18.10.2015 թվականին կազմված մաքսային կանոնների խախտման արձանագրության համաձայն՝ 18.10.2015 թվականին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արուսյան փողոցում հայտնաբերվել է, որ Աշոտ Գրիգորյանին պատկանող՝ «Bentley Continental GT» մակնիշի «34 UZ 023» համարանիշի ավտոմեքենան վարում էր այլ անձ՝ Մայա Տոնոյանը (**հատոր 1-ին, գ.թ. 48**):

3) Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշմամբ Աշոտ Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 26.260.403 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս կողմից ՀՀ ներմուծված և մաքսային վճարների գծով արտոնություններով հայտարարագրված «Bentley Continental GT» մակնիշի «34 UZ 023» համարանիշի ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնվել է Մայա Տոնոյանին (**հատոր 1-ին, գ.թ. 15-18**):

4) ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշման համաձայն՝ Աշոտ Գրիգորյանի վարչական բողոքը թողնվել է առանց բավարարման, իսկ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումը՝ անփոփոխ (**հատոր 1-ին, գ.թ. 29**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքները և տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմինների թույլտվության օգտագործելու, տնօրինելու և այլ անձանց հանձնելու զանցակազմի հիմքով վարչական պատասխանատվության առաջացման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անձը ենթակա է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցանքի կարարման համար, եթե վերջինիս սեփականության իրավունքով պարկանող և մաքսային

վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձարության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 173-րդ հոդվածի համաձայն՝ պայմանական բաց թողնված ապրանքներ են համարվում Միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված դեպքերում բաց թողնված ապրանքները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի (ընդունվել է 27.11.2009 թվականին, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է 02.01.2015 թվականից, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի համաձայն) 200-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում տրամադրվում են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները կարող են օգտագործվել միայն արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով (...):

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքներն ունեն օտարերկրյա ապրանքի կարգավիճակ և գտնվում են մաքսային հսկողության տակ:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 180-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապրանքների մաքսատուրքի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման հիմքերով սահմանված՝ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումները դադարում են ապրանքները բաց թողնելուց երեք տարի հետո:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անգգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի համաձայն՝ առանց մաքսային մարմինների թույլտվության՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործումը, տնօրինումը և այլ անձանց հանձնելն այլ նպատակներով, որոնց համար տրվել էին այդ արտոնությունները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

Վերոգրյալ իրավադրույթներից հետևում է, որ Մաքսային միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է պայմանականորեն

բաց թողնվող ապրանքի հասկացությունը, ի թիվս այլոց, պայմանականորեն բաց թողնված է համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքը, որի համար տրամադրվել են մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ՝ զուգակցված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով: Ընդ որում, նշված սահմանափակումների էությունն այն է, որ մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ ունեցող ապրանքը կարող է օգտագործվել միայն այդ արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով: Ավելին, ընդհանուր կանոնի համաձայն՝ արտոնություններ ունեցող և պայմանականորեն բաց թողնված ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ, իսկ այդ արտոնությունների կիրառմամբ պայմանավորված սահմանափակումները դադարում են ապրանքները բաց թողնելուց երեք տարի հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսել մաքսային այն կանոնների խախտման համար, որոնք կապված են մաքսային սահմանով պայմանականորեն բաց թողնված ապրանքների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման արտոնությունների տրամադրման առնչությամբ սահմանված՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ: Մաքսային նշված կանոններն անմիջականորեն վերաբերում են պետության ֆինանսական շահերին և նպատակաուղղված են մաքսային վճարների վճարման պարտականության կատարման ապահովմանը, քանի որ ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման արդյունքում չի ապահովվում տվյալ ապրանքի և տրանսպորտային միջոցի մասով մաքսատուրքերի և հարկերի գծով պետական բյուջեի մուտքերը: Նշված իրավախախտման կատարման համար օրենսդիրը որպես վարչական պատասխանատվության միջոց է սահմանել տուգանքը՝ ապօրինի տնօրինված, օգտագործված կամ այլ անձանց հանձնված ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի չափով:

ՀՀ սահմանադրական դատարանը, 12.10.2010 թվականի թիվ ՄԴՈ-920 որոշմամբ անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությանը, նշել է, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Այդ սկզբունքն է ընկած նաև մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվության հիմքում: Հետևաբար մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը:

Ելնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումներից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի հատկանիշները հանգում են հետևյալին.

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի օբյեկտը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության սահմանված կարգի պաշտպանությանն ուղղված հասարակական հարբերություններն են:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի առարկան

մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցներն են:

3. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցանքի սուբյեկտը մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների ներմուծողն է (որպես կանոն՝ սեփականատերը):

4. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների փաստական և իրավաբանական ճակատագիրը կանխորոշող հետևյալ արարքներից որևէ մեկով.

- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օտարում,

- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործում,

- մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների հանձնում:

5. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ վերը նշված արարքները կատարվում են մաքսային մարմնի թույլտվության բացակայության պայմաններում:

6. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

7. ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նաև այն, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումը կատարվում են արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձի կողմից թույլ տրված արարքում վերոգրյալ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը բացառում է ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության առաջացումը: Մասնավորապես՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումն առաջացնում են վարչական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ այդ արարքները կատարվել են նշված ապրանքների ու տրանսպորտային միջոցների համար արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով: Այլ կերպ ասած՝ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների օգտագործումը կամ հանձնումը ոչ բոլոր դեպքերում է առաջացնում վարչական պատաս-

խանատվություն ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի հիմքով: Նշված արարքների համար անձը ենթակա է վարչական պատասխանատվության այն դեպքում, երբ վերջինս օգտագործել է կամ հանձնել է այդ ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն այնպիսի նպատակով, որը տարբերվում է դրանց համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից:

Փաստորեն, մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների օգտագործման կամ հանձնման համար վարչական պատասխանատվության առաջացման համար էական նշանակություն ունի այդ արարքների կատարման նպատակը. վարչական պատասխանատվությունն առաջանում է միայն այն դեպքում, երբ այդ արարքներն անձը կատարել է ապրանքների ու տրանսպորտային միջոցների համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն օգտագործելու կամ հանձնելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում պետք է ձեռք բերվեն բավարար ապացույցներ, ի թիվս այլոց, նաև այն մասին, որ մաքսային վճարումների գծով արտոնություններ և դրանցով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների սեփականատերն օգտագործել կամ հանձնել է դրանք այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են այդ ապրանքների ու տրանսպորտային միջոցների համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավախախտման փաստի հաստատված լինելու հարցը վարչական դատարանը պարտավոր է լուծել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ապացույցների ազատ գնահատման միջոցով, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք (...) կարող են առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը:

Նշված իրավադրույթից հետևում է, որ վերը նկարագրված պայմանականորեն բաց թողնվող ապրանքներից է նաև Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը, որի նկատմամբ կիրառվում է մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) գծով արտոնություն: Այդ արտոնությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց առանց մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը և այն ձևակերպել «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով: Այլ կերպ ասած՝ քննարկվող արտոնությունը հետապնդում է

այն նպատակը, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձը հնարավորություն ունենա շարունակելու մինչև ՀՀ տեղափոխվելն արդեն իսկ իրեն պատկանող գույքի օգտագործումն իր անձնական կարիքների համար նաև Հայաստանի Հանրապետության տարածքում՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման պարտականության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «անձնական օգտագործման գույք» հասկացության սահմանումը տրված է ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Մաքսային միության մաքսային օրենսգրքով: Այսպես, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. (...) Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը (...):

Իսկ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետի 36-րդ ենթակետի համաձայն՝ նույն օրենսգրքում գործածվում են հետևյալ հիմնական եզրույթները և դրանց սահմանումները. անձնական օգտագործման ապրանքներ՝ ֆիզիկական անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ կարիքների համար նախատեսված ապրանքներ, որոնք մաքսային սահմանով տեղափոխվում են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով, միջազգային փոստային առաքանիքով կամ այլ եղանակով:

Նույն օրենսգրքի՝ «Անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման առանձնահատկությունները» վերառությամբ 49-րդ գլխի 351-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն գլխում գործածվում են հետևյալ եզրույթները և դրանց սահմանումները՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոց՝ ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոց (...), որի սեփականատերը կամ տիրապետողը այն ֆիզիկական անձն է, որի կողմից այդ տրանսպորտային միջոցները մաքսային սահմանով տեղափոխվում են բացառապես անձնական նպատակներով, այլ ոչ թե վարձատրության դիմաց անձանց տրանսպորտային փոխադրման համար, վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրման համար:

Վերոգրյալ իրավադրույթների համակարգված վերլուծությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ մաքսային օրենսդրության իմաստով անձնական օգտագործման գույքը ֆիզիկական անձանց պատկանող և ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային կամ այլ կարիքների համար նախատեսված ապրանքներն են, այդ թվում նաև՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը: Ընդ որում, տրանսպորտային միջոցը համարվում է անձնական օգտագործման, եթե այն օգտագործվում է բացառապես անձնական նպատակներով, չի օգտագործվում վարձու փոխադրումների, ինչպես նաև վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրումների համար:

Այսպիսով, վերոգրյալ իրավական վերլուծությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձի կողմից ներմուծվող անձնական

օգտագործման տրանսպորտային միջոցի համար «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնության տրամադրման նպատակը հանգում է հետևյալին. այդպիսի տրանսպորտային միջոցը մաքսային հսկողության տակ գտնվելու ընթացքում պետք է օգտագործվի բացառապես անձնական նպատակներով և չի կարող օգտագործվել վարձու փոխադրումների, ինչպես նաև վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրումների համար: Հակառակ պարագայում վերանում է նշված արտոնության տրամադրման օբյեկտիվ անհրաժեշտությունը, քանի որ տրանսպորտային միջոցով վարձու փոխադրումներ իրականացնելը, ինչպես նաև այն արդյունաբերական կամ առևտրային փոխադրումների նպատակով օգտագործելը որևէ կերպ չեն կարող համապատասխանել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց պատկանող անձնական օգտագործման գույքը Հայաստանի Հանրապետություն ներմուծելիս մաքսային վճարների գծով տրամադրվող արտոնությունների միջոցով պետության կողմից հետապնդվող իրավաչափ նպատակներին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենայի (տրանսպորտային միջոցի) համար մաքսային վճարների գծով տրամադրված արտոնության նպատակն իրավակիրառ պրակտիկայում չի կարող ստանալ այնպիսի նեղ մեկնաբանություն, որի համաձայն՝ այդպիսի ավտոմեքենան Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելուց հետո կարող է շահագործվել բացառապես դրա սեփականատիրոջ կողմից: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանն անընդունելի է համարում այն պատճառաբանությամբ, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենայի մաքսային ձևակերպման արտոնությունը տրամադրվում է ոչ թե այն պայմանով, որ այդ ավտոմեքենան շահագործվի բացառապես սեփականատիրոջ կողմից, այլ այն պայմանով, որ այդ ավտոմեքենան շահագործվի բացառապես անձնական կարիքների համար՝ առանց վարձատրության դիմաց կամ առևտրային կամ արդյունաբերական նպատակներով փոխադրումներ իրականացնելու:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանած ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ավտոմեքենան սեփականատիրոջ թույլտվությամբ այլ անձանց կողմից անձնական նպատակներով ժամանակավոր շահագործումը չի կարող որակվել որպես այդ տրանսպորտային միջոցի՝ արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով օգտագործում կամ հանձնում: Այլ կերպ ասած՝ եթե Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանած ֆիզիկական անձին պատկանող մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող անձնական օգտագործման ավտոմեքենան ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ, ապա դա չի համարվում տրանսպորտային միջոցի՝ արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով օգտագործում կամ հանձնում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատա-

րանը հանգում է այն եզրակացության, որ անձը ենթակա չէ վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարման համար, եթե վերջինիս սեփականության իրավունքով պատկանող և մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը ժամանակավորապես հանձնվել է այլ անձի շահագործմանը, որը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Աշոտ Գրիգորյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշումը: Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշմամբ Աշոտ Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 26.260.403 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինիս կողմից ՀՀ ներմուծված և մաքսային վճարների գծով արտոնություններով հայտարարագրված 26.260.403 ՀՀ դրամ մաքսային արժեքով «Bentley Continental GT» մակնիշի «34 UZ 023» համարանիշի ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնվել է Մայա Տոնոյանին: Իսկ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի որոշման համաձայն՝ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումը վարչական կարգով բողոքարկման արդյունքում թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վիճարկվող հիմնական վարչական ակտի՝ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշման հիմքում վարչական մարմնին ըստ էության դրել է հետևյալ փաստական հանգամանքները.

- Աշոտ Գրիգորյանը 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծել և «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպել է 26.260.403 ՀՀ դրամ մաքսային արժեքով «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան՝ օգտվելով մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման համար օրենքով նախատեսված՝ մաքսային վճարումների գծով արտոնությունից, և նշված արտոնության կիրառման ուժով առանց մաքսային մարմնի թույլտվության այդ ավտոմեքենայի օտարումը մինչև 23.09.2018 թվականն արգելվել է,

- Աշոտ Գրիգորյանին պատկանող «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան ձեռք բերվելու պահից մինչև 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը և «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվելը փաստացի տիրապետվել է օգտագործվել է Մայա Տոնոյանի կողմից,

- Աշոտ Գրիգորյանին պատկանող «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծվելուց և «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվելուց հետո փաստացի տիրապետվել է օգտագործվել է Մայա Տոնոյանի կողմից,

- 18.10.2015 թվականին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Աբովյան փողոցում Աշոտ Գրիգորյանին պատկանող «Bentley Continental GT» մակնիշի «34 UZ 023» համարանիշի ավտոմեքենան վարել է Մայա Տոնոյանը:

Դատարանը մերժել է Աշոտ Գրիգորյանի հայցը՝ պատճառաբանելով, որ վերջինս խախտել է օրենսդրության այն պահանջը, որի համաձայն՝ արտոնության կիրառմամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցը պետք է պարտադիր գտնվի սեփականատիրոջ տիրապետության տակ և չպետք է հանձնվի այլ անձանց:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Աշոտ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ հայցը բավարարել է: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «Bentley Continental GT» մակնիշի «34 UZ 023» համարանիշի ավտոմեքենայի նկատմամբ առկա միակ սահմանափակումը վերաբերում է մինչև 23.09.2018 թվականն այդ մեքենայի օտարումն արգելված լինելուն, իսկ Աշոտ Գրիգորյանը չի խախտել նշված սահմանափակումը: Հետևաբար, ըստ Վերաքննիչ դատարանի, Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումն ընդունվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի խախտմամբ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն վարչական գործով չի հաստատվում ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով Աշոտ Գրիգորյանին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հանգամանքների առկայությունը: Սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներից որևէ կերպ չի կարող հետևել, որ Աշոտ Գրիգորյանի կատարած արարքը համապատասխանում է մաքսային վճարումների գծով արտոնություններ ունեցող ապրանքները և տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմինների թույլտվության օգտագործելու, տնօրինելու և այլ անձանց հանձնելու զանցակազմի հատկանիշներին:

Նախևառաջ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Աշոտ Գրիգորյանի կողմից 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան՝ որպես Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անձնական օգտագործման տրանսպորտային միջոց, ձևակերպվել է «բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված արտոնության տրամադրմամբ, որի ուժով Աշոտ Գրիգորյանն ազատվել է այդ ավտոմեքենայի համար սահմանված մաքսատուրքի և հարկերի վճարման պարտականությունից: Նշված արտոնության տրամադրմամբ պայմանավորված՝ Աշոտ Գրիգորյանի կողմից 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծված «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով կիրառվել է սահմանափակում՝ երեք տարի ժամկետով (մինչև 23.09.2018 թվականը) օտարման արգելքի տեսքով: Մինչդեռ սույն գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Աշոտ Գրիգորյանը խախտել է իրեն սեփականության իրավունքով պատկանող «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ կիրառված օտարման սահմանափակումը:

Ավելին, Աշոտ Գրիգորյանին պատկանող «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան ձեռք բերվելու պահից մինչև 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը և մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման համար սահմանված արտոնության կիրառմամբ «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվելը փաստացի Մայա Տոնոյանի կողմից տիրապետվելու և օգտագործվելու հանգամանքը չի կարող որևէ նշանակություն ունենալ սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատման համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև նշված ավտոմեքենան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը տեղի ունեցած իրադարձություններն ու գործողությունները չեն կարող ազդեցություն ունենալ Աշոտ Գրիգորյանի կողմից այդ տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն ներմուծելուց հետո կատարված արարքի որակման վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշման իրավաչափության գնահատման համար էական նշանակություն ունի միայն Աշոտ Գրիգորյանին պատկանող «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծվելուց և «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվելուց հետո փաստացի Մայա Տոնոյանի կողմից տիրապետվելու և օգտագործվելու, մասնավորապես՝ 18.10.2015 թվականին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արոլյան փողոցում այդ ավտոմեքենան Մայա Տոնոյանի կողմից շահագործվելու, փաստական հանգամանքները:

Այնուհանդերձ նշված փաստական հանգամանքների առկայությունը ևս չի նշանակում, որ Աշոտ Գրիգորյանն իր կողմից 23.09.2015 թվականին Հայաստանի Հանրապետություն ներմուծած և մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման համար սահմանված արտոնության կիրառմամբ «բացթողում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված «Bentley Continental GT» մակնիշի ավտոմեքենան հանձնել է Մայա Տոնոյանին այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են այդ տրանսպորտային միջոցի համար կիրառված արտոնությունների տրամադրման նպատակներից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն իրողությունը, որ սույն գործով վարչական մարմինը չի ներկայացրել որևէ փաստարկ կամ ապացույց այն մասին, որ Աշոտ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող և մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող «Bentley Continental GT» մակնիշի, «34 UZ 023» համարանիշի տրանսպորտային միջոցը հանձնվել է Մայա Տոնոյանի շահագործմանը՝ ոչ թե անձնական օգտագործման, այլ՝ վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակով:

Այսպիսով, Աշոտ Գրիգորյանին՝ որպես Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանած ֆիզիկական անձի պատկանող «Bentley Continental GT» մակնիշի, «34 UZ 023» համարանիշի անձնական օգտագործման ավտոմեքենան Մայա Տոնոյանի կողմից անձնական նպատակներով ժամանակավոր շահագործումը չի կարող որակվել որպես այդ տրանսպորտային միջոցի՝ արտոնությունների տրամադրման նպատակներից տարբերվող այլ նպատակներով օգտագործում կամ հանձնում, քանի որ Մայա Տոնոյանի կողմից նշված տրանսպորտային միջոցի շահագործումը չի հետապնդում վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Աշոտ Գրիգորյանը ենթակա չէր վարչական պատասխանատվության ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարման համար, քանի որ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող և մաքսային վճարումների գծով արտոնություններով պայմանավորված սահմանափակումներ ունեցող ու մաքսային հսկողության ներքո գտնվող «Bentley Continental GT» մակնիշի, «34 UZ 023» համարանիշի տրանսպորտային միջոցը ժամանակավորապես Մայա Տոնոյանի շահագործմանը հանձնվելը չի հետապնդել վարձատրության դիմաց, առևտրային կամ արդյունաբերական բնույթի փոխադրումներ իրականացնելու նպատակ:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով վիճարկվող՝ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումն ընդունվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշման անվավերությունն ինքնին հիմք է հանդիսանում նաև այդ վարչական ակտի բողոքարկման արդյունքում ընդունված միջամտող վարչական ակտը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշումը, անվավեր ճանաչելու համար:

Նշված պարճառաբանություններով հիմնավորվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշումը և դրա բողոքարկման արդյունքում կայացված ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրա-

պետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկման հայցով դատարան դիմելիս կամ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնելիս վարչական բողոքի վերաբերյալ կայացված միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջի՝ որպես ոչ գույքային պահանջի, համար պետական տուրք վճարելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այդ պահանջն իրավունքի ուժով ներառված է վիճարկման հայցում՝ անկախ հայցվորի կողմից ներկայացված լինելու կամ չլինելու հանգամանքից (*Կրեն, Լուսինե Ավագյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/2191/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչության պետի 04.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 127 որոշման և դրա բողոքարկման արդյունքում կայացված ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 24.12.2015 թվականի «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն անփոփոխ, բողոքն առանց բավարարման թողնելու վերաբերյալ» որոշման վիճարկման պահանջների հիման վրա հարուցված սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի չափը կազմում է 20.000 ՀՀ դրամ, մինչդեռ Կոմիտեն վճռաբեկ բողոքի համար վճարել է 40.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար ավել վճարված պետական տուրքի գումարը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը 20.000 ՀՀ դրամի չափով վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցն այդ մասով պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.05.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը՝ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի մասով, համարել լուծված:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից վճարել բողոքի համար ավել վճարված պետական տուրքի հարցը՝ 20.000 ՀՀ դրամի չափով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3310/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Ա. Արուլյան
Ա. Մարգարյան

Վարչական գործ թիվ ՎԴ/3310/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

ԿԱԽԱԳԱԽՈՂ ՂԵԿՈՒԾՈՂ

Ռ. ՀԱՎՈՐԱՅԻՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԿԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱՎՈՐԱՅԻՆ
Ս. ԴԻՔՍԵՆՅԱՆ
Է. ՍԵՂՈՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅԻՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դոնրաց դատական նիստում քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.10.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գեորգի Թովմայանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 20.05.2015 թվականի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարաւարական նախապայմանութիւնը.

Դիմելով դատարան՝ Գեորգի Թովմայանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 20.05.2015 թվականի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 11.04.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.10.2016

թվականի որոշմամբ Գեորգի Թովմայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 11.04.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը համարվում է վարչական ակտ, քանի որ այն իր մեջ ներառում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված բոլոր տարրերը: Հետևաբար Գեորգի Թովմայանին տրամադրված 22.11.2011 թվականի թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը կարող էր Երևանի քաղաքապետի կողմից անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.10.2016 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքապետի կողմից 22.11.2011 թվականին Գեորգի Թովմայանին է տրամադրվել թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը երկու տարի ժամկետով՝ անավարտ շինությունների վերակառուցման, ինչպես նաև առևտրի և վարչատնտեսական շենքի կառուցման համար (**հատոր 1-ին, գ.թ. 15**).

2) Երևանի քաղաքապետն իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ, որի ընթացքում պարզել է, որ 22.11.2011 թվականին Գեորգի Թովմայանին տրամադրված թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը ենթակա չի եղել տրամադրման, քանի որ Երևան քաղաքի գլխավոր հատակագծով Բաբաջանյան փողոցի թիվ 2/15 հասցեում գտնվող տարածքը նախատեսված չէ կառուցապատման նպատակով օգտագործման համար, և այդ տարածքով նախագծային ճանապարհի նախատեսված լինելու պայմաններում 22.11.2011 թվականին Գեորգի Թովմայանին տրամադրված թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը ենթակա է վերացման՝ որպես քաղաքաշինական նորմերին հակասող վարչական ակտ: Արդյունքում Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով, 20.05.2015 թվականին ընդունել է «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումը, որի համաձայն՝ Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված թիվ 01/18-07/1-Թ-

989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը ճանաչվել է անվավեր (**հատոր 1-ին, գ.թ. 16-17**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ճարտարապետահատակագծային առաջադրանքի իրավաբանական բնույթի և նշանակության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. ճարտարապետահատակագծային առաջադրանքն արդյո՞ք կարող է համարվել վարչական ակտ և անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում (...):

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Վարչական վարույթի հարուցումը և դրա արդյունքում վարչական ակտի ընդունումը պայմանավոր-

ված են հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմնին) լիազորում է արձակել միակողմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն, վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունն առաջանում է այն բոլոր դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված վարչական ակտի հասկացության վերլուծությանը՝ արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց

համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*յո՛ւն, Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանելով վարչական ակտի հատկանիշները, ինչպես նաև դրա ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընդհանուր կարգը, միաժամանակ նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսել է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավական հիմքերը: Ըստ այդմ, անվավեր է ճանաչվում այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն առ ոչինչ չէ, սակայն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ բովանդակությամբ վարչական ակտ: Ընդ որում, վարչական ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր, լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով (*յո՛ւն, ՀՀ կառավարությանն առնջեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Կամո Պետրոսյանի, «Դինո Գոլդ Մայնինգ Քամինի» ՓԲԸ-ի թիվ ՎԳ/0143/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով կարող է անվավեր ճանաչվել միայն այն անհատական իրավական ակտը, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում համապատասխանում է վարչական ակտի հատկանիշներին: Հետևաբար որևէ անհատական իրավական ակտ (փաստաթուղթ) վարչական կամ դատական կարգով անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի կիրառելիության հարցը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ փաստաթուղթը հանդիսանում է արդյոք վարչական ակտ, թե՛ ոչ: Եթե տվյալ անհատական իրավական ակտը վարչական ակտ չէ, ապա այն չի կարող անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքի իրավական բնույթի, բովանդակության, ինչպես նաև դրա տրամադրման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:

Այսպես, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ (...) կառուցապատողները պարտավոր են՝ «դ» քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք (...) ստանալ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններից (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար կառուցապատողին տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն), որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պայմաններ, պահանջներ և սահմանափակումներ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) փաստաթուղթ է, որը, հիմք ընդունելով համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի և քաղաքաշինական կանոնադրության պահանջները, սահմանում է քաղաքաշինական գործունեության տվյալ օբյեկտին ներկայացվող նախագծման պարտադիր պահանջները, պայմանները, այդ թվում՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (...) և սահմանափակումները (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքում նշվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված և օբյեկտի նախագծմանն առնչվող քաղաքաշինական, պատմության և մշակույթի հուշարձանների ու շրջակա միջավայրի պահպանության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավասությամբ օժտված օգտագործողին ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է վերջինիս կողմից նույն հոդվածի վեցերորդ մասով սահմանված մարմնին ներկայացված հայտի հիման վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար (...):

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ Կառավարության սահմանած կարգով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ համայնքի գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով սահմանված պահանջներին հակասող ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումն արգելվում է:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության սահմանած կարգով: Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Կառավարության սահմանած կարգով համաձայնեց-

ներուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետով (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգերը սահմանում է Կառավարությունը:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը կամ նախագծման թույլտվությունը՝ շինարարության թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքների իրականացման համար պարտադիր փաստաթուղթ է, որը սահմանում է կառուցապատվող օբյեկտի նախագծման պարտադիր պահանջները, պայմանները և սահմանափակումները և հիմք է հանդիսանում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար: Ընդ որում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի առկայությունը պարտադիր է շինարարության թույլտվություն ստանալու համար. առանց առաջինի առկայության երկրորդը չի կարող տրամադրվել:

Օրենսդիրը ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինարարության թույլտվության տրամադրման կարգը սահմանելու լիազորությունը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով իրեն վերապահված այդ լիազորությունը, 19.03.2015 թվականին ընդունված թիվ 596-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն նույն որոշման թիվ 1 հավելվածի:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ կառուցապատման նպատակով թույլտվությունները և այլ փաստաթղթեր տրամադրվում են հետևյալ փուլերով՝ նախագծման թույլտվություն (կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք), շինարարության թույլտվություն և ավարտական ակտ (կամ շահագործման թույլտվություն) (...):

Նախագծման և շինարարության թույլտվությունների տրամադրման՝ ՀՀ կառավարությունը 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ընթացակարգի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կառուցապատողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար հայտով դիմում է իրավասու մարմնին (*Կարգի 47-րդ կետ*): Իրավասու մարմինն ինժեներական ենթակառուցվածքի ցանցերին միանալու տեխնիկական պայմաններն ստանալու նպատակով հայտի ընդունման օրվանից եռօրյա ժամկետում հարցում է ներկայացնում մատակարար կազմակերպություններին (*Կարգի 50-րդ կետ*): Վերջիններս սահմանված ժամկետում իրավասու մարմնին են տրամադրում տեխնիկական պայմանները (*Կարգի 51-րդ կետ*), իսկ իրավասու մարմինը սահմանված ժամկետում կառուցապատողին է տրամադրում ճարտարապետահատակագծային առաջադրանքը (*Կարգի 52-րդ կետ*):

Ստանալով ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ կառուցապատողը նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուի հետ կնքում է նախագծային և հետագոտական աշխատանքների կապալի պայմանագիր (*Կարգի 72-րդ կետ*): Կառուցապատողը նախագծային աշխատանքների ավարտից հետո նախագծային փաստաթղթերը, որպես կանոն, ներկայացնում է փորձաքննության (*Կարգի 93-րդ կետ*): Նախագծային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության դեպքում (եթե տվյալ նախագծի համար պահանջվում է փորձաքննություն) կառուցա-

պատողը դիմում է իրավասու մարմին՝ նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման նպատակով (*Կարգի 98-րդ կետ*): Այնուհետև իրավասու մարմինը սահմանված ժամկետում համաձայնեցնում է նախագծային փաստաթղթերը և միաժամանակ տալիս է շինարարության թույլտվություն (*Կարգի 100-րդ կետ*), ինչից հետո նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված (*Կարգի 100-րդ կետ*), և կառուցապատողը ձեռք է բերում այդ փաստաթղթերին համապատասխան շինարարություն իրականացնելու իրավունք:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քաղաքաշինական գործունեության բնագավառում կառուցապատողի վերջնական նպատակը շինարարության իրականացումն է, որը կարող է կատարվել միայն շինարարության թույլտվության հիման վրա, իսկ շինարարության թույլտվությունն էլ կարող է տրվել միայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա: Այսինքն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի առկայությունը շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախապայման է: Հետևաբար ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար Կարգի 47-րդ կետով սահմանված հայտով իրավասու մարմինն դիմած կառուցապատողի իրական շահագրգռվածությունն ու մտադրությունն ուղղված է ոչ թե սոսկ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալուն, այլ՝ շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվություն ստանալուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կառուցապատողը մինչև համայնքի վարչական տարածքում շինարարության իրականացման համար շինարարական թույլտվություն պահանջելը, պարտավոր է նախապես սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինն դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, որը համայնքի ղեկավարի կողմից տրվում է, եթե հայտով ներկայացված պահանջները համապատասխանում են օրենսդրությամբ, տարածական պլանավորման փաստաթղթերով, բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությամբ, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պահանջներին: Առաջադրանքով սահմանված պայմանները հիմք են հանդիսանում նախագծային փաստաթղթերի մշակման համար և պարտադիր են քաղաքաշինական գործունեության բոլոր մասնակիցների համար: Հետևաբար առանց նշված առաջադրանքի առկայության կառուցապատողը չի կարող մշակել և նախապատրաստել նախագծային փաստաթղթերի փաթեթը, որի համաձայնեցման պարագայում միայն համայնքի ղեկավարը կարող է կառուցապատողին տրամադրել շինարարական թույլտվություն (*տե՛ս, «Գյումրի-հսց» ՍՊԸ-ն ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի թիվ 3-20(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրվում է շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում: Շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթն առանձին տեսակի, բարդ ընթացակարգով իրականացվող վարչական վարույթ է, որը հարուցվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն) ստանալու վերաբերյալ համապատասխան համայնքին ներկայացված կառուցապատողի հայտի (դիմումի) հիման վրա, ինչին վարույթի ընթացիկ փուլում հաջորդում են ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը և

Կարգով սահմանված վերը նկարագրված մյուս գործողությունների կատարումը, իսկ վարույթը եզրափակվում է վարչական ակտի (շինարարության թույլտվության) ընդունմամբ: Շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման փուլն ունի առաջնահերթ նշանակություն, քանի որ այդ փաստաթղթով կառուցապատողը հնարավորություն է ստանում ձեռնարկելու շինարարության օբյեկտի նախագծային աշխատանքները և մշակելու համապատասխան նախագծային փաստաթղթերը: Փաստորեն, ճարտարապետահատակագծային առաջադրանքի իրավաբանական բնույթը հանգում է հետևյալին. այդ փաստաթուղթը շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի հետագա իրականացման համար անհրաժեշտ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր ձեռք բերելու և նշված վարչական վարույթն իր տրամաբանական ավարտին հասցնելու նախադրյալն է: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի տրամադրվում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվելիք վարչական ակտի՝ շինարարության թույլտվության, տրամադրման ապահովմանը:

Այսպիսով, ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվությունը) շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի համատեքստում դիտարկելու արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

1) ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանվում են կառուցապատվող օբյեկտի նախագծման պարտադիր պահանջները, պայմանները և սահմանափակումները, և այն հիմք է հանդիսանում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար,

2) ճարտարապետահատակագծային առաջադրանքով կառուցապատվող օբյեկտի նախագծման պարտադիր պահանջների և պայմանների սահմանումը և դրանց համապատասխան ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակումը վերջիվերջո միտված են շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը, այսինքն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը շինարարության թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ նախադրյալներից մեկն է,

3) ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրվում է ոչ թե դրա տրամադրմանն ուղղված ինքնուրույն վարչական վարույթի, այլ՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում,

4) ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվելիք վարչական ակտի՝ շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված վարչական վարույթի փուլերից մեկն է,

5) ի տարբերություն շինարարության թույլտվության՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրումը չի հետապնդում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտ չէ, քանի որ այն չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների

և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի բոլոր հատկանիշներին: Մասնավորապես՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի ընդունվում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով: Հետևաբար ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի կարող անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար օրենքով սահմանված հիմքերով: Այլ կերպ ասած՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (կամ նախագծման թույլտվություն) չի կարող վարչական կամ դատական կարգով անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, քանի որ այն Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ թե վարչական ակտ է, այլ վարչական ակտի՝ շինարարության թույլտվության ընդունման ուղղված վարչական վարույթի ընթացիկ փուլում տրամադրվող փաստաթուղթ, որն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում այդ վարույթի եզրափակման՝ շինարարության թույլտվության տրամադրման համար:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Գեորգի Թովմայանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումը: Նշված վարչական ակտով Երևանի քաղաքապետն իր նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի արդյունքում գտել է, որ Գեորգի Թովմայանին տրամադրված 22.11.2011 թվականի թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը քաղաքաշինական նորմերին հակասող վարչական ակտ է և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով՝ այն ճանաչել է անվավեր:

Դատարանը մերժել է Գեորգի Թովմայանի հայցը՝ իր վճռի հիմքում դնելով նաև այն փաստարկը, որ Գեորգի Թովմայանին տրամադրված 22.11.2011 թվականի թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը վարչական ակտ է և կարող էր Երևանի քաղաքապետի կողմից անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Գեորգի Թովմայանի վերաքննիչ բողոքը և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ անվավեր է ճանաչել Երևանի քաղաքապետի 20.05.2015 թվականի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումը: Վերաքննիչ դատարանը, ի տարբերություն Դատարանի, գտել է, որ Գեորգի Թովմայանին տրամադրված 22.11.2011 թվականի թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը վարչական ակտ չէ և չէր կարող Երևանի քաղաքապետի կողմից անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը Գեորգի Թովմասյանին տրամադրվելու պահին՝ 22.11.2011 թվականին, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում շինարարության թույլտվության տրամադրման կարգը սահմանված էր ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշման թիվ 1 հավելվածով (*ուժը կորցրած է ճանաչվել 27.06.2015 թվականից՝ ըստ ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի*), իսկ ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման կարգը՝ ՀՀ կառավարության 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշման հավելվածով (*ուժը կորցրած է ճանաչվել 27.06.2015 թվականից՝ ըստ ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի*): Թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը Գեորգի Թովմասյանին տրամադրվելու պահին՝ 22.11.2011 թվականին, գործող վերոգրյալ ենթաօրենսդրական իրավական ակտերի բովանդակության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ ժամանակահատվածում ևս ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրվում էր շինարարության թույլտվության տրամադրմանն ուղղված միասնական վարչական վարույթի շրջանակներում և հանդիսանում էր այդ վարույթը եզրափակող վարչական ակտի (շինարարության թույլտվության) ընդունման նախադրյալներից մեկը: Հաշվի առնելով ճարտարապետահատակագծային առաջադրանքի իրավաբանական բնույթի, նշանակության, տրամադրման նպատակի ու ընթացակարգի վերաբերյալ ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 և 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշումներով սահմանված իրավակարգավորումների և ներկայումս գործող՝ ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման իրավակարգավորումների նմանությունը, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ վարչական ակտ չհանդիսանալու վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 և 29.08.2002 թվականի թիվ 1473-Ն որոշումների գործողության ժամանակ և դրանց հիման վրա տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների նկատմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գեորգի Թովմասյանին 22.11.2011 թվականին տրամադրված թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը վարչական ակտ չէ: Նշված ճարտարապետահատակագծային առաջադրանքը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական ակտի բոլոր հատկանիշներին, մասնավորապես՝ այն չի ընդունվել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով: Հետևաբար Գեորգի Թովմասյանին 22.11.2011 թվականին տրամադրված թիվ 01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքը Երևանի քաղաքապետի կողմից չէր կարող անվավեր ճանաչվել վարչական ակտի անվավերության համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով: Ավելին, Գեորգի Թովմասյանին արդեն իսկ տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճա-

նաչելու արդյունքում տեղի է ունեցել ոչ իրավաչափ միջամտություն շինարարության թույլտվության ընդունմանն ուղղված վարչական վարույթի բնականոն ընթացքի նկատմամբ՝ Գեորգի Թովմայանին զրկելով իր համար բարենպաստ վարչական ակտ (շինարարության թույլտվություն) ստանալու իրական հնարավորությունից: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, թեև ճարտարապետահատակագծային առաջադրանքը վարչական ակտ չէ, այդուհանդերձ այն անվավեր ճանաչելու մասին որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է միջամտող վարչական ակտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Երևանի քաղաքապետի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 ճարտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, և ենթակա է անվավեր ճանաչման նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ անվավեր ճանաչելով Երևանի քաղաքապետի 20.05.2015 թվականի «Գեորգի Թովմայանին 22.11.2011 թվականին տրամադրված Հ.01/18-07/1-Թ-989-913 արտարապետահատակագծային առաջադրանքն անվավեր ճանաչելու մասին» թիվ 1549-Ա որոշումը՝ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Քաղաքապետարանի կողմից վճռաբեկ բողոքի

համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.10.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/8765/05/13

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան

Դատավորներ՝ Ք. Մկոյան

Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/8765/05/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.07.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Թումանյանի ընդդեմ Կոտայքի մարզպետի, երրորդ անձինք Նախարարության, Աշոտ Կարապետյանի, «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓ-ԲԸ-ի՝ Կոտայքի մարզպետի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Թումանյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Կոտայքի մարզպետի անգործությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 24.11.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.07.2016 թվականի որոշմամբ Արմեն Թումանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 24.11.2015 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կոտայքի մարզպետարանը պարտավորություն է կրում միայն ընթացիկ ձևեռային ժամանակահատվածում ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող այնպիսի պայմանների ապահովման համար, որոնք ուղղակիորեն սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, ուստի տվյալ դեպքում Կոտայքի մարզպետարանի անգործությունը ոչ իրավաչափ չի կարող դիտվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն, որ տվյալ դեպքում բացակայում է վթարի և վարչական մարմնի անգործության միջև պատճառահետևանքային կապը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.07.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.11.2015 թվականի վճռին կամ կարճել վարչական գործի վարույթը կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հետաքննության տեսուչի 10.06.2013 թվականի եզրակացության համաձայն՝ 24.03.2013 թվականին, ժամը 18:00-ի սահմաններում, Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների հատման խաչմերուկում Աշոտ Կարապետյանի վարած «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29ՍՍ055» համարանիշով և Արմեն Թումանյանի վարած «VAZ 2106» մակնիշի «1700753» համարանիշի ավտոմեքենաների միջև տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, սակայն վարորդներ Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի մասով վարչական վարույթը կարճվել է՝ նրանց գործողություններում վարչական իրավախախտման կազմի բացակայության պատճառաբանությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 9**).

2) ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 18.05.2013 թվականի թիվ 12861308 եզրակացության համաձայն՝ «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29ՍՍ055» համարանիշով և «VAZ 2106» մակնիշի «1700753» համարանիշի ավտոմեքենաների վարորդները տվյալ ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չեն ունեցել: Ըստ փորձագիտական եզրակացության՝ պատահարի առաջացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցներում ճանապարհային նշաններով կահավորումը թերի է կատարվել, քանի որ 1-ին փողոցում տեղադրված է եղել 2.3.2. «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանը, իսկ 2-րդ փողոցում ճանապարհը զիջելու համար նախատեսված նշան տեղադրված չի եղել (**հատոր 2-րդ, գ.թ. 39-50**).

3) Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների հատման խաչմերուկում Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի՝ Ծառայության կողմից կազմված սխեմայի համաձայն՝ պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին փողոցում տեղադրված է եղել 2.3.2. «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանը, իսկ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 2-րդ փողոցում ճանապարհը զիջելու համար նախատես-

ված նշան տեղադրված չի եղել (**հատոր 2-րդ, գ.թ. 26**).

4) Ծառայության տեսուչին «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29UU055» համարանիշի ավտոմեքենայի վարորդ Աշոտ Կարապետյանի կողմից տրված բացատրության համաձայն՝ վերջինս այդ ավտոմեքենայով երթևեկել է Քանաքեռավան-Զովունի ճանապարհով, և հասնելով 1-ին և 2-րդ փողոցների հատման խաչմերուկ՝ կանգ է առել, զիջել է աջից մոտեցող մի ավտոմեքենայի ու ձախ թաղթիչը միացրած շարժվել դեպի Երևան: Խաչմերուկն անցնելիս խաչմերուկի ձախ մասից ընթացող «VAZ 2106» մակնիշի «1700753» համարանիշի ավտոմեքենան բախվել է իր ավտոմեքենայի առջևի աջ մասին՝ պատճառելով նյութական վնաս (**հատոր 2-րդ, գ.թ. 19-20**).

5) Ծառայության տեսուչին «VAZ 2106» մակնիշի «1700753» համարանիշի ավտոմեքենայի վարորդ Արմեն Թումանյանի կողմից տրված բացատրության համաձայն՝ վերջինս այդ ավտոմեքենայով երթևեկել է Երևանից Եղվարդ գնացող ճանապարհով, և հասնելով Քանաքեռավան և Երևան-Եղվարդ ճանապարհների խաչմերուկ՝ իրենից մոտ 30 մետր հեռավորությունից նկատել է, որ «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29UU055» համարանիշի ավտոմեքենան զիջում է առաջին փողոցով ընթացող ավտոմեքենաներին, և մտածելով, որ իրեն ևս կզիջի, շարունակել է ընթացքը, մինչդեռ հասնելով իրեն, նշված ավտոմեքենան տեղից շարժվել է և բախվել իր ավտոմեքենայի աջ անկյունին (**հատոր 2-րդ, գ.թ. 22-23**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման հարցում իրավասու վարչական մարմինների անգործության իրավաչափությունը գնահատելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *արդյո՞ք մարզպետին ունի ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմեքիկային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կախավորանքի, այդ թվում՝ նաև՝ ճանապարհային նշանների ձեռքբերման, տեղադրման ու շահագործման պարտականություն,*

2) *չկարգավորվող խաչմերուկները ճանապարհային նշաններով չկահավորելու փաստն ինքնին բավարար է արդյո՞ք համապատասխան լիազորություններով օժտված վարչական մարմնի կողմից ոչ իրավաչափ անգործություն դրսևորելու փաստի հաստատման*

համար,

3) արդյո՞ք ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման հարցում իրավասու վարչական մարմինների անգործության իրավաչափությունը ճանաչման հայցի շրջանակներում գնահատելիս վարչական դատարանը պետք է անդրադառնա այդ անգործության և դրա հետևանքով առաջացած ենթադրյալ վնասի միջև պարճատահերևանքային կապի առկայության հարցին և արդյո՞ք այդ պարճատահերևանքային կապի առկայությամբ կարող է պայմանավորվել ճանաչման հայց ներկայացնելու հայցվորի շահագրգռվածությունը:

1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ցանցի զարգացման ու կառավարման, ճանապարհների նախագծման, շինարարության, նորոգման ու պահպանման, դասակարգման, գրանցման տնտեսական, իրավական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև կարգավորում է այդ գործառույթներն իրականացնող մարմինների ու կազմակերպությունների իրավահարաբերությունները:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային կահավորանքը ավտոմոբիլային ճանապարհի երթևեկության անվտանգությունն ապահովող տարրերի համակարգ է: Դրանք են ճանապարհային նշանները, լուսացույցները, ազդանշանային սյուները, պարսպող հարմարանքները, հորիզոնական և ուղղաձիգ գծանշումները և այլն:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ճանապարհները՝ ըստ օգտագործման տեսակի, դասակարգվում են՝ ընդհանուր օգտագործման ճանապարհներ, ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհները դասակարգվում են՝ ավտոմոբիլային ճանապարհներ, բնակավայրերի (համայնքների) փողոցների ճանապարհներ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները՝ ըստ սեփականության ձևի, դասակարգվում են՝ պետական ավտոմոբիլային ճանապարհներ, ոչ պետական ավտոմոբիլային ճանապարհներ:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհները (բացառությամբ Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների) գտնվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ պետական ճանապարհային մարմնի) տնօրինության և կառավարման ներքո: Պետական ճանապարհային մարմինը՝ (...) (բ) ապահովում է ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ձեռքբերումը, տեղադրումն ու շահագործումը. (գ) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման վերաբերյալ. (դ) իրականացնում է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի շինարարության (տեղադրման), շահագործման, նորոգման ու պահպանման աշխատանքների իրականացման պատվիրատուի իրավասությունները. (ե) հաստատում է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի շինարարության (տեղադրման),

շահագործման, նորոգման ու պահպանման աշխատանքների նկարագիրը. (զ) հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի շինարարության (տեղադրման), շահագործման, նորոգման ու պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ (...):

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և երթևեկության անվտանգության ապահովման համար ճանապարհի տնօրինողներն իրականացնում են՝ ավտոմոբիլային ճանապարհների կահավորում՝ ճանապարհային նշաններով (...):

Վերը նշված իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի շինարարության (տեղադրման), շահագործման, նորոգման ու պահպանման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու, ճանապարհային նշաններով ավտոմոբիլային ճանապարհների կահավորում իրականացնելու լիազորությունն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Իրացնելով «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունը՝ ՀՀ կառավարությունը 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման (**ուժը կորցրել է 05.04.2014 թվականին՝ ՀՀ կառավարության 13.02.2014 թվականի թիվ 265-Ն որոշման համաձայն**) 3-րդ կետի 2-րդ ենթակետով «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմին է սահմանել ՀՀ մարզպետներին՝ նույն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նշված համապատասխան մարզի ենթակայության մասով:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 88.1-րդ հոդվածի համաձայն՝ մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ Նախագահի «Մարզերում պետական կառավարման մասին» 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում (...) տրանսպորտ և ճանապարհաշինություն (...):

Նույն հրամանագրի 1.14-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներում մարզպետը՝ կազմակերպում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքը, մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում է մարզային նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների շինարար-

րությունը, պահպանումը և շահագործումը, աջակցում է հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կահավորանքի, այդ թվում նաև՝ ճանապարհային նշանների, ձեռքբերման, տեղադրման ու շահագործման լիազորությամբ օժտված հանրային իշխանության մարմինը տվյալ ավտոմոբիլային ճանապարհների գտնվելու համապատասխան մարզի մարզպետն է:

2. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև համապատասխան մարզի տարածքում գտնվող մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում երթևեկության կազմակերպման կահավորանքի, այդ թվում նաև՝ ճանապարհային նշանների ձեռքբերման, տեղադրման ու շահագործման լիազորությունը վերապահված է տվյալ մարզի մարզպետին, սակայն այդ հանգամանքը չի կարող ընկալվել որպես այդ մարզի տարածքի բոլոր մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների բոլոր հատվածների անվերապահ և միաժամանակյա կահավորման պարտականություն:

Այսպես, նախնառաջ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարությունը 26.10.2006 թվականի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» թիվ 1699-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատել է ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները: Նշված որոշման թիվ 3 հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ նշանների տարաբաշխումը հաստատում և կազմակերպում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ճանապարհը տնօրինող և շահագործող լիազորված մարմիններն ու անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (...) ճանապարհային ոստիկանության համապատասխան մարմնի հետ համատեղ՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ (...), իսկ 29-րդ կետի համաձայն՝ տեղակայվող նշանների (...) տեղակայման վայրերը որոշվում են տարաբաշխմամբ (...):

Վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներում ճանապարհային նշանների տեղակայման վայրերը որոշվում են համապատասխան մարզի մարզպետի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ: Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ մարզպետը, կրելով պարտականություն ճանապարհային նշաններով կահավորել իր իրավասության ներքո գտնվող ճանապարհահատվածները, որոշում է, թե ինչ առաջնահերթությամբ կահավորել դրանք: Նման աշխատանքներ կատարելիս մարզպետը պարտավոր է հաշվի առնել որոշակի իրավաչափ հանգամանքներ, մասնավորապես՝ տեղանքի առանձնահատկությունները, առավել վտանգավոր այն հատվածները, որտեղ վթարների հավանականությունն առավել բարձր է, տարածքի բանուկ հատված համարվելու հանգամանքները և

այլ հատկանիշներ՝ նպատակ ունենալով ճանապարհները կահավորել ըստ կարևորության առաջնահերթությամբ: Այսինքն՝ մարզպետը կարող է նախապատվությունը տալ ճանապարհի այն հատվածներին, որոնց՝ ճանապարհային նշաններով կահավորումն առավել կարևոր է: Հետևաբար ճանապարհի որոշակի հատվածներ նպատակահարմարությունից ելնելով չկահավորելը չի ենթադրում, որ իրավագոր վարչական մարմնի կողմից անվերապահորեն թույլ է տրվել ոչ իրավաչափ անգործություն: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ճանապարհային նշանները հանդիսանում են ճանապարհային երթևեկությունը կարգավորող միջոցներ, որոնք ճանապարհային երթևեկության մասնակիցներին հաղորդում են որոշակի տեղեկություններ, ինչի հաշվառմամբ վերջիններս կանոնակարգում են իրենց գործողությունները: Ուստի ճանապարհային նշաններով ավտոմոբիլային ճանապարհների կահավորում իրականացնելու լիազորությունը կոչված է ապահովելու ճանապարհային երթևեկության բնականոն ընթացքն ու անվտանգությունը: Հետևաբար համապատասխան մարզպետը պարտավոր է ըստ առաջնահերթության ապահովել ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների՝ երթևեկության անվտանգության տեսանկյունից առավել կարևոր հատվածների կահավորումը ճանապարհային նշաններով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ եթե ողջամտորեն առկա է ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որոշակի հատված կոնկրետ ճանապարհային նշաններով կահավորելու անհրաժեշտություն, մինչդեռ համապատասխան մարզի մարզպետը և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը չեն ընդունել որոշում ճանապարհի այդ հատվածում ճանապարհային տվյալ նշանի տեղակայման մասին, ապա այդ դեպքում ևս կարող է բարձրանալ համապատասխան մարզի մարզպետի ոչ իրավաչափ անգործության հարցը:

Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հատվող ճանապարհների հատման մասում ճանապարհային նշանների բացակայության դեպքում վարորդները և ճանապարհային երթևեկության մնացած մասնակիցները պետք է պահպանեն ճանապարհային նշանների բացակայության դեպքում գործող համապատասխան ճանապարհային երթևեկության կանոնները, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ:

Այսպես, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գլխավոր ճանապարհը 2.1՝ «Գլխավոր ճանապարհ», 2.3.1՝ «Հատում երկրորդական ճանապարհի հետ», 2.3.2 - 2.3.7՝ «Երկրորդական ճանապարհի հարում», կամ 5.1՝ «Ավտոմայրուղի» նշաններով նշված ճանապարհն է հատողի (հարողի) նկատմամբ կամ կոշտ ծածկույթով (ասֆալտբետոն, ցեմենտբետոն, քարե նյութեր և այլն) ճանապարհը հողային ծածկույթ ունեցողի նկատմամբ, կամ էլ՝ ցանկացած ճանապարհ մերձակա տարածքներից դուրս եկող ճանապարհի նկատմամբ:

ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ կետի համաձայն՝ երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին՝ անկախ դրանց հետագա երթևեկության ուղղությունից:

ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների 98-րդ կետի համաձայն՝ հավասարազոր ճանապարհների խաչմերուկում ոչ ռեկազնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն դեպքում, երբ խաչմերուկում բացակայում են ճանապարհային նշանները, գործում է հավասարազոր ճանապարհների խաչմերուկների համար նախատեսված կանոնը, որի դեպքում ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին:

Վերոգրյալ իրավական նորմերից բխում է, որ ՀՀ օրենսդրության տեսանկյունից իրավաչափ է համարվում այն իրավիճակը, որ ոչ բոլոր ճանապարհներն են կահավորված ճանապարհային նշաններով: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ նման ճանապարհային հատվածներում չեն գործում երթևեկության որոշակի կանոններ և դրանք չպետք է պահպանվեն, քանի որ ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսվել է հավասարազոր ճանապարհների խաչմերուկների համար նախատեսված կանոնը, որն ամեն դեպքում ենթակա է պահպանման նմանաբնույթ ճանապարհով երթևեկող վարորդների կողմից: Այլ կերպ ասած՝ այն պարագայում, երբ խաչմերուկում առկա չէ լուսացույց կամ որևէ այլ ճանապարհային նշան, ապա վարորդները պետք է առաջնորդվեն այն կանոնով, որ հատվող ճանապարհները հանդիսանում են հավասարազոր ճանապարհներ, և այդ հատվածով երթևեկությունը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով հավասարազոր ճանապարհների համար նախատեսված ճանապարհային երթևեկության կանոնները: Փաստորեն, ճանապարհային նշաններ չտեղադրելն իրենից ներկայացնում է ճանապարհահատվածի կարգավորման առանձնահատուկ դրսևորում, որի դեպքում հատվող ճանապարհները վերածվում են հավասարազոր ճանապարհների:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ճանապարհային երթևեկության նշաններից որևէ մեկի կիրառմամբ ճանապարհն այն հատող ճանապարհի նկատմամբ գլխավոր դարձնելու դեպքում երկրորդական ճանապարհում սովորաբար տեղադրվում են համապատասխան ճանապարհային նշաններ, որոնք վկայում են այդ ճանապարհի՝ երկրորդական լինելու մասին: Այդպիսի նշաններ են համարվում ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 1 Ձևի 2-րդ գլխում սահմանված՝ 2.4. «*Զիջեք ճանապարհը*» ճանապարհային նշանը, որի համաձայն՝ վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով (...) ընթացող տրանսպորտային միջոցներին, և 2.5. «*Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է*» ճանապարհային նշանը, որի համաձայն՝ արգելվում է երթևեկել առանց «Կանգ» գծից առաջ (դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի եզրից առաջ) կանգնելու: Վարորդը պետք է զիջի ճանապարհը հատող ճանապարհով (...) ընթացող տրանսպորտային միջոցներին (...): Փաստորեն, որևէ ճանապարհ առավելության նշանների կիրառմամբ դրա հետ հատվող ճանապարհի նկատմամբ գլխավոր դարձնելու դեպքում հատվող ճանապարհը, որպես կանոն, կահավորվում է նաև 2.4. «*Զիջեք ճանապարհը*» կամ 2.5. «*Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է*» նշաններով, որոնք այդ ճանապարհով երթևեկող վարորդների համար սահմանում են պարտականություն՝ զիջելու ճանապարհը գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ գլխավոր ճանապարհը կահավորված է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով, իսկ հատվող ճանապարհը չի կահավորվում այն

երկրորդական ճանապարհի համարելու նշաններով, ապա հնարավոր է, որ տվյալ ճանապարհներով երթևեկող վարորդների համար սկսեն գործել երկու իրարամերժ կանոններ: Այսպես, ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհով երթևեկող վարորդի վրա կարող է տարածվել ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ կետը, որի համաձայն՝ *երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի գլխավոր ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին՝ անկախ դրանց հետագա երթևեկության ուղղությունից: Մինչդեռ այդ ճանապարհի հետ հատվող և 2.4. «Զիջեք ճանապարհը» կամ 2.5. «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշաններով չկահավորված ճանապարհով երթևեկող վարորդի վրա կարող է տարածվել ճանապարհային երթևեկության կանոնների 98-րդ կետը, որի համաձայն՝ *հավասարազոր ճանապարհների խաչմերուկում ոչ ռեյսագնաց տրանսպորտային միջոցի վարորդը պետք է ճանապարհը զիջի աջ կողմից մոտեցող տրանսպորտային միջոցների վարորդներին: Նշված իրավիճակի առաջացումը պայմանավորված է այն հանգամանքով, թե որ փողոցներից են տվյալ տրանսպորտային միջոցները մուտք գործել խաչմերուկ, և որ ուղղությամբ են դրանք շարժվել, և նկարագրված է հետևյալ օրինակում. ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության կանոնների 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհով երթևեկող Ա վարորդը ողջամտորեն ենթադրում է, որ ինքը երթևեկում է գլխավոր ճանապարհով, և այդ ճանապարհի հետ հատվող մյուս ճանապարհով (որը կահավորված չէ որևէ նշանով) երթևեկող տրանսպորտային միջոցի Բ վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել Ա-ին՝ անգամ եթե Բ-ն Ա-ի վարած տրանսպորտային միջոցին է մոտենում աջ կողմից, իսկ առավելության նշաններից որևէ մեկով կահավորված գլխավոր ճանապարհի հետ հատվող ճանապարհով երթևեկող Բ վարորդը ողջամտորեն ենթադրում է, որ ինքն անցնում է հավասարազոր ճանապարհների խաչմերուկով, և իրեն ձախից մոտեցող տրանսպորտային միջոցի Ա վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել Բ-ին:**

Այսինքն՝ բերված օրինակում գլխավոր ճանապարհի վրա այն այդպիսին դարձնող նշանի առկայության և միաժամանակ այդ ճանապարհի հետ հատվող ճանապարհի վրա այն երկրորդական դարձնող նշանի բացակայության պայմաններում այդ ճանապարհներով երթևեկող վարորդների համար ճանապարհային երթևեկության ռեժիմի միասնականությունը խաթարվում է: Այդ դեպքում վարորդները ստիպված են լինում ենթարկվել ճանապարհային երթևեկության հակասական կանոնների, ինչը կարող է հանգեցնել ճանապարհային երթևեկության պատահարների:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 10.01.2008 թվականի թիվ 112-Ն որոշման թիվ 2 և թիվ 3 հավելվածներում նախատեսված ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության հատվող ճանապարհներում դրանք մեկը մյուսի նկատմամբ գլխավոր և երկրորդական դարձնող ճանապարհային նշանների տեղադրման հարցում հնարավոր է հետևյալ իրավիճակների առաջացումը.

1) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինը

չեն ընդունել որևէ որոշում մարզային (տեղական) նշանակության ճանապարհների հատման խաչմերուկի հատվածն առավելության ճանապարհային նշաններով կահավորելու վերաբերյալ: Այդ դեպքում տվյալ խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդների վրա տարածվում է ճանապարհային երթևեկության կանոնների 98-րդ կետով նախատեսված հավասարազոր ճանապարհների հատման խաչմերուկի անցման կանոնը՝ ապահովելով երթևեկության միասնական ռեժիմն ու անվտանգությունը:

2) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության իրավասու մարմինն ընդունել են համատեղ որոշում մարզային նշանակության ճանապարհի վրա այն գլխավոր ճանապարհի դարձնող առավելության նշան տեղադրելու վերաբերյալ՝ առանց անդրադառնալու դրա հետ հատվող ճանապարհի վրա ճանապարհը զիջելու նշանի տեղադրման հարցին: Նշված իրավիճակում միայն մեկ ճանապարհի վրա առավելության ճանապարհային նշանի տեղադրման պատճառով հնարավոր է, որ խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդների վրա տարածվեն ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ և 98-րդ կետերով սահմանված հակասական կանոնները, ինչի պատճառով գլխավոր ճանապարհի վրա այն այդպիսին դարձնող նշանի առկայության և միաժամանակ այդ ճանապարհի հետ հատվող ճանապարհի վրա այն երկրորդական դարձնող նշանի բացակայության պայմաններում այդ ճանապարհներով երթևեկող վարորդների համար ճանապարհային երթևեկության ռեժիմի միասնականությունը կարող է խաթարվել:

3) Համապատասխան մարզի մարզպետը և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմինն ընդունել են համատեղ որոշում մարզային (տեղական) նշանակության հատվող ճանապարհների վրա համապատասխան առավելության նշաններ տեղադրելու մասին, որի համաձայն՝ Ա ճանապարհի վրա պետք է տեղադրվի այն գլխավոր ճանապարհի դարձնող ճանապարհային նշան, իսկ Բ ճանապարհի վրա՝ ճանապարհը զիջելու համապատասխան նշան: Տվյալ պարագայում մարզպետի կողմից ոչ իրավաչափ անգործություն կարող է դրսևորվել այն պայմաններում, եթե վերջինս ոչ պատշաճ կերպով է կատարել իր և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմնի համատեղ որոշմամբ սահմանված՝ Ա և Բ ճանապարհների խաչմերուկի հատվածում ճանապարհային նշանների տեղադրման իր պարտականությունը, ինչը հանգեցրել է այնպիսի իրավիճակի առաջացման, որ այդ ճանապարհներով խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցների վարորդների վրա տարածվում են ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ և 98-րդ կետերով սահմանված հակասական կանոնները:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ (1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (...). (2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն. (3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթից հետևում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որպես կանոն, իրավունք ունեն դիմելու վարչական դատարան իրենց իրավունքների պաշտպանության նպատակով: Այսինքն՝ վարչական դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու՝ իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները (*տե՛ս, Տիգրան Սանասարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը: Այսինքն՝ նշված հայցատեսակի առարկան այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը, ինչպես նաև կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելն է:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, ի լրումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի, նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է ճանաչման հայցով դատարան դիմելու համար իրավական շահագրգռվածության հատուկ կանոն, որի համաձայն՝ հայցվորը պետք է արդարացիորեն շահագրգռված լինի համապատասխան վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ: Ավելին, օրենսդիրը բացահայտել է ճանաչման հայց ներկայացնելու համար հայցվորի արդարացիորեն շահագրգռ-

ված լինելու պայմանը՝ դրա առկայությունը պայմանավորելով հետևյալ հանգամանքներով.

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ,

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում,

3) վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ ներկայացնելը նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատարանը պարտավոր է պարզել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձի իրավական շահագրգռվածությունը՝ հիմք ընդունելով վերոգրյալ չափանիշները: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձը համարվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով «շահագրգիռ անձ»՝ վերոգրյալ հանգամանքներից որևէ մեկի առկայության դեպքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայց հարուցելու համար բավարար է, որ հայցվորն արդարացիորեն շահագրգռված լինի իր կողմից ներկայացվող պահանջի բավարարման հարցում, ինչը ենթակա է հաստատման վերը նկարագրված հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ պայմանների առկայությունը պայմանավորված է յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններից. դրանց առկայության մասին կարող են վկայել ինչպես հայցվորի ներկայացրած դիրքորոշումները, փաստարկներն ու ապացույցները, այնպես էլ վիճելի իրավահարաբերության բնույթն ու բովանդակությունը:

Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված այն գործերի քննության առանձնահատկություններին, որոնց հարուցման համար հիմք է հանդիսացել հայցվորի արդարացի շահագրգռվածության՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանը, այն է՝ գույքային վնասի հատուցում պահանջելու հայցվորի մտադրությունը:

Նախ Վճռաբեկ դատարանն արձանագրում է վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով: Հիշյալ օրենքի համապատասխան իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը

չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով (*Կրեն, ժորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2009 թվականի որոշումը*):

Անդրադառնալով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի բավարարման հիմքերի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապը (*Կրեն, Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման նախադրյալը համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ ճանաչված լինելն է: Հենց այդ նպատակով էլ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել է այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով դատարան դիմելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պայմանը վերաբերում է ընդամենը գույքային վնասի հատուցում պահանջելու հայցվորի մտադրությանը: Այսինքն՝ այդ հայցատեսակով նախատեսված հայցի հարուցումն օրենսդիրը կապում է ոչ թե հայցվորին պատճառված վնասների հատուցման ենթակա լինելու հանգամանքի հետ, այլ հայցվորի կողմից ապագայում վնասների հատուցում պահանջելու ցանկության, կամահայտնության հետ: Հետևաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցով դատարան դիմած անձի կողմից գույքային վնասի հատուցում պահանջելու վերաբերյալ հստակորեն արտահայտված մտադրությունը բավարար է վերջինիս մոտ իրավական շահագրգռվածության առկայությունը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գույքային վնասի հատուցում պահանջելու հայցվորի մտադրությամբ պայմանավորված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերի քննության շրջանակները սահմանափակված են բացառապես այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության պարզմամբ: Այսպես, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման կառուցակարգի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտով կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությամբ կամ անգործությամբ պատճառված վնասների հատուցման իրավունքը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-

րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործով կայացված վերջնական դատական ակտով համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչվելուց հետո: Ընդ որում, համապատասխան վարչական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը դատական կարգով ճանաչվելուց հետո անձը վնասների հատուցման պահանջով պետք է դիմի ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած համապատասխան վարչական մարմնին, և վնասի հատուցման պահանջի իրավաչափությունը ենթակա է քննարկման այդ դիմումի հիման վրա տվյալ վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի ընթացքում:

Փաստորեն, վնասի առկայությունը և վնասի ու ոչ իրավաչափ վարչարարության միջև առկա պատճառահետևանքային կապի առկայությունը ենթակա են քննարկման ոչ թե վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտը, նրանց կատարած գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցի հիման վրա հարուցված դատական գործի շրջանակներում, այլ վնասի հատուցման դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում, իսկ դրա արդյունքում վարչական մարմնի կողմից ընդունված համապատասխան որոշման իրավաչափությունը ենթակա է գնահատման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցապահանջի հիման վրա հարուցված բոլորովին այլ դատական գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի, գործողության կամ անգործության ու դրանց հետևանքով առաջացած հնարավոր վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության կամ բացակայության հարցի պարզումը դուրս է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործի քննության շրջանակներից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դատարանը պարտավոր է գնահատել բացառապես այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության իրավաչափությունը և չի կարող քննարկման առարկա դարձնել վարչական ակտի, գործողության կամ անգործության ու դրանց հետևանքով առաջացած հնարավոր վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության կամ բացակայության հարցը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 24.03.2013 թվականին, ժամը 18:00-ի սահմաններում, Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների հատման խաչմերուկում Աշոտ Կարապետյանի վարած «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29UU055» համարանիշի և Արմեն Թումանյանի վարած «VAZ 2106» մակնիշի «170O753» համարանիշի ավտոմեքենաների միջև տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, սակայն վարորդներ Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի մասով վարչական վարույթը կարճվել է՝ նրանց գործողություններում վարչական իրավախախտման կազմի բացակայության պատճառաբանությամբ՝ համաձայն Ծառայության հետաքննության տեսուչի 10.06.2013 թվականի եզրակացության: ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 18.05.2013 թվականի թիվ 12861308 եզրակացության համաձայն՝ «MERCEDES-BENZ 250 D» մակնիշի «29UU055» համարանիշի և «VAZ 2106» մակնիշի «170O753» համարանիշի ավտոմեքենաների վարորդները տվյալ

ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չեն ունեցել: Ըստ փորձագիտական եզրակացության՝ պատահարի առաջացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցներում ճանապարհային նշաններով կահավորումը թերի է կատարվել, քանի որ 1-ին փողոցում տեղադրված է եղել 2.3.2. «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանը, իսկ 2-րդ փողոցում ճանապարհը զիջելու համար նախատեսված նշան տեղադրված չի եղել:

Արմեն Թումանյանը, դիմելով դատարան, պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Կոտայքի մարզպետի անգործությունը:

Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ խնդրո առարկա վթարի առաջացման պատճառը Կոտայքի մարզի Զովունի գյուղի 2-րդ փողոցի վրա մինչ 1-ին փողոցի հետ հատման խաչմերուկը ճանապարհային նշանի բացակայությունը չի հանդիսացել: Տվյալ պարագայում բացառելով Կոտայքի մարզպետի անգործության և հայցվորի վստասների միջև պատճառահետևանքային կապը՝ Դատարանը գտել է, որ հայցվորի պահանջը՝ վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին, վերածվում է առարկայագուրկ պահանջի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված պատճառահետևանքային կապի բացակայությունը բացառում է նաև հայցվորի անմիջական շահագրգռվածությունը՝ պաշտոնատար անձի անգործության ոչ իրավաչափ ճանաչման կապակցությամբ:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Արմեն Թումանյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և ոչ իրավաչափ ճանաչելով Կոտայքի մարզպետի անգործությունը, պատճառաբանել է, որ վարչական վարույթի արդյունքում չի հերքվել Կոտայքի մարզի Զովունի գյուղի 2-րդ փողոցի վրա մինչ 1-ին փողոցի հետ հատման խաչմերուկում ճանապարհային նշանի բացակայության և ընդհարման միջև պատճառահետևանքային կապը, հետևաբար վարչական վարույթի արդյունքում չի հիմնավորվել, որ ընդհարման առաջացումը պայմանավորված էր վարորդներից որևէ մեկի գործողություններով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա՝ ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 18.05.2013 թվականի թիվ 12861308 եզրակացությամբ փորձագետները, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների հատման խաչմերուկում Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի՝ Ծառայության կողմից կազմված սխեման, եզրահանգել են, որ պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին փողոցում տեղադրված է եղել 2.3.2. «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանը, իսկ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 2-րդ փողոցում ճանապարհը զիջելու համար նախատեսված նշան տեղադրված չի եղել: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փորձագիտական եզրակացության և դրա հիմքում ընկած ճանապարհատրանսպորտային պատահարի սխեմայի միջոցով չի կարող հաստատվել, որ Կոտայքի մարզպետի կողմից դրսևորվել է ոչ իրավաչափ անգործություն: Այսպես, ըստ Վճռաբեկ դատարանի՝ այդ հանգամանքը հաստատելու համար նախևառաջ անհրաժեշտ է ձեռք բերել այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեն այն մասին, որ Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների խաչմերուկի հատվածում ճանապարհային նշանները տեղակայված են եղել այնպես, ինչպես դա արտացոլված է ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի

18.05.2013 թվականի թիվ 12861308 եզրակացության հիմքում դրված սխեմայում: Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարանները չեն պարզել նշված հանգամանքը:

Այնուհետև Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ տվյալ դեպքում Կոտայքի մարզպետի անգործության առկայությունը կարող է հաստատվել նաև այն դեպքում, երբ սույն գործով ապացուցված համարվի այն փաստը, որ Կոտայքի մարզպետը և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմինը, համատեղ լուծելով ճանապարհային նշանների տեղաբաշխման հարցը, որոշել են Կոտայքի մարզի Զովունի գյուղի թե՛ 1-ին և թե՛ 2-րդ փողոցներում տեղադրել առավելության կոնկրետ ճանապարհային նշաններ, և այդ որոշումն Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին թերի է կատարված եղել: Մինևս այն ժամանակ Կոտայքի մարզպետի անգործության ոչ իրավաչափությունը կարող է հաստատվել նաև այն պարագայում, երբ սույն գործով ապացուցված համարվի այն փաստը, որ Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին վերջիններիս վրա ողջամտորեն տարածվել են ճանապարհային երթևեկության հակասական կանոններ՝ պայմանավորված Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին փողոցում այն գլխավոր ճանապարհ դարձնող առավելության նշանի առկայությամբ և միաժամանակ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 2-րդ փողոցով երթևեկող վարորդների համար ճանապարհը զիջելու պարտականություն սահմանող նշանի բացակայությամբ, որպիսի իրավիճակում թե՛ Աշոտ Կարապետյանի, թե՛ Արմեն Թումանյանի կողմից դրսևորվել է իրենց վրա տարածվող ճանապարհային երթևեկության կանոններով գործելու իրավաչափ վարքագիծ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Կոտայքի մարզպետի անգործության առկայության և դրա իրավաչափության հարցի լուծման համար պետք է քննարկման առարկա դարձվեն հետևյալ իրավիճակային հարցադրումները.

1. Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների խաչմերուկի հատվածում ճանապարհային նշանների տեղակայման իրավական և փաստական վիճակը համապատասխանում էր արդյո՞ք ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 18.05.2013 թվականի թիվ 12861308 եզրակացության հիմքում դրված պատահարի սխեմայում արտացոլված վիճակին, թե՛ ոչ:

2. Արդյո՞ք առկա է եղել Կոտայքի մարզպետի և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմնի համատեղ որոշում, որի համաձայն՝ Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների խաչմերուկի հատվածում ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշման թիվ 1 հավելվածի թիվ 1 Ձևի 2-րդ գլխում սահմանված առավելության նշանների առկայությունը պարտադիր էր: Ընդ որում, տվյալ դեպքում կարևորվում է այն հանգամանքը, թե տվյալ որոշմամբ պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցներում կոնկրետ ինչ ճանապարհային նշանների տեղադրման ապահովումն է դրված եղել Կոտայքի մարզպետի վրա: Այսինքն՝ անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե արդյո՞ք վերը նշված իրավասու մարմինները որոշում են կայացրել միաժամանակ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին փողոցում տեղադրել 2.3.2. «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանը, իսկ 2-րդ փողոցում՝ 2.4. «Զիջեք ճանապարհը» կամ 2.5. «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշաններից որևէ մեկը, թե այդ որոշմամբ նշանի տեղադրումը նախատեսված է եղել Կոտայքի մարզի Զովու-

նի գյուղի միայն 1-ին փողոցում՝ առանց անդրադառնալու 2-րդ փողոցում համապատասխան նշանի տեղադրման հարցին:

3. Կոտայքի մարզպետը պատշաճ կերպով կատարել է արդյո՞ք իր և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմնի համատեղ որոշմամբ սահմանված՝ Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցների խաչմերուկի հատվածում ճանապարհային նշանների տեղադրման իր պարտականությունը, թե՛ ոչ: Այսինքն՝ արդյո՞ք Աշոտ Կարապետյանի և Արմեն Թումանյանի վարած ավտոմեքենաների միջև տեղի ունեցած պատահարի պահին Կոտայքի մարզի Զովունի գյուղի 1-ին և 2-րդ փողոցներում տեղադրված են եղել այն ճանապարհային նշանները, որոնք սահմանված են եղել Կոտայքի մարզպետի և ՀՀ ոստիկանության համապատասխան իրավասու մարմնի համատեղ որոշմամբ, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները ոչ իրավաչափորեն սույն գործի քննության և լուծման համար էական են համարել Կոտայքի մարզպետի անգործության և Արմեն Թումանյանի կրած հնարավոր վնասների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը: Մինչդեռ սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Կոտայքի մարզպետի անգործության ու դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության կամ բացակայության հարցի պարզումը դուրս է սույն գործի քննության շրջանակներից: Միևնույն ժամանակ ստորադաս դատարանները չեն պարզել սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերը թվարկված հարցերը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող անվերապահորեն հանգել եզրակացության առ այն, որ Կոտայքի մարզպետի կողմից դրսևորվել է ոչ իրավաչափ անգործություն:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոգրյալ հարցերը պարզելու նպատակով, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու և Կոտայքի մարզպետի կողմից դրսևորված անգործության առկայությունը և այդ անգործության իրավաչափությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի

հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.07.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/6295/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Մարգարյան
Դատավորներ՝ Ա. Արովյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԴ/6295/05/14
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան),

Նախագահությամբ
մասնակցությամբ դադարափորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱՐԱՅՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐՍՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դոնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.08.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության Մաշտոցի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 272353 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դասրաւարական նախապարմնութիւնը.

Դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու Տեսչության գործողությունը և անվավեր ճանաչել Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 272353 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 25.12.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.04.2016

թվականի որոշմամբ վերակազմակերպման հիմքով Տեսչությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչությամբ:

Վերաքննիչ դատարանի 24.08.2016 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.12.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետը, նույն օրենքի 2-րդ հավելվածի 1.4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ ուսումնասիրությունը 10 աշխատանքային օրից ավել տևելու կամ մինչև 09.10.2014 թվականը սկսված լինելու վերաբերյալ որևէ ապացույց հայցվորը չի ներկայացրել: Ընդ որում, ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարագրում հսկիչ գնումն իրականացնելու ժամկետը նշելու իմպերատիվ պահանջը տվյալ դեպքում կատարված է, քանի որ տնտեսվարող սուբյեկտի մոտ ուսումնասիրությունը սկսելու օրն այդ ուսումնասիրությանն ուղղված համապատասխան գործողությունների կատարման օրն է, որն արձանագրվում է հանձնարարագրում: Տվյալ դեպքում վարչական մարմինը ներկայացրել է բավարար ապացույցներ առ այն, որ ուսումնասիրությունը սկսվել է և հսկիչ գնումը կատարվել է 09.10.2014 թվականին: Հետևաբար Տեսչության պետի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրով նախատեսված տասնօրյա ժամկետը ենթակա է հաշվարկման հենց այդ օրվանից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.08.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրով Տեսչության ընթացիկ հսկողության թիվ 2 բաժնի հարկային տեսուչներին հանձնարարվել է անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ կատարել հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում)՝ ուսումնասիրության ժամկետը սահմանելով մինչև 10 աշխատանքային օր (**հատոր 1-ին, գ.թ. 15**).

2) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2014 թվականին կազմված «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» թիվ 6200779 արձանագրության համաձայն՝ Տեսչու-

թյան հարկային տեսուչի կողմից 09.10.2014 թվականին՝ ժամը 16:06-ին, Երևան քաղաքի Ծերենցի 4-րդ նրբանցքում գտնվող անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի կողմից շահագործվող առևտրի կետից կատարվել է 30.000 ՀՀ դրամի արժողությամբ 1 հատ աթոռի հսկիչ գնում, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ՝ 14.000 ՀՀ դրամով և 40 ԱՄՆ դոլարով, իսկ հարկային ծառայողին տրամադրվել է 30.000 ՀՀ դրամի ՀԴՄ կտրոն: Գնված ապրանքն ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից վերադարձվել է տնտեսվարողին, և հետ է ստացվել հսկիչ գնման գումարը (**հատոր 1-ին, գ.թ.16-17**).

3) Տեսչության կողմից 24.10.2014 թվականին կազմված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» թիվ 1484 արձանագրության համաձայն՝ Արամ Գրիգորյանը չի կատարել Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման գործարքի դիմաց դրամական (փողային) վճարումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը՝ համաձայն հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 09.10.2014 թվականի թիվ 6200779 արձանագրության (**հատոր 1-ին, գ.թ. 72**).

4) Տեսչության պետի 07.11.2014 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ 272353 որոշման համաձայն՝ Արամ Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ վերջինս չի կատարել Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման գործարքի դիմաց դրամական (փողային) վճարումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը (**հատոր 1-ին, գ.թ. 19**):

4. Վճռաբեկ դատարանի պայրճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հսկիչ գնման հանձնարարագրով նախատեսված ուսումնասիրություն կատարելու ժամկետների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. հր պահից է հաշվարկվում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու հանձնարարագրով այդ ուսումնասիրության համար սահմանված ժամկետը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 7-րդ պարբերության համաձայն՝ (...) հսկիչ գնումների իրականացման (...) նպատակով հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 8-րդ պարբերության համաձայն՝ նույն կետի յոթերորդ պարբերությամբ

սահմանված ուսումնասիրությունների անցկացման ընթացակարգերը սահմանվում են նույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածներով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետի 9-րդ պարբերության համաձայն՝ նույն օրենքի հավելվածներով սահմանվում են՝ (...) (2) հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգը՝ համաձայն 2-րդ հավելվածի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ «Հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգը» վերտառությամբ 2-րդ հավելվածի (այսուհետ՝ Թիվ 2 հավելված) 1.2-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնում է համարվում հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրությունը (...):

Թիվ 2 հավելվածի 1.3-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնում իրականացնելու համար հիմք են հանդիսանում՝ (ա) տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկվող օբյեկտի գծով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված հաշվապահական հաշվառման, այլ հաշվառման կամ գրանցման սահմանված փաստաթղթերը չվարելը կամ դրանք կոպիտ խախտումներով վարելը կամ հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, որի հետևանքով անհնար է դառնում տնտեսվարող սուբյեկտի հարկային պարտավորությունները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկելը. (բ) սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունները. (գ) հարկային մարմնի պաշտոնատար անձի հիմնավորված միջնորդությունը՝ հսկիչ գնում կատարելու թույլտվություն ստանալու համար, որտեղ պետք է նշվեն հսկիչ գնում կատարելու պատճառները, այն տվյալները, որոնք նախատեսվում է ստանալ դրա արդյունքում, տնտեսվարող սուբյեկտի տվյալները, հսկիչ գնման կատարման վայրը, ինչպես նաև հսկիչ գնումների իրականացման ժամանակահատվածի հիմնավորումը:

Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով (...):

Թիվ 2 հավելվածի 1.5-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնումից հետո, բայց ոչ ուշ, քան հանձնարարագրում նշված ժամկետի վերջին օրը, հանձնարարագիրը ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ հսկիչ գնման արդյունքում խախտումներ հայտնաբերելու դեպքի, երբ հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար ան-

ձին է ներկայացվում հսկիչ գնումից հետո:

Թիվ 2 հավելվածի 1.6-րդ կետի համաձայն՝ հսկիչ գնման արդյունքում հանձնարարագրի ներկայացման օրը կազմվում է հարկային մարմնի կողմից սահմանված ձևով արձանագրություն՝ երկու օրինակից (...):

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, առարկաների, աշխատանքների, ծառայությունների գների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման նպատակով ուսումնասիրություն իրականացնելու համար հարկային մարմինն իրավասու է իրականացնել հսկիչ գնում, որը տնտեսվարող սուբյեկտի մոտ կարող է իրականացվել Թիվ 2 հավելվածի 1.3-րդ կետում սպառիչ կերպով սահմանված համապատասխան հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Ընդ որում, Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետով սահմանված կանոնից հետևում է, որ հսկիչ գնումն իրականացվում է բացառապես հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որում, ի թիվս այլնի, պետք է նշվեն նաև հսկիչ գնում իրականացնելու ժամկետները: Փաստորեն, հսկիչ գնում իրականացնելու՝ հարկային մարմնի պաշտոնատար անձի լիազորության առկայության հիմքը հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի գրավոր հանձնարարագիրն է, իսկ նշված լիազորությամբ համապատասխան պաշտոնատար անձն օժտված է համարվում միայն հանձնարարագրում նշված ժամկետով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետով օրենսդիրը սահմանել է հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետների վերաբերյալ նշում կատարելու պարտադիր պահանջ: Այսինքն՝ հանձնարարագիրը պետք է բովանդակի այն ժամկետը, որի ընթացքում տվյալ տնտեսվարող սուբյեկտի մոտ կարող է իրականացվել հսկիչ գնում, և որի ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձն իրավասու է իրականացնել այդ հսկիչ գնումը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետով օրենսդիրը սահմանել է հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետների վերաբերյալ նշում կատարելու պարտադիր պահանջ, սակայն այդ ժամկետների սկզբի վերաբերյալ հանձնարարագրում նշում կատարելու պահանջ չի նախատեսել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական և իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը: Բացի այդ, օրենքը պետք է ձևակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ (*յոեն, Olsson v. Sweden (No. 1), (10465/83) գործով Եվրոպական դատարանի 24.03.1988 թվականի վճիռը, կետ 61*):

ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների

իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1213 որոշումը*): Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 02.12.2014 թվականի թիվ ՄԴՈ-1176 որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄԴՈ-1270 որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու նպատակով հրապարակված հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբի վերաբերյալ նշում կատարելու իրավակարգավորման բացակայությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և չի կարող երաշխավորել իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ վարչական մարմնի գործողությունների կանխատեսելիությունն ու իրավաչափությունը: Այդ առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբի վերաբերյալ Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետի ոչ բավարար հստակությունը լրացնել սեփական մեկնաբանություններով՝ նպատակ ունենալով նպաստելու քննարկվող իրավահարաբերությունների ոլորտում իրավունքի զարգացմանը:

Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով: Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաբանական նշանակություն ունեցող ժամկետը ժամանակի որոշակի հատվածն է, որն ունի հստակ սկիզբ և ավարտ: Այսինքն՝ իրավաբանորեն նշանակալի ժամկետը սկսում է հոսել ժամանակի կոնկրետ պահից, որով պայմանավորված է այդ ժամկետի տևողության հաշվարկը: Հետևաբար Թիվ 2 հավելվածի 1.4-րդ կետով սահմանված՝ հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագրում ժամկետը նշելու իմպերատիվ պահանջը կարող է բովանդակային առումով կատարված համարվել, եթե հսկիչ գնում կատարելու հանձնարարագրում նշված են ժամկետի վերը նշված երկու պարտադիր բաղադրիչները, այն է՝ ժամկետի սկզբնակետը և տևողությունը: Նշված բաղադրիչներից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է հանձնարարագրում՝ ժամկետը նշելու պահանջի չկատարում, որպիսի պայմաններում, ըստ էության, գործնականում անհնարին է դառնում որոշել ժամկետի ավարտը, հետևաբար նաև՝ պարզել, թե արդյոք հսկիչ գնումն իրականացրած հարկային տեսուչները հսկիչ գնումը կատարելու պահին օժտված են եղել համապատասխան լիազորությամբ: Այլ կերպ ասած՝ հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբի և տևողության վերաբերյալ հանձնարարագրում նշում կատարված լինելու պայմաններում է միայն հնարավոր պարզել այն հարցը, թե հարկային տեսուչները լիազորված են եղել արդյոք կատարելու հսկիչ գնում այն կատարելու օրվա դրությամբ:

Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագրում ժամկետի երկու պարտադիր բաղադրիչներից մեկի՝ ժամկետի սկզբնակետի վերաբերյալ նշում կատարված չլինելու պարագայում հսկիչ գնումն իրականացնելու ժամանակահատվածի սկզբնակետ պետք է դիտարկել հանձնարարագիրն ուժի մեջ մտնելու և դրանում նշված պաշտոնատար անձանց մոտ հսկիչ գնում իրականացնելու լիազորությունների ծագման օրը, քանի որ միայն նման մոտեցման պայմաններում է հնարավոր ապահովել իրավական կանխատեսելիությունը քննարկվող իրավահարաբերության բոլոր մասնակիցների՝ վարչական մարմնի պաշտոնատար անձանց և տնտեսվարող սուբյեկտների համար: Այս առումով կարևորվում է նաև այն հարցի պարզումը, թե որ օրն է հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագիրը մտնում ուժի մեջ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) գերատեսչական, տեղական ինքնակառավարման մարմինների, պետական այլ մարմինների (...) անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց ընդունմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով, այլ օրենքներով կամ այդ անհատական իրավական ակտով: (...) Եթե նույն մասով սահմանված անհատական իրավական ակտերով նախատեսված է պարտականություն (այդ թվում՝ հանձնարարություններ) սահմանող կամ պետական մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ անձանց իրավական վիճակը վատթարացնող դրույթ, ապա այդ անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում տվյալ անհատական իրավական ակտը համապատասխան մարմիններում կամ կազմակերպություններում մուտքագրվելու կամ պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին հանձնվելու կամ նրանց տրամադրած (նշած) գտնվելու կամ բնակության վայր ուղարկելու կամ պատշաճ այլ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերով կամ այդ անհատական իրավական ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ (...):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական իրավական այլ ակտերը՝ դրանք ընդունելու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում ուղարկվում կամ հանձնվում են այն մարմիններին, պաշտոնատար անձանց կամ քաղաքացիներին, որոնց վրա տարածվում են դրանք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը բովանդակում է համապատասխան պարտականություն (հանձնարարություն)՝ դրանում նշված պաշտոնատար անձանց համար, ուստի դրա ուժի մեջ մտնելու հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են վերը նշված իրավանորմերով ամրագրված կանոնները: Իսկ նշված իրավադրույթներից հետևում է, որ հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիրը՝ դրանում նշված պաշտոնատար անձանց համար ուժի մեջ է մտնում նրանց հանձնվելու օրվան հաջորդող օրվանից, հետևաբար նշված օրվանից էլ ծագում է հսկիչ գնում իրականացնելու վերջիններիս լիազորությունը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հսկիչ գնում իրականացնելու մասին հանձնարարագրում հսկիչ գնում իրականացնելու ժամկետի սկզբնակետի վերաբերյալ նշում կատարված չլինելու պարագայում հսկիչ գնման նպատակով ուսումնասիրություն իրականացնելու ժամկետը սկսում է հոսել այդ հանձնարարագիրը համապատասխան պաշտոնատար անձանց հանձնելու օրվան հաջորդող օրը: Այլ կերպ ասած՝ հսկիչ գնումը պետք է սկսվի և ավարտվի հանձնարարագրում նշված ժամկետում, որը հաշվարկվում է հանձնարարագրում նախատեսված օրվանից, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանձնարարագիրն ուժի մեջ մտնելու, այն է՝ հանձնարարագիրը համապատասխան պաշտոնատար անձանց հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրով Տեսչության հարկային տեսուչներին հանձնարարվել է անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ կատարել հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում)՝ ուսումնասիրության ժամկետը սահմանելով մինչև 10 աշխատանքային օր:

ՀՀ ֆինանսների նախարարության «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» 09.10.2014 թվականի թիվ 6200779 արձանագրության համաձայն՝ Տեսչության հարկային տեսուչի կողմից 09.10.2014 թվականին՝ ժամը 16:06-ին, Երևան քաղաքի Ծերենցի 4-րդ նրբանցքում գտնվող և անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի կողմից շահագործվող առևտրի կետից կատարվել է 30.000 ՀՀ դրամի արժողությամբ 1 հատ աթոռի հսկիչ գնում, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ՝ 14.000 ՀՀ դրամով և 40 ԱՄՆ դոլարով, իսկ հարկային ծառայողին տրամադրվել է 30.000 ՀՀ դրամի ՀԴՄ կտրոն:

Տեսչության կողմից 24.10.2014 թվականին կազմվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» թիվ 1484 արձանագրությունը, որի համաձայն՝ Արամ Գրիգորյանը չի կատարել Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման գործարքի դիմաց դրա-

մական (փողային) վճարումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը՝ համաձայն հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 09.10.2014 թվականի թիվ 6200779 արձանագրության: Նշված իրավասխատման համար Տեսչության պետի 07.11.2014 թվականի «Վարչական իրավասխատման գործի վերաբերյալ» թիվ 272353 որոշմամբ Արամ Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավասխատման վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք 2.000.000 ՀՀ դրամի չափով:

Սույն գործով անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանը, դիմելով դատարան, պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը և անվավեր ճանաչել Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 272353 որոշումը:

Դատարանը հայցը բավարարել է՝ գտնելով, որ Կոմիտեն չի ապացուցել հսկիչ գնումը հանձնարարագրով նշված տասնօրյա ժամկետում իրականացնելու և ըստ այդմ՝ հսկիչ գնում կատարելու պահին պատշաճ լիազորությամբ օժտված լինելու հանգամանքը՝ տասնօրյա ժամկետի հաշվարկի սկիզբը համարելով հանձնարարագիրը տալու հաջորդ օրը: Բացի այդ, Դատարանը վճռի հիմքում դրել է այն հանգամանքը, որ սույն գործով չի հիմնավորվում Թիվ 2 հավելվածի 1.3-րդ կետով նախատեսված հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ փաստական հիմքերից որևէ մեկի առկայության փաստը:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հսկիչ գնումն իրականացնելու տասնօրյա ժամկետի հաշվարկման առնչությամբ Դատարանի իրավական դիրքորոշումներին, դրանք հիմնավոր է համարել և մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողել է անփոփոխ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությունից հետևում է, որ անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու մասին Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի թիվ 6200779 հանձնարարագիրը հրապարակվել է 18.09.2014 թվականին: Նշված հանձնարարագրով ուսումնասիրության ժամկետ է սահմանվել մինչև 10 աշխատանքային օր, սակայն դրանում նշում չկա ժամկետի պարտադիր բաղադրիչ հանդիսացող սկզբնականի վերաբերյալ:

Հաշվի առնելով սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հսկիչ գնման հանձնարարագրի հիման վրա ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու ժամկետի հոսքը պետք է սկսվի 18.09.2014 թվականի հանձնարարագիրն ուժի մեջ մտնելու և այդ հիմքով դրանում նշված պաշտոնատար անձանց մոտ հսկիչ գնում իրականացնելու լիազորությունների ստանձնման օրվանից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ

6200779 հանձնարարագիրը երբ է հանձնվել անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ հսկիչ գնում իրականացրած պաշտոնատար անձանց: Նման պայմաններում ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագիրը պետք է հանձնված լիներ համապատասխան պաշտոնատար անձանց ընդունման պահից ետոյա ժամկետում, այսինքն՝ մինչև 22.09.2014 թվականը (21.09.2014 թվականը ոչ աշխատանքային օր է, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն՝ *եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը*): Հետևաբար Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագիրն ուժի մեջ մտնելու հնարավոր ամենավերջին օրը 23.09.2014 թվականն է: Ըստ այդմ, Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.09.2014 թվականի թիվ 6200779 հանձնարարագրում նշված 10 աշխատանքային օրվա ժամկետը տվյալ դեպքում ենթակա է հաշվարկման 23.09.2014 թվականից, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ այդ ժամկետի վերջին օրը 06.10.2014 թվականն է (2014 թվականի սեպտեմբերի 24-ը, 25-ը, 26-ը, 27-ը, 29-ը, 30-ը, հոկտեմբերի 1-ը, 2-ը, 3-ը և 6-ը եղել են աշխատանքային օրեր):

Մինչդեռ տվյալ դեպքում հսկիչ գնումն իրականացվել ու արդյունքներն ամփոփող արձանագրությունը կազմվել է այդ ժամկետի ավարտից հետո՝ 09.10.2014 թվականին: Հետևաբար անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ հսկիչ գնում իրականացնելու պահին Տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի թիվ 6200779 հանձնարարագրում նշված պաշտոնատար անձինք 09.10.2014 թվականին այլևս լիազորված չեն եղել իրականացնելու հսկիչ գնում, որպիսի իրավաչափ հետևության հանգել են ստորադաս դատարանները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու հիմքում հայցվորի կողմից դրվել է նաև այն հանգամանքը, որ Թիվ 2 հավելվածի 1.3-րդ կետով նախատեսված հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ փաստական հիմքերից որևէ մեկն առկա չի եղել: Ըստ այդմ, Դատարանն անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար բավարար և հիմնավոր է համարել նաև վերոգրյալ փաստարկը: Այսինքն՝ Դատարանն անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը ոչ իրավաչափ է ճանաչել և դրա հիման վրա Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 272353 որոշումն անվավեր է ճանաչել նաև այլ հիմքով, իսկ Կոմիտեն Դատարանի վճռի այդ հիմքի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացրել ինչպես վերաքննիչ բողոքում, այնպես էլ վճռաբեկ բողոքում:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, ոչ իրավաչափ ճանաչելով անհատ ձեռնարկատեր Արամ Գրիգորյանի մոտ 09.10.2014 թվականին հսկիչ գնում կատարելու գործողությունը և դրա հիման վրա անվավեր ճանաչելով Տեսչության պետի 07.11.2014 թվականի թիվ 272353 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգր-

քի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.08.2016 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/11476/05/13
Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան
Դատավորներ՝ Հ. Բեդկյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/11476/05/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արայ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Վահագն Բալաբեկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.05.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտը՝ 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ կետերի մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է 1-ին, 3-րդ, 5-րդ և 15-րդ կետերի մասով անվավեր ճանաչել Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.05.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Դա-

տարանի 07.06.2017 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 1-ին կետով շահութահարկի գծով 422.690.466 ՀՀ դրամ (որից ապառք՝ 198.219.288 ՀՀ դրամ, տույժեր՝ 105.539.605 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 118.931.573 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասը, ինչպես նաև Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 5-րդ կետով ԱԱՀ-ի գծով 535.906.758 ՀՀ դրամ (որից ապառք՝ 250.116.507 ՀՀ դրամ, տույժեր՝ 135.720.346 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 150.069.905 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասը: Դատարանի 07.06.2017 թվականի վճիռը՝ մնացած մասով, թողնվել է անփոփոխ (Վերաքննիչ դատարանի 15.05.2018 թվականի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերին համաձայն չլինելու հիմքով դատավոր Ա. Բաբայանի կողմից ներակայացվել է հատուկ կարծիք):

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

ա) Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունում ստուգումն իրականացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, ստուգման ժամկետի կասեցման համար առկա չեն եղել փաստական հիմքեր, կասեցումները եղել են կամայական և ապօրինի:

Սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված ստուգումը փաստացի սկսվել է ոչ թե 09.06.2011 թվականին, ինչպես նշված է հանձնարարագրում, այլ՝ 01.06.2011 թվականին՝ այն ժամանակ, երբ Տեսչության աշխատակիցների կողմից Ընկերության հաշվապահի մասնակցությամբ կազմվել է «Կատարվող ստուգումների շրջանակներում պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ» արձանագրությունը, որով Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի շրջանակներում Ընկերությանն առաջարկվել է արձանագրությունում նշված հարցերի պատասխանները գրավոր ներկայացնել ստուգողներին: Նման պայմաններում ստուգման համար հանձնարարագրով սահմանված 15 աշխատանքային օրվա ժամկետը լրացել է 21.06.2011 թվականին: Մինչդեռ ստուգումը սահմանված ժամկետում չի ավարտվել, և ստուգման ակտը կազմվել է նշված ժամկետի խախտմամբ՝ 20.11.2013 թվականին: Ավելին՝ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված ստուգման սկիզբը 09.06.2011 թվականը համարելու դեպքում ևս ստուգումը սահմանված ժամկետում չի ավարտվել, քանի որ այդ դեպքում այն պետք է ավարտվեր ոչ թե 04.11.2013 թվականին, այլ՝ 02.11.2013 թվականին:

Բացի այդ, Ընկերությունում իրականացված ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մի շարք հրամանների մասով բացակայում են դրանց ընդունման համար հիմք հանդիսացող զեկուցագրերը: Այսինքն՝ ստուգման կասեցման ժամկետը բազմիցս երկարաձգվել է անհիմն կերպով, ինչը ևս հիմք է Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

բ) Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) 11-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 29-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել Ընկերության կողմից ստուգման ակտի վիճարկման հիմքում դրված բոլոր փաստական հանգամանքներին, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց կոշտ սկզբառակի վրա գետեղված տեղեկատվությունն Ընկերությանը պատկանելու վերաբերյալ: Ավելին՝ գործում առկա չեն Ընկերության որևէ համակարգիչը նույնականացնող տեղեկություններ՝ համակարգչի տուփին և կոշտ սկզբառակին վերաբերող որևէ տվյալ: Ներկայացված չեն ապացույցներ թվով 6 համակարգիչներից յուրաքանչյուրում եղած տեղեկատվության, դրա ծավալի և բովանդակության վերաբերյալ: Այսինքն՝ սույն գործի փաստերից չի երևում, թե որ համակարգչից ինչ ծավալի, ինչ բովանդակությամբ տեղեկություններ են վերցվել: Ընդ որում, սույն գործով հետազոտման առարկա չեն դարձվել նաև Ընկերության թվով 6 համակարգիչները, որոնցից, ըստ Կոմիտեի, վերցվել են վիճելի տեղեկությունները կամ տվյալները: Իսկ Տեսչության 14.07.2011 թվականի «Համակարգիչների գնում կատարելու վերաբերյալ» արձանագրությունը միակողմանի կազմված փաստաթուղթ է, որը չի կարող հաստատել այն փաստը, որ Տեսչության կողմից մատնանշված կոշտ սկզբառակի վրա առկա տեղեկատվությունը պատկանում է Ընկերությանը: Այս հարցի կապակցությամբ հստակ և միանշանակ գնահատականը տրվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչի 23.10.2014 թվականի թիվ 6911012 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ, որը չի հետազոտվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տեսչության կողմից մատնանշված կոշտ սկզբառակի վրա առկա տեղեկատվությամբ չի հիմնավորվում Ընկերության կողմից հարկվող շրջանառությունը թաքցնելու, պակաս ցույց տալու հանգամանքը: Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի հիմնավորումներում չի մատնանշվել և գործի քննության ընթացքում չի վկայակոչվել որևէ գործարք, որը չի արտացոլվել Ընկերության ներկայացրած հաշվետվություններում: Այսինքն՝ Տեսչությունը չի ապացուցել, որ Ընկերությունը պակաս է ցույց տվել իր հարկման օբյեկտները՝ համապատասխան հաշվետվություններում ապրանքների իրացման փաստացի գները կամ գործարքներն ընդհանրապես չարտացոլելու ձևով: Փաստորեն, սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերությանը վերագրվել են լրացուցիչ պարտավորություններ՝ առանց ապացույցների ու հիմնավորումների:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «մասնակիորեն՝ Դատարանի 07.06.2017 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասով, բեկանել Վերաքննիչ դատարանի 15.05.2018 թվականի որոշումը և այդ մասով (հայցի չբավարարված մասով) փոփոխել այն՝ Ընկերության հայցը բավարարել ամբողջությամբ»:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում ակնհայտ է դառնում, որ Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացված ստուգումը փաստացի սկսվել է 09.06.2011 թվականին, ինչը հաստատվում է հանձնարարագրում Ընկերության տնօրենի կողմից կատարված գրառմամբ: Հետևաբար տվյալ դեպքում ստուգման ժամկետների խախտում տեղի չի ունեցել:

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն գտել է, որ ստուգման ընթացքը կասեցնելու վերաբերյալ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր հիմնավորումների, զեկուցագրերի բացակայությունը և Կոմիտեի նախագահի համապատասխան հրամանների հիմնավորված չլինելն ինքնին չեն կարող հիմք հանդիսանալ ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Բացի այդ, Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչների և նրանցում առկա տեղեկատվության զննմանը մասնակցելու նպատակով լիազոր անձ ներկայացնելու համար Ընկերության տնօրենն ու գլխավոր հաշվապահը բազմիցս տեղեկացվել են, սակայն չեն արձագանքել: Քննման ժամանակ պարզվել է, որ համակարգիչներում առկա են բազմաթիվ հաշվապահական փաստաթղթեր, որոնք ուսումնասիրության կարիք ունեն: Սակայն, հաշվի առնելով, որ նշված համակարգիչներն անհրաժեշտ են Ընկերության աշխատանքները կազմակերպելու համար, դրանցում առկա ամբողջ տեղեկատվությունը պատճենահանվել է էլեկտրոնային կրիչի վրա՝ հետագայում զննելու նպատակով: Վերոնշյալից ակնհայտ է, որ այդ տեղեկատվությունը պատկանում է Ընկերությանը:

Ավելին՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 18.09.2014 թվականին կազմված թիվ 13-3967 փորձագետի եզրակացությունը հիմնված է ենթադրությունների վրա և չի կարող հիմք հանդիսանալ վիճարկվող ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար: Սույն գործով վարչական մարմինը ստուգման շրջանակներում ձեռք բերված ապացույցներով հիմնավորել է Ընկերության կողմից հաշվապահական հաշվառման փաստաթղթերում կեղծ տվյալներ ներառած լինելու հանգամանքը, ինչը հիմք է հանդիսացել Ընկերության հարկային պարտավորություններն անուղղակի եղանակով հաշվարկելու համար:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով Տեսչության տեսուչներին հանձնարարվել է Ընկերությունում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի արժանահավատությունը պարզելու, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու նպատակով անցկացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Նույն հանձնարարագրի համաձայն՝ ստուգման ժամկետը սահմանվել է 15 անընդմեջ աշխատանքային օր: Նշված հանձնարարագրում Ընկերության տնօրեն Վիլսոն Մելիքջանյանի կողմից կատարված գրառումների համաձայն՝ ստուգման հանձնարարագրի օրինակը հանձնվել է 27.05.2011 թվականին, իսկ

ստուգումը փաստացի սկսվել է 09.06.2011 թվականին (հանձնարարագրի օրինակը ստանալու և ստուգումը փաստացի սկսելու ամսաթվի մասին Ընկերության իրազեկվածությունը հաստատվել է Ընկերության տնօրենի ստորագրությամբ) (**հատոր 1-ին, գ.թ. 69**):

2. Տեսչության աշխատակիցների կողմից Ընկերության հաշվապահի մասնակցությամբ 01.06.2011 թվականին կազմվել է «Կատարվող ստուգումների շրջանակներում պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ» արձանագրությունը, որով Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի շրջանակներում Ընկերությանն առաջարկվել է արձանագրությունում նշված հարցերի պատասխանները հնարավոր սեղմ ժամկետներում՝ մինչև 03.06.2011 թվականը, գրավոր ներկայացնել ստուգողներին (**հատոր 1-ին, գ.թ. 46-47**):

3. Կոմիտեի նախագահի 17.06.2011 թվականի թիվ 1321-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգման ժամկետը երկարաձգվել է 10 աշխատանքային օրով (**հատոր 1-ին, գ.թ. 23**):

4. Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգման ընթացքը 11.07.2011 թվականից կասեցվել է 30 աշխատանքային օրով: Ընկերությունն այդ հրամանը ստացել է 12.07.2011 թվականին (**հատոր 3-րդ, գ.թ. 85**):

5. Կոմիտեի նախագահի 18.08.2011 թվականի թիվ 1832-Ա, 27.09.2011 թվականի թիվ 2173-Ա, 08.11.2011 թվականի թիվ 2487-Ա, 19.12.2011 թվականի թիվ 2770-Ա, 06.02.2012 թվականի թիվ 147-Ա, 23.03.2012 թվականի թիվ 387-Ա, 11.05.2012 թվականի թիվ 790-Ա, 25.06.2012 թվականի թիվ 1096-Ա, 06.08.2012 թվականի թիվ 1400-Ա, 14.09.2012 թվականի թիվ 1689-Ա, 26.10.2012 թվականի թիվ 2056-Ա, 12.12.2012 թվականի թիվ 2434-Ա, 04.02.2013 թվականի թիվ U-181-Ա, 18.03.2013 թվականի թիվ U-503-Ա, 03.05.2013 թվականի թիվ U-893-Ա, 12.06.2013 թվականի թիվ U-1206-Ա, 25.07.2013 թվականի թիվ U-1309-Ա հրամաններով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգման կասեցման ժամկետն ամեն անգամ երկարաձգվել է 30 աշխատանքային օրով (**հատոր 1-ին, գ.թ. 25-41, հատոր 3-րդ, գ.թ. 81, 90, 92, 112**):

6. Կոմիտեի նախագահի 11.09.2013 թվականի թիվ U-1914-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգման ընթացքը 12.09.2013 թվականից կասեցվել է 30 աշխատանքային օրով, իսկ 22.10.2013 թվականի թիվ U-2198-Ա հրամանով ստուգման կասեցման ժամկետը երկարաձգվել է 30 աշխատանքային օրով (**հատոր 1-ին, գ.թ. 42-43**):

7. Կոմիտեի նախագահի 30.10.2013 թվականի թիվ U-2261-Ա հրամանով Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգումը 01.11.2013 թվականից վերսկսվել է (**հատոր 1-ին, գ.թ. 44**):

8. Տեսչության աշխատակիցների կողմից 12.07.2011 թվականին կազմված թիվ 1 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից հարկային մարմնին ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների, տեղեկությունների իսկությունը ճշտելու և համեմատելու նպատակով Ընկերության տնօրենի մասնակցությամբ Տեսչության աշխատակիցների կողմից վերցվել են Ընկերությանը պատկանող թվով 6 պրոցեսորներ, որոնք տոսնձաթղթերի միջոցով կնքված և ստորագրված են Ընկերության տնօրենի կողմից: Միաժամանակ արձանագրության մեջ նշվել է, որ պրոցեսորները վերցվել են ուսումնասիրություն իրականացնելու նպատակով՝ մինչև վարչական վարույթի ավարտը, իսկ որպես նշված գործողության իրավական հիմք

վկայակոչվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածը: Ընդ որում, արձանագրության մեջ չի նշվել Ընկերությունից վերցված համակարգիչները նույնականացնող որևէ տեղեկություն: Արձանագրության վրա Ընկերության տնօրենի կողմից կատարվել է հետևյալ գրառումը. «Պրոցեսորները վերցրել են առանց մեր թույլտվության, անջարկելով աշխատանքի ժամանակ, խոչընդոտելով Ընկերության բնականոն աշխատանքը: Պրոցեսորները վերցրել են հանձնարարագրում չնշված անձինք, անջարկելու գործողություններն իրականացվել են նույնպես իրենց կողմից» (**հատոր 1-ին, գ.թ. 45**):

9. Տեսչության գլխավոր հարկային տեսուչի կողմից 14.07.2011 թվականին կայացված «Զննում նշանակելու մասին» որոշմամբ նշանակվել է Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչների և նրանցում առկա տեղեկատվության զննում՝ զննմանը մասնակից դարձնելով Ընկերության կողմից լիազորված ներկայացուցչին (**հատոր 3-րդ, գ.թ. 62**):

10. Տեսչության աշխատակիցների կողմից 14.07.2011 թվականին կազմված «Համակարգիչների զննում կատարելու վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Տեսչության աշխատակիցները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ կետով, իրականացրել են Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչների զննում: Ըստ այդ արձանագրության՝ զննվել են համակարգիչներում առկա տեղեկությունները, և պարզվել է, որ դրանցում առկա են մեծ ծավալով հաշվապահական փաստաթղթեր, որոնք մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն: Ընկերության բնականոն աշխատանքին չխոչընդոտելու նպատակով համակարգիչներում առկա ամբողջ տեղեկատվությունը, որի ընդհանուր ծավալը կազմում է 188 GB, պատճենահանվել է այլ էլեկտրոնային կրիչի վրա՝ հետագայում զննելու համար: Պատճենահանված տեղեկատվության մեջ առկա են եղել 14.203 թղթապանակներ, որոնց մեջ առկա են եղել 245.309 ֆայլեր: Էլեկտրոնային կրիչը կցվել է արձանագրությանը: Բացի այդ, նշված արձանագրության մեջ զննում իրականացրած պաշտոնատար անձանց կողմից կատարվել է գրառում այն մասին, որ զննմանը մասնակցելու համար լիազոր անձ ներկայացնելու նպատակով բազմաթիվ անգամ զանգահարել են Ընկերության տնօրենին և հաշվապահին, սակայն Ընկերությունից որևէ ներկայացուցիչ չի ներկայացել: Ընդ որում, արձանագրությունը կազմած անձինք այն եզրափակել են «Արձանագրությունը փակագրված է ճիշտ, հայտարարություններ չկան» նախադասությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 88**):

11. Տեսչության աշխատակիցների կողմից 22.07.2011 թվականին կազմված «Էլեկտրոնային փաստաթղթերի զննում կատարելու վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ Տեսչության աշխատակիցներն իրականացրել են Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչներից 14.07.2011 թվականին պատճենահանված 188 GB ծավալով ամբողջ տեղեկատվության զննում, որը գտնվում է էլեկտրոնային կրիչի վրա: Ըստ այդ արձանագրության՝ էլեկտրոնային կրիչում հայտնաբերվել են 14.203 թղթապանակներ, որոնց մեջ առկա են եղել 245.309 ֆայլեր: Նշված տեղեկատվության մեջ առկա են եղել ֆայլեր, որոնք պարունակում են տեղեկություններ Ընկերության տնօրենի կողմից Ընկերության դրամարկղից կանխիկ գումարների տրամադրման վերաբերյալ, որոնց մասին Ընկերությունը տեղեկություններ չի ներառել հաշվապահական հաշվառման փաստաթղթերում և հարկային հաշվետվություններում: Այդ ֆայլերը տպագրվել են և կցվել են արձանագրությանը: Բացի այդ, հայտնաբերվել են նաև ֆայլեր, որոնք պարունակում են տեղեկություններ Ընկերության փաստա-

ցի կատարած ծախսերի և ստացված եկամուտների մասին, որոնք նույնպես չեն ներառվել հաշվապահական հաշվառման փաստաթղթերում և հարկային հաշվետվություններում: Նշված արձանագրության մեջ նույնպես գնումն իրականացրած անձանց կողմից կատարվել է գրառում այն մասին, որ գնմանը մասնակցելու համար լիազոր անձ ներկայացնելու նպատակով բազմաթիվ անգամ զանգահարել են Ընկերության տնօրենին և հաշվապահին, սակայն Ընկերությունից որևէ ներկայացուցիչ չի ներկայացել: Այս դեպքում նույնպես արձանագրությունը կազմած անձինք այն եզրափակել են *«Արձանագրությունը տրապարկված է ճիշտ, հայտարարություններ չկան»* նախադասությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 89**):

12. Տեսչության պետի 17.09.2013 թվականի թիվ 4 որոշման համաձայն՝ որոշվել է Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվող ստուգման ընթացքում հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիման վրա, ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ հաստատված կարգով, իսկ սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորությունները հաշվարկել իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ երկու դեպքում էլ հիմք ընդունելով Ընկերության համակարգիչներից վերցված հաշվապահական ծրագրերի տվյալները, ինչպես նաև համակարգիչներում առկա այլ տեղեկությունները (**հատոր 1-ին, գ.թ. 85-86**):

13. Ընկերությունում Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացվող ստուգման ընթացքում Տեսչության կողմից կատարվել է հարկերի և սոցիալական վճարների օբյեկտների ելակետային չափերի որոշում, ինչպես նաև հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների հաշվարկում, ինչի արդյունքում 01.11.2013 թվականին կազմվել է համապատասխան եզրակացություն, որի համաձայն՝

Ընկերության կողմից 2010 թվականի համար պակաս ցույց տրված հարկվող շահույթը կազմում է 1.205.377.497 ՀՀ դրամ, որի նկատմամբ պետք է հաշվարկվի 241.075.499 ՀՀ դրամ շահութահարկ.

Ընկերության կողմից 2010 թվականի համար պակաս ցույց տրված եկամտահարկը կազմում է 14.843.330 ՀՀ դրամ, իսկ 2011 թվականի առաջին եռամսյակի համար՝ 2.944.468 ՀՀ դրամ՝ երկու դեպքում էլ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների (ԱՎՈՒԲ) գծով.

Ընկերության կողմից 2010 թվականի համար պակաս ցույց տրված պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմում են 7.436.667 ՀՀ դրամ, իսկ 2011 թվականի առաջին եռամսյակի համար՝ 1.394.540 ՀՀ դրամ.

Ընկերության կողմից 2010 թվականի համար պակաս ցույց տրված ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կազմում է 1.302.209.987 ՀՀ դրամ, որի նկատմամբ պետք է հաշվարկվի 260.441.997 ՀՀ դրամ ԱԱՀ, իսկ 2011 թվականի առաջին եռամսյակի համար պակաս ցույց տրված ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կազմում է 291.260.925 ՀՀ դրամ, որի նկատմամբ պետք է հաշվարկվի 58.252.185 ՀՀ դրամ ԱԱՀ (**հատոր 1-ին, գ.թ. 91-108**):

14. Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացված ստուգումն ավարտվել է 04.11.2013 թվականին: Ստուգ-

ման արդյունքներով Տեսչության կողմից 20.11.2013 թվականին կազմվել է թիվ 1000174 ստուգման ակտը, որով Ընկերության նկատմամբ առաջադրվել են հետևյալ հարկային պարտավորությունները.

Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 1-ին կետով Ընկերության նկատմամբ 2010 թվականի համար պակաս ցույց տրված և հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկված հարկվող շահույթի հիման վրա առաջադրվել է 514.689.423 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն շահութահարկի գծով, որից՝ 241.075.499 ՀՀ դրամ ապառք, 120.537.750 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 24.107.550 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 128.357.907 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ, 610.717 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նվազագույն շահութահարկի տույժ:

Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 3-րդ կետով Ընկերության նկատմամբ 2010 թվականի և 2011 թվականի 1-ին եռամսյակի համար պակաս ցույց տրված և հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկված հարկվող ԱՎՈԻՄ-ների հիման վրա առաջադրվել է 45.620.962 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն հարկային գործակալի կողմից պահվող (գանձվող) եկամտահարկի գծով, որից 17.787.798 ՀՀ դրամ՝ ապառք, 16.315.565 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 1.778.780 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 9.738.819 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ:

Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 5-րդ կետով Ընկերության նկատմամբ 2010 թվականի և 2011 թվականի 1-ին եռամսյակի համար պակաս ցույց տրված և հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկված ԱԱՀ-ով հարկվող շրջանառության հիման վրա առաջադրվել է 682.843.238 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն ԱԱՀ-ի գծով, որից 318.694.182 ՀՀ դրամ՝ ապառք, 159.347.091 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 31.869.418 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված տուգանք, 172.932.547 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված տույժ:

Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 15-րդ կետով Ընկերության նկատմամբ 2010 թվականի և 2011 թվականի 1-ին եռամսյակի համար պակաս ցույց տրված և հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հաշվարկված ԱՎՈԻՄ-ների հիման վրա առաջադրվել է 22.683.350 ՀՀ դրամ լրացուցիչ պարտավորություն պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որից 8.831.207 ՀՀ դրամ ապառք, 8.133.937 ՀՀ դրամ իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված տուգանք, 883.121 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետով

նախատեսված տուգանք, 4.835.085 ՀՀ դրամ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 62-68**):

15. Կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչի 28.11.2013 թվականի որոշմամբ Ընկերության կողմից 2010 թվականի և 2011 թվականի 1-ին եռամսյակի համար շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առանձնապես խոշոր չափերով հարկեր և պարտադիր այլ վճարներ վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցված թիվ 69111012 քրեական գործով նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն: Փորձաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին, որոնց առաջադրվել են հետևյալ հարցերը.

ա) Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտով Ընկերության նկատմամբ առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացումը բխում է արդյոք քրեական գործի նյութերից և ստուգող ժամանակաշրջանում հարկային հաշվառման դաշտում գործող նորմատիվ ակտերի պահանջներից,

բ) Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտով՝ դատահաշվապահական փորձաքննությամբ ճշգրտված տվյալներով, ըստ դրվագների, որքան է կազմում Ընկերության կողմից պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափը՝ ըստ հարկատեսակների, տույժ և տուգանքներով հանդերձ,

գ) հարկման համար հիմք համարվող փաստաթղթերում ինչպիսի խախտումներ կատարելու միջոցով են պակաս հաշվարկվել Ընկերության հարկային պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 115-117**):

16. Ի կատարումն թիվ 69111012 քրեական գործով Կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչի կողմից դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին 28.11.2013 թվականի որոշման՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 18.09.2014 թվականին կազմվել է թիվ 13-3967 փորձագետի եզրակացությունը: Նշված եզրակացությամբ փորձագետները եկել են այն հետևության, որ առավել իրատեսական է դիտվում այն տարբերակը, ըստ որի՝ ստուգվող ժամանակաշրջանի կտրվածքով Ընկերության լրացուցիչ պարտավորությունները կարող է կազմել 307.239.749 ՀՀ դրամ, որից շահութահարկ՝ 91.388.240 ՀՀ դրամ, նվազագույն շահութահարկի տույժ՝ 610.717 ՀՀ դրամ, եկամտահարկ՝ 45.620.962 ՀՀ դրամ, 2010 թվականի ԱԱՀ՝ 132.577.486 ՀՀ դրամ, 2011 թվականի առաջին եռամսյակի ԱԱՀ՝ 14.358.994 ՀՀ դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 22.683.350 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 8-36**):

17. ՀՀ քննչական կոմիտեի քննիչի 23.10.2014 թվականի որոշմամբ թիվ 69111012 քրեական գործի վարույթը կարճվել է և որոշվել է քրեական հետապնդում չիրականացնել Ընկերության տնօրենի նկատմամբ՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության պատճառով: Նշված որոշմամբ քննիչն արձանագրել է, որ 09.11.2012 թվականին ստացված դատահաշվապահական և համակարգչատեխնիկական փորձաքննության թիվ 12-0509 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված լազերային սկավառակում առկա ֆայլերը փորձաքննության ներկայացված թվով 6 համակարգիչների կոշտ սկավառակներում առկա և նախկինում չնշված ֆայլերի թվում հայտնաբերել չի հաջողվել: Այնուհետև քննիչը նշել է. «(...) Թեև հարկային մարմինն [Ընկերության] հարկային պարտավորությունների նախնական հաշվարկ կատարելիս, հերազայում նաև՝ [Ընկերությունում] կատարված բյու-

ջեի փոխհարաբերությունների ճշտության ստուգման թիվ 1000174 ակտը կազմելիս արձանագրել է 1.265.836.973 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ, սակայն նախաքննությանը հնարավոր չի եղել պարզել, թե համակարգիչներում հայտնաբերված տեղեկավորությունն ինչ հիմքով է ընդունվել որպես հարկման օբյեկտներ, հնարավոր չի եղել պարզել, թե [Ընկերությունից] առգրավված թվով 6 համակարգիչներից հարկապես որ համակարգչում եղած տեղեկավորության և ինչ փաստաթղթերի ուսումնասիրմամբ: Ավելին՝ համակարգչատեխնիկական փորձաքննությանը արձանագրվել է հարկային տեսուչների կողմից կրիչի վրա ներբեռնված 188 GB տեղեկավորության բացակայությունն [Ընկերության] թվով 6 համակարգիչների պրոցեսորներում, ինչը կասկածի տակ է դնում հարկման հիմք հանդիսացող տեղեկավորության ձեռքբերման լրիվությունն ու արժանահավատությունը: (...) Բացի այդ, հարկային մարմնի աշխատակիցները թեև կազմել են արձանագրություն համակարգիչները գնելու վերաբերյալ, սակայն հստակ չի արձանագրվել, թե յուրաքանչյուր պրոցեսորից որքան ծավալի տեղեկավորություն է պատճենահանվել, չի արձանագրվել պատճենահանված թղթապանակների, դրանցում առկա ֆայլերի անվանումները, դրանց մեջ ներառված տեղեկավորության տեսակը, դրանց նկարագրությունը: (...) Այսպիսով, քրեական գործի նախաքննության ընթացքում [Ընկերության] տնօրենի կողմից դիտարկությանը հարկային մարմնին խեղաթուրված տվյալներ ներկայացնելու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել(...):» (հատոր 2-րդ, գ.թ. 51-59):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ստուգման ժամկետների երկարաձգման, ստուգման վարույթի կասեցման և կասեցման ժամկետի երկարաձգման ինստիտուտների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները և սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորությունները հարկային մարմնի կողմից ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող հանգամանքների ապացուցման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) մինչև 01.01.2013 թվականը գործող օրենսդրության տեսանկյունից կար՞ող է արդյոք իրավաչափ համարվել այն ստուգման ակտը, որի ընդունմանն ուղղված ստուգման վարույթը կասեցվել է, իսկ հետագայում վարչական մարմինը երկարաձգել է ստուգման կասեցման ժամկետը,

2) կար՞ող է արդյոք իրավաչափ համարվել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրա-

ցուցիչ պարտավորություններ առաջադրող ստուգման ակտը, եթե այդ իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ իրավական և փաստական հանգամանքների առկայությունը չի հիմնավորվում արժանահավասար ապացույցներով:

1) Քննելով վճռաբեկ բողոքն առաջին հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումը վարչական վարույթի տարատեսակ է, որի առանձնահատկությունները սահմանված են նշված օրենքով: Սակայն ասվածը բնավ չի բացառում առանձին տեսակի վարչական վարույթների, տվյալ դեպքում՝ ստուգման ընթացակարգի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կիրառումը: Ավելին՝ 23.06.2011 թվականին ընդունված և 06.08.2011 թվականից ուժի մեջ մտած ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» թիվ ՀՕ-243-Ն ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում սահմանվեց, որ ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով: Այսինքն՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորվող վարույթի առանձնահատկությունները սահմանվում են այդ օրենքով, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վեճի առարկա իրավահարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված վարույթի առանձնահատկությունները: Այլ կերպ ասած՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող վարչական վարույթի ընթացքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է միայն այն հարաբերությունների մասով, որոնք «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով կարգավորված չեն ընդհանրապես կամ կարգավորված են մասամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստուգումը՝ որպես վարչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի տարատեսակ, պրոցեսուալ բնույթ կրող գործողությունների ամբողջություն է, որի արդյունքը, եզրափակումը կամ ավարտն առանձին տեսա-

կի գրավոր վարչական ակտի՝ ստուգման ակտի ընդունումն է: Հետևաբար ստուգման հետ կապված վարույթի ընթացքում կատարված գործողություններից յուրաքանչյուրը կարող է ազդեցություն ունենալ ստուգման ակտի իրավաչափության գնահատման համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ, ի թիվս այլնի, նշվում են նաև ստուգման ժամկետը, ստուգման իրավական հիմքերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, (...): Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր՝ յուրաքանչյուր տարվա համար: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, նույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով, իսկ օտարերկրյա պետություններ հարցումներ կատարելու դեպքում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունը պարզելու համար Կոմիտեն կարող է իրականացնել ստուգում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված ընթացակարգերի, այդ թվում՝ ստուգման ժամկետների պահպանմամբ՝ ապահովելով նաև տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելու օրենսդրական պահանջի կատարումը: Այսինքն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) պետք է հրապարակի ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր, որտեղ, ի թիվս այլնի, պետք է նշում կատարի նաև ստուգման ժամկետի, ստուգման իրավական հիմքերի վերաբերյալ: Այնուհետև ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ (եթե բացակայում են այս կանոնից շեղվելու օրենքով նախատեսված դեպքերը) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը հանձնել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, իսկ վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ընդ որում, ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը, ուստիև տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ անարգել մուտք գործելու, ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացառություններ, տեղեկանքներ պահանջելու և վերցնելու և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ լիազորությունները ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք իրավասու են իրականացնելու միայն այդ օրվանից սկսած: Միևնույն ժամանակ ստուգումների ընթացքին չխոչընդոտելու, ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները կատարելու, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով փաստաթղթերը, տվյալները ներկայացնելու, դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ տրամադրելու, ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ստուգվող սուբյեկտի պարտականությունները նույնպես ծագում են ստուգումը փաստացի սկսելու օրվանից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև ստուգ-

ման ժամկետը երկարաձգելու կամ կասեցնելու դեպքերն ու կարգը, համաձայն որի՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր: Մինևույն ժամանակ ստուգման ընթացքը կարող է կասեցվել, եթե առկա է լինում հետևյալ հիմքերից որևէ մեկը.

1. առաջացել է ստուգման ընթացքում առանձին տեղեկություններ ճշտելու անհրաժեշտություն,

2. ստուգմանն առնչվող փաստաթղթերն առգրավվել են հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա,

3. տեղի է ունեցել տարերային աղետ,

4. տեղի է ունեցել ստուգումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանք:

Ընդ որում, ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ, իսկ ստուգման ընթացքի կասեցումը կարող է իրականացվել միայն ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ մտնելու կանոն, համաձայն որի՝ ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունների միասնական կարգավորումը, այդ թվում՝ ստուգման վարույթի տևողության, դրա երկարաձգման և կասեցման հետ կապված կանոնների սահմանումը միտված է իրավական որոշակիության սկզբունքի պահպանմանը: Նշված կանոնների միջոցով, փաստորեն, տնտեսավարող սուբյեկտին տրվել է ստուգման համար սահմանված ժամկետների ավարտից հետո վարչական մարմնի կողմից իր գործունեությանն այլևս չմիջամտելու երաշխիք: Ուստի վարչական մարմինը պարտավոր է պահպանել ստուգման հետ կապված վարչական վարույթի ժամկետները, իսկ դրանց երկարաձգումն ու կասեցումը՝ իրականացնել բացառապես օրենքի պահանջների պահպանմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են ստուգումն իրականացնել ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետում, սակայն ստուգման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգման ընթացքը կասեցնելու օրենքով նախատեսված հիմքեր առաջանալու դեպքում վերջիններս պետք է գրավոր հիմնավորում կամ գրավոր զեկուցագրի ներկայացնեն համապատասխան պետական մարմնի ղեկավարին (փոխարինող պաշտոնատար անձին), որն էլ պետք է ընդունի ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան անհատական իրավական ակտ: Ընդ որում, ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ընթացքը կասեցնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) ընդունած հրամանի կամ հանձնարարագրի մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը՝ դրանից բխող իրավական հետևանքներն առաջացնելու, մասնավորապես ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող ակտի ուժի մեջ մտնելն ապահովելու համար:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ստուգման ընթացքը կա-

սեցվում է ստուգման իրականացումն անհնարին դարձնող հանգամանքների բերմամբ, ինչից հետևում է, որ ստուգման ընթացքի կասեցման ժամանակահատվածում կասեցվում են նաև ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ստուգողական գործողություններ իրականացնելու լիազորությունները: Վճռաբեկ դատարանի նշված իրավական դիրքորոշումը բխում է նաև ստուգման ընթացքը կասեցնելու օրենսդրական հիմքերից: Օրինակ, եթե առկա է առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն, որը ձեռք բերելու ուղղությամբ կատարվելիք գործողությունները կարող են կրել տևական բնույթ, ապա ստուգումը կարող է կասեցվել մինչև այդ տեղեկությունները ստանալը: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է բացառապես այն տեղեկություններին, որոնք պետք է ձեռք բերվեն ստուգման վարույթի մասնակից չհանդիսացող սուբյեկտից: Ինչ վերաբերում է ստուգումը կասեցնելու մյուս հիմքերին, մասնավորապես՝ ստուգմանն առնչվող փաստաթղթերը հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի հիման վրա առգրավված լինելուն կամ տարերային աղետին կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքներին, ապա դրանք վարույթն իրականացնող մարմնի և վարույթի մասնակցի կամքից անկախ տեղի ունեցող իրադարձություններ են. այդ հիմքերով վարչական վարույթի կասեցման ընթացում ևս ստուգումն իրականացնող անձինք իրավասու չեն ստուգմանն ուղղված որևէ գործողություն կատարելու:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող ստուգման ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման հիմք է հանդիսացել Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագիրը, որով ստուգման ժամկետը սահմանվել է 15 անընդմեջ աշխատանքային օր:

Ընկերությունը վիճարկել է Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի հիմքով իրականացված ստուգման արդյունքում 20.11.2013 թվականին ընդունված թիվ 1000174 ստուգման ակտը, ի թիվս այլնի, նաև ընթացակարգային խախտումների հիմքով՝ դրանց շարքում վկայակոչելով մասնավորապես ստուգման համար օրենքով սահմանված ժամկետների գերազանցումը:

Դատարանը, պատճառաբանելով, որ ստուգման ժամկետների խախտում ստուգողների կողմից թույլ չի տրվել, նաև այդ հիմքով մերժել է Ընկերության հայցը:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Ընկերության այն փաստարկին, որ ստուգման ընթացքի կասեցումները հիմնավորված չեն եղել, գտել է, որ ստուգման ընթացքը կասեցնելու վերաբերյալ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր հիմնավորումների, զեկուցագրերի և դրանց հիման վրա պետական մարմնի ղեկավարի հրամանների հիմնավորված չլինելու վերաբերյալ պատճառաբանություններն ինքնին չեն կարող հիմք հանդիսանալ ստուգման արդյունքում կազմված ակտն անվավեր ճանաչելու համար:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունում ստուգումը փաստացի սկսելու օրվա մասին համապատասխան գրառում ստուգման մատյանում չի կատարվել (նշված փաստն ընդունել են կողմերը): Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք ստուգողական գործողություններն Ընկերությունում փաստացի սկսել են իրականացնել 01.06.2011 թվականին, թեև ստուգման հանձնարարագրում Ընկերության տնօրենի կողմից կատարված գրառման համաձայն՝ ստուգումը փաստացի սկսվել է 09.06.2011 թվականին: Այսպես, ստուգումն

իրականացնող անձանց կողմից Ընկերության հաշվապահի մասնակցությամբ 01.06.2011 թվականին կազմվել է «Կատարվող ստուգումների շրջանակներում պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ» արձանագրությունը, որով Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի շրջանակներում Ընկերությանն առաջարկվել է արձանագրությունում նշված հարցերի պատասխանները հնարավոր սեղմ ժամկետներում՝ մինչև 03.06.2011 թվականը, գրավոր ներկայացնել ստուգողներին: Այսինքն՝ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք 01.06.2011 թվականից սկսել են իրացնել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված լիազորությունները:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմնի վերոգրյալ վարքագիծը ոչ իրավաչափ է, քանի որ Ընկերության ստուգման մատյանում ստուգումը փաստացի սկսելու վերաբերյալ համապատասխան գրառում կատարված չլինելու պայմաններում ստուգման սկզբնակետ պետք է համարել ստուգման հանձնարարագրում Ընկերության տնօրենի կողմից կատարված գրառմամբ ամրագրված՝ ստուգումը փաստացի սկսվելու օրը, այսինքն՝ 09.06.2011 թվականը: Հետևաբար ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք 01.06.2011 թվականին իրավասու չէին կատարելու Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի շրջանակներում Ընկերության մոտ իրականացվելիք ստուգմանն ուղղված որևէ գործողություն, այդ թվում նաև՝ Ընկերությանն առաջադրել ստուգման համար պարզաբանման ենթակա հարցեր և առաջարկել այդ հարցերի պատասխանները հնարավոր սեղմ ժամկետներում գրավոր ներկայացնել ստուգողներին:

Այսպիսով, Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրով իրականացված ստուգման ժամկետի իրավաչափությունը գնահատելու հարցում սույն գործով որպես ելակետ պետք է ընդունվի Ընկերության տնօրենի կողմից հանձնարարագրում կատարված այն գրառումը, որ ստուգումը փաստացի սկսվել է 09.06.2011 թվականին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունում իրականացված ստուգման ժամկետը Կոմիտեի նախագահի 27.06.2011 թվականի թիվ 1321-Ա հրամանով երկարաձգվել է 10 աշխատանքային օրով: Ստուգման ժամկետը երկարաձգող թիվ 1321-Ա հրամանը ստուգվող սուբյեկտին է հանձնվել 28.06.2011 թվականին, ուստի այն ուժի մեջ է մտել 29.06.2011 թվականին: Արդյունքում Ընկերությունում իրականացվող ստուգման ընդհանուր ժամկետը կազմել է 25 անընդմեջ աշխատանքային օր: Որպես ստուգման ժամկետի հոսքի սկզբնակետ ընդունելով 09.06.2011 թվականը (ըստ Ընկերության տնօրենի կողմից հանձնարարագրում կատարված գրառման)՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերությունում իրականացվող ստուգումը պետք է ավարտվեր 14.07.2011 թվականին: Սակայն Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով ստուգման ընթացքը 11.07.2011 թվականից նախ 30 աշխատանքային օրով կասեցվել է, այնուհետև Կոմիտեի նախագահի 18.08.2011 թվականի թիվ 1832-Ա, 27.09.2011 թվականի թիվ 2173-Ա, 08.11.2011 թվականի թիվ 2487-Ա, 19.12.2011 թվականի թիվ 2770-Ա, 06.02.2012 թվականի թիվ 147-Ա, 23.03.2012 թվականի թիվ 387-Ա, 11.05.2012 թվականի թիվ 790-Ա, 25.06.2012 թվականի թիվ 1096-Ա, 06.08.2012 թվականի թիվ 1400-Ա, 14.09.2012 թվականի թիվ 1689-Ա, 26.10.2012 թվականի թիվ 2056-Ա, 12.12.2012 թվականի թիվ 2434-Ա, 04.02.2013 թվականի թիվ U-181-Ա, 18.03.2013 թվականի թիվ U-503-Ա, 03.05.2013 թվականի թիվ U-893-Ա, 12.06.2013 թվականի թիվ U-1206-Ա, 25.07.2013 թվականի թիվ U-1309-Ա հրամաններով ստուգման կասեցման ժամկետն ամեն անգամ 30 աշխատանքային օրով երկարաձգվել է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Քննարկվող իրավահարաբերության համատեքստում վարչարարության օրինականության հանրաճանաչ սկզբունքից բխող վերոգրյալ իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մասին անհատական իրավական ակտ ընդունելու վարչական մարմնի լիազորությունը պետք է նախատեսված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ նորմատիվ իրավական ակտով:

Տվյալ դեպքում ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մասին Կոմիտեի նախագահի 18.08.2011 թվականի թիվ 1832-Ս, 27.09.2011 թվականի թիվ 2173-Ս, 08.11.2011 թվականի թիվ 2487-Ս, 19.12.2011 թվականի թիվ 2770-Ս, 06.02.2012 թվականի թիվ 147-Ս, 23.03.2012 թվականի թիվ 387-Ս, 11.05.2012 թվականի թիվ 790-Ս, 25.06.2012 թվականի թիվ 1096-Ս, 06.08.2012 թվականի թիվ 1400-Ս, 14.09.2012 թվականի թիվ 1689-Ս, 26.10.2012 թվականի թիվ 2056-Ս, 12.12.2012 թվականի թիվ 2434-Ս հրամաններում որպես դրանց ընդունման նորմատիվ իրավական հիմք վկայակոչվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, սակայն հղում չի կատարվել օրենքի այն հոդվածին, մասին և կետին, որոնցով սահմանված է ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մասին անհատական իրավական ակտ ընդունելու Կոմիտեի նախագահի լիազորությունը:

Մինչդեռ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրության համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ նշված օրենքը մինչև 01.01.2013 թվականը չի նախատեսել որևէ դրույթ ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը մինչև 01.01.2013 թվականը նախատեսել էր միայն ստուգման ժամկետը երկարաձգելու կամ ստուգման ժամկետը կասեցնելու, **այլ ոչ թե ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորություն**: Ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորությունը նախատեսվել է միայն 19.12.2012 թվականին ընդունված և 01.01.2013 թվականից ուժի մեջ մտած ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-242-Ն ՀՀ օրենքով, որով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը ենթարկվել է փոփոխության, ինչի արդյունքում նախատեսվել է նաև ստուգման կասեցման ժամկետը երկարաձգող անհատական իրավական ակտ ընդունելու վերաբերյալ իրավադրույթ: Փաստորեն, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ստուգում իրականացնող վարչական մարմինների՝ ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու լիազորությունը սահմանվել է միայն 01.01.2013 թվականից հետո:

Սույն գործում առկա՝ ստուգման ժամկետներին վերաբերող փաստաթղթերի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

1) Ընկերությունում իրականացված ստուգման ընդհանուր ժամկետը կազմել է 25

անընդմեջ աշխատանքային օր՝ ըստ Կոմիտեի նախագահի 18.05.2011 թվականի թիվ 1000174 հանձնարարագրի և 27.06.2011 թվականի թիվ 1321-Ա հրամանի:

2) Ստուգումը փաստացի սկսելու օրը 09.06.2011 թվականը դիտարկելու պարագայում այն պետք է ավարտվեր 14.07.2011 թվականին:

3) Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով ստուգման ընթացքը կասեցվել է 30 աշխատանքային օրով՝ սկսած 11.07.2011 թվականից: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 1425-Ա հրամանը Ընկերությանն է հանձնվել 12.07.2011 թվականին և ուժի մեջ է մտել 13.07.2011 թվականին, ստացվում է, որ ստուգման ժամկետի կասեցումը պետք է հաշվարկվի 13.07.2011 թվականից: Արդյունքում ստուգման կասեցման պահի դրությամբ ստուգման 25 աշխատանքային օր ընդհանուր ժամկետից արդեն իսկ սպառվել էր 23 աշխատանքային օրը (09.06.2011 թվականից մինչև 12.07.2011 թվականը ներառյալ), և մնացել էր ընդամենը 2 աշխատանքային օր: Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով ստուգման ժամկետի կասեցման հաշվարկի սկզբնակետը 13.07.2011 թվականը դիտելու պարագայում ստացվում է, որ նշված հրամանով ստուգման ընթացքը կասեցվել է մինչև 23.08.2011 թվականը ներառյալ:

4) Կոմիտեի նախագահի 18.08.2011 թվականի թիվ 1832-Ա, 27.09.2011 թվականի թիվ 2173-Ա, 08.11.2011 թվականի թիվ 2487-Ա, 19.12.2011 թվականի թիվ 2770-Ա, 06.02.2012 թվականի թիվ 147-Ա, 23.03.2012 թվականի թիվ 387-Ա, 11.05.2012 թվականի թիվ 790-Ա, 25.06.2012 թվականի թիվ 1096-Ա, 06.08.2012 թվականի թիվ 1400-Ա, 14.09.2012 թվականի թիվ 1689-Ա, 26.10.2012 թվականի թիվ 2056-Ա, 12.12.2012 թվականի թիվ 2434-Ա, 04.02.2013 թվականի Ս-181-Ա, 18.03.2013 թվականի Ս-503-Ա, 03.05.2013 թվականի թիվ Ս-893-Ա, 12.06.2013 թվականի թիվ Ս-1206-Ա, 25.07.2013 թվականի թիվ Ս-1309-Ա հրամաններով Ընկերությունում իրականացվող ստուգման կասեցման ժամկետը երկարաձգվել է ամեն անգամ 30 աշխատանքային օրով՝ 24.08.2011 թվականից մինչև 11.09.2013 թվականը ներառյալ:

5) Կոմիտեի նախագահի 11.09.2013 թվականի թիվ Ս-1914-Ա հրամանով, որն Ընկերությանը հանձնվել է 11.09.2013 թվականին և ուժի մեջ է մտել 12.09.2013 թվականին, ստուգման ընթացքը վերստին կասեցվել է սկսած 12.09.2013 թվականից՝ 30 աշխատանքային օրով, այսինքն՝ ներառյալ 23.10.2013 թվականը:

6) Կոմիտեի նախագահի 22.10.2013 թվականի թիվ Ս-2198-Ա հրամանով ստուգման կասեցման ժամկետը երկարաձգվել է 30 աշխատանքային օրով, այսինքն՝ մինչև 04.12.2013 թվականը ներառյալ (հաշվարկը կատարվել է սկսած 24.10.2013 թվականից):

7) Կոմիտեի նախագահի 30.10.2013 թվականի թիվ Ս-2261-Ա հրամանով Ընկերությունում իրականացվող ստուգումը վերսկսվել է 01.11.2013 թվականից,

8) Ընկերությունում իրականացվող ստուգումն ավարտվել է 04.11.2013 թվականին:

9) Ստուգման ակտն ընդունվել է 20.11.2013 թվականին:

Համադրելով սույն գործի վերոգրյալ փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ընկերությունում իրականացվող ստուգման ժամկետը՝ 25 անընդմեջ աշխատանքային օր տևողությամբ, առաջին անգամ 30 աշխատանքային օրով կասեցվել է 13.07.2011 թվականից մինչև 23.08.2011 թվականը ներառյալ՝ Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով: Կասեցման ժամկետը լրանալուց առաջ՝ 18.08.2011 թվականին, Կոմիտեի նախագահին ընդունել է ստուգման ժամկետի կասեցումը երկարաձգելու մասին թիվ 1832-Ա հրամանը, որով ստուգման կասեցման ժամկետը երկարաձգվել է 30 աշխատանքային օրով: Այնուհետև 2011, 2012 և 2013 թվականներին Կոմիտեի նախագահի կողմ-

մից ընդունված մի շարք հրամաններով ստուգման կասեցման ժամկետն անընդհատ երկարաձգվել է, և ստուգումը փաստացի կասեցված է եղել մինչև 11.09.2013 թվականը ներառյալ: Այնուհետև ստուգումը վերստին կասեցվել է 12.09.2013 թվականից մինչև 23.10.2013 թվականը ներառյալ՝ Կոմիտեի նախագահի 11.09.2013 թվականի թիվ U-1914-Ա հրամանով: Ստուգման ընթացքի՝ նշված անհատական իրավական ակտով սահմանված կասեցման ժամկետը երկարաձգվել է 30 աշխատանքային օրով՝ Կոմիտեի նախագահի 22.10.2013 թվականի թիվ U-2198-Ա հրամանով, սակայն մինչև այդ ժամկետի ավարտը՝ 01.11.2013 թվականին, Ընկերությունում իրականացվող ստուգումը վերսկսվել է Կոմիտեի նախագահի 30.10.2013 թվականի թիվ U-2261-Ա հրամանով: Ընկերությունում իրականացվող ստուգումն ավարտվել է 04.11.2013 թվականին:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ Կոմիտեի նախագահին Ընկերությունում իրականացվող ստուգման կասեցման ժամկետն առաջին անգամ երկարաձգելու վերաբերյալ հրաման արձակելու պահին՝ 11.07.2011 թվականին, չի ունեցել այդպիսի լիազորություն, քանի որ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որևէ վերապահում չի կատարել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մասին անհատական իրավական ակտ ընդունելու լիազորություն վարչական մարմնի ղեկավարին, տվյալ դեպքում՝ Կոմիտեի նախագահին, վերապահված չլինելու պարագայում, վերջինս իրավասու չի եղել ընդունելու ստուգման ժամկետի կասեցումը երկարաձգելու մասին 18.08.2011 թիվ 1832-Ա հրամանը: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգումը 09.06.2011 թվականին փաստացի սկսված լինելու հանգամանքը հիմք ընդունելու պարագայում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք գերազանցել են ստուգման ընդհանուր տևողության համար սահմանված ժամկետը: Ստուգման ժամկետի կասեցումը երկարաձգելու մասին 18.08.2011 թիվ 1832-Ա հրամանի ոչ իրավաչափ լինելու պայմաններում ստուգման ընթացքը պետք է շարունակվեր հոսել ստուգումը կասեցնելու մասին 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով սահմանված կասեցման ժամկետը լրանալուց հետո: Ինչպես նշվել է, Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով ստուգման ընթացքը կասեցվել է մինչև 23.08.2011 թվականը ներառյալ: Հետևաբար ստուգման ընթացքը պետք է շարունակվեր 24.08.2011 թվականին և 25.08.2011 թվականին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև թիվ 1425-Ա հրամանի ուժի մեջ մտնելն Ընկերությունում իրականացվող ստուգման 25 աշխատանքային օր ընդհանուր ժամկետից մնացել էր ընդամենը 2 աշխատանքային օր: Փաստորեն, ստուգման ժամկետի վերջին օրը պետք է համարվեր 25.08.2011 թվականը:

Մինչդեռ այդ օրվանից հետո ստուգումն ավարտելու և ստուգման արդյունքներն ամփոփելուն ձեռնամուխ լինելու փոխարեն վարչական մարմինը, անտեսելով ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու իրավակարգավորման բացակայությունը, ոչ իրավաչափ կերպով արձակել է ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու մասին 18.08.2011 թիվ 1832-Ա հրամանը, որին հաջորդել են 2011, 2012, 2013 թվականներին ընդունված ևս 16 նմանատիպ հրամաններ՝ ամեն անգամ երկարաձգելով ստուգման կասեցման ժամկետը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով վիճարկվող ստուգման ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնի կողմից դրսևորված վերոգրյալ վարքագիծը հակասում է վարչարարության օրինականության սկզբունքին, իսկ առանց ստուգման կասեցման ժամկետը երկարաձգելու համապատասխան լիազորության առկայության Կոմիտեի նախագահի կողմից ստուգման կասեցման ժամկետի երկարաձգումը հանգեցրել է Ընկերության մոտ իրականացվող ստուգման համար սահմանված ժամկետի խախտման: Ասվածն էլ իր հերթին ենթադրում է, որ սույն գործով վիճարկվող ստուգման ակտն ընդունվել է այդ վարչական ակտի ընդունման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ խախտելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքաբերի պնդումներն այն մասին, որ ստուգումն իրականացնելիս վարչական մարմինը խախտել է ստուգման ժամկետները և ստուգողական գործողություններն իրականացրել է ու Ընկերությանը լրացուցիչ հարկային պարտավորություններ է առաջադրել ստուգման ժամկետը լրանալուց հետո:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտն ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով:

2) Քննելով վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ մասնավորապես հիմնվելով հարկ վճարողի ակտիվների, հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալների, հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսերի, գույքագրման և չափագրման տվյալների, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների, ինչպես նաև նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկությունների, համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գների և այլ ցուցանիշների, համախառն եկամտի մեջ 25 տոկոս հաշվարկային հարկվող շահույթի կամ հարկվող եկամտի կամ օրենքով իրականացված հսկիչ գնումների վրա:

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավադրույթի բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ անհնար է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը, հարկային մարմինը պարտավոր է ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները (*տե՛ս, անհայր ձեռնարկարեր Տիգրան Խոսրովյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամույների կոմիտեի Շահումյանի հարկային տեսչության թիվ ՎԴ/0054/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում հստակորեն ամրագրված են այն իրավական հիմքերը, որոնց առկայության դեպքում հարկային մարմնի մոտ առաջանում է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու լիազորությունը: Այսպես, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող կանոնի, հարկային մարմինը պարտավոր է ինքնուրույն հաշվարկել հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, եթե առկա է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

1) հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելը դարձել է անհնար,

2) օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված:

Ընդ որում՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը նախատեսել է նաև այն փաստական հանգամանքների սպառնիչ ցանկը, որոնք պատճառ են վերոգրյալ իրավիճակների առաջացման համար. այդ ցանկը ներառում է հետևյալ դեպքերը.

1) հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը,

2) հարկ վճարողը հաշվապահական հաշվառման (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ) սահմանված փաստաթղթերը վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով,

3) հարկ վճարողն ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում:

Փաստորեն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ պայման է հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկ վճարողի հարկային պարտավորությունը հաշվարկելն անհնար դառնալու կամ հարկ վճարողի շրջանառություններն օրենքով սահմանված դեպքերում չհիմնավորված համարվելու իրավիճակներից որևէ մեկի և հարկ վճարողի կողմից թույլ տրված վերոգրյալ արարքներից որևէ մեկի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը ոչ միայն ամրագրել է այն հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորության ծագման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների բովանդակությունը, այլ նաև սահմանել է հարկային մարմնի այդ լիազորության իրականացման պայմանները: Այսպես, քննարկվող իրավական նորմով օրենսդիրը նախևառաջ թվարկել է այն չափանիշները, որոնք պետք է հիմք ընդունվեն հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելիս: Այդ գործողությունը կատարելիս հարկային մարմինը հիմնվում է մասնավորապես, հետևյալ տվյալների վրա.

- 1) հարկ վճարողի ակտիվներ,
- 2) հարկ վճարողի իրացման շրջանառության ծավալներ,
- 3) հարկ վճարողի արտադրության և շրջանառության ծախսեր,
- 4) գույքագրման և չափագրման տվյալներ,
- 5) օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկություններ,
- 6) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ,
- 7) համանման պայմաններում գործող այլ սուբյեկտների միջև կիրառված գներ և այլ ցուցանիշներ,

- 8) օրենքով իրականացված հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված տվյալներ,
- 9) հաշվարկային հարկվող շահույթ կամ հաշվարկային հարկվող եկամուտ (համախառն եկամտի մեջ 25 տոկոս):

Բացի այդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու կարգը հաստատելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունը, 18.09.1998 թվականին ընդունել է թիվ 580 որոշումը (ուժը կորցրել է 23.06.2018 թվականից), որով հաստատել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) կարգը (այսուհետ՝ Կարգ): Նշված ենթաօրենսդրական ակտով ՀՀ կառավարությունն անդրադարձել է, ի թիվս այլնի, հետևյալ հարաբերությունների կանոնակարգմանը.

- 1) հարկային մարմնի կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) հաջորդականությունը (Կարգի 4-րդ կետ),

- 2) ելակետային չափերի որոշման համար անհրաժեշտ վերլուծության կատարումը և հարկվող օբյեկտների ու հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման, վերագնահատման) համար անհրաժեշտ ելակետային չափերի որոշումը (Կարգի 5-րդ կետ), որն ընդգրկում է նաև՝

- ակտիվների շարժի (օգտագործման) չափի մնացորդի որոշումը (Կարգի 6-8-րդ կետեր),

- ակտիվների առաջացման աղբյուրների չափի մնացորդի որոշումը և վերլուծումը (Կարգի 9-11-րդ կետեր),

- 3) հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկումն ու ձևակերպումը (Կարգի 12-15-րդ կետեր):

Այսպիսով, հարկ վճարողի հարկվող օբյեկտը և հարկային պարտավորություններն

անուղղակի եղանակով հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող էր իրականացվել միայն ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

- հարկային մարմինն օժտված է հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու լիազորությամբ,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող է կիրառվել միայն օրենքով հստակորեն նախատեսված և սույն որոշմամբ ներկայացված իրավիճակներում, որոնք առաջանում են հարկ վճարողի՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով,

- հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, այդ թվում նաև՝ շահութահարկի գծով, ինքնուրույն հաշվարկելու հարկային մարմնի լիազորությունը կարող էր իրականացվել միայն ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով՝ հիմք ընդունելով օրենքով դրա համար հատուկ նախատեսված չափանիշները (*տե՛ս, «ԻՆՏ-ԳԱՐԱՆՏ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/3899/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վարչական դատավարությունում ապացուցման ընդհանուր կանոնները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի (մասնավորապես՝ ստուգման ակտի) վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերով պատասխանող վարչական մարմինը պետք է ապացուցի, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) հարկ վճարողի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և հարկ վճարողի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային կապի առկայության, ինչպես նաև (4) հարկ վճարողի հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկելու համար օրենքով նախատեսված չափանիշները հիմք ընդունելու և (5) այդ հաշվարկը ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 18.09.1998 թվականի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգով կատարված լինելու փաստական հանգամանքների առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2013 թվականին) 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ստուգման ժամանակ ապահովադիրը չի ներկայացնում սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք համարվող փաստաթղթերը (...) կամ

կեղծ տվյալներ է մտցնում այդ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում նույն օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարները հաշվարկելը, ապա սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարները հաշվարկում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հարկային մարմինների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների օբյեկտների և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման կարգը ՀՀ կառավարությունը սահմանել էր 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշմամբ, որն ուժը կորցրել է 01.01.2013 թվականին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող վերոգրյալ իրավական ակտերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ այն դեպքերում, երբ ստուգման ժամանակ ապահովադիրը չի ներկայացնում սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ կեղծ տվյալներ է մտցնում սոցիալական վճարների հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարներ հաշվարկելը, սոցիալական վճարների օբյեկտների և սոցիալական վճարների պարտավորությունների հաշվարկումը կատարվում է հարկային մարմինների կողմից՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ կառավարության 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում ապացուցման ընդհանուր կանոններից բխում է, որ հարկային մարմնի կողմից ապահովադիրի սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ ապահովադիրի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն առաջադրող վարչական ակտի (մասնավորապես՝ ստուգման ակտի) վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերով պատասխանող վարչական մարմինը պետք է ապացուցի, ի թիվս այլնի, (1) հարկային մարմնի քննարկվող լիազորության կիրառման համար հիմք հանդիսացող օրենքով նախատեսված իրավիճակներից որևէ մեկի առկայության, (2) ապահովադիրի կողմից օրենքով սահմանված որոշակի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, (3) առաջացած իրավիճակի և ապահովադիրի կողմից թույլ տրված կոնկրետ արարքի միջև պատճառահետևանքային կապի առկայության, ինչպես նաև (4) ապահովադիրի սոցիալական վճարների օբյեկտների և սոցիալական վճարների պարտավորությունների հաշվարկը ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշմամբ սահմանված կարգով կատարված լինելու փաստական հանգամանքների առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հարցերը կազմում են այն էական փաստական և իրավաբանական հանգամանքների ամբողջությունը, որոնք հիմք են իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմամբ ապահովադիրի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն առաջադրելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող՝ Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտով հարկային մարմնի կողմից Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, ինչպես նաև սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ Ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորու-

թյուն առաջադրելու համար հիմք հանդիսացող վերոգրյալ փաստական և իրավաբանական հանգամանքների ապացուցման համար վկայակոչվել են Ընկերության համակարգիչներից վերցված հաշվապահական ծրագրերի տվյալները, ինչպես նաև համակարգիչներում առկա այլ տեղեկությունները:

Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի վիճարկման հիմքում Ընկերությունը դրել է նաև այն փաստարկը, որ հաշվապահական ծրագրերի տվյալները կամ այլ տեղեկությունները համակարգիչներից վերցվել են օրենքի խախտմամբ: Բացի այդ, Ընկերությունը վարչական վարույթի ընթացքում չի ծանոթացել նշված տեղեկությունների և տվյալների բովանդակությանը, իսկ Ընկերության համակարգիչները չեն պարունակել ակտով արձանագրված հարկատեսակների մասով որևէ տվյալ կամ տեղեկատվություն: Ըստ Ընկերության՝ սույն գործով չի ապացուցվել այն հանգամանքը, որ Տեսչության կողմից իր վարչական ակտի հիմքում դրված համակարգչային տվյալներն իրականում պատկանում են (վերաբերում են) Ընկերությանը:

Դատարանն ըստ էության հիմնավոր է համարել վարչական մարմնի կողմից վկայակոչված այն փաստարկը, որ Տեսչության կողմից 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի հիմքում դրված են Ընկերությունից վերցված համակարգիչներում առկա և Ընկերությանը պատկանող տեղեկությունները՝ նաև այդ հիմքով մերժելով Ընկերության հայցը:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով հաստատվում է այն հանգամանքը, որ Տեսչության կողմից 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի հիմքում դրված համակարգչային տվյալները պատկանում են Ընկերությանը, քանի որ Ընկերության թվով 6 համակարգիչները (պրոցեսորները) վերցվել են ընկերության տնօրենի ներկայությամբ, ինչի վերաբերյալ 12.07.2011 թվականին կազմվել է համապատասխան արձանագրություն՝ ստորագրված նաև վերջինիս կողմից, համակարգիչները գնվել են, դրանցում պարունակվող ամբողջ տեղեկատվությունը պատճենահանվել է էլեկտրոնային այլ կրիչի վրա, ինչի վերաբերյալ 14.07.2011 թվականին կազմվել է համապատասխան արձանագրություն: Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանը վկայակոչել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված փորձագետի եզրակացությունը, որով Ընկերությանը պատկանող թվով 6 համակարգիչներից վերցված տվյալներն ու տեղեկությունները զուտ հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից դիտվել են արժանահավատ մասնակիորեն՝ 307.239.749 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորության մասով: Արդյունքում Վերաքննիչ դատարանը Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտն անվավեր է ճանաչել մասնակիորեն՝ 307.239.749 ՀՀ դրամից ավել առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորության մասով:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտով հարկային մարմնի կողմից Ընկերության հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները, ինչպես նաև սոցիալական վճարների օբյեկտները և սոցիալական վճարների պարտավորություններն ինքնուրույն հաշվարկելու լիազորության կիրառմամբ Ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություն առաջադրելու համար հիմք հանդիսացող՝ Ընկերության համակարգիչներում առկա տվյալները, ըստ Կոմիտեի, ձեռք են բերվել Ընկերության թվով 6 համակարգիչներից, որոնք վերցվել են ստուգման շրջանակնե-

րում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության թվով 6 համակարգիչներն Ընկերությունից վերցնելու, համակարգիչները և դրանցում պարունակվող տեղեկությունները գննելու վերաբերյալ գրավոր փաստաթղթերը, ինչպես նաև ինքնին այդ տեղեկությունները չեն կարող համարվել սույն գործով վիճարկվող ստուգման ակտի իրավաչափությունը հաստատող արժանահավատ ապացույցներ:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացույցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացույցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարան-

նը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*Կրեն'ս, Ջաջուոի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎՋ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վարչական դատավարությունում գործի համար նշանակություն ունեցող փաստերը կարող են հաստատվել բացառապես արժանահավատ ապացույցների միջոցով:

Ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացույցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախևառաջ պետք է պարզի այդ ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին (*Կրեն, Արմեն Կուրդիյանն ընդդեմ Սեդա Խորշոդյանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*): Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել՝ առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից: Ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված տարբեր ապացույցների՝ միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վերհանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով (*Կրեն, Ջոյա Սիմոնիդուն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎՋ/10507/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝ վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է դրանց վերադարձման ժամկետը: Արձանագրության 1 օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հարկերի հաշվարկման հսկողության և գանձման ընթացքում օրենքի խախտմամբ հարկ վճարողների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ որևէ տեղեկություն հիմք չի հանդիսանում հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար, քանի դեռ նա հնարավորություն չի ունեցել ծանոթանալ դրան և տալ համապատասխան բացատրություններ (...):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ստուգման վարույթ իրականացնող վարչական մարմինը կարող է տնտեսավարող սուբյեկտից վերցնել ստուգման նպատակին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, իրեր և այլ անհրաժեշտ նյութեր: Այդ գործողության վերաբերյալ վարչական մարմինը պարտավոր է կազմել արձանագրություն և դրա մեկ օրինակը հանձնել տնտեսավարող սուբյեկտին: Ընդ որում, նշված ապացույցները պետք է ձեռք բերվեն օրենքով սահմանված կարգով, ինչը պետք է հաստատվի համապատասխան փաստաթղթի, մասնավորապես՝ վարույթի մասնակիցների մասնակցությամբ կազմված արձանագրության միջոցով: Բացի այդ, ձեռք բերված ապացույցներում պարունակվող տեղեկությունները կարող են հիմք հանդիսանալ հարկ վճարողի հարկային պարտավորության հաշվարկման և գանձման համար միայն այն դեպքում, երբ վարույթի մասնակիցը հնարավորություն է ունեցել ծանոթանալու դրանց և տալու համապատասխան բացատրություններ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործում առկա ապացույցների գնահատմանը՝ Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ ստուգումն իրականացնող անձինք որպես համակարգիչները վերցնելու իրավական հիմք 12.07.2011 թվականի թիվ 1 արձանագրության մեջ վկայակոչել են տվյալ գործողությունը կատարելու համար ոչ վերաբերելի նորմատիվ իրավական ակտ, այն է՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 264-րդ հոդվածը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ստուգումն իրականացնող անձանց կողմից Ընկերության թիվ 6 համակարգիչները վերցնելու գործողությունը վերոգրյալ իրավանորմի հիմքով կատարելն իրավաչափ չէ, քանի որ նշված իրավանորմը որևէ առնչություն չի կարող ունենալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման վարույթին: Մինչդեռ ստուգման ընթացքում Ընկերության թիվ 6 համակարգիչները վերցնելու գործողությունը պետք է կատարվեր «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «գ» կետի հիմքով:

Երկրորդ՝ որպես համակարգիչները գննելու իրավական հիմք ստուգումն իրականացնող անձինք 14.07.2011 թվականին կազմված «Համակարգիչների գնումն կատարելու վերաբերյալ» արձանագրության մեջ վկայակոչել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 7-րդ հոդվածը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ կետը, որի համաձայն՝ վարչական մարմինը, անհրաժեշտություն դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի գնում: Վարչական մարմնի որոշմամբ գնմանը կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում 14.07.2011 թվականի «Ջննում նշանակելու մասին» որոշման 1-ին կետով որոշվել է նշանակել Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչների և նրանցում առկա տեղեկատվության գնում, իսկ 2-րդ կետով որոշվել է գնմանը մասնակից դարձնել Ընկերության կողմից լիազորված ներկայացուցչին: Մինչդեռ վարչական մարմինը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ ձեռնարկվել է համարժեք որևէ միջոց Ընկերության ներկայացուցչին համակարգիչների գնմանը մասնակից դարձնելու ուղղությամբ՝ բավարարվելով միայն 14.07.2011 թվականի «Համակարգիչների գնում կատարելու վերաբերյալ» և 22.07.2011 թվականի «Էլեկտրոնային փաստաթղթերի գնում կատարելու վերաբերյալ» արձանագրություններում կատարված այն նշումով, որ *«գնմանը մասնակցելու համար լիազոր անձ ներկայացնելու նպատակով բազմաթիվ անգամ զանգահարել են Ընկերության փոօրենին և հաշվապահին, սակայն Ընկերությունից որևէ ներկայացուցիչ չի ներկայացել»*: Արդյունքում գնումն իրականացվել է հարկային տեսուչների կողմից միակողմանի՝ առանց ապահովելու Ընկերության ներկայացուցչի մասնակցությունը: Ընդ որում, միակողմանի կազմված արձանագրության մեջ կատարվել է գրառում այն մասին, որ արձանագրությունը տպագրված է ճիշտ, հայտարարություններ չկան, թեև Ընկերության ներկայացուցիչները չէին մասնակցել գնման գործողությանը և չէին էլ կարող անել որևէ հայտարարություն:

Բացի այդ, Ընկերությունում ստուգում իրականացնող անձանց կողմից միակողմանի կազմված 14.07.2011 թվականի «Համակարգիչների գնում կատարելու վերաբերյալ» և 22.07.2011 թվականի «Էլեկտրոնային փաստաթղթերի գնում կատարելու վերաբերյալ» արձանագրություններում հստակ չի նշվել, թե Ընկերությունից վերցված յուրաքանչյուր համակարգիչից ինչ ծավալի տեղեկատվություն է պատճենահանվել, չեն նշվել պատճենահանված թղթապանակների և դրանցում առկա ֆայլերի անվանումները, դրանց մեջ ներառված տեղեկատվության տեսակը, դրանց մանրամասն նկարագրությունը: Փոխարենը՝ նշված արձանագրություններում ընդհանրական կարգով արձանագրվել է, որ համակարգիչներում պարունակվող ամբողջ տեղեկատվության ծավալը կազմում է 188 GB, հայտնաբերվել են 14.203 թղթապանակներ, դրանց մեջ առկա են 245.309 ֆայլեր, որոնք, ըստ վարչական մարմնի, պարունակում են տեղեկություններ Ընկերության տնօրենի կողմից ընկերության դրամարկից կանխիկ գումարների տրամադրման, Ընկերության փաստացի կատարած ծախսերի և ստացված եկամուտների վերաբերյալ: Այսինքն՝ նշված արձանագրություններով չի հիմնավորվում, որ գործում առկա կոշտ սկավառակում պարունակվող տվյալները պատկանում են Ընկերությանը, և չի բացահայտվում, թե ինչ բովանդակություն ունեն այդ տվյալները:

Հետևաբար սույն գործով Տեսչության կողմից ներկայացված վերոգրյալ ապացույցներով չի կարող հաստատվել մասնավորապես այն հանգամանքը, որ Ընկերությունը թույլ է տվել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով և իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված խախտումներ, որոնք հանգեցրել են Ընկերության՝ հարկային կամ սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները հաշվարկելու անհնարինության: Բացի այդ, Տեսչության կողմից վկայակոչված համակարգչային տվյալների՝ Ընկերությանը պատկանելու փաստի ապացուցված չլինելու և այդ տվյալների բովանդակությունը գործում առկա գրավոր ապացույցներով ճշգրտված ու հստակեցված չլինելու պայմաններում սույն գործով չի կարող հաստատված համարվել նաև այն հանգամանքը, որ այդ համակարգչային

տվյալներն արժանահավատ հիմք են Ընկերության հարկման օբյեկտները և սոցիալական վճարների օբյեկտները որոշելու համար: Ավելին՝ սույն գործով չի հաստատվում նաև այն, որ Տեսչությունն Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ պարտավորություններն առաջադրել է, համապատասխանաբար, ՀՀ կառավարության՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 18.09.1998 թվականի թիվ 580 և 24.11.2005 թվականի թիվ 2094-Ն որոշումներով սահմանված կարգով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ Ընկերության կողմից 2010 թվականի և 2011 թվականի 1-ին եռամսյակի համար շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի և պատառիկ սոցիալական ապահովության վճարների գծով առանձնապես խոշոր չափերով հարկեր և պարտադիր այլ վճարներ վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է մասնավորապես այն պատճառաբանությամբ, որ նախաքննությամբ հնարավոր չի եղել պարզել, թե Ընկերությունից վերցված թվով 6 համակարգիչներում հայտնաբերված տեղեկատվությունն ինչ հիմքով, հատկապես մոր համակարգչում եղած տվյալների և ինչ փաստաթղթերի ուսումնասիրմամբ է ընդունվել որպես հարկման օբյեկտ: Փաստորեն, վերոնշյալ քրեական գործը կարճելու հիմքում ևս դրվել է Ընկերությունից վերցված համակարգչային տվյալների ոչ արժանահավատ լինելու հանգամանքը:

Թեև վերոգրյալ հիմնավորումները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար եզրահանգելու համար, որ ստուգման ընթացքում Ընկերության համակարգիչները վերցնելու, այդ համակարգիչները և դրանցում պարունակվող տեղեկությունները զննելու գործողությունների իրավաչափությունը չի հաստատվում արժանահավատ ապացույցներով, այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև այդ գործողությունների ոչ իրավաչափությունը հավաստող ևս մեկ հիմքի:

Այսպես, սույն գործի փաստերից հետևում է, որ Կոմիտեի նախագահի 11.07.2011 թվականի թիվ 1425-Ա հրամանով Ընկերությունում իրականացվող ստուգման ընթացքը կասեցվել է 30 աշխատանքային օրով՝ 13.07.2011 թվականից մինչև 23.08.2011 թվականը ներառյալ: Այսինքն՝ 13.07.2011 թվականից մինչև 23.08.2011 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածում Տեսչությունը չուներ Ընկերությունում ստուգողական գործողություններ իրականացնելու լիազորություն: Մինչդեռ Տեսչության հարկային տեսուչները Ընկերությունից վերցված համակարգիչները և դրանցում պարունակվող տեղեկությունները զննության են ենթարկել համապատասխանաբար 14.07.2011 և 22.07.2011 թվականներին: Փաստորեն, Ընկերությունից վերցված համակարգիչները և դրանցում պարունակվող տեղեկությունները զննության են ենթարկվել և դրանց վերաբերյալ համապատասխան արձանագրությունները կազմվել են այն ժամանակ, երբ Ընկերությունում իրականացվող ստուգումը կասեցված է եղել: Հետևաբար Ընկերությունից վերցված համակարգիչները և դրանցում պարունակվող տեղեկությունները զննության ենթարկելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված վարույթային գործողությունները չեն կարող իրավաչափ համարվել, և դրանց արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները չեն կարող դրվել Տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի հիմքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանող վարչական մարմինը՝ Տեսչությունը, կրելով 20.11.2013 թվականի թիվ 1000174

ստուգման ակտի ընդունման համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, չի ներկայացրել որևէ արժանահավատ ապացույց, որով կիիմնավորվի Ընկերության թվով 6 համակարգիչները վերցնելու, դրանք զննելու ու ստացված տվյալներն օգտագործելու իրավաչափությունը, ինչի արդյունքում նշված համակարգչային տվյալներն Ընկերությանը պատկանելու փաստը մնում է չապացուցված, որի բացասական հետևանքները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետք է դրվի վարչական մարմնի վրա: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Տեսչության կողմից ներկայացված ապացույցներով չի հաստատվում Ընկերության նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմամբ սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ պարտավորություն առաջադրելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հանգամանքների առկայությունը: Նման պայմաններում սույն գործով վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման ամբողջությամբ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվելու և Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանվելու, փոփոխվելու և հայցը մասնակիորեն բավարարվելու մասով, վճռաբեկության կարգով բողոքարկվել է Կոմիտեի կողմից, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.08.2018 թվականի որոշմամբ Կոմիտեի վճռաբեկ բողոքը թողնվել է առանց

քննության, և Վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով արդեն իսկ մտել է օրինական ուժի մեջ: Հետևաբար սույն որոշմամբ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվում է և փոփոխվում միայն Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվելու և Դատարանի վճիռն անփոփոխ թողնվելու մասով, քանի որ Ընկերության վճռաբեկ բողոքը բերվել է Վերաքննիչ դատարանի որոշման՝ իր համար անբարենպաստ մասի դեմ, որն էլ հանդիսացել է սույն գործով վճռաբեկության կարգով վերանայման առարկա:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Կոմիտեի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.05.2018 թվականի որոշման՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ստուգման ակտի 1-ին կետը՝ շահութահարկի գծով 91.998.957 ՀՀ դրամ (որից ապառք՝ 42.856.211 ՀՀ դրամ, տույժեր՝ 23.429.019 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 25.713.727 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, 3-րդ կետը, 5-րդ կետը՝ ԱԱՀ-ի գծով 146.936.480 ՀՀ դրամ (որից ապառք՝ 68.577.675 ՀՀ դրամ, տույժեր՝ 37.212.201 ՀՀ դրամ,

տուգանքներ՝ 41.146.604 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, ինչպես նաև 15-րդ կետն անվավեր ճանաչելու հայցապահանջը մերժելու մասով ՀՀ վարչական դատարանի 07.06.2017 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և այդ մասով փոփոխել այն՝ «Արայ» ՍՊԸ-ի հայցը՝ նշված պահանջի մասով, բավարարել. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 20.11.2013 թվականի թիվ 1000174 ակտի 1-ին կետը՝ շահութահարկի գծով 91.998.957 ՀՀ դրամ (որից ապառք՝ 42.856.211 ՀՀ դրամ, տույժեր՝ 23.429.019 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 25.713.727 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, 3-րդ կետը, 5-րդ կետը՝ ԱԱՀ-ի գծով 146.936.480 ՀՀ դրամ (որից ապառք՝ 68.577.675 ՀՀ դրամ, տույժեր՝ 37.212.201 ՀՀ դրամ, տուգանքներ՝ 41.146.604 ՀՀ դրամ) լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու մասով, ինչպես նաև 15-րդ կետը ճանաչել անվավեր:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Արայ» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ2/0016/05/16

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան
Դատավորներ՝ Ա. Բաբայան
Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ2/0016/05/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կոմիտեի ընդդեմ Երվանդ Ալեյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) պահանջել է Երվանդ Ալեյանից բռնագանձել 330.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Մկրտչյան) (այսուհետ՝ Դատարան) 13.04.2016 թվականի որոշմամբ վերակազմակերպման հիմքով Նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Դատարանի 23.05.2016 թվականի վճռով հայցը մերժվել է և Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2017

թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 23.05.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտով Երվանդ Ալեյանի մոտ առաջացած 330.000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունը վերջինիս կողմից չի կատարվել օրենքով սահմանված ժամկետում: Այդ իսկ պատճառով Նախարարության իրավաբանական վարչության պետը 01.09.2015 թվականին ընդունել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը. այդ լիազորությունը վերապահված է հարկային մարմնին իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով: Ընդ որում, օրենսդրությունը չի սահմանել չվճարված հարկային պարտավորությունների գանձման որոշումների կայացման հիմքերի վերաբերյալ բացառություններ կամ սահմանափակումներ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք հարկային պարտավորություններն առաջացել են հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկ-հաշվետվություններից, թե հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ ընդունված վարչական ակտերից: Հետևաբար սույն գործով հանրային իրավական դրամական պահանջի համար հիմք հանդիսացող անբողոքարկելի վարչական ակտը՝ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը, ընդունվել է հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում, Երվանդ Ալեյանին չի ծանրաբեռնում ավելորդ պարտականություններով, իրավաչափ է և ենթակա չէ անվավեր ճանաչման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հարցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտի համաձայն՝ առանց պետական գրանցման

(ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կիրառմամբ Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրվել է 330.000 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն: Երվանդ Ալեյանը նշված վարչական ակտի մասին առձեռն եղանակով իրազեկվել է 22.05.2015 թվականին (**գ.թ. 7-8**).

2) Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշման համաձայն՝ Երվանդ Ալեյանից գանձվել է 330.000 ՀՀ դրամ՝ որպես Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի թիվ 1412077 ակտով հաշվարկված հարկային պարտավորության գումար: Երվանդ Ալեյանը նշված վարչական ակտի մասին փոստային ծառայության միջոցով իրազեկվել է 07.09.2015 թվականին (**գ.թ. 9**).

3) Նախարարությունը Երվանդ Ալեյանից 330.000 դրամ բռնագանձելու հանրային իրավական դրամական պահանջի հիմքում որպես անբողոքարկելի վարչական ակտ է մատնանշել Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը (**գ.թ. 2-6**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադրականությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անբողոքարկելի վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովելու նպատակով առանձին որոշում ընդունելու՝ իրավասու վարչական մարմնի լիազորության սահմանների և կիրառման հիմքերի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գումարները հարկ վճարողից գանձելու վերաբերյալ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ (ա) անձի դիմումը, բողոքը. (բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ

հողվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վկայակոչված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտն ընդունվում է վարչական մարմնի հատուկ գործունեության արդյունքում, որը կոչվում է վարչական վարույթ: Օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում սպառնալից կերպով թվարկել է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող հանգամանքները. դրանք են՝ (1) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումը կամ բողոքը և (2) վարչական մարմնի նախաձեռնությունը: Ընդ որում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը կարող է տեղի ունենալ միայն օրենքով վարչական մարմնին համապատասխան վարչական ակտ ընդունելու իմպերատիվ կամ հայեցողական լիազորություն վերապահված լինելու դեպքում: Իրացնելով իր այդ լիազորությունը՝ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, որը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ:

Նախկին որոշումներում անդրադառնալով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտի հասկացությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական

նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:

Ընդ որում, թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*տե՛ս, Վարդիթեր Ավոյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտի ընդունումը պայմանավորված է հանրային իրավունքի բնագավառում որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորող իրավական նորմի առկայությամբ, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտին (վարչական մարմնին) լիազորում է արձակել միակողմանի կարգադրություն՝ ուղղված կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը: Փաստորեն, վարչական վարույթի հարուցման և վարչական ակտի ընդունման անհրաժեշտություն է առաջանում բոլոր այն դեպքերում, երբ հարկավոր է կարգավորել հանրային իրավունքի բնագավառում որևէ կոնկրետ հարց, որն առնչվում է վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներին և պարտականություններին: Այսինքն՝ վարչական ակտի միջոցով համապատասխան իրավաբանական փաստերի առկայության դեպքում իրավական նորմերով սահմանված վերացական հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ պարտականությունները ստանում են անհատականացված ուղղվածություն՝ վերագրվում են կոնկրետ հասցեատերերի՝ ձեռք բերելով պարտադիր կատարման ենթակա լինելու հատկանիշ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից վարչական մարմնի համար իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և վարչական ակտ ընդունելու ինպերատիվ լիազորություն նախատեսված լինելու դեպքերից մեկն ամրագրված էր իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 14.04.1997 թվականին, ուժի մեջ է մտել 30.05.1997 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն) 29.1-րդ հոդվածով:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: (...) Պարտա-

վոր անձի կողմից գումարը գանձելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով (հոդվածներ 87-89) սահմանված կարգով (...):

Անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների վերլուծությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ օրենքին համապատասխան սահմանված հարկեր մուծելը յուրաքանչյուրի սահմանադրաիրավական պարտականությունն է (2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդված և 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մաս): Օրենսդիրն իր հերթին հարկ վճարողների համար սահմանել է հարկերը ժամանակին վճարելու պարտականություն (իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «դ» կետ), որի չկատարման դեպքում իրավասու վարչական մարմինը՝ հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի ուժով լիազորված է որոշում կայացնել հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողի կողմից իր հարկային պարտավորությունները կամովին չկատարվելու դեպքում այդ պարտավորության հարկադիր կատարումը գործող օրենսդրության պայմաններում հնարավոր է իրականացնել միայն համապատասխան անբողոքարկելի վարչական ակտի առկայության դեպքում: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշման հարկադիր կատարման միջոցով իրավասու վարչական մարմինը հնարավորություն է ստանում փաստացի ապահովել հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարների մուտքը պետական կամ համայնքային բյուջե, իսկ նման որոշման բացակայության պայմաններում հարկ վճարողի կողմից ժամանակին չկատարված հարկային պարտավորության գումարները գործնականում չեն կարող բռնագանձվել հոգուտ պետության կամ համայնքի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ առաջադրվում է պետական կամ համայնքային բյուջե գանձման ենթակա հարկային պարտավորություն, սակայն այդ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվում հարկադիր կատարման. դրա փոխարեն, կիրառելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված լիազորությունը՝ վարչական մարմինը կայացնում է ևս մեկ վարչական ակտ, որն իր էությամբ նույնությամբ կրկնում է արդեն իսկ անբողոքարկելի դարձած վարչական ակտի բովանդակությունը և ուղղված է հանրային իրավունքի բնագավառում արդեն իսկ անբողոքարկելի դարձած վարչական ակտի կողմից լուծված միևնույն հարցի լուծմանը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ վարչական մարմնի նման գործելաոճը չի կարող իրավաչափ համարվել, քանի որ այն միտված է անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա առաջադրված հանրային իրավական դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետի արհեստական երկարաձգմանը: Ավելին, Վճռաբեկ

դատարանի գնահատմամբ վարչական մարմնի դրսևորած այդօրինակ վարքագիծն ամբողջությամբ հակասում է իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված իրավական պետության կարևորագույն տարրերից է օրինականության սկզբունքը, որը ենթադրում է նաև, որ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին և գործողության մեջ դրվեն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում՝ իրավունքի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց կողմից այդ ակտերի պահանջների պարտադիր կատարման պայմանով:

ՀՀ սահմանադրական դատարանը մեկ այլ՝ 02.04.2014 թվականի թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի սուբյեկտների, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտի հասցեատերերի համար պետք է կանխատեսելի և որոշակի լինի, որ իրենց նկատմամբ ընդունված հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը ենթակա է լինելու հարկադիր կատարման այդ վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ անբողոքարկելի վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետների վերաբերյալ օրենսդրական հստակ կարգավորումների սահմանումն ուղղակիորեն բխում է իրավական որոշակիության սկզբունքից, քանի որ նշված ժամկետների ավարտից հետո այդ վարչական ակտերը որևէ եղանակով (թե՛ դատական, թե՛ արտադատական) այլևս հարկադիր կատարման ենթակա չեն: Այսինքն՝ եթե հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվում հարկադիր կատարման, ապա այդ ժամկետի ավարտից հետո տվյալ վարչական ակտի հասցեատիրոջ մոտ առաջանում է լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդ վարչական ակտն այլևս հարկադիր կատարման ենթակա չէ: Քննարկվող իրավիճակում հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտ ընդունած վարչական մարմնի հետագա վարքագիծը կանխատեսելի է դառնում այդ վարչական ակտի հասցեատիրոջ համար, քանի որ վերջինիս մոտ կարող է ձևավորվել համոզմունք առ այն, որ իր նկատմամբ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված հանրային իրավական դրամական պահանջն այլևս չի կարող ներկայացվել հարկադիր կատարման:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ արդեն իսկ գոյություն ունեցող և անբողոքարկելի դարձած վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային

իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման փոխարեն ևս մեկ վարչարարություն իրականացնելու և այդ նույն հանրային իրավական դրամական պահանջը միևնույն անձի նկատմամբ առաջադրելու վերաբերյալ ևս մեկ վարչական ակտ կայացնելու վարչական մարմնի գործելակերպը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ և չի ապահովում առավել սեղմ ժամկետում առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար վարչական մարմնի տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի նման վարքագիծը հակասում է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այլ նաև վարչարարության համաչափության և տնտեսավարության սկզբունքներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտի առկայության պայմաններում այդ նույն հարկային պարտավորությունների հարկադիր կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել ևս մեկ վարչական ակտ: Այլ կերպ ասած՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերը պետք է մեկնաբանել այնպես, որ հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու հարկային մարմնի լիազորությունը կիրառելի է միայն այն հարկային պարտավորությունների մասով, որոնք դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, այսինքն՝ դեռևս որևէ վարչական ակտով առաջադրված չեն համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ: Քննարկվող իրավադրույթների հակառակ մեկնաբանման դեպքում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ իրավական համակարգում միաժամանակ գոյություն են ունենում և գործում են միևնույն հանրային իրավական դրամական պահանջին վերաբերող երկու տարբեր վարչական ակտեր, ինչը խաթարում է հանրային իրավահարաբերությունների կայունությունն ու այդ բնագավառում իրավական անվտանգությունը:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հարկ վճարողի տվյալ հարկային պարտավորությունները դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, օրինակ՝ ստուգման ակտով, և առաջացել են, օրինակ, հարկային մարմնի ներկայացրած հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) հիման վրա կամ անմիջականորեն օրենքի ուժով (գույքահարկ, հողի հարկ): Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հարկ վճարողների հարկային պարտավորություններն արդեն իսկ առաջադրված են վարչական ակտով, ապա իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու

կառուցակարգը կիրառելի չէ: Նշված իրավիճակի պայմաններում հարկային պարտավորությունների գծով հանրային իրավական դրամական պահանջն արդեն իսկ հաստատված է վարչական ակտով, որն անբողոքարկելի դառնալուց հետո ենթակա է հարկադիր կատարման: Հետևաբար քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ նոր որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ մինչև 07.01.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով հանրային իրավական դրամական պահանջներ ներկայացնելու առանձին կանոնակարգում նախատեսված չի եղել:

Վարչական ակտերով առաջադրված գումարային պարտավորությունների կատարումն ապահովվել է վճարման կարգադրության ինստիտուտի միջոցով, որը կարգավորված է եղել մինչև 07.01.2014 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 27-րդ գլխով (հոդվածներ 154-160):

Մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձից վարչական ակտի հիման վրա որոշակի դրամական գումարներ բռնագանձելու նպատակով վարչական մարմինը հայցով դիմում է դատարան՝ ստանալու վճարման կարգադրություն: Ընդ որում, վարչական ակտերի հիման վրա վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումներ ներկայացնելու համար մինչև 07.01.2014 թվականը գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով որևէ ժամկետ սահմանված չի եղել, այսինքն՝ առկա է եղել անհավասարություն վարչական մարմինների ու ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև այն առումով, որ վարչական ակտերի հիման վրա գումարի բռնագանձման հայց ներկայացնելու ժամկետային սահմանափակում չի եղել, մինչդեռ վերոնշյալ ակտերը վիճարկելու համար նախատեսված է եղել ժամկետային սահմանափակում, այն է՝ երկամսյա ժամկետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վճարման կարգադրության ինստիտուտն ապահովվել է միայն վարչական ակտերով առաջադրված գումարային պարտավորությունների կատարումը, մինչդեռ վարչական ակտերից բացի հարկային պարտավորություններ էին առաջանում նաև տնտեսավարողների կողմից հարկային մարմիններ ներկայացված հաշվարկ-հաշվետվություններով, որոնց գանձումը հարկային մարմինների ներկայացրած հայցադիմումների հիման վրա իրականացվում էր դատական կարգով:

Այսպիսով, վարչական ակտերի հիման վրա գումարի գանձումները որոշակիորեն կարգավորված է եղել վճարման կարգադրության վարույթով, մինչդեռ հաշվարկ-հաշվետվությունների հիման վրա վճարման կարգադրություն արձակելու կանոն սահմանված չի եղել:

Առանց վարչական ակտի գումարի բռնագանձում իրականացնելն անթույլատրելի համարելով՝ օրենսդիրը 05.12.2013 թվականին ընդունած թիվ ՀՕ-140-Ն օրենքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքը լրացրել է 29.1-րդ հոդվածով (ուժի մեջ է 07.01.2014 թվականից), որի 1-ին մասով սահմանվել է, որ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Այսինքն՝ ՀՀ իրավական համակարգում բացառվեց հաշվարկ-հաշվետվությունների հիման վրա գումարների

գանձում իրականացնելու իրավական հնարավորությունը:

07.01.2014 թվականից գործողության մեջ դրված նոր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում չներառելով վճարման կարգադրության ինստիտուտը՝ օրենսդիրը միաժամանակ բացառեց վարչական ակտերով առաջադրված գումարների դատական կարգով գանձումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով սահմանելով դրանց բռնագանձման միայն արտադատական կարգ: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի մինչև 09.01.2015 թվականը գործող խմբագրությամբ 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նշված հոդվածը, սակայն, 17.12.2014 թվականին ընդունված և 09.01.2015 թվականից ուժի մեջ մտած թիվ 249-Ն օրենքով լրացվել է 1.1-ին մասով, որի համաձայն՝ հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա, եթե՝

ա. անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է երկու հարյուր հազար դրամը,

բ. ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր չէ առանց նրան սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձման,

գ. իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը:

Այսինքն՝ 09.01.2015 թվականից գործող օրենսդրական կարգավորումներով նախատեսվեց նաև վարչական ակտերով առաջադրված գումարների գանձման դատական կարգ՝ այն պայմանավորելով վերը թվարկված նախադրյալների առկայությամբ:

Միաժամանակ 17.12.2014 թվականին ընդունված և 09.01.2015 թվականից ուժի մեջ մտած «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» թիվ 250-Ն ՀՀ օրենքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվեց 2.1-րդ կետով, համաձայն որի՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարի բռնագանձման պահանջով: Նույն օրենքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը լրացվեց «Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 29.1-րդ գլխով (հոդվածներ 216.1-216.5):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (...) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել՝

1) եռամսյա ժամկետում՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու պահից.

2) երկամսյա ժամկետում՝ հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով կատարողական վարույթն ավարտվելու պահից:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշմամբ վերանում է տվյալ վարչական ակտի անբողոքարկելի լինելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին.

(...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.5-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 216.1-ին հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը.

1) հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու մասին՝ ամբողջությամբ բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը.

2) հայցադիմումը մասնակիորեն բավարարելու մասին՝ վարչական ակտը ճանաչելով մասնակիորեն անվավեր կամ առ ոչինչ՝ մասնակիորեն բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը.

3) հայցադիմումն ամբողջությամբ մերժելու մասին՝ վարչական ակտը ճանաչելով ամբողջությամբ անվավեր կամ առ ոչինչ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքը 29.1-րդ հոդվածի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի իրավակարգավորումներն ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում, այսինքն՝ մինչև 07.01.2014 թվականը, թե՛ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, և թե՛ առանձին տեսակի վարչական վարույթների մասին օրենքներով արդեն իսկ կախոնակարգված էին վարչական ակտեր ընդունելու, անբողոքարկելի դառնալու և դրանցով առաջադրված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու հետ կապված հարաբերությունները և այդ առումով վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջ ներկայացնելու որևէ խոչընդոտ չի եղել, հետևաբար վարչական ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու լրացուցիչ երաշխիք սահմանելու անհրաժեշտությունը բացակայել է: Մասնավորապես՝ վարչական ակտերի առկայության պարագայում վարչական մարմիններն այդ ակտերով առաջադրված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով մինչև 07.01.2014 թվականը կարող էին դիմել ՀՀ վարչական դատարան, իսկ 07.01.2014 թվականից հետո՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ հարկադիր կարգով գանձում իրականացնելու պահանջով: Մինչդեռ, եթե հարկ վճարողը հարկային մարմին ներկայացրած հաշվարկ հաշվետվություններում արտացոլված հարկային պարտավորությունների գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարեր, հարկային մարմինն այլևս զրկված էր լինելու այդ հաշվարկ-հաշվետ-

վությունների հիման վրա առաջացած հարկային պարտավորությունների գանձումն իրականացնելու հնարավորությունից, քանի որ 07.01.2014 թվականից գործող կանոնակարգումների համաձայն՝ գանձումը կարող էր իրականացվել միայն արտադատական կարգով, այն էլ՝ անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա:

09.01.2015 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ներառվեց «Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը» (գլուխ 29.1), որով սահմանվեց վարչական ակտերով առաջադրված գումարների բռնագանձման դատական կարգ: Ընդ որում, վարչական ակտերի հիման վրա գումարի բռնագանձումների համար սահմանվեց ժամկետ, այն է՝ եռամսյա ժամկետ՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու պահից, երկամսյա ժամկետ՝ հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով կատարողական վարույթն ավարտվելու պահից (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսպիսով, հանրային իրավական դրամական պահանջների կատարման օրենսդրական կառուցակարգը զարգացել է հետևյալ ուղղությամբ. նախ՝ հանրային իրավական դրամական պահանջները կատարվել են դատական կարգով՝ ինչպես վարչական ակտերի, այնպես էլ տնտեսավարողների կողմից՝ ներկայացված հաշվարկ-հաշվետվությունների հիման վրա: Այնուհետև՝ օրենսդիրը սահմանել է միայն վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների կատարման արտադատական կարգ: Ի վերջո՝ հանրային իրավական դրամական պահանջների կատարման համար օրենքով նախատեսվել է դատական և արտադատական կարգ՝ անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն բողոքը վարույթ ընդունելուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին 08.12.2017 թվականի ՀՕ-259-Ն և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 08.12.2017 թվականի ՀՕ-260-Ն օրենքներով, որոնք ուժի մեջ է մտել 01.04.2018 թվականից, անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման դատական եղանակը վերացվել է, և դրանք ենթակա են լինելու կատարման միայն արտադատական կարգով:

Ըստ այդմ՝ մինչ 08.12.2017 թվականի ՀՕ-259-Ն և ՀՕ-260-Ն օրենքներով կատարված օրենսդրական փոփոխությունները՝ հանրային իրավական դրամական պահանջների կատարման օրենսդրական կառուցակարգը հանգում էր հետևյալին.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով կամ առանձին տեսակի վարչական վարույթների մասին օրենքներով սահմանված կարգով ընդունված վարչական ակտերն անբողոքարկելի դառնալուց հետո վարչական մարմինը պետք է օրենքով սահմանված ժամկետում ձեռնամուխ լինի դրանց կատարմանը (դատական կամ արտադատական կարգով):

2. հարկ վճարողի կողմից հարկային մարմնին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, այլ փաստաթղթերում և տեղեկություններում արտացոլված հարկերը, իսկ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև դրանց կանխավճարային մուծումներն ուշացնելու դեպքում հարկային մարմնին իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի հիման վրա պարտավոր է իրականացնել վարչական վարույթ, ընդունել հարկային պարտավորությունների գծով գումարը

գանձելու մասին որոշում (վարչական ակտ) և այն անբողոքարկելի դառնալուց հետո օրենքով սահմանված ժամկետում ձեռնամուխ լինի դրանց կատարմանը (դատական կամ արտադատական կարգով):

Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության կողմից 22.05.2015 թվականին ընդունվել է «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտը, որով առանց պետական գրանցման (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կիրառմամբ Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրվել է 330.000 դրամի չափով հարկային պարտավորություն: Երվանդ Ալեյանն առձեռն եղանակով իրազեկվել է հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ նշված վարչական ակտի մասին 22.05.2015 թվականին, և օրենքով սահմանված ժամկետում այն դարձել է անբողոքարկելի: Մինչդեռ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով չի դիմել վարչական դատարան՝ Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտի հիման վրա Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրված հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման հայցով: Փոխարենը Նախարարության իրավաբանական վարչության պետի կողմից 01.09.2015 թվականին ընդունվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը, որով որոշվել է Երվանդ Ալեյանից գանձել 330.000 ՀՀ դրամ՝ որպես Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի թիվ 1412077 ակտով հաշվարկված հարկային պարտավորության գումար: Երվանդ Ալեյանը փոստային կապի ծառայության միջոցով իրազեկվել է նշված վարչական ակտի մասին 07.09.2015 թվականին, և այն անբողոքարկելի դառնալուց հետո Նախարարությունը դիմել է վարչական դատարան՝ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշման հիման վրա Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրված հանրային իրավական դրամական պահանջով գումարի բռնագանձման հայցով, որն էլ հիմք է հանդիսացել սույն վարչական գործի հարուցման համար:

Դատարանը մերժել է Նախարարության իրավահաջորդ Կոմիտեի հայցը և անվավեր է ճանաչել Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը՝ գտնելով, որ նշված որոշումը կայացվել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ: Դատարանը վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի թիվ 33 որոշումը կայացվել է առանց

որևէ հարց կարգավորելու անհրաժեշտության՝ արդյունքում անձի վրա դնելով գումար վճարելու այնպիսի պարտականություն, որն արդեն իսկ ծագել էր Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» 22.05.2015 թվականի թիվ 1412077 վարչական ակտով:

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի այն դիրքորոշումը, որ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ և հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով առկա է այն իրավիճակը, երբ իրավասու վարչական մարմնի (Նախարարություն) կողմից 22.05.2015 թվականին ընդունված «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտով ֆիզիկական անձ Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրվել է պետական բյուջե գանձման ենթակա հարկային պարտավորություն՝ 330.000 ՀՀ դրամի չափով, սակայն այդ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել հարկադիր կատարման: Դրա փոխարեն կիրառելով իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված լիազորությունը՝ Նախարարությունը կայացրել է ևս մեկ վարչական ակտ՝ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը, որն իր էությամբ նույնությամբ կրկնում է արդեն իսկ անբողոքարկելի դարձած վերոգրյալ վարչական ակտի բովանդակությունը և ուղղված է հանրային իրավունքի բնագավառում արդեն իսկ անբողոքարկելի դարձած վարչական ակտի կողմից լուծված միևնույն հարցի լուծմանը՝ Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտով Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրված և գանձման ենթակա 330.000 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորության գումարների կրկին առաջադրմանը (գանձմանը): Այնուհետև Նախարարությունը դիմել է վարչական դատարան՝ անբողոքարկելի վարչական ակտի վրա հիմնված հանրային իրավական դրամական պահանջով Երվանդ Ալեյանից 330.000 ՀՀ դրամ բռնագանձելու հայցով՝ հայցի հիմքում դնելով ոչ թե Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտը, այլ՝ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային

պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումը:

Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, գտնում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու կառուցակարգը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հարկ վճարողի տվյալ հարկային պարտավորությունները դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով:

Մինչդեռ տվյալ դեպքում իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի կիրառմամբ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշման ընդունումից առաջ այդ վարչական ակտով Երվանդ Ալեյանի նկատմամբ առաջադրված հարկային պարտավորությունն արդեն իսկ հաստատված էր նախկինում ընդունված վարչական ակտով՝ Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտով: Հետևաբար Երվանդ Ալեյանից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ նոր որոշում (հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտ) կայացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ նոր վարչական վարույթ հարուցելու հիմքերը բացակայում էին, քանի որ առանց պետական գրանցման (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի կիրառմամբ Երվանդ Ալեյանի նկատմամբ հարկային պարտավորություններ առաջադրելու հարցն արդեն իսկ լուծված է եղել անբողոքարկելի դարձած Նախարարության օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության գլխավոր վարչության օպերատիվ հետախուզության վարչության 22.05.2015 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1412077 վարչական ակտով, որը ենթակա է եղել դատական կարգով հարկադիր կատարման: Նման պայմաններում նույն հարցի կարգավորման նպատակով վերստին վարչական վարույթ հարուցելու և վարչական ակտ ընդունելու անհրաժեշտություն չէր կարող առաջանալ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Նախարարության իրավաբանական վարչության պետի 01.09.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշումն ընդունվել է օրենքի խախտման՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի սխալ մեկնաբանման և սխալ կիրառման արդյունքում, քանի որ այդ հոդվածով սահմանված իրավադրույթներով նախատեսված՝ վարչական մարմնի համար սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորության

գումարը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու իմպերատիվ լիազորությունը կիրառելի է միայն այնպիսի հարկային պարտավորությունների առկայության դեպքում, որոնք դեռևս հաստատված չեն որևէ վարչական ակտով, այսինքն՝ դեռևս որևէ վարչական ակտով առաջադրված չեն համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ:

Անփոփոխելի վերագրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, մերժելով «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 33 որոշման հիման վրա Երվանդ Ալեյանից 330.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ Կոմիտեի հայցը և անվավեր ճանաչելով այդ վարչական ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.01.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0243/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Արուվյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԳ/0243/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան) հետևյալ կազմով՝

ԿԱԽԱՊԱԽՈՂ
ՉԵԼՈՍԳՈՂ

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԼԵՍՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դոնբաց դատական նիստում, քննելով «ԻՐԱՎՈՒՆԶԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն), «ՕԶՈԱ» ՄՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՄՊԸ-ի ներկայացուցիչ Տիգրան Եգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.04.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ Կազմակերպության, «ՕԶՈԱ» ՄՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՄՊԸ-ի հայցի ընդդեմ ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության մերժումը և գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, պահանջված տեղեկությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դասարարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը, «ՕԶՈԱ» ՄՊԸ-ն և «Ստարտ-Մեդիա» ՄՊԸ-ն պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության 24.11.2014 թվականի մերժումը, ինչպես նաև Ծառայության գործողությունները, որոնցով խոչընդոտվել են մրցույթի նկատմամբ դիտորդական առաքելություն և լուսաբանում կատարելը, ու Ծառայությանը պարտավորեցնել տրամադրել դիմումներով պահանջված տեղեկությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 14.03.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.04.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության, «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.03.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության, «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ, 43-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պահանջված տեղեկությունն ստանալը սահմանափակվել է առանց օրինական հիմքերի, որով խախտվել է տեղեկություն փնտրելու և ստանալու ազատության իրավունքը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Ծառայությունը չունի դիտորդական առաքելության իրականացումը խոչընդոտելու և հայցվող տեղեկության տրամադրումը մերժելու օրենսդրական հիմք:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ տեղեկություն փնտրողի իրավունքը սահմանափակվել է անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանության պատճառաբանությամբ, որն առկա չէ, և այդ սահմանափակումը համաչափ չէ հետապնդվող նպատակին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.04.2017 թվականի որոշումը և «կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացվել է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2) Կազմակերպությունը, մտադրություն ունենալով Մրցույթի նկատմամբ իրականացնելու դիտորդական առաքելություն, 20.11.2014 թվականին դիմել է Ծառայությանը՝ այդ նպատակով ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հստակեցնելու պահանջով (**հատոր 1-ին, գ.թ. 65**).

3) Ծառայության 24.11.2014 թվականի թիվ 18-401մ/դ-14 գրությամբ Կազմակերպության 20.11.2014 թվականի դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները Մրցույթին կարող են ներկա գտնվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ինչպես նաև Մրցույթին որպես դիտորդ հրավիրված լինելու պայմանով, մինչդեռ Մրցույթին մասնակցելու օրենքով նախատեսված դեպք առկա չէ, ինչպես նաև Կազմակերպությունը՝ որպես դիտորդ, հրավիրված չէ

Մրցույթին (**հատոր 1-ին, գ.թ. 66-67**).

4) Կազմակերպությունը 25.11.2014 թվականին դիմել է Ծառայությանը՝ պահանջելով անցկացված Մրցույթի բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ անձնական թերթիկները, հանձնաժողովի արձանագրությունները և գնահատման թերթիկները: Նույն բովանդակությամբ դիմումներ ներկայացրել են նաև «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի լրագրողները (**հատոր 1-ին, գ.թ. 63, հատոր 2-րդ, գ.թ. 13, 15**).

5) Ի պատասխան Կազմակերպության 25.11.2014 թվականի դիմումի՝ Ծառայության 28.11.2014 թվականի թիվ 18-401մ/դ-14 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ 25.11.2014 թվականին մրցութային հանձնաժողովի կողմից անցկացվել է մրցույթ՝ հարցազրույցի ձևով, որով ստուգվել են մրցույթին դիմած անձանց գործնական կարողությունները, իսկ հարցազրույցից հետո անցկացված քվեարկության արդյունքներով բոլոր վեց մասնակիցները դարձել են հաղթող: Միաժամանակ հայտնվել է, որ պահանջված մյուս տեղեկությունները և փաստաթղթերը չեն կարող տրամադրվել՝ պայմանավորված անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանման անհրաժեշտությամբ: Նույն հիմնավորմամբ պատասխաններ են տրամադրվել նաև «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի լրագրողների նույնաբովանդակ դիմումներին (**հատոր 1-ին, գ.թ. 64, հատոր 2-րդ, գ.թ. 12, 14**).

6) Կազմակերպությունը 30.01.2015 թվականին դիմել է Ծառայությանը՝ անցկացված Մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջով՝ խնդրելով մանրամասնել, թե տվյալ հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը որ մարմինն է ներկայացնում: Միաժամանակ խնդրել է տրամադրել մրցութային բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ թափուր պաշտոնների հավակնորդների ինքնակենսագրությունը, հարցազրույցի հարցաշարերը, յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքներն ըստ հանձնաժողովի առանձին անդամների (**հատոր 1-ին, գ.թ. 61**).

7) Ծառայության 03.02.2015 թվականի թիվ 18-401մ/դ-14 գրությամբ հայտնվել է, որ քննիչների նշանակման և ազատման կարգը, մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը և ծրագիր-հարցաշարը հրապարակված են Ծառայության կայքէջում: Միաժամանակ հայտնվել է, որ հավակնորդների ինքնակենսագրությունն անձնական կյանքին վերաբերող տեղեկություն է, որի տրամադրումը կարող է խախտել մարդու անձնական կյանքի գաղտնիությունը, իսկ Մրցույթի անցկացման կարգը չի նախատեսում հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ քվեարկության արդյունքի արձանագրում (**հատոր 1-ին, գ.թ. 62**).

8) Ի հավաստումն «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի կողմից Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացված բաց մրցույթի լուսաբանումն իրականացնելու մտադրության՝ վերջիններիս կողմից ներկայացվել է 25.11.2014 թվականին կայացած խոսակցության ձայնագրության էլեկտրոնային կրիչը (**հատոր 2-րդ, գ.թ. 24**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած

իրավական դիրքորոշումը՝ պետական մարմինների կողմից պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց վերաբերյալ տեղեկություն տրամադրելու առանձնահատկությունների մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է այն ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից **«Տեղեկատվության ազատության մասին»** ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական մարմինը, որի փոխպետության փակ գրնվում է հայցվող տեղեկությունը՝ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց վերաբերյալ, իրավունք ունի մերժելու դրա տրամադրումը՝ հիմք ընդունելով անձնական տեղեկության պահպանման անհրաժեշտությունը:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ մարդու և քաղաքացու՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատմի և բարի համբավի պաշտպանության համար:

Համանման դրույթներ է պարունակում նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, որի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, իսկ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաս-

տաթղթերին ծանոթանալու իրավունք, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում, ինչպես նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասում արտացոլվել են երկու ինքնուրույն, սակայն սերտ կապված, միմյանց լրացնող և երաշխավորող իրավունքներ: Դրանք են՝

ա) յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք,

բ) յուրաքանչյուր ոք ունի տեղեկատվության ազատության իրավունք:

Նշված հոդվածում թվարկված բոլոր ազատությունները՝ խոսքի, քարոզչության, իրազեկման, կարծիքի, համոզմունքի, տեղեկատվության, զանգվածային տեղեկատվության, ինչպես նաև գրաքննությունից ազատությունը հավասարապես ունեն մեծ նշանակություն և չեն կարող կիրառվել առանց դրանց միջև համակարգային կապը հաշվի առնելու:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում են, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք: Դա հնարավորություն է տալիս անձին արտահայտելու (կամ չարտահայտելու) իր միտքը, բացատրելու իր վերաբերմունքը կոնկրետ դեպքերի նկատմամբ, ունենալու և պնդելու իր տեսակետը: Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունը կոնկրետացնում է խոսքի ազատության իրավունքի դրսևորումներից մեկը՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Վերոգրյալ նորմերի համակարգային մեկնաբանությունից բխում է, որ մի կողմից յուրաքանչյուր անձ իրավունք ունի փնտրելու, ստանալու, տարածելու տեղեկություն, որպիսի իրավունքին մյուս կողմից համապատասխանում է պետության պարտականությունը՝ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց (անգործություն դրսևորելուց), որոնք կարող են խոչընդոտել նշված իրավունքի իրացմանը, եթե սահմանափակումները նախատեսված չեն օրենքով, և դա անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Անհրաժեշտ է նշել, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածը երաշխավորում է տեղեկություն ստանալու ազատության մասով երեք կարևոր գործողություններ կատարելու իրավունք, որն արտահայտվում է տեղեկությունը փնտրելու, այն ստանալու կամ տարածելու եղանակով:

Տեղեկությունը փնտրելն արտահայտվում է անհրաժեշտ տեղեկության ստացմանն ուղղված գործողությունների կատարմամբ: Տեղեկությունն ստանալը տեղեկության փոխանցման գործընթացն է, որի արդյունքում տեղեկություն հայցող սուբյեկտն օժտվում է այն օգտագործելու հնարավորությամբ, այսինքն՝ սկսում է տիրապետել տեղեկության բովանդակությունը: Տեղեկության տարածումը գործունեություն է՝ ուղղված տեղեկությունն անորոշ թվով անձանց հասանելի դարձնելուն:

Նույնը վերաբերելի է նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Անդրադառնալով վերոնշյալ հոդվածի բովանդակությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) գտել է, որ տեղեկություն որոնելու և ստանալու իրավունքը հանդիսանում է արտահայտվելու ազատության իրավունքի բովանդակությունը կազմող տարր, որը ներառում է հասարակության, ինչպես նաև անհատի հիմնական իրավունքը՝ հանրային շահի վերաբերյալ փնտրել և ստանալ տեղեկություն (*յոկն, MAGYAR HELSINKI BIZOTTSÁG v. HUNGARY* գործով Եվրոպական դատարանի 08.11.2016 թվականի վճիռը, կետ 142):

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ տեղեկություն ստանալու իրավունքը պարտավորեցնում է կառավարությանը ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց կամ անգործություն դրսևորելուց, որով կսահմանափակվի անձի՝ տեղեկություն ստանալու հիմնարար իրավունքը (*յոկն, LEANDER v. SWEDEN* գործով Եվրոպական դատարանի 26.03.1987 թվականի վճիռը, կետ 74):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արտահայտվելու իրավունքն անձի՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող հիմնարար իրավունքներից մեկն է: Վերոնշյալ իրավունքի կարևորագույն բաղկացուցիչ տարրերն են սեփական կարծիք ունենալու և ազատ արտահայտվելու իրավունքը, ինչպես նաև տեղեկություններ, գաղափարներ որոնելու, պահանջելու, ստանալու և տարածելու իրավունքը, որոնց պատշաճ իրացման համար պետական մարմինները պետք է գերծ մասն օրենքով չնախատեսված միջամտությունից: Ի լրումն նշված տարրերի՝ արտահայտվելու իրավունքը ներառում է նաև պետական մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը, ներառյալ՝ երբ նշված տեղեկությունը վերաբերում է հանրային շահերին: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ արտահայտվելու իրավունքը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշ սահմանափակումների: Ըստ այդմ, նշված իրավունքը ենթակա է սահմանափակումների օրենքով սահմանված կարգով՝ ելնելով պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը պահպանելու, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ **իրավունքները պաշտպանելու**, արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակից:

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ անդամ պետությունները, բացառությամբ որոշ դեպքերի, պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը ստանալ պետա-

կան փաստաթղթերը, որոնք պահպանվում են հանրային իշխանությունների կողմից: Եվրոպական դատարանը գտել է, որ պահանջվող տեղեկությունը, տվյալները կամ փաստաթղթերը պետք է ներկայացնեն հանրային շահագրգռվածություն, որպեսզի առաջանա դրանք բացահայտելու անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ այն նպատակ է հետապնդում ապահովել թափանցիկություն հանրային գործառույթների իրականացման ոլորտում, ինչպես նաև հասարակության հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, ինչով հասարակության լայն զանգվածներին հնարավորություն է ընձեռվում մասնակցել հանրային կառավարմանը: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ հանրային շահերին վերաբերվող տեղեկության բովանդակությունը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից (*լոնն, MAGYAR HELSINKI BIZOTTSÁG v. HUNGARY* գործով Եվրոպական դատարանի 08.11.2016 թվականի վճիռը, կետեր 145, 161, 162):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 25.11.1981 թվականի թիվ NR(81)19 հանձնարարականի 1-5-րդ կետերով նախատեսված սկզբունքների համաձայն՝ անդամ պետության իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ պետական մարմինների տրամադրության տակ գտնվող հայցվող տեղեկությունը, բացառությամբ օրենսդիր և դատական իշխանության մարմինների: Տեղեկության հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան արդյունավետ միջոցներ: Տեղեկության հասանելիությունը չի կարող մերժվել՝ պատրվակով, որ տեղեկություն հայցողը չունի հատուկ հետաքրքրություն տվյալ ոլորտում: **Տեղեկության հասանելիությունը պետք է ապահովվի իրավահավասարության հիման վրա:** Վերոհիշյալ սկզբունքները ենթակա են սահմանափակման միայն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակության օրինական շահերի պաշտպանության համար (ինչպես, օրինակ՝ ազգային անվտանգությունը, հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների կանխումը և կոնֆլիկտենցիալ տեղեկության բացահայտումը կանխելը), ինչպես նաև մասնավոր կյանքի և մասնավոր այլ իրավաչափ շահերի պաշտպանության համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անձի հատուկ հետաքրքրությունը պետական մարմիններում առկա այն տեղեկության առնչությամբ, որը վերաբերում է անձամբ իրեն:

Նույն հանձնարարականի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում համապատասխան պետական գերատեսչությունը օրենքի կամ պրակտիկայի համաձայն պետք է հիմնավորի մերժման պատճառները: Տեղեկության տրամադրման մերժման յուրաքանչյուր դեպք պետք է բողոքարկելի լինի:

ՀՀ սահմանադրական դատարանը, 06.03.2012 թվականի թիվ ՄԴՌ-1010 որոշմամբ անդրադառնալով նշված նորմերին, արձանագրել է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 23.02.2016 թվականի թիվ ՄԴՌ-1256 որոշմամբ վերլուծելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետը և Եվրոպայի խորհրդի Նախարարների

կոմիտեի 25.11.1981 թվականի թիվ NR(81)19 հանձնարարականի վերը նշված կետերը, արձանագրել է, որ տեղեկություններ ստանալու իրավունքի իրագործման հիմնական օրենսդրական երաշխիքները սահմանվում են **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով**։ Այն ունի ընդհանուր բնույթ, սահմանում է տեղեկատվության ոլորտում հիմնական սկզբունքները, տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակումները, տեղեկություններ ստանալու հայտի ներկայացման կարգը և այլն։ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը։ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է իրականացվել տարբեր եղանակներով։ Մասնավորապես՝ կախված տեղեկության բովանդակությունից և նշանակությունից, այն կարող է հասու լինել կա՝ մ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություն, կա՝ մ որպես օրենքով նախատեսված կարգով տրամադրվող տեղեկություն։

ՀՀ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ նշել է նաև, որ յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ կազմակերպություն, պետք է հնարավորություն ունենա իրավահավասարության պայմաններում պահանջելու կամ ծանոթանալու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկությանը, եթե նման տեղեկության տրամադրումը չի խախտում հանրային շահերի կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, նույն օրենքից և իրավական այլ ակտերից։ Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են նույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ **տեղեկատվության ազատությունը** տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է, նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ **տեղեկությունն** անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)։ Նույն հոդվածի 3-րդ պարբերությունը սահմանել է նույն օրենքի իմաստով տեղեկատվության տնօրինողի հասկացությունը, որի համաձայն՝ **տեղեկատվություն տնօրինողը**՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք։ Նույն

հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ **հարցումը** տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումն է:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը, **փեղեկություններ փնտրելու և սրանալու ազատության պաշտպանությունը, փեղեկություններ փրամադրելու մատչելիության ապահովումը, հրապարակայնությունը:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, **խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը**, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները, բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը, տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և թափանցիկության էական նախապայմաններից մեկն է, որը երաշխավորվում է պետական մարմինների կողմից: Պետական մարմինների կողմից պահպանվող փաստաթղթերի կամ որոշակի տեղեկության տրամադրումը պետք է պայմանավորված լինի հանրային շահագրգռվածությամբ: Նման ձևով հասարակության վերահսկողության իրականացումը կարող է զգալի ազդեցություն ունենալ ժողովրդավարական հասարակության պատշաճ գործունեության վրա: Սակայն պետք է հաշվի առնել այն փաստը, որ նշված իրավունքը բացարձակ չէ և ենթակա է որոշ իրավաչափ սահմանափակումների: Ընդ որում, նշված սահմանափակումները կիրառվում են այն դեպքում, երբ հայցվող տեղեկությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, **խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը**, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները, բացահայտում է մասնագիտական գործունե-

ուրթյամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք), խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղեկության տրամադրման մերժման դեպքերը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է գնահատման առարկա դարձվեն Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տեղեկության ազատության իրավունքի լույսի ներքո:

Նման պայմաններում անհրաժեշտ է դիտարկել Կոնվենցիայով պաշտպանվող ցանկացած երկու հիմնարար իրավունքների միջև բախման պայմաններում իրավունքներից որևէ մեկին նախապատվություն տալու դեպքերը: Մասնավորապես՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայով հավասարապես պաշտպանվող երկու իրավունքների միջև ծագած հակասության դեպքում Դատարանը վճիռ կայացնելիս պետք է գնահատի մրցակցող շահերը: Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է հաշվի առնել ներգրավված տարբեր շահերի միջև ճիշտ հավասարակշռության գործադրման անհրաժեշտությունը (*տե՛ս, BÉDAT v. SWITZERLAND գործով Եվրոպական դատարանի 29.03.2016 թվականի վճիռը, կետեր 52, 54*):

Այն, թե ինչպես և ինչ չափով է տեղեկության տրամադրման մերժումն անձի արտահայտվելու իրավունքին խոչընդոտ, պետք է գնահատվի յուրաքանչյուր գործով առանձին՝ տվյալ գործի հանգամանքների լույսի ներքո: Այդ իրավունքի շրջանակների հետագա սահմանման համար Եվրոպական դատարանը գտել է, որ պետք է հաշվի առնել հետևյալ չափորոշիչները՝

1) տեղեկություն ստանալու պահանջի նպատակը,

2) փնտրվող տեղեկության բնույթը (*տե՛ս, MAGYAR HELSINKI BIZOTTSÁG v. HUNGARY գործով Եվրոպական դատարանի 08.11.2016 թվականի վճիռը, կետ 157*):

Եվրոպական դատարանը, մինչև պարզելը, թե արդյոք Կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունք սահմանափակելիս ապահովվել է հասարակության ընդհանուր շահերի և անհատի հիմնական իրավունքների միջև ողջամիտ հավասարակշռությունը, նախ անհրաժեշտ է համարել անդրադառնալ հետևյալ չափորոշիչներին՝

1) արդյո՞ք կիրառված սահմանափակումը եղել է օրինական և ոչ կամայական: Իրավունքի գերակայությունը, որը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է, ընկած է Կոնվենցիայի բոլոր հոդվածների հիմքում: Հետևաբար ինչպես Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրությամբ ամրագրված, այնպես էլ Կոնվենցիայում ամրագրված ցանկացած իրավունքի նկատմամբ պետության միջամտությունը պետք է լինի «օրինական»: Օրինական միջամտությունը ենթադրում է, որ կիրառված միջոցը նախ պետք է իրավական հիմք ունենա ներպետական օրենսդրությամբ: Այնուհետև օրինականության սկզբունքը որո-

շակի պահանջներ է առաջադրում ներպետական օրենքի որակին, մասնավորապես՝ այն պետք է լինի շահագրգիռ անձանց համար հասանելի, հստակ և կանխատեսելի իր կիրառման մեջ (*լրեն, Shchokin v. Ukraine գործով Եվրոպական դատարանի 14.10.2010 թվականի վճիռը, կետեր 50-58*).

2) արդյո՞ք կիրառված սահմանափակումները կրել են իրավաչափ նպատակ: Օրինակ՝ որքանով է միջամտությունը հետապնդում այլոց իրավունքների պաշտպանության նպատակ (*լրեն, CUMPANA and MAZARE v. Romania գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 86*).

3) արդյո՞ք սահմանափակումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Եվրոպական դատարանը, անդրադառնալով այս սկզբունքի մեկնաբանությանը, նշել է, որ «անհրաժեշտ է» եզրույթը չունի այնպիսի ճկուն մեկնաբանության հնարավորություն, ինչպիսիք ունեն, օրինակ՝ «թույլատրելի», «նպատակահարմար», «ցանկալի» եզրույթները: Պայմանավորվող կողմերը սահմանափակումների կիրառման կապակցությամբ ունեն որոշակի, բայց ոչ անսահմանափակ հայեցողության ազատություն: Սակայն, միայն դատարանն է իրավասու վերջնական որոշում կայացնել այն մասին, թե այդ սահմանափակումները որքանով են համատեղելի Կոնվենցիայի հետ: Եվրոպական դատարանը նշել է նաև, որ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը նշանակում է, որ միջամտությունը Կոնվենցիայի հետ համատեղելի լինելու համար պետք է, *inter alia*, համապատասխանի «սոցիալական գերակա պահանջմունքներին» և **համաչափ** լինի հետապնդվող իրավաչափ նպատակին: Ընդ որում, իրավունքի սահմանափակումները բացառություններ են և պետք է սահմանափակ մեկնաբանվեն (*լրեն, SILVER and OTHERS v. THE UNITED KINGDOM գործով Եվրոպական դատարանի 25.02.1983 թվականի վճիռը, կետ 97*):

Վերոգրյալ իրավական վերլուծությունների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացվել է Միցույթ: Կազմակերպությունը, մտադրություն ունենալով Միցույթի նկատմամբ իրականացնել դիտորդական առաքելություն, 20.11.2014 թվականին դիմել է Ծառայությանը՝ այդ նպատակով ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հստակեցնելու պահանջով: Ծառայության 24.11.2014 թվականի թիվ 18-401մ/դ-14 գրությամբ Կազմակերպության 20.11.2014 թվականի դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները Միցույթին կարող են ներկա գտնվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ինչպես նաև Միցույթին որպես դիտորդ հրավիրված լինելու պայմանով, մինչդեռ Միցույթին մասնակցելու օրենքով նախատեսված դեպք առկա չէ, ինչպես նաև Կազմակերպությունը՝ որպես դիտորդ, հրավիրված չէ Միցույթին: Կազմակերպությունը 25.11.2014 թվականին դիմել է Ծառայությանը՝ պահանջելով անցկացված Միցույթի բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ անձնական թերթիկները, հանձնաժողովի արձանագրությունները և գնահատման թերթիկները: Նույն բովանդակությամբ դիմումներ ներկայացրել են նաև «ՕՉՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի լրագրողները:

Ի պատասխան Կազմակերպության 25.11.2014 թվականի դիմումի՝ Ծառայության 28.11.2014 թվականի թիվ 18-401մ/դ-14 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ 25.11.2014 թվականին մրցութային հանձնաժողովի կողմից անցկացվել է մրցույթ՝ հարցազրույցի ձևով, որով ստուգվել են մրցույթին դիմած անձանց գործնական կարողությունները,

իսկ հարցազրույցից հետո անցկացված քվեարկության արդյունքներով բոլոր վեց մասնակիցները դարձել են հաղթող: Միաժամանակ հայտնվել է, որ պահանջված մյուս տեղեկությունները և փաստաթղթերը չեն կարող տրամադրվել՝ պայմանավորված անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանման անհրաժեշտությամբ: Նույն հիմնավորմամբ պատասխաններ են տրամադրվել նաև «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի լրագրողների նույնաբովանդակ դիմումներին:

Կազմակերպությունը 30.01.2015 թվականին դիմել է Ծառայությանը՝ անցկացված Մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջով՝ խնդրելով մանրամասնել, թե տվյալ հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը որ մարմինն է ներկայացնում: Միաժամանակ խնդրել է տրամադրել մրցութային բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ թափուր պաշտոնների հավակնորդների ինքնակենսագրությունը, հարցազրույցի հարցաշարերը, յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքներն ըստ հանձնաժողովի առանձին անդամների: Ծառայության 03.02.2015 թվականի թիվ 18-401/դ-14 գրությամբ հայտնվել է, որ քննիչների նշանակման և ազատման կարգը, մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը և ծրագիր-հարցաշարը հրապարակված են Ծառայության կայքէջում: Միաժամանակ հայտվել է, որ հավակնորդների ինքնակենսագրությունն անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն է, որի տրամադրումը կարող է խախտել մարդու անձնական կյանքի գաղտնիությունը, իսկ Մրցույթի անցկացման կարգը չի նախատեսում հանձնաժողովի անդամի կողմից մրցույթի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ քվեարկության արդյունքի արձանագրում:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն, որ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչները մրցութային կարող են ներկա գտնվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կամ որպես դիտորդ հրավիրված լինելու դեպքում, մինչդեռ գործով պարզվել է, որ Ծառայությունը Կազմակերպությանը չի հրավիրել իրականացնելու դիտորդական առաքելություն. հետևաբար Կազմակերպության իրավունքները չեն խախտվել: Բացի այդ, պահանջվող տեղեկության բնույթն այնպիսին է, որ դրա ծավալում կարող են լինել այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են բացահայտել անձանց (հավակնորդների, հանձնաժողովի անդամների) անհատական տվյալներ, հետևապես պետք է եզրակացնել, որ տվյալ դեպքում տեղեկության տրամադրման սահմանափակումը՝ հավակնորդների անձնական թերթիկների, ինքնակենսագրությունների, մրցութային հանձնաժողովի անդամների մասով, բխում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված իրավակարգավորումից՝ այն փաստի հաշվառմամբ, որ պահանջվող տեղեկատվության ծավալում ընդգրկված են այնպիսի տվյալներ, որոնք առնվազն պարունակում են այդ անձանց վերաբերյալ անձնական տվյալներ, ուստի և դրանց բացահայտումն անվերապահորեն կխախտի այդ անձանց անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը:

Վերաքննիչ դատարանը, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները՝ հավելելով, որ հայցվող տեղեկությունը չտրամադրելն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, և անձնական տվյալների գաղտնիության ապահովմամբ հետապնդվել է հավակնորդների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանության իրավաչափ նպատակ:

Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձա-

նագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է գործողության կատարման հայցով՝ վարչական մարմինը՝ հայցվող գործողության կատարումը մերժելու կամ անգործություն ցուցաբերելու համար հիմք հանդիսացած փաստերի մասով, և ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝ իր համար բարենպաստ փաստերի մասով, ճանաչման հայցով վարչական մարմինը՝ (...) որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Կազմակերպությունը, ինչպես նաև «ՕԶՈԱ» ՄԴԸ-ն և «Ստարտ-Մեդիա» ՄԴԸ-ն, իրացնելով տեղեկություններ փնտրելու և ստանալու իրենց իրավունքը, նպատակ են ունեցել ստանալու տեղեկատվություն Ծառայության կողմից անցկացված Մրցույթի՝ մասնավորապես մրցութային հանձնաժողովի, թափուր հաստիքներում պաշտոնի նշանակվելուն հավակնող թեկնածուների և Մրցույթին առնչվող այլ փաստաթղթերի վերաբերյալ: Հետևաբար Ծառայության կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի հիմնավորմամբ կիրառված սահմանափակումները պետք է դիտարկվեն օրինականության, անհրաժեշտության և իրավաչափ նպատակ հետապնդելու չափորոշիչների լույսի ներքո:

ՀՀ սահմանադրական դատարանը, 20.06.2017 թվականի թիվ ՄԴՌ-1374 որոշման շրջանակներում 21.02.2007 թվականին ընդունված (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը և 117-րդ հոդվածի 5-րդ մասը դիտարկելով նաև 2015 փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում, հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների, հանրային վերահսկողության դերը պետության և հասարակության կյանքում, արձանագրել է, որ 2015 փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածում նշված արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, 2015 փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և 34-րդ հոդվածում ամրագրված՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդիրը պարտավոր է դատավորի պաշտոնի հավակնորդների որակավորման քննության ու հանրային գործառույթ իրականացնելու պիտանելիության գնահատման իրավակարգավորման հիմքում դնել այնպիսի տեղեկատվություն, ինչը մի կողմից կհամարվի անհրաժեշտ մրցույթ իրականացնելու և ընտրություն կատարելու համար, մյուս կողմից՝ վերաբերելով թեկնածուների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, **մատչելի կլինի հասարակության համար ու կբարձրացնի պետաիշխանական լիազորություն ստանձնողի նկատմամբ**

հանրային վստահությունը: Առաջնորդվելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, հանրային իշխանության գործողությունների թափանցիկությունը, հաշվետու գործունեությունը, հանրային-իրավական պատասխանատվությունն ապահովելու նկատառումներով՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ **դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը և հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող (ստացվող) փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), 2015 փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ:** Դրանք պետք է վերաբերեն ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին: Ուստի նման տվյալները պետք է ներառվեն հավակնորդի, հետագայում՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի անձնական գործում, ենթակա լինեն տրամադրման հավակնորդներին, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպություններին: Նման տեղեկատվության տրամադրումն անհրաժեշտ է և ուղղված է դատական իշխանության ձևավորման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետության ապահովմանը, հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը:

Նույն որոշմամբ անդրադառնալով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություն: Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը չի ներառում հավակնորդի մասնավոր կյանքի տարր: *Առավել ևս, որ խոսքը վերաբերում է պետական պաշտոնի զբաղեցմանը հավակնելուն: Տվյալ պարագայում ժողովրդավարական պետության սկզբունքի շրջանակներում հասարակությունն իրավունք ունի հանրային վերահսկողություն սահմանելու հանրային իշխանության, տվյալ պետական պաշտոնը զբաղեցնելու համար որակավորման սրուգման ընթացակարգի նկարմամբ, այն արդարության և հավասարության պայմաններում անցկացնելու նկարառումներով, իրազեկ լինելու տվյալ պետական պաշտոնի հավակնորդի մասնագիտական ունակություններին:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է այն փաստը, որ Ծառայությունը, ըստ էության, տեղեկություն ստանալու ազատության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի միջև առկա ենթադրական բախումը լուծել է՝ նախապատվությունը տալով երկրորդին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում խոսքը նույնպես վերաբերել է պետական պաշտոն զբաղեցնել հավակնելուն, որի ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Ընդ որում, խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության՝ որպես անձնական տվյալներ այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե թեկնածուների միջանձ-

նային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը, չունենալով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով *պաշտպանության ենթակա համապատասխան օբյեկտ*, ինչպես նաև վերը նշված սահմանափակումը համապատասխան օրենքով նախատեսված չլինելու պայմաններում սահմանափակել է Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացվելիք բաց մրցույթի նկատմամբ դիտորդական առաքելություն իրականացնելու, անցկացվելիք Մրցույթի վերաբերյալ խնդրարկված բոլոր փաստաթղթերը և յուրաքանչյուր հավակնորդի գնահատման արդյունքները (ըստ հանձնաժողովի առանձին անդամների) ստանալու Կազմակերպության, «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված տեղեկություններ փնտրելու և ստանալու հիմնարար իրավունքները, անտեսել է տեղեկություն ստանալու ազատության՝ վերը նշված իրավական ակտերով նախատեսված երաշխիքների իրացումը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու մտադրությունը նույնպես նպատակ է հետապնդել ստանալու համապատասխան տեղեկությունները:

Ինչ վերաբերում է հայցվորներ «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի՝ Ծառայության գործողությունները, որոնցով խոչընդոտվել է մրցույթի լուսաբանում կատարելը, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջին, ապա դրա կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

Դատարանը, նշված պահանջը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ էլեկտրոնային կրիչում առկա ձայնագրության ուսումնասիրությունից հստակ հնարավոր չէ արձանագրել, որ զրուցողները մի կողմից «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներն են, իսկ մյուս կողմից Ծառայության համապատասխան պաշտոնատար անձինք են, և նշված փաստը հիմնավորող այլ ապացույցներ չեն ներկայացվել: Հետևաբար չեն հիմնավորվում հայցվորների փաստարկներն առ այն, որ Ծառայությունը խոչընդոտել է վերջիններիս՝ լուսաբանել Մրցույթի ընթացքը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վերը նշված պատճառաբանությունները համարել է հիմնավոր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուժով «ՕԶՈԱ» ՍՊԸ-ն և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ն են կրել ապացուցման բեռը՝ իրենց համար բարենպաստ փաստերի մասով: Ի հավաստումն «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի կողմից Ծառայության ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով 25.11.2014 թվականին անցկացված բաց մրցույթի լուսաբանումն իրականացնելու մտադրության՝ վերջիններիս կողմից ներկայացվել է միակ ապացույց հանդիսացող 25.11.2014 թվականին կայացած խոսակցության ձայնագրության էլեկտրոնային կրիչը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ էլեկտրոնային կրիչում առկա ձայնագրության ուսումնասիրությունից հստակ հնարավոր չէ հետևություն անել այն մասին, որ զրուցողները մի կողմից «ՕԶՈԱ» ՍՊԸ-ի և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներն են, իսկ մյուս կողմից՝ Ծառայության համապատասխան պաշտոնատար անձինք: Ավելին՝ հայտնի չէ ձայնագրում կատարելու հստակ օրը և ժամանակահատվածը:

Հարկ է նշել նաև, որ նշված փաստը հիմնավորող այլ ապացույցներ հայցվորները չեն ներկայացրել: Ուստի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված պահանջը մերժելու մասով ստորադաս դատարանների պատճառաբանությունները հիմնավոր են:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: (...) Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ

իրավաչափ:

Մինչև վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների (...) համար պետական տուրքը գանձվում է ոչ գույքային պահանջով բազային տուրքի քառապատիկի չափով:

Նույն խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ (...) դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքի (...) համար պետական տուրքը գանձվում է ոչ գույքային բնույթի պահանջի գործերով բազային տուրքի տասնապատիկի չափով:

Նույն խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի 20-պատիկի չափով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմում, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոք ներկայացնելու համար գանձվող պետական տուրքի չափը ենթակա է որոշման ըստ պահանջների բնույթի, քանակի և բողոքարկման ծավալի: Ընդ որում, գործով մի քանի բողոք բերողների առկայության դեպքում նրանցից յուրաքանչյուրը պետք է կրի իր գործողություններով առաջացած դատական ծախսերի մասնաբաժինը, բացառությամբ այն դեպքի, երբ վիճելի իրավահարաբերությունը ենթադրում է համապարտություն կամ անհնարին է որոշել մասնաբաժինները: Տվյալ դեպքում սույն գործով ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործով քննության առարկա են յոթ ոչ գույքային ինքնուրույն պահանջներ, որոնք Դատարանը մերժել է, և Վերաքննիչ դատարանը Դատարանի 14.03.2016 թվականի վճիռը թողել է անփոփոխ, ու Վերաքննիչ դատարանի 05.04.2017 թվականի որոշումը բողոքարկված է ողջ ծավալով: Ընդ որում, ՀՀ վարչական դատարանի 09.03.2015 թվականի, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.08.2016 թվականի և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշումներով հետաձգվել են համապատասխան պետական տուրքերի վճարումները:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումի, վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար հետաձգված պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի ուժով բավարարվելիք հայցապահանջների մասով պետք է կրի Ծառայությունը, իսկ մերժվելիք պահանջի մասով պետք է կրեն «ՕԶՈԱ» ՍՊԸ-ն և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ն, որի դեպքում Ծառայությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 50.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 100.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար, իսկ «ՕԶՈԱ» ՍՊԸ-ից և «Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման յուրաքանչյուրից 4.000-ական ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու, 10.000-ական ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու և 20.000-ական ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.04.2017 թվականի որոշման՝ ՀՀ վարչական դատարանի 14.03.2016 թվականի վճիռը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության 24.11.2014 թվականի մերժումը, այն է՝ տեղեկատվություն տրամադրելը մերժելու գործողությունները, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացնելուն խոչընդոտելու գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջները մերժելու մասով անփոփոխ թողնելու մասը, և այդ մասով այն փոփոխել՝ հայցը բավարարել մասնակիորեն՝ ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ հատուկ քննչական ծառայության 24.11.2014 թվականի մերժումը, այն է՝ տեղեկատվություն տրամադրելը մերժելու գործողությունները, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացնելուն խոչընդոտելու գործողությունները և ՀՀ հատուկ քննչական ծառայությանը պարտավորեցնել տրամադրել դիմումներով խնդրարկված տեղեկատվությունը:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար սահմանված և ՀՀ վարչական դատարանի 09.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 50.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ու 100.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«ՕԶՈԱ» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար սահմանված և ՀՀ վարչական դատարանի 09.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ու 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված ու ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

«Ստարտ-Մեդիա» ՍՊԸ-ից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար սահմանված և ՀՀ վարչական դատարանի 09.03.2015 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.08.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, ու 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 11.12.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3665/05/14
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/3665/05/14
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի ներկայացուցիչ Թեհմինե Հովսեփյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևան տարածքային ստորաբաժանման, Համլետ, Արշակ և Անդրանիկ Ղարոյանների՝ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը մասնակիորեն վերացնելու և որպես անվավերության հետևանք՝ 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրը, 02.09.2013 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, 31.05.2013 թվականին Էրեբունի նոտարական տարածքում տրված համաձայնությունը վերացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Աիդա Զաքարյանը և Լևոն Խուրշուդյանը պահանջել են մասնակիորեն՝ 1-ին կետի 2-րդ ենթակետի մասով, վերացնել Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը և որպես անվավերության հետևանք՝ վերացնել 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրը, 02.09.2013 թվականին կատարված

անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, 31.05.2013 թվականին Էրեբունի նոտարական տարածքում տրված համաձայնությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 01.02.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը, սեղանամատյանում թիվ 6611 համարով գրանցված 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրը, 02.09.2013 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ Է4-13 մատյանի 000221 համարի տակ կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը վերացվել են, իսկ 31.05.2013 թվականին Էրեբունի նոտարական տարածքում տրված համաձայնությունը վերացնելու պահանջի մասով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.03.2017 թվականի որոշմամբ Համլետ, Արշակ և Անդրանիկ Ղարոյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 01.02.2016 թվականի վճռի՝ Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի հայցը բավարարելու մասը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համլետ, Արշակ և Անդրանիկ Ղարոյանների ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ Համլետ, Արշակ, Անդրանիկ Ղարոյանների նկատմամբ, քանի որ Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանել է միայն Լևոն Խուրշուդյանին և այդ օրենքի ուժով կարող էր վերականգնվել միայն նրա սեփականության իրավունքը: Ավելին, Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով Լևոն Խուրշուդյանի՝ Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման հիման վրա վերականգնված և պետական գրանցում ստացած սեփականության իրավունքը ենթարկվել է ապօրինի միջամտության, քանի որ Երևանի քաղաքապետն իրավասու չէ ոչ դատական կարգով անձին գրկել իր սեփականության իրավունքից:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից չի պահպանվել հարուցված վարչական վարույթի մասին Լևոն Խուրշուդյանին և Աիդա Զաքարյան-

նին ծանուցելու օրենսդրական պահանջը, ինչի հետևանքով վերջիններս գրկվել են վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լաված լինելու, ապացույցներ ներկայացնելու և իրենց իրավունքները պաշտպանելու արդյունավետ միջոցի իրավունքից: Հետևաբար Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և մասնակիորեն ենթակա է վերացման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 01.02.2016 թվականի վճիռ:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքն անհիմա է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործում առկա են բավարար ապացույցներ այն մասին, որ Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունի ոչ միայն Լևոն Խուրշուդյանը, այլ նաև՝ Համլետ, Արշակ, Անդրանիկ Ղաթոյանները: Հետևաբար նշված անշարժ գույքի նկատմամբ պետք է վերականգնվի նրանց բոլորի սեփականության իրավունքը, ինչը և կատարվել է Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշմամբ: Բացի այդ, վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Լևոն Խուրշուդյանի կողմից նոտարական կարգով տրված համաձայնությունը: Այսինքն՝ վերջինս արդեն իսկ տեղեկացված է եղել այդ որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի մասին, և նրա լաված լինելու իրավունքը չի խախտվել: Այսպիսով, սույն գործով Վերաքննիչ դատարանը կայացրել է օրինական և հիմնավորված դատական ակտ, որը ենթակա չէ բեկանման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

9) Երևանի քաղաքապետին հասցեագրված 12.03.2010 թվականի դիմումով Լևոն Խուրշուդյանը խնդրել է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն օրինականացնել Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեի բնակելի տունը և հողամասը (**հատոր 2-րդ, գ.թ. 54**).

10) Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, 16.07.2010 թվականին ընդունել է «Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի Հ.2 բնակելի տան և հողամասի նկատմամբ Լևոն Սմբատի Խուրշուդյանի իրավունքները վերականգնելու, 42,6քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» թիվ 3152-Ա որոշումը, որի 1-ին կետով վերականգնվել է Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 342,6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ, իսկ 2-րդ կետով որոշվել է 300քմ մակերեսով հողամասից ավել օգտագործվող 42,6քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել Լևոն Խուրշուդյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 49-50**).

11) Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման հիման վրա Երևանի քաղաքապետի և Լևոն Խուրշուդյանի միջև 28.09.2010 թվականին կնքված, նոտարի կողմից հաստատված և սեղանամատյանի թիվ 6361 համարի ներքո գրանցված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրի համաձայն՝ Լևոն Խուրշուդյանը ձեռք է բերել Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեի 42,6քմ մակերեսով հողամասը (**հատոր 1-ին, գ.թ. 23-27**).

12) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2793260 վկայականի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման, 30.09.2010 թվականին կնքված ու թիվ 6361 համարի ներքո գրանցված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրի և գլխավոր հատակագծի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ Է-4-13 մատյանի 000221 համարի տակ 05.10.2010 թվականին գրանցվել է Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 բնակելի տան և հողամասի նկատմամբ (**Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեի կադաստրային գործի պատճեն**).

13) Թիվ 357246 ամուսնության վկայականի համաձայն՝ Աիդա Զաքարյանը և Լևոն Խուրշուդյանն ամուսնացել են, որի վերաբերյալ գրանցումը կատարվել է 31.12.1976 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 45**).

14) Երևանի քաղաքապետին հասցեագրված 26.06.2012 թվականի դիմումով Համլետ և Անդրանիկ Ղարոյանները խնդրել են վերանայել Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշումն ու այդ որոշման մեջ որպես համասեփականատերեր ավելացնել նաև իրենց անունները: (**հատոր 2-րդ, գ.թ. 10**).

15) Երևանի քաղաքապետի գլխավոր խորհրդականի 12.11.2012 թվականի թիվ 55/Ղ-1655 գրությամբ Համլետ և Անդրանիկ Ղարոյաններին առաջարկվել է ներկայացնել Լևոն Խուրշուդյանի նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությունը՝ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ համապատասխան լրացում կատարելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշումից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում, և որոշման մեջ լրացում կատարելու դեպքում կփոփոխվի Լևոն Խուրշուդյանի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականով իրեն պատկանող հողամասի մակերեսը (**հատոր 2-րդ, գ.թ. 15**).

16) Լևոն Խուրշուդյանը 31.05.2013 թվականին նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնություն է տվել Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ փոփոխություն (լրացում) կատարելու և այդ որոշման մեջ որպես համասեփականատերեր Անդրանիկ, Արշակ և Համլետ Ղարոյաններին ավելացնելու վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 16**).

17) Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, 27.06.2013 թվականին ընդունել է «Երևանի քաղաքապետի 2010 թվականի հուլիսի 16-ի Հ.3152-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 3224-Ա որոշումը, որի 1-ին կետի 2-րդ ենթակետով Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման վերնագրում, 1-ին, 3-րդ և 8-րդ կետերում «*Լևոն Սմբարի Խուրշուդյանի*» բառերից հետո լրացվել է «*Համլետ Աշոֆի Ղարոյանի, Արշակ Պեպրոսի Ղարոյանի, Անդրանիկ Պեպրոսի Ղարոյանի*» բառերը, իսկ նախաբանում «*Լևոն Սմբարի*

Խորշոռյանի (ծնված 03.04.1954թ.)» բառերից հետո լրացվել են «Համկեր Աշորի Ղարոյանի (ծնված 04.09.1971թ.), Արշակ Պեպրոսի Ղարոյանի (ծնված 27.04.1960թ.), Անդրանիկ Պեպրոսի Ղարոյանի (ծնված 10.11.1954թ.)» բառերը (**հատոր 2-րդ, գ.թ. 113**).

18) Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա և 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումների հիման վրա, մի կողմից, Երևանի քաղաքապետի, և, մյուս կողմից, Լևոն Խորշոռյանի, Համկեր, Արշակ, Անդրանիկ Ղարոյանների միջև 21.08.2013 թվականին կնքված, նոտարի կողմից հաստատված և սեղանամատյանի 6611 համարի ներքո գրանցված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրի համաձայն՝ Լևոն Խորշոռյանը, Համկեր, Արշակ ու Անդրանիկ Ղարոյանները ձեռք են բերել Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեի 42,6քմ մակերեսով հողամասը (**հատոր 1-ին, գ.թ. 38-42**).

19) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02092013-01-0124 վկայականի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա և 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումների, «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» 30.09.2010 թվականի թիվ 6361 ու 28.08.2013 թվականի թիվ 6611 պայմանագրերի և գլխավոր հատակագծի հիման վրա 02.09.2013 թվականին գրանցվել է Լևոն Խորշոռյանի, Համկեր, Արշակ, Անդրանիկ Ղարոյանների համատեղ սեփականության իրավունքը Երևան քաղաքի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 բնակելի տան և հողամասի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 43**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարող է արդյո՞ք համայնքի ղեկավարն իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկարմամբ սեփականության իրավունքի վերականգնման վերաբերյալ վարչական ակտում փոփոխություններ կատարել և ավելացնել այլ ֆիզիկական անձանց՝ որպես անշարժ գույքի սեփականատերերի փվյալներ այն պայմաններում, երբ այդ ֆիզիկական անձինք փվյալ անշարժ գույքի նկարմամբ համապարասխան իրավունքներ չունեն, իսկ նշված վարչական ակտի հասցեատիրոջ սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում:

1) Քննելով վճռաբեկ բողոքն առաջին հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և նույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (...) այն անհատական բնակելի տները և դրանց

կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա նույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված համայնքի ղեկավարի որոշումը, որում պարտադիր նշվում են իրավունք ձեռք բերող ֆիզիկական անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին), բնակելի տան հասցեն, տեղեկատվություն բնակելի տան կառուցման տարեթվի մասին, տեղեկատվություն այն մասին, որ անշարժ գույքը բավարարում է նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները: (...) Նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում համայնքի ղեկավարի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում, բացառությամբ, եթե նույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, և դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը կարգավորել է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված որոշակի կատեգորիայի անշարժ գույքի նկատմամբ այդ գույքը փաստացի որպես սեփականը տիրապետող ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման և պատշաճ ձևակերպման հետ կապված հարաբերությունները: «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնումը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվող համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին իրավունք է վերապահում օրենքով սահմանված համապատասխան ընթացակարգով գրանցելու իր սեփականության իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված օրենքով սահմանված իրավակարգավորումների միջոցով օրենսդիրը հետապնդում է հստակ նպատակ, այն է՝ որոշակի պահանջների բավարարող և իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի տիրապետող և դրա սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ հանդիսացող ֆիզիկական անձանց

հնարավորություն տալ վերականգնելու իրենց սեփականության իրավունքն այդ անշարժ գույքի նկատմամբ: Հետևաբար «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր պահանջներից մեկն այն է, որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ կարող է վերականգնվել միայն այդ անշարժ գույքը փաստացի տիրապետող այն ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը, ովքեր հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ: Այսպիսով, վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, ի թիվս այլնի, նաև այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած ֆիզիկական անձը հանդիսանում է արդյոք այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդ, թե՛ ոչ (*տե՛ս, Զոյա Միմոնիդյան ընդդեմ Երևանի համայնքի թիվ ՎԴ/10507/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված և որոշակի չափանիշների բավարարող անշարժ գույքի նկատմամբ վերականգնվում է այն ֆիզիկական անձի սեփականության իրավունքը, ով փաստացի տիրապետում է այդ անշարժ գույքը՝ որպես սեփական գույք: Ընդ որում, խոսքը վերաբերում է այն ֆիզիկական անձանց, ովքեր ոչ միայն փաստացի տիրապետում են համապատասխան անշարժ գույքը, այլ նաև հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, որոնց սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել: Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայացմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, ի թիվս այլնի, նաև այն հանգամանքը, թե արդյոք ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումում նշված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքը փաստացի (որպես սեփական գույք) տիրապետվում է նաև այլ ֆիզիկական անձանց կողմից, թե՛ ոչ (*տե՛ս, Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկով ընդգծել է, որ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը կիրառելի է նշված օրենքով սահմանված որոշակի պահանջներին բավարարող միայն այն բնակելի տների նկատմամբ, որոնք կառուցվել են օրենքով սահմանված կարգով, այսինքն՝ օրինական կառույցներ են: Փաստորեն, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը կարող է վերականգնվել միայն այն բնակելի տների նկատմամբ, որոնք ինքնակամ կառույցներ չեն: Հետևաբար վարչական մարմինը պարտավոր է իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու վերաբերյալ որոշման կայաց-

մանն ուղղված վարչական վարույթի ընթացքում պարզել, ի թիվս այլնի, նաև այն հանգամանքը, թե իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տունը հանդիսանում է արդյոք օրինական կառույց, թե՛ ոչ (*տե՛ս, Սիրանուշ Վարդանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0634/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ համայնքի ղեկավարը կարող է որոշում կայացնել իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը վերականգնելու մասին միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում ելել է այն եզրահանգման, որ դիմում ներկայացրած ֆիզիկական անձի, ինչպես նաև այդ դիմումում նշված անշարժ գույքի կարգավիճակը լիովին համապատասխանում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պահանջներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման 1-ին կետով վերականգնվել է Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքը բնակելի տան գրառեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 342,6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ: Այդ վարչական ակտի հիման վրա Երևանի քաղաքապետարանի և Լևոն Խուրշուդյանի միջև 28.09.2010 թվականին կնքվել է «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագիր: Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման և «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» 28.09.2010 թվականի պայմանագրի հիման վրա 05.10.2010 թվականին գրանցվել է Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքը Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 բնակելի տան և հողամասի նկատմամբ:

Այնուհետև Համլետ և Անդրանիկ Ղարոյանների դիմումի հիման վրա հարուցվել է նոր վարչական վարույթ, որի արդյունքում Երևանի քաղաքապետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, 27.06.2013 թվականին ընդունել է թիվ 3224-Ա որոշումը, որով փոփոխություններ և լրացումներ է կատարել Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ: Այսպես, Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման վերնագրում, 1-ին, 3-րդ և 8-րդ կետերում «*Լևոն Սմբարի Խուրշուդյանի*» բառերից հետո լրացվել է «*Համլետ Աշոտի Ղարոյանի, Արշակ Պետրոսի Ղարոյանի, Անդրանիկ Պետրոսի Ղարոյանի*» բառերը, իսկ նախաբանում «*Լևոն Սմբարի Խուրշուդյանի (ծնված 03.04.1954թ.)*» բառերից հետո լրացվել են «*Համլետ Աշոտի Ղարոյանի (ծնված 04.09.1971թ.), Արշակ Պետրոսի Ղարոյանի (ծնված 27.04.1960թ.), Անդրանիկ Պետրոսի Ղարոյանի (ծնված 10.11.1954թ.)*» բառերը:

Դատարանը, մասնակիորեն բավարարելով Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի հայցը, անվավեր է ճանաչել Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և որպես հետևանք՝ վերացրել է 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրն ու 02.09.2013 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը: Դատարանը վճռի հիմքում, մասնավորապես, դրել է այն պատճառաբանությունը, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը չի պարունակում տեղեկություններ դիմումը ներկայացնող

անձի անվան ու ազգանվան, դիմումի բովանդակության, ինչպես նաև այդ դիմումը վարչական մարմնում ստացված լինելու ամսաթվի մասին և ընդունվել է օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Համլետ, Արշակ և Անդրանիկ Ղարոյանների վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և փոփոխել այն՝ Դատարանի կողմից բավարարված մասով մերժելով Աիդա Զաքարյանի և Լևոն Խուրշուդյանի հայցը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումն իրավաչափ է, քանի որ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներն ամբողջությամբ բավարարել են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների մասին» ՀՀ օրենքի դրույթներով սահմանված պահանջներին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը դրանք գտնում է անհիմա հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշմամբ, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ, ըստ էության վերականգնվել է Համլետ, Արշակ ու Անդրանիկ Ղարոյանների սեփականության իրավունքը Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ: Մինչդեռ Երևանի քաղաքապետն իր 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման մեջ չի վկայակոչել «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը՝ որպես Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման մասին որոշում ընդունելու իրավական հիմքը: Այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման իրավաչափությունն առաջին հերթին ենթակա է որոշման հենց «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակներում, քանի որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ օրենքով:

Այս տեսանկյունից Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինը վիճարկվող որոշման կայացման համար հիմք է ընդունել միայն Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման հասցեատիրոջ՝ Լևոն Խուրշուդյանի կողմից տրված գրավոր համաձայնությունն այդ վարչական ակտի մեջ փոփոխություն (լրացում) կատարելու և այդ որոշման մեջ որպես համասեփականատերեր Անդրանիկ, Արշակ և Համլետ Ղարոյաններին ավելացնելու վերաբերյալ: Սակայն նմանատիպ համաձայնությունը չի կարող հիմք հանդիսանալ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ուժով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերականգնման համար, քանի որ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ կարող է վերականգնվել միայն այն ֆիզիկական անձանց սեփականության իրավունքը, ովքեր փաստացի տիրապետում են այդ անշարժ գույ-

քը և հանդիսանում են այդ անշարժ գույքի սեփականատեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ:

Փաստորեն, Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և որպես Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի համասեփականատերեր Անդրանիկ, Արշակ և Համլետ Ղարոյաններին ավելացնելու համար վարչական մարմինը պարտավոր էր պարզել, թե վերջիններս հանդիսանում են արդյոք այդ անշարժ գույքի սեփականատերեր կամ սեփականատերերի իրավահաջորդներ, թե՛ ոչ: Մինչդեռ սույն գործով վարչական մարմինը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ այն մասին, որ Համլետ, Արշակ ու Անդրանիկ Ղարոյանները լիովին համապատասխանում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող՝ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անշարժ գույքի նկատմամբ ունեն վերականգնման ենթակա սեփականության իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումն ընդունվել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Մինևս սույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 բնակելի տան և հողամասի նկատմամբ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման և դրա հիման վրա 28.09.2010 թվականին կնքված «Հողամասի ուղղակի վաճառքի մասին» պայմանագրից ծագած Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքը 05.10.2010 թվականին ստացել է պետական գրանցում:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանմամբ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքը նշանակում է, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել (*լրե՛ս, Լյուբով Փիլոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի և այլոց թիվ ՎԳ/2085/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վարչական ակտի իրավաչափության կանխավարկածից բխում է, որ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշումը, ինչպես նաև Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն իրավաչափ վարչական ակտեր են, քանի որ երբևէ ոչ իրավաչափ չեն ճանաչվել իրավասու մարմնի կողմից: Այսինքն՝ պետք է ելնել այն կանխավարկածից, որ Երևանի քաղաքապետը 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման ընդունմանն ուղղված վարույթի ընթացքում ձեռք է բերել անհրաժեշտ և բավարար տվյալներ այն մասին, որ Լևոն Խուրշուդյանը և Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքը լիովին համապատասխանում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ

օրենքի պահանջներին: Նման պայմաններում Երևանի քաղաքապետը չէր կարող Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք անմիջական միջամտող ազդեցություն են ունենում Լևոն Խուրշուդյանի՝ իրավաչափ վարչական ակտերի հիման վրա ճանաչված սեփականության իրավունքի նկատմամբ: Մինչդեռ Երևանի քաղաքապետը 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմամբ խախտել է 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման և Երևանի Սարի Թաղի 7-րդ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Լևոն Խուրշուդյանի սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափության կանխավարկածը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իրավացի է համարում բողոք բերած անձի այն դիրքորոշումը, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումն ընդունվել է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի խախտմամբ և մասնակիորեն (հայցվորների կողմից պահանջվող մասով) ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով:

2) Քննելով վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներ են՝ (ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ, (բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց (...) վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուումներ կարող են չանցկացվել, եթե՝ (ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն, (բ) դիմումն ակնհայտ անհիմն է, (գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում, եթե՝ (ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, (բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լուումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում. արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու, կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (*յրեն, İlhan v. Turkey (22277/93) գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 27.06.2000 թվականի վճիռը, կետ 97*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված մարդու՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը ներառում է նաև վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը, որի ապահովման պարտականությունն օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով դրել է վարույթն իրականացնող վարչական մարմնի վրա: Իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը բարձրացվել է սահմանադրական մակարդակի. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածում, որպես պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ տարր, ամրագրված է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց, լաված լինելու իրավունքի կենսագործման առանձնահատկություններին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշա-

նակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման մասին ծանուցելու և այդ վարույթի ընթացքում լսումներ անցկացնելու իրավական հիմքերը տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հարուցման մասին չծանուցելու իրավական հիմքի՝ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս լինելու, առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ վարույթի մասնակիցների լսված լինելու իրավունքը սահմանափակելու և առանց ընթացիկ փուլում լսումների իրականացման միջամտող վարչական ակտ ընդունելու համար, եթե բացակայում են լսումներ չանցկացնելու կամ վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերը (*տե՛ս, Սարգիս Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթրել պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/7107/05/14 վարչական գործով 20.07.2017 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ օրենսդրի կողմից նախատեսված վարչական վարույթի մասնակիցներին լսելու վարչական մարմնի պարտականության նպատակը չի սահմանափակվում միայն տվյալ մասնակիցների համար արդյունավետ անհատական պաշտպանություն ապահովելով, դրանով մասնակիցները նաև նպաստում են գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը: Ավելին, վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացման (*տե՛ս, Տիգրան Արադյանն ընդդեմ Երևանի համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է Համլետ և Անդրանիկ Ղարոյանների դիմումի հիման վրա: Հարուցված վարչական վարույթում քննարկվող հարցը վերաբերել է Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուն, ինչն ուղղակիորեն առնչվել է Լևոն Խուրշուդյանի իրավունքներին, քանի որ վերջինս հանդիսացել է Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման հասցեատերը, որում կատարվելիք փոփոխությունների ու լրացումների արդյունքում փոփոխվելու էր նաև Լևոն Խուրշուդյանին տրամադրված իրավունքների ծավալը: Ընդ որում, թեև Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման հիմքը Համլետ և

Անդրանիկ Ղարոյանների դիմումն է հանդիսացել, այդուհանդերձ այդ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր էր հանդիսանալու նաև Լևոն Խուրշուդյանը, ինչպես նաև այն առնչվելու էր վերջինիս կնոջ՝ Աիդա Զաքարյանի իրավունքներին և շահերին: Մինչդեռ սույն գործով վարչական մարմինը չի ներկայացրել որևէ ապացույց Լևոն Խուրշուդյանին և Աիդա Զաքարյանին Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու և վարչական վարույթի ընթացքում լուծումներ իրականացնելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետն անվավեր է ճանաչել նաև այդ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում թույլ տրված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանափակված ընթացակարգային պահանջների խախտման հիմքով, որը հանգեցրել է Լևոն Խուրշուդյանի լաված լինելու իրավունքի սահմանափակման: Դատարանը վճռում, մասնավորապես, նշել է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, 38-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, ինչի արդյունքում Լևոն Խուրշուդյանը չի ծանուցվել վարչական վարույթի հարուցման, վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին՝ զրկվելով վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ բացատրություններ տալու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Համլետ Արշակ և Անդրանիկ Ղարոյանների վերաքննիչ բողոքը, բեկանել ու փոփոխել է Դատարանի վճիռը և մերժել է Լևոն Խուրշուդյանի և Աիդա Զաքարյանի հայցը՝ անհիմն գնահատելով Դատարանի այն դիրքորոշումը, թե վիճարկվող վարչական ակտ կայացնելիս խախտվել է Լևոն Խուրշուդյանի լաված լինելու իրավունքը: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Լևոն Խուրշուդյանը, Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ փոփոխություն (լրացում) կատարելու մասին համաձայնություն տալով, տեղեկացված է եղել Երևանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթի մասին, հետևաբար նրա լաված լինելու իրավունքը չի խախտվել:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պարտադրանքային հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Վերը նշված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը խախտել է Լևոն Խուրշուդյանի՝ որպես այդ վարչական ակտի հասցեատիրոջ, և Աիդա Զաքարյանի՝ որպես երրորդ անձի, լաված լինելու իրավունքը:

Այսպես, Վճռաբեկ դատարանը նախևառաջ փաստում է, որ Լևոն Խուրշուդյանն ու Աիդա Զաքարյանը պետք է ծանուցվեին Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին, մինչդեռ նշված փաստը հաստատող որևէ ապացույց գործում առկա չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ նաև որևէ ապացույց Լևոն Խուրշուդյանին և վերջինիս ամուսին Աիդա Զաքարյանին (այն անձանց, որոնց իրա-

վունքները կամ օրինական շահերը կարող էին շոշափվել Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշմամբ) վարչական վարույթում լուումների անցկացման ժամանակի և վայրի մասին ծանուցելու վերաբերյալ, մինչդեռ սույն գործի փաստերից հետևում է, որ նշված վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում բացակայել են լուումներ չանցկացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված թե՛ հայեցողական, թե՛ պարտադիր հիմքերը, ինչպես նաև վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով իրականացնելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքը: Հետևաբար Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումների անցկացումը պարտադիր էր:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Երևանի քաղաքապետի 16.07.2010 թվականի թիվ 3152-Ա որոշման մեջ փոփոխություն (լրացում) կատարելու մասին Լևոն Խուրշուդյանի կողմից տրված համաձայնության առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու և այդ վարույթի հարուցման ու լուումների անցկացման ժամանակի և վայրի մասին Լևոն Խուրշուդյանին և Աիդա Զաքարյանին չծանուցելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Փաստորեն, Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթի հարուցման մասին Լևոն Խուրշուդյանին և Աիդա Զաքարյանին չծանուցելու և այդ վարույթի ընթացքում լուումներ չանցկացնելու հետևանքով վերջիններս ոչ իրավաչափ կերպով գրկվել են վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողությունների միջոցով վարչական մարմնի վերջնական որոշման վրա ազդելու հնարավորությունից: Այսինքն՝ Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումն ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 35-րդ և 38-րդ հոդվածների խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված Լևոն Խուրշուդյանի և Աիդա Զաքարյանի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Այսպիսով, Դատարանն իր դատական ակտով իրավացիորեն է եզրահանգել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 35-րդ և 38-րդ հոդվածների խախտմամբ ընդունված լինելու հիմքով Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և մասնակիորեն (հայցվորների կողմից պահանջվող մասով) ենթակա է վերացման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանը, մասնակիորեն վերացնելով Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը և որպես դրա հետևանք՝ վերացնելով 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրն ու 02.09.2013 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, կայացրել է

գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխաններում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն որոշմամբ Դատարանի վճռին օրինական ուժ է տրվում միայն *Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը մասնակիորեն վերացնելու և որպես հետևանք՝ 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրն ու 02.09.2013 թվականին կայարաված անշարժ գույքի նկարումներ իրավունքի պետական գրանցումը վերացնելու պահանջները բավարարելու մասով*, քանի որ Դատարանի վճիռը՝ *Էրեբունի նույարական տարածքում 31.05.2013 թվականին տրված համաձայնությունը վերացնելու* պահանջի մասով, վերաքննության կարգով չի բողոքարկվել և այդ պահանջը մերժելու մասով արդեն իսկ մտել է օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից հօգուտ

Աիդա Զաքարյանի ու Լևոն Խորշոդյանի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է բռնագանձման 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարվա պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը և Երևանի քաղաքապետի 27.06.2013 թվականի թիվ 3224-Ա որոշումը մասնակիորեն վերացնելու և որպես հետևանք՝ 21.08.2013 թվականի հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիրն ու 02.09.2013 թվականին կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը վերացնելու պահանջները բավարարելու մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 01.02.2016 թվականի վճիռին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Աիդա Զաքարյանի ու Լևոն Խորշոդյանի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ5/0409/05/13

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ5/0409/05/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԱՎԱԾՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սվետլանա Վերդոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.03.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վիլսոն Թորոյանի ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի, երրորդ անձինք Սվետլանա Վերդոյանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շիրակի մարզի ստորաբաժանման՝ Գյումրու քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Վիլսոն Թորոյանը պահանջել է մասնակիորեն՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի թիվ 15 հասցեի՝ իր ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսի մասով, վերացնել Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը, անվավեր ճանաչել 30.07.2008 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 5505 պայմանագիրը և Գյումրու քաղաքապետարանի 09.11.2006 թվականի թիվ 1341 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) 08.09.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավորներ՝ Ք. Մկոյան, Ա. Առաքելյան, Գ. Ղարիբյան) 03.03.2015 թվականի որոշմամբ Վիլսոն Թորոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 08.09.2014 վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 08.07.2015 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.03.2015 թվականի որոշման դեմ Սվետլանա Վերդոյանի և նրա ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Գործի նոր քննության արդյունքում ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմայան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.03.2017 թվականի որոշմամբ Վիլսոն Թորոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 25.04.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ մասնակիորեն՝ Գյումրիի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30 շենքի թիվ 15 հասցեի՝ Վիլսոն Թորոյանի ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսով տարածքի մասով, վերացվել է Գյումրու քաղաքապետարանի 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը, իսկ մնացած մասով գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սվետլանա Վերդոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վիլսոն Թորոյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 29.06.1993 թվականին ընդունված և 04.01.2007 թվականին ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 29-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճարկվող աճուրդով Վիլսոն Թորոյանի որևէ իրավունք չի խախտվել: Վիլսոն Թորոյանը չի օգտվել բնակելի տարածության սեփականաշնորհման իր իրավունքից և «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում՝ մինչև 31.12.1998 թվականը, չի սեփականաշնորհել բնակելի տարածությունը: Արդյունքում նշված օրենքի ուժով Գյումրիի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում գտնվող բնակելի տարածությունն անցել է Գյումրիի համայնքին, որը, որպես այդ շենքի սեփականատեր, այն աճուրդով վաճառել է Սվետլանա Վերդոյանին: Բացի այդ, 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրով Գյումրիի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30 տան հասցեի համայնքապատկան շենքի երկու սենյակները հանձնվել են Վիլսոն Թորոյանի ժամանակավոր օգտագործմանը, ուստի վերջինս այդ երկու սենյակների մասով ևս չի հանդիսացել սեփականաշնորհման սուբյեկտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատա-

քանի 28.03.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.04.2016 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները

Սվետլանա Վերդոյանի վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը պետք է թողնել անփոփոխ: Վերաքննիչ դատարանը կատարել է բազմակողմանի և օբյեկտիվ քննություն և իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ վիճելի աճուրդն անցկացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի համաձայն՝ Գյումրի քաղաքի 16-րդ փողոցի թիվ 30 շենքում Վիլսոն Թորոյանին հատկացվել է 24քմ մակերեսով բնակարանային տարածություն՝ 4 անձի համար (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

2) Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կումայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, և Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի համաձայն՝ Գյումրու քաղաքապետարանը Վիլսոն Թորոյանի ժամանակավոր օգտագործմանն է հանձնել Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30 տան համայնքապետական շենքի՝ Վիլսոն Թորոյանի բնակարանին կից երկու սենյակները: Այդ պայմանագրով Վիլսոն Թորոյանը պարտավորվել է, ի թիվս այլնի, Գյումրու քաղաքապետարանի առաջին իսկ պահանջի դեպքում 5-օրյա ժամկետում ազատել ժամանակավոր հատկացված սենյակները (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

3) Գյումրու ավագանին 24.06.2006 թվականին որոշել է թույլատրել համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Գորկու փողոցի թիվ 30 հասցեի շենքի՝ 401,69քմ մակերեսով հատվածն օտարել աճուրդային եղանակով (**հատոր 2-րդ, գ.թ. 119**):

4) Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության համաձայն՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30 շենքի 401,69քմ մակերեսով հատվածն աճուրդով օտարվել է Սվետլանա Վերդոյանին (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

5) Գյումրի համայնքի և Սվետլանա Վերդոյանի միջև 30.07.2008 թվականին կնքված և նոտարական սեղանամատյանի 5504 համարի ներքո գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30Բ հասցեում գտնվող շենքը՝ 401,69քմ ընդհանուր մակերեսով, վաճառվել է Սվետլանա Վերդոյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 100-102**):

6) Գյումրի համայնքի և Սվետլանա Վերդոյանի միջև 30.07.2008 թվականին կնքված և նոտարական սեղանամատյանի 5505 համարի ներքո գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30Ա հասցեում գտնվող շինությունը՝ 659,38քմ ընդհանուր մակերեսով, շենքը՝ 464,91քմ մակերեսով, նկուղը՝ 194,47քմ մակերեսով, վաճառվել է Սվետլանա Վերդոյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 104-106**):

7) Գյումրու քաղաքապետարանի 09.11.2006 թվականի թիվ 1341 որոշման համաձայն՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30Ա հասցեում գտնվող կառույցի փաստացի զբաղեց-

քան 531,44քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարվել է Սվետլանա Վերդոյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 108-109**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածության նկատմամբ գույքային իրավունքների դատական պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք ֆիզիկական անձն իրեն հարկացված համայնքային սեփականություն համարվող բնակարանի նկարմամբ օժտված լինել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ուժով պաշտպանվող գույքային իրավունքով, որը վերջինիս մոտ առաջացնում է այդ բնակարանի օտարման որոշումները դարական կարգով վիճարկելու իրավական շահագրգռվածություն, եթե տվյալ անձի օգտագործման իրավունքն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ստացել պետական գրանցում, ինչպես նաև տվյալ անձն օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի օգտվել այդ բնակարանի սեփականաշնորհման իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը դատարան ներկայացնելու ժամանակահատվածում գործել է 28.11.2007 թվականին ընդունված, 01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, իսկ բողոքարկվող դատական ակտը կայացվել է 07.01.2014 թվականից ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի գործողության ժամանակահատվածում:

01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով

իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով:

01.01.2008 թվականից ուժի մեջ մտած և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվելին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով յուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (*յուեն, Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium գործով Եվրոպական դատարանի 23.06.1981 թվականի վճիռը, 47-րդ կետը, Benthem v. The Netherlands գործով Եվրոպական դատարանի 23.10.1985 թվականի վճիռը, 32-րդ կետը*):

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար

ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալու արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է, որ, որպես ընդհանուր կանոն, դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկայի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները: Այսինքն՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը քննող դատարանն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ (որեն Տիգրան Սանասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Վիլսոն Թորոյանի հայցի հիման վրա, որով վերջինս ներկայացրել է հետևյալ պահանջները.

1) մասնակիորեն՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի թիվ 15 հասցեի՝ Վիլսոն Թորոյանի ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսով բնակարանի մասով, վերացնել Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը,

2) Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի թիվ 15 հասցեի՝ Վիլսոն Թորոյանի ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսով բնակարանի մասով, անվավեր ճանաչել անշարժ գույքի առուվաճառքի 30.07.2008 թվականի թիվ 5505 պայմանագիրը,

3) Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի թիվ 15 հասցեի՝ Վիլսոն Թորոյանի ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսով բնակարանի մասով, անվավեր ճանաչել Գյումրու քաղաքապետարանի 09.11.2006 թվականի թիվ 1341 որոշումը:

Սույն գործով Դատարանը մերժել է Վիլսոն Թորոյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի թիվ 15 հասցեում գտնվող բնակարանի նկատմամբ Վիլսոն Թորոյանի ենթադրյալ օգտագործման իրավունքը դադարել է Գյումրի համայնքի ավագանու 24.06.2006 թվականի «Գորկու փողոցի թիվ 30 հասցեի շենքի 401,69քմ մակերեսով հատվածն աճուրդային եղանակով օտարելու և մեկնարկային գին սահմանելու

մասին» որոշմամբ, որը չվիճարկված և չվերացված վարչական ակտ է: Ելնելով այդ վարչական ակտի իրավաչափության կանխավարկածից՝ Դատարանը գտել է, որ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը՝ որպես Գյումրի համայնքի ավագանու 24.06.2006 թվականի որոշման հետևանք, իրավաչափ է և չի կարող անվավեր ճանաչվել: Դատարանը նշել է, որ Վիլսոն Թորոյանի մյուս հայցապահանջները ևս ենթակա են մերժման, քանի որ դրանք, ըստ Դատարանի, հետևանքների վերացման ածանցյալ պահանջներ են:

Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն բավարարելով Վիլսոն Թորոյանի վերաքննիչ բողոքը և բեկանելով Դատարանի վճիռը, մասնակիորեն՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի թիվ 30 շենքի թիվ 15 հասցեի՝ Վիլսոն Թորոյանի ընտանիքի զբաղեցրած 76,24քմ մակերեսով տարածքի մասով, վերացրել է Գյումրու քաղաքապետարանի 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը, իսկ մնացած պահանջների մասով գործի վարույթը կարճել է: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը կարող է դառնալ ինքնուրույն վիճարկման առարկա: Իսկ Վիլսոն Թորոյանը՝ որպես վիճելի տարածքի մի մասի օգտագործման իրավունք ունեցող անձ, հանդիսանում է Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությամբ ավարտված աճուրդը վիճարկող շահագրգիռ անձ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ նշված աճուրդն անցկացվել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, հետևաբար վիճարկվող արձանագրությունը Վիլսոն Թորոյանի՝ որպես շահագրգիռ անձի, պահանջով ենթակա է անվավեր ճանաչման:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշմամբ Վիլսոն Թորոյանի 1-ին պահանջը բավարարվել է, իսկ 2-րդ և 3-րդ պահանջների մասով սույն վարչական գործի վարույթը կարճվել է: Թեև վճռաբեկ բողոքով Սվետլանա Վերդոյանը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը, սակայն սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը բողոքարկվող դատական ակտը վերանայում է միայն Վիլսոն Թորոյանի 1-ին պահանջի բավարարման մասով, քանի որ բողոքարկվող դատական ակտի՝ Վիլսոն Թորոյանի 2-րդ և 3-րդ պահանջների մասով վարչական գործի վարույթի կարճման մասն անբարենպաստ չէ Սվետլանա Վերդոյանի համար, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ*:

Ըստ այդմ, սույն գործով Սվետլանա Վերդոյանի վճռաբեկ բողոքի քննության համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք Վիլսոն Թորոյանը Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու համար «շահագրգիռ անձ» է, թե՛ ոչ: Նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել, թե Վիլսոն Թորոյանը, իր ընտանիքի հետ միասին զբաղեցնելով Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում գտնվող 76,24քմ մակերեսով բնակարանը, նշված արձանագրության կազմման պահին օժտված էր արդյո՞ք սեփականության կամ որևէ այլ

գույքային իրավունքով այդ անշարժ գույքի նկատմամբ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված իրավանորմերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելակետ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկան (*յրեն «Սելվր» ՄՊԸ-ն ընդդեմ Նշան Ալեքսանյանի թիվ ԵԿԴ/0169/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*յրեն 'ս, օրինակ, Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վիլսոն Թորոյանի և նրա ընտանիքի անդամների կողմից Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում գտնվող 76,24քմ մակերեսով բնակարանային տարածությունը զբաղեցվել է Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի (որով Վիլսոն Թորոյանին այդ շենքում հատկացվել է 24քմ մակերեսով բնակարանային տարածություն) և Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կոմպրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի (որով Գյումրու քաղաքապետարանը Վիլսոն Թորոյանի ժամանակավոր օգտագործմանն է հանձնել նույն շենքի՝ Վիլսոն Թորոյանի բնակարանին կից երկու սենյակները) հիման վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 1982 թվականի ՀՀ բնակարանային օրենսգրքի (ուժը կորցրել է 26.11.2005 թվականից) 49-րդ հոդվածի համաձայն՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ որոշման հիման վրա պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային, ավանային, գյուղական խորհրդի գործադիր կոմիտեն քաղաքացուն տալիս է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքն է (...):

1964 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժը կորցրել է 01.01.1999 թվականից) 299-րդ հոդվածի համաձայն՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելն իրականացվում է բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում է վարձատուի՝ բնակարանային-շահագործման կազմակերպության (իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ համապատասխան ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության) և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը (...):

Անդրադառնալով վկայակոչված իրավադրույթների բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում նշել է, որ 1982 թվականի ՀՀ բնակարանային օրենսգրքի և 1964 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործողության ժամանակ բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքը հանդիսանում էր օրդերը: Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելն իրականացվում էր բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում էր վարձատուի և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված էր օրդերը: Օրդերը կարող էր տրվել միմիայն ազատ, մեկուսացված բնակելի տարածության համար: Այսպիսով օրդերն իր էությանը հանդիսանում էր իրավահաստատող փաստաթուղթ, համաձայն որի՝ իրականացվում էր ազատ բնակելի տարածության բնակեցումը կոնկրետ անհատի և (կամ) նրա ընտանիքի անդամների կողմից, և որի հիման վրա անձի հետ, ում անունով տրվել էր օրդերը, կնքվում էր բնակելի տարածության վարձակալության պայմանագիր: Այսինքն՝ օրդերը փաստացի հավաստում էր տվյալ բնակելի տարածության նկատմամբ քաղաքացու օգտագործման իրավունքի ծագման պահը (*տե՛ս Լևոն Ղոչիկյանն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության թիվ ՎԴ/1956/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի հիման վրա Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում գտնվող 24քմ մակերեսով բնակարանային տարածության նկատմամբ ծագել էր Վիլսոն Թորոյանի և նրա ընտանիքի անդամների օգտագործման իրավունքը:

Գույքի օգտագործման իրավունքը դասվում է սահմանափակ իրային իրավունքների թվին: Այսպես, 1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականից) 170-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները՝ (...) գույքի օգտագործման (...) իրավունք:

1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականից)՝ մինչև 26.11.2005 թվականը գործող խմբագրությամբ 225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բնակելի տարածության սեփականատիրոջ ընտանիքի անդամները և այլ անձինք բնակելի տարածությունն օգտագործելու իրավունք ունեն, եթե այդ իրավունքը գրանցված է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի նշված խմբագրությամբ 2-րդ կետի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դրա դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր համաձայնությամբ (...):

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփո-

խություններ կատարելու մասին» 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 26.11.2005 թվականից) 11-րդ հոդվածով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը շարադրվել է այլ խմբագրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ 26.11.2005 թվականից գործող խմբագրությամբ 225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, որը չի կարող օտարվել, լինել գրավի, վարձակալության կամ անհատույց օգտագործման ինքնուրույն առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել այլ անձի ժառանգաբար կամ իրավահաջորդության կարգով (...):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:

Վերոգրյալ իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը 1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը կապել է այդ իրավունքի պետական գրանցման հետ: Այլ կերպ ասած, ըստ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, անձը կարող է ունենալ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածության օգտագործման իրավունք միայն այն դեպքում, երբ այդ իրավունքը ստացել է օրենքով սահմանված պետական գրանցում: Հետևաբար Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի հիման վրա ծագած՝ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում գտնվող 24քմ մակերեսով բնակարանային տարածության նկատմամբ Վիլսոն Թորոյանի օգտագործման իրավունքը Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության կազմման պահին այլևս չէր կարող դիտարկվել որպես գույքային իրավունք և չէր կարող համարվել «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

Ինչ վերաբերում է Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կումայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրին, որով Գյումրու քաղաքապետարանը Վիլսոն Թորոյանի ժամանակավոր օգտագործման է հանձնել Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքի՝ Վիլսոն Թորոյանի բնակարանին կից երկու սենյակները, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ պայմանագրի ուժով Վիլսոն Թորոյանը հատկացված սենյակների նկատմամբ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով որևէ գույքային իրավունք ձեռք չի բերել: Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կումայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագիրը կնքվել է հասարակ գրավոր ձևով. այն վավերացված չէ նոտարական կարգով և դրանից բխող օգտագործման իրավունքը պետական գրանցման ենթարկված չէ: Փաստորեն, քննարկվող պայմանագիրը կնքվել է 1998 թվականի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝

մինչև 26.11.2005 թվականը գործող խմբագրությամբ 225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ: Ավելին՝ այդ պայմանագրով կողմերը կատարել են հստակ վերապահում առ այն, որ Վիլսոն Թորոյանը պարտավոր է Գյումրու քաղաքապետարանի առաջին իսկ պահանջի դեպքում 5-օրյա ժամկետում ազատել ժամանակավոր հատկացված սենյակները: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կումայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագիրը չի կարող հիմք հանդիսանալ Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին հատկացված սենյակների նկատմամբ վերջինիս օգտագործման իրավունքի ծագման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի և Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կումայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի հիման վրա Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ սույն գործով վիճարկվող՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության կազմման պահին Վիլսոն Թորոյանը չի ունեցել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ՝ ուրիշի սեփականությունը հանդիսացող բնակելի տարածության օգտագործման իրավունքի տեսքով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ Վիլսոն Թորոյանն ունեցել է արդյոք Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ուժով պաշտպանվող գույքային իրավունք՝ այդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու «օրինական սպասելիքի» տեսքով:

Այսպես, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*ընդ Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը*): Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*ընդ Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի մեկնաբանման և կիրառության ոլորտում Եվրոպական դատարանի կողմից ձևավորվել է այն սկզբունքային դրույթը, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը չի երաշխավորում սեփականություն ձեռք բերելու իրավունքը: Տվյալ հոդվածի խախտում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ հանրային իշխանության վիճարկվող որոշումները վերաբերում են անձի «սեփականությանը»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Այս իմաստով «սե-

փականություն» կարող է համարվել ինչպես «գոյություն ունեցող գույքը», այնպես էլ այն ակտիվները, ներառյալ՝ պահանջները, որոնց վերաբերյալ անձը կարող է հիմնավոր կերպով պնդել, որ ինքն ունի այդ գույքային իրավունքներն արդյունավետ իրացնելու առնվազն «օրինական սպասելիք»։ Իսկ այնպիսի գույքային իրավունքի ճանաչման հույսը, որը հնարավոր չի եղել արդյունավետորեն իրացնել, կամ որոշակի պայմանի չկատարման արդյունքում ուժը կորցրած պահանջը չի կարող դիտարկվել որպես «սեփականություն»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (*յրևու Kopecký v. Slovakia գործով Եվրոպական դատարանի (Մեծ պալատ) 28.09.2004 թվականի վճիռը, 35-րդ կետ*)։

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի (բնակելի տների և այլ շինությունների բնակելի տարածությունների) սեփականաշնորհման հիմնական դրույթները սահմանվում էին 10.06.1993 թվականին ընդունված և 01.09.1993 թվականից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով (սկզբնական վերտառությամբ՝ «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենք), որն ուժը կորցրել է 04.01.2007 թվականից։

«Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 04.01.2007 թվականից) 11-րդ հոդվածի համաձայն՝ բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը կատարվում է նույն օրենքով սահմանված կարգով՝ համայնքների ղեկավարների (...) կողմից՝ իրենց իրավասության սահմաններում։ Համայնքների ղեկավարներն իրականացնում են համայնքի բնակարանային ֆոնդի, համայնքների վարչական սահմաններում տեղաբաշխված գերատեսչական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը (...)։

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների (բնակելի տարածությունների) սեփականաշնորհումը կատարվում է տվյալ բնակարանի վարձակալի կողմից համապատասխան համայնքի ղեկավարին (...) հասցեագրված դիմումի հիման վրա՝ նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում։

Նույն օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումն իրականացվում է մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը։ Սահմանված ժամկետում չսեփականաշնորհված բնակարանները հանձնվում են համայնքներին և տնօրինվում օրենքով սահմանված կարգով։ Մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանված կարգով տրված դիմումների հիման վրա բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումն իրականացվում է առանց ժամկետի սահմանափակման։

Վկայակոչված իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 04.01.2007 թվականից ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը սահմանել էր, որ համայնքի բնակարանային ֆոնդի, համայնքների վարչական սահմաններում տեղաբաշխված գերատեսչական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը կատարվում էր համայնքի ղեկավարի կողմից՝ բնակարանի վարձակալի կողմից ներկայացված դիմումի հիման վրա։ Ընդ որում, բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման գործընթացը դիտարկելով որպես անցումային հասարակական հարաբերություն՝ օրենսդիրն այդ գործընթացի համար սահմանել էր

վերջնաժամկետ, այն է՝ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդերում ընդգրկված բնակարանի սեփականաշնորհման դիմումը պետք է ներկայացվեր համայնքի ղեկավարին մինչև 31.12.1998 թվականը: Նշված պայմանի խախտման (չպահպանման) իրավական հետևանքն այն է, որ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդերում ընդգրկված բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ համայնքի ղեկավարին մինչև 31.12.1998 թվականը համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում տվյալ բնակարանը հանձնվում էր համայնքներին և տնօրինվում օրենքով սահմանված կարգով:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի՝ Եվրոպական դատարանի կողմից կատարված վերոգրյալ մեկնաբանությունները, ինչպես նաև 04.01.2007 թվականից ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի վկայակոչված իրավակարգավորումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով վիճարկվող՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության կազմման պահին Վիլսոն Թորոյանը չի ունեցել Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու «օրինական սպասելիք»:

Այսպես, սույն գործում առկա չէ որևէ փաստական տվյալ այն մասին, որ Վիլսոն Թորոյանը 04.01.2007 թվականից ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում (մինչև 31.12.1998 թվականը) դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի և Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կոմայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի հիման վրա Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի սեփականաշնորհման խնդրանքով: Իսկ 04.01.2007 թվականից ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում (մինչև 31.12.1998 թվականը) նշված բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ Գյումրի համայնքի ղեկավարին դիմում չներկայացնելու պայմաններում Վիլսոն Թորոյանը գրկվել է այդ անշարժ գույքի նկատմամբ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման գործընթացի շրջանակներում սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունից:

Այսպիսով, պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման գործընթացի շրջանակներում Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ Վիլսոն Թորոյանի կողմից սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունը վերացել է օրենքով սահմանված որոշակի պայմանի (մինչև 31.12.1998 թվականը Գյումրի համայնքի ղեկավարին համապատասխան դիմում ներկայացնելը) չկատարման արդյունքում: Ընդ որում, նշված պայմանի չպահպանման պարագայում Գյումրի համայնքը կարող էր տնօրինել Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ Վիլսոն Թորոյանի կողմից սեփականության իրավունք ձեռք բերելու հնարավորությունը:

նիքի անդամներին հատկացված բնակարանը՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի և Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կոմայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի հիման վրա Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ սույն գործով վիճարկվող՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության կազմման պահին Վիլսոն Թորոյանը չի ունեցել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող որևէ գույքային իրավունք՝ այդ բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու «օրինական սպասելիքի» տեսքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործկոմի բնակարանային վարչության 26.09.1964 թվականի թիվ 61 օրդերի և Գյումրու քաղաքապետարանի՝ ի դեմս «Կոմայրի» արգելոց թանգարանի տնօրեն Պարույր Զաքարյանի, ու Վիլսոն Թորոյանի միջև 01.04.2002 թվականին կնքված թիվ 1 պայմանագրի հիման վրա Գյումրի քաղաքի Գորկու փողոցի 30-րդ շենքում Վիլսոն Թորոյանին և նրա ընտանիքի անդամներին հատկացված բնակարանի նկատմամբ սույն գործով վիճարկվող՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրության կազմման պահին Վիլսոն Թորոյանը չի ունեցել որևէ գույքային իրավունք, նյութական շահ կամ պահանջի իրավունք, որը կարող էր պաշտպանվել Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ուժով: Նման պայմաններում Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի առումով Վիլսոն Թորոյանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում «շահագրգիռ անձ», քանի որ նշված արձանագրությունը չի առնչվում Վիլսոն Թորոյանի իրավունքներին ու օրինական շահերին:

Վճռաբեկ դատարանն ավելորդ չի համարում վկայակոչել նաև իր նախկին որոշումներից մեկում արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ աճուրդն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու համար շահագրգիռ անձ կարող է լինել աճուրդի մասնակիցը, ինչպես նաև աճուրդի մասնակից չհանդիսացող, սակայն աճուրդում առաջարկվող գույքի նկատմամբ գրանցված սեփականության կամ օգտագործման իրավունքներ ունեցող անձը (յրեն «Սպիտակ լիճ» արտադրական կոոպերատիվն ընդդեմ Բջևանի քաղաքապետարանի թիվ ՎՊ2/0159/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վիլսոն Թորոյանը չունի իրավական շահագրգռվածություն՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան դիմելու համար, և վերջինիս հայցն այդ մասով ենթակա է մերժման, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով նկատի ունենալով, որ Սվետլանա Վերդոյանը վճռաբեկ բողոք ներկայացնելիս վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վիլսոն Թորոյանից հօգուտ

Սվետլանա Վերդոյանի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.03.2017 թվականի որոշման՝ Գյումրու քաղաքապետարանի «Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի (օբյեկտի) աճուրդով օտարման մասին» 28.07.2006 թվականի թիվ 5/1 արձանագրությունը մասնակիորեն վերացնելու պահանջը բավարարելու մասը և այդ պահանջի մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.04.2016 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով: Որոշումը՝ մնացած մասով, թողնել անփոփոխ:

2. Վիլսոն Թորոյանից հոգուտ Սվետլանա Վերդոյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/9420/05/13

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/9420/05/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԻՍՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նորիկ Տեր-Գրիգորյանի ներկայացուցիչ Գևորգ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նորիկ Տեր-Գրիգորյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք Արթուր Միրզոյանի, Գեղեցիկ Գաբրիելյանի, Էդգար Սողոմոնյանի, Անդրանիկ Սողոմոնյանի, Հովհաննես Սողոմոնյանի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և իրավունքի գրանցումը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Նորիկ Տեր-Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, և որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ պարտավորեցնել Կադաստրին՝ վերականգնելու Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) 22.10.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (դատավորներ՝ Ք. Մկոյան, Ա. Առաքելյան, Գ. Ղարիբյան) 04.06.2015 թվականի որոշմամբ Նորիկ Տեր-Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 22.10.2014 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 13.01.2016 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2016 թվականի որոշմամբ Նորիկ Տեր-Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 13.01.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նորիկ Տեր-Գրիգորյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել երրորդ անձ Հովհաննես Սողոմոնյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումն ինքնին և առանձին վերցրած չի հանդիսանում վարչարարություն: Սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը գործողություն է՝ ուղղված վարչական ակտ ընդունելուն (նախկին գրանցումը վերականգնելուն կամ նոր գրանցում կատարելուն): Հետևաբար վիճելի վարչական ակտը՝ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն ընդունվել է չեղարկման արդյունքում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն պարագայում որևէ դատական ակտ չի պարունակել դրույթ Նորիկ Տեր-Գրիգորյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ կատարված իրավունքի պետական գրանցումը կամ դրա համար հիմք հանդիսացած առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին: Հետևաբար Հովհաննես Սողոմոնյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2016 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանն իրականացրել է սույն գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննություն՝ արդյունքում կայացնելով հիմնավոր և պատճառաբանված որոշում: Հայցվորը չի ներկայացրել որևէ հիմնավորում և վերաբերելի ապացույց, որոնք կարող են հաստատել Կադաստրի կողմից կատարված պետական գրանցման ոչ իրավաչափ լինելը: Ընդհակառակը՝ սույն գործում առկա տվյալներով հիմնավորվում է, որ Կադաստրը Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքը գրանցել է բացառապես օրինական հիմքերով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կադաստրի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) 02.12.2002 թվականի թիվ 587674 վկայականի համաձայն՝ Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ պետ. նոտարի 10.05.1991 թվականի թիվ 1057 վաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Անդրանիկ Սողոմոնյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 18-19**).

2) 01.11.2008 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Անդրանիկ Սողոմոնյանը, այսուհետ՝ «Վաճառող» և Արթուր Միրզոյանը, այսուհետ՝ «Գնորդ» կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Արթուր Միրզոյանը ձեռք է բերել Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 հասցեի բնակարանը (**հատոր 2-րդ, գ.թ. 18-19**).

3) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) 06.11.2008 թվականի թիվ 2582457 վկայականի համաձայն՝ Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ նոտարի 01.11.2008 թվականի թիվ 4567 առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Արթուր Միրզոյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 53-55**).

4) 18.02.2010 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Արթուր Միրզոյանը, այսուհետ՝ «Վաճառող» և Նորիկ Տեր-Գրիգորյանը, այսուհետ՝ «Գնորդ» կնքել են անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով Նորիկ Տեր-Գրիգորյանը ձեռք է բերել Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 հասցեի բնակարանը (**հատոր 1-ին, գ.թ. 56-57**).

5) Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի 25.02.2010 թվականի թիվ 2741877 վկայականի համաձայն՝ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ նոտարի 18.02.2010 թվականի թիվ 6612 առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 58-60**).

6) Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով դատարանը վճռել է. «Հայրը բավարարել մասնակի.

1. Անդրանիկ Սողոմոնյանի և Արթուր Միրզոյանի միջև **01.11.2008 թվականին** կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը որպես շինծու գործարք ճանաչել առաջին և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել Արթուր Միրզոյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: 2. Արթուր Միրզոյանի և Նորիկ Տեր-Գրիգորյանի միջև **18.02.2010 թվականին** կնքված անշարժ գույքի առուվաճառք-

քի պայմանագրերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին» մերժվել է, որպիսի հանգամանքը վերաբերում է նաև թիվ ԵՄԴ/0348/02/11 կատարողական թերթին: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով կայացված վճիռը՝ մնացած մասով, թողնվել է օրինական ուժի մեջ» (հատոր 2-րդ, գ.թ. 23-25)։

9) Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 17.07.2013 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցն ընդդեմ Հովհաննես Սողոմոնյանի, Գեղեցիկ Գաբրիելյանի, Էդգար Սողոմոնյանի, Անդրանիկ Սողոմոնյանի՝ Երևանի Բաբաջանյան փողոցի 103 շենքի թիվ 22 բնակարանից վտարելու պահանջի մասին, բավարարվել է, ինչի արդյունքում 24.08.2013 թվականին թիվ ԵՄԴ/0835/02/10 քաղաքացիական գործով տրվել են կատարողական թերթեր (հատոր 1-ին, գ.թ. 86-89)։

10) Ի պատասխան Հովհաննես Սողոմոնյանի 27.08.2013 թվականի թիվ 2-0260 դիմումի՝ Կադաստրի կոդից 30.08.2013 թվականին տրվել է թիվ ԱՏ-27/08/2013-2-0260 տեղեկանքը, ըստ որի՝ «Բաբաջանյան փողոցի 103 շենքի թիվ 22 բնակարանի հասցեի անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցված է եղել Նորիկ Տեր-Գրիգորյանի անվամբ, սակայն համաձայն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2011 թվականի վճիռների, անվավեր են ճանաչվել իրավունքների պետական գրանցումները, անվավեր են ճանաչվել նաև Անդրանիկ Սողոմոնյանի և Արթուր Միրզոյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը, որը դիտվել է որպես գրավի պայմանագիր, որտեղ որպես գրավատու է ճանաչվել Անդրանիկ Սողոմոնյանը» (հատոր 2-րդ, գ.թ. 42)։

11) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 25.09.2013 թվականին Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ գրանցվել է Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքը: Գրանցման հիմքում դրվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի թիվ ԵՄԴ/0348/02/11 վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2011 թվականի թիվ ԵՄԴ/0348/02/11 որոշումը, 19.09.2013 թվականի թիվ 9940 և թիվ 9941 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (հատոր 1-ին, գ.թ. 97-98)։

12) Կադաստրի 03.10.2013 թվականի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ԱՏ-02/10/2013-2-0008 տեղեկանքի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանի թիվ 02/10/2013-2-0008 դիմումի հիման վրա հայտնվել է, որ դիմումի և կադաստրային գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ 25.09.2013 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը ճիշտ է և բխում է օրենսդրության պահանջներից, որի գրանցման հիմք են հանդիսացել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի թիվ ԵՄԴ/0348/02/11 վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2011 թվականի թիվ ԵՄԴ/0348/02/11 որոշումը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2013 թվականի որոշումը, 19.09.2013 թվականի թիվ 9940 և 9941 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը (հատոր

1-ին, գ.թ. 99):

4. Վճռաբեկ դատարանի պարզապարզությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումից հետո այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր պետական գրանցման իրավաչափության գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

-արդյո՞ք անշարժ գույքի սեփականության իրավունքի նոր գրանցման նպատակով կատարված սեփականության իրավունքի գործող պետական գրանցման չեղարկումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է վարչական ակտ:

-արդյո՞ք առկա են եղել խնդրո առարկա բնակարանի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցման դադարման հիմքերը, այն դեպքում, երբ դրա հիմքում ընկած գործարքն անվավեր ճանաչելու հայցապահանջը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մերժվել է:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը նախ անհրաժեշտ է համարում անդրադառնալ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման իրավաբանական բնույթին ու նշանակությանը՝ հարցը դիտարկելով այն տեսանկյունից, թե արդյո՞ք սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը վարչական ակտ է, թե՛ ոչ:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում **կոնկրետ գործի կարգավորման նպատակով**, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված վարչական ակտի հասկացության վերլուծությանը՝ արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

7) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակ-

տերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հատակորեն որոշված հասցեատեր,

8) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

9) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

10) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

11) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

12) վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար:

Ընդ որում թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*տես, Վարդիթեր Ավոյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման իրավաբանական բնույթի, բովանդակության, ինչպես նաև դրա ընթացակարգի հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, որը սահմանում է գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրա-

վունքի դադարման պետական գրանցումն իրականացվում է գրանցված իրավունքի պետական գրանցումը չեղարկելու միջոցով, գրանցման մատյանում իրավունքի դադարման վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելով:

Նույն օրենքի՝ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի կամ դրա որևէ մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը **համարվում է չեղարկված՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից:** Սեփականության իրավունքի գործող պետական գրանցումն առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման կարող է չեղարկվել գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա՝ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ նախատեսված է եղել, որ սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարում է այդ պետական գրանցումը չեղարկելու միջոցով՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից: Այսինքն՝ մինչև 14.11.2016 թվականը գործող օրենսդրության համաձայն՝ սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկումը վրա է հասնում այն պահին, երբ կատարվում է այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր պետական գրանցում: Սա նշանակում է, որ գույքի նկատմամբ անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը չէր կարող չեղարկվել, եթե դրան չէր հաջորդելու այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի նոր պետական գրանցում: **Այլ կերպ ասած, որպես կանոն, գույքի սեփականատիրոջ փոփոխության դեպքում այդ գույքի նկատմամբ նախկին սեփականատիրոջ իրավունքը չեղարկվում էր, իսկ նոր սեփականատիրոջ իրավունքը գրանցվում էր միաժամանակ՝ մեկ վարչական վարույթի շրջանակներում: Հակառակ պարագայում միննույն հարցի վերաբերյալ կարող էր գոյություն ունենալ վարչական մարմնի կողմից ընդունված երկու վարչական ակտ:**

Նշված ընդհանուր կանոնից օրենսդիրը մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում կատարել էր մեկ բացառություն. այն է՝ սեփականության իրավունքի գործող պետական գրանցումը կարող էր չեղարկվել **առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման** միայն այն դեպքում, երբ դա կատարվում էր գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող **դատական ակտի հիման վրա:** Փաստորեն, մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը նախատեսում էր որևէ անձի մոտ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դատական ակտի հիման վրա դադարելու դեպքում այդ անձի սեփականության իրավունքի չեղարկման հնարավորություն՝ առանց տվյալ գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի պետական գրանցման: Ընդ որում, տվյալ դեպքում առանց սեփականության իրավունքի նոր պետական գրանցման դատական ակտի հիման վրա դադարած սեփականության իրավունքի պետական գրանցումը չեղարկելու վերաբերյալ իրավասու վարչական մարմին կարող էին դիմել բոլոր շահագրգիռ անձինք, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող համապատասխան մարմինը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 14.11.2016 թվականը գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման գործող սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման երկու ռեժիմ՝ 1) դատական ակտի հիման վրա՝ առանց մինչ այդ տեղի ունեցած իրավաբանական փաստերի ուժով նոր պետական գրանցում կատարելու անհրաժեշտության և 2) մինչ այդ տեղի ունեցած իրավաբանական փաստերի հիման վրա իրավունքի նոր պետական գրանցում կատարելու նպատակով: Ընդ որում, երբ բացակայում է իրավունքի նոր պետական գրանցման անհրաժեշտությունը, վարչական մարմնի տվյալ ակտը վերջնականապես կարգավորում է կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցը (դադարում է կոնկրետ անձի սեփականության իրավունքը), հետևաբար այդ պարագայում այն իրավադադարեցնող վարչական ակտ է: Մինչդեռ երբ իրավունքի գրանցման չեղարկումը կատարվում է նոր պետական գրանցում իրականացնելու նպատակով, իրավունքի չեղարկումն ինքնին դեռևս ամբողջությամբ չի կարգավորում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցը, այլ այդ հարցը վերջնականապես կարգավորվում է միայն իրավունքի նոր պետական գրանցմամբ, հետևաբար այդ պայմաններում իրավունքի պետական գրանցումը չեղարկելը չի համապատասխանում վարչական ակտի այն հատկանիշին, որ այն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այսինքն՝ կոնկրետ անձին առնչվող գործը չի կարող համարվել կարգավորված, քանի դեռ չի կատարվել իրավունքի նոր պետական գրանցումը: Նման պայմաններում վարչական ակտ է հանդիսանում իրավունքի նոր պետական գրանցումը, քանի որ դրանով է ավարտվում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ գործի կարգավորումը, իսկ իրավունքի պետական գրանցման չեղարկումը հանդես է գալիս իբրև ընթացիկ գործողություն, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը, այն է՝ հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ անձին առնչվող գործի կարգավորմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը ներկայացնելու պահին գործել է 28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, որն ուժը կորցրել է 07.01.2014 թվականին, իսկ գործի քննությունն իրականացվել է 05.12.2013 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, որն ուժի մեջ է մտել 07.01.2014 թվականին:

28.11.2007 թվականի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող էր պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

07.01.2014 թվականից ուժի մեջ մտած և ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման

կամ սխալ մեկնաբանման հետևանքով, ք) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վարչական դատավարությունում վիճարկման հայցի՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոցի բովանդակությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն դիրքորոշումը, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*յրեն, Սամվել Մելքոնյանի ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԳ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ վարչական ակտը վիճարկման հայցի շրջանակներում կարող է անվավեր ճանաչվել, եթե հաստատվի հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (*յրեն, Սվետլանա Օհանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/0909/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Այսպիսով, թե՛ 28.11.2007 թվականի, և թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկման հայցի մերժման կամ բավարարման հարցը լուծելիս դատարանը, մասնավորապես, պետք է պարզի, թե պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում հաստատվել է արդյո՞ք այն հանգամանքը, որ իրավունքի գրանցում հայցող անձն ունի կոնկրետ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, որը ենթակա է եղել պետական գրանցման՝ ըստ ներկայացված (վարույթի ընթացքում ձեռք բերված) իրավահաստատող փաստաթղթերի և այլ ապացույցների:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի հաշվառմամբ Դատարանը մերժել է Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելիս Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն արդեն իսկ չեղարկված է եղել, իսկ Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքի գրանցումը մերժելու հիմքերը բացակայել են:

Վերաքննիչ դատարանը մերժել է Նորիկ Տեր-Գրիգորյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ ըստ էության համաձայնելով Դատարանի նշված դիրքորոշման հետ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափությունը ենթակա է գնահատման բացառապես այդ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցների շրջանակներում: Տվյալ դեպքում, մասնավորապես, սեփականության իրավունքի վիճարկվող պետական գրանցման իրավաչափությունը որոշելու համար էական նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք պետական գրանցման վարչական վարույթի ընթացքում հաստատվել է, որ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա էր պետական գրանցման Հովհաննես Սողոմոնյանի անվամբ՝ ըստ ներկայացված (վարույթի ընթացքում ձեռք բերված) իրավահաստատող փաստաթղթերի և այլ ապացույցների:

Վերոգրյալ հաշվառմամբ անդրադառնալով սույն գործով վիճարկվող վարչական ակտի՝ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման պահին նշված անշարժ գույքի նկատմամբ որևէ անձի սեփականության իրավունք գրանցված չէր, քանի որ այդ անշարժ գույքի նախկին սեփականատիրոջ՝ Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը չեղարկվել էր 26.08.2013 թվականին՝ սեփականության իրավունքի նոր պետական գրանցում կատարելու նպատակով: Դրա ապացույցն են հանդիսանում սույն գործի փաստերը, որոնցից հետևում է, որ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցման՝ 26.08.2013 թվականին կատարված չեղարկման և 25.09.2013 թվականին կատարված Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքում ընկած են մինևսույն դատական ակտերը՝ թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի

08.09.2011 թվականի վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2011 թվականի որոշումը և Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2013 թվականի «Կատարողական թերթի պարզաբանման մասին» որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցման համար հիմք է հանդիսացել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵՄԴ/0348/02/11 որոշումը, կատարողական թերթի պարզաբանման մասին որոշումը, որոնցից երկուսով էլ սահմանված է՝ «Հովհաննես Սողոմոնյանի հայցապահանջը **2008 թվականի նոյեմբերի 01-ի և 2010 թվականի փետրվարի 18-ի** առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին, մերժել»:

Այսինքն՝ **18.02.2010 թվականի** պայմանագրով Նորիկ Տեր-Գրիգորյանը հանդիսացել է վիճելի բնակարանի գնորդ, իսկ տվյալ պայմանագրի հիման վրա **25.02.2010 թվականին** կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Նշված դատական ակտերի հարկադիր կատարման փուլում ծագած անհստակությունները հարթելու նպատակով հարկադիր կատարողը դիմել է կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու խնդրանքով: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը 02.05.2013 թվականին կայացրած «Կատարողական թերթի պարզաբանման մասին» որոշմամբ բավարարել է հարկադիր կատարողի դիմումը և պարզաբանել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.11.2011 թվականի որոշմամբ փոփոխվել է միայն Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի վճիռի 3-րդ կետը, իսկ մնացած մասով նշված վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Փաստորեն, նշված դատական ակտում սահմանելով թեկուզ և 3-րդ կետի փոփոխվելու մասին դրույթ, այն է՝

«Հովհաննես Սողոմոնյանի հայցապահանջը **2008 թվականի նոյեմբերի 01-ի և 2010 թվականի փետրվարի 18-ի** առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին, մերժել», ապա հստակ է, որ Նորիկ Տեր-Գրիգորյանի կողմից անշարժ գույք ձեռք բերելու 2010 թվականի փետրվարի 18-ի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու որևէ հիմք բացակայել է: Հետևաբար, ակնհայտ է, որ անվավեր ճանաչված չլինելով Նորիկ Տեր-Գրիգորյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը, վերջինիս սեփականության իրավունքի գրանցումը չէր կարող ի չիք դառնալ: Մինևույն ժամանակ պարզաբանման որոշմամբ, վճիռի 3-րդ կետն ակնհայտ հակասության մեջ է վճռի 1-ին և 2-րդ կետերի հետ, քանի որ չէին կարող 1-ին և 2-րդ կետերով բավարարվել գործարքները առոչինչ ճանաչելու վերաբերյալ պահանջները (ի դեպ՝ սույն գործով նման պահանջներ ներկայացված էլ չեն եղել), իսկ 3-րդ կետով ընդհակառակը՝ այդ պահանջները մերժվել: Այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշման ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2011 թվականի վճիռ՝ բավարարված մասը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերցվել է չակերտների մեջ և հստակ նշվել է այդ մասի բեկանման, փոփոխման և հայցի մերժման մասին:

Հիմք ընդունելով թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով վերոգրյալ զարգացումները՝ Կադաստրը հարկադիր կատարողի դիմումի հիման վրա չեղարկել է Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ Նորիկ Տեր-Գրիգորյանի

սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ խաթարելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պահանջները: Այլ կերպ՝ Կադաստրը թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերի բովանդակությունն ընկալել է այլ կերպ, քան այն արտացոլված է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵՄԴ/0348/02/11 որոշմամբ, Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 02.05.2013 թվականին կայացված «Կատարողական թերթի պարզաբանման մասին» որոշմամբ, որոնք օրինական ուժի մեջ գտնվող վերջնական դատական ակտեր են և պարտադիր են կատարման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ թիվ ԵՄԴ/0348/02/11 քաղաքացիական գործով կայացված դատական ակտերը չէին կարող դրվել Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքում, քանի որ այն պայմաններում, երբ հայցվորի սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած գործարքը դատական կարգով անվավեր չի ճանաչվել և այդ ակտի դեմ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ չընդունվելու հիմքով մտել է օրինական ուժի մեջ, այդպիսի դատական ակտի առկայության պայմաններում բացակայել է Կադաստրի կողմից հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցման չեղարկման և նոր գրանցումն իրականացնելու իրավական հիմքը:

Վերը կատարված իրավական վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Նորիկ Տեր-Գրիգորյանի իրավունքի պետական գրանցման չեղարկումը չի հանդիսացել վարչական ակտ, քանի որ այն կատարվել է Հովհաննես Սողոմոնյանի անվամբ նոր պետական գրանցում կատարելու նպատակով, ինչը հաստատվում է վերջինիս կատարած հետագա գործողություններով, հետևաբար Նորիկ Տեր-Գրիգորյանը պարտավոր չէր որպես առանձին վարչական ակտ վիճարկել իր իրավունքի պետական գրանցման չեղարկումը: Ընդ որում, տվյալ դեպքում էական նշանակություն չի կարող ունենալ այն հանգամանքը, որ Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքի նոր գրանցումը տեղի է ունեցել Նորիկ Տեր-Գրիգորյանի գրանցված սեփականության իրավունքի չեղարկումից շուրջ մեկ ամիս անց, այլ էական նշանակություն ունի այն, որ գրանցման չեղարկմամբ վարչական վարույթը չի ավարտվել, **քանի որ վարչական մարմինը նպատակ է հետապնդել կատարելու սեփականության իրավունքի նոր գրանցում:**

Անդրադառնալով Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականին կատարված սեփականության իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած՝ Հովհաննես Սողոմոնյանի սեփականության իրավունքի իրավահաստատող փաստաթղթերին՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 19.09.2013 թվականին տրամադրված թիվ 9940 և թիվ 9941 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես իրավահաստատող փաստաթուղթ ժառանգության իրավունքի վկայագիրը հավաստում է ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ ժառանգին փոխանցվող իրավունքը և հիմք չէ **ժառանգատու չհանդիսացող այլ անձի** պատկանող սեփականության իրավունքի դադարեցման համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաս-

տական վերլուծությունները, հանգում է այն եզրակացության, որ Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքերը բացակայել են և գրանցման վարությամբ Կադաստրը թույլ է տվել ՀՀ օրենսդրության խախտումներ: Հետևաբար Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ 25.09.2013 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումը ոչ իրավաչափ վարչական ակտ է և ենթակա է անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Նման պայմաններում Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ Նորիկ Տեր-Գրիգորյանի կողմից ներկայացված պահանջը ենթակա է բավարարման, ինչն էլ իր հերթին հանգեցնում է դրանից ածանցյալ՝ Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը վերականգնելուն Կադաստրին պարտավորեցնելու պահանջի բավարարմանը:

Նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը քննադատելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսե-

րից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտը ենթակա է փոփոխման, իսկ Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցը՝ բավարարման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, գտնում է, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում ներկայացնելու և ՀՀ վարչական դատարանի 11.11.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքներ ներկայացնելու և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի և 10.03.2016 թվականի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.05.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2016 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել: Անվավեր ճանաչել Հովհաննես Սողոմոնյանի անվամբ Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և պարտավորեցնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ վերականգնել Նորիկ Տեր-Գրիգորյանի սեփականության իրավունքը Երևանի Բաբաջանյան փողոցի 103-րդ շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ:

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար սահմանված և ՀՀ վարչական դատարանի 11.11.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ՀՀ

պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.12.2014 թվականի և 10.03.2016 թվականի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 10.05.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3580/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/3580/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.01.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Հնկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Հնկերությունը պահանջել է վերացնել Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 22.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Հովհաննես Արտադյանի, Արտյոմ Ղուշչյանի, Արտակ Գասպարյանի, Արմեն Խաչատրյանի, Գեղամ Խաչատրյանի, Ջենմա Թադևոսյանի, Տիգրան Սարգսյանի, Վաղարշակ Բավիկյանի, Նոյ Եղիգարյանի, Թերեզա Մուրադյանի, Իշխան Ստեփանյանի, Գևորգ Մարտիրոսյանի, Վարդգես (Վարդկես) Պողոսյանի, Աննա Շահնազարյանի, Աննա Գրիգորյանի, Մարգարիտա Հովհաննիսյանի

նի, Գրիգոր Վանյանի, Դավիթ Հակոբյանի, Անդրանիկ Մեղրականի, Էրիկ Մակարյանի մատով Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտը ճանաչվել է անվավեր, իսկ մնացած մատով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.05.2016 թվականի որոշմամբ վերակազմակերպման հիմքով Նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Վերաքննիչ դատարանի 18.01.2017 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Դատարանի 22.03.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը և 27-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտում նշված թվով 24 չգրանցված աշխատողներից ստուգման ընթացքում վերցվել են հայտարարություններ, որոնցով հաստատվում է վերջիններիս՝ Ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու փաստը: Իսկ այդ անձանց կողմից հետագայում ներկայացված հայտարարությունները հիմք չեն ընդունվել Տեսչության կողմից, քանի որ դրանց բովանդակությունը վկայում է այն մասին, որ դրանք գրվել են Ընկերության ցուցումով ու թեկադրանքով և արժանահավատ չեն: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հովհաննես Արտաշյանը և Արտյոմ Ղուշչյանն ընդգրկված չեն եղել Ընկերության կողմից Տեսչությանը տրամադրված աշխատանքային պայմանագրերում և աշխատակիցների ցուցակում, իսկ այդ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված աշխատող հանդիսանալու փաստը հիմնավորվում է վերջիններիս կողմից 23.06.2015 թվականին տրված բացատրություններով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.01.2017 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «կայացնել նոր դատական ակտ», կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տեսչության պետի 12.06.2015 թվականի թիվ 6104700 հանձնարարագրով Տեսչության հարկային տեսուչներին հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման՝ աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 35**):

2) 23.06.2015 թվականից մինչև 06.07.2015 թվականը տևած ստուգման արդյունքում Տեսչության կողմից ընդունվել է 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտը, որի համաձայն՝ Ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց և Ընկերությունում առկա աշխատանքային պայմանագրերի (հրամանների), ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված այլ փաստաթղթերի համադրման արդյունքում հայտնաբերվել է, որ Ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղվող թվով 7 վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը չի ձևակերպվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ թվով 17 վարձու աշխատողներ տարբեր ժամանակահատվածներում առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպման աշխատել են Ընկերությունում: Նշված անձանց տվյալները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

	Աշխատողի անունը և ազգանունը	Ապօրինի աշխատած ժամանակահատվածը
1.	Անդրանիկ Սեդրակյան	ստուգման պահին (փաստացի)
2.	Արթուր Խաչատրյան	ստուգման պահին (փաստացի)
3.	Արտյոմ Ղուշյան	ստուգման պահին (փաստացի)
4.	Արտյոմ Մխիթարյան	ստուգման պահին (փաստացի)
5.	Բագրատ Մարտիրոսյան	ստուգման պահին (փաստացի)
6.	Էրիկ Մակարյան	ստուգման պահին (փաստացի)
7.	Հովհաննես Արտարյան	ստուգման պահին (փաստացի)
8.	Աննա Գրիգորյան	01.03.2015 թվականից մինչև 01.06.2015 թվականը
9.	Աննա Շահնազարյան	01.03.2015 թվականից մինչև 01.06.2015 թվականը
10.	Արմեն Խաչատրյան	2015 թվականի մարտից մինչև հունիսի 5-ը
11.	Արտակ Գասպարյան	2015 թվականի մարտից մինչև մայիսի 6-ը
12.	Գեղամ Խաչատրյան	15.04.2015 թվականից մինչև 04.05.2015 թվականը
13.	Գևորգ Մարտիրոսյան	23.05.2015 թվականից մինչև 01.06.2015 թվականը
14.	Գրիգոր Վանյան	2015 թվականի մայիսից մինչև հունիսի 4-ը
15.	Դավիթ Հակոբյան	15.05.2015 թվականից մինչև 24.06.2015 թվականը
16.	Թերեզա Մուրադյան	2015 թվականի մարտից մինչև հունիսի 15-ը
17.	Իշխան Ստեփանյան	01.05.2015 թվականից մինչև 08.06.2015 թվականը
18.	Մարգարիտա Հովհաննիսյան	2015 թվականի մայիսից մինչև հունիսի 1-ը
19.	Նոյ Եղիգարյան	20.05.2015 թվականից մինչև 10.06.2015 թվականը
20.	Ջենմա Թադևոսյան	20.05.2015 թվականից մինչև 05.06.2015 թվականը
21.	Վաղարշակ Բավիկյան	2015 թվականի ապրիլից մինչև հունիսի 8-ը
22.	Վարդգես (Վարդկես) Պողոսյան	2015 թվականի փետրվարից մինչև հունիսի 1-ը
23.	Տիգրան Սարգսյան	29.05.2015 թվականից մինչև 09.06.2015 թվականը
24.	Օքսանա Բաբուրյան	2015 թվականի մայիսից մինչև հունիսի 2-ը

Այսինքն՝ ըստ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի՝ ընդհանուր առմամբ 24 աշխատողի աշխատանքի ընդունումն Ընկերության կողմից չի ձևակերպվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Վերոգրյալի հիման վրա Ընկերության նկատմամբ եկամտային հարկի գծով առաջադրվել է 14.400.000 ՀՀ դրամի չափով լրացուցիչ հարկային պարտավորություն (յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար 600.000 ՀՀ դրամ)՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն (**հատոր 1-ին, գ.թ. 10-12**):

3) Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի անբաժանելի մասը կազմող 30.06.2015 թվականի արձանագրության մեջ նշված են ստուգման արդյունքում հայտնաբերված՝ Ընկերության կողմից աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված թվով 24 անձանց անունները, ազգանունները, աշխատանքային պարտականությունների բնույթը, անձը հաստատող փաստաթղթերի տվյալները (**հատոր 2-րդ, գ.թ. 110-112**):

4) Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերում առկա են Ընկերության թվով 14 աշխատակիցների տված հայտարարություններն այն մասին, որ իրենք թյուրիմացաբար ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ոչ դիտավորյալ կերպով տվել են սխալ տեղեկություններ Ընկերությունում աշխատելու ժամանակահատվածի վերաբերյալ: Նշված անձինք հայտնել են, որ իրականում աշխատանքի են անցել Ընկերությունում այլ օրերից սկսած, ինչը ներկայացված է հետևյալ աղյուսակում (**հատոր 1-ին, գ.թ. 55-72**).

	Աշխատողի անունը և ազգանունը	Աշխատանքի ընդունման օրը՝ ըստ հայտարարության
1.	Աննա Գրիգորյան	01.06.2015 թվական
2.	Աննա Շահնազարյան	01.06.2015 թվական
3.	Անդրանիկ Սեդրակյան	24.06.2015 թվական
4.	Արմեն Խաչատրյան	05.06.2015 թվական
5.	Արտակ Գասպարյան	06.05.2015 թվական
6.	Գեղամ Խաչատրյան	04.05.2015 թվական
7.	Գևորգ Մարտիրոսյան	01.06.2015 թվական
8.	Թերեզա Մուրադյան	15.06.2015 թվական
9.	Իշխան Ստեփանյան	08.06.2015 թվական
10.	Նոյ Եղիգարյան	10.06.2015 թվական
11.	Ջենմա Թադևոսյան	05.06.2015 թվական
12.	Վաղարշակ Բավիկյան	08.06.2015 թվական
13.	Վարդգես (Վարդկես) Պողոսյան	01.06.2015 թվական
14.	Տիգրան Սարգսյան	09.06.2015 թվական

5) Ընկերության կողմից կնքված աշխատանքային պայմանագրերի կամ աշխատանքի ընդունման մասին հրամանների համաձայն՝ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտում որպես օրենքով սահմանված կարգով չձևակերպված աշխատող նշված

անձինք Ընկերությունում օրենքով սահմանված կարգով աշխատանքի են ընդունվել հետևյալ օրերին (**հատոր 2-րդ, գ.թ. 8-54, 59-75**).

	Աշխատողի անունը և ազգանունը	Աշխատանքի ընդունվելու օրը
1.	Անդրանիկ Սեդրակյան	24.06.2015 թվական
2.	Արտյոմ Դուշյան	10.06.2015 թվական
3.	Հովհաննես Արտաբյան	10.06.2015 թվական
4.	Աննա Գրիգորյան	01.06.2015 թվական
5.	Աննա Շահնազարյան	01.06.2015 թվական
6.	Արմեն Խաչատրյան	05.06.2015 թվական
7.	Արտակ Գասպարյան	06.05.2015 թվական
8.	Գեղամ Խաչատրյան	04.05.2015 թվական
9.	Գևորգ Մարտիրոսյան	01.06.2015 թվական
10.	Թերեզա Մուրադյան	15.06.2015 թվական
11.	Իշխան Ստեփանյան	08.06.2015 թվական
12.	Նոյ Եղիգարյան	10.06.2015 թվական
13.	Ջենմա Թադևոսյան	05.06.2015 թվական
14.	Վաղարշակ Բավիկյան	08.06.2015 թվական
15.	Վարդգես (Վարդկես) Պողոսյան	01.06.2015 թվական
16.	Տիգրան Սարգսյան	09.06.2015 թվական

6) Ընկերության և Մարգարիտա Հովհաննիսյանի միջև 01.06.2015 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է 3 ամսվա ընթացքում Ընկերությանը մատուցել ժամանցային ծրագրի ընթացքում երգեր կատարելու ծառայություններ (**հատոր 2-րդ, գ.թ. 55**):

7) Ընկերության և Գրիգոր Վանյանի միջև 04.06.2015 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է 3 ամսվա ընթացքում Ընկերությանը մատուցել ժամանցային ծրագրի ընթացքում որպես երաժիշտ հանդես գալու ծառայություններ (**հատոր 2-րդ, գ.թ. 56**):

8) Ընկերության և Դավիթ Հակոբյանի միջև 24.06.2015 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է 3 ամսվա ընթացքում Ընկերությանը մատուցել ժամանցային ծրագրի ընթացքում երգեր կատարելու ծառայություններ (**հատոր 2-րդ, գ.թ. 58**):

9) Ընկերության և Էրիկ Մակարյանի միջև 01.07.2015 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավորվել է 3 ամսվա ընթացքում Ընկերությանը մատուցել ժամանցային ծրագրի ընթացքում երգեր կատարելու ծառայություններ (**հատոր 2-րդ, գ.թ. 76**):

10) Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի ընդունմանն ուղղ-

ված վարչական վարույթի նյութերում առկա են Մարգարիտա Հովհաննիսյանի, Գրիգոր Վանյանի, Դավիթ Հակոբյանի և Էրիկ Մակարյանի հայտարարություններն այն մասին, որ իրենք Ընկերության հետ գտնվել են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ և Ընկերությանը մատուցել են երաժշտական բնույթի ծառայություններ (**հատոր 1-ին, գ.թ. 58, 70-72**):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատականությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու համար լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման նախադրյալների և ընթացակարգի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) *կարո՞ղ է արդյոք աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ առաջադրվել օրենքով սահմանված լրացուցիչ հարկային պարտավորություն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտի և որպես չձևակերպված վարձու աշխատող դիրարկվող անձի միջև գոյություն ունեն ոչ թե աշխատանքային, այլ քաղաքացիական իրավահարաբերություններ,*

2) *աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտը կարո՞ղ է արդյոք իրավաչափ համարվել այն պայմաններում, երբ վարչական մարմինը խախտել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու իր պարտականությունը:*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անօրինական է համարվում այն աշխատանքը, որն իրականացվում է առանց աշխատանքային օրենսդրու-

թյամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 22.12.2010 թվականին, ուժի մեջ է մտել 01.01.2013 թվականին, ուժը կորցրել է 01.01.2018 թվականին՝ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն) 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (...) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ՝

ա. 60.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը մեկից երեք է,

բ. 150.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը չորսից վեց է,

գ. 300.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը յոթից ինն է,

դ. 600.000 դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների քանակը գերազանցում է ինը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստուգումների հետ կապված վարույթի նկատմամբ կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները, փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունների ծագման համար օրենսդիրը նախատեսել է հետևյալ հիմքերը. (1) գրավոր աշխատանքային պայմանագիր կամ (2) աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունների ծագման վերոգրյալ հիմքերից որևէ մեկի բացակայության դեպքում իրականացվող աշխատանքը համարվում է անօրինական: Փաստորեն, օրենսդրի տեսանկյունից՝ առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի իրականացվող աշխատանքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում որակվում է որպես անօրինական աշխատանք, որը գործատուի համար առաջացնում է իրավահարաբերության

ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ֆիզիկական անձինք որևէ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) հետ կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա վերջինիս համար կատարում են աշխատանք կամ մատուցում են ծառայություններ, որոնք որոշակի ընդհանրություններ ունեն աշխատանքային հարաբերությունների հետ, սակայն նրանց միջև առկա հարաբերություններն իրականում կրում են ոչ թե աշխատանքային, այլ՝ քաղաքացիաիրավական բնույթ: Այդ իսկ պատճառով իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավադրույթի կիրառության համար գործնականում էական նշանակություն ունի աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերությունների հստակ տարանջատման հարցը: Նշված հարցի կարևորությունն այն է, որ անձին որպես որևէ կազմակերպությունում (տնտեսավարող սուբյեկտում) օրենքով սահմանված կարգով չձևակերպված աշխատող համարելու և դրա հիման վրա իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անբարենպաստ հետևանքների առաջացման կարևորագույն նախադրյալն այդ անձի և տվյալ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) միջև աշխատանքային հարաբերությունների փաստացի առկայությունն է: Այսինքն՝ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) նկատմամբ նշված իրավադրույթի ուժով եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ որպես այդ կազմակերպությունում չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձն իրականում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ աշխատանքային իրավահարաբերություններն աշխատանքային պայմանագրի հիման վրա ծագող հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են ֆիզիկական անձանց վարձու աշխատանքի կազմակերպման, կիրառման և պաշտպանության հետ: Աշխատանքային իրավահարաբերությունները տարբերվում են քաղաքացիաիրավական հարաբերություններից հետևյալ հիմնական առանձնահատկություններով.

1) աշխատանքային հարաբերություններում, որպես կանոն, վարձու աշխատողն ընդգրկվում է կազմակերպության աշխատանքային կոլեկտիվ և անձնական աշխատանքով մասնակցում է նրա գործունեությանը,

2) աշխատանքային իրավահարաբերության առարկան որոշակի տեսակի աշխատանքի կատարումն է, դրա բուն ընթացքը,

3) աշխատանքային իրավահարաբերություններում աշխատողն իր աշխատանքը կատարում է՝ ենթարկվելով գործատուի մոտ սահմանված աշխատանքային ռեժիմին,

4) աշխատանքային իրավահարաբերություններում աշխատանքի կազմակերպման և պաշտպանության պարտականությունը դրված է գործատուի վրա,

5) աշխատանքային իրավահարաբերություններին բնորոշ է տևական, շարունակական և կայուն բնույթը,

6) աշխատանքային իրավահարաբերությունները բացառապես հատուցելի են:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն վերոգրյալ չափանիշներին բա-

վարարելու դեպքում կազմակերպությունում չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի և այդ կազմակերպության միջև գոյություն ունեցող հարաբերությունը կարող է որակավել որպես աշխատանքային և առաջացնել դրանից բխող բոլոր իրավաբանական հետևանքները: Այլ կերպ ասած՝ կազմակերպության (տնտեսավարող սուբյեկտի) նկատմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն կարող է առաջադրվել միայն այն դեպքում, երբ այդ կազմակերպության և որպես չձևակերպված վարձու աշխատող դիտարկվող անձի միջև առկա իրավահարաբերությունները համապատասխանում են աշխատանքային հարաբերությունների վերոգրյալ հատկանիշներին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներով անդրադարձել է իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավական նորմի բովանդակային վերլուծությանը: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի առկայության դեպքում գործատուն պարտավոր է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկել և վճարել եկամտային հարկ, որի չափը պայմանավորված է չձևակերպված վարձու աշխատողների քանակով: Ընդ որում, գործատուի համար նշված անբարենպաստ հետևանքը կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե իրավասու մարմինը տվյալ գործատուի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրել է ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին» թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր չձևակերպելու փաստը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան արձանագրելու օրենսդրական պահանջը հետապնդում է գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ու բոլոր հանգամանքների բացահայտումն ապահովելու նպատակ, որն իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրող վարչական ակտի վիճարկման դեպքում հնարավորություն կտա պարզելու այդ վարչական ակտի իրավաչափությունը:

ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն որոշման վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից կարող է արձանագրվել տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ իրականացվող օրենքով նախատեսված հետևյալ ընթացակարգերի միջոցով. (1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում, (2) պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգում, (3) առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգում, (4) օպերատիվ հետախուզական միջոցառում: Օրեն-

քով նախատեսված նշված ընթացակարգերի շրջանակներում հարկային մարմնի կամ այլ իրավասու մարմնի խնդիրը, ի թիվս այնի, տվյալ գործատուի՝ որպես հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ աշխատանք կատարող այնպիսի անձանց բացահայտումն է, որոնց վերաբերյալ առկա չէ աշխատանքի ընդունման մասին գրավոր պայմանագիր կամ անհատական իրավական ակտ (*տե՛ս, օրինակ անհատ ձեռնարկատեր Մարտին Զարոյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգամիթի հարկային տեսչության թիվ ՎԴ/6872/05/14 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով վարչական մարմինների վրա դրված՝ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու պարտականությունը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է իրականացնել այն բոլոր իրավաբանական և փաստական հանգամանքների մանրամասն և ամբողջական քննություն, որոնք կարող են էական նշանակություն ունենալ վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի համար: Բացի այդ, վարչական մարմինը պետք է յուրաքանչյուր կոնկրետ գործով ձեռք բերի ամբողջական և հավաստի տեղեկատվություն ընդունվելիք որոշման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ:

Այս իմաստով գործի փաստական հանգամանքների քննարկման բազմակողմանիությունը նշանակում է, որ վարչական մարմինը պետք է հաշվի առնի այս կամ այն փաստական հանգամանքի վերաբերյալ վարույթի մասնակիցների կողմից ներկայացված դիրքորոշումները և ապացույցները: Գործի փաստական հանգամանքների քննարկման լրիվությունը ենթադրում է, որ վարչական մարմինը պետք է իրականացնի վարույթի ընթացքում ձեռք բերված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ստուգում, փաստերի առկայության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ և բավարար ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Իսկ գործի փաստական հանգամանքների քննարկման օբյեկտիվությունը ենթադրում է, որ վարչական մարմինը գործի փաստական հանգամանքները քննարկելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և պարտավոր է անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել ապացույցների հետազոտման ընթացքում զերծ մնալով գործի ելքի վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց:

Բացի այդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրոյթից հետևում է, որ վարչական մարմինը պարտավոր է սեփական ուժերով ու միջոցներով պարզել իր կողմից քննվող գործի բոլոր փաստական հանգամանքները՝ հիմնվելով նաև վարույթի մասնակիցների կողմից ներկայացված տվյալների ու տեղեկությունների վրա: Վճարելի դատարանի գնահատմամբ վարչական մարմնի կողմից այս պարտականության չկատարումը կամ թերի կատարումն ընթացակարգային սխալ է, որը հանգեցնում է վարչական ակտի ոչ իրավաչափության:

Վերոգրյալ իրավական վերլուծություններից հետևում է, որ առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող ունենալու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար վարչական մարմինը պարտավոր է այդ տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվող ստուգման ընթացքում ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Վարչական մարմինը, մասնավորապես, պարտավոր է հաշվի առնել

աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված դիրքորոշումները և ապացույցները՝ կատարելով իր կողմից ձեռք բերված, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Միայն այդ դեպքում վարչական մարմինը կարող է վարույթի ընթացքում ձեռք բերված որևէ ապացույց համարել ոչ արժանահավատ և չդնել իր կողմից ընդունվող վարչական ակտի հիմքում՝ հստակ պատճառաբանելով իր այդ դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Տեսչության պետի 12.06.2015 թվականի թիվ 6104700 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման՝ աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Կատարված ստուգման արդյունքում ընդունված Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտով արձանագրվել է թվով 24 վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը գրավոր ձևակերպված չլինելու փաստ: Ընդ որում, նշված փաստը Տեսչությունը հաստատված է համարել Ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված անձանց քանակի, առկա աշխատանքային պայմանագրերի (հրամանների), ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված այլ փաստաթղթերի համադրության արդյունքում: Այդ իրավախախտման համար իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով Ընկերության նկատմամբ եկամտային հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 14.400.000 (24 x 600.000) ՀՀ դրամի չափով:

Դատարանը, մասնակիորեն բավարարելով Ընկերության հայցը, պատճառաբանել է, որ Հովհաննես Արտարյանը և Արտյոմ Ղուշչյանն անհիմն կերպով են համարվել Ընկերության կողմից գրավոր չձևակերպված աշխատողներ, քանի որ Ընկերության տնօրենի 10.06.2015 թվականի թիվ 120 և թիվ 121 հրամաններով վերջիններս 10.06.2015 թվականից ընդունվել են աշխատանքի՝ որպես բանվոր, և նրանց հետ 10.06.2015 թվականին կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Բացի այդ, Դատարանը նշել է, որ Ընկերության թվով 18 աշխատակիցների կողմից տրվել են բացատրություններ, որոնք էապես տարբերվել են նախկինում (տեսուչների հարցադրումներին ի պատասխան) տրված տեղեկատվությունից: Մինչդեռ հարկային մարմինը վիճարկվող ստուգման ակտը կայացնելիս անտեսել է այդ տվյալները և հիմք է ընդունել միայն իր կողմից ստուգման ընթացքում՝ 23.06.2015 թվականին և 30.06.2015 թվականին, Ընկերության աշխատակիցներից ձեռք բերված հայտարարությունները: Ըստ Դատարանի՝ վարչական մարմինը, ստուգման վարույթի ընթացքում ընդունելով վարույթին վերաբերող փաստաթղթեր, որևէ կերպ չի քննարկել դրանք՝ անտեսելով Ընկերության օգտին առկա հանգամանքները: Հետևաբար Դատարանը գտել է, որ վարչական մարմնի կողմից ձեռք բերված ապացույցները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ վիճարկվող վարչական ակտը՝ թվով 20 աշխատողների մասով, կայացնելու համար, և այդ մասով Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտը ենթակա է անվավեր ճանաչման: Դատարանը միաժամանակ գտել է, որ Ընկերության մնացած՝ թվով 4 չգրանցված աշխատողների մասով ստուգման ակտն իրավաչափ է, քանի որ վերջիններիս վերաբերյալ վարչական մարմնի եզրահանգումները հաստատվում են ստուգման շրջանակներում ձեռք բերված ապացույցներով:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունները:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտն անվավեր է ճանաչվել միայն թվով 20 ենթադրյալ չգրանցված աշխատողների համար Ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկային պարտավորյալն առաջադրման մասով, իսկ Դատարանի վճռի՝ Ընկերության թվով 4 չգրանցված աշխատողների մասով հայցը մերժելու մասը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Հետևաբար Կոմիտեի կողմից բերված սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է միայն Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի՝ Դատարանի կողմից թվով 20 ենթադրյալ չգրանցված աշխատողների մասով անվավեր ճանաչված մասի վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումների իրավաչափությանը:

Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտով հայտնաբերված թվով 24 վարձու չգրանցված աշխատողներից 4-ը՝ Մարգարիտա Հովհաննիսյանը, Գրիգոր Վանյանը, Դավիթ Հակոբյանը և Էրիկ Մակարյանը, ովքեր, ըստ Տեսչության, աշխատել են Ընկերությունում առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպման, Ընկերությանը մատուցել են ժամանցային ծրագրի ընթացքում երգեր կատարելու կամ որպես երաժիշտ հանդես գալու ծառայություններ՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի հիման վրա: Բացի այդ, Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերում առկա են Մարգարիտա Հովհաննիսյանի, Գրիգոր Վանյանի, Դավիթ Հակոբյանի և Էրիկ Մակարյանի հայտարարություններն այն մասին, որ իրենք Ընկերության հետ գտնվել են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ և Ընկերությանը մատուցել են երաժշտական բնույթի ծառայություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Վկայակոչված իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ ծառայությունների վճարովի մատուցումը քաղաքացիաիրավական հարաբերություն է, որի ուժով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով կատարել որոշակի գործողություններ, որոնց արդյունքը չունի առարկայական արտահայտություն և չի կարող երաշխավորվել, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ծառայությունների մատուցման պայմանագրերի հիման վրա ստացվող եկամուտը ևս իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով եկամտային հարկով հարկվող օբյեկտ է, սակայն նշված քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցող անձը չի կարող որակվել աշխատող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցակազմի տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ օրենսդիրն այդպիսին դիտել է բացառապես աշխատանքային

հարաբերությունների մեջ գտնվող սուբյեկտներին:

Վերը նշված իրավական վերլուծությունները համադրելով աշխատանքային իրավահարաբերությունների տարբերակիչ առանձնահատկությունների վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարգարիտա Հովհաննիսյանը, Գրիգոր Վանյանը, Դավիթ Հակոբյանն ու Էրիկ Մակարյանն Ընկերության հետ գտնվել են ոչ թե աշխատանքային, այլ՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անձին որևէ կազմակերպությունում առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպման աշխատող համարելու կարևորագույն նախապայմանն այդ անձի և կազմակերպության միջև աշխատանքային հարաբերությունների առկայությունն է: Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով և հայտարարություններով հերքվում է այն հանգամանքը, որ Մարգարիտա Հովհաննիսյանը, Գրիգոր Վանյանը, Դավիթ Հակոբյանն ու Էրիկ Մակարյանն Ընկերության հետ գտնվել են աշխատանքային հարաբերություններում, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ այդ անձինք չեն կարող համարվել Ընկերությունում առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպման աշխատողներ:

Մինչդեռ Տեսչությունը հաշվի չի առել վերոգրյալ ապացույցները, չի հերքել դրանք ու չի պատճառաբանել, թե ինչու այդ ապացույցները չեն դրվել վիճարկվող վարչական ակտի հիմքում՝ խախտելով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու իր օրենսդրական պարտականությունը: Հետևաբար ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը՝ Մարգարիտա Հովհաննիսյանի, Գրիգոր Վանյանի, Դավիթ Հակոբյանի ու Էրիկ Մակարյանի մասով, ենթակա է վերացման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ Տեսչության՝ Ընկերությունում 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտով արձանագրված թիվ 24 վարձու չգրանցված աշխատողներից Հովհաննես Արտարյանը և Արտյոմ Ղուշչյանը նշված ստուգման ակտի անբաժանելի մասը կազմող 30.06.2015 թվականի արձանագրության կազմման օրվա դրությամբ փաստացի աշխատել են Ընկերությունում՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպման: Մինչդեռ սույն գործում առկա են Ընկերության և Հովհաննես Արտարյանի ու Արտյոմ Ղուշչյանի միջև 10.06.2015 թվականին անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի և վերջիններիս աշխատանքի ընդունելու մասին 10.06.2015 թվականի հրամանների օրինակները (**հատոր 2-րդ, գ.թ. 59-64**): Նշված գրավոր ապացույցներով հիմնավորվում է այն հանգամանքը, որ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի անբաժանելի մասը կազմող 30.06.2015 թվականի արձանագրության կազմման օրվա դրությամբ Ընկերության աշխատակիցներ Հովհաննես Արտարյանի և Արտյոմ Ղուշչյանի աշխատանքի ընդունումը ձևակերպված է եղել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հետևաբար ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը՝ Հովհաննես Արտարյանի և Արտյոմ Ղուշչյանի մասով, ենթակա է վերացման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտով հայտնաբերված թիվ 24 վարձու չգրանցված աշխատողներից 14-ը՝ Աննա Գրիգորյանը, Աննա Շահնազարյանը, Անդրանիկ Մեղրակյանը, Արմեն Խաչատրյանը, Արտակ Գասպարյանը, Գեղամ Խաչատրյանը, Գևորգ Մարտիրոսյանը, Թերեզա

Մուրադյանը, Իշխան Ստեփանյանը, Նոյ Եղիգարյանը, Ջենմա Թադևոսյանը, Վաղարշակ Բավիկյանը, Վարդգես (Վարդկես) Պողոսյանը և Տիգրան Սարգսյանը, ովքեր, ըստ Տեսչության, տարբեր ժամանակահատվածներում աշխատել են Ընկերությունում առանց օրենքով սահմանված կարգով ձևակերպման, հայտարարություններ են տվել այն մասին, որ իրենք թյուրիմացաբար ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ոչ դիտավորյալ կերպով տվել են սխալ տեղեկություններ Ընկերությունում աշխատելու ժամանակահատվածի վերաբերյալ և իրականում աշխատանքի են անցել Ընկերությունում իրենց հետ կնքված աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի ընդունման մասին հրամաններում նշված օրերից: Նշված հայտարարություններն Ընկերության կողմից ներկայացվել են Տեսչությանը, սակայն վերջինս դրանք չի դրել 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի հիմքում: Փոխարենը՝ Տեսչությունը հաշվի է առել միայն իր կողմից ստուգման ընթացքում ձեռք բերված տվյալները, որոնց համաձայն՝ վերոհիշյալ անձինք իրենց ստորագրությամբ հաստատել են, որ Ընկերությունում աշխատանքի են անցել աշխատանքային պայմանագրերի կնքումից ավելի շուտ՝ տարբեր ժամանակահատվածներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի աշխատող ունենալու համար Ընկերության նկատմամբ եկամտային հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն առաջադրելու համար Տեսչությունը պարտավոր էր այդ տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվող ստուգման ընթացքում ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Վարչական մարմինը, մասնավորապես, պարտավոր էր հաշվի առնել աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումները և ապացույցները՝ կատարելով իր կողմից ձեռք բերված, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Մինչդեռ Տեսչությունը չի կատարել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու իր պարտականությունը, քանի որ անտեսելով 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտով հայտնաբերված թվով 24 վարձու չգրանցված աշխատողներից 14-ի կողմից արված գրավոր հայտարարությունները՝ նշված վարչական ակտում չի պատճառաբանել, թե ինչու այդ գրավոր ապացույցները չեն գնահատվել մյուս ապացույցների հետ համակցության մեջ: Ընդ որում, նշված հայտարարություններում Ընկերության աշխատակիցների կողմից մատնանշված՝ իրենց աշխատանքի անցնելու օրերը լիովին համապատասխանում են վերջիններիս հետ կնքված աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի ընդունման մասին հրամաններում նշված ամսաթվերի հետ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման հակասական ապացույցների առկայության պայմաններում Տեսչությունը պարտավոր էր սեփական ուժերով ու միջոցներով պարզել իր կողմից քննվող գործի բոլոր փաստական հանգամանքները և ամբողջական ու հավաստի տեղեկատվություն ձեռք բերել իր կողմից ընդունվելիք ստուգման ակտի համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ, ինչը տեղի չի ունեցել: Միաժամանակ վարչական մարմինը չէր կարող ոչ հավաստի համարել Ընկերության ներկայացրած վերոգրյալ ապացույցները, քանի որ դրանք հերքող այլ ապացույցներ վարույթի շրջանակներում ձեռք չեն բերվել: Հետևաբար ստորադաս դատարաններն իրավացիորեն են հանգել այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը՝ Աննա Գրիգորյանի, Աննա Շահնազարյանի, Անդրանիկ Մեղրակյանի, Արմեն Խաչատրյանի, Արտակ Գասպարյանի, Գեղամ Խաչատ-

րյանի, Գևորգ Մարտիրոսյանի, Թերեզա Մուրադյանի, Իշխան Ստեփանյանի, Նոյ Եղիգա-րյանի, Ջենմա Թադևոսյանի, Վաղարշակ Բավիկյանի, Վարդգես (Վարդկես) Պողոսյանի և Տիգրան Սարգսյանի մասով, ենթակա է վերացման:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատա-րանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի ըն-դունմանն ուղղված վարչական վարույթի ընթացքում Տեսչությունը չի իրականացրել այն բոլոր իրավաբանական և փաստական հանգամանքների մանրամասն և ամբողջական քն-նություն, որոնք կարող էին էական նշանակություն ունենալ 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգման ակտի համար: Տեսչությունը, մասնավորապես, նշված ստուգման ակտն ընդունե-լիս հաշվի չի առել Հնկերության կողմից ներկայացված ապացույցները, չի ստուգել դրանք վարույթի ընթացքում ձեռք բերված մյուս ապացույցների համակցության մեջ և չի կատա-րել ապացույցների ողջ զանգվածի վերլուծություն: Հետևաբար Տեսչության 21.07.2015 թվա-կանի թիվ 6104700 ստուգման ակտը՝ Հովհաննես Արտաբյանի, Արայոմ Ղուշչյանի, Աննա Գրիգորյանի, Աննա Շահնազարյանի, Անդրանիկ Մեղրակյանի, Արմեն Խաչատրյանի, Ար-տակ Գասպարյանի, Գեղամ Խաչատրյանի, Գևորգ Մարտիրոսյանի, Թերեզա Մուրադյանի, Իշխան Ստեփանյանի, Նոյ Եղիգարյանի, Ջենմա Թադևոսյանի, Վաղարշակ Բավիկյանի, Վարդգես (Վարդկես) Պողոսյանի, Տիգրան Սարգսյանի, Մարգարիտա Հովհաննիսյանի, Գրիգոր Վանյանի, Դավիթ Հակոբյանի և Էրիկ Մակարյանի մասով, ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի, իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մա-սի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդ-վածի խախտմամբ և այդ մասով ենթակա էր անվավեր ճանաչման, որպիսի իրավաչափ եզ-րահանգման են եկել ստորադաս դատարանները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, մասնակիորեն անվավեր ճանաչելով Տեսչության 21.07.2015 թվականի թիվ 6104700 ստուգ-ման ակտը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թող-նելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստո-րադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառա-բանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսե-րից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրա-պետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումար-

ների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.01.2017 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1881/05/15

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Ա. Սարգսյան
Ա. Աբովյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԴ/1881/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.11.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության (այսուհետ՝ Վարչություն) 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 26.01.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետը՝ 20.08.2012 թվականից հետո Ընկերության ավելացված արժեքի հարկ վճարող համարելու մասով, ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.04.2016

թվականի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպման հիմքով փոխարինվել է իրավահաջորդով՝ Կոմիտեով:

Վերաքննիչ դատարանի 16.11.2016 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 26.01.2016 թվականի վճիռը՝ հայցը մերժելու մասով, բեկանվել է և փոփոխվել՝ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետը՝ մինչև 20.08.2012 թվականը Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու մասով, ճանաչվել է անվավեր, իսկ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի կիրառման համար արդեն իսկ բավական է, որ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելին պատկանում է անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունեցող անձի: Սույն գործով հայցվոր Ընկերության միակ մասնակիցը Վալիկո Ալանյանն է, որը 12.10.2007 թվականից մինչև 20.08.2012 թվականը հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր: Հետևաբար ակնհայտ է, որ Ընկերությունը 2012 թվականի ընթացքում (տարեկգրից մինչև տարեվերջ) համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով և պետք է հարկվեր ավելացված արժեքի հարկի հարկման դաշտում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.11.2016 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ «կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում է ստացել 20.02.2012 թվականին, իսկ նրա միակ մասնակիցը (100 տոկոս բաժնեմասով) Վալիկո Ալանյանն է (**հատոր 1-ին, գ.թ. 11-17**):

2. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի 18.09.2014 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վալիկո Ալանյանը 12.10.2007 թվականին հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր և հաշվառումից հանվել է 20.08.2012 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 20**):

3. ՀՀ ֆինանսների նախարարի 02.02.2015 թվականի թիվ 5011296 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հար-

կային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում Վարչության կողմից 20.04.2015 թվականին ընդունվել է թիվ 5011296 ստուգման ակտը, որի 4-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերության միակ մասնակից Վալիկո Ասլանյանը մինչև 20.08.2012 թվականը միաժամանակ հանդիսացել է նաև անհատ ձեռնարկատեր: Ստուգման ակտի համաձայն՝ նշված փաստի ուժով 2012 թվականի ընթացքում Ընկերությունը համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, սակայն ավելացված արժեքի հարկ չի հաշվարկել ու չի վճարել: Ըստ այդմ, Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով, ըստ եռամսյակների, առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 15.738.358 ՀՀ դրամի չափով, որից 6.177.962 ՀՀ դրամ ապառք (394.385 ՀՀ դրամ՝ 2012 թվականի 1-ին եռամսյակի համար, 1.195.424 ՀՀ դրամ՝ 2012 թվականի 2-րդ եռամսյակի համար, 2.145.909 ՀՀ դրամ՝ 2012 թվականի 3-րդ եռամսյակի համար, 2.442.243 ՀՀ դրամ՝ 2012 թվականի 4-րդ եռամսյակի համար), 6.177.962 ՀՀ դրամ տուգանք և 3.382.434 ՀՀ դրամ տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 23-26**):

4. Վալիկո Ասլանյանը 28.12.2007 թվականին հարկային տեսչություն է ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու վերաբերյալ դիմում (**հատոր 1-ին, գ.թ. 18, 19**):

5. Ընկերության՝ որպես Պատվիրատուի, և փաստաբան Գնել Միդնեցյանի՝ որպես Կատարողի, միջև 12.05.2015 թվականին կնքված «Փաստաբանական ծառայություն մատուցելու» պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Ընկերությանը մատուցել փաստաբանական ծառայություններ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի առնչությամբ ծագած վեճով, իսկ նույն պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ պայմանագրի գինը կազմել է 700.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 66, 67**):

4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը.

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճարելի բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ավելացված արժեքի հարկ վճարելու՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով ծագող պարտականության կատարման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Միաժամանակ սույն վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև վճարելի բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև

ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է արդյոք ավելացված արժեքի հարկ վճարող, եթե դրա միակ մասնակիցը հաշվետու տարվա մի մասում գրանցված է եղել որպես անհատ ձեռնարկատեր, սակայն այդ ժամանակահատվածում որպես անհատ ձեռնարկատեր տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն չի իրականացրել:

Մինչև 01.01.2018 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը նույն օրենքի համաձայն, վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 2-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և նույն օրենքի 6-րդ հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում՝ այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայքաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում անդրադարձել է մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ իրավադրույթների մեկնաբանությանը: ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում օրենսդիրը նախատեսել էր, որ անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ավելացված արժեքի հարկ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը գերազանցող մասի համար: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել էր այն փաստակազմերը, որոնց առկայության դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերու-

թյան ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված կարգավորումը կիրառելի չէր: Այդպիսի փաստակազմ էր նախատեսված նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետում: Այս կետի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն տարածվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի: Փաստորեն, կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքը կիրառելի է միայն այն դեպքում, եթե տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) չի պատկանում այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի: Հետևաբար ցանկացած իրավասու մարմին մինչև կոնկրետ կազմակերպության նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված իրավական հետևանքի կիրառելիության հարցը լուծելը, պետք է պարզեր՝ արդյոք տվյալ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, թե՛ ոչ: Մինչև ժամանակ ՀՀ վճարելի դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ կետով, 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված իրավադրույթները, նշել է, որ ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ինքնուրույն այն գործունեությունը, որն իրականացվում է սեփական ռիսկով և ուղղված է պարբերական շահույթ հետապնդելուն: Ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայման են հանդիսանում վերջինիս իրավունակությունն ու գործունակությունը և պետական հաշվառումը որպես ձեռնարկատեր: Այսինքն՝ ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի առկայությունը որոշվում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառման փաստով՝ անկախ այն փաստից, թե ինչ կարգավիճակով է տվյալ ֆիզիկական անձը գրանցված առևտրային իրավաբանական անձի մասնակիցների (հիմանդիր, բաժնետեր, մասնակից) կազմում (*յու՛րս «Անջելս Կորպ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/9770/05/13 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ այդ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այնպիսի ֆիզիկական անձի, որը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր:

Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված այն իրավակարգավորումը, որի համաձայն՝ *ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:*

Վերոգրյալ օրենսդրական կանոնի բովանդակային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ ֆիզիկական անձը համարվում է անհատ ձեռնարկատեր պետական հաշվառման պահից մինչև այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման կամ պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահը: Փաստորեն, օրենսդիրը ֆիզիկական անձի՝ անհատ ձեռնարկատեր համարվելու հանգամանքը կախվածության մեջ է դրել որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառում ունենալու փաստի առկայությունից կամ բացակայությունից: Ֆիզիկական անձի՝ անհատ ձեռնարկատեր համարվելու հանգամանքը պայմանավորված է վերջինիս կողմից տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու փաստով: Այսինքն՝ անկախ ֆիզիկական անձի կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից, վերջինս համարվում է անհատ ձեռնարկատեր հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) տվյալ ֆիզիկական անձը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր,
- 2) տվյալ ֆիզիկական անձի գործունակությունը կամ իրավունակությունը դադարած է,
- 3) տվյալ ֆիզիկական անձի որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված է:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կազմակերպությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող այն դեպքում, երբ այդ կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այնպիսի ֆիզիկական անձի, որը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր, որի գործունակությունը կամ իրավունակությունը դադարած է, և որի՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված է: Ընդ որում, տվյալ դեպքում որևէ իրավաբանական նշանակություն չունի այն հանգամանքը, որ տվյալ անհատ ձեռնարկատերը փաստացի որևէ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն չի իրականացնում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված՝ ավելացված արժեքի հարկի շեմը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով կարող է չկիրառվել միայն այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում առկա է եղել այդ իրավադրույթով սահմանված և վերը նկարագրված իրավաբանական փաստակազմը: Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճար-

ման ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված հետևյալ իրավակարգավորումները.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 23-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (...):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը՝ բացառությամբ նույն հոդվածի երրորդ մասով սահմանված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն անձանց համար, որոնց՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը (առանց ԱԱՀ-ի) նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Վերոգրյալ իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ ավելացված արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված հաշվետու ժամանակաշրջանի համար՝ հիմք ընդունելով այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը: Ընդ որում, ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանը, որպես կանոն, եռամսյակն է: Նշված ընդհանուր կանոնից բացառությունը վերաբերում է այն դեպքին, երբ տվյալ հարկ վճարողի՝ օրենքով սահմանված գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 100 միլիոն ՀՀ դրամը: Այդ դեպքում տվյալ հարկ վճարողի համար ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում մեկ ամիսը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տնտեսվարող սուբյեկտը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել միայն այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը: Այլ կերպ ասած՝ տնտեսվարող սուբյեկտը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել, որպես կանոն, միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը, իսկ որոշ դեպքերում (օրենքով սահմանված գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում 100 միլիոն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում) միայն այն ամիսների համար, որոնց ընթացքում առկա է եղել նշված իրավադրույթով սահմանված փաստակազմը: Այն դեպքում, երբ, օրինակ, եռամսյակային հաշվետու ժամանակաշրջանի ռեժիմի ներքո գործող տնտեսվարող սուբյեկտի մոտ տարվա ընթացքում ծագում է և (կամ) դադարում է ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտականություն առաջացնող՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կե-

տով սահմանված հիմքը, ապա տվյալ տնտեսվարող սուբյեկտը պարտավոր է ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել ոչ թե ամբողջ տարվա համար, այլ տարվա միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում վերագրյալ իրավադրույթով սահմանված հիմքն առկա է եղել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նախատեսված՝ ավելացված արժեքի հարկի շեմը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով չկիրառվելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի մոտ ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտականությունը ծագում է ըստ ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջանների. այդ պարտականությունը՝

- վերաբերում է ոչ թե ամբողջ տարվան, այլ այդ տարվա այն հաշվետու ժամանակաշրջաններին, որոնց ընթացքում առկա է եղել մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված հիմքը, և

- չի կարող տարածվել այդ տարվա այն հաշվետու ժամանակաշրջանների վրա, որոնց ընթացքում նշված հիմքը գոյություն չի ունեցել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում է ստացել 20.02.2012 թվականին, իսկ նրա միակ մասնակիցը (100 տոկոս բաժնեմասով) Վալիկո Ասլանյանն է: Վալիկո Ասլանյանը, իր հերթին, 12.10.2007 թվականից մինչև 20.08.2012 թվականը հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր: Թեև անհատ ձեռնարկատեր Վալիկո Ասլանյանը 28.12.2007 թվականին հարկային տեսչություն է ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու վերաբերյալ դիմում, սակայն վերջինս դադարել է համարվել անհատ ձեռնարկատեր միայն 20.08.2012 թվականից:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.02.2015 թվականի թիվ 5011296 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում Վարչության կողմից 20.04.2015 թվականին ընդունվել է թիվ 5011296 ստուգման ակտը, որի 4-րդ կետով արձանագրվել է, որ Ընկերության միակ մասնակից Վալիկո Ասլանյանը մինչև 20.08.2012 թվականը միաժամանակ հանդիսացել է նաև անհատ ձեռնարկատեր: Ստուգման ակտի համաձայն՝ նշված փաստի ուժով 2012 թվականի ընթացքում Ընկերությունը համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, սակայն ավելացված արժեքի հարկ չի հաշվարկել ու չի վճարել: Ըստ այդմ, Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 15.738.358 ՀՀ դրամի չափով, որից 6.177.962 ՀՀ դրամ ապառք, 6.177.962 ՀՀ դրամ տուգանք և 3.382.434 ՀՀ դրամ տույժ:

Ընկերությունը դիմել է դատարան Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետի վիճարկման հայցով, որի հիման վրա հարուցվել է սույն վարչական գործը:

Դատարանն Ընկերության հայցը բավարարել է մասնակիորեն և Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետն անվավեր է ճանաչել միայն 20.08.2012 թվականից հետո Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու մասով: Դատարանը գտել է, որ անհատ ձեռնարկատեր Վալիկո Ասլանյանի գործունեության փաստացի դադարեցումը նշանակություն չունի մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի կիրառության համար, իսկ հարկային մարմինն իրավացիորեն է համարել, որ Ընկերության կանոնադրական կապիտալի 20 տոկոսից ավելին մինչև 20.08.2012 թվականը պատկանել է անհատ ձեռնարկատիրոջ:

Միևնույն ժամանակ Դատարանը նշել է, որ Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու միակ հիմքը դրա մասնակցի՝ անհատ ձեռնարկատեր հանդիսանալն է, ինչը նշանակում է, որ 20.08.2012 թվականից ի վեր, երբ Ընկերության մասնակիցն այլևս չի հանդիսացել անհատ ձեռնարկատեր, Ընկերությունն այլևս չէր կարող համարվել ավելացված արժեքի հարկ վճարող: Փաստորեն, ըստ Դատարանի՝ հարկային մարմինը որևէ հիմք չի ունեցել Ընկերությանը 20.08.2012 թվականից հետո ավելացված արժեքի հարկ վճարող որակելու համար: Նման պայմաններում 20.08.2012 թվականից հետո Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու հետևանքով առաջադրված ավելացված արժեքի հարկը՝ տույժերով և տուգանքներով հանդերձ, ենթակա է հետագա ճշտման և Ընկերության պարտավորություններից նվազեցման:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Ընկերության վերաքննիչ բողոքը և մասնակիորեն բեկանելով Դատարանի վճիռը՝ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետն անվավեր է ճանաչել նաև մինչև 20.08.2012 թվականն Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու մասով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ընկերությունը 2012 թվականի ամբողջ ընթացքում չէր կարող համարվել ավելացված արժեքի հարկ վճարող, քանի որ Ընկերության միակ մասնակից Վալիկո Ասլանյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, դեռևս 28.12.2007 թվականին դիմել է հարկային մարմին գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ, փաստացի դադարեցրել է և չի իրականացրել ձեռնարկատիրական գործունեություն, ներառված է եղել հաշվառումից հանելուն ենթակա անհատ ձեռնարկատերերի ցանկում, չի ունեցել գույք և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ: Հետևաբար ըստ Վերաքննիչ դատարանի՝ Ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելը միայն այն հիմքով, որ նրա միակ մասնակիցը մինչև 20.08.2012 թվականը հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր, ձևական մոտեցման արդյունք է և իրավաչափ չէ:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության միակ մասնակից Վալիկո Ասլանյանը 12.10.2007 թվականից մինչև 20.08.2012 թվականը հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր: Մինչև 20.08.2012 թվականը Վալիկո Ասլանյանի գործունեությունը կամ իրավունակությունը դադարած չի եղել, և նրա՝ որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված չի եղել: Այսինքն՝ Ընկերության միակ մասնակից Վալիկո Ասլանյանը 12.10.2007 թվականից մինչև 20.08.2012 թվականը բավարարել է անհատ ձեռնարկատեր համարվելու բոլոր պայմաններին: Հետևաբար Ընկերությունը

մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, քանի որ Ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 20 տոկոսը (տվյալ դեպքում 100 տոկոսը) պատկանել է Վալիկո Ասլանյանին, որը մինչև 20.08.2012 թվականն ունեցել է անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ:

Ընդ որում, սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Ընկերության՝ ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու հարցում որևէ իրավաբանական նշանակություն չունի այն հանգամանքը, որ Ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 20 տոկոսի (տվյալ դեպքում 100 տոկոսի) սեփականատեր Վալիկո Ասլանյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, փաստացի որևէ տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն չի իրականացրել, 28.12.2007 թվականին հարկային տեսչություն է ներկայացրել գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու վերաբերյալ դիմում: Անկախ նշված հանգամանքից՝ Վալիկո Ասլանյանը մինչև 20.08.2012 թվականը եղել է անհատ ձեռնարկատեր, ինչը բավարար է Ընկերության նկատմամբ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված իրավական հետևանքը կիրառելու համար: Հետևաբար սույն գործով Դատարանն իրավաչափորեն է հանգել այն եզրակացության, որ Ընկերությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու հիմքը, որը սահմանված է մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով, գոյություն է ունեցել Ընկերության գրանցումից մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 20 տոկոսի (տվյալ դեպքում 100 տոկոսի) սեփականատեր Վալիկո Ասլանյանի՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից հանվելու պահը, այսինքն՝ մինչև 20.08.2012 թվականը: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2012 թվականի ընթացքում Ընկերությունը պարտավոր էր ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել միայն այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում առկա է եղել մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված փաստակազմը: Փաստորեն, սույն գործով վիճարկվող վարչական ակտով՝ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտով, Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություններ կարող էին առաջադրվել ոչ թե ամբողջ 2012 թվականի համար, այլ՝ այդ տարվա միայն այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում Ընկերությունը մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի ուժով համարվում էր ավելացված արժեքի հարկ վճարող:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում 2012 թվականին Ընկերության համար ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու հաշվետու ժամանակաշրջան է համարվել եռամսյակը, ինչն արձանագրվել է նաև վիճարկվող վարչական ակտում և դրվել է լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկման հիմքում: Հետևաբար

Ընկերությունը պարտավոր էր ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել ոչ թե ամբողջ տարվա համար, այլ 2012 թվականի միայն այն եռամսյակների համար, որոնց ընթացքում առկա է եղել մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված հիմքը: Ասվածն էլ իր հերթին ենթադրում է, որ Ընկերությունը պարտավոր էր ավելացված արժեքի հարկ հաշվարկել և վճարել 2012 թվականի միայն 1-ին (հունվար, փետրվար, մարտ), 2-րդ (ապրիլ, մայիս, հունիս) և 3-րդ (հուլիս, օգոստոս, սեպտեմբեր) եռամսյակների համար, քանի որ 2012 թվականի 4-րդ եռամսյակում (հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) Ընկերության կանոնադրական կապիտալի ավելի քան 20 տոկոսի (տվյալ դեպքում 100 տոկոսի) սեփականատեր Վալիկո Ասլանյանն այլևս չի հանդիսացել անհատ ձեռնարկատեր:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտով Ընկերության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջադրումն իրավաչափ է միայն 2012 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար հաշվարկված լրացուցիչ հարկային պարտավորության մասով: Իսկ Ընկերության նկատմամբ 2012 թվականի 4-րդ եռամսյակի համար հաշվարկված լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրումը ոչ իրավաչափ է, քանի որ այդ հաշվետու ժամանակաշրջանում մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետով սահմանված հիմքն այլևս գոյություն չի ունեցել: Փաստորեն, սույն գործով վիճարկվող՝ Վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետը ենթակա է անվավեր ճանաչման Ընկերության նկատմամբ միայն 2012 թվականի 4-րդ եռամսյակի համար ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասով, քանի որ այդ մասով նշված վարչական ակտն ընդունվել է օրենքի, մասնավորապես՝ մինչև 01.01.2013 թվականը գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ պարբերության «դ» կետի, 23-րդ և 32-րդ հոդվածների խախտմամբ, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ, ապա հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի հատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերը նրանց միջև:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով Կոմիտեի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, ինչի արդյունքում Ընկերության հայցը բավարարվում է մասնակիորեն: Հաշվի առնելով նշված հանգամանքը և կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված կանոնը՝ Վճռաբեկ դատարանը որոշում է դատական ծախսերը՝ հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարման ենթակա պետական տուրքի մասով, համաչափորեն բաշխել սույն գործով կողմերի միջև:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումի համար Ընկերությունը վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունը պետք է համաչափորեն դրվի միաժամանակ թե՛ Կոմիտեի և թե՛ Ընկերության վրա: Վճռաբեկ դատարանը, նպատակ ունենալով կողմերի միջև համաչափորեն բաշխել նշված դատական ծախսը, եզրակացնում է, որ պատասխանող Կոմիտեն պարտավոր է հայցվոր Ընկերությանը հատուցել հայցադիմումի համար Ընկերության կողմից արդեն իսկ վճարված 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 2.000 ՀՀ դրամը, քանի որ Կոմիտեի վճռաբեկ բողոքը բավարարվում է մասնակիորեն, ինչի արդյունքում մասամբ է բավարարվում նաև Ընկերության հայցը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վերաքննիչ բողոքներ են ներկայացրել թե՛ հայցվոր Ընկերությունը, թե՛ պատասխանող Կոմիտեն: Ընդ որում, Ընկերությունը վերաքննիչ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ Կոմիտեն՝

10.000 ՀՀ դրամ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ վերաքննիչ բողոքները ներկայացնելու ժամանակ գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» կետի համաձայն՝ (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար՝ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ (...) բազային տուրքի չափ է սահմանվում 1.000 դրամը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ սույն վարչական գործով Ընկերության կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի՝ օրենքով սահմանված չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ: Մինչդեռ Ընկերությունը վերաքննիչ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վերաքննիչ բողոք բերելու համար Ընկերության կողմից օրենքով պահանջվող պետական տուրքի չափից ավելի վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության և Կոմիտեին անհրաժեշտ է հաշվանցման եղանակով փոխադարձաբար ազատել վերաքննիչ բողոքների համար դատական ծախսերի՝ 10.000-ական ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքերի հատուցումից: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքների համար 10.000-ական ՀՀ դրամի չափով պետական տուրքերի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Հաջորդիվ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի համար Կոմիտեն վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից բերված վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունը պետք է համաչափորեն դրվի միաժամանակ թե՛ Կոմիտեի և թե՛ Ընկերության վրա: Վճռաբեկ դատարանը, նպատակ ունենալով կողմերի միջև համաչափորեն բաշխելու նշված դատական ծախսը, եզրակացնում է, որ հայցվոր Ընկերությունը պարտավոր է պատասխանող Կոմիտեին հատուցել վճռաբեկ բողոքի համար Կոմիտեի կողմից արդեն իսկ վճարված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 10.000 ՀՀ դրամը, քանի որ Կոմիտեի վճռաբեկ բողոքը բավարարվում է մասնակիորեն, ինչի արդյունքում մասամբ է բավարարվում նաև Ընկերության հայցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ ներկայացուցիչների վճարների գծով դատական ծախսի հատուցումը դրվում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կամ համայնքի վրա, եթե գործը լուծվել է ի վնաս իրենց: Հատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնազանձման հարցերին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում փաստաբանի վարձատ-

րության ողջամիտ չափը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ չափորոշիչները. փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ներկայացուցչին վճարված գումարի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված գումարի չափի հարաբերակցությունը, անձի կողմից փաստացի կատարված ծախսերի այն ծավալը, որն անհրաժեշտ է եղել դատական պաշտպանության արդյունավետ իրականացման համար (*Կրե'ս Անի Դավթյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6377/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերը նշված չափանիշները և դրանք համադրելով սույն գործի հանգամանքների հետ, մասնավորապես՝ հաշվի առնելով սույն գործի բարդությունը, փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (հայցադիմումի ներկայացում, մասնակցություն դատական նիստերին), Ընկերության և փաստաբան Գնել Մուդնեցյանի միջև 12.05.2015 թվականին կնքված «Փաստաբանական ծառայություն մատուցելու» պայմանագրով սահմանված՝ փաստաբանին վճարման ենթակա գումարի չափի և վիճարկվող վարչական ակտով առաջադրված հանրային իրավական դրամական պահանջի գումարի չափի հարաբերակցությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ընկերության փաստաբանի վարձատրության ողջամիտ չափը կազմում է 100.000 ՀՀ դրամ: Հետևաբար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հոգուտ Ընկերության անհրաժեշտ է բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության ողջամիտ փոխհատուցման գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.11.2016 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել մասնակիորեն՝ անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզության վարչության 20.04.2015 թվականի թիվ 5011296 ստուգման ակտի 4-րդ կետի՝ 2012 թվականի 4-րդ եռամսյակի համար «ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի նկատմամբ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորության առաջադրման մասը, իսկ հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի բռնագանձել 2.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում փոխհատուցման ենթակա գումար:

«ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի կողմից վերաքննիչ բողոքի համար օրենսդրությամբ պահանջվող պետական տուրքի չափից ավելի՝ 10.000 ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքի հարցը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով

համարել լուծված:

Վերաքննիչ բողոքների համար սահմանված և «ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի ու ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.000-ական ՀՀ դրամի չափով վճարված պետական տուրքերի բաշխման հարցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով համարել լուծված:

«ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում հատուցման ենթակա գումար:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «ԱՍԹԵՄՎԱԼ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության ողջամիտ փոխհատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2168/05/14
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2168/05/14**
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Մելկումի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 27.12.2016 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Մելկումի ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Ծառայությանը 26.02.2014 թվականի դիմում-բողոքի հիմքով Արմեն Մելկումին կենսաթոշակ վճարելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն, 01.05.2013 թվականից սկսած Արմեն Մելկումի սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը, ինչպես նաև կենսաթոշակին հաշվեգրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ սկսած 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը, վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Մելկումը պահանջել է պարտավորեցնել Ծառայությանը 26.02.2014 թվականի թիվ 14/3173-14 դիմում-բողոքի հիմքով ընդունել իրեն կենսաթոշակ վճարելու մասին բարենպաստ վարչական ակտ և 01.05.2013 թվականից սկսած վճարել իր սե-

փականությունը հանդիսացող կենսաթոշակը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով կենսաթոշակին հաշվեգրված տոկոսները՝ սկսած 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 25.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ծառայությանը պարտավորեցվել է Արմեն Մելկումին վճարել վերջինիս սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը սկսած 01.05.2013 թվականից՝ վերացնելով 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 միջամտող վարչական ակտը, իսկ մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2016 թվականի որոշմամբ Ծառայության և Նախարարության վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 25.03.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմեն Մելկումը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 60-րդ և 83-րդ հոդվածները, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արմեն Մելկումը կենսաթոշակ նշանակելու խնդրանքով իրավասու վարչական մարմնին դիմելիս արդեն իսկ ներկայացրել է օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հավաստում են իր՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալը: Փաստորեն, Արմեն Մելկումն իրեն օրենքով հասանելիք կենսաթոշակի նկատմամբ ունի սեփականության իրավունք: Մինչդեռ այդ իրավունքի իրացման համար ՀՀ քաղաքացու վավեր անձնագիր ներկայացնելը զուտ ձևական պահանջ է, քանի որ տվյալ դեպքում վարչական մարմնին առանց այդ փաստաթղթի էլ կարող էր նույնակա-նացնել Արմեն Մելկումին: Հետևաբար Արմեն Մելկումը զրկվել է իր սեփականության իրավունքից Ծառայության կողմից դրևորված ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2016 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.03.2016 թվականի վճիռին, կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Մելկումի՝ 25.12.1995 թվականին տրված ՀՀ քաղաքացու թիվ AA0277243 անձնագրի վավերականության ժամկետը, որը պետք է ավարտվեր 25.12.2005 թվականին, երկարաձգված է եղել մինչև 25.12.2010 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկատնօրոգական փորձաքննության գործակալության Երևան քաղաքի թիվ 6 բժշկատնօրոգական փորձաքննության հանձնաժողովի թիվ 621874 տեղեկանքի համաձայն՝ Արմեն Մելկումը հանդիսանում է երկրորդ կարգի հաշմանդամ (**հատոր 1-ին, գ.թ. 51**):

3) Ծառայության պետի տեղակալի 18.07.2013 թվականի թիվ ՎԳ/ԼԼ-1/7418-13 գրության համաձայն՝ ՀՀ պետական կենսաթոշակային համակարգի շտեմարանի տվյալներով Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակվել է վճարվել է հաշմանդամության կենսաթոշակ: Արմեն Մելկումի կենսաթոշակը վերջին անգամ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) թիվ 16045106758300 հաշվեհամարին փոխանցվել է 2013 թվականի ապրիլ ամսին, իսկ Բանկում 10.04.2013 թվականին Արմեն Մելկումի նոր՝ թիվ 16045106758303 հաշվեհամարը բացվել է զինվորական գրքույկի և անվավեր սոցիալական քարտի հիման վրա, որը իրավաչափ չէ և չի կարող հիմք հանդիսանալ կենսաթոշակի վճարումը բանկի միջոցով վերսկսելու համար: Հետևաբար 2013 թվականի մայիս ամսից Արմեն Մելկումի կենսաթոշակի վճարումը շարունակելու հիմքեր չկան (**հատոր 1-ին, գ.թ. 41-42**):

4) Բանկի կողմից 21.05.2013 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արմեն Մելկումը մինչև 02.04.2013 թվականը Բանկում բացված կենսաթոշակի հաշվեհամարից ստացել է կենսաթոշակային փոխանցումները (**հատոր 1-ին, գ.թ. 25**):

5) Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 գրությամբ, ի պատասխան Արմեն Մելկումի 26.02.2014 թվականի դիմումի, վերջինիս հայտնվել է, որ ըստ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ Արմեն Մելկումի՝ ՀՀ քաղաքացու թիվ AA0277243 անձնագրի վավերականության ժամկետն ավարտվել է 25.12.2010 թվականին, ուստի 2013 թվականի մայիս ամսից չստացած կենսաթոշակի վճարման հարցը կարող է քննության առնվել ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն անհրաժեշտ անձը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը, ներկայացնելու դեպքում (**հատոր 1-ին, գ.թ. 48**):

4. Վճռաբեկ դատարանի պայմանադրականությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի վճարումը դադարեցնելու իրավական հիմքերի և առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել կենսաթոշակառուի անձը հաստատող փաստաթղթի՝ ՀՀ քաղաքացու անձնագրի, վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով այն պայմաններում, երբ անձի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը չի դադարեցվել:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի (...) հաշմանդամության (...) և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (...), և նրան նշանակվել է կենսաթոշակ (...):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին, եթե հաշմանդամություն սահմանելու կամ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու ժամանակ անձն ունեցել է հետևյալ աշխատանքային ստաժը (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառու (...), կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին (...):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է՝ (1) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում. (2) կենսաթոշակառուին (...) տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում. (2.1) եթե կենսաթոշակը վճարվում է լիազորագրով (...)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուամսյա ժամկետը լրանալու դեպքում. (2.2) եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառու տասներկու ամիս անընդմեջ բացակայում է Հայաստանի Հանրապետությունից (...):

(3) նույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում (...):

ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշման 1-ին հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելը կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցելն է:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է:

Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև՝ «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատու ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*տե՛ս, օրինակ, Մինասյանը և Մեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Միաժամանակ Եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքը ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*տե՛ս, Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium (17849/91) գործով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը*):

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*տե՛ս, Burdov v. Russia (59498/00) գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, իր նախկին որոշումներում ևս արձանագրել է, որ կենսաթոշակի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող գույքային իրավունք է (*տե՛ս, օրինակ՝ Թերեզա Գևորգյանն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորո-

շումը, որ օրենսդիրը տարանջատել է «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» հասկացությունները: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի ծագման համար նախատեսվել են տարբեր իրավաբանական փաստեր: Մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը ծագում է օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում, իսկ կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ կենսաթոշակի իրավունքի առկայությամբ պայմանավորված՝ համապատասխան մարմին սահմանված կարգով դիմելու պարագայում (*տես, Արարատ Ափոյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնջի ձեռն քաղաքացիական գործի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն է, որը սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու, նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը: Օրենսդիրը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրելով պետական կենսաթոշակների տեսակները, դրանց շարքում սահմանել է նաև հաշմանդամության կենսաթոշակը, որը դասվում է աշխատանքային կենսաթոշակների շարքին («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իմաստով ֆիզիկական անձանց կենսաթոշակ նշանակելը տեղի է ունենում ֆիզիկական անձի դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի արդյունքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա, որն էլ տվյալ ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս անարգել օգտվելու կենսաթոշակ ստանալու իր իրավունքից: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ֆիզիկական անձինք կարող են ձեռք բերել հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք, եթե կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում դիմելու պահին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմնի կողմից ճանաչվել են հաշմանդամ և ունեն որոշակի աշխատանքային ստաժ: Ընդ որում, հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում և վճարվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների, ինչպես նաև ՀՀ կառավարության 05.05.2011 թվականի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 670-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից հետևում է, որ նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը կատարվում է երկու եղանակով՝ կանխիկ ու անկանխիկ: Ընդ որում, կենսաթոշակի վճարման անկանխիկ եղանակը ենթադրում է կենսաթոշակի գումարի փոխանցում կենսաթոշակառուի անվամբ օրենքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության բանկային հաշվին: Միևնույն ժամանակ օրենսդիրը նշված օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների համար սահմանել է տարեկան առնվազն մեկ անգամ բանկ ներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն ստորագրելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում սպառիչ կերպով սահմանել է նշանակված

կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը դադարեցնելու հիմքերը: Նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցումն օրենսդիրը պայմանավորել է այնպիսի իրավաբանական փաստերի առաջացմամբ, *ինչպիսիք են կենսաթոշակատուի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարումը, կենսաթոշակատուին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարվելը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բանկ ներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարություն ստորագրելու պարտականությունը կենսաթոշակատուի կողմից չկատարվելը և այլն:*

Այսպիսով, կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը կարող է դադարեցնել նշանակված կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարումը բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերի բացակայության պայմաններում կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման դադարեցումը ոչ իրավաչափ միջամտություն է կենսաթոշակատուի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ իրավասու վարչական մարմնի կողմից, առանց օրենքով սպառիչ սահմանված հիմքերի առկայության, անձի կենսաթոշակի վճարումը դադարեցնելը ոչ իրավաչափ վարչարարության դրսևորում է, որը խախտում է կենսաթոշակատուի սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ անձին հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքերի շարքում օրենսդիրը չի նախատեսել կենսաթոշակատուի անձը հաստատող փաստաթղթերի, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելը:

Այսպես, «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին անձնագիր ստանում է կամավոր՝ անկախ տարիքից, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) 16 տարին լրացած քաղաքացիներին [անձնագիրը տրամադրվում է] 10 տարի վավերականության ժամկետով (...):

ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության» 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 16 տարին լրացած քաղաքացու անձնագիրը տրվում է 10 տարի ժամկետով: Ժամկետանց անձնագրերն անվավեր են և ենթակա են փոխանակման՝ սահմանված կարգով:

Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ իրավակիրառ պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ կենսաթոշակի նշանակումից հետո՝ կենսաթոշակի վճարման ենթակա լինելու ժամանակահատվածի ընթացքում, կենսաթոշակատուի անձնագրի վավերականության ժամկետն ավարտվում է: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, օրինակ, այն դեպքում, երբ տվյալ կենսաթոշակատուի անձնագիրը, որը տրվել է 10 տարի ժամկետով, կենսաթոշակի նշանակման պահին վավերական է եղել, սակայն կենսաթոշակի վճարման ժամանակահատվածի ընթացքում նշված տասնամյա ժամկետը լրացել է, և կենսաթոշակատուի անձնագիրը դարձել է անվավեր: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննարկվող իրավիճակի առաջացումը չի կարող հիմք հանդիսանալ կենսաթոշակի վճարումը դադա-

ընցնելու համար, քանի որ նշանակված կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, իսկ կենսաթոշակառուի անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելն այդ հիմքերի շարքում նախատեսված չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ կենսաթոշակի (այդ թվում նաև՝ հաշմանդամության) վճարման ենթակա լինելու ժամանակահատվածի ընթացքում կենսաթոշակառուի անձնագրի վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով կենսաթոշակի վճարումն իրավասու վարչական մարմնի կողմից դադարեցնելը ոչ իրավաչափ վարչարարություն է, որը հանգեցնում է կենսաթոշակառուի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի խախտման:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Մելկումին՝ որպես երկրորդ կարգի հաշմանդամի, 02.04.1999 թվականից նշանակվել է վճարվել է հաշմանդամության կենսաթոշակ: Արմեն Մելկումին հաշմանդամության կենսաթոշակի վճարումն անկանխիկ եղանակով՝ Բանկում բացված հաշվեհամարի միջոցով, վերջին անգամ կատարվել է 2013 թվականի ապրիլ ամսին: Այնուհետև՝ 2013 թվականի մայիս ամսից Ծառայությունը դադարեցրել է Արմեն Մելկումին հաշմանդամության կենսաթոշակի վճարումը: Արմեն Մելկումը դիմել է Ծառայությանը՝ 2013 թվականի մայիս ամսից իրեն չվճարված կենսաթոշակը վճարելու և վճարումները շարունակելու պահանջով, սակայն Ծառայությունը 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 գրությամբ մերժել է Արմեն Մելկումի պահանջը՝ պատճառաբանելով, որ Արմեն Մելկումի թիվ AA0277243 անձնագրի վավերականության ժամկետն ավարտվել է 25.12.2010 թվականին, ուստի 2013 թվականի մայիս ամսից չստացած կենսաթոշակի վճարման հարցը կարող է քննության առնվել վավերական անձնագիր ներկայացվելու դեպքում: Ծառայությունն Արմեն Մելկումի հաշմանդամության կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմքում, ըստ էության, դրել է այն հիմնավորումը, որ Բանկում 10.04.2013 թվականին բացված Արմեն Մելկումի նոր հաշվեհամարը բացվել է զինվորական գրքույկի և անվավեր սոցիալական քարտի հիման վրա, ինչն իրավաչափ չէ, քանի որ զինվորական գրքույկը չի հանդիսանում Արմեն Մելկումի անձը հաստատող փաստաթուղթ և չի կարող հիմք հանդիսանալ 2013 թվականի մայիս ամսից Արմեն Մելկումի կենսաթոշակի վճարումը շարունակելու համար:

Արմեն Մելկումը դիմել է վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Ծառայությանը 26.02.2014 թվականի թիվ 14/3173-14 դիմում-բողոքի հիմքով ընդունել իրեն կենսաթոշակ վճարելու մասին բարենպաստ վարչական ակտ և 01.05.2013 թվականից սկսած վճարել իր սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգով կենսաթոշակին հաշվեգրված տոկոսները՝ սկսած 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը:

Դատարանը մասնակիորեն բավարարել է Արմեն Մելկումի հայցը՝ Ծառայությանը պարտավորեցնելով Արմեն Մելկումին վճարել վերջինիս սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը սկսած 01.05.2013 թվականից և վերացնելով Ծառայության աշխատակազ-

մի Մալաթիա-Սեբաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 միջամտող վարչական ակտը, իսկ մնացած մասով հայցը մերժել է: Դատարանը պատճառաբանել է, որ զինվորական գրքույկը Հայաստանի Հանրապետությունում նույնպես հանդիսանում է անձը հաստատող փաստաթուղթ: Հետևաբար, ըստ Դատարանի, պատասխանող վարչական մարմինը, հիմք չընդունելով Արմեն Մելկումի զինվորական գրքույկը որպես անձը հաստատող փաստաթուղթ և չվճարելով վերջինիս կենսաթոշակը, չի իրականացրել պատշաճ վարչարարություն: Դատարանը գտել է, որ Ծառայության կողմից Արմեն Մելկումին կենսաթոշակ չվճարելը հակասում է ՀՀ կառավարության 22.12.1999 թվականի «Անձը հաստատող փաստաթղթի մասին» թիվ 767 որոշմանը և խախտում է վերջինիս կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Ծառայության և Նախարարության վերաքննիչ բողոքները և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ ամբողջությամբ մերժել է Արմեն Մելկումի հայցը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Արմեն Մելկումի կողմից կենսաթոշակը վճարելու պահանջով վարչական մարմնին դիմելիս ներկայացվել է ՀՀ քաղաքացու անվավեր անձնագիր, իսկ հայցվորի կողմից որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացված զինվորական գրքույկը չի կարող համարվել կենսաթոշակ վճարելու համար անձը հաստատող փաստաթուղթ, քանի որ զինվորական գրքույկը հանդիսանում է անձը հաստատող փաստաթուղթ միայն ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ծառայության կողմից Արմեն Մելկումին կենսաթոշակ չվճարելն իրավաչափ է:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Արմեն Մելկումին 25.12.1995 թվականին տրված ՀՀ քաղաքացու թիվ AA0277243 անձնագրի վավերականության ժամկետն ավարտվել է 25.12.2010 թվականին, քանի որ Արմեն Մելկումի անձնագրի վավերականության տասնամյա ժամկետը երկարաձգված է եղել ևս հինգ տարով՝ ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության» մինչև 12.08.2017 թվականը գործող խմբագրությամբ 3-րդ կետի ուժով, որի համաձայն՝ (...) *գործածության համար պիտանի անձնագրերի ժամկետը (...) կարող է երկարաձգվել ևս 5 տարի ժամկետով (...)*: Ծառայությունը 2013 թվականի մայիս ամսից դադարեցրել է Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը՝ Արմեն Մելկումի թիվ AA0277243 անձնագրի վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով:

Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ նշանակված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել բացառապես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում, իսկ կենսաթոշակառուի անձնագրի վավերականության ժամկետի ավարտվելն այդ հիմքերի շարքում նախատեսված չէ: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Արմեն Մելկումի հաշմանդամության կենսաթոշակի վճարումը վերջինիս անձնագրի վավերականության ժամկետն ավարտվելու հիմքով դադարեցնելը Ծառայության կողմից ոչ իրավաչափ վարչարարության դրսևորում է, որը հանգեցրել է Արմեն Մելկումի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ

երաշխավորված սեփականության իրավունքի խախտման:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը չէր կարող դադարեցվել 2013 թվականի մայիս ամսից, քանի որ տվյալ դեպքում բացակայել են այդ կենսաթոշակի վճարումը դադարեցնելու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն գործում առկա չէ որևէ փաստական տվյալ, չի ներկայացվել որևէ իրավական հիմք կամ փաստարկ, որի համաձայն՝ Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունքը 2013 թվականի մայիս ամսին դադարած է եղել կամ ներկայումս այն դադարած է: Այսինքն՝ Ծառայությունը 2013 թվականի մայիս ամսից դադարեցրել է Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը՝ այդ կենսաթոշակը ստանալու վերջինս իրավունքը դադարած չլինելու պայմաններում: Ասվածն էլ իր հերթին ենթադրում է, որ Ծառայությունը պարտավոր էր որոշում կայացնել Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված և 2013 թվականի մայիս ամսից վճարումը դադարեցված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը շարունակելու վերաբերյալ, ինչն էլ վերջինիս հնարավորություն կտար անարգել օգտվելու կենսաթոշակ ստանալու իր գույքային իրավունքից:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայությունը, 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 գրությամբ մերժելով 2013 թվականի մայիս ամսից իրեն չվճարված կենսաթոշակը վճարելու և վճարումները շարունակելու պահանջի վերաբերյալ Արմեն Մելկումի դիմումը, կայացրել է ոչ իրավաչափ վարչական ակտ: Այդ միջամտող վարչական ակտը՝ Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Մերաստիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 գրությունը, ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ, որի արդյունքում տեղի է ունեցել ոչ իրավաչափ միջամտություն Արմեն Մելկումի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի նկատմամբ: Ընդ որում, Արմեն Մելկումին 02.04.1999 թվականից նշանակված հաշմանդամության կենսաթոշակի վճարումը պետք է շարունակվի այն Ծառայության կողմից ոչ իրավաչափ կերպով դադարեցվելու պահից, այսինքն՝ 2013 թվականի մայիս ամսից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված այն իրավակարգավորումը, որի համաձայն՝ *կենսաթոշակ նշանակող սպորտաբաժանման մեդալով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակի իրավունք է ունեցել:*

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ Արմեն Մելկումի գինվորական գրքույկը որպես վերջինիս անձը հաստատող պատշաճ փաստաթուղթ հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը որևէ նշանակություն չունի սույն գործի քննության և լուծման համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Արմեն Մելկումի հաշմանդամության կենսաթոշակի վճարումը Ծառայության կողմից դադարեցվել է ապօրինի կերպով, և այն ենթակա է վերականգնման՝ առանց որևէ լրացուցիչ նախապայմանի:

Հետևաբար Դատարանն իր վճռում իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ Արմեն Մելկումին նշանակված հաշմանդամության կենսաթոշակը ենթակա է վճարման վերջինիս սկսած 01.05.2013 թվականից, իսկ Ծառայության աշխատակազմի Մալաթիա-Մերաս-

տիայի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 07.03.2014 թվականի թիվ 54/14-215 գրությունը ենթակա է անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի ներկայացման և վարույթ ընդունման պահին գործող հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը սխալ է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն որոշմամբ Դատարանի վճռին օրինական ուժ է տրվում միայն *Ծառայությանը 26.02.2014 թվականի դիմում-բողոքի հիմքով Արմեն Մելիքումին կենսաթոշակ վճարելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն և 01.05.2013 թվականից սկսած Արմեն Մելիքումի սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը վճարելուն պարտավորեցնելու* պահանջը բավարարելու մասով, քանի որ Դատարանի վճիռը՝ *Ծառայությանը կենսաթոշակին հաշվեգրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ սկսած 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը, վճարելուն պարտավորեցնելու* պահանջի մասով, վերաքննության կարգով չի բողոքարկվել և այդ պահանջը մերժելու մասով արդեն իսկ մտել է օրինական ուժի մեջ:

5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական

ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով գործով նկատի ունենալով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.06.2017 թվականի որոշմամբ Արմեն Մելկումն ազատվել է վճռաբեկ բողոքի համար գանձվող պետական տուրքից, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայությունից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2016 թվականի որոշումը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը 26.02.2014 թվականի դիմում-բողոքի հիմքով Արմեն Մելկումին կենսաթոշակ վճարելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն և 01.05.2013 թվականից սկսած Արմեն Մելկումի սեփականությունը հանդիսացող կենսաթոշակը 01.05.2013 թվականից մինչև կենսաթոշակի ամբողջական փաստացի վճարման պահը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 25.03.2016 թվականի վճիռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/0832/05/16
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան
Դատավորներ՝ Ա. Առաքելյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0832/05/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աիդա Հարությունյանի ներկայացուցիչ Աննա Տո-
նոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշ-
ման դեմ՝ ըստ հայցի Աիդա Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարա-
րության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝
Ծառայություն), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարու-
թյուն)՝ Ծառայությանը որոշակի գործողություն կատարելուն, այն է՝ հարկադիր կատարողի
28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշ-
մամբ Աիդա Հարությունյանին պատճառված 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չա-
փով վնասը հատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Աիդա Հարությունյանը պահանջել է Ծառայությանը պարտա-
վորեցնել կատարելու որոշակի գործողություն, այն է՝ հատուցել հարկադիր կատարողի
28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշ-
մամբ Աիդա Հարությունյանին պատճառված վնասը՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ

դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 06.06.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.02.2017 թվականի որոշմամբ Ծառայության և Նախարարության վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 06.06.2016 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աիդա Հարությունյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ծառայությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 8-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ, որ հերքելի փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հարկադիր կատարողը կատարողական գործողությունների ընթացքում հայտնաբերել է, որ Աիդա Հարությունյանը ստանում է միայն հաշմանդամության կենսաթոշակ, ուստի պարտավոր էր ավարտել կատարողական վարույթը և իրավասու չէր բռնագանձում տարածել հաշմանդամության կենսաթոշակի վրա: Մինչդեռ Աիդա Հարությունյանի հաշմանդամության կենսաթոշակի վրա բռնագանձում տարածելը հանգեցրել է վերջինիս դրամական միջոցների կորստի, որը վրա է հասել վարչական մարմնի ապօրինի գործողությունների հետևանքով: Վերոգրյալով հիմնավորվում է հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» ոչ իրավաչափ որոշման և Աիդա Հարությունյանին պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 06.06.2016 թվականի վճիռն:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է հանգել այն եզրակացության, որ Աիդա Հարությունյանի մատնանշած ենթադրյալ վնասը՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման արդյունք չի կարող լինել: Այդ պարտավորությունը բխել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտից. այն կախված չի եղել հարկադիր կատարողի գործողություններից և ուղղակիորեն բխել է կատարողական թերթի պահանջներից: Հետևաբար տվյալ դեպքում քննարկվող վնասի առկայությունը հիմնավորող ապացույցների բացակայության, ինչպես նաև այդպիսի վնասը հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման արդյունք լինելու փաստի չհաստատված լինելու պայմաններում Աիդա Հարությունյանի հայցը ենթակա էր մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 06.11.2001 թվականի վճռի հիման վրա 01.02.2005 թվականին տրված թիվ 01-1725 կատարողական թերթի համաձայն՝ դատարանը վճռել է դադարեցնել Մելինե Հովհաննիսյանի բնակելի տարածության օգտագործման իրավունքը Երևանի Պուշկինի նրբանցքի թիվ 4 տան նկատմամբ և որպես փոխհատուցում 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ վերջինիս տալուց հետո նրան ընտանիքով վտարել նշված տնից: Կատարողական թերթով պարտապան է հանդիսանում Աիդա Հարությունյանը (**հատոր 1-ին, գ.թ. 51, 60**):

2. Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Դավթաշենի սոցիալական ապահովության տարածքային բաժնի 07.06.2012 թվականի թիվ 51/329 գրության՝ 01.06.2012 թվականի դրությամբ Աիդա Հարությունյանի կենսաթոշակից հօգուտ Մելինե Հովհաննիսյանի փոխանցվել է 914.582 ՀՀ դրամ՝ համաձայն թիվ 01-1725 կատարողական թերթի (**հատոր 1-ին, գ.թ. 45**):

3. Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի 14.04.2016 թվականի գրության՝ Աիդա Հարությունյանին 1993 թվականից նշանակվել է և վճարվում է հաշմանդամության կենսաթոշակ: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 01.02.2005 թվականին տրված թիվ 01-1725 կատարողական թերթի համաձայն՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի որոշմամբ Աիդա Հարությունյանի կենսաթոշակից կատարվել են պահումներ՝ 2006 թվականի հունվար ամսից 50 տոկոսի, իսկ 2012 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2015 թվականի փետրվար ամիսը ներառյալ՝ 30 տոկոսի չափով: Աիդա Հարությունյանից բռնագանձման ենթակա գումարն ամբողջությամբ բռնագանձվել է, և Աիդա Հարությունյանի կենսաթոշակը 2015 թվականի մարտ ամսից վճարվում է ամբողջությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 55**):

4. Ըստ հայցի Աիդա Հարությունյանի ընդդեմ Ծառայության թիվ ՎԴ-1148/05/13 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.07.2015 թվականին կայացրած և 10.08.2015 թվականին օրինական ուժի մեջ մտած որոշմամբ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշումը՝ որպես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ կետի խախտմամբ ընդունված վարչական ակտ, ճանաչվել է անվավեր՝ այդ որոշման ընդունման պահից (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**):

5. Աիդա Հարությունյանն իր ներկայացուցչի միջոցով դիմել է Ծառայությանը՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշմամբ պատճառված վնասը՝ 2.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, հատուցելու պահանջով (**հատոր 1-ին, գ.թ. 11-12**):

6. Ծառայությունը մերժել է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Աիդա Հարությունյանի դիմումը՝ պատճառաբանելով, որ «*որևէ գործողության արդյունքում ենթադրյալ պարճառված վնասի դիմաց փոխհատուցում կարող է տրվել համապատասխան կադրողական թերթ ներկայացնելու դեպքում*» (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

պայմանավորված է վճարել բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճարել դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դատական գործերի դատավարական առանձնահատկությունների և դրանց քննության ու լուծման համար նշանակություն ունեցող պայմանների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանը, առաջնորդվելով իր նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով և նպատակ ունենալով զարգացնել դրանք, անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին. ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հարցն ինչ կառուցակարգով կարող է քննվել դատարանում, և ինչ պայմանների առկայության դեպքում կարող է բավարարվել այդ վնասի հատուցմանն ուղղված հայցապահանջը:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը (...) կարգավորում է (...) վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝ վարչական մարմիններ՝ (ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ. (բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ. (գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման նույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության (...) հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝ (ա) Հայաստանի Հանրապետությունը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում. (բ) համապատասխան համայնքը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ

հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը քննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում, ինչը նշանակում է, որ մասնավոր անձինք պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան: Ընդ որում, իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել պետության գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, այլ նաև այդպիսի գործողության կամ անգործության հետևանքով առաջացած վնասը կհատուցվի: Արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման նպատակով՝ օրենսդիրն ամրագրել է ոչ իրավաչափ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման իրավական հնարավորություն՝ սահմանելով վարչական մարմինների պատասխանատվությանը վերաբերող այնպիսի իրավակարգավորում, որի միջոցով ապահովվում է անձանց կրած վնասների հատուցումը: Վարչական մարմինների պարտականությունների խախտման հետևանքով անձանց կրած վնասների հատուցման վերաբերյալ դրույթներ ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն երաշխավորել է պետության ոչ իրավաչափ գործողություններից պաշտպանվելու իրական հնարավորություն, այլ նաև՝ այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու և օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում հատուցում ստանալու իրական հնարավորություն (*տե՛ս, Աշուր Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հիշյալ օրենքի համապատասխան իրա-

վաղորդություններով սահմանված՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման կառուցակարգին, իր նախկին որոշումներում ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով (*Կեն, Ժորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտականություն կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում՝ համապատասխան համայնքը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի հատուցման պարտականությունը, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը նախատեսել է, որ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը: Այլ կերպ ասած, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, որոնք այդ պարտականությունը կատարում են համապատասխան վարչական մարմնին ներկայացված՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշված դիմումը քննարկելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն բավարարելու մասին որոշում ընդունելու միջոցով:

Նախկինում կայացված որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ և 102-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի նկատմամբ կիրառելի են օրենքով վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, իսկ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը վարչական մարմինը քննարկում և լուծում է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումների քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Փաստորեն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման

պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է (յոեն, Էրիկ Վարդանյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով դիմելով համապատասխան վարչական մարմնին՝ շահագրգիռ անձը հայցում է իր պահանջի բավարարման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում: Մյուս կողմից, իրավակիրառ պրակտիկայում հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժվում է համապատասխան վարչական մարմնի կողմից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին որոշումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հանդիսանում է միջամտող վարչական ակտ, քանի որ այն համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված՝ վարչական ակտի հասկացությանը բնորոշ բոլոր հատկանիշներին (վարչական ակտի հասկացության մասին առավել մանրամասն տե՛ս, Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից լրիվ կամ մասնակիորեն մերժվելու դեպքում շահագրգիռ անձը կարող է դիմել իր խախտված իրավունքների ինչպես վարչական, այնպես էլ դատական պաշտպանության, մասնավորապես՝ դատարանի առջև բարձրացնելով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև պահանջելով պարտավորեցնել համապատասխան վարչական մարմնին ընդունելու շահագրգիռ անձի դիմումով հայցվող համապատասխան բարենպաստ վարչական ակտը:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված նմանատիպ վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա են վարչական դատարանի քննությանը: Ընդ որում, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև այդ դիմումով հայցվող վնասի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու հարցը վարչական դատարանի առջև կարող է բարձրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն

հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով շահագրգիռ անձը կարող է պահանջել պարտավորեցնել ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած վարչական մարմնին ընդունելու դրա հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է այդ վարչական մարմնի կողմից: Տվյալ դեպքում շահագրգիռ անձի ներկայացրած հայցը ներառում է նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը լրիվ կամ մասնակիորեն մերժելու մասին վարչական մարմնի որոշումը վիճարկելու պահանջը: Ընդ որում, վերոհիշյալ պահանջներով վարչական դատարան ներկայացված հայցի հիման վրա հարուցված վարչական գործերով պատասխանող է հանդես գալիս այն վարչական մարմինը, որը լրիվ կամ մասնակիորեն մերժել է իր կողմից դրսևորված ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին շահագրգիռ անձի դիմումը, քանի որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կատարում են այն վարչական մարմինների միջոցով, որոնց դրսևորած ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի մոտ առաջացել է վնասի հատուցման պարտականությունը, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանողն այն վարչական մարմինն է (...), որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից չբնարկվելու պարագայում առաջանում է օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիան, որի ուժով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական մարմնի կողմից չընդունված բարենպաստ վարչական ակտը՝ վնասի հատուցում տրամադրելու մասին, կարող է համարվել ընդունված, եթե առկա են դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ընդ որում, նշված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում այդ վարչական ակտից բխող իրավունքները դրա հասցեատիրոջ կողմից կարող են արդյունավետ կերպով իրացվել, եթե տվյալ անձին տրամադրվի հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունված լինելը հավաստող համապատասխան փաստաթուղթը: Այդ նպատակին է ծառայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակը, որի համաձայն՝ հայցվորը կարող է պահանջել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը (*վարչարարությամբ պատճառված վնասի հարուցման կապակցությամբ քննարկվող իրավական կառուցակարգի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Էրիկ Վարդանյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՂ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում

է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը ՀՀ իրավական համակարգում իրացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախևառաջ վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ վնասի հատուցման պահանջով,

3) վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով վարչական դատարան դիմելու միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում անդրադարձել է վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պայմաններին՝ նշելով, որ պետության կամ համայնքի պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1) իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,

2) պատճառվել է վնաս,

3) իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության կամ համայնքի պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Այսինքն՝ վարչական մարմինների պարտականությունների խախտման և վնասի պատճառման միջև պետք է առկա լինի իրավական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապ: Այլ կերպ ասած՝ վարչարարության արդյունքը ոչ իրավաչափ ճանաչելը դեռևս չի նշանակում, որ անձը վնասը կրել է հենց այդ վարչարարության հետևանքով. անհրաժեշտ է, որ վարչարարության և պատճառված վնասի միջև առկա լինի անմիջական պատճառահետևանքային կապ: Պատ-

ճառահետևանքային կապի հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին գնահատման առարկա պետք է դառնա, և դրա առկայությունը որոշելիս առանցքային պետք է համարվի այն գաղափարը, որ պատճառահետևանքային կապի առկայության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ վնասի առաջացումը ոչ իրավաչափ վարչարարության անխուսափելի և անմիջական արդյունքն է: Հետևաբար ոչ իրավաչափ վարչարարության և առաջացած վնասների միջև պատճառահետևանքային կապ կարող է առկա լինել, եթե վնասի առաջացումը հանդիսանում է իրականացված վարչարարության օբյեկտիվորեն անհրաժեշտ և ուղղակի արդյունքը: Եթե բացասական հետևանքները կարող էին առաջանալ նաև առանց ոչ իրավաչափ վարչարարության (իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության), ուրեմն դրանց միջև պատճառահետևանքային կապը բացակայում է: ՀՀ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ նշված պայմաններից թեկուզ մեկի բացակայությունը բացառում է վնասի հատուցման պահանջի բավարարման հնարավորությունը (*յրեն, Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ պատճառական կապն արտացոլում է երևույթների անհրաժեշտ ծագումնաբանական կապը, երբ մի երևույթը՝ պատճառը, որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջացնում է մյուսը՝ հետևանքը: Ընդ որում, կոնկրետ ոչ իրավաչափ վարչարարությամբ վնաս պատճառելու իրավահարաբերությունում վնասի հատուցման նախապայմանների առկայության հարցը լուծելիս էական է իրավական նշանակություն ունեցող պատճառական կապի առկայության հարցը պարզելը: Իսկ պատճառական կապն ունի իրավական նշանակություն, երբ վնաս պատճառողի վարքագիծը վնասակար հետևանքի հնարավորությունը դարձրել է իրականություն կամ պայմանավորել է այդ հետևանքի առաջացման կոնկրետ հնարավորությունը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման համար պատճառական կապի առկայության հարցում էական է այն հանգամանքը, թե վարչական մարմին ոչ իրավաչափ վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունն արդյո՞ք անմիջականորեն հանգեցրել են ֆիզիկական կամ իրավաբանական անձին հասցված վնասի առաջացմանը, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 06.11.2001 թվականի վճռի հարկադիր կատարման շրջանակներում հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման հիման վրա 2006 թվականի հունվար ամսից մինչև 2015 թվականի փետրվար ամիսը ներառյալ բռնագանձումներ են կատարվել Աիդա Հարությունյանի հաշմանդամության կենսաթոշակից: Նշված վարչական ակտն ընդունման պահից անվավեր է ճանաչվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.07.2015 թվականին կայացրած և 10.08.2015 թվականին ուժի մեջ մտած որոշմամբ՝ ըստ հայցի Աիդա Հարությունյանի՝ Ծառայության թիվ ՎԴ/1148/05/13 վարչական գործի շրջանակներում:

Աիդա Հարությունյանը դիմել է Ծառայությանը՝ վերջինիս ոչ իրավաչափ վարչարարության, այսինքն՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» ոչ իրավաչափ որոշմամբ իր հաշմանդամության կենսաթոշակից կատարված ապօրինի բռնագանձումների արդյունքում իրեն պատճառված վնասների հատուցման պահանջով, մինչդեռ Ծառայությունը մերժել է Աիդա Հարությունյանի դիմումը:

Այնուհետև Աիդա Հարությունյանը դիմել է դատարան՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» ոչ իրավաչափ որոշմամբ Աիդա Հարությունյանին պատճառված վնասը՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, հատուցելու պահանջով: Նշված հայցապահանջն Աիդա Հարությունյանը ներկայացրել է գործողության կատարման հայցով, որի հիման վրա էլ հարուցվել է սույն վարչական գործը:

Դատարանը բավարարել է Աիդա Հարությունյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Ծառայության կողմից թիվ 01-1725 կատարողական թերթի պահանջը կատարելու ընթացքում Աիդա Հարությունյանին հասցվել է վնաս, այն է՝ բռնագանձում է տարածվել նրա աշխատանքային հաշմանդամության կենսաթոշակի վրա, որի վրա բռնագանձում չէր կարող տարածվել: Այդ վնասը՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, պետք է հատուցվի Հայաստանի Հանրապետության կողմից:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Ծառայության և Նախարարության վերաքննիչ բողոքները և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը, մերժել է Աիդա Հարությունյանի հայցը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Աիդա Հարությունյանի կողմից մատնանշված ենթադրյալ վնասը՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման արդյունք չի կարող լինել: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Աիդա Հարությունյանի՝ 2.800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի պարտավորությունը բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջներից և կապված չէ հարկադիր կատարողի գործողություններից կամ վերջինիս կողմից կայացված վարչական ակտից: Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով բացակայում են վնասի առկայությունը հավաստող ապացույցները, ինչպես նաև չի հաստատվում այդ վնասի՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման արդյունք լինելու փաստը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախևառաջ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության կողմից Աիդա Հարությունյանի հաշմանդամության կենսաթոշակի վրա արգելանք դնելը և այդ կենսաթոշակից բռնագանձումներ կատարելը ոչ իրավաչափ վարչարարություն է, քանի որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.07.2015 թվականին կայացրած և 10.08.2015 թվականին օրինական ուժի մեջ մտած որոշմամբ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշումը ճանաչվել է անվավեր՝ որպես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ կետի խախտմամբ ընդունված վարչական ակտ:

Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Աիդա Հարությունյանն օրինական ուժի մեջ մտած վճռով ունեցել է գումար վճարելու պարտավորություն, սակայն այդ

դատական ակտի հարկադիր կատարման փուլում Ծառայությունը պարտավոր էր բռնագանձում տարածել միայն այնպիսի գույքի վրա, որի վրա բռնագանձում տարածելն օրենքով արգելված չէ: Մինչդեռ Ծառայությունը, արգելանք դնելով Աիդա Հարությունյանի այն միջոցների վրա, որոնցից բռնագանձում կատարելն արգելված է եղել օրենքով, դրսևորել է ոչ իրավաչափ վարքագիծ, ինչը փաստվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով: Նշված ոչ իրավաչափ որոշման արդյունքում է, որ Աիդա Հարությունյանի հաշմանդամության կենսաթոշակի միջոցներից բռնագանձում կատարելը հնարավոր է դարձել և փաստացի կատարվել է: Հետևաբար Ծառայության կողմից ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով Աիդա Հարությունյանին վնաս պատճառելու, մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու և դրա հիման վրա կատարված բռնագանձումներով Աիդա Հարությունյանին վնաս պատճառելու փաստն ապացուցված է: Իսկ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե Աիդա Հարությունյանի դրամական պարտավորությունը բխել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտից և պայմանավորված չի եղել հարկադիր կատարողի կայացրած վարչական ակտով կամ գործողություններով, անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանն իր այդ պատճառաբանությամբ Աիդա Հարությունյանի մոտ դրամական կորուստը (ենթադրյալ վնասը) պայմանավորել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով (դրա հիման վրա տրված կատարողական թերթի պահանջներով) այն դեպքում, երբ այդ միջոցների կորուստն անմիջական պատճառական կապի մեջ չէ օրինական ուժ ստացած դատական ակտի կամ դրա հիման վրա տրված կատարողական թերթի պահանջների հետ: Այլ խոսքով՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված դրամական պարտավորությունն ինքնին չէր կարող հանգեցնել Աիդա Հարությունյանի հաշմանդամության համար վճարվող միջոցների կորստի, եթե հարկադիր կատարողի կողմից բռնագանձումը կատարվեր օրենքով թույլատրված միջոցներից, հետևաբար հաշմանդամին վճարվող միջոցների կորուստն անմիջականորեն կապված է հարկադիր կատարողի ոչ իրավաչափ որոշման և դրա հիման վրա կատարված փաստացի բռնագանձման հետ:

Այսպիսով, Ծառայության դրսևորած վերոնշյալ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում Աիդա Հարությունյանը կրել է վնաս, քանի որ նրա հաշմանդամության կենսաթոշակի կորստի պատճառը հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշումն է և դրա հիման վրա տարիներ շարունակ կատարված բռնագանձումները, որոնք նշված վարչական ակտի բացակայության պայմաններում չէին կարող կատարվել: Այլ կերպ ասած՝ հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» ոչ իրավաչափ որոշումն անմիջականորեն հանգեցրել է Աիդա Հարությունյանին հասցված վնասի առաջացմանը, այն է՝ վերջինիս պատկանող այնպիսի դրամական միջոցներից կատարված բռնագանձումներին, որոնց վրա օրենքով արգելված է բռնագանձում տարածել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության կողմից իրականացված ոչ իրավաչափ վարչարարության և Աիդա Հարությունյանին պատճառված վնասների միջև առկա է իրավաբանական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Աիդա Հարությունյանը պահպանել է ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման կառուցակարգը՝ այն իմաստով, որ վերջինս այդ պահանջով նախ դիմել է ոչ իրավաչափ վարչարարություն դրսևորած վարչական մարմնին՝ Ծառայությանը, և վարչական մարմնից մերժում ստանալուց հետո նոր դիմել է վարչական դատարան: Այնուամենայնիվ,

նայնիվ Աիդա Հարությունյանը սխալ է ընտրել ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասի հատուցման հարցը դատարանի առջև բարձրացնելու համար օրենքով նախատեսված հայցատեսակը:

Աիդա Հարությունյանը վարչական դատարան է դիմել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով նախատեսված՝ գործողության կատարման հայցատեսակով: Մինչդեռ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը մերժելու մասին վարչական մարմնի որոշման իրավաչափության հարցը, ինչպես նաև այդ դիմումով հայցվող վնասի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու հարցը վարչական դատարանի առջև կարող է բարձրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցատեսակի միջոցով Աիդա Հարությունյանը կարող էր պահանջել պարտավորեցնել Ծառայությանն ընդունելու ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է այդ վարչական մարմնի կողմից: Տվյալ դեպքում Աիդա Հարությունյանի ներկայացրած հայցը ներառելու էր նաև ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իր դիմումը մերժելու մասին Ծառայության որոշումը վիճարկելու պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներում բազմիցս արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը (*տես, Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ վարչական դատարան դիմած անձն իր կողմից ներկայացված հայցի առարկան չի ձևակերպել տվյալ վիճելի իրավահարաբերության համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ճիշտ հայցատեսակով, ապա այդ անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովվում է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքի կենսագործման միջոցով, որը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված դատավարական սկզբունքի էությանը և բովանդակությանը, նախկին որոշումներից մեկում նշել է, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորու-

թյուն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը: Խնդրո առարկա սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, այն դեպքում, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք, դիմելով վարչական դատարան, ճիշտ չեն ընտրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպել իրենց հայցային պահանջները, վարչական դատարանը պարտավոր է մատնանշել ճիշտ հայցապահանջները կամ պատշաճ հայցատեսակները՝ առաջարկելով հայցվորին ճշտել ոչ հստակ հայցային պահանջները կամ ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով: Քննարկվող պարագայում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը, որը բխում է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունից, ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև՝ անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (յո՛ւն, Վարուժան Ավերիբյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը):

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (յո՛ւն, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրահանգման.

1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ճիշտ հայցատեսակը),

2) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ճիշտ

հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ (տեն, նաև Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը պարտավոր էր առաջարկել Աիդա Հարությունյանին ոչ ճիշտ հայցատեսակը՝ գործողության կատարման հայցը, փոխարինել պատշաճ հայցատեսակով՝ պարտավորեցման հայցով, քանի որ Աիդա Հարությունյանի կողմից ներկայացված ոչ ճիշտ հայցատեսակը չի կարող ապահովել վերջինիս իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը: Մինչդեռ սույն գործով Դատարանը չի կատարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու սկզբունքից բխող՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու իր պարտականությունը, այն է՝ չի առաջարկել Աիդա Հարությունյանին ներկայացնելու տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և օրենքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային բնորոշ հայցապահանջ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Աիդա Հարությունյանի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության համար վիճելի իրավահարաբերությունից բխող ճիշտ հայցատեսակը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված պարտավորեցման հայցը, հայցվորին պատշաճ կարգով մատնանշելու և այդ պարտականության կատարումից հետո սույն գործի հետագա ընթացքը որոշելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Մինևսույն ժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով ձեռք բերված ապացույցներով այդպես էլ չի հաստատվում Ծառայության ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով Աիդա Հարությունյանին պատճառված վնասի չափը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նոր քննության ընթացքում վարչական դատարանը պարտավոր է պարզել սույն գործի լուծման համար կարևորագույն նշանակություն ունեցող նշված հանգամանքը՝ ի վերջո պատասխանելով այն հարցադրմանը, թե իրականում հարկադիր կատարողի 28.12.2005 թվականի «Պարտապանի կենսաթոշակի վրա արգելանք դնելու մասին» որոշման հիման վրա որքան գումար է բռնագանձվել Աիդա Հարությունյանի հաշմանդամության կենսաթոշակից:

Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պայմանադրանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի արձանադրանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.06.2017 թվականի որոշմամբ հետաձգվել է: Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման, այդ թվում նաև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.06.2017 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բռնագանձման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/5059/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5059/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի ապրիլի 07-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Կոչոյանի ներկայացուցիչ Գեորգի Մելիքյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գագիկ Կոչոյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գագիկ Կոչոյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 02.05.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.02.2017 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 02.05.2016 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Կոչոյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 29-րդ հոդվածները:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշմամբ Գագիկ Կոչոյանին վերագրվող արարքի կատարման փաստը հաստատելու համար ներկայացված տեսագրությունը նկարահանված է հեռախոսի միջոցով պարեկային ավտոմեքենայում տեղադրված տեսագրող սարքից և չի կարող հանդիսանալ իրավախախտման հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցով կատարված տեսագրություն: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է անթույլատրելի ապացույց և հաշվի չի առել, որ վարչական մարմինը չի կատարել իր ապացուցման պարտականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.05.2016 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Ծառայության կողմից 22.08.2015 թվականին կազմված արձանագրության համաձայն՝ Գագիկ Կոչոյանը «Մերսեդես-Բենց» մակնիշի «19SU531» պետհամարանիշի ավտոմեքենայով Երևան-Գյումրի ավտոճանապարհին՝ 50 կմ/ժ առավելագույն արագությունը սահմանափակող նշանի ազդման գոտում, 22.08.2015 թվականին՝ ժամը 16:20-ին, երթևեկել է 77 կմ/ժ արագությամբ, այսինքն՝ գերազանցել է սահմանված արագությունը 17կմ/ժ-ով (արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար հանելով 10կմ/ժ արագությունը), ինչը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի հատկանիշներին (**գ.թ. 35**).

Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշման համաձայն՝ Գագիկ Կոչոյանը երթևեկության թույլատրելի արագության կանոնները խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 25.500 ՀՀ դրամի չափով (**գ.թ. 35**).

Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշմամբ Գագիկ Կոչոյանին վերագրվող արարքի կատարման փաստը հաստատելու համար ներկայացված տեսագրությունն իրենից ներկայացնում է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցով (հեռախոսով) կատարված վերարտադրությունը (**գ.թ. 33-ում գտնվող էլեկտրոնային կրիչ**):

4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ըն-

դուները պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում հայտնաբերված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով նախատեսված զանցանքի կատարման փաստի հաստատման համար դատարան ներկայացվող ապացույցների թույլատրելիության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի պահանջները խախտելու հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ռաբիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ օրենսդրությամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերարտադրությունը կարող է արդյո՞ք վարչական դատարանում համարվել թույլատրելի ապացույց ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում հայտնաբերված երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը հաստատելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի 150 տոկոսի չափով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (...) (գ) հաստատում է ճանապարհային երթևեկության կանոնները (...). (ժ) սահմանում է ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (...) օրենսդրությամբ սահմանված կարգով՝ (...) (թ) իրականացնում է ճանապարհապարեկային ծառայություն (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագության գերազանցման (...) համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճա-

նապարհային երթևեկության կանոնները, ինչպես նաև ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու լիազորություններն օրենսդիրը վերապահել է ՀՀ կառավարությանը: Վերջինս, հիմք ընդունելով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված՝ ճանապարհային երթևեկության կանոնները սահմանելու լիազորությունը, 28.06.2007 թվականին ընդունել է «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» թիվ 955-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածով հաստատվել են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները:

Այսպես, ՀՀ կառավարության նշված որոշման թիվ 1 հավելվածի 65-րդ կետի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ (...): Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով օրենքով իրեն վերապահված՝ ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու լիազորությունը, 23.11.2006 թվականին ընդունել է «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1769-Ն որոշումը, որի թիվ 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթյուն Հայաստանի Հանրապետության ոստիկանության (...) ճանապարհային ոստիկանության (...) կողմից ճանապարհապարեկային ծառայության կազմակերպման և իրականացման նպատակները, ձևերն ու մեթոդները, ինչպես նաև կարգավորվում են տեխնիկական միջոցների օգտագործման (...) հետ կապված հարաբերությունները:

ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման թիվ 1 հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները (մոտոցիկլետները) պետք է կահավորված լինեն (...) բորտհամակարգչով, իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ալկոմետր, տեսախցիկ և այլն) (...):

Նույն որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետի համաձայն՝ ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով: Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում չափաբանական ստուգում չանցած կամ ժամկետանց ստուգման վկայականով կամ չսերտիֆիկացված չափիչ միջոցների կիրառումը:

Նույն որոշման թիվ 1 հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ արգելվում է ծառայության կատարման ժամանակ այնպիսի տեխնիկական միջոցների օգտագործումը, որոնք ոստիկանության հաշվեցուցակով նախատեսված չեն:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից բխում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսել երթևեկության սահմանված արագությունը 11-30 կմ/ժ-ով գերազանցելու համար: Նշված հոդվածում նկարագրված արարքը, ըստ էության, դրսևորվում է ՀՀ կառավարության 28.06.2007 թվականի թիվ 955-Ն որոշմամբ հաստատված ճանապարհային երթևեկության այն կանոնի խախտմամբ, որի համաձայն՝ վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի սահմանված արագությունը չգերազանցող արագությամբ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ճանապարհային երթևեկության սահմանված

արագության գերազանցումը՝ որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, հաճախ հայտնաբերվում է ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս: Միաժամանակ օրենսդիրը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասում հստակ ամրագրել է, որ երթևեկության սահմանված արագության գերազանցման համար պատասխանատվություն է առաջանում, երբ տվյալ խախտումը փաստարկված է համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ: Ըստ այդմ, տրանսպորտային միջոցների վարորդների կողմից նշված իրավախախտման կատարման փաստը կարող է հայտնաբերվել և ամրագրվել միայն հատուկ՝ տեխնիկական միջոցներով: Իսկ ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում ոստիկանության կողմից տեխնիկական միջոցների օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ, որի վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար նախատեսված տեխնիկական միջոցներից են նաև արագաչափը և տեսախցիկը: Ընդ որում, ՀՀ կառավարությունն արգելել է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար այնպիսի տեխնիկական (չափիչ) միջոցների, մասնավորապես՝ արագաչափի կամ տեսախցիկի, օգտագործումը, որոնք չեն անցել չափաբանական ստուգում կամ ունեն ժամկետանց ստուգման վկայական կամ սերտիֆիկացված չեն կամ նախատեսված չեն ոստիկանության հաշվեցուցակով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են (...) իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը

կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նյութական աշխարհի այն օբյեկտները, որոնք իրենց առկայությամբ, դրությամբ, արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հաստատման միջոց դառնալ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները (...): Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցները հետազոտվում են գնման միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներով անդրադառնալով վարչական դատավարությունում ապացույցների հետազոտման և գնահատման հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին (*յուն 'ս, օրինակ Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պեդական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթներով սահմանված են ապացույցների թույլատրելիության ընդհանուր և հատուկ կանոնները: Այսպես, ապացույցների թույլատրելիության ընդհանուր կանոնի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում: Ապացույցների թույլատրելիության այս կանոնը վերաբերում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված ձևական-ընթացակարգային պահանջների պահպանվածությունը և ենթադրում է. (ա) աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված

աղբյուրներից, (բ) ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները, (գ) պատշաճ ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն պատշաճ ձևակերպման, (դ) լիազորված սուբյեկտ՝ ապացույցը պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված պաշտոնատար անձի կողմից: Բացի վերոգրյալ ընդհանուր կանոնից, գոյություն ունի նաև ապացույցի թույլատրելիության հետևյալ հատուկ կանոնը. եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված է, որ գործի հանգամանքները պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, ապա այդ հանգամանքները չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Այսինքն՝ որոշ դեպքերում ապացույցը կարող է անթույլատրելի համարվել նաև այն պատճառով, որ այն չի հանդիսանում տվյալ փաստական հանգամանքը հաստատելու համար օրենքով կամ այլ իրավական ակտերով կանխորոշված «անհրաժեշտ» ապացույցը՝ այն որոշակի ապացույցը, որով, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, կարող է հաստատվել տվյալ փաստական հանգամանքը:

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով վարչական դատավարությունում ապացուցման բեռի բաշխման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (*յուե 'ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս հայտնաբերված՝ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու արարքի համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործով վարչական մարմինը կրում է այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի, մասնավորապես՝ պատասխանատվության ենթարկված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստի, ապացուցման բեռը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս հայտնաբերված՝ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու արարքը կարող է ամրագրվել ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցների օգտագործմամբ ձեռք բերված համապատասխան ապացույցի (լուսանկար, տեսագրություն և այլն) միջոցով: Այլ կերպ ասած՝ պատասխանատվության ենթարկված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը կարող է հաստատվել կամ

հերքվել այնպիսի ապացուցման միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցների օգտագործմամբ ձեռք բերված լուսանկարը կամ տեսագրությունը, որոնք իրենց բովանդակությամբ հնարավորություն են ընձեռում դատարանին առնվազն նույնականացնելու տրանսպորտային միջոցը, ինչպես նաև պարզելու վերջինիս երթևեկության արագությունը: Հետևաբար խնդրո առարկա փաստական հանգամանքը հաստատելու համար վարչական մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցներով ամրագրված համապատասխան ապացույցը, որը ձեռք է բերվել վարչական վարույթի ընթացքում և համապատասխանում է դրա թույլատրելիության բոլոր չափանիշներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի և 47-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ տեսագրությունը և լուսանկարը վարչական դատավարությունում դասվում են օրենքով նախատեսված իրեղեն ապացույցների շարքին: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանատվության ենթարկված անձի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստն ամրագրող տեսագրության կամ լուսանկարի՝ որպես իրեղեն ապացույցի թույլատրելիության չափանիշներից մեկը դրա ձեռքբերման միջոցների իրավաչափությունն է, որը հանգում է հետևյալին. նշված ապացույցը պետք է ստացված լինի այնպիսի տեխնիկական միջոցով, որը համապատասխանում է ճանապարհապարեկային ծառայություն իրականացնելիս ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ուստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցներին ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ այդ տեխնիկական միջոցները՝ արագաչափը կամ տեսախցիկը, անցել են չափաբանական ստուգում, արագաչափի կամ տեսախցիկի վկայականն իրավախախտման հայտնաբերման պահին չի եղել ժամկետանց, արագաչափը կամ տեսախցիկը իրավախախտման հայտնաբերման պահին եղել են սերտիֆիկացված, արագաչափը կամ տեսախցիկը նախատեսված են ուստիկանության հաշվեցուցակով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած այն փաստը, որ վերջինս գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը, ապացուցելու համար վարչական դատարան ներկայացված տեսագրությունը քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում պետք է համապատասխանի ապացույցների թույլատրելիության, ի թիվս այլնի, նաև վերոգրյալ պահանջներին: Ընդ որում, տվյալ տեսագրությունը պետք է ստացված լինի անմիջականորեն ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ուստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից և չպետք է հանդիսանա այդ միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերաբաղդությունը: Մինչդեռ այն դեպքում, երբ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստն ապացուցելու համար վարչական դատարան ներկայացված տեսագրությունն իրենից ներկայացնում է ճանապարհային երթևեկության բնա-

գավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերարտադրությունը, ապա այն չի կարող համարվել թույլատրելի ապացույց՝ դրա ձեռքբերման միջոցների իրավաչափության պահանջները պահպանված չլինելու հիմքով: Նման տեսագրությունն ապացուցողական ուժ չունի և չի կարող դրվել դատական ակտի հիմքում, քանի որ քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը կարող է հաստատվել միայն ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված և ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման պահանջներին համապատասխանող տեխնիկական միջոցից անմիջականորեն ստացված տեսագրությամբ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Գագիկ Կոչոյանի վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշումը: Նշված վարչական ակտով Գագիկ Կոչոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 25.500 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ նա «Մերսեդես-Բենց» մակնիշի «19SU531» պետհամարանիշի ավտոմեքենայով Երևան-Գյումրի ավտոճանապարհին՝ 50 կմ/ժ առավելագույն արագությունը սահմանափակող նշանի ազդման գոտում, 22.08.2015 թվականին՝ ժամը 16:20-ին, երթևեկել է 77 կմ/ժ արագությամբ, այսինքն՝ գերազանցել է սահմանված արագությունը 17կմ/ժ-ով (արագաչափ սարքի հնարավոր սխալանքի համար հանելով 10կմ/ժ արագությունը): Ընդ որում, նշված արարքը հայտնաբերվել է Ծառայության կողմից ճանապարհապարեկային ծառայության իրականացման ընթացքում:

Դատարանը բավարարել է Գագիկ Կոչոյանի հայցը՝ պատճառաբանելով, որ Ծառայությունը չի ներկայացրել իրավախախտումն ամրագրող տեսագրությունը: Դատարանը նշել է, որ գործում առկա էլեկտրոնային կրիչում ամրագրված տեսագրությունը չի կարող հանդիսանալ իրավախախտման հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցով կատարված տեսագրություն, քանի որ այն տեսանկարահանվել է հեռախոսի միջոցով՝ պարեկային ավտոմեքենայում տեղադրված տեսագրող սարքից:

Վերաքննիչ դատարանը բավարարել է Ծառայության վերաքննիչ բողոքը և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ մերժել է Գագիկ Կոչոյանի հայցը: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ համաձայնել է Դատարանի այն դիրքորոշման հետ, որ գործում առկա էլեկտրոնային կրիչում ամրագրված տեսագրությունը կատարվել է ոչ թե իրավախախտման հայտնաբերման համար նախատեսված տեխնիկական միջոցով, այլ՝ հեռախոսով: Այնուհանդերձ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «(...) այդ տեսագրությունով հաստատվում է, որ Գագիկ Կոչոյանին վերագրվող իրավախախտումը հայտնաբերվել է ամրագրվել է օրենքով նախատեսված համապատասխան հայտնի միջոցի կիրառմամբ, որի արտացոլանքն էլ հենց երևում է ներկայացված տեսագրությունում: (...) Ներկայացված տեսանկյունով ոչ թե հայտնաբերվել է ամրագրվել է հայցվորի կողմից կատարված իրավախախտումը, այլ

ապացուցվել է այն հանգամանքը, որ համապատասխան պաշտոնադատ անձը պահպանել է օրենսդրության այն պահանջները, որոնք նախատեսված են իր կողմից իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման գործառնություն իրականացնելիս (...)»:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս ստորադաս դատարանների առջև բարձրացված հարցը վերաբերել է այն հանգամանքին, թե սույն գործում առկա էլեկտրոնային կրիչում ամրագրված տեսագրությունը հանդիսանում է արդյոք թույլատրելի ապացույց՝ Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշմամբ Գագիկ Կոչոյանին վերագրվող արարքի կատարման փաստը հաստատելու համար: Նշված տեսագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն իրենից ներկայացնում է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից ստացված տեսագրության՝ ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշմամբ չնախատեսված տեխնիկական միջոցներով կատարված վերաբաշխություն: Այսինքն՝ այդ տեսագրությունն անմիջականորեն չի ստացվել ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված տեխնիկական միջոցից: Իսկ Վճռաբեկ դատարանի կողմից սույն որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումների համաձայն՝ նման տեսագրությունն ապացուցողական ուժ չունի և չի կարող դրվել դատական ակտի հիմքում, քանի որ երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը կարող է հաստատվել միայն ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման համար ոստիկանությանը հատկացված և ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման պահանջներին համապատասխանող տեխնիկական միջոցից անմիջականորեն ստացված տեսագրությամբ:

Փաստորեն, սույն գործով մերժելով Գագիկ Կոչոյանի հայցը՝ Վերաքննիչ դատարանը Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ 425744 որոշման իրավաչափությունը հաստատել է այնպիսի ապացույցի միջոցով, որը՝ որպես Գագիկ Կոչոյանի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստն ապացուցելու համար վարչական դատարան ներկայացված իրեղեն ապացույց, չի համապատասխանում այդ փաստն ամրագրող տեսագրության թույլատրելիության չափանիշներին, քանի որ վարչական մարմինը չի պահպանել այդ ապացույցի ձեռքբերման միջոցների իրավաչափության պահանջները: Հետևաբար Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է անթույլատրելի ապացույց՝ անտեսելով այն հանգամանքը, որ վարչական մարմինը չի կատարել վիճարկվող վարչական ակտի հիմքում ընկած փաստական հանգամանքի ապացուցման պարտականությունը: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ որևէ այլ թույլատրելի ապացույց, որով կարող է հաստատվել Գագիկ Կոչոյանի կողմից երթևեկության սահմանված արագությունը գերազանցելու փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված տեսագրությունը՝ որպես անթույլատրելի ապացույց, ապացույցների շարքից հանելու պայմաններում հաստատվում է այն

հանգամանքը, որ Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ՝ 425744 որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 2-րդ մասի, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «Ժը» կետի, 17-րդ հոդվածի 8-րդ մասի և այդ օրենքի հիման վրա ընդունված ՀՀ կառավարության 23.11.2006 թվականի թիվ 1769-Ն որոշման խախտմամբ և ենթակա էր անվավեր ճանաչման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, անվավեր ճանաչելով Ծառայության 22.08.2015 թվականի թիվ ԱԹ՝ 425744 որոշումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պարտադրանքայինությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրա-

պետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են (...) ֆիզիկական անձինք՝ (...) վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով (...):

Հաշվի առնելով, որ հայցվորը սույն գործով ազատված է պետական տուրքի վճարումից, իսկ վերջինիս բերած վճարելի բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի վճարման պարտականությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է կատարման Ծառայության կողմից, հետևաբար վերջինից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 02.05.2016 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1115/05/16
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1115/05/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.09.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Օհանյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ Քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Հայկ Օհանյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 07.11.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է, և Քաղաքապետարանից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.09.2017 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի

07.11.2016 թվականի որոշումը՝ դատական ծախսերի մասով, թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի «ա» ենթակետը, 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով հայցվորը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի հիմքով ազատված լինելով հայցադիմումի համար պետական տուրք վճարելու պարտականությունից, պետական տուրք չի վճարել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածը սահմանում է, որ փոխհատուցվում են միայն վճարված պետական տուրքն ու մյուս դատական ծախսերը: Այսինքն՝ դատական ծախսերի փոխհատուցումն իրենից ենթադրում է արդեն իսկ կատարված վճարման փոխարեն տրվող, վերադարձվող գումար, ուստի եթե չկա կատարված դատական ծախս, չի կարող լինել նաև դրա հատուցում: Հետևաբար տվյալ դեպքում Քաղաքապետարանը չէր կարող կրել հայցադիմումի համար սահմանված պետական տուրքը փոխհատուցելու պարտականություն, քանի որ չկատարված դատական ծախսի փոխհատուցման հարց չի կարող առաջանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.09.2017 թվականի որոշումը, փոփոխել այն և ՀՀ վարչական դատարանում պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Ծառայության պետի 10.10.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասին» թիվ Վ-39/34 որոշմամբ անվավեր է ճանաչվել սույն գործով վիճարկվող՝ Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը (**հատոր 1-ին, գ.թ. 93**):

4. Վճռաբեկ դատարանի պարզապես անհիմնությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պետական տուրք վճարելու պարտականությունից հայցվորի ազատված լինելու պայմաններում վերջնական դատական ակտով պետական տուրքի գումարը պատասխանող վարչական մարմնից հոգուտ պետության գանձելու անհրաժեշտության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանա-

տիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք պատասխանող վարչական մարմինը պարտավոր է պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով, եթե վարչական գործի վարույթը կարճվում է այդ գործի քննության ընթացքում վարչական մարմնի նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացման պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և

իրավաբանական անձինք (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՌ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՌ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՌ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները

թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Մակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*Կրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կրեն Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք:

Եվրոպական դատարանը, Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած իր վճիռներից մեկում անդրադառնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և պետական տուրք վճարելու պարտավորության հարաբերակցությանը, նշել է, որ պետական տուրքը վճարելու պարտա-

վորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին ինքնին չհամապատասխանող սահմանափակում (*լրեն, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, 48-րդ կետ*):

25.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-890 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (*լրեն՝ Ս, Շամսադ Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱԲԿ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մի կողմից դատարաններում պետական տուրք գանձելու հանրային շահի և մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի իրավաչափ շահի միջև պատշաճ հավասարակշռություն երաշխավորելու նպատակով օրենսդիրը որոշակի կատեգորիայի գործերով որոշակի կատեգորիայի անձանց համար նախատեսել է պետական տուրքի գծով արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով: Այդ արտոնությունը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, որն ամրագրում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու հիմքերը՝ սահմանելով դատարան դիմելու համար գանձվող պետա-

կան տուրքի վճարումից ազատելու դեպքերի բավական լայն շրջանակ: Նշված դեպքերից մեկն այն է, որ ֆիզիկական անձն օրենքի ուժով ազատված է իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության արդյունքում կայացրած դատական ակտով դատարանը լուծում է նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի, այդ թվում նաև՝ պետական տուրքի բաշխման հարցերը:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.07.2018 թվականի թիվ ՄԴՈ-1423 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձին զրկելու կամ այդ իրավունքի իրացումը սահմանափակելու նպատակ: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վճարված պետական տուրքը դրա վճարման պարտավորություն ունեցող դատավարության մասնակցի հաշվին կարող է հատուցվել օրենքով սահմանված կարգով, որը նաև պայմանավորված է մրցակցային արդարադատության էությամբ:

Նշված որոշման շրջանակներում անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ հոդվածում օրենսդիրն առաջնորդվել է մրցակցային արդարադատության հիմքում դրված կանոններով, համաձայն որոնց.

- կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է (իրավական վեճում «պարտվել է»), կրում է վկաներին և փորձագետներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար,

- դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Այսպիսով, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի, վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված առանձնահատուկ դեպքերում օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հարցում օբյեկտիվորեն կարևորել է հատկապես դատաքննության արդյունքը, դրա հիմքում որպես գնահատման չափանիշ դիտարկելով արդյունավետությունը, և դրան համապատասխան՝ դատական ծախսերի հատուցման պարտականություն սահմանել այն իրավասույթների համար, որի իրավունքների, օրինական շահերի դատական պաշտպանությունն օբյեկտիվորեն անարդյունավետ է եղել: Հետևաբար, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատական ծախսերի բաշխման (հատուցման) իրավակարգավորման նման սկզբունքի նախատեսումը հետապնդում է արդարացի, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխան՝ իրավունքի իրացման չափանիշներին համապատասխանող նպատակ, այն բավարար չափով որոշակի է, որպեսզի վարչական դատավարության կոնկրետ մասնակիցներն ի վիճակի լինեն կանխատեսել դատաքննության արդյունքներով պայմանավորված իրավական հետևանքներ՝ կապված դատական ծախսերի հատուցման հնարավոր պարտականության կատարման հետ:

Մույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է համարում անդրադառնալ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքերում դատական ծախսերի բաշխման հարցին այն պարագայում, երբ հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ըստ էության սպառվել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է որոշում, որով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքի համար դատական ծախսերի հատուցման առանձնահատկություններին: ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ թեև օրենսդիրը սահմանել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ լուծելու վեճը սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի հատուցման պարտականությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն պատասխանողի վրա դնելու հարցը, այդուհանդերձ այդ լիազորությունը դատարանները պետք է իրացնեն մարդու՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների հաշվառմամբ՝ այնպես, որ չխաթարվի այդ իրավունքների բուն էությունը: Մասնավորապես, եթե վեճը սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ժամանակ վարչական մարմնին իր նախաձեռնությամբ վերացրել է վիճարկվող վարչական ակտը, ապա այդ պարագայում հայցվորի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է կրի պատասխանող կողմը, ինչն ապահովում է անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների արդյունավետ իրացումը: Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն բոլոր դեպքերում, երբ գործի վարույթը կարճվում է այն հիմքով, որ վեճն ըստ էության սպառվել է վարչական մարմնի ակտիվ գործողությունների հետևանքով, ապա հայցվորի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը պետք է դրվի պատասխանողի վրա: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճն ըստ էության սպառվելու իրադրության առաջացման հարցում վարչական մարմնի գործողությունների ազդեցությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարագայում ստանում է առաջնային նշանակություն, քանի որ վեճն ըստ էության սպառելուն ուղղված վարչական մարմնի ակտիվ գործողությունները վկայում են այն իրողության մասին, որ անձի դատական պաշտպանության դիմելը եղել է արդարացված (*տես, Լիլիթ Մուսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4084/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի*):

րանի 07.04.2017 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճը սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դեպքում պատասխանող վարչական մարմնի վրա կարող են դրվել միայն այն դատական ծախսերը, որոնք կատարվել են կամ կատարվելու են հայցվորի կողմից: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված այն օրենսդրական կանոնը, որի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, պարտավոր է հատուցել այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կատարել է: Ընդ որում, կողմը պարտավոր է հատուցել մյուս կողմի կրած դատական ծախսերը ողջամիտ չափով, այսինքն՝ միայն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նշված կարգավորումը հստակորեն ընդգծում է դատական ծախսերի հատուցման պարտականության սահմանները, որոնք հանգում են հետևյալին.

1) որպես կանոն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը կրում է այն կողմը, որը գործի ելքում դատավարական իմաստով պարտվել է, այսինքն՝ այն կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կամ այն կողմը, որի վրա դատարանի կողմից օրենքով սահմանված դեպքերում դրվում է այդ պարտականությունը, օրինակ՝ պատասխանող վարչական մարմինը՝ վերջինիս նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում,

2) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է կամ կրելու է դատարանի դիմելու (դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու) համար,

3) դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջամտորեն անհրաժեշտ են եղել դատական ծախս կատարած կողմի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել այն հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը: ՀՀ սահմանադրական դատարանի նույն որոշմամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այն-

պիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ, մասնավորապես, հայտնել է այն իրավական դիրքորոշումը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարության շրջանակներում կայացված դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերում պետական տուրքի գծով արտոնություն չի տրամադրվում այդ արտոնությունից օգտված անձին, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր է առաջացնում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենքի վերոհիշյալ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելով՝ օրենսդիրը որևէ սահմանափակում կամ բացառություն չի նախատեսել՝ կապված այդ գործերով կայացված դատական ակտերի հետագա հնարավոր բողոքարկման շրջանակներում հիշյալ արտոնության շարունակական կիրառման հետ: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերությունով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերի համատեղ կիրառման շրջանակներում դատական ծախսերի բաշխման կանոնները չեն կարող մեկնաբանվել այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ պետական տուրքի գծով արտոնություն ունեցող անձից այդ ծախսերը գանձվեն՝ ներառելով նաև վճարման ենթակա պետական տուրքի գումարը: Դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերությունով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների հենց այսպիսի ընկալմամբ՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը նաև դատական բողոքարկման ընթացակարգերում:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերոհիշյալ իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու հանգամանքը վկայում է այն մասին, որ հայցվոր ֆիզիկական անձը դատարան դիմելու համար պետական տուրք չի վճարում, այսինքն՝ պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չի կատարում և ապագայում չի կատարելու: Հետևաբար, վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու

պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս չի կարող կրել հայցադիմումի համար սահմանված, սակայն չվճարված պետական տուրքը պետությանը հատուցելու պարտականություն:

Այսպես, հիմք ընդունելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք հայցվորը կրել է կամ կրելու է դատարան դիմելու համար: Մինչդեռ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորը դատարան դիմելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարում և չի կատարելու:

Մյուս կողմից, վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճարկվող վարչական ակտը վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի հատուցման պարտականությունը պատասխանող վարչական մարմնի վրա դրվելու պարագայում վերջինս պարտավոր է հայցվորին հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք ողջանտորեն անհրաժեշտ են եղել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Մինչդեռ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում հայցվորի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջանտորեն բացակայում է: Հետևաբար քննարկվող իրավիճակում դատարանը գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ պարտավոր է լուծված համարել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ սույն որոշմամբ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն վարչական գործերի նկատմամբ, որոնք հարուցվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա, և հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է այդ վարչական ակտի վիճարկման պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից: Մնացած բոլոր դատական գործերի նկատմամբ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի չեն, քանի որ Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ առաջնորդվում է ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշման ընդհանուր տրամաբանությամբ, որը վերաբերում է բացառապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության սահմանադրականու-

թյան հարցին:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

1) եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը գործի քննության ընթացքում վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ անվավեր է ճանաչվում, և ըստ էության վեճը սպառվում է, ապա այդ պարագայում դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա,

2) եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով գործի վարույթը կարճելիս դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի վրա, ապա վերջինս պարտավոր չէ պետությանը հատուցել վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից հայցվորն ազատված է օրենքի ուժով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Հայկ Օհանյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է անվավեր ճանաչել Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը: Սույն վարչական գործի քննության ընթացքում Ծառայության պետը 10.10.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասին» թիվ Վ-39/34 որոշմամբ իր նախաձեռնությամբ անվավեր է ճանաչել վիճարկվող վարչական ակտը, և սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջի հիմքում ընկած հանրային-իրավական վեճն ըստ էության սպառվել է:

Դատարանը կարճել է վարչական գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով և դատական ծախսերի բաշխման հարցը լուծել է հետևյալ կերպ. Քաղաքապետարանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի այն դիրքորոշումը, որ Քաղաքապետարանից հոգուտ ՀՀ պետական բյուջեի ենթակա է բռնագանձման 4.000 ՀՀ դրամ՝ որպես սույն վարչական գործով վճարվելիք պետական տուրքի գումար:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը՝ որպես Հայկ Օհանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտ, վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար Հայկ Օհանյանն օրենքի ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից: Ըստ այդմ՝ Հայկ Օհանյանը հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարել: Սակայն դատա-

կան պաշտպանություն նրան տրամադրվել է, քանի որ կաշկանդված լինելով քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով՝ ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտերի դեմ այդ անձի դատական պաշտպանության իրավունքի անխոչընդոտ իրականացման ապահովման նպատակով պետությունը սահմանել է պետական տուրքի վճարումից ազատման ձևով արտոնություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործի վարույթը կարճվել է գործի քննության ընթացքում Ծառայության պետի նախաձեռնությամբ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչվելու պատճառով վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով: Սույն գործի նման ելքի պայմաններում, Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն, դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է պատասխանող վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի վրա: Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշման վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու պայմաններում Հայկ Օհանյանը դատարան դիմելու համար պետական տուրքի գծով դատական ծախս չի կատարել և չի կատարելու: Ավելին, այդ վարչական ակտի դեմ Հայկ Օհանյանի դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրականացնելու համար պետական տուրքի գծով դատական ծախս կատարելու անհրաժեշտությունը ողջամտորեն բացակայում է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Քաղաքապետարանը պարտավոր չէ պետությանը հատուցել Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշումը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի գումարը, որի վճարումից Հայկ Օհանյանն ազատված է օրենքի ուժով, քանի որ այդ որոշման վիճարկման պահանջով դատարան դիմելիս պետական տուրքի գծով ծախս չի կատարվել, և այդ ծախսի կատարումը ողջամտորեն անհրաժեշտ չէր, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից դատական ծախսերի հատուցման պարտականություն կրող կողմը պարտավոր է հատուցել միայն այն դատական ծախսերը, որոնք մյուս կողմը կրել է, և որոնք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարճելով սույն գործի վարույթը՝ Դատարանը պարտավոր էր լուծված համարել Ծառայության 23.12.2015 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-0089257 որոշման վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի բաշխման հարցը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում

իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոքը բերող անձը պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում (*տե՛ս, «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգաֆոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Թեև նշված իրավական դիրքորոշումն արտահայտվել է քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հավասարապես կիրառելի է նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե քաղաքացիական, թե վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ և ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքար-

կելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը (*տե՛ս, Լիլիթ Մոսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ՝ ՎԴ/6047/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի 07.11.2016 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը վերաքննության կարգով, իսկ Վերաքննիչ դատարանի 05.09.2017 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել են միայն դատական ծախսերի մասով, իսկ Քաղաքապետարանը ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը տվյալ դեպքում վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների բողոքի համար սահմանված պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.09.2017 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

2. Վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1390/05/17

Նախագահող դատավոր՝
Դատավորներ՝

Կ. Մաթևոսյան

Կ. Բաղդասարյան

Կ. Ավետիսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1390/05/17
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Ավետիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-
րաքննիչ վարչական դատարանի 11.07.2018 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գագիկ Ավե-
տիսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության
(այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանա-
կելու մասին» թիվ 1705695158 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Գագիկ Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայու-
թյան 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1705695158 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան)
17.07.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2018
թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի
17.07.2017 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է և Գագիկ Ավետի-
սյանից հոգուտ Ծառայության բռնազանձվել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի

համար նախատեսված պետական տուրքի փոխհատուցում:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Ավետիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, բողոքաբերի վրա դնելով պետական տուրք վճարելու պարտականություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նման պարտականություն չի նախատեսում: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության հիմքով պետական տուրքից ազատվելու հնարավորությունը հավասարապես տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ հայցվորի պահանջը վարչական դատարանի կողմից բավարարվել է, սակայն հետագայում այդ վճիռը պատասխանողի կողմից բերված բողոքի արդյունքում բեկանվել է վերադաս դատական ատյանի կողմից: Տվյալ պարագայում հայցվորի վրա պետական տուրք վճարելու պարտականություն դնելը խախտում է վերջինիս սեփականության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է դատական ծախսերի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2018 թվականի որոշումը և այդ մասով փոփոխել այն՝ դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

Ծառայության պետի 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1705695158 որոշմամբ Գագիկ Ավետիսյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դատարան դիմելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատման ձևով օրենքի ուժով սահմանված արտոնության՝ դատական բողոքարկման փուլերում կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ան-

դրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտեր վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա կարող է դրվել պարտախանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն այն դեպքում, երբ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվել է ի վնաս հայցվորի:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ նույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝ դատարան տրվող հայցադի-

մումների, դիմումների (...), դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրենս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը

բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Մակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*Կեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կեն Khalfouli v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է դատարան դիմելու իրավունքի ֆինանսական սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու պարտականության հետ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պետական տուրքն ընդգրկված է դատական ծախսերի կազմում, որի հասկացությունը, տեսակները, դրույքաչափերը, պետական տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը պետական բյուջե մուծվող պարտադիր վճար է, որը գանձվում է պետական մարմինների մատուցած ծառայությունների կամ կատարած գործողությունների համար: Հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարումն անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման նախապայմաններից մեկն է, քանի որ օրենքով սահմանված կարգով պետական տուրքը վճարելու հանգամանքով է պայմանավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ արդարադատությունից օգտվելու հնարավորությունը: Այլ կերպ ասած, որպեսզի անձը խախտված իրավունքների պաշտպանության համար կարողանա իրացնել դատարան դիմելու հնարավորությունը, նա պետք է նախևառաջ վճարի օրենքով սահմանված համապատասխան դրույքաչափով պետական տուրք:

Եվրոպական դատարանը, Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած իր վճիռներից մեկում անդարադատնալով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և պետական տուրք վճարելու

պարտավորության հարաբերակցությանը, նշել է, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին ինքնին չհամապատասխանող սահմանափակում (*տե՛ս, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, 48-րդ կետ*):

25.05.2010 թվականի թիվ ՍԴՈ-890 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին գրելելու նպատակ: ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում փոխհատուցել պետության՝ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերը, կանխարգելել ակնհայտ անհիմն հայցադիմումների հոսքը, դատարան դիմելու իրավունքի չարաշահումը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը, կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու՝ պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

ՀՀ վճարել դատարանն իր նախկին որոշումներից մեկում նշել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (*տե՛ս, Շամսա Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 22.01.2014 թվականի որոշումը*):

Վճարել դատարանն արձանագրում է, որ մի կողմից դատարաններում պետական տուրք գանձելու հանրային շահի և մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի իրավաչափ շահի միջև պատշաճ հավասարակշռություն երաշխավորելու նպատակով օրենսդիրը որոշակի կատեգորիայի գործերով որոշակի կատեգորիայի անձանց համար նախատեսել է պետական տուրքի գծով արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով: Այդ արտոնությունը նախատեսված է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, որն ամրագրում է դատարաններում պետական տուրքի

վճարումից ազատելու հիմքերը՝ սահմանելով դատարան դիմելու համար գանձվող պետական տուրքի վճարումից ազատելու դեպքերի բավական լայն շրջանակ: Նշված դեպքերից մեկն այն է, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք օրենքի ուժով ազատված են իրենց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության արդյունքում կայացրած դատական ակտով դատարանը լուծում է նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի, այդ թվում նաև՝ պետական տուրքի բաշխման հարցերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իրավակիրառ պրակտիկայում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման պահանջով հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված լինելու հանգամանքը վկայում է այն մասին, որ հայցվոր ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք դատարան դիմելու համար պետական տուրք չեն վճարում, այսինքն՝ պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չեն կատարում: Հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք պետական տուրքի գծով դատական ծախս փաստացի չեն կատարում նաև վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելիս, ինչպես նաև վերաքննիչ վարչական դատարանի վերջնական դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելիս: Այսինքն՝ այն դեպքում, երբ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք օրենքի ուժով ազատված են հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից, ապա վերջիններս պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված են նաև այդ գործով իրենց համար անբարենպաստ դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոք ներկայացնելու համար:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում խնդրահարույց է դատական ծախսերի բաշխման հարցն այն իրավիճակում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման պահանջի հիման վրա հարուցված դատական գործը վարչական դատարանում լուծվում է հայցվորի օգտին, վարչական դատարանի դատական ակտը վերադաս դատական ատյան է բողոքարկվում ոչ թե հայցվորի, այլ պատասխանող վարչական մարմնի կողմից, և այդ բողոքի քննության արդյունքում գործի ելքը փոխվում է ի վնաս հայցվորի: Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավական դիրքորոշումներ ձևավորել հենց այդ խնդրահարույց իրավիճակի վերաբերյալ՝ հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչված որոշմամբ ընդգծել է, որ վճարված պետական տուրքը դրա վճարման պարտավորություն ունեցող դատավարության մասնակցի հաշվին կարող է հատուցվել օրենքով սահմանված կարգով, որը նաև պայմանավորված է մրցակցային արդարադատության էությամբ: Նշված որոշման շրջանակներում անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ ՀՀ սահ-

մանադրական դատարանը նշել է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հարցում օբյեկտիվորեն կարևորել է հատկապես դատաքննության արդյունքը, դրա հիմքում որպես գնահատման չափանիշ դիտարկելով արդյունավետությունը, և դրան համապատասխան՝ դատական ծախսերի հատուցման պարտականություն սահմանել այն իրավասուբյեկտի համար, որի իրավունքների, օրինական շահերի դատական պաշտպանությունն օբյեկտիվորեն անարդյունավետ է եղել: Հետևաբար ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ դատական ծախսերի բաշխման (հատուցման) իրավակարգավորման նման սկզբունքի նախատեսումը հետապնդում է արդարացի, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխան՝ իրավունքի իրացման չափանիշներին համապատասխանող նպատակ, այն բավարար չափով որոշակի է, որպեսզի վարչական դատավարության կոնկրետ մասնակիցներն ի վիճակի լինեն կանխատեսել դատաքննության արդյունքներով պայմանավորված իրավական հետևանքներ՝ կապված դատական ծախսերի հատուցման հնարավոր պարտականության կատարման հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ վերադաս դատարանը, վերահսկողություն իրականացնելով դատական ենթադրյալ սխալ պարունակող՝ ստորադաս ատյանի դատական ակտի նկատմամբ, կատարում է գործողություն, որն օրենքի իմաստով հանդիսանում է պետական տուրքի գանձման ինքնուրույն օբյեկտ: Ընդ որում, խնդրո առարկա իրավիճակում գանձվող պետական տուրքը ծառայում է այն նույն նպատակներին, ինչն այդ ինստիտուտն ունի ընդհանրապես, այն է՝ փոխհատուցել վերադաս դատարանում գործի քննությամբ պայմանավորված ծախսերը:

Մինևույն ժամանակ, սակայն, ՀՀ սահմանադրական դատարանը 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ հայտնել է այն իրավական դիրքորոշումը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարության շրջանակներում կայացված դատական ակտերի բողոքարկման ընթացակարգերում պետական տուրքի գծով արտոնություն չի տրամադրվում այդ արտոնությունից օգտված անձին, դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման առումով սահմանադրականության խնդիր է առաջացնում: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ օրենքի վերոհիշյալ հոդվածի վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազոր մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելով՝ օրենսդիրը որևէ սահմանափակում կամ բացառություն չի նախատեսել՝ կապված այդ գործերով կայացված դատական ակտերի հետագա հնարավոր բողոքարկման շրջանակներում հիշյալ արտոնության շարունակական կիրառման հետ: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմերի համատեղ կիրառման շրջանակներում դատական ծախսերի բաշխման կանոնները չեն կարող մեկնաբանվել այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ պետական տուրքի գծով արտոնություն ունեցող անձից այդ ծախսերը գանձվեն՝ ներառելով նաև վճարման ենթակա պետական տուրքի գումարը: Դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը «Պե-

տական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների հենց այսպիսի ընկալմամբ՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը նաև դատական բողոքարկման ընթացակարգերում:

Հիմնվելով վերոգրյալ իրավական դիրքորոշումների վրա՝ ՀՀ սահմանադրական դատարանը 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի գծով արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսերը, որը չի կարող ներառել այդ արտոնությամբ նախատեսված պետական տուրքի վճարը: Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերությունը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված վերոհիշյալ իրավական դիրքորոշումները վերաբերում են, մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն իրավիճակին, երբ հայցադիմում ներկայացնելու համար պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ոչ առևտրային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հայցը վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտով լրիվ կամ մասնակիորեն բավարարվում է, և այդ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվում է պատասխանող վարչական մարմնի կողմից: Այդ դեպքում պատասխանող վարչական մարմինն ազատված չէ վերաքննիչ բողոքի համար պետական տուրք վճարելու պարտականությունից և պարտավոր է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով: Այդ իրավիճակում, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի, պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքը բավարարելու և վարչական դատարանի վճիռը բեկանելու, փոփոխելու և հայցը մերժելու դեպքում վերաքննիչ դատարանը, անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, չի կարող պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականությունը դնել պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր կողմի վրա:

Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին. վարչական իրավախախտումների վերա-

բերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները և նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 10.07.2018 թվականի թիվ ՍԴԴ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները ներդնել վարչական գործերով իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևյալ եզրակացության. եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վստահայցվորի փոխվելու հանգամանքից: Այդ դեպքում վերաքննիչ վարչական դատարանը պարտավոր է վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող վարչական մարմնի կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

Մինչդեռ ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատուկ ընդգծել, որ սույն որոշմամբ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումները կիրառելի են բացառապես այն վարչական գործերի նկատմամբ, որոնք հարուցվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման հայցի հիման վրա, և հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է այդ վարչական ակտի վիճարկման պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրք վճարելու պարտականությունից:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Գագիկ Ավետիսյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս խնդրել է անվավեր ճանաչել Ծառայության 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1705695158 որոշումը: Նշված վարչական ակտով Գագիկ Ավետիսյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

Դատարանը բավարարել է Գագիկ Ավետիսյանի հայցը՝ Ծառայության 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1705695158 որոշումը ճանաչելով անվա-

վեր:

Վերաքննիչ դատարանը, բավարարել է Ծառայության վերաքննիչ բողոքը և բեկանելով ու փոփոխելով Դատարանի վճիռը՝ հայցը մերժել է: Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Վերաքննիչ դատարանը Գազիկ Ավետիսյանից հոգուտ Ծառայության բռնագանձել է 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրքի փոխհատուցում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության 02.02.2017 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1705695158 որոշումը՝ որպես Գազիկ Ավետիսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտ, վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար Գազիկ Ավետիսյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից: Գազիկ Ավետիսյանի վիճարկման հայցը Դատարանի կողմից բավարարվել է, և Դատարանի վճիռը վերաքննության կարգով բողոքարկել է պատասխանող Ծառայությունը: Ծառայությունն ազատված չէ վերաքննիչ բողոքի համար պետական տուրք վճարելու պարտականությունից և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել է պետական տուրք՝ 10.000 ՀՀ դրամի չափով: Վերաքննիչ դատարանը բավարարել է Ծառայության վերաքննիչ բողոքը, բեկանել ու փոփոխել է Դատարանի վճիռը և Ծառայության կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի հատուցման պարտականությունը դրել է պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված ֆիզիկական անձի՝ Գազիկ Ավետիսյանի վրա:

Մինչդեռ, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1423 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում սույն որոշմամբ արված իրավական հետևությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր Գազիկ Ավետիսյանի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվոր Գազիկ Ավետիսյանի փոխվելու հանգամանքից, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված հայցվոր Գազիկ Ավետիսյանի վրա պետական տուրք վճարելու (փոխհատուցելու) պարտականություն դնելու փոխարեն, պարտավոր էր վերաքննիչ բողոք բերելու համար պատասխանող Ծառայության կողմից վճարված պետական տուրքի հարցը համարել լուծված:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարտնակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը մասնակիորեն փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկին որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական ակտը բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, բողոք բերող անձը պետական տուրքի վճարման պարտականություն չի կրում*(տե՛ս, «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեգարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը)*:

Թեև նշված իրավական դիրքորոշումներն արտահայտվել են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործի շրջանակներում, սակայն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև վարչական դատավարության կարգով քննվող գործերի նկատմամբ, քանի որ թե՛ քաղաքացիական, թե՛ վարչական գործով կայացված վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելիս անձը հայցում է այնպիսի դատավարական հետևանքների առաջացում, որոնք անմիջականորեն

պայմանավորված չեն ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետևողական են վարույթի կանոնավոր ընթացքի ապահովմանը: Այս պարագայում անձի բողոքարկման իրավունքի իրացումն ուղղված է ոչ թե գործի ըստ էության լուծման իրավաչափության, այլ դրա արդյունքում դատական ծախսերի բաշխման իրավաչափության հարցի պարզմանը: Հետևաբար վերջնական դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում, անկախ այն հանգամանքից, թե տվյալ դատական ակտը կայացվել է քաղաքացիական, թե վարչական գործի շրջանակներում, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը (*տե՛ս, Լիլիթ Մոսեյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/6047/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի 11.07.2018 թվականի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկվել է միայն դատական ծախսերի մասով, իսկ Գագիկ Ավետիսյանը ՀՀ վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշման ուժով ազատված է այդ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գագիկ Ավետիսյանը տվյալ դեպքում վճռաբեկ բողոքի համար պետական տուրք չի վճարել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.07.2018 թվականի որոշման՝ պետական տուրքի բաշխման մասը, և այդ մասով այն փոփոխել: Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի հարցը համարել լուծված:
2. Վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/4502/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Արուվյան
Ա. Բաբայան

Վարչական գործ թիվ ՎԴ/4502/05/15
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարենկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբենկ դատարան) հետևյալ կազմով,

ԿԱԽԱՎԱԽՈՂ
ՉԵԿՈՒՄ

Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴԻՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին,

դոնրաց դատական նիստում, քննելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարազդատ Մկրտչյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) Երևանի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձ Կազմակերպության՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Վարազդատ Մկրտչյանը պահանջել է մասնակիորեն՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով, ճանաչել Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 14.07.2016 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.06.2017 թվականի որոշմամբ Վարազդատ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.07.2016 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վարազդատ Մկրտչյանի ներկայացուցիչ Ռուդոլֆ Հունանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը .

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ, որ հերքելի փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն վարչական գործի վարույթը ենթակա էր կարճման, քանի որ առկա է նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.10.2010 թվականի վճիռը: Նշված գործով և սույն գործով դատավարության մասնակիցները նույն անձինք են, այդ երկու գործերով վեճի առարկան նույնն է՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելը: Համընկնում է նաև թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով և սույն գործով վեճի փաստական հիմքը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հայցվորը սույն գործով ներկայացված հայցադիմումում որպես իրավական հիմք նշել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, իսկ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, ապա թե՛ նախկին, թե՛ ներկայիս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով նախատեսված է, որ կիրառման ենթակա օրենսդրությունը պարզում է վարչական դատարանը, որը կաշկանդված չէ բացառապես հայցվորի վկայակոչած նորմերով: Հետևաբար թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով և սույն գործով վեճի իրավական հիմքը նույնն է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի վարույթը չկարճվելու և գործը քննվելու դեպքում տեղի է ունենում արդեն իսկ մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն, որի հետևանքով խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.06.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» 14.07.2016 թվականի որոշմանը:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ անդրադարձել է բողոքով բարձրացված բոլոր հարցադրումներին և դրանց տվել է ճիշտ իրավական գնահատականներ: Միաժամանակ սույն գործով հաստատվում է, որ վիճելի շենք-շինություններն ամբողջությամբ համարվում են պետական սեփականություն, որոնց նկատմամբ չէր կարող գրանցվել

Կազմակերպության սեփականության իրավունքը: Վերաքննիչ դատարանը ճիշտ է կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը և ղեկավարվելով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով՝ հանգել է ճիշտ եզրակացության: Հետևաբար Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնվի ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստը.

Ըստ հայցի Վարազդատ Մկրտչյանի ընդդեմ Կադաստրի Ավանի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձ Կազմակերպության՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 11.10.2010 թվականին կայացված՝ օրինական ուժի մեջ մտած վճռով Վարազդատ Մկրտչյանի հայցը մերժվել է: Ընդ որում, Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու պահանջի հիմքում թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով հայցվորի կողմից դրված է եղել այն փաստարկը, որ Կազմակերպությանը սեփականության իրավունքով շենք կամ շինություն չի հատկացվել: Իսկ որպես հայցի իրավական հիմք վկայակոչված է եղել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը (**հատոր 1-ին, գ.թ. 97-102**):

4. Վճռաբեկ դատարանի պարզաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջով հարուցված գործի վարույթը կարճելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք միևնույն վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հայցապահանջների հիման վրա հարուցված երկու գործերով վեճի իրավական հիմքերը նույնական են, եթե այդ գործերով հայցվորի կողմից վկայակոչվել են տվյալ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված փարբեր հիմքեր:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և մինչև նույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորու-

թյուն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յոնս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յոնս, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յոնս Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յոնս, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարադատության մատչելիության իրավունքը սերտորեն փոխկապակցված է հայց հարուցելու իրավունքի այն ընդհանուր բացասական նախադրյալի հետ, որը վերաբերում է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությանը: Այսպես, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ: Փաստորեն, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը հանգեցնում է

հայց հարուցելու իրավունքի բացակայության:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վերոգրյալ դատավարական կարգավորումները բխում են դատական ակտերի պարտադիրության *res judicata* հանրաճանաչ իրավական սկզբունքի էությունից, որը համարվում է իրավունքի գերակայության անկյունաքարային սկզբունքի՝ իրավական որոշակիության կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Այսպես, Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է այն կայուն իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքն անհրաժեշտ է մեկնաբանել Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որը Պայմանավորվող պետությունների ընդհանուր ժառանգության մաս է հռչակում, ի թիվս այլնի, նաև իրավունքի գերակայությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ իրավունքի գերակայության հիմնարար հայեցակետերից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է, որը, *inter alia*, պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը չպետք է կասկածի տակ դրվի: Եվրոպական դատարանը միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիությունը ենթադրում է *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքն ընդգծում է, որ կողմերից ոչ մեկը իրավունք չունի պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ միայն գործի կրկնակի քննության և գործով նոր որոշման կայացման նպատակով: Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա արդեն իսկ լուծված գործի կրկնակի քննության համար: Նախանշն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքների ուժով (*լրեն, Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի (22343/08) գործով Եվրոպական դատարանի 03.12.2015 թվականի վճիռը, 33-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է համարվում այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են, ի թիվս այլնի, նաև հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար (*լրեն, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան*

Վարդանյանի և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Վերոգրյալի համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հավելել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Դատական ակտի պարտադիրության հատկանիշը նշանակում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում (*յրեն, Հոսիեն Խյդաթյանն ընդդեմ Վահան Խյդաթյանի և մյուսների թիվ ԼԴ/0916/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումները վկայում են այն մասին, որ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում անձը չի կարող ունենալ դատարանի մատչելիության իրավունք, քանի որ այդ պարագայում դատական գործի հարուցումն ըստ էության վերածվում է նախկինում քննված գործի քողարկված վերաբացման, ինչն անթույլատրելի է արդար դատաքնության իրավունքի տեսանկյունից: Այդ իսկ պատճառով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է, որ անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ առկա չէ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործի վարույթը կարճելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքի վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված իրավադրույթի համաձայն գործի վարույթը կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ վարչական գործերի՝

1. կողմերը, այսինքն՝ վարչական դատարանի վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2. հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը,

3. հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները:

Հետևաբար վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վարչական գործի վարույթը կարճվել չի կարող (*յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկարեր Արսեն Եսայանի թիվ ՎԴ1/0223/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կարճել է սույն գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ առկա է նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վճռի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ ըստ հայցի Վարագ-

դատ Մկրտչյանի ընդդեմ Կադաստրի Ավանի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձ Կազմակերպության՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.10.2010 թվականին կայացրած և 12.11.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով Վարագդատ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի 14.07.2016 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը և գործն ուղարկել է նոր քննության: Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում գործի վարույթը կարճելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հիմքն առկա չէր, քանի որ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով և սույն գործով ներկայացված հայցի իրավական հիմքերը տարբերվում են միմյանից: Այսպես, եթե թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու պահանջի հիմքում Վարագդատ Մկրտչյանի կողմից դրված էր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, ապա սույն գործով արդեն հայցապահանջի հիմքում դրված է վկայակոչված օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով և թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով դատավարության մասնակիցների կազմը նույնն է: Թե՛ սույն գործով, թե՛ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով հայցվորը Վարագդատ Մկրտչյանն է, պատասխանողը միննույն վարչական մարմինն է՝ Կադաստրը, իսկ Կազմակերպությունը երկու գործով էլ հանդես է գալիս երրորդ անձի կարգավիճակով:

Սույն վարչական գործի վարույթը կարճելու համար անհրաժեշտ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված մյուս երկու պայմանների առկայության կամ բացակայության հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերահաստատել իր կողմից նախկինում արտահայտված այն իրավական դիրքորոշումները, որ հայցի տարրերը նրա բաղկացուցիչ մասերն են, որոնք որոշում են նրա բովանդակությունը, նրա իրավական բնույթը և հնարավորությունն են տալիս անհատականացնելու հայցը, այն տարբերելու նույնական հայցերից, հետևաբար և լուծելու նույն կողմերի միջև, նույն տարրերով հարուցվող հայցերը կրկին անգամ վարույթ չընդունելու հարցը (*յրեն, Անիկ Մասցակյանյանն ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի թիվ ԵԷԴ/0466/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.10.2011 թվականի որոշումը*):

Փաստորեն, հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Ընդ որում, հայցի հիմքի և առարկայի էության ու հասկացության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են թե՛ քաղաքացիական դատավարությունում և թե՛ վարչական դատավարությունում (*յրեն, ՀՀ կատավարությանն առնթեր պետական եկամուրների կոմի-*

յրեի Գորիսի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արսեն Եսայանի թիվ ՎԴ/0223/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված՝ «(...) նույն առարկայի մասին (...)» արտահայտությունը վերաբերում է հայցի առարկային, այսինքն՝ պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջին (յրեն, *mutatis mutandis* Լարիսա Բաբայանն ընդդեմ Ալբերտ Հունանյանի թիվ ԵԷԴ/1373/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը): Իսկ հայցի առարկան այն նյութափրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը դատական ակտ է կայացնում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործի և թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի հիմքում ընկած վեճի առարկան նույնն է. երկու գործով էլ հայցվորի պահանջը մասնակիորեն՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով, Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելն է:

Փաստորեն, վերոգրյալով հիմնավորվում է սույն վարչական գործի վարույթը կարճելու համար անհրաժեշտ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված երեք պայմաններից երկուսի առկայությունը: Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել նշված իրավադրույթով նախատեսված երրորդ պայմանի, այն է՝ սույն գործով և թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով վեճի հիմքերի նույնության հարցը:

Նախկինում կայացված որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որը վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավական նորմերի համակցությունն է (յրեն, ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով, թե՛ սույն գործով Վարազդատ Մկրտչյանի ներկայացրած ճանաչման հայցերի փաստական հիմքը նույնական է և հանգում է հետևյալին. *Կազմակերպության իրավասու մարմինների կողմից սեփականության իրավունքով շենք կամ շինություն երբևէ չի հասկացվել:*

Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով, որպես Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու պահանջի իրավական հիմք, վկայակոչված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, իսկ սույն գործով՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի քննության ժամանակ գործող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտն առ ոչինչ լինելը:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Վերոգրյալ իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ թե՛ նախկինում, թե՛ ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված է, որ ճանաչման հայցատեսակով անձը կարող է դատարանից պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը: Իսկ վարչական ակտի առոչնչության հիմքերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում: Փաստորեն, նախկինում գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով և ներկայումս գործող համանուն օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցի շրջանակներում վարչական ակտի առ ոչինչ լինելը կարող է ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում նշված հիմքերից որևէ մեկի առկայության պայմաններում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ առ ոչինչ վարչական ակտերն ընդունվում են այնպիսի ակնհայտ կոպիտ խախտումներով, որ դրանք, որպես այդպիսին, իրավունքի տեսանկյունից գոյություն չունեն և իրենց ընդունման պահից սկսած չեն կարող առաջացնել իրավական հետևանքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.02.2014 թվականի թիվ ՍԴՌ-1137 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ առ ոչինչ վարչական ակտերն այդպիսին են հանդիսանում հենց օրենքի ուժով, ինչն իրավունքի սուբյեկտին չի պարտադրում բողոքարկել նման վարչական ակտերը և դրա արդյունքում ունենալ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքի հաստատման վերաբերյալ իրավասու մարմինների կողմից կայացված որոշում, իսկ առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում

է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի քննության ժամանակ գործող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) 72-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը սահմանում էր, որ հայցադիմումը պետք է բովանդակի նաև հայցվորի պահանջի իրավական հիմքերը: Հետևաբար նախկին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների ուժով հայցվորը պարտավոր էր հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը: Չնայած ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը կարող է հայցադիմումում վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի այն կոնկրետ կետը, որն իր կարծիքով հիմք է հանդիսանում վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու համար:

Մինչդեռ ժամանակ ասվածը չի նշանակում, որ վարչական դատարանը վարչական ակտի առոչնչության հարցը պարզելիս կաշկանդված է միայն հայցվորի մատնանշած կոնկրետ իրավական հիմքով: Ընդհակառակը՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է քննարկել այն հարցը, թե առկա է արդյոք այն ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկը, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում: Փաստորեն, վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ հայցվորի կողմից այդ հիմքերից մեկը, մի քանիսը կամ բոլորը վկայակոչված լինելուց կամ չլինելուց:

Վերոգրյալ դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու՝ վարչական դատավարության առանձնահատուկ սկզբունքը:

Այսպես, թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի քննության ժամանակ գործող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն («ex officio») պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դա-

տավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (յուեն, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առ ոչինչ վարչական ակտերն այդպիսին են հանդիսանում հենց օրենքի ուժով, իսկ վարչական դատարանն ընդամենը ճանաչում է այդ վարչական ակտերի առ ոչինչ լինելը: Հետևաբար վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է ձեռնարկել համարժեք միջոցներ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայությունը պարզելու ուղղությամբ և դրանցից որևէ մեկը հայտնաբերելու պայմաններում պարտավոր է վճիռ կայացնել այդ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու մասին՝ անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքի առկայությունից կամ բացակայությունից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքից բխում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը պարտավոր է պարզել վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հիմքերից կոնկրետ որն է հայցվորը վկայակոչել որպես իր պահանջի իրավական հիմք: Հակառակ պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում նախատեսված ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկով ընդունված, այսինքն՝ օրենքի ուժով առ ոչինչ համարվող վարչական ակտի առ ոչինչ լինելը դատարանի կողմից կարող է չճանաչվել՝ հայցվորի կողմից ոչ ճիշտ իրավական հիմք ընտրված լինելու պատճառով: Մինչդեռ նման իրավիճակի առաջացումը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու սկզբունքի համատեքստում անթույլատրելի է:

Ավելին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել այն դատավարական կարգավորումների վրա, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր գործով կիրառման ենթակա իրավական նորմերն ի վերջո որոշում է դատարանը դատական ակտ կայացնելիս:

Այսպես, թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի քննության ժամանակ գործող՝ 28.11.2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (ուժը կորցրել է 07.01.2014 թվականին) 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը:

Ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական

ակտ կայացնելիս՝ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն:

Վկայակոչված իրավադրույթների բովանդակությունից հետևում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանի իրավասությանն է վերապահված վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում նախատեսված կոնկրետ հիմքի՝ տվյալ գործով կիրառելիության հարցի լուծումը: Այլ կերպ ասած, թե՛ նախկին, թե՛ ներայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական դատարանն է որոշում, թե վարչական ակտի առոչնչության իրավական հիմքերը սահմանող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերից որն է ենթակա կիրառման տվյալ գործով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով և սույն գործով վարչական դատարանի առջև բարձրացված վեճերի իրավական հիմքերը նույնական են. դրանք չեն կարող տարբերվել միմյանցից, քանի որ թե՛ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով, թե՛ սույն գործով Վարազդատ Մկրտչյանի կողմից ներկայացված ճանաչման հայցերով պահանջվել է մասնակիորեն՝ Երևանի Ավան թիվ 63 հասցեի շենքերի և շինությունների մասով, ճանաչել Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը: Իսկ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը քննարկման առարկա է դարձնում այդ վարչական ակտի առոչնչության՝ օրենքով սահմանված բոլոր իրավական հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերի բովանդակությունից ու ծավալից: Հետևաբար անկախ այն հանգամանքից, որ Վարազդատ Մկրտչյանը Կազմակերպության անվամբ թիվ 1-1 մատյանի թիվ 000046 գրանցման թերթում կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու պահանջի իրավական հիմքում թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով դրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, իսկ սույն գործով՝ նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով և սույն գործով վարչական դատարանի առջև բարձրացված վեճերի իրավական հիմքերը նույնական են:

Ամփոփելով վերոգրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 11.10.2010 թվականին կայացված և 12.11.2010 թվականին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում սույն վարչական գործի վարույթը կարճելու համար անհրաժեշտ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված երեք պայմանների միաժամանակյա առկայությունը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով հայցի ներկայացումը հետապնդում է ոչ թե արդյունավետ

դատական պաշտպանության իրավունքի իրացման, այլ նախկինում քննված և վերջնական լուծում ստացած մեկ այլ դատական գործի (թիվ ՎԴ/2237/05/10 վարչական գործի) քողարկված վերանայման, վերաբացման նպատակ, ինչն անթույլատրելի է իրավունքի գերակայության բաղադրիչ հանդիսացող դատական ակտերի վերջնականության *res judicata* սկզբունքի, ինչպես նաև գործող դատավարական իրավակարգավորումների տեսանկյունից: Հետևաբար Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով կարճելով սույն գործի վարույթը, կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ դատական ակտին պետք է օրինական ուժ տալ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դադական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի

հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է (...):

Նախկինում կայացրած որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական դատավարությունում երրորդ անձինք որոշակի բացառություններով հանդերձ օգտվում են կողմի իրավունքներից, իսկ իր կրած դատական ծախսերի հատուցում ստանալը կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական իրավունք է: Հետևաբար երրորդ անձինք ևս օգտվում են նշված իրավունքից, և նրանց նկատմամբ նույնպես կիրառելի են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կանոնները (*տե՛ս, Տիգրան Սանասարյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Տվյալ դեպքում սույն գործով երրորդ անձ Կազմակերպությունը վճռաբեկ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ պետական տուրք, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երրորդ անձ Կազմակերպության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման հայցվոր Վարազդատ Մկրտչյանի կողմից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարազդատ Մկրտչյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը Վերաքննիչ դատարանի 09.09.2016 թվականի որոշմամբ հետաձգվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 11**): Հաշվի առնելով, որ սույն գործով Կազմակերպության վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանվում է և օրինական ուժ է տրվում գործի վարույթը կարճելու մասին Դատարանի որոշմանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարազդատ Մկրտչյանի վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և Վերաքննիչ դատարանի կողմից հետաձգված պետական տուրքի գումարը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է վճարման Վարազդատ Մկրտչյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2017 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 14.07.2016 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշմանը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Վարագդատ Մկրտչյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.09.2016 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Վարագդատ Մկրտչյանից հոգուտ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2976/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2976/05/15**
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ԱՎԼԵՆՍՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կտրիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի 18.04.2017 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ա/Չ Գևորգ Դավթյանի ընդդեմ
Կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության՝ ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝
Նախարարություն) Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակա-
տար Ա. Կիրակոսյանի 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հար-
կային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273
որոշումը վերացնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ա/Չ Գևորգ Դավթյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել
Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակա-
տար Ա. Կիրակոսյանի 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հար-
կային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273
որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 19.05.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է և Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կիրակոսյանի 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշումը ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.04.2017 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.05.2016 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի որոշմամբ անդրադարձ չի կատարվել վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկներին: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վիճարկվող վարչական ակտի վերացման հիմքում դրվել են այլ հանգամանքներ, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտի հիմքում դրվել են այնպիսի հանգամանքներ, որոնք քննարկման առարկա չեն դարձվել Դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանն անդրադարձ է կատարել միայն 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշման կայացման ընթացակարգային նորմերի պահպանվածության հարցին՝ անտեսելով, որ Դատարանը որոշումն անվավեր է ճանաչել՝ անդրադառնալով պարտավորությունների առաջադրման իրավական հիմքերին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.04.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետ Հ. Կարապետյանի, բաժնի պետ Ա. Սիմոնյանի և կատարող Վ. Մաթևոսյանի կողմից 04.03.2015 թվականին կազմվել է «Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ» թիվ 75 արձանագրությունը, որով արձանագրվել է, որ Ա/Ձ Գևորգ Դավթյանը հանդիսանում է հիմնադիր «ՀԱՅ-ԱՆԳԼԻԱԿԱՆ «ԱՐԵՎԻԿ-ԲՐԻԴՋ»» ՓԲԸ-ում, և վերջինիս բաժնեմասը կազմում է 55%, հետևաբար համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» կետի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Ա/Ձ Գևորգ Դավթյանը 2012, 2013, 2014, 2015 թվականներին համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող (**հատոր 1-ին գ.թ. 13-14**).

2) Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կիրակոսյանի կողմից 05.05.2015 թվականին կայացվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարած հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշումը, որի համաձայն՝ 22.04.2015 թվականի դրությամբ Ա/Ձ Գևորգ Դավթյանի չկատարած հարկային պարտավորություններն ավելացված արժեքի հարկի գծով կազմում են 35.864.932 ՀՀ դրամ, որն առաջացել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» ենթակետի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա: Վերոգրյալի հիման վրա որոշվել է Ա/Ձ Գևորգ Դավթյանից գանձել 35.864.932 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության գումար (**հատոր 1-ին գ.թ. 9**):

4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վարչական դատավարության առանձին փուլերում գործն ի պաշտոնն («ex officio») քննելու սկզբունքի դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին. կարող է արդյո՞ք վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնել այնպիսի հիմքով, որը քննության առարկա չի դարձվել վարչական դատարանում և վկայակոչված չէ վերաքննիչ բողոքում:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական

փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ հայցադիմումը պետք է բովանդակի հայցվորի պահանջը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը և հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի հիմքը և (կամ) առարկան կարող է փոփոխել նախնական դատական նիստի ընթացքում կամ դատաքննություն նշանակելու մասին վարչական դատարանի որոշումը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Հայցի հիմքը և (կամ) առարկան կարող են փոփոխվել գործը քննող վարչական դատարանի ընդդատության սահմաններում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխություն, եթե այն հանգեցնում է հայցի էության փոփոխության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Միաժամանակ անհրաժեշտ է փաստել, որ տնօրինչականության սկզբունքը վարչական դատավարության առանձին փուլերում ունի որոշակի առանձնահատուկ դրսևորումներ: Նշվածը պայմանավորված է վարչական դատավարությունում դատարանի դերով, որը գործը քննում է ի պաշտոն: Այսպես, վարչական դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու գործառնություն է, մասնավորապես,

հետևյալը.

1) Վարչական դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով: Նշվածից հետևում է, որ թեև դատարանը պարտականություն է կրում անդրադառնալ դատավարության մասնակիցների ներկայացրած բոլոր ապացույցներին, միջնորդություններին, առաջարկություններին, բացատրություններին և առարկություններին, սակայն սահմանափակված չէ դրանցով:

2) Վարչական դատարանն իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Այսինքն՝ դատարանը, կաշկանդված չլինելով վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով, ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար: Ընդ որում, անհրաժեշտ է փաստել, որ վարչական դատավարությունը պետք է ընթանա այնպես, որ բացահայտվեն գործի իրական փաստերը: Նշված առաքելությունն իրականացնելու համար դատարանն օժտված է համապատասխան լիազորություններով, որոնք պետք է համարժեք օգտագործվեն քննարկվող գործառնության իրականացնելու համար: Ըստ այդմ, գործի իրական փաստերը բացահայտելը վարչական դատարանի ոչ թե հայեցողական լիազորությունն է, այլ պարտականությունը:

3) Վարչական դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները:

4) Վարչական դատարանը պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Նշված լիազորությունը նույնպես բխում է այն հանգամանքից, որ դատարանը կրում է գործի իրական փաստերն ամբողջությամբ բացահայտելու պարտականություն:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԳՌ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն („ex officio“) պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնն պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ

հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (*տես, Ալեքսանդր Կարալովի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՊ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տես՝ ս, ՀՀ կատավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Արարկիթի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդոն» ՍՊԸ-ի թիվ ՎՊ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն՝ հայցադի-

մումուն մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ: Ըստ այդմ, վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնե քննելու համար: Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի կարգավորումից, որով սահմանվում է, որ վարչական դատարանը նախնական դատական նիստում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը:

Այսպես, օրինակ՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում նախնական դատական նիստում պարզելով վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը, վարչական դատարանը մատնանշման իր լիազորությունն իրացնելիս պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի իրավաչափության վրա ազդեցություն ունեցող հնարավոր բոլոր հանգամանքները, այդ թվում՝ արդյո՞ք պահպանվել են այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի ընթացակարգային բոլոր կանոնները, և արդյո՞ք ճիշտ են մեկնաբանվել ու կիրառվել վարչական ակտի հիմքում ընկած նյութական իրավունքի նորմերը: Այլ կերպ ասած՝ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշի նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար և առաջարկի հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով: Միաժամանակ հաշվի առնելով տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և դրա կիրառելիությունը նաև վարչական դատավարությունում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս հետագա դատավարական գործողությունների իրականացման ժամանակ վարչական դատարանը կաշկանդված է շահագրգիռ անձի կամահայտնությամբ: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ հայցվորը դատարանի կողմից մատնանշման լիազորության իրականացումից հետո պնդում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատվի միայն որոշակի իրավական նորմի և ըստ այդմ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, վարչական դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացնի և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտի իրավաչափությունը գնահատի միայն այդ իրավական և փաստական հիմքերի շրջանակներում: Մինչդեռ այն դեպքում, երբ հայցվորը ևս գտնում է, որ դատարանը վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով, դատարանը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում պարտավոր է ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ խախտումների, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները, բողոք բերող անձի պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** („ex officio“) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն **ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով**, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն. այս դատավարական սկզբունքը **վերաքննիչ դատարանին հնարավորություն չի ընձեռում սեփական նախաձեռնությամբ և ինքնուրույն լրացնել վերաքննիչ բողոքի իրավական հիմքերը**: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ թեև վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար, սակայն չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ առաջին ատյանի դատարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել հայցի հիմքը և կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել (*լրե՛ս ՀՀ առողջապահության նախարարությունն ընդդեմ «Ռեվերդի» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Ջարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** („ex officio“) սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** („ex officio“) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար:

Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանը, մի կողմից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով:

Փաստորեն, վարչական դատավարությունում գործի **փաստական հանգամանքներն**

ի պաշտոնն պարզելու („ex officio“) սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետ Հ. Կարապետյանի, բաժնի պետ Ա. Սիմոնյանի և կատարող Վ. Մաթևոսյանի կողմից 04.03.2015 թվականին կազմվել է «Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ» թիվ 75 արձանագրությունը, որով արձանագրվել է, որ Ա/Ձ Գևորգ Դավթյանը հանդիսանում է հիմնադիր «ՀԱՅ-ԱՆԳԼԻԻԱԿԱՆ «ԱՐԵՎԻԿ-ԲՐԻԴՋ»» ՓԲԸ-ում, որի բաժնեմասը կազմում է 55%, հետևաբար համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» կետի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետի՝ Ա/Ձ Գևորգ Դավթյանը 2012, 2013, 2014, 2015 թվականներին համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող:

Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կիրակոսյանի կողմից 05.05.2015 թվականին կայացվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարած հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշումը, որի համաձայն՝ 22.04.2015 թվականի դրությամբ Ա/Ձ Գևորգ Դավթյանի չկատարած հարկային պարտավորություններն ավելացված արժեքի հարկի գծով կազմում են 35.864.932 դրամ, որն առաջացել է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» ենթակետի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կատարված նախնական հաշվարկի հիման վրա: Վերոգրյալի հիման վրա որոշվել է Ա/Ձ Գևորգ Դավթյանից գանձել 35.864.932 ՀՀ դրամ՝ որպես պարտավորության գումար:

Դիմելով դատարան՝ Ա/Ձ Գևորգ Դավթյանը պահանջել է ամբողջությամբ վերացնել Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կիրակոսյանի 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշումը:

Ա/Ձ Գևորգ Դավթյանը, հայցադիմումում վկայակոչելով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» ենթակետը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 37-րդ, 63-րդ և 64-րդ հոդվածները, նշել է,

որ վարչական մարմինը, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն չիրականացնելով, վերջինիս վրա դրել է ոչ իրավաչափ պարտականություն, քանի որ «Հայ-Անգլիական «Արևիկ Բրիդջ»» ՓԲԸ-ի 794.600 ՀՀ դրամ անվանական արժեքով 55 հատ սովորական բաժնետոմսերն այլևս իրեն չեն պատկանում, այսինքն՝ հայցը հարուցվել է միայն նշված հիմքերով: Հայցադիմումում առկա չի եղել նշում Ա/Ձ Գևորգ Դավթյանի՝ վարչական վարույթի մասին ծանուցված լինելու կամ չլինելու և այդ հիմքով վարչական ակտը վերացնելու վերաբերյալ:

Դատարանը բավարարել է Ա/Ձ Գևորգ Դավթյանի հայցը, և գործի դատական քննությունն ընթացել է հայցվորի նշած իրավական և փաստական հիմքերի շրջանակներում: Դատարանը, հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաև իր կողմից հետազոտված ապացույցները, հանգել է այն եզրակացության, որ Նախարարության Մաշտոցի հարկային տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Կիրակոսյանի 05.05.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարած հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1273 որոշումը կայացվել է օրենքի խախտմամբ, քանի որ բավարար հիմքեր չկան փաստելու, որ Ա/Ձ Գևորգ Դավթյանն իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» ենթակետի իմաստով հանդիսացել է ավելացված արժեքի հարկ վճարող:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Ա/Ձ Գևորգ Դավթյանը պատշաճ ձևով չի ծանուցվել հարուցված վարչական վարույթի քննության ժամանակի և վայրի մասին, ընդհանրապես չի հրավիրվել վարույթին, որպիսի պայմաններում վարչական մարմինը չի ապահովել վերջինիս լսված լինելու իրավունքը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում բարձրացված հարցերին՝ նշելով, որ *«(...) հաշվի առնելով վիճարկվող որոշման՝ նշված հիմքով օրենքով սահմանված կարգի խախտմամբ կայացված լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում հայցվոր կողմն ի սկզբանե զրկվել է իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից՝ Վերաքննիչ դատարանը նման պայմաններում այլևս չի անդրադառնում ինչպես վճռով, այնպես էլ բողոքով բարձրացված մյուս հիմք-հիմնավորումների քննարկմանը, քանի որ դրանց իրավաչափության գնահատումը գործի ելքի վրա այլևս որևէ ազդեցություն ունենալ չի կարող (...)»:*

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ եզրահանգելով, որ վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման՝ դրա ընդունմանն ուղղված վարույթի ընթացքում Ա/Ձ Գևորգ Դավթյանի լսված լինելու իրավունքի խախտման հիմքով, ըստ էության, դուրս է եկել վերաքննության սահմաններից, քանի որ սույն գործը Դատարանում քննվել է միայն վիճարկվող վարչական ակտի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ե» ենթակետի և իրավահարաբերության ծագման պահին գործող «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի խախտմամբ ընդունված լինելու կամ չլինելու հիմքով, և այդ հիմքով էլ բերվել է նաև վերաքննիչ բողոքը:

Փաստորեն, Վերաքննիչ դատարանը սեփական նախաձեռնությամբ դուրս է եկել Դա-

տարանում գործի քննության շրջանակներից, մասնավորապես՝ փոխել է հայցի հիմքը և կայացրել դատական ակտ այնպիսի իրավական և փաստական հիմքերով, որոնք Դատարանում քննության առարկա չեն դարձվել և վկայակոչված չեն եղել վերաքննիչ բողոքում: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար և քննության առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքի հիմքերը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.04.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/7463/05/13

Նախագահող դատավոր՝

Դատավորներ՝

Ք. Մկոյան

Ա. Առաքելյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7463/05/13

2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցիչ Կարեն Մեժումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.10.2015 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձինք Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների, Էլեոնորա Գաբրիելյանի՝ սեփականության իրավունքի պետական գրանցումների մասնակիորեն առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանները պահանջել են մասնակիորեն՝ «0,021305հա մակերեսով հողամասն օգտագործվում է որպես ընդհանուր համատեղ սեփականություն 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ» մասով, ճանաչել միասնական թիվ 01-007-04-107 մատյանի 009 համարի տակ 31.01.2007 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը:

լը, ինչպես նաև մասնակիորեն՝ 213,05քմ մակերեսով հողամասի մասով, ճանաչել Մաքրուիի, Պերճուիի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների, Էլեոնորա Գաբրիելյանի անվամբ 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը և վերացնել առ ոչինչ վարչական ակտերի հետևանքները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 14.05.2015 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.10.2015 թվականի որոշմամբ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.05.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.12.2015 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 27.10.2015 թվականի որոշման դեմ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.03.2018 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.12.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայվել է և վերացվել. Վերաքննիչ դատարանի 27.10.2015 թվականի որոշման դեմ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքն ընդունվել է ՀՀ վճռաբեկ դատարանի վարույթ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 124-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում 31.01.2007 թվականի և 22.05.2009 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումներով Մաքրուիի, Պերճուիի, Արթուր, Ռոբերտ Գազազյաններին և Էլեոնորա Գաբրիելյանին տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք՝ գրանցելով վերջիններիս սեփականության իրավունքը միայն Վարսիկ Մուսոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նկատմամբ, իսկ Վարսիկ Մուսոյանի վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն՝ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու միայն իրեն պատկանող անշարժ գույքն այլ անձանց հետ համատեղ:

Վերը նշված պետական գրանցումների՝ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի մասով առ ոչինչ լինելու փաստը հաստատ-

վում է սույն գործում առկա ապացույցների լրիվ և բազմակողմանի գնահատման միջոցով: Մինչդեռ ստորադաս դատարանները չեն գնահատել այդ ապացույցները, որոնցով հաստատվում է, որ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասը պատկանել է միայն Վարսիկ Մուսոյանին, իսկ Մաքրոսի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանները և Էլեոնորա Գաբրիելյանն այդ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք չէին կարող ունենալ: Ավելին, հենց 31.01.2007 թվականի և 22.05.2009 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումների հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերից Կադաստրի համար ակնհայտ է եղել, որ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի միակ սեփականատերը Վարսիկ Մուսոյանն է և այն չէր կարող գրանցվել Մաքրոսի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների և Էլեոնորա Գաբրիելյանի անվամբ: Արդյունքում առանց ապացույցների պատշաճ հետազոտման՝ ստորադաս դատարանները հանգել են այն ոչ իրավաչափ եզրակացության, որ 31.01.2007 թվականի և 22.05.2009 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումների առ ոչինչ լինելը ճանաչելու հիմքեր առկա չեն, քանի որ դրանք չեն պարունակում ակնհայտ կոպիտ սխալներ:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի, թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի, թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով 12.03.2010 թվականի, թիվ ՎԴ2/0091/05/10 վարչական գործով 03.12.2010 թվականի և թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով 26.12.2013 թվականի որոշումներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.10.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 01-007-4-107 մատյանի 009 համարի տակ 31.01.2007 թվականին գրանցվել է Վարսիկ Մուսոյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իսկ Վարսիկ Մուսոյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2318611 վկայականի «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» մասում նշվել է, որ «0,021305հա մակերեսով հողամասն օգտագործվում է որպես ընդհանուր համարել սեփականություն 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ» (հատոր 1-ին, գ.թ. 17):

2. Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 22.05.2009 թվականին գրանցվել է Մաքրոսի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների և Էլեոնորա Գաբրիելյանի ընդհանուր սեփականության իրավունքը, իսկ վերջիններիս տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2576905 վկայականի «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» մասում նշվել է, որ «213,05քմ հողամասն օգտագործվում է Վարսիկ Մուսոյանի հետ որպես ընդհանուր համարել սեփականություն» (հատոր 1-ին, գ.թ. 14-16):

4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

պայմանավորված է վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ բողոքարկվող դատական ակտում և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում իրավական նորմերին տրված մեկնաբանությունների հակասության՝ որպես օրենքի միատեսակ կիրառության համար նշանակություն ունենալու հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի գնահատման և դրա առկայության կամ բացակայության հարցը որոշելու առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անհրադանալ այն հարցին, թե սույն գործով բերված վճռաբեկ բողոքում մատնանշված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում կատարված իրավական նորմերի մեկնաբանությունները հակասում են արդյոք բողոքարկվող դատական ակտում միևնույն նորմերին տրված մեկնաբանություններին:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ (...) Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը (...):

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ (1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը. (2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

21.02.2007 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

07.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքում բարձ-

բացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե՝ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ 09.04.2018 թվականից հետո գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի գործառույթն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովումն է: 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը հստակեցվել է և սահմանվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իրականացնում է, *inter alia*, օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթ՝ դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով: Օրենքների և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթն առաջին հերթին ենթադրում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կատարված իրավական նորմերի մեկնաբանությունների և արտահայտված իրավական դիրքորոշումների կայունություն, կանխատեսելիություն, ինչպես նաև դրանց պարտադիր կիրառություն նույնանման փաստական հանգամանքներ ունեցող բոլոր դատական գործերի համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով 21.02.2007 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավադրույթի վերլուծությանը, գտել է, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինելու կամ չլինելու հարցը (*լրես*, «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օդու գործարան» ՍՊԸ-ն ընդդեմ Սոս Բաղդասարյանի թիվ 3-480(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ

վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի որոշումը):

07.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով օրենսդիրը վերանայել է 21.02.2007 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավադրույթը և սահմանել է, որ ստորադաս դատարանները կարող են կոնկրետ գործով որևէ իրավական նորմ կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նույնանման փաստերով գործի շրջանակներում այդ իրավական նորմին տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ միայն այն դեպքում, երբ հիմնավորում են ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որևէ իրավական նորմին տրված մեկնաբանությունը կրկին պարտադիր է ստորադաս դատարանի համար նույնանման փաստերով գործով, իսկ այդ մեկնաբանություններից տարբերվող մոտեցման ցուցաբերումը ստորադաս դատարանի համար առաջացնում է այդպիսի շեղումը հիմնավորելու լրացուցիչ պարտականություն:

ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի և այլ նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառնությունը վարչական դատավարությունում առարկայացվում և կոնկրետացվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածով սահմանված իրավադրույթների միջոցով: Այսպես, մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տեսանկյունից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հայեցողական հիմքերից մեկն այն էր, որ *բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միարեսակ կիրառության համար*, իսկ 09.04.2018 թվականից հետո գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տեսանկյունից՝ *բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միարեսակ կիրառության համար*: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ թե՛ մինչև 09.04.2018 թվականը գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, թե՛ 09.04.2018 թվականից հետո գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումն օրենքի [և այլ նորմատիվ իրավական ակտերի] միատեսակ կիրառության համար կարող է ունենալ էական նշանակություն այն դեպքում, երբ, *inter alia*, բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերոգրյալ հիմքի առկայությունը պարտավոր է հիմնավորել վճռաբեկ բողոք բերած անձը՝ վճռաբեկ բողոքում, մասնավորապես, հիմնավորելով, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով վճռաբեկ դատարանի դատական ակտը և մեջբերելով դրա հակասող մասերը, կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդված): Այնուհանդերձ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է, որ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է կամ հանգում է այն

հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Այսինքն՝ բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանն է իրավասու որոշել, թե արդյոք բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, թե՛ ոչ: Փաստորեն, վճռաբեկ բողոքի ընդունելիության քննարկվող հիմքի առկայության կամ բացակայության վերաբերյալ վերջնական գնահատական տալու իրավասությունը վերապահված է բացառապես ՀՀ վճռաբեկ դատարանին:

Վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ է համարում քննարկել և որոշել սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձանց կողմից մատնանշված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկին որոշումներում իրավական նորմերին տրված մեկնաբանությունների և Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշմամբ այդ իրավական նորմերին տրված մեկնաբանությունների միջև հակասության առկայության կամ բացակայության հարցը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում փորձել է հիմնավորել, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի, թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի, թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով 12.03.2010 թվականի, թիվ ՎԴ2/0091/05/10 վարչական գործով 03.12.2010 թվականի և թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով 26.12.2013 թվականի որոշումներին: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում առանձին-առանձին անդրադառնալ այդ որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին և համադրել դրանք սույն գործով բողոքարկվող որոշմամբ Վերաքննիչ դատարանի կողմից կատարված մեկնաբանությունների հետ՝ պարզելու համար դրանց միջև հնարավոր հակասության առկայությունը կամ բացակայությունը:

Նախ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված պետական գրանցումներով գրանցվել է Վարսիկ Մուսոյանի և Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների ու Էլեոնորա Գաբրիելյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իսկ Վարսիկ Մուսոյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2318611 վկայականի «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» մասում նշվել է, որ *«0,021305հա մակերեսով հողամասն օգտագործվում է որպես ընդհանուր համարել սեփականություն 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ»*: Մինչդեռ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանները գտնում են, որ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասը հանդիսացել է միայն իրենց իրավանախորդի միանձնյա սեփականությունը և չպետք է ստանար պետական գրանցում՝ որպես Վարսիկ Մուսոյանի և Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների ու Էլեոնորա Գաբրիելյանի ընդհանուր համատեղ սեփականություն: Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների փաստարկմամբ Վարսիկ Մուսոյանին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2318611 վկայականի «Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» մասում ապօրինի կերպով է նշվել, որ *«0,021305հա մակերեսով հողամասն օգտագործվում է որպես ընդհանուր համարել սեփա-*

կանություն 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ»:

Նշված հիմնավորումներով Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանները վարչական դատարանից պահանջել են մասնակիորեն՝ «0,021305հա մակերեսով հողամասն օգտագործվում է որպես ընդհանուր համատեղ սեփականություն 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ» մասով, ճանաչել միասնական թիվ 01-007-04-107 մատյանի 009 համարի տակ 31.01.2007 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը, ինչպես նաև մասնակիորեն՝ 213,05քմ մակերեսով հողամասի մասով, ճանաչել Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների, Էլեոնորա Գաբրիելյանի անվամբ 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը և վերացնել առ ոչինչ վարչական ակտերի հետևանքները: Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի հիման վրա էլ հաբուցվել է սույն վարչական գործը:

Դատարանը մերժել է Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների հայցը՝ պատճառաբանելով, որ Երևանի Մեքաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին Վարսիկ Մուսոյանի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը և 22.05.2009 թվականին Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների և Էլեոնորա Գաբրիելյանի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցումը չեն պարունակում ակնհայտ կոպիտ սխալներ և դրանցով չեն տրամադրվել ակնհայտ ոչ իրավաչափ իրավունքներ և չեն սահմանվել անկհայտ ոչ իրավաչափ պարտականություններ: Դատարանը հավելել է նաև, որ *«(...) հայցվորի կողմից ներկայացված (...) հիմնավորումներն ըստ էության չեն կարող հիմք հանդիսանալ վեճի առարկա գրանցումների առ ոչինչ ճանաչման համար, այլ դրանք, ըստ էության, կարող են քննարկվել որպես վիճարկվող վարչական ակտերի անվավերության (...) գնահատման հիմք (...)»:*

Վերաքննիչ դատարանը մերժել է Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ հայցվորների կողմից վկայակոչված փաստաթղթերը վերաբերում են վարչական ակտերի իրավաչափությանը, այսինքն՝ դրանք կարող են գնահատվել բացառապես վարչական ակտերի իրավաչափության ստուգման տիրույթում՝ նշված ակտերի անվավերության հարցի քննարկման ժամանակ, որպիսի պահանջ սույն վարչական գործի շրջանակներում առկա չէ: Վերաքննիչ դատարանը նշել է, որ սույն գործի շրջանակներում վիճարկվող ակտերի ոչ իրավաչափ լինելն ակնհայտ չէ և տրամադրված իրավունքի ոչ իրավաչափ լինելու հանգամանքը տվյալ դեպքում հնարավոր է պարզել միայն այդ ակտերի հիմքում դրված հանգամանքների հավաստիության, տրամադրված իրավունքի հիմքում ընկած փաստաթղթերի ուսումնասիրության կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիության կամ մեկնաբանության ստուգման միջոցով: Հետևաբար Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վիճարկվող գրանցումները չեն պարունակում ակնառու սխալներ, իսկ բողոքաբերի նշած փաստաթղթերը պահանջում են վեճի առարկա հանդիսացող գրանցումների իրավաչափության լրացուցիչ գնահատում, ինչն արդեն իսկ բացառում է իրավունքի պետական գրանցումների առ ոչինչ ճանաչելու հանգամանքը և վերաբերում է դրանց անվավերությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ Դատարանը, թե՛ Վերաքննիչ դատա-

քանն իրենց դատական ակտերում հանգել են այն եզրակացության, որ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ճանաչման հայցը ենթակա է մերժման՝ մեկնաբանելով և կիրառելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոոսիևկայ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով 12.03.2010 թվականի որոշմամբ մեկնաբանել է վկայակոչված իրավական նորմը՝ արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիմքով վարչական ակտի առոչինչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչինչ դիտելու համար: Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունն առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (յուև, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոոսիևկայ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի վերոգրյալ մեկնաբանությունները ձեռք են բերել կայուն նախադեպային իրավունքի ուժ: Իսկ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանը, թե՛ ՀՀ վարչական դատարանն ու ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը մշտապես ղեկավարվել են այդ իրավական դիրքորոշումներով: Նույն իրավական դիրքորոշումները ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև «Անուշ և Գոռ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Իջևանի տարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ2/0091/05/10 վարչական գործով 03.12.2010 թվականին կայացրած որոշմամբ:

Նշված երկու դատական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները վկայակոչվել են սույն գործով վճռաբեկ բողոք բերած անձի կողմից՝ գտնելով, որ այդ որոշումներում և Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշմամբ «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետին տրված մեկնաբանությունները հակասում են միմյանց: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը չի շեղվել ՀՀ վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշումներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետին տրված մեկնաբանություններից:

Այսպես, սույն գործի շրջանակներում վիճարկվող ակտերով՝ Երևանի Սերաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին Վարսիկ Մուսոյանի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ և 22.05.2009 թվականին Մաքրուհի, Պերճուհի, Արթուր, Ռոբերտ Գազազյանների և Էլեոնորա Գաբրիելյանի անվամբ կատարված ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ դրանց հասցեատերերի վրա չի դրվում ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն և նրանց չի տրամադրվում ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Երևանի Սերաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ Վարսիկ Մուսոյանի՝ միանձնյա սեփականության իրավունք ունենալու հարցը հնարավոր է պարզել միայն այդ անշարժ գույքի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների հիմքում ընկած իրավահաստատող փաստաթղթերի, ապացույցների, հանգամանքների մանրամասն ուսումնասիրության արդյունքում՝ պարզելով Կադաստրի կողմից իրավական նորմերի սխալ կիրառումը կամ դրանց սխալ մեկնաբանումը: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների կողմից ճանաչման հայցի հիմքում վկայակոչված փաստարկներն ու հիմնավորումները վերաբերում են բացառապես 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների անվավերության հարցին, այսինքն՝ դրանք կարող էին գնահատվել ոչ թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի, այլ նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի տիրույթում՝ նշված վարչական ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն՝ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի Սերաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները չեն պարունակում ակնառու կոպիտ սխալներ, իսկ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների փաստարկներն ու հիմնավորումները պահանջում են այդ վարչական ակտերի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտություն, ինչն արդեն իսկ բացառում է դրանց առ ոչինչ լինելը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի

բողոքարկվող որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետին տրված մեկնաբանությունը: Սույն գործով ստորադաս դատարանների կողմից այդ իրավադրույթի կիրառությունը լիովին համապատասխանում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումներին, մասնավորապես՝ բողոք բերած անձի կողմից վկայակոչված՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոռուսինսկ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով 12.03.2010 թվականի որոշմամբ և «Անուշ և Գոռ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Բջևանի փարածքային հարկային տեսչության թիվ ՎԴ2/0091/05/10 վարչական գործով 03.12.2010 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետին տրված մեկնաբանություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բերված վճռաբեկ բողոքում, որպես այն վարույթ ընդունելու հիմք, վկայակոչվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի և թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի որոշումների և Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման միջև առկա հակասությունների առկայությունը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում, որ նշված որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է 29.01.1991 թվականին ընդունված և 15.06.2001 թվականին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված այն իրավադրույթի մեկնաբանությանը, որի համաձայն՝ «(...) *յունսմերձ հողամասերը, ինչպես նաև այգեգործության (ամնոտանոցի) և բնակելի փան շինարարության ու դրա սպասարկման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ունեցած հողամասերը անհատույց կարգով թողնվում են նրանց որպես սեփականություն* (...):» ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ եթե 29.01.1991 թվականի դրությամբ մի քանի անձանց կողմից ընդհանուր կերպով տիրապետվող հողամասը փաստացի առանձնացված է եղել այդ անձանց միջև, ապա նրանցից յուրաքանչյուրը պետք է ճանաչվի որպես հողամասի՝ իր կողմից փաստացի զբաղեցրած մասի սեփականատեր:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի և թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի որոշումներում արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշումը չի կարող որևէ նշանակություն ունենալ սույն գործի լուծման համար: Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների առոչինչ լինելը որևէ կերպ պայմանավորված չէ այդ հողամասի՝ մի քանի անձանց կողմից ընդհանուր կերպով տիրապետվելու և 29.01.1991 թվականի դրությամբ այդ անձանց միջև փաստացի առանձնացված լինելու հանգամանքով: Սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավացիորեն չի կիրառել (առհասարակ չի շոշափել) 29.01.1991 թվականին ընդունված և 15.06.2001 թվականին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածը, քանի որ տվյալ իրավադրույթով սահմանված իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը չի ենթադրում, որ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305-հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումներով դրանց հասցեատերերի

վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ նրանց տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի փաստացի առանձնացված լինելու և այն միայն Վարսիկ Մուսոյանի կողմից տիրապետվելու հանգամանքների առկայությունը, ինչպես նաև այդ հանգամանքների ազդեցությունը նշված անշարժ գույքի սեփականատերերի կազմի վրա ենթակա են պարզման լրացուցիչ ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով, ինչն ինքնին բացառում է այդ հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների կատարման ընթացքում թույլ տրված սխալների ակնհայտությունը և դուրս է սույն գործով ապացույցման առարկայի շրջանակներից: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի հակասում և սկզբունքորեն չի էլ կարող հակասել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի և թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի որոշումներում 29.01.1991 թվականին ընդունված և 15.06.2001 թվականին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածին տրված մեկնաբանություններին, քանի որ սույն գործով այդ իրավադրույթն առհասարակ կիրառելի չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանի մյուս որոշումը, որը Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանները վկայակոչել են իրենց վճռաբեկ բողոքում, *Ժիրայր Զոհրաբյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պեղական կոմիտեի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանման թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումն է: Ըստ բողոք բերած անձի՝ սույն գործով բողոքարկվող դատական ակտի և ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշման միջև հակասությունն առաջանում է այդ որոշմամբ 28.11.2007 թվականին ընդունված և 07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 24-րդ և 113-րդ հոդվածներով սահմանված իրավադրույթներին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված այն մեկնաբանության առնչությամբ, որի համաձայն՝ «(...) դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգեղու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը (...):»:*

Այս առումով Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սույն գործով ստորադաս դատարանների կողմից իրականացված ապացույցների հետազոտման ու գնահատման հարցին, հանգում է այն եզրահանգման, որ սույն գործով Վերաքննիչ դատարանն անմիջակայնորեն գնահատել է սույն գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել է, որ դրանցով որևէ կերպ չի հաստատվում, որ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումներով դրանց հասցեատերերի վրա դրվել է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ նրանց տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Դրա հիման վրա Վերաքննիչ դատարանը որոշել է, որ սույն գործով Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների հայցը մերժելու վերաբերյալ Դա-

տարանի վճիռն իրավաչափ է: Այլ կերպ ասած, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կերպով հետազոտել ու գնահատել է սույն գործով ձեռք բերված բոլոր ապացույցներն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների առ ոչինչ լինելու հարցը պարզելու համար: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի հակասում թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշմամբ ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ վերոհիշյալ իրավական մեկնաբանություններին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի հակասում ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-204(ՎԴ) քաղաքացիական գործով 03.02.2006 թվականի, թիվ 3-402(ՎԴ) քաղաքացիական գործով 20.06.2008 թվականի, թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով 12.03.2010 թվականի, թիվ ՎԴ2/0091/05/10 վարչական գործով 03.12.2010 թվականի և թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով 26.12.2013 թվականի որոշումներին, որոնք վկայակոչվել են բողոք բերած անձի կողմից: Ընդհակառակը՝ կատարված համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները լիովին համապատասխանում են բողոք բերած անձի կողմից վկայակոչված որոշումներով ՀՀ վճռաբեկ դատարանի կատարած մեկնաբանություններին:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են նաև Վերաքննիչ դատարանի կողմից նյութական ու դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ տրված լինելու վերաբերյալ Վարսիկ Միսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների փաստարկները: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների առ ոչինչ լինելը ճանաչելու իրավական և փաստական հիմքերը բացակայել են: Հետևաբար Վարսիկ Միսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ճանաչման հայցը ենթակա է եղել մերժման, ինչն էլ իրավացիորեն արձանագրվել է ստորադաս դատարանների կողմից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, մերժելով Երևանի Սեբաստիա փողոցի թիվ 129 հասցեում գտնվող 0,021305հա մակերեսով հողամասի նկատմամբ 31.01.2007 թվականին և 22.05.2009 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումների առ ոչինչ լինելը մասնակիորեն ճանաչելու վերաբերյալ Վարսիկ Միսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վարսիկ Մուսոյանի իրավահաջորդներ Ծաղիկ, Կարինե, Ժակլին Այանյանների ներկայացուցիչների կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջիններիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ 171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.10.2015 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
 դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/3937/02/17
 2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/3937/02/17
 Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
 մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
 Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
 Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
 Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
 Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Հակոբ Հովհաննիսյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ կառավարության, «Արմավիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Անահիտ Պետրոսյանի՝ պատճառված բարոյական վնասի հատուցման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2017 թվականի որոշման դեմ Հակոբ Հովհաննիսյանի ներկայացուցիչ Անի Չատինյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հակոբ Հովհաննիսյանը պահանջել է «Արմավիր բժշկական կենտ-

րոն» ՓԲԸ-ից և Անահիտ Պետրոսյանից բռնագանձել 15.000.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի հատուցում:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Էդ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.10.2017 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.12.2017 թվականի որոշմամբ Հակոբ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.10.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հակոբ Հովհաննիսյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 62-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածը, «Պետական փողոցի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետն արտոնություն է սահմանում նաև բարոյական վնասի հատուցման պահանջով հայցադիմումների նկատմամբ, որոնց հիմքը հանցագործությամբ պատճառված վնասն է: Ընդ որում, բարոյական վնասը ևս պետք է հասկանալ «վնաս» եզրույթի ներքո, քանի որ օրենսդիրը «վնաս» եզրույթի տակ դիտարկել է նաև բարոյական վնասը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 45-րդ կետում օրենսդիրը սահմանել է «վնաս» հասկացությունը, ըստ որի վնաս է դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասը, իսկ նույն օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 18.12.2017 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի մեկնաբանման արդյունքում վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հանցագործությամբ պարճառված բարոյական վնասի հատուցման հայցա-

պահանջով անձին պետական տուրքի վճարումից ազատելու իրավական խնդրին:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ ա) պետական տուրքի վճարումից ազատում, (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ հան-

ցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ին ընդունված՝ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիր» վերտառությամբ թիվ 40/34 բանաձևի «Ա» բաժնի 2-րդ կետում բացահայտված է «տուժող»-ի, որպես հանցագործության զոհի, հասկացության միջազգային իրավական բովանդակությունը, համաձայն որի՝ հանցագործության զոհ է (են) համարվում այն անձը (անձինք), ում (որոնց) հանցագործությամբ կամ իշխանության չարաշահմամբ պատճառվել է վնաս, ներառյալ մարմնական կամ բարոյական վնասը, հուզական ապրումները, նյութական վնասը կամ հիմնական իրավունքների էական խախտումները, որոնք օժտված են հատուցման հավասար իրավունքով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, որպես պետական տուրքի վճարման արտոնություն, այն է՝ պետական տուրքի վճարումից ազատելու նախապայման, ի թիվս այլնի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով առանձնացրել է նաև այն հայցվորներին, որոնց հանցագործությամբ վնաս է պատճառվել: Ընդ որում, վերը նշված հիմքով պետական տուրքի վճարումից ենթակա են ազատման ինչպես քաղաքացիական դատավարության կարգով, այնպես էլ քրեական դատավարության կարգով քաղաքացիական հայց ներկայացրած անձինք, եթե հանցագործության հետևանքով կրել են վնասներ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված արտոնությունների սահմանումն օրենսդրի կողմից պայմանավորված է այն ընդհանուր օրինաչափությամբ, համաձայն որի՝ հատկապես հաշվի են առնվում նման արտոնություն տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, ի թիվս այլնի, հանցագործության հետևանքով վնաս կրած անձանց փոխհատուցում ստանալու իրավունքը: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է հանցագործություններից տուժողների գույքային իրավունքների պաշտպանությունը, այդ իրավունքի լիարժեք իրականացումը պայմանավորելով անձի սահմանադրորեն և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման հետ, ինչն իր հերթին պահանջում է բավարար դատավարական երաշխիքներ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը, 25.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-890 որոշման շրջանակներում արձանագրելով, որ պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ, ընդգծել է, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը:

Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնույթագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*տե՛ս, Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է դատարանում պետական տուրքի գծով արտոնությունների կիրառման երկու ընթացակարգ՝ օրենքի ուժով և դատարանի հայեցողությամբ: Այսպես, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սպառնիչ ամրագրել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում դատական պաշտպանություն հայցող սուբյեկտն օրենքի ուժով ազատվում է պետական տուրքի վճարումից: Նման հիմքերից որևէ մեկի առկայությունը չի պահանջում շահագրգիռ անձի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդության հարուցում և դրա քննարկում ու լուծում դատարանի կողմից (*տե՛ս, Շաման Կարապետյանն ընդդեմ Արայիկ Միրզոյանի թիվ ԱՐԴ/0913/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.01.2014 թվականի որոշումը*):

Միաժամանակ մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանափակման հարցին, նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*տե՛ս, «Կոսվերս Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Հասմիկ Ասիխյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0536/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.06.2014 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունները ներառում են նաև պետական տուրքից ընդհանրապես ազատելու հնարավորությունը, որն ուղղված է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ տուժողը, նույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և ունի վերջինիս իրավունքները և պարտականությունները, բացի ցուցմունքներ տալու և տուժողի անձից անբաժանելի այլ իրավունքներից և պարտականություններից: Տուժողի իրավահաջորդն իրավունք չունի հաշտվել կասկածյալի և մեղադրյալի հետ ու հետ վերցնել տուժողի ներկայացրած բողոքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածով սահմանված է օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները, որի 45-րդ կետի համաձայն՝ «վսաս» նշանակում է դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ինչպես տուժողը, այնպես էլ տուժողի իրավահաջորդն իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում: Ընդ որում, օրենսդիրը չի որոշակիացրել, թե ինչ վնասի դեպքում է հնարավոր ստանալ վնասի փոխհատուցում, այսինքն՝ փոխհատուցման ենթակա է ինչպես նյութական, այնպես էլ բարոյական և գույքային վնասը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.11.2013 թվականի թիվ ՍԴՈ-1121 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ սահմանադրության մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը վկայում է այն մասին, որ **բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից**: Բացի այդ, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում անձին պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ոչ ներդաշնակ կանոնակարգումները խոչընդոտում են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ իրականացմանը: Սահմանադրական դատարանը գտել է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման իրավունքը բխում է ՀՀ սահմանադրության և ՀՀ մի շարք օրենսդրական ակտերի դրույթների բովանդակությունից և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Կոնվենցիայի (կից արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների և ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումների վերլուծությունից բխում է, որ բարոյական վնասի հատուցումը կարող է իրականացվել երկու ուղիով՝ ոչ նյութական բնույթի գործողություններով և նյութական հատուցմամբ: Ընդ որում, երբ անձը պահանջում է բարոյական վնասի նյութական հատուցում, ապա առկա չէ որևէ հիմք պահանջվող նյութական վնասի հատուցումը իրականացնելու այլ իրավական եղանակով, քան գույքային վնասի հատուցումը, քանի որ երկու դեպքում էլ հատուցումը ենթակա է իրականացման նյութական արտահայտությամբ: Հետևաբար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի «հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման հայցերով» արտահայտությունը պետք է ենթարկել տարածական մեկնաբանության, ըստ որի՝ հայցվորները պետական տուրքի վճարումից ազատվում են նաև այն դեպքերում, երբ հայց (բողոք) են ներկայացնում բարոյական վնասի նյութական հատուցման վերաբերյալ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի նյութական հատուցման հայցապահանջով անձին պետական տուրքի վճա-

րումից ազատելու հարցը նույնպես անհրաժեշտ է գնահատել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի լույսի ներքո:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հակոբ Հովհաննիսյանը «Արմավիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից և Անահիտ Պետրոսյանից պահանջել է հոգուտ իրեն բռնագանձել 15.000.000 ՀՀ դրամ՝ որպես բարոյական վնասի հատուցում՝ հայցի հիմքում դնելով ՀՀ Արմավիրի մարզի ընդահանուր իրավասության դատարանի 02.06.2016 թվականի դատավճիռը, ըստ որի՝ Անահիտ Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել թիվ 48111415 քրեական գործով առաջադրված մեղադրանքում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով և թիվ 48122515 քրեական գործով առաջադրված մեղադրանքում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով: Հայցադիմումին կից ներկայացվել է ՀՀ Արմավիրի մարզի ընդահանուր իրավասության դատարանի 02.06.2016 թվականի դատավճիռը **(հատոր 1-ին, գ.թ. 4-7, 9-32):**

Դատարանը 16.10.2017 թվականին Հակոբ Հովհաննիսյանի հայցադիմումը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ հայցվորը չի վճարել պետական տուրքը, իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը պետական տուրքի գծով արտոնություն սահմանում է միայն այն հայցվորների համար, որոնք ներկայացրել են հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման պահանջ **(հատոր 1-ին, գ.թ. 41):**

Հակոբ Հովհաննիսյանը, ներկայացնելով վերաքննիչ բողոք, նշել է, որ Դատարանը հաշվի չի առել, որ ներկայացվել է հանցագործության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ, ուստի օրենքի ուժով հայցվորներն ազատված են պետական տուրքի վճարումից **(հատոր 2-րդ, գ.թ. 7-9):**

Վերաքննիչ դատարանը 18.12.2017 թվականի որոշմամբ մերժել է Հակոբ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ «օրենսդիրը հայցվորներին պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնությունից օգտվելու հնարավորություն է ընձեռել միայն այն դեպքում, երբ վերջիններս ներկայացրել են հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման պահանջ: Մինչդեռ հայցվորը ներկայացրել է բարոյական վնասի (ոչ նյութական վնաս) հատուցման պահանջ» **(հատոր 2-րդ, գ.թ. 64-66):**

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով ներկայացվել է հայցադիմում, որով Հակոբ Հովհաննիսյանը պահանջել է ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորին հանցագործության հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից ազատելը հանդիսանում է երաշխիք տուժողի՝ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պարագայում, երբ օրենսդիրը իրավունք է վերապահել տուժողին կամ նրա իրավահաջորդին օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի (նյութական և ոչ նյութական վնաս) փոխհատուցում, ապա նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է տրամադրել նաև երաշխիք, այսինքն՝ անհրաժեշտ է, որ հայցվորները դատարան դիմելիս

ազատվեն հանցագործության հետևանքով իրենց պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից, այսպիսով՝ անհրաժեշտ է տրամադրել իրավական երաշխիքներ՝ տվյալ դեպքում պետական տուրքի վճարումից ազատելու եղանակով, քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման համար:

Վերոգրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հայցվորներին պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնությունից օգտվելու հնարավորություն է ընձեռված միայն այն դեպքում, երբ վերջիններս ներկայացրել են հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման պահանջ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանի դիտում է բավարար՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2017 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2017 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2967/02/17
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2967/02/17
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ս. Թորոսյան
Ա. Սմբատյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱՎՈՐՅԱՆԻ
Ռ. ՀԱՎՈՐՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Ստեփան Ոսկանյանի ընդդեմ «Ռոս-գոսստրալ-Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ տեղեկատվություն տրամադրելու և պարտավորեցնելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչ Նորայր Յուզբաշյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ստեփան Ոսկանյանը պահանջել է պարտավորեցնել Ընկերության իրեն տրամադրելու 07.07.2017 թվականի թիվ Ա-Պ-02 գրությամբ պահանջված տեղեկատվությունը, այն է՝ 12.11.2013 թվականին ՀՀ Արարատի մարզի Այնթապ գյուղի Երևանյան խճուղում «HYUNDAI ELANTRA» մակնիշի «45 RL 444» հաշվառման համարանիշի և «JEEP GRAND CHEROKEE LAREDO» մակնիշի «50 PM 001» հաշվառման համարանիշի ավտոմեքենաների մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի փաստով իրականացված քննությամբ ձեռք բերված ապահովագրական գործի նյութերն ամբողջությամբ, ինչպես նաև պատահարից հետո Արմեն Հարությունյանի կողմից Ընկերությանը կատարված հեռախոսազանգի ձայնագրությունը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության

դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 11.12.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Կ. Զիլինգարյան, Ա. Խառատյան, Մ. Հարթենյան) 22.01.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տված թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2018 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, 12.02.2018 թվականի որոշմամբ վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ վերաքննիչ բողոքին կցված 05.02.2018 թվականի վճարման թիվ S0403 հանձնարարագրում այն կատարված լինելու մասին տեղեկություններ չեն պարունակվում, այն է՝ բացակայում է բանկի անունից կատարվելիք ստորագրությունը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ էլեկտրոնային եղանակով կատարվող վճարումների դեպքում բանկի ստորագրություն, ինչպես նաև կնիքով հաստատում չի իրականացվում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 12.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պետական տուրքի վճարումն էլեկտրոնային եղանակով իրականացնելու և դրա վերաբերյալ ապացույց ներկայացնելու կապակցությամբ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ստորադաս դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք էլեկտրոնային եղանակով կատարված պետական

տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն պարագայում, երբ բանկի կնիքն առկա չէ փաստաթղթի վրա:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական ակտերի բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յուեն, Սուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրզանի Միրզոյանի թիվ ԱՐԴԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին

ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*): Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը, սակայն, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 59*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեն, Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 36*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Ի հավելումս վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարանի) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ այն դեպքում երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում

է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը, լիցենզավորումը, այդ գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները, սահմանում է վճարահաշվարկային կազմակերպությունների և վճարահաշվարկային համակարգերի կողմից օրենքների և իրավական այլ ակտերի խախտումները, վճարահաշվարկային համակարգերի և կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները, ինչպես նաև հաշվարկների վերջնականության կանոնները:

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա», «գ», «ե», «ժգ», «ժդ» կետերի համաձայն՝ նույն օրենքի իմաստով և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով՝

ա) **վճարահաշվարկային համակարգը** վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկաօգրային միջոցների ամբողջությունն է (ընդհանրությունը), որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին:

Վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնները հանդիսանում են վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնակարգի բաղկացուցիչ մասը, որը հաստատում է վճարահաշվարկային համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմինը:

գ) **վճարահաշվարկային փաստաթուղթը** Հայաստանի Հանրապետության օրենքներով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և դրանց համապատասխան՝ բանկային կանոններով սահմանված կարգով կազմված և հավաստված (վավերացված) ցանկացած թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթն է, որը պարունակում է կարգադրություն վճարահաշվարկային համակարգի մասնակցին՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու կամ փոխանցելու վերաբերյալ:

ե) **վճարային գործիքը** թղթային, էլեկտրոնային, ձայնային (կամ այլ եղանակով ներկայացված) հաղորդագրություն է, փաստաթուղթ կամ համաձայնություն, որը, անկախ օգտագործման, կիրառման կամ իրականացման ձևից ու եղանակից, հնարավորություն է ընձեռում դրա տիրապետողին և (կամ) օգտագործողին կատարելու վճարումներ:

ժգ) **միջոցների փոխանցումը** վճարման կատարման հետ կապված կանխիկ դրամական միջոցների կամ անկանխիկ դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքների շարժն է (փոխանցումը) վճարահաշվարկային համակարգի մի մասնակցից մյուսին:

ժդ) **վճարումը** դրամական պարտավորության կատարումն է միջոցների փոխանցման կամ դրամական պարտավորություն կամ դրամական միջոցներ վճարելու վերաբերյալ կարգադրություն պարունակող վճարահաշվարկային փաստաթղթի տրամադրման միջոցով:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների իրավական ռեժիմը և վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճարման հանձնարարականը (բանավոր, գրավոր կամ

ելեկտրոնային եղանակով) բանկին տրված հանձնարարությունն է՝ վճարել կամ հանձնարարել այլ բանկի՝ վճարել շահառուին հաստատագրված կամ հաշվարկվող գումար (...):

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Կենտրոնական բանկը, վճարահաշվարկային համակարգի գործունեության սահմանությունն ապահովելու նպատակով, կարող է սահմանել վճարման հանձնարարականների, դրանք չեղյալ համարելու հանձնարարականների և տեղեկացումների վավերապայմանները:

«Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 20.05.2004 թվականի թիվ 131-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 04.11.2014 թվականի թիվ 300-Ն, 13.01.2015 թվականի թիվ 2-Ն, 01.02.2000 թվականի թիվ 18 և 25.04.2000 թվականի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016 թվականի թիվ 168-Ն որոշման հավելված հանդիսացող «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների» (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետի համաձայն՝ նույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ ներկայացված՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, փոխանցելու կամ վճարելու վերաբերյալ կարգադրություն պարունակող և (կամ) վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը հաստատող, մատուցված ծառայությունների և (կամ) կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի (այսուհետ՝ վճարահաշվարկային փաստաթղթեր) վավերապայմանները և դրանց լրացման կանոնները:

Հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմանները և դրանց լրացման կանոնները սահմանվում են նույն կարգով և Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ վճարահաշվարկային փաստաթղթերի նկատմամբ նույն կարգով սահմանված պահանջները տարածվում և կիրառվում են ֆինանսական կազմակերպության կողմից վճարումների, փոխանցումների, կանխիկի մուտքագրման և կանխիկի ելքագրման գործառնությունների իրականացման ժամանակ ձևավորվող վճարահաշվարկային փաստաթղթերի նկատմամբ:

Հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն կարգը սահմանում է հետևյալ վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները՝

1) վճարահաշվարկային փաստաթղթեր, որոնք պարունակում են կարգադրություն դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ և (կամ) հաստատում (հավաստում) են ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը՝

ա. Վճարման հանձնարարական, (...)

Հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ նույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը կարող են կիրառվել (ներկայացվել) **թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով**, այդ թվում նաև՝ հեռահար սպասարկման համակարգերի միջոցով (բանկ-հաճախորդ համակարգի, ինտերնետ բանկինգի, մոբայլ բանկինգի, էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման համակարգի և այլնի միջոցով), ինչպես նաև գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ:

Հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունը նույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը գործարքն իրականացնող անձին տրամադրում է հետևյալ միջոցներից առնվազն մեկի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ.

1) էլեկտրոնային եղանակով՝ հաճախորդի կողմից նախապես նշված էլեկտրոնային փոստի (e-mail) հասցեին կամ հեռախոսահամարին ուղարկելու միջոցով,

2) էլեկտրոնային եղանակով պահպանելով միայն տվյալ հաճախորդի համար հասանելի տեխնիկաձրագրային միջավայրում, որը թույլ է տալիս վճարահաշվարկային փաստաթուղթը տպել և դուրս բերել արտաքին կրիչի վրա կամ ուղարկել էլեկտրոնային փոստի (e-mail) հասցեին,

3) հաճախորդին թղթային եղանակով տրամադրելու միջոցով:

Հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ նույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերում վավերապայմանների լրացման համար գործում են հետևյալ կանոնները. Վճարահաշվարկային փաստաթղթերի վավերապայմաններում կիրառվող.

1) «համարը» վավերապայմանում լրացվում է տվյալ փաստաթղթի չկրկնվող (ունիկալ) համարը, ընդ որում՝ համարի ունիկալության պահանջը կարող է չպահպանվել, եթե հաճախորդը սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթերը ներկայացնում է թղթային եղանակով,

2) «ամսաթիվ» վավերապայմանը լրացվում է որպես «օր, ամիս, տարի»,

3) «արժույթը (բառերով կամ կողով)» դաշտում լրացվում է գործարքի գումարի արժույթը բառերով, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը հայերեն է, կամ նշվում է տվյալ արժույթի համար սահմանված կողը՝ ըստ ԻՍՈ (ISO) 4217 ստանդարտի, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը հայերեն չէ,

4) «գործարքի նպատակ» դաշտում նշվում է տնտեսական գործառնության բովանդակությունը: Այդ նպատակով, օրինակ, կարող է նշվել.

ա. բյուջե ուղղված վճար, եթե վճարումն ուղղված է բյուջետային պարտավորությունների կատարմանը, կամ

բ. սոցիալական բնույթ ունեցող վճար, եթե վճարվում է սոցիալական ապահովության պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում, կամ

գ. ապրանքի կամ ծառայության դիմաց վճար, կամ

դ. ֆինանսական կազմակերպության նկատմամբ մարվող պարտավորություն, կամ

ե. վարկի մարում, կամ

զ. կանխիկի մուտքագրում, կամ

է. կանխիկի ելքագրում, կամ

ը. փոխանցում և այլն:

5) «ստորագրություն» վավերապայմանը նույն կարգով սահմանված վճարահաշվարկային փաստաթղթում լրացվում է.

ա. թղթային եղանակով փաստաթղթերի ներկայացման դեպքում պարտադիր դրվում

է հաճախորդի ստորագրությունը, ընդ որում՝ իրավաբանական անձանց դեպքում դրվում է իրավաբանական անձի իրավասու անձի (անձանց) ստորագրությունը (ները), իսկ ֆիզիկական անձանց դեպքում կարող է դրվել նաև լիազոր անձի ստորագրությունը,

բ. **էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի** ներկայացման դեպքում **որպես ստորագրություն կիրառվում է** ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված՝ **գործարքն իրականացնող անձին նույնականացնող ծածկագիր և (կամ) այլ միջոց**: Ընդ որում՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ, առանց վճարային քարտի և էլեկտրոնային փողի օգտագործման, կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ կանխիկի մուտքագրում, վճարում և փոխանցում իրականացնելու դեպքում «**ստորագրություն**» վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե հաճախորդը տալիս է իր համաձայնությունը գործարքն իրականացնելու համար՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ համապատասխան հրահանգ տալու միջոցով (...),

8) «Անունը, ազգանունը կամ անվանումը» վավերապայմանում լրացվում է գործարքն իրականացնող անձի անունը և ազգանունը՝ ֆիզիկական անձ լինելու դեպքում կամ անվանումը՝ իրավաբանական անձ լինելու դեպքում,

9) «Միջնորդավճարը» դաշտում ֆինանսական կազմակերպության կողմից նշվում է գործարքի կատարման համար գանձվող միջնորդավճարը՝ գումարային արտահայտությամբ կամ վճարվող, փոխանցվող, մուտքագրվող կամ ելքագրվող գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ,

10) «Գումարը (թվերով և (կամ) բառերով)» դաշտում լրացվում է վճարվող, փոխանցվող, մուտքագրվող կամ ելքագրվող գումարը՝ թվերով և բառերով, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը ներկայացվել կամ տրամադրվել է թղթային եղանակով, հակառակ դեպքում, եթե վճարահաշվարկային փաստաթուղթը ներկայացվել կամ տրամադրվել է էլեկտրոնային եղանակով, նշվում է գումարը՝ թվերով և (կամ) բառերով:

Հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ «Վճարման հանձնարարական» փաստաթղթի համար սահմանվում են հետևյալ վավերապայմանները և դրանց լրացման կանոնները:

Ըստ հավելվածի նշված կետի նախատեսվել են «Վճարման հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմանները, որտեղ ի թիվս այլնի, մասնավորապես 25-րդ կետում նշվել է, որ վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը պարտադիր է վճարման հանձնարարականը թղթային եղանակով ներկայացվելու դեպքում:

Վերոգրյալ հոդվածների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գործում է վճարահաշվարկային համակարգը, որն իրենից ներկայացնում է որոշակի տեխնիկաձրագրային միջոցների ամբողջություն (վճարային գործիքներ, քլիրինգ և այլն), որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին: Ընդ որում, **վճարումը, որպես** դրամական պարտավորության կատարում, իրականացվում է համապատասխան միջոցների փոխանցման կամ դրամական պարտավորություն կամ դրամական միջոցներ վճարելու վերաբերյալ կարգադրություն պարունակող վճարահաշվարկային փաստաթղթի տրամադրման միջոցով:

Միաժամանակ օրենսդիրը վերը նշված օրենքով սահմանել է վճարահաշվարկային փաստաթղթի հասկացությունը, մասնավորապես՝ նշելով, որ այն ՀՀ օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և բանկային կանոններով սահմանված կարգով կազմված և հավաստված (վավերացված) ցանկացած թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթն է, որը պարունակում է կարգադրություն վճարահաշվարկային համակարգի մասնակցին՝ դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու կամ փոխանցելու վերաբերյալ:

Այսինքն՝ վճարահաշվարկային համակարգի միջոցով անձն իրավասություն է ստանում կատարելու համապատասխան վճարումներ, ի հավաստում որի՝ տրամադրվում է համատասխան վճարահաշվարկային փաստաթուղթ (օրինակ՝ վճարման հանձնարարական, վճարման պահանջագիր և այլն): Ընդ որում, վճարահաշվարկային փաստաթուղթը կարող է լինել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային: Միաժամանակ օրենսդիրը «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքով սահմանել է նաև վճարման հանձնարարականի, որպես վճարահաշվարկային փաստաթղթի հասկացությունը, ըստ որի այն բանավոր, գրավոր կամ **էլեկտրոնային եղանակով** բանկին տրված հանձնարարությունն է՝ վճարել կամ հանձնարարել այլ բանկի՝ վճարել շահառուի հաստատագրված կամ հաշվարկվող գումար:

Վճարելի դատարանը փաստում է, որ ի ապահովումն վերը նշված օրենքների կիրառման՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կանոնակարգվել են վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները: Մասնավորապես, որպես ընդհանուր կանոն էլեկտրոնային եղանակով ստեղծված վճարահաշվարկային փաստաթղթի ներկայացման համար նախատեսվել են մի շարք վավերապայմաններ, որոնցից է նաև «**ստորագրություն**» **վավերապայմանը**: Ըստ այդմ էլ էլեկտրոնային եղանակով վճարահաշվարկային փաստաթղթի ներկայացման դեպքում **որպես ստորագրություն կիրառվում է ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված՝ գործարքն իրականացնող անձին նույնականացնող ծածկագրի և (կամ) այլ միջոցի տրամադրումը**: Ընդ որում, ստորագրություն վավերապայմանի պահանջը համարվում է կատարված, եթե հաճախորդը տալիս է իր համաձայնությունը գործարքն իրականացնելու համար՝ գործարքի սպասարկումն ապահովող սարքի (միջոցի) կիրառմամբ համապատասխան հրահանգ տալու միջոցով: Ավելին, նույն կարգով որպես հատուկ կանոն սահմանվել է նաև «վճարման հանձնարարականին» (վճարահաշվարկային փաստաթուղթ) վերաբերող վավերապայմանները, որի 25-րդ կետում որպես վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքի, ստորագրության առկայության վավերապայմանը պարտադիր է միայն այն դեպքերում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է թղթային եղանակով: Այսինքն՝ այն դեպքում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, դրա նկատմամբ կիրառելի չէ վերը նշված կանոնը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու (...) մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է

դրա վերաբերյալ միջնորդությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաքայա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Սույն գործով Հնկերության ներկայացուցիչը 11.01.2018 թվականին Դատարանի 11.12.2017 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք (**գ.թ. 64-70**): ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 22.01.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «Ի խախտումն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնների.

1. վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հաստատող որևէ ապացույց.

2. վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարման փաստը հաստատող որևէ ապացույց (վճարման ենթակա պետական տուրքի գումարը կազմում է 10.000 դրամ), իսկ բողոքը չի պարունակում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ որևէ միջնորդություն» (**գ.թ. 72-73**):

Հնկերության ներկայացուցիչը 08.02.2018 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Միաժամանակ վերաքննիչ բողոքին կցվել է վերաքննիչ բողոքի օրինակը Ստեփան Ոսկանյանին ուղարկելու մասին ապացույցը և 05.02.2018 թվականի թիվ S0403 վճարման հանձնարարագիրը (**գ.թ. 83-90**):

Վերաքննիչ դատարանը, 12.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձնելով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին դարձյալ չի կցվել պետական տուրքի վճարման փաստը հաստատող որևէ թույլատրելի ապացույց: Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքին կցված՝ 05.02.2018թ. վճարման թիվ S0403 հանձնարարագրին, ապա այն կատարված լինելու մասին տեղեկություն դրանում չի պարունակվում (բացակայում է բանկի անունից կատարվելիք ստորագրությունը)» (**գ.թ. 92-93**):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հիմնավորումներին Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը՝

Հնկերության ներկայացուցիչը, 08.02.2018 թվականին կրկին ներկայացնելով վերաքննիչ բողոք, միաժամանակ վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է 05.02.2018 թվականի թիվ S0403 վճարահաշվարկային փաստաթուղթը, այն է՝ վճարման հանձնարարագիրը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 05.02.2018 թվականի թիվ S0403 վճարման հանձնարարագրի ուսումնասիրությունից հետևում է, որ ներկայացված վճարահաշվարկային փաստաթղթով պետական տուրքի վճարումը կատարվել է էլեկտրոնային եղանակով՝ «ՀԾ-ԿլիենտԲանկ» համակարգով: Միաժամանակ այն համապատասխանում է վճարահաշվարկային փաստաթուղթ ներկայացնելու համար սահմանված վավերապայմաններին:

Մասնավորապես՝ նշված վճարման հանձնարարագրում առկա է փաստաթղթի համարը՝ թիվ S0403, վճարման օրը, ամիսը, տարին՝ 05.02.2018 թվական, վճարման գումարի չափը՝ 10.000 ՀՀ դրամ, վճարման նպատակը՝ «թիվ ԵԿԴ/2967/02/17 քաղաքացիական գործով կայացված վճիռի դեմ», վճարող ընկերության անվանումը՝ «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, հաշիվը (դեբետո)՝ 15700-03731650100, ՀՎՀՀ-ն (հարկային կոդ)՝ 2302589581, կնիքը և հաճախորդի ստորագրությունը, վճարողի բանկի անվանումը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, բանկի կոդը՝ 15700, շահառուի բանկի հաշվեհամարը (կրեդիտ)՝ 90000-5016010:

Ինչ վերաբերում է 05.02.2018 թվականի թիվ S0403 վճարման հանձնարարագրում բանկի իրավասու անձի ստորագրության բացակայությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճարման հանձնարարականում ստացող ֆինանսական կազմակերպության իրավասու անձի ստորագրության առկայության վավերապայմանը պարտադիր է միայն այն դեպքերում, երբ վճարման հանձնարարականը ներկայացվում է թղթային եղանակով:

Մինչդեռ սույն գործով պետական տուրքի վճարումը հավաստող վճարման հանձնարարականը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով, որպիսի պայմաններում բանկի իրավասու անձի ստորագրությունը, որպես վճարահաշվարկային փաստաթղթի (վճարման հանձնարարագրի) վավերապայման, չի պահանջվում: Այսինքն՝ Ընկերության ներկայացուցիչը, կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքին կից ներկայացնելով 05.02.2018 թվականի թիվ S0403 վճարման հանձնարարագիրը, պահպանել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, այն է՝ վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է պետական տուրքը վճարելու փաստը հաստատող ապացույցը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Ընկերության կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ սահմանափակելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ Ընկերության դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 12.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0327/02/17
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0327/02/17
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան
Դատավորներ՝ Ա. Խատատյան
Ս. Թորոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի մարտի 05-ին

քննարկելով ըստ հայցի Գեորգի Ավետիսյանի ընդդեմ «Հանրապետական անասնաբու-
ժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պե-
տական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ աշխատանքից
ազատելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու
և հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիա-
կան գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2017 թվականի «Վերաքն-
նիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կազմակերպության վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գեորգի Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Կազմա-
կերպության տնօրենի՝ աշխատանքից ազատելու մասին 01.12.2016 թվականի թիվ 361Ա հրա-
մանը, վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապուրդի գու-
մարը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության
դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 02.06.2017 թվականի վճռով
հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2017 թվականի որոշմամբ Կազմա-
կերպության վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.08.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետը և 213-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանի 14.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը բողոք բերած անձը ստացել է 24.07.2017 թվականին: Բողոք բերած անձի կողմից 31.07.2017 թվականին խախտումը վերացվել է և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվել է Վերաքննիչ դատարան, սակայն թյուրիմացաբար գործին մասնակցող անձին և Դատարան վերաքննիչ բողոքն ուղարկելը հավաստող փոստային անդորրագրերը չեն կցվել: Մինչև վերաքննիչ բողոքում թույլ տրված սխալները շտկելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետի ավարտը՝ 04.08.2017 թվականին, Վերաքննիչ դատարան ներկայացվել է դիմում, որին կցվել են վերաքննիչ բողոքը գործին մասնակցող անձին և Դատարան ուղարկելը հավաստող փոստային անդորրագրերը, սակայն Վերաքննիչ դատարանը 04.08.2017 թվականին վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելը հավաստող որևէ ապացույց:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ վերաքննիչ դատարանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու առանձնահատկությունների մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման արդյունքում առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Մոյն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք վերաքննիչ դատարանը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս կաշկանդված է բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաքայի ժամկետով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական ակտերի բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*Կրեուզն, Մուսաննա Արարապի Միրզոյանն ընդդեմ Մուսաննա Միրհրանի Միրզոյանի թիվ ԱՐԱԴ/0170/02/14 քաղաքացիական*

գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանել է վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պատշաճ ձևով ուղարկվում է վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.
- 2) բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).
- 3) դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.

4) նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որը ազդել է գործի ելքի վրա.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում մեջ բերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) բողոք բերող անձի պահանջը.

7) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են վրա հասնել այն պարագայում, երբ բողոք բերած անձը չի պահպանել վերաքննիչ բողոքի ներկայացման կարգը կամ ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, (...), գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը բողոք բերող անձին հնարավորություն է տալիս սահմանված ժամկետում վերացնելու վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված թերությունները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միմիայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում և այն պարագայում, երբ չեն պահպանվել վերաքննիչ բողոքին ներկայացվող և օրենքով սահմանված պահանջները, դատարանը վերադարձնում է վերաքննիչ բողոքը: Այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերաբերում են բողոքի ձևին և բովանդակությանը, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետ է տրամադրում դրանք վերացնելու և կրկին ներկայացնելու համար, իսկ մնացած բոլոր դեպքերում թերությունները շտկելու և բողոք ներկայացնելու համար ժամկետ չի տրամադրվում: Ընդ որում, նշված երկշաբաթյա ժամկետը բողոք բերած անձին տրամադրվում է օրենքի ուժով և ենթակա չէ որևէ սահմանափակման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածը, որը վերնագրված է «Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը», սահմանել է այն պահանջները, որին պետք է համապատասխանի վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում: Մասնավորապես՝ վերաքննիչ բողոքը պետք է պարունակի դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, բողոք բերող անձի պահանջը, բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի

վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել նաև, որ օրենսդրի կողմից գործածվող «բողոք» եզրույթը պետք է դիտարկել որպես վերաքննիչ բողոքի բովանդակային տարրերի՝ տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի միասնություն, ինչը բխում է նաև այն հանգամանքից, որ այդ երկու տարրերը սահմանված են մեկ հոդվածով և կազմում են մեկ տրամաբանական միասնություն: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև այն իրողությունից, որ դրանցից որևիցե մեկի կապակցությամբ թույլ տրված խախտումը հիմք է վերաքննիչ բողոքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով վերադարձնելու համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետում գործածվող «բողոք» եզրույթը պետք է մեկնաբանվի նշված տրամաբանությամբ համապատասխան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վերաքննիչ վարույթի հարուցումը պայմանավորված է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացմամբ, որը ենթադրում է օրենսդրի կողմից նախատեսված ժամկետում օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ վերաքննիչ բողոքի ներկայացում վերաքննիչ դատարան: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: Այդ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է վերաքննիչ վարույթի հարուցման փուլի առանձնահատկություններին՝ նշելով, որ վերաքննիչ վարույթի հարուցման փուլը ներառում է վերաքննիչ բողոքարկման և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունները: Վերաքննիչ վարույթի հարուցումը պայմանավորված է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացմամբ, որը ենթադրում է օրենսդրի կողմից ամրագրված ժամկետում օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ վերաքննիչ բողոքի ներկայացում վերաքննիչ դատարան: Պայմանավորված բողոքարկման ենթակա դատական ակտի տեսակով՝ գործն ըստ էության լուծող, թե միջանկյալ, օրենսդիրը նախատեսել է բողոքարկման իրավունքի իրացման տարբեր ժամկետներ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի և 140-րդ հոդվածի 1-ին կետի փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման պարագայում այդ ժամկետը մեկ ամիս է: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ նշված մեկամսյա ժամկետն օրենսդրի տեսանկյունից այն անհրաժեշտ ժամանակահատվածն է, որի շրջանակներում անձը կարող է իրապես իրացնել իր բողոքարկման իրավունքը: Հետևաբար այդ ժամանակահատվածում բողոքարկման իրավունքի սուբյեկտն օժտված է իրավունքների առավել լայն շրջանակով, քան վերաքննության մյուս փուլերում, և հակառակը, վերաքննիչ վարույթի հարուցման փուլում վերաքննիչ դատարանի մասնակցությունը դատավարական իրավահարաբերություններին կրում է պասիվ բնույթ՝ ի տարբերություն վերաքննության մյուս փուլերի: Վերոգրյալով պայմանավորված՝ վերաքն-

նության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքն առավել լայն դրսևորում ունի, քան վերաքննության մյուս փուլերում: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննության հարուցման փուլում տնօրինչականության սկզբունքը կարող է դրսևորվել նաև վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները փոփոխելով կամ լրացնելով, ինչը, սակայն, կարող է կատարվել մինչև բողոքարկման իրավունքի իրականացման համար սահմանված մեկամսյա ժամկետի ավարտը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: Այդ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Նշված մեկամսյա ժամկետի ավարտից հետո կայացնելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում՝ վերաքննիչ դատարանը հարուցում է վերաքննիչ վարույթ, իսկ վերաքննիչ վարույթի հարուցմամբ սկսվում է բողոքի քննությունը վերաքննիչ դատարանում, որի ընթացքում գործում է վերաքննիչ բողոքի հիմքերը փոփոխելու, լրացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 5-րդ կետով ամրագրված արգելքը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վերաքննիչ բողոքի հիմքերը կարող են փոփոխվել և/կամ լրացվել բացառապես վերաքննության հարուցման փուլում՝ մինչև բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը լրանալը (*տե՛ս, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՍԳ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը, արձանագրում է, որ դրանք կիրառելի են նաև այն դեպքերի նկատմամբ, երբ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով երկշաբաթյա ժամկետ որոշումն ստանալուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է հետևյալով. օրենսդիրը, սահմանելով բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն, վերաքննիչ բողոքարկման ընդհանուր ժամկետը երկարաձգել է երկշաբաթյա ժամկետով՝ երաշխավորելով դատարանի մատչելիության իրավունքը: Դատավարական այս կարգը, սակայն, բացարձակ բնույթ չի կրում և վերաբերում է միայն բողոքի այն թերություններին, որոնք իրենց բնույթով շտկման ենթակա են և չեն բացառում վերաքննության հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ այդպիսի թերությունները կարող էին և թույլ տրված չլինել բողոքարկման ընդհանուր ժամկետի ընթացքում, այդուհանդերձ, վերաքննիչ դատարանի կողմից այդպիսիք արձանագրվելու դեպքում անձը պետք է հնարավորություն ունենա շտկելու դրանք: Օրենսդրի կողմից սահմանված երկշաբաթյա ժամկետը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն անհրաժեշտ ժամանակահատվածն է, որի շրջանակներում անձը կարող է բողոքում թույլ տրված խախտումները վերացնել և բողոքը կրկին ներկայացնել վերաքննիչ դատարան՝ դրանով իսկ հնարավորություն ունենալով իրապես իրացնել իր բողոքարկման իրավունքը: Միաժամանակ նկատի ունենալով, որ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետը, ըստ էության, բողոքարկման ընդհանուր ժամկետի շարունակությունն է, հետևաբար դրա նկատմամբ ենթակա են կիրառման այն նույն իրավակարգավորումները, որոնք վերաբերելի են ընդհանուր ժամկետում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացմանը:

Վերագրյալից հետևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը, ստանալով վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը, պետք է հնարավորություն ունենա երկշաքայա ժամկետում վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել՝ խախտումները վերացված տարբերակով, ինչը ենթադրում է, որ բողոք բերած անձը հնարավորություն պետք է ունենա բողոքը ներկայացնել բողոքի տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի հետ միասին: Նշված պահանջը կատարելու համար օրենքով սահմանված է դատավարական ժամկետ, այն է՝ որոշումը ստանալուց հետո երկշաքայա ժամկետ, որի ընթացքում ցանկացած ժամանակ բողոք բերած անձն իրավագոր է կատարել բողոքում թույլ տված խախտումների վերացում՝ ներկայացնելով բողոքը բովանդակային առումով՝ որպես տեքստային և բողոքին կից ներկայացվող պարտադիր փաստաթղթերի միասնություն: Ընդ որում, վերաքննիչ դատարանը կաշկանդված է դատավարական երկշաքայա ժամկետով և կրկին ներկայացված բողոքի կապակցությամբ իրավագոր է կայացնելու որոշում միայն այդ ժամկետն ավարտվելուց հետո: Հակառակ դեպքում՝ կսահմանափակվի բողոք բերած անձի՝ բողոքում թույլ տված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքը՝ խաթարելով անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաքայա ժամկետով, կրկին ներկայացված բողոքի վերաբերյալ, պայմանավորված կայացվող որոշման բնույթով, որոշում կարող է կայացնել հետևյալ ժամկետներում՝

1) այն պարագայում, երբ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման, ապա վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով երկշաքայա ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում պետք է որոշում կայացնի բողոքը վերադարձնելու մասին:

2) այն պարագայում, երբ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը բացակայում են, ապա վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով երկշաքայա ժամկետը լրանալուց հետո մեկամսյա ժամկետում պետք է ընդունի որոշում՝ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում:

Սույն գործով Դատարանի 02.06.2017 թվականի վճռով Գեորգի Ավետիսյանի հայցն ընդդեմ Կազմակերպության բավարարվել է (**հատոր 1-ին, գ.թ. 44-48**): Կազմակերպությունը 30.06.2017 թվականին Դատարանի 02.06.2017 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել (**հատոր 1-ին, գ.թ. 57-66**):

Վերաքննիչ դատարանը 14.07.2017 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը վերադարձրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով, մասնավորապես՝ վերաքննիչ բողոքին կցվել է սահմանվածից պակաս չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույց, իսկ բողոքը չի պարունակում պետական տուրքի չվճարված մասով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն: Վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանվել է, որ բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո երկշաքայա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում բողոքը կհամարվի դատարանում ընդունված (**հատոր**

1-ին, գ.թ. 131-132): Նշված որոշումը Կազմակերպությունը ստացել է 24.07.2017 թվականին (հիմք հետադարձ ծանուցման անդորրագիր) (**հատոր 1-ին, գ.թ. 138**):

Կազմակերպությունը 31.07.2017 թվականին վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է Վերաքննիչ դատարան (**հատոր 2-րդ, գ.թ. 18-26**)՝ կցելով պետական տուրքը վճարելու փաստը հավաստող ապացույցը (**հատոր 2-րդ, գ.թ. 31**):

Վերաքննիչ դատարանը 04.08.2017 թվականի որոշմամբ վերադարձրել է Կազմակերպության վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կանոնը, մասնավորապես՝ կրկին ներկայացված վճարելի բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հաստատող որևէ ապացույց (**հատոր 2-րդ, գ.թ. 39-40**):

Կազմակերպությունը 04.08.2017 թվականին դիմումով Վերաքննիչ դատարան է ներկայացրել գործին մասնակցող անձի ներկայացուցչին և Դատարան վերաքննիչ բողոքը ուղարկելը հաստատող փոստային անդորրագրերը, որոնց վրա առկա է «31 JUL 2017» նշագրումով կնիքը (**հատոր 2-րդ, գ.թ. 44-45, 42**):

Վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանված երկշաբաթյա ժամկետն ավարտվել է 08.08.2017 թվականին:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդորադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Կազմակերպությունը, Վերաքննիչ դատարանի 14.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ստանալով 24.07.2017 թվականին, 31.07.2017 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետը դեռևս չավարտված՝ 04.08.2017 թվականին, Կազմակերպությունը Վերաքննիչ դատարան է ներկայացրել գործին մասնակցող անձի ներկայացուցչին և Դատարան վերաքննիչ բողոքն ուղարկելը հաստատող փոստային անդորրագրերը, որոնց վրա առկա կնիքի նշագրումից հետևում է, որ վերջիններս տրվել են 31.07.2017 թվականին, այսինքն՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքն արդեն իսկ 31.07.2017 թվականին՝ կրկին վերաքննիչ բողոքի ներկայացման օրը, ուղարկվել է գործին մասնակցող անձին և Դատարան, սակայն Վերաքննիչ դատարան ներկայացվել է 04.08.2017 թվականին: Այսպիսով, ակնկալելով, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ որոշում Վերաքննիչ դատարանը կարող էր կայացնել օրենքով նախատեսված երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո միայն, այն է՝ ոչ շուտ, քան 08.08.2017 թվականը, Կազմակերպությունը դեռևս 04.08.2017 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացրել 31.07.2017 թվականին գործին մասնակցող անձի ներկայացուցչին և Դատարան վերաքննիչ բողոքն ուղարկելը հաստատող փոստային անդորրագրերը, սակայն նույն օրը՝ 04.08.2017 թվականին, մինչև օրենքով նախատեսված երկշաբաթյա ժամկետի ավարտը Վերաքննիչ դատարանը կայացրել է «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշում, ինչի արդյունքում նշված փոստային անդորրագրերը քննարկման առարկա չեն դարձվել՝ սահմանափակելով անձի՝ օրենքով սահմանված ժամկետներում վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետով, կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի վերաբերյալ կայացրել է որոշում՝ նշված ժամկետն ավարտ-

ված չլինելու պայմաններում, ինչի հետևանքով քննարկման առարկա չի դարձվել բողոք բերած անձի կողմից 04.08.2017 թվականի դիմումին կից ներկայացված՝ գործին մասնակցող անձի ներկայացուցչին և Դատարան վերաքննիչ բողոքն ուղարկելը հաստատող փոստային անդորրագրերը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Վերաքննիչ դատարանը նման որոշում իրավագոր էր կայացնել նշված ժամկետի ավարտից հետո, որպիսի պայմանը չպահպանելու հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, ինչը հիմք է Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վերացնելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունելության հարցին վերստին անդրադարձ կատարելու նպատակով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0748/02/16
 դատարանի որոշում 2018թ.
 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0748/02/16
 Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
 Դատավորներ՝ Ա. Հունանյան
 Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
 և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
 մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
 Ռ. ՀԱՎՈՐՅԱՆԻ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
 Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
 Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
 Մ. ԴԻՄԵՅԱՆԻ
 Գ. ՀԱՎՈՐՅԱՆԻ
 Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
 Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
 Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդդեմ Բազ-
 րատ Մարությանի, «Յումակա» ՍՊԸ-ի, երրորդ անձ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի՝
 գումարի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղա-
 քացիական դատարանի 16.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին»
 որոշման դեմ Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետի-
 սյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Իիմելով դատարան՝ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն պահանջել է «Յումակա» ՍՊԸ-ից
 և Բազրատ Մարությանից համապարտության կարգով բռնագանձել 146.000 ՀՀ դրամ,
 146.000 ՀՀ դրամին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախա-
 տեսված տոկոսները՝ սկսած հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը պատաս-
 խանողների կողմից ստանալու օրվանից մինչև պարտավորության պատշաճ կատարումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-
 թյան դատարանի (դատավոր՝ Զ. Նախչբարյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2017 թվակա-
 նի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Կ. Հակոբյան, Ա. Խառատյան, Տ. Նազարյան) 19.07.2017 թվականի որոշմամբ Բագրատ Մարությանի և «Յումակս» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տված թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.08.2017 թվականի որոշմամբ Բագրատ Մարությանի և «Յումակս» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բագրատ Մարությանի և «Յումակս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ և 214-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, 16.08.2017 թվականի որոշմամբ վերադարձնելով վերաքննիչ բողոքը, խոչընդոտել է պատասխանողների բողոքարկման իրավունքի իրացմանն այն դեպքում, երբ վերաքննիչ բողոք ներկայացրած անձինք վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին 19.07.2017 թվականի որոշումը ստանալուց հետո՝ 11.08.2017 թվականին, կրկին ներկայացրել են վերաքննիչ բողոք՝ վերացնելով նշված թերությունները:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել են լիազորագրեր և անհրաժեշտ փաստաթղթեր, հետևաբար վերաքննիչ բողոքը պետք է ընդունվեր վարույթ և ապահովվեր գործի քննությունը վերաքննության կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 16.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ»:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Համանման դրույթներ են պարունակում նաև 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական ակտերի բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լուեն, Մուսաննա Արարայրի Միրզոյանն ընդդեմ Մուսաննա Միհրանի Միրզոյանի թիվ ԱԲԱԿ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՌ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՌ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՌ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՌ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հա-

րուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*): Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը, սակայն, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*Կրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 59*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կրեն, Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 36*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*Կրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը գործին չի զրկում նրան՝ գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից: Դատարանում իրավաբանական անձանց գործերը վարում են օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում գործող նրանց մարմինները կամ ներկայացուցիչները: Իրավաբանական անձանց ղեկավարները կամ նրանց կանոնադրությանը համապատասխան՝ իրավաբանական անձի շահերը ներկայացնելու իրավունք ունեցող այլ անձինք դատարան են ներկայացնում իրենց պաշտոնական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանում ներկայացուցիչ կա-

րող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կազմակերպության անունից լիազորագիրը տրվում է նրա գործադիր մարմնի ղեկավարի կամ կանոնադրությամբ կազմակերպությունը առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու դատավարական գործողություններ, բացառությամբ՝

(...)

8) բողոքարկելու դատական ակտը (...):

Նույն հոդվածում նշված գործողություններից յուրաքանչյուրի կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են նույն օրենսգրքով սահմանված կարգով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաքայա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտը կոչված է ապահովելու գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է դատական ներկայացուցչություն իրականացնելու լայն շրջանակ՝ չսահմանափակելով դրա գործառնությունը դատավարական այս կամ այն փուլում, այս կամ այն դատական ատյանում: Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ դատարանում գործը վարելու լիազորագիրը ներկայացուցչին իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք օրենքով սահմանված կարգով վերապահված են այս կամ այն գործին մասնակցող անձին, բացառությամբ որոշակի դատավարական գործողությունների կատարումից, ինչպիսին է, օրինակ, դատական

ակտը բողոքարկելը: Նշված գործողության կատարման համար ներկայացվողի տված լիազորագրում պետք է հատուկ նախատեսված լինի ներկայացուցչի այդ լիազորությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քաղաքացիական դատավարությունում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար ներկայացուցիչը պետք է ունենա օրենքով սահմանված կարգով տրված լիազորություն, ինչն իր հերթին հնարավորություն կտա ներկայացուցչին ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ ներկայացվողի դատական պաշտպանության իրավունքը: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով դատարանները պետք է պարզեն դատավարական գործողություններ իրականացնելու համար անձին տրված լիազորագրի պատշաճ ձևակերպված լինելու հանգամանքը (արդյո՞ք այն տրվել է օրենքով սահմանված կարգով), արդյո՞ք պահպանված է լիազորագրի գործողության ժամկետը և այլն: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ դատարանը պարզում է, որ դատավարական գործողություններ իրականացնելու համար տրված լիազորագիրը ներկայացվել է օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ դադարել է լիազորագրի գործողության ժամկետը, ապա դատարանն իրավասու է կիրառել դրանից բխող դատավարական հետևանքները:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումները, արձանագրում է, որ գործին մասնակցող անձինք դատական ակտն իրավասու էին բողոքարկել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով տրված և ձևակերպված լիազորագրի հիման վրա: Ըստ այդմ էլ վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ընդ որում, այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը պարզում է, որ վերաքննիչ բողոքը ստորագրված չէ կամ ներկայացուցչի ներկայացված լիազորագիրը չի համապատասխանում օրենքով սահմանված կարգին, կամ դադարել է ներկայացված լիազորագրի գործողություն ժամկետը, Վերաքննիչ դատարանն իրավասու էր իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով վերադարձնել վերաքննիչ բողոքը՝ նույն հոդվածի 3-րդ կետի հիմքով սահմանելով ժամկետ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը՝ թերությունները շտկելու համար որոշակի ժամկետի տրամադրմամբ վերադարձնելը նպատակ է հետապնդում հնարավորություն տալ դատական ակտը բողոքարկած անձին վերացնելու մատնանշված թերությունները և այն կրկին՝ առանց թերությունների ներկայացնել: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք ներկայացրած անձն օրենքով սահմանված ժամկետում վերացնում է Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված թերությունները և կրկին այն ներկայացնում է՝ թույլ չտալով վերաքննիչ բողոքի նոր թերություններ, ապա կրկին ներկայացված վերաքննիչ բողոքն ենթակա չէ վերադարձման միայն այն հիմքով, որ առաջին բողոքի ներկայացման ժամանակ թույլ է տրվել որևէ խախտում: Այլ կերպ ասած՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելիս Վերաքննիչ դատարանն իրավասու չէ հղում կատարել առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտմանը, եթե այն վերաքննիչ բողոք բերած անձի կողմից արդեն իսկ վերացվել է:

Սույն գործով Բազրատ Մարությանի և «Յումակս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանը 11.07.2017 թվականին Դատարանի 07.06.2017 թվականի վճռի դեմ ներկայացրել

է վերաքննիչ բողոքը (**հատոր 2-րդ, գ.թ. 5-7**): ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 19.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը ներկայացվել է Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանի կողմից, որն էլ ստորագրել է վերաքննիչ բողոքը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Հերմինե Ավետիսյանի կողմից վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի անունից իր լիազորությունները հավաստող ապացույց, իսկ գործում առկա՝ Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի կողմից Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագրերի գործողության ժամկետը լրացել է դեռևս 2017 թվականի ապրիլի 13-ին: Վերը նշվածի հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ արդյունքում վերաքննիչ բողոքը ստորագրել է այն անձը, ով վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ լիազորություն չունի (**հատոր 2-րդ, գ.թ. 16**):

Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանը 11.08.2017 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Միաժամանակ վերաքննիչ բողոքին կցվել է 07.08.2017 թվականին Բազրատ Մարությանի կողմից Հերմինե Ավետիսյանին երեք տարի ժամկետով տրված լիազորագիրը և 31.07.2016 թվականին «Յումակա» ՍՊԸ-ի տնօրեն Միխայիլ Յուխանյանի կողմից Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագիրը՝ առանց ժամկետի նշմամբ (**հատոր 2-րդ գ.թ. 36-41**):

Վերաքննիչ դատարանը, 16.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձնելով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «11.08.2017 թվականին Հերմինե Ավետիսյանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կցված լիազորագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն տրվել է Բազրատ Մարությանի կողմից 07.08.2017 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը նախկինում ներկայացվել էր 07.07.2017 թվականին, ինչից էլ հետևում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացնելու պահի դրությամբ համապատասխան լիազորություններ ունենալու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել: Արդյունքում՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու պահի դրությամբ (07.07.2017 թվականին) Հերմինե Ավետիսյանը լիազորություն չի ունեցել ստորագրելու վերաքննիչ բողոքը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված թերությունը Բազրատ Մարությանի մասով չի շտկվել: Իսկ ինչ վերաբերում է «Յումակա» ՍՊԸ-ի կողմից Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագրին, ապա Վերաքննիչ դատարանը նշել է, որ լիազորագիրը տրվել է 31.07.2016 թվականին (առանց ժամկետի նշմամբ), իսկ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ներկայացվել է 11.08.2017 թվականին, հետևաբար «Յումակա» ՍՊԸ-ի անունից Հերմինե Ավետիսյանը վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ լիազորություն չունի» (**հատոր 2-րդ, գ.թ. 42**):

Վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը Բազրատ Մարությանի մասով անհիմն է, իսկ «Յումակա» ՍՊԸ-ի մասով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանը 11.07.2017 թվականին առաջին անգամ ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 19.07.2017 թվականի որոշմամբ նշելով, որ Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2016 թվականին Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագրերի ժամկետը լրացած է և արձանագրելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ

կետի խախտման փաստը՝ վերադարձրել է վերաքննիչ բողոքը: Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանը 11.08.2017 թվականին կրկին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Միաժամանակ վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է Բազրատ Մարությանի և «Յումակա» ՍՊԸ-ի տնօրեն Միխայիլ Յովսանյանի կողմից տրված լիազորագրերը:

Բազրատ Մարությանի կողմից 07.08.2017 թվականին Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագրի ուսումնասիրությունից հետևում է, որ Բազրատ Մարությանը Հերմինե Ավետիսյանին **07.08.2017 թվականին** պատշաճ կարգով տվել է լիազորագիր՝ երեք տարի ժամկետով՝ մինչև 08.08.2020 թվականը: Այսինքն՝ Հերմինե Ավետիսյանը **11.08.2017 թվականին** կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքում Բազրատ Մարությանի մասով պահպանել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, այն է՝ Բազրատ Մարությանի մասով շտկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված թերությունը, ինչը, սակայն, անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բազրատ Մարությանի մասով վերաքննիչ բողոքն առաջին անգամ վերադարձնելիս Վերաքննիչ դատարանը հստակ մատնանշել է վերաքննիչ բողոքում թույլ տրված թերությունը, այն է՝ Բազրատ Մարությանի անունից նրա ներկայացուցիչ Հերմինե Ավետիսյանի՝ օրենքով սահմանված լիազորություն չունենալու հանգամանքը, ինչն էլ հետագայում կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով Բազրատ Մարությանի կողմից վերացվել է: Մասնավորապես՝ Բազրատ Մարությանի մասով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է Բազրատ Մարությանի կողմից Հերմինե Ավետիսյանին **07.08.2017 թվականին** պատշաճ կարգով տրված լիազորագիր՝ երեք տարի ժամկետով՝ մինչև 08.08.2020 թվականը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Բազրատ Մարությանի մասով կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելով, վկայակոչել է առաջին անգամ վերաքննիչ բողոքում թույլ տրված թերությունը, ինչն օրենքով սահմանված ժամկետում Բազրատ Մարությանի կողմից արդեն իսկ վերացվել էր: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Բազրատ Մարությանի մասով բողոքը վերադարձնելով, չի ապահովել ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը՝ դրանով իսկ սահմանափակելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ Բազրատ Մարությանի դատական պաշտպանության իրավունքը:

Անդրադառնալով «Յումակա» ՍՊԸ-ի տնօրեն Միխայիլ Յովսանյանի կողմից 31.07.2016 թվականին Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագրին, ապա նշված լիազորագրի ուսումնասիրությունից հետևում է, որ այն տրվել է **31.07.2016 թվականին**՝ առանց ժամկետի նշմամբ, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ «Յումակա» ՍՊԸ-ի տնօրեն Միխայիլ Յովսանյանի կողմից 31.07.2016 թվականին Հերմինե Ավետիսյանին տրված լիազորագիրը գործել է մինչև 01.08.2017 թվականը: Հետևաբար կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու օրվա դրությամբ՝ **11.08.2017 թվականին**, Հերմինե Ավետիսյանը «Յումակա» ՍՊԸ-ի անունից վերաքննիչ բողոք ներկայացնելու պատշաճ լիազորություն չի ունեցել, այսինքն՝ «Յումակա» ՍՊԸ-ի մասով չի վերաց-

վել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված թերությունը, որպիսի իրավաչափ եզրահանգման էլ եկել է Վերաքննիչ դատարանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 16.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ Բազրատ Մարությանի մասով, վերացնելու, իսկ «Յումակս» ՍՊԸ-ի մասով՝ օրինական ուժի մեջ թողնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ, 405-րդ և 406-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ Բազրատ Մարությանի մասով, վերացնել: Մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1639/02/13

Նախագահող դատավոր՝

Դատավորներ՝

Կ. Զիլինգարյան

Ա. Խառատյան

Ս. Թորոսյան

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1639/02/13
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ

մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին,
քննարկելով ըստ հայցի Արաքսի Մխիթարյանի ընդդեմ «Ֆաբերլիկ Զակավկազյե»
ՍՊԸ-ի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ
քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 23.09.2017
թվականի որոշման դեմ «Ֆաբերլիկ Զակավկազյե» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ
Գուրգեն Թորոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արաքսի Մխիթարյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել
514.426 ՀՀ դրամ, ինչպես նաև 09.05.2013 թվականից մինչև պարտավորության փաստացի
կատարումն այդ գումարի վրա հաշվարկել և բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի
411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Զիչոյան) (այսուհետ՝ Դատարան) 28.04.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2017 թվականի որոշմամբ Ընկերության
վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը վերականգնելու
վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերա-

դարձվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.09.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Թորոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արաքսի Մխիթարյանի ներկայացուցիչ Գնել Նազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 210-րդ և 213-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում վերացվել են նախկինում թույլ տրված թերությունները, մասնավորապես՝ հայցվորին է ուղարկվել վերաքննիչ բողոքի պատճենը և վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:

Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ «Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը՝ բողոքի օրինակը հայցվորին ուղարկված լինելու փաստը հաստատող ապացույցի բացակայությունը, չի վերացվել, քանի որ հայցվորի ստացած RR246602798AM կոդով և 15.00 գրամ քաշով թիվ 651 առաքանին պարունակել է միայն պատասխանողի՝ մեկ թերթից բաղկացած դիմումը»: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր իրավասությունների շրջանակից և փորձել է պարզել դատավարության մասնակցին ուղարկված ծրարի պարունակությունը, դրա քաշը և այլն, որի արդյունքում էլ հանգել է սխալ եզրահանգման, ինչն էլ բողոքը վերադարձնելու հիմք է հանդիսացել:

Ավելին, սույն գործում առկա է ապացույց այն մասին, որ թիվ RR246602798AM կոդով թիվ 651 առաքանին փոստային ծառայության միջոցով հանձնվել է Արաքսի Մխիթարյանին, այսինքն՝ բողոք բերած անձի կողմից պատշաճ ձևով Արաքսի Մխիթարյանին է ուղարկվել վերաքննիչ բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 23.09.2017 թվականի որոշումը:

2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

27.08.2017 թվականին Արաքսի Մխիթարյանը փոստով ստացել է բողոքաբերի կողմից ուղարկված նամակ, որում եղել է մեկ թերթից բաղկացած՝ Վերաքննիչ դատարանին հասցեագրված դիմում, այսինչ պետք է լիներ նաև վերաքննիչ բողոքը, որը, սակայն, առկա չի եղել: Այսինքն՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով թերություններն իրականում վերացված չեն եղել:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է բողոքի ներկայացման և վարույթ ընդունման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի խախտման արդյունքում առկա է առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն, Սուսաննա Արարարի Միրզոյանն ընդդեմ Սուսաննա Միրսանի Միրզոյանի թիվ ԱԲԱԴ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանզի դատարանի մատչելիության իրավունքն ինքնին պետության կողմից կարգավորում պահանջող երևույթ է: Այս առումով պետությունը որոշակի հայեցողություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին դատարանի մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե դա չի հետապնդում իրավաչափ նպատակ և առկա չէ ողջամիտ հարաբերակցություն՝ օգտագործվող միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև (*լրեն՝ Ս. Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրա-

վասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանադրական նշված նորմի բովանդակությունը կազմում են հետևյալ հիմնարար պահանջները՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները որոշվում են Սահմանադրությամբ և օրենքներով,

2. այդ լիազորությունները (գործառնությունները, իրավունքներն ու պարտականությունները) կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրության այլ ակտերին,

3. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ և ձեռնպահ մնալ այդ ակտերով չնախատեսված կամ դրանց պահանջներին հակասող որևէ գործողությունից,

4. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց օրինական գործողություններից բխող պահանջները պարտադիր են կատարման այն սուբյեկտների համար, որոնց հասցեագրված են:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան գործելու սահմանադրաիրավական պահանջը պայմանավորված է իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը պատշաճ ձևով ուղարկվում է վերաքննիչ դատարան և գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարան:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.
- 2) բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).
- 3) դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.
- 4) նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որը ազդել է գործի ելքի վրա.

5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջ բերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.

6) բողոք բերող անձի պահանջը.

7) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերող անձը պարտավոր է գործին մասնակցող այլ անձանց պատշաճ ձևով ուղարկել բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները:

ՀՀ վճարել դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վկայակոչված դրույթներին, արձանագրել է, որ վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջները, ըստ էության, դասակարգվում են երկու խմբի՝ առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են վերաքննիչ բողոքի բովանդակությանը և ներառում են այն տեղեկությունների շրջանակը, որոնք պետք է արտացոլվեն վերաքննիչ բողոքում: Մասնավորապես՝ վերաքննիչ բողոքը պետք է պարունակի դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որն ազդել է գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները՝ վկայակոչելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումները, որոնք վերաքննիչ բողոք բերած անձը վերաբերելի է համարում՝ մեջբերելով դրանց հակասող մասերը և կատարելով համեմատական վերլուծություն, կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը, բողոք բերող անձի պահանջը, բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին: Մասնավորապես՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է (կամ բողոքում ներառվում է) դրա վերաբերյալ միջնորդությունը (*յոեն, Գեորգի Ավետիսյանն ընդդեմ «Հանրապետական անասնաբուժասանիդարական և բուսասանիդարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության թիվ ԵԷԴ/0327/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.03.2018 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, համակարգային վերլուծության ենթարկելով վերը շարադրված իրավական կարգավորումները, փաստելով, որ ցանկացած դատավարական գործողություն կարող է կատարվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում, գտնում է, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ըն-

դունելության հարցի քննարկման փուլում առերևույթ գնահատում է բողոքին կից ներկայացվող փաստաթղթերին առաջադրված պահանջների պահպանվածությունը: Մասավորապես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը պարտավորեցնում էր վերաքննիչ բողոք բերած անձին վերաքննիչ բողոքին կից ներկայացնել նաև բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցներ: Ընդ որում, օրենսդիրը կարևորել էր բողոքի պատճենն ուղարկելու, այլ ոչ թե գործին մասնակցող այլ անձի կողմից այն ստանալու փաստը՝ որպես բողոքը վարույթ ընդունելու նախապայման դիտելով բողոքի պատճենը գործին մասնակցող այլ անձին ուղարկելու վերաբերյալ ապացույցի ներկայացումը: Նման ապացույցի ներկայացման պայմաններում գործում է այն կանխավարկածը, որ կողմին ուղարկվել է հենց վերաքննիչ բողոքի պատճենը: Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ իրավահարաբերության ծագման պահին գործող դատավարական կարգավորումների պայմաններում վերաքննիչ դատարանն իրավասություն չուներ իրականացնելու քննություն՝ պարզելու համար այն հարցը, թե արդյոք պատշաճ ձևով ներկայացված անդորրագրով հավաստվում է, որ կողմին ուղարկվել է վերաքննիչ բողոքի օրինակը, թե՛ մեկ այլ փաստաթուղթ:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով Դատարանի 28.04.2017 թվականի վճռով Արաքսի Մխիթարյանի գումարի բռնագանձման պահանջի մասին հայցն ընդդեմ Ընկերության, բավարարվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 154-162**): Ընկերությունը 30.06.2017 թվականին Դատարանի 28.04.2017 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել (**հատոր 3-րդ, գ.թ. 5-9**):

Վերաքննիչ դատարանը 04.08.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով՝ մասնավորապես նշելով, որ վերաքննիչ բողոքին չեն կցվել բողոքի օրինակը հայցվորին ուղարկելը հավաստող ապացույց, ինչպես նաև պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույցը, կամ պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն (**հատոր 3-րդ, գ.թ. 14-15**):

Ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի կողմից փոստային առաքման եղանակով 24.08.2017 թվականին ներկայացվել է թիվ RR246602798AM պատվիրված առաքանու անդորրագիրը, որով հավաստվում է, որ Արաքսի Մխիթարյանին «Հայաստան, Երևան, Աթոյան 2-9» հասցեով 24.08.2017 թվականին ուղարկվել է 15.00 գրամ քաշով փոստային առաքանի (**հատոր 3-րդ, գ.թ. 23**):

Հացվոր Արաքսի Մխիթարյանի կողմից 01.09.2017 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացվել «Վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելու վերաբերյալ» դիմում, որով հայտնել է, որ Ընկերության ներկայացուցիչը բողոքի օրինակը հայցվորին չի ուղարկել, այլ ուղարկել է մեկ էջանոց դիմում, առանց վերաքննիչ բողոքի բուն տեքստի (**հատոր 3-րդ, գ.թ. 34-35**):

Վերաքննիչ դատարանը 23.09.2017 թվականի որոշմամբ վերադարձրել է Ընկերության վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը դարձյալ ենթակա է վերադարձման, քանի որ Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը՝ բողոքի օրինակը հայցվորին ուղարկված լինելու փաստը հաստատող ապացույցի բացակայությունը, չի վերացվել: Վերաքննիչ դատարանն

արձանագրել է, որ հայցվորի ներկայացրած ապացույցների և փաստարկների պայմաններում ակնհայտորեն վիճելի է վերաքննիչ բողոքի օրինակը պատասխանողի կողմից հայցվորին ուղարկված լինելու փաստը, ուստի անդորրագիրը չի կարող գնահատվել որպես տվյալ փաստը հաստատող ապացույց, իսկ այդ փաստը հաստատող այլ ապացույցներ Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել (**հատոր 3-րդ, գ.թ. 41-42**):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը պետք է գնահատման առարկա դարձնե այն հարցը, թե արդյոք Ընկերության կողմից ներկայացված անդորրագրով հավաստվում է այն փաստը, որ Ընկերությունը կամ Ընկերության ներկայացուցիչն Արաքսի Մխիթարյանին պատշաճ կերպով ուղարկել է վերաքննիչ բողոքի օրինակը:

Սույն գործով Ընկերությունը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է հայցվորին վերաքննիչ բողոքն ուղարկելը հավաստող անդորրագիր (թիվ RR246602798AM պատվիրված առաքանու անդորրագիրը), որով հաստատվում է, որ Ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանն Արաքսի Մխիթարյանին «Հայաստան, Երևան, Աթոյան 2-9» հասցեով 24.08.2017 թվականին ուղարկել է փոստային առաքանի: Այսինքն՝ կրկին բերված վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է ապացույց առ այն, որ բողոքի պատճենն ուղարկվել է գործին մասնակցող անձին: Հետևաբար հաշվի առնելով այն, որ նման ապացույցի ներկայացման պայմաններում արդեն իսկ գործում էր այն կանխավարկածը, որ բողոք բերած անձը կատարել է իր վրա դրված պարտականությունը, միաժամանակ նկատի ունենալով, որ բողոքի ընդունելության փուլում Վերաքննիչ դատարանն առաքանու պարունակությունը ստուգելու գործառույթ չուներ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Ընկերության կողմից Արաքսի Մխիթարյանին ուղարկված և վերջինիս կողմից Վերաքննիչ դատարան ուղարկված մեկ թերթից բաղկացած առաքանու քաշը նույնն է՝ երկուսն էլ կազմում են 15.00 գրամ, որի արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճելի է մնացել վերաքննիչ բողոքի օրինակը պատասխանողի կողմից հայցվորին ուղարկված լինելու փաստը և վերադարձրել է Ընկերության վերաքննիչ բողոքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ կողմին վերաքննիչ բողոքի պատճենն ուղարկելու պահանջը պահպանվել է (հիմք՝ թիվ RR246602798AM պատվիրված առաքանու անդորրագիրը), մինչդեռ Վերաքննիչ դատարանը նշված պահանջը պահպանված չլինելու հիմքով վերադարձնելով վերաքննիչ բողոքը՝ սահմանափակել է անձի դատական պաշտպանության իրավունքը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանի 04.08.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է երկու հիմքով. առաջին՝ բողոքին չի կցվել բողոքի օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հաստատող ապացույց, երկրորդ՝ վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարման փաստը հաստատող որևէ ապացույց, իսկ բողոքը չի պարունակում պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն:

Վերաքննիչ դատարանը 23.09.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ անդրադարձ է կատարել միայն վերաքննիչ բողոքի վերադարձի առաջին հիմքին, իսկ երկրորդ հիմքի վերաբերյալ որևէ դատողություն չի ներկայացվել: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ որո-

շում չի կայացրել կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով երկրորդ թերությունը շտկված լինելու հարցի վերաբերյալ:

Նման պայմաններում անհրաժեշտ է գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության պարզելու համար՝ արդյոք շտկվել է պետական տուրքի մասով արձանագրված վերաքննիչ բողոքի թերությունը, և ըստ այդմ լուծել՝ վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը:

***Վերոնշյալ պարճառաբանություններով հերքվում են վճարեկ բողոքի պարասխա-
նում բերված փաստարկները:***

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բա-
վարար՝ վճարեկ բողոքի ներկայացման և վարույթ ընդունման պահին գործող ՀՀ քաղա-
քացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի
որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018
թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-
րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-
րանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 23.09.2017 թվականի որոշումը և գործն
ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա
չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0641/02/17
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0641/02/17

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝ Ա. Խառատյան

Մ. Հարթենյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵՂԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սուսաննա Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Սուսաննա Հակոբյանի ընդդեմ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձինք ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր)՝ հրապարակային սակարկությունների միջոցով անշարժ գույքը վաճառելու վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապարմությունը.

Դիմելով դատարան՝ Սուսաննա Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել հրապարակային սակարկությունների միջոցով անշարժ գույքը վաճառելու վերաբերյալ աճուրդը և կիրառել գործարքի անվավերության հետևանքներ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սիսակյան) (այսուհետ՝ Դատարան) 08.01.2018 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը

կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.03.2018 թվականի որոշմամբ Սուսաննա Հակոբյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վերաքննիչ բողոքում թույլ տված խախտումները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2018 թվականի որոշմամբ Սուսաննա Հակոբյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Հակոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ, 13-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածը:

Բողոքը բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերության սնանկության գործով կառավարչին Դատարանի 08.01.2018 թվականի վճիռն էր կրկին բերված վերաքննիչ բողոքի օրինակը 18.04.2018 թվականին փոստային առաքմամբ (թիվ 693 առաքանի, կոդը RR252325643 անդորրագրով) պատշաճ կերպով ուղարկվել է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշքան թաղամաս, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 111/1 հասցեով, որն էլ վերջինս ստացել է 15.05.2018 թվականին և այդ մասին նշել է իր հայտարարության մեջ:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի օրինակն Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Ղարիբյանին առաքելու հանգամանքը հիմնավորող փոստային առաքման անդորրագրում վերջինիս հասցեի թերի լինելուն, ապա գրառման կրճատ և ոչ ամբողջական լինելու պատճառը ոչ թե բողոքաբերի անփութությունն է, այլ փոստային բաժանմունքում առկա՝ նամակների առաքման համակարգչային ծրագրերում առկա սահմանափակումներն են:

Վերոգրյալի հիման վրա բողոքը բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 07.05.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի խախտման արդյունքում առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որն ազդել է գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացումն ապահովելու խնդիրներին և այդ կապակցությամբ հայտնել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ:

Անդրադառնալով սահմանադրորեն երաշխավորված անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարանի դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Մեկ այլ, այն է՝ 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել

հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե 'u, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադրով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպական դատարանը մեկ այլ վճռով նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*յրե 'u, Khalifaoui v. France, թիվ 34791/97 գանգադրով Եվրոպական դատարանի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրե 'u, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (*յրե 'u, ՄՌՈ-652, ՄՌՈ-690, ՄՌՈ-719, ՄՌՈ-765, ՄՌՈ-844, ՄՌՈ-873, ՄՌՈ-890, ՄՌՈ-932, ՄՌՈ-942, ՄՌՈ-1037, ՄՌՈ-1052, ՄՌՈ-1115, ՄՌՈ-1127, ՄՌՈ-1190, ՄՌՈ-1192, ՄՌՈ-1196, ՄՌՈ-1197, ՄՌՈ-1220, ՄՌՈ-1222, ՄՌՈ-1257, ՄՌՈ-1289*) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ,

նաև արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Բողոքարկման իրավունքի և այդ համատեքստում նաև դատարանի մատչելիության վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով կիրառման ենթակա իրավակարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: (...)

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերող անձը պարտավոր է գործին մասնակցող այլ անձանց պատշաճ ձևով ուղարկել բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210 հոդվածի պահանջները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրի կողմից սահմանվել է այն ընթացակարգը, որի պահպանմամբ անձը կարող է իրացնել բողոքարկման իր իրավունքը: Ըստ այդմ, վերաքննիչ բողոք բերող անձը պարտավորվում է գործին մասնակցող այլ անձանց պատշաճ ձևով ուղարկել բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելու՝ վերաքննիչ բողոք բերող անձի պարտականության սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, այլ ուղղված է գոր-

ծին մասնակցող անձանց՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրենց իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովմանը, որոնցից է, օրինակ, վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը: Գործին մասնակցող անձը կարող է լիարժեք իրականացնել օրենքով սահմանված իր իրավունքները միայն այն դեպքում, երբ ծանոթ է վերաքննիչ բողոքին և դրա բովանդակությանը (յո՛ւն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ ԱԶ Հասմիկ Գալստյանի թիվ ԵԱԶԳ/0212/04/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2017 թվականի որոշումը):

Ոստի ցանկացած պարագայում դատարանը պարտականություն է կրում ստուգելու՝ արդյոք բողոք բերած անձը բողոքն ուղարկել է գործին մասնակցող այլ անձանց, և արդյոք այն ուղարկվել է ճիշտ հասցեով, քանի որ դրա հիման վրա է դատարանն ապահովում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի պատշաճ իրականացումը: Նշված պահանջը չպահպանելու դեպքում վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոք բերած անձն ըստ էության կատարել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի պահանջը, և բողոքն ուղարկվել է գործին մասնակցող անձանց թեկուզև որևէ թերությամբ նշված հասցեով, սակայն թերությունն այնպիսին չէր, որ խոչընդոտեր փոստային առաքանու հանձնումը հասցեատիրոջը, ապա միայն այդ հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելը գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականության դրսևորում է և կհանգեցնի անձի՝ դատարանի մատչելության իրավունքի անհարկի սահմանափակման:

Սույն գործով Սուսաննա Հակոբյանը Դատարանի 08.01.2018 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ միաժամանակ միջնորդելով վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառները համարել հարգելի (**հատոր 2-րդ, գ.թ. 10-16**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.03.2018 թվականի որոշմամբ Սուսաննա Հակոբյանի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքին կցվել է սահմանված չափից պակաս չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույց: Միաժամանակ Վերաքննիչ դատարանի 30.03.2018 թվականի որոշմամբ սահմանվել է ժամկետ՝ արձանագրված խախտումը վերացնելու և որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու համար (**հատոր 2-րդ, գ.թ. 17-18**):

Սուսաննա Հակոբյանը, Դատարանի 08.01.2018 թվականի վճռի դեմ կրկին ներկայացնելով վերաքննիչ բողոք, ի թիվս այլոց, կցել է վերաքննիչ բողոքը 18.04.2018 թվականին հետևյալ անձին և հասցեով ուղարկելու փոստային անդորրագիրը, այն է՝ «Հայաստան, Կոտայք, ՀՐԱԶԴԱՆ, 0000, ՄԻԿ., Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ., ԱԳԱԹԱ ՖԱՐՄ ՍՊԸ ՍՆԱՆԿ. ԳՈՐ. ԿԱՌ. Ղարիբյան Հարութ» բովանդակությամբ (անվան և ազգանվան տառերի մի մասը նշվել են ձեռագիր) թիվ RR252325643M կոդով (առաքանի թիվ 693) փոստային անդորրագիրը (**հատոր 2-րդ, գ.թ. 43**):

Վերաքննիչ դատարանն իր 07.05.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը կրկին վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը չի պահպանել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կանոնը: Մասնավորապես՝ կրկին ներկայաց-

ված վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակն Ընկերության սնանկության գործով կառավարչին ուղարկելու փաստը հաստատող որևէ վերաբերելի ապացույց: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքին կցված՝ Հարութ Դարիբյանի անունը պարունակող փոստային առաքման անդորրագրին (թիվ 693 առաքանի, կողմ՝ RR252325643M), ապա դրանում նշված հասցեն («Հայաստան, Կոտայք, ՀՐԱԶԴԱՆ, 0000, ՄԻԿ., Զ. ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ., ԱԳԱԹԱ ՖԱՐՄ ՍՊԸ ՄՆԱՆԿ. ԳՈՐ. ԿԱՌ. Դարիբյան Հարութ»), չի համապատասխանում նրա հասցեին՝ ըստ գործի նյութերի («ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 111/1»), որպիսի պայմաններում այդ անդորրագիրը չի կարող համարվել բողոքի օրինակն Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Դարիբյանին ուղարկված լինելու փաստը հաստատող վերաբերելի ապացույց»: Վերոգրյալի հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանը որևէ անդրադարձ չի կատարել 30.03.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված խախտումը վերաքննիչ բողոք բերած անձի կողմից վերացված լինելու հարցի վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 57-58**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ գործում առկա հայցադիմումի՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Դարիբյանի հասցեն է՝ «ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 111/1» (**հատոր 1-ին, գ.թ. 4**):

Ընկերության սնանկության գործով կառավարիչ Հարութ Դարիբյանը 23.05.2018 թվականի հայտարարություն է տվել այն մասին, որ թիվ ԿԴ/0641/02/17 քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Սուսաննա Հակոբյանի ընդդեմ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի և «Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի, երրորդ անձինք ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ հրապարակային սակարկությունների միջոցով անշարժ գույքը վաճառելու վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, Դատարանի 08.01.2018 թվականի վճռի դեմ Սուսաննա Հակոբյանի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքի օրինակը 18.04.2014 թվականին փոստային առաքմամբ ուղարկվել է իրեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 111/1 հասցեով, որը ստացել է 15.05.2018 թվականին, որի համար ստորագրել է (ներկայացվել է վճռաբեկ բողոքին կից):

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքի պահպանության անհրաժեշտությունից ելնելով՝ վերաքննիչ բողոք ներկայացնող անձը պարտավոր էր վերաքննիչ բողոքն ուղարկել նաև գործին մասնակցող այլ անձանց, ընդ որում, այնպիսի պատշաճ հասցեով, որը կապահովեր վերջիններիս կողմից բողոքի ստացումը: Նման պատշաճ հասցեն տվյալ դեպքում գործին մասնակցող անձանց հայցադիմումում նշված հասցեներն են: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակցի վրա պատշաճ հասցեով բողոքն այլ անձանց ուղարկելու պարտականությունն այնպիսի սահմանափակում չէ, որը խաթարի դատարանի մատչելիության իրավունքը: Ուստի Սուսաննա Հակոբյանը պարտավոր էր պատշաճ հասցեով բողոքն ուղարկել Ընկերության սնանկության գործով կառավարչին:

Անդրադառնալով նշված պարտականությունը Սուսաննա Հակոբյանի կողմից կատար-

ված լինելուն՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված փոստային անդորրագրից պարզ է դառնում, որ թեև հասցեատիրոջ հասցեն նշվել է թերություններով, սակայն թերություններն այնպիսին չեն, որ միանշանակ կերպով կասկածի տակ դնեն Սուսաննա Հակոբյանի կողմից իր դատավարական պարտականությունը կատարված լինելու հանգամանքը հատկապես այն պարագայում, երբ առաքանու հասցեատերը ևս հաստատել է փոստային առաքանին ստանալու հանգամանքը: Այսպիսով, ոչ էական թերություններ պարունակող փոստային անդորրագիրը չհամարելով որպես բողոքը գործին մասնակցող այլ անձանց ուղարկված լինելը հավաստող ապացույց՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Սուսաննա Հակոբյանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Արդյունքում Սուսաննա Հակոբյանը զրկվել է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ գործնականում չի ապահովվել բողոքարկման ընթացակարգի միջոցով ենթադրյալ դատական սխալի բացահայտումը և ուղղումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի խախտում:

Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, 07.05.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելով, որպես վերադարձման հիմք արձանագրել է միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետը, չանդադառնալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.03.2018 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը Սուսաննա Հակոբյանի կողմից վերացված լինելու հանգամանքին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել նույն դատարան՝ նոր քննության՝ պարզելու համար՝ արդյոք շտկվել է պետական տուրքի մասով արձանագրված վերաքննիչ բողոքի թերությունը, և ըստ այդմ՝ լուծելու վերաքննիչ բողոքի ընդունելության հարցը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա

չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/4024/02/17
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/4024/02/17
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅՄԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հուլիսի 20-ին
գրավոր ընթացակարգով քննելով Գեղանուշ Հարությունյանի ներկայացուցիչ Դիանա
Շախրամանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2017
թվականի որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գեղանուշ Հարությունյանը պահանջել է անվավեր ճանաչել իր և
Մարտին Մկրտչյանի միջև կնքված ամուսնությունը, ու դրա հիման վրա ՌԴ Մոսկվայի քա-
ղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի Կոնցուս-
կի բաժնում 14.05.2003 թվականին կատարված թիվ 346 գրանցումը ճանաչել չեղյալ:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ֆիդա-
յան) (այսուհետ՝ Դատարան) 12.10.2017 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
30.11.2017 թվականի որոշմամբ Գեղանուշ Հարությունյանի ներկայացուցչի վերաքննիչ բո-
ղոքը մերժվել է, և Դատարանի 12.10.2017 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու
մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գեղանուշ Հարությունյանի ներկայացու-
ցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ և 144-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 244-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ ներկայացվել է ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ, որի պայմաններում իմաստագուրկ է դառնում հյուպատոսական օրինականացմամբ այն վավեր ճանաչելու անհրաժեշտությունը, անհիմն հետևություն է արել այն մասին, որ մինչ ամուսնությունն անվավեր ճանաչելն անհրաժեշտ է այն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում վավեր ճանաչել հյուպատոսական օրինականացմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ կողմերի միջև գրանցված ամուսնությունն իսկզբանե եղել է կեղծ, քանի որ Մարտին Մկրտչյանը Գեղանուշ Հարությունյանի հետ ամուսնացել է ոչ թե ընտանիք կազմելու, այլ՝ ՌԴ քաղաքացիություն ստանալու նպատակով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանվում է ոչ թե ամուսնության անվավերության վերաբերյալ գործի քննության ընդդատության, այլ նման գործեր քննելիս կիրառման ենթակա օրենսդրության հարցը: Այսինքն՝ տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության համապատասխան դատարանը պետք է կիրառի Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը, որտեղ գրանցվել է ամուսնությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ սույն գործով պատասխանող Մարտին Մկրտչյանը 2008 թվականից իր մոր, կնոջ և երեխաների հետ ապրում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Արովյան փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 1^ա տուն հասցեում, այսինքն՝ ՀՀ տարածքում ունի բնակության վայր և գտնվում է նույն տարածքում, որի պայմաններում Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի հիմքով Հայաստանի Հանրապետության դատարանն իրավասու էր քննելու սույն գործով վեճը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 30.11.2017 թվականի որոշումը և «կայացնել նոր դատական ակտ՝ հայցադիմումն ընդունել վարույթ»:

3. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս

կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին պահանջը Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից քննելու իրավասություն ունենալու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ և 144-րդ հոդվածների, Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ ինչպիսի՞ հանգամանքների առկայության պայմաններում է Հայաստանի Հանրապետության դատարանն իրավասու քննելու Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների միջև Ռուսաստանի Դաշնությունում գրանցված ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը:

ա) ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է Եվրոպական դատարանի որոշումներում:

Այսպես՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յոնս, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է յուրաքանչյուրի դատական պաշտպանության իրավունք:

քը, երբ որոշվում են նրա «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը դեռևս 1971 թվականին նշել է, որ խնդրո առարկա հասկացությունը ներառում է բոլոր ընթացակարգերը, որոնց արդյունքը վճռորոշ է մասնավոր իրավունքների և պարտականությունների համար (*յրեն, Ringeisen v. Austria գործով Եվրոպական դատարանի 16.07.1971 թվականի վճիռը, 94-րդ կետ*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՌ-719 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ հայցը կամ դիմումը դատարան ներկայացնելն իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմատետձ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանել դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների ու ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը:

բ) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արդար դատաքննության իրավունքի կարևորագույն տարրերից է դատարանի մատչելիության իրավունքը, որի վարույթային երաշխիքներից է ենթակայության ինստիտուտը: Ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որի միջոցով պարզվում է տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ սուբյեկտը: Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումն օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր: Փաստորեն, անձը կարող է իրացնել դատարանի մատչելիության իր իրավունքը միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջինիս բարձրացրած հարցը (որպես կանոն՝ իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից:

Նախկին օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Նախկին օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է վարույթ ընդունել նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ՝ ներկայացված հայցադիմումը:

Նախկին օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Վերը նշված հոդվածների վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիական գործի հարուցման հիմքը նույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ՝ ներկայացված հայցադիմումն է: Ընդ որում, հայցի ներկայացումը և հետագայում այն դատարանի կողմից վարույթ ընդունելը պայմանավորված է մի շարք դատավարական հանգամանքներով, որոնց չպահպանելը հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմք է:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ հայցադիմումը վարույթ ընդունելու գործընթացը դատավարության առաջին, հիմնական և ինքնուրույն փուլերից մեկն է, որի ընթացքում դատավորը միանձնյա ստուգում է հայցն օրենքով սահմանված կարգով հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացված լինելու հանգամանքը, պարզում է վեճի բնույթը և այն դատարանի քննությանը ենթակա լինելը, անհրաժեշտ փաստաթղթերը հայցադիմումին կցված լինելը և դատավարական օրենսգրքով սահմանված այլ հանգամանքներ: Այսինքն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պարզման ենթակա չեն հայցադիմումում ձևակերպված՝ հայցի հիմքի և առարկայի հետ կապված վիճելի նյութաիրավական պահանջի օրինականությունն ու հիմնավորվածությունը, նշվածը ստուգվում է հայցի ըստ էության քննության փուլում, ինչի արդյունքում դատարանը բավարարում է կամ մերժում է ներկայացված հայցը: Մինչդեռ այն դեպքում, երբ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պարզում է, որ տվյալ վեճը ենթակա չէ դատարանի քննությանը, դատարանը որոշում է կայացնում հայցադիմումի ընդունումը մերժելու մասին:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն բոլորքում բարձրացված հարցադրումը, հարկ է համարում անդրադառնալ օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի՝ ՀՀ իրավասու դատարաններին ենթակայության խնդրին:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Նախկին օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով կամ այլ իրավական ակտերով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Նախկին օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիները և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ օտարերկրյա անձինք) իրավունք ունեն իրենց իրավունքների և շահերի պաշտպանության համար գործերի ենթակայությանը համապատասխան դիմելու Հայաստանի Հանրապետության դատարաններ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օտարերկրյա անձինք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և իրավաբանական անձանց հավասար օգտվում են դատավարական իրավունքներից և կրում են դատավարական պարտականություններ:

Նախկին օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով դատավարությունը դատարաններում իրականացվում է նույն օրենսգրքին և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերը քննում են, եթե պատասխանողն ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վկայակոչված կարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը երաշխավորել է նաև օտարերկրյա անձանց դատական պաշտպանության իրավունքը՝ նրանց իրավունք վերապահելով իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար՝ գործերի ենթակայությունը համապատասխան դիմելու Հայաստանի Հանրապետության դատարաններ, եթե տվյալ գործով պատասխանող կողմը Հայաստանի Հանրապետությունում ունի բնակության վայր կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Միաժամանակ օրենսդիրն օտարերկրյա անձանց հնարավորություն է տվել հավասարապես օգտվելու ՀՀ քաղաքացիներին և իրավաբանական անձանց վերապահված դատավարական իրավունքներից ու կրելու դատավարական պարտականություններ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության դատարանները նրանց մասնակցությամբ դատավարությունը պետք է իրականացնեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և այլ օրենքների նորմերին համապատասխան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ միջազգային պայմանագրերի նորմերի գերակայության սկզբունքը, կարևորում է օտարերկրյա անձանց մասնակցությամբ վեճերի ենթակայությունը պարզելիս համապատասխան միջազգային պայմանագրի առկայության և դրանում ենթակայության հարցերը կարգավորող դրույթների բացահայտումը: Պետությունները, մասնավորապես, մի կողմից ելնելով ինքնիշխանության սկզբունքից, մյուս կողմից միջազգային համագործակցության անհրաժեշտությամբ պայմանավորված, միջազգային պայմանագրերով կարող են նախատեսել կարգավորումներ, որոնք տարբերվում են տվյալ հարցերի շուրջ ներպետական կարգավորումներից: Ընդ որում, միջազգային պայմանագրերի նորմերի և ներպետական դատավարական նորմերի վերաբերելի կարգավորումների հակասության դեպքում պետք է կիրառվեն համապատասխան միջազգային պայմանագրի դրույթները:

գ) ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան օրենսդրությունը սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքում տեղավորելու ձևերն ու կարգը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանե-

կան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնությունն անվավեր է ճանաչում դատարանը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև ամուսնությունները և Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ընտանիքի անդամների՝ ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները կարգավորում են ընտանեկան օրենսդրությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով, իսկ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Ընդ որում, ամուսինների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա իրականացումը ՀՀ ընտանեկան օրենսգրքով վերապահված է համապատասխան պետական մարմիններին կամ խնամակալության և հոգաբարձության մարմիններին: Տվյալ դեպքում օրենսդիրը որոշակի բացառություն է նախատեսել ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջների մասով՝ սահմանելով, որ եթե ամուսիններից մեկը չի իմացել ամուսնության կեղծ լինելու մասին, ապա վերջինս իրավունք ունի իր անձնական ոչ գույքային իրավունքները պաշտպանելու նպատակով՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով, **բացառապես դիմելու դատարան:** Այսինքն՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով վեճը լուծող միակ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետությունում դատարանն է:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունը, հարկ է համարում անդրադառնալ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև Ռուսաստանի Դաշնությունում գրանցված ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանին ենթակա լինելու հարցին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե Հայաստանի Հանրապետությունը, և թե Ռուսաստանի Դաշնությունը՝ վավերացրել և մասնակցում են «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականին Մինսկում ստորագրված կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա): Հետևաբար, հաշվի առնելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանը նախ և առաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքի հիմքում բարձ-

1 Կոնվենցիան Ռուսաստանի Դաշնության համար ուժի մեջ է մտել 10.12.1994 թվականին, իսկ Հայաստանի Հանրապետության համար՝ 21.12.1994 թվականին:

բացված հարցադրման կապակցությամբ Կոնվենցիայում վերաբերելի կարգավորումների բացահայտմանը:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որը, 26-րդ հոդվածին համապատասխան, կիրառվել է ամուսնադրության ժամանակ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով մարմինների իրավասությունը որոշվում է **27-րդ հոդվածին** համապատասխան:

Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ամուսինների անձնական և գույքային իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմի մարմինները, որոնց օրենսդրությունը ենթակա է կիրառման նույն հոդվածի 1-3 և 5-րդ կետերին համապատասխան: Նույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսինների անձնական և գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե ամուսիններից մեկը բնակվում է մի Պայմանավորվող կողմի, իսկ երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում և, ընդամենը, երկու ամուսիններն էլ ունեն միևնույն քաղաքացիությունը, ապա նրանց անձնական և գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացիներն են նրանք: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ամուսինները երկու տարբեր Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ են, և նրանցից մեկը բնակվում է մի, երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ապա նրանց անձնական ու գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեցել են իրենց վերջին համատեղ բնակության վայրը: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ամուսինների՝ անշարժ գույքին վերաբերող իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է այդ գույքը:

Վճռաբեկ դատարանը Կոնվենցիայի վկայակոչված դրույթների հիման վրա նախ և առաջ արձանագրում է, որ Կոնվենցիան կարգավորել է Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի քաղաքացիների, ինչպես նաև նրա տարածքում բնակվող անձանց միջև ամուսնաընտանեկան հարաբերություններից բխող վեճերի նկատմամբ համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրության կիրառելիության և տվյալ վեճը լուծող մարմինների իրավասության հարցերը: Այսպես, ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով իրավասու մարմինը որոշվում է՝ հաշվի առնելով կիրառման ենթակա օրենսդրությունը, մասնավորապես այն, թե որ Պայմանավորվող կողմի օրենսդրությունն է ենթակա կիրառման՝ հիմք ընդունելով Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոնները: Հետևաբար նմանատիպ վեճերով նախ և առաջ պետք է պարզել կիրառելի օրենսդրության հարցը, ըստ այդմ նաև՝ վեճը լուծող իրավասու մարմինը, որպիսին Հայաստանի Հանրապետությունում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հանդիսանում է դատարանը: Ընդ որում, եթե հայցադիմումի ընդունելիության փուլում ներկայացված փաստական տվյալների հիման վրա հնարավոր չէ բացահայտել Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոններից որևէ մեկի առկայությունը, այդուհանդերձ, հայցադիմումի ընդունումը միայն այդ հիմքով մերժվել չի կարող, քանի որ կիրառվելիք սահմանափակումն այդ դեպքում համաչափ չի լինի հետապնդվող նպատակի հետ և անհարկի կսահմանափակի անձի դատարանի մատչելության իրավունքը: Նման իրավիճակում, ելնելով անձի դատարան-

նի մատչելության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից, կիրառման ենթակա են ներպետական վերաբերելի դատավարական նորմերը: Նշվածը, սակայն, չի սահմանափակում ներպետական դատավարական կանոններին համապատասխան հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում դարձյալ Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերի կանոններից որևէ մեկի առկայությունը ստուգելու և արդեն իսկ հարուցված գործի պայմաններում համապատասխան դատավարական հետևանքը կիրառելու իրավական հնարավորությունը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գեղանուշ Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ընդդեմ իր ամուսնու՝ Մարտին Մկրտչյանի՝ իրենց միջև կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու, և դրա հիման վրա ՌԴ Մոսկվայի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի Կոնցենսկի բաժնում 14.05.2003 թվականին կատարված թիվ 346 գրանցումը չեղյալ ճանաչելու պահանջների մասին:

Դատարանը 12.10.2017 թվականին որոշում է կայացրել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ «Գեղանուշ Հարությունյանի և Մարտին Մկրտչյանի միջև ամուսնությունը 14.05.2003 թվականին գրանցվել է Մոսկվայի Կոնցենսկի ՔԿԱԳ տարածքային բաժնում թիվ 346 ակտով, հետևաբար ամուսնության անվավերությունը որոշվում է ՌԴ օրենսդրությամբ, քանի որ այն կնքվել է ՀՀ տարածքից դուրս և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 144-րդ հոդվածի իմաստով գործը չի կարող քննվել ՀՀ տարածքում՝ ՀՀ դատարանում՝ գործը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով»:

Վերաքննիչ դատարանը, Գեղանուշ Հարությունյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժելով, Դատարանի 12.10.2017 թվականի որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ «գործող օրենսդրական կարգավորման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների անվավերությունը որոշվում է այն օրենսդրությամբ, որը կիրառվել է ամուսնությունը կնքելիս, մինչդեռ տվյալ դեպքում հայցվորը ներկայացված հայցադիմումով խնդրել է անվավեր ճանաչել իր և Մարտին Մկրտչյանի միջև Մոսկվա քաղաքի ՔԿԱԳ մարմնի Կոնցենսկի բաժնում 346-րդ համարի ներքո 14.05.2003 թվականին գրանցված ամուսնությունը, հետևաբար Դատարանն իրավացիորեն գտել է, որ Գեղանուշ Հարությունյանի և Մարտին Մկրտչյանի միջև ՌԴ տարածքում գրանցված ամուսնության վավերության հարցը պետք է որոշվի ՌԴ դատարանների կողմից՝ ՌԴ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ «գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ կողմերի միջև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում ստացել է հյուպատոսական օրինականացում»:

Միաժամանակ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին և հիմնավորումներին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածով օրենսդիրը, սահմանելով ՀՀ դատարանների իրավասությունն օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերի քննությունը, սահմանել է ՀՀ դատարանների քննությանը վերապահված՝ օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործերի սպառիչ շարք, որում ներառված չէ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս

կնքված ամուսնությունների անվավերության հետ կապված վեճերի քննությունը:

Մինչդեռ վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով հայցվոր Գեղանուշ Հարությունյանը հայցադիմումին կից նաև ներկայացրել է ՌԴ Մոսկվայի Կոնցուսկի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի կողմից 14.05.2003 թվականին տրված ամուսնության վկայականի պատշաճ վավերացրած թարգմանության պատճենը, որի համաձայն՝ վերջինիս և Մարտին Մկրտչյանի միջև 14.05.2003 թվականին Ռուսաստանի Դաշնությունում կնքվել է ամուսնություն: Միաժամանակ նշված վկայականում Գեղանուշ Հենրիկի Հարությունյանի «քաղաքացիություն» տողի դիմաց կատարված է «Ռուսաստանի քաղաքացի» գրառումը, իսկ Մարտին Մկրտչյանի «քաղաքացիություն» տողի դիմաց կատարված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացի» գրառումը (**գ.թ. 3-5, 17-18**):

Հայցվորի կողմից հայցադիմումին կից նաև ներկայացվել է Արմավիրի թիվ 23 թաղային լիազորի կողմից 03.07.2017 թվականին տրված տեղեկանքի պատճենը, որի համաձայն՝ Մարտին Մայիսի Մկրտչյանը հաշվառված բնակվում է Արմավիրի Աբովյան 2-րդ նրբանցքի թիվ 1^ա տանը, ընտանիքը բաղկացած է 6 անձից: Տեղեկանքում նաև նշվել է, որ Մարտին Մկրտչյանն իր ընտանիքի բոլոր անդամների հետ նշված հասցեում բնակվում է 2008 թվականից (**գ.թ. 7**):

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ սույն գործով վեճի ենթակայության հարցը լուծելիս նախ և առաջ պետք է հիմք ընդունվեն Կոնվենցիայի համապատասխան կարգավորումները: Այդ կարգավորումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սակայն, արձանագրում է, որ հայցադիմումում և դրան կից ներկայացված փաստաթղթերում առկա փաստական տվյալները հնարավորություն չեն տալիս պարզել Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-3 և 5-րդ կետերով սահմանված պայմաններից որևէ մեկի առկայությունը: Մասնավորապես, հայցադիմումում շարադրված փաստական հանգամանքները որոշակիորեն համընկնում են Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստական տվյալների հետ, սակայն պարզ չէ՝ կողմերի վերջին համատեղ բնակության վայրը, հետևաբար Կոնվենցիայի կարգավորումների համատեքստում հնարավոր չէ պարզել սույն վեճի ենթակայության հարցը: Նման պայմաններում սույն գործով ենթակա են կիրառման ներպետական դատավարական նորմերը, մասնավորապես՝ Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորումը:

Տվյալ դեպքում Գեղանուշ Հարությունյանը, հիմք ընդունելով Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին կետը, սույն գործով ընտանեկան իրավահարաբերություններից բխող և բացառապես դատարանում քննության ենթակա հայցապահանջը, տվյալ քաղաքացիական գործի ենթակայությանը համապատասխան իրավաչափորեն ներկայացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու դատարան:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում պահպանված է Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջը, այն է՝ առկա է օտարերկրյա անձի մասնակցությամբ քաղաքացիական գործ, և տվյալ գործով պատասխանողը Հայաստանի Հանրապետությունում ունի բնակության վայր, որպիսի պայմաններում սույն վեճը տվյալ դեպքում ենթակա է քննության ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածի 2-րդ կետով սպառիչ սահմանվել են օտարերկրյա անձանց մասնակցությամբ այն գործերը, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը, որոնց մեջ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին պահանջն ընդգրկված չէ, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հետևությունը նույնպես հիմնավոր չէ, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվել է, նույն օրենսգրքի նույն հոդվածի 1-ին կետով սահմանել է ընդհանուր կանոն օտարերկրյա անձանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննության վերաբերյալ, իսկ նույն օրենսգրքի նույն հոդվածի 2-րդ կետով, ի լրումն ընդհանուր կանոնի, սահմանվել է նաև այլ պահանջներով գործերի քննության հնարավորությունը, որոնք իրենց հերթին չեն բացառում ընդհանուր կանոնի կիրառությունը, եթե այդ կանոնի դրույթները համապատասխան հայցապահանջով պահպանված են:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ տվյալ դեպքում հայցվորը վիճարկում է Մոսկվա քաղաքում գրանցված ամուսնությունը, ուստի գործող օրենսդրության պայմաններում ՌԴ տարածքում գրանցված ամուսնության վավերության հարցը պետք է որոշվի ՌԴ դատարանների կողմից՝ ՌԴ օրենսդրությամբ սահմանված կարգով, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն նույնպես անհիմն է, քանի որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 144-րդ հոդվածով օրենսդիրն ընդամենը կարգավորել է ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջներով դատարանների կողմից ամուսնալուծական հարաբերությունները կարգավորող համապատասխան երկրի օրենսդրության կիրառման հարցը՝ կախված այն հանգամանքից, թե որ երկրում է գրանցվել ամուսնությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «գործի նյութերում առկա չէ ապացույց կողմերի միջև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում հյուպատոսական օրինականացում ստանալու վերաբերյալ», ապա նշված պատճառաբանությունը չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում կայացնելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում պատրաստվել կամ վավերացվել են մարմնի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից՝ իրենց իրավասությունների շրջանակներում ու սահմանված ձևով, և ամրագրված են զինանշանային կնիքով, մյուս Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որևէ հատուկ հավաստագրի:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, Պայմանավորվող մյուս կողմերի տարածքներում օգտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործում առկա ամուսնության վկայականը ենթակա է ընդունման առանց որևէ հատուկ հաստատման՝ հյուպատոսական օրինականացման, քանի որ գործում առկա ամուսնության վկայականը, համաձայն կատարված թարգմանության (գ.թ. 17), տրվել է իրավասու հիմնարկի (դրա համար լիազորված անձի), այն է՝ ՌԴ Մոսկվայի քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության Կոնցեսկի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի կողմից՝ իր իրավասության շրջանակներում և սահմանված ձևով՝ ամրագրված զինանշանի պատկերով կնիքով, որի պայ-

մաններում այն օժտված է պաշտոնական փաստաթղթի ապացուցողական ուժով:

Վերը նշվածը հաշվի առնելով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաբեկ բողոքի հիմքը՝ կապված Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ և 144-րդ հոդվածները, Նախկին օրենսգրքի 244-րդ հոդվածը խախտելու հետ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2017 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 12.10.2017 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ1/0261/04/16**
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ1/0261/04/16
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱՎՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Մանչո Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Վահրամ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2017 թվականի որոշման դեմ՝ Ընկերության սնանկության գործով «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ Բանկ ՓԲ ԷԼ ՄԻ» ընկերության պահանջի հաստատման մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու միջնորդության վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ «Էյչ-Էս-Բի-ՄԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) պահանջել է Ընկերությունը սնանկ ճանաչել:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) 14.03.2017 թվականի վճռով դիմումը բավարարվել է, և Ընկերությունը սնանկ է ճանաչվել:

Սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Վարազդատ Ասատրյանը:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) «Թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործի վարույթը Բանկի և «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ Բանկ ՓԲ ԷԼ ՄԻ» ընկերության պահանջների մասով կասեցնելու միջնորդությունը քննության առնելու մասին» 09.06.2017 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցիչ Գնել Մուղնեցյանի

միջնորդությունը՝ սնանկության գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, բավարարվել է մասնակիորեն. որոշվել է թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործի վարույթը՝ Բանկի պահանջի մասով, կասեցնել մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտի կայացումը: Մասնկության գործի վարույթը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով կասեցնելու վերաբերյալ, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2017 թվականի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.06.2017 թվականի որոշումը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով սնանկության գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ, թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22³-րդ հոդվածի 1-ին կետը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը պարունակում է այլ իրավակարգավորումներ, քան սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ուստի տվյալ դեպքում կիրառելի էին «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները: Մասնավորապես՝ սնանկության վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված է բողոքարկման երկու ռեժիմ՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերի և սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումների, ընդ որում՝ օրենսդրի կողմից երկու դեպքում էլ սահմանվել է դատական ակտերի բողոքարկման տասնհինգօրյա ժամկետ:

Վերաքննիչ դատարանը, սխալ եզրահանգման գալով, անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից բողոքարկված դատական ակտը Դատարանն իր 09.06.2017 թվականի որոշմամբ նույնպես համարել է բողոքարկման ենթակա դատական ակտ՝ դրա մասին նշելով ակտի եզրափակիչ մասում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերի բողոքարկման կանոնները, կիրառել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221³-րդ հոդվածի 1-ին կետը, ինչի արդյունքում գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված չէ վերոնշյալ դատական ակտի բողոքարկման որևէ ռեժիմ և հետևաբար տվյալ դատական ակտը բողոքարկման ենթակա չլինելու հիմքով՝ մերժել է վերաքննիչ բողոքը:

Վերը նշվածի արդյունքում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, ինչի արդյունքում խախտվել է վերաքննիչ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ

ամրագրված արդար դատաքննության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 12.12.2017 թվականի որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի վերաբերյալ կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

2) Վերաքննիչ դատարանի կողմից իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221³-րդ հոդվածի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում՝ անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք բողոքարկման ենթակա է սնանկության գործի քննության ընթացքում առանձին պարտավորիչ (պարտավերերի) մասով կայացված սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշումը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ այլ օրենքներում **(քացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների)** պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Իրավահարաբերության ծագման պահին գործող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ սնանկության գործի քննության ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դա-

տավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մնանկության մասին» ՀՀ օրենքով:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով: Վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանի վճռի բողոքարկումը չի կասեցնում սնանկության վերաբերյալ գործի վարույթը, ինչպես նաև դատարանի նշանակված ժամանակավոր կառավարչի կամ կառավարչի գործողությունները:

«Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, վերաքննության կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221³-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով միայն նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան գործին մասնակցող անձանց կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Օրենսդիրը, հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը (սնանկության վարույթը բաղկացած է որոշակի փուլերից և ընթանում է յուրաքանչյուր փուլին համապատասխան օրենքով սահմանված ընթացակարգով), այդ վարույթի արդյունավետությունն ապահովելու նկատառումով «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-րդ հոդվածով կարգավորել է կասեցման ընթացակարգի կիրառման հնարավորությունը: Օրենսդիրը վարույթի կասեցման կարգ նախատեսել է առանձին պարտատերերի պահանջների մասով և այն պայմանով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կասեցման հիմքը (հիմքերը) կիրառելի լինի այդ իրավահարաբերության նկատմամբ: Ընդ որում, առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը, ինչը նշանակում է, որ օրենքով սահմանված կարգով առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման դեպքում սնանկության վարույթի մյուս փուլերը պետք է ընթանան օրենքով նախատեսված ընթացա-

կարգով: Այսպիսով օրենսդիրը սնանկության վարույթում կասեցման հնարավորություն նախատեսել է միայն առանձին պարտատերերի պահանջների մասով (*լրես, ըստ «Հինգերորդ աստիճանի» ՄՊԸ-ի դիմումի՝ թիվ ԱՐԱԴ/0043/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Զարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումն ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի ապահովելու «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով կանոնակարգված՝ պարտատերերի պահանջների դատական կարգով հաստատման գործընթացը, այդ թվում՝ պարտատիրոջ (պարտատերերի) պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս բավարար երաշխիքներ ստեղծել պարտապանի, պարտատիրոջ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Ընդ որում, օրենսդիրն առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցումը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմքերի հետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քաղաքացիական գործի վարույթի կասեցման հիմքերն օբյեկտիվորեն պետք է խոչընդոտեն ներկայացված պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը քննության առնելու և տվյալ պահանջով պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու գործընթացին: Այլ կերպ ասած՝ առանձին պահանջի (պահանջների) մասով սնանկության գործի վարույթը ենթակա է կասեցման, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված և ի հայտ եկած քաղաքացիական գործի կասեցման հիմքերն այնպիսին են, որ հնարավորություն չեն տալիս սնանկության գործընթացի այդ փուլում կայացնել օրենքով սահմանված, այն է՝ պարտատերերի կամ առանձին պարտատիրոջ պահանջի (պահանջների) մասով վերջնական ցուցակը հաստատելու մասին համապատասխան որոշում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթի կասեցման համար պետք է ներկայացվի պատճառաբանված միջնորդություն, որը դատարանի կողմից քննարկվելու արդյունքում ենթակա է բավարարման կամ մերժման: Ըստ այդմ էլ՝ դատարանը վերը նշված հարցով կայացնում է կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու, կամ առանձին պարտատերերի պահանջների մասով սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասին որոշում:

Անդրադառնալով այդ որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկելիության հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Մսանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը» **վերտառությամբ** 20-րդ հոդվածը սահմանում է սնանկության գործի քննության ընթացքում կայացվող դատական ակտերի բողոքարկումը: Ընդ որում, վերը նշված հոդվածով օրենսդիրը հնարավորություն է տվել բողոքարկելու սնանկության գործի քննության ընթացքում կայացվող ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը: Մասնավորապես՝ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում, որպես ընդհանուր կանոն, ամրագրվել է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները նույնպես ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատա-

քանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով վերը նշված օրենսդրական կարգավորումները, գտնում է, որ սնանկության գործի ընթացքում կայացվող պահանջի կասեցումը մերժելու մասին որոշումը նույնպես ենթակա է բողոքարկման՝ ի տարբերության իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված քաղաքացիական գործի վարույթը կասեցնելը մերժելու վերաբերյալ որոշման:

Սույն գործով դիմելով դատարան՝ Բանկը, որպես պարտատեր, խնդրել է Ընկերության նկատմամբ իր պահանջները հաստատել և գրանցել հետևյալ հերթականությամբ՝ 8.433.638,72 ԱՄՆ դոլարը և 31.792.603 ՀՀ դրամը՝ որպես ապահովված պահանջ, 500.000 ՀՀ դրամը՝ որպես դատական ծախս և 471.578,95 ԱՄՆ դոլարը՝ որպես չապահովված պահանջ: «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ» բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերությունը, որպես պարտատեր, խնդրել է Ընկերության նկատմամբ 14.411.998,08 ԱՄՆ դոլարի իր պահանջը հաստատել և գրանցել որպես ապահովված պահանջ:

Ընկերության ներկայացուցիչը միջնորդել է վերը ներկայացված պահանջների մասով կասեցնել սույն սնանկության գործի վարույթը մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17, թիվ ԵԿԴ/1963/02/17 և թիվ ԵԿԴ/1982/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտ կայացնելը:

Դատարանը, մասնակիորեն բավարարելով Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը, կասեցրել է թիվ ԿԴԻ/0261/04/16 սնանկության գործի վարույթը Բանկի պահանջների մասով՝ մինչև թիվ ԵԿԴ/1950/02/17 և թիվ ԵԿԴ/1963/02/17 քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտ կայացնելը: Անդրադառնալով «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ» բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով թիվ ԿԴԻ/0261/04/16 սնանկության գործի վարույթի կասեցմանը՝ Դատարանն այն մերժել է՝ նշելով, որ թիվ ԵԿԴ/1982/02/17 քաղաքացիական գործով Ընկերությունը վիճարկում է իր և «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ» բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության միջև կնքված ժամկետային վարկային գծի պայմանագրի վավերականությունը: Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող պայմանագրի «Ընդդատություն» վերտառությամբ 32.1-րդ կետի հիմքով կողմերի միջև նույն պայմանագրի հետ կապված վեճերն (...) ընդդատյա են Անգլիայի դատարանին, բացառությամբ 31-րդ հոդվածից կամ դրա հետ կամ գործարքի ապահովության փաստաթղթերի կնքման և գրանցմանը վերաբերող հարցերից, որոնք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (...): Մինչդեռ պարտապան Ընկերության կողմից չի ներկայացվել Անգլիայի իրավասու դատարանի համապատասխան դատական ակտ, որով կպարզվեր վերոնշյալ պայմանագրի վիճարկման վերաբերյալ վեճի առկայությունը, որպիսի պայմաններում «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ» բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով սնանկության գործի վարույթը կասեցնելու միջնորդությունը ենթակա է մերժման:

Վերաքննիչ դատարանը, «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ» բանկ ՓԻ ԷԼ ՍԻ» ընկերության պահանջի մասով սնանկության գործի վարույթը կասեցնելը մերժելու մասով դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, պատճառաբանել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ գործն ըստ էության չլուծող այդ որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն (նշված օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսված է միայն գործի վարույթը կասեցնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն), իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքն էլ գործի վարույթը կասեցնելուն առնչվող հարցերի վերաբերյալ այլ կանոններ չի սահմանում՝ հղում կատարելով ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներին: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «բողոքարկված որոշման իրավաչափությունը Վերաքննիչ դատարանի կողմից գնահատվել չի կարող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով Վերաքննիչ դատարանին համապատասխան լիազորություն վերապահված չլինելու պատճառով, ուստի այդ որոշումը վերացնելու բողոք բերած անձի պահանջը բավարարելու իրավական հնարավորությունը ևս բացակայում է»:

Վերը շարադրված վերլուծությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Դատարանը, 09.06.2017 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը՝ սնանկության գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ, բավարարելով մասնակիորեն, սնանկության գործի վարույթը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ բանկ ՓԲ ԷԼ ՄԻ» ընկերության պահանջի մասով կասեցնելու վերաբերյալ, մերժել է: Միաժամանակ Դատարանը 09.06.2017 թվականի որոշման եզրափակիչ մասում նշել է, որ «որոշումը կարող է բողոքարկվել կայացման պահից 15-օրյա ժամկետում՝ վերադատության կարգով» (*հավելվածի հարորդ 1-ին, գ.թ. 17*):

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ սույն գործով պարտատեր «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՄԻ բանկ ՓԲ ԷԼ ՄԻ» ընկերության պահանջի հաստատման մասով սնանկության գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ որոշումը նույնպես ենթակա է բողոքարկման: Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, անտեսելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ սնանկության վարույթի ընթացքում կայացված դատական ակտերի բողոքարկման կանոնները, կիրառել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221³-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ արձանագրելով, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված չէ Դատարանի 09.06.2017 թվականի որոշումը բողոքարկելու հնարավորություն, ինչի արդյունքում էլ մերժելով վերաքննիչ բողոքը՝ չի անդրադարձել բողոքարկվող դատական ակտի իրավաչափությանը:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները քննության առարկա չի դարձրել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության՝ վերաքննիչ բողոքի հիմքերին ու հիմնավորումներին անդրադառնալու և դրանք քննության առարկա դարձնելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի ներկայացման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածներով սահմանված՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ, 405-րդ և 406-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.12.2017 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0072/04/17
2018թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0072/04/17
Նախագահող դատավոր՝ Գ. Խանդանյան
Դատավորներ՝ Հ. Ենոքյան
Լ. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հոկտեմբերի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի ներկայա-
ցուցիչ Մամիկոն Մանուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարա-
նի 19.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ
Գարիկ Իսրայելյանի դիմումի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գարիկ Իսրայելյանը պահանջել է իրեն ճանաչել սնանկ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի
16.03.2017 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դա-
տավոր՝ Ա. Զիչոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.07.2017 թվականի որոշմամբ հաստատվել է
Գարիկ Իսրայելյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
19.02.2018 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձինք Անահիտ Քարիմյանի
և Աշոտ Տոնոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 20-րդ, 46-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության 17.06.1998 թվականի օրենսգրքի (այսուհետև՝ Նախկին օրենսգիրք) 205-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքում առկա է գործին մասնակից չդարձված անձանց կողմից սնանկության գործով կայացվող գործն ըստ էության չլուծող դատական ակտերը բողոքարկելու իրավունքի և դրա իրացման պայմանների վերաբերյալ որևէ դրույթ, հետևաբար սնանկության վարույթը կանոնակարգող օրենքում համապատասխան կարգավորման բացակայության դեպքում կիրառման են ենթակա նույն հարցի վերաբերյալ Նախկին օրենսգրքում առկա կարգավորումները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գրավով ապահովված պահանջ ներկայացվելու դեպքում այդ պահանջի քննությանը որպես երրորդ անձ պետք է մասնակից դարձվեն գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք, քանի որ սնանկության գործերով գրավով ապահովված պահանջ գրանցելու դեպքերում նման դատական ակտերը շոշափում են գրավի առարկայի սեփականատիրոջ իրավունքները: Հակառակ դեպքում խախտվում են գույքի սեփականատիրոջ սեփականության և դատական պաշտպանության իրավունքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ թեև Նախկին օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը գործին մասնակից չդարձված անձանց իրավունք է վերապահում վերաքննության կարգով բողոքարկել գործն ըստ էության լուծող դատական ակտերը և որևէ դրույթ չի պարունակում անձանց նույն շրջանակի կողմից գործն ըստ էության չլուծող միջանկյալ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ, սակայն տվյալ նորմն անհրաժեշտ է մեկնաբանել ավելի լայն կերպով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը սնանկության գործով կայացվող դատական ակտերը չի տարանջատում գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 19.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարզապես անհիմնությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի

րանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշման դեմ գործին մասնակից չդարձված անձանց կողմից վերաքննիչ բողոք բերելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության ընթացքում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք գործին մասնակից չդարձված անձինք, ովքեր ապահովված պարտավորություն չեն կատարում (այդ թվում՝ գրավի առարկա հանդիսացող) սեփականարեր են (այդ թվում՝ գրավարու), կարող են բողոքարկել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ առանձին պահանջների մասով: Որոշումը մասնակիորեն բողոքարկվելու դեպքում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը չբողոքարկված պահանջների մասով մտնում է ուժի մեջ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համեմատ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ կանոններ սահմանված լինելու դեպքում սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

Տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն: Նույն օրենքով սահմանված չէ այդ որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Վերը նշված իրավական կարգավորումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ բան սահմանված չլինելու հիմնավորմամբ սնանկության գործի վարումը՝ տվյալ դեպքում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը պարզելու հարցը, ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Վերաքննիչ բողոք ներկայացնելու պահին գործող Նախկին օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վե-

րաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք, դատախազը՝ օրենքով նախատեսված դեպքերում, գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է **գործն ըստ էության լուծող** դատական ակտ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է **գործն ըստ էության լուծող դատական ակտ**, վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ գործին մասնակից չդարձված անձինք գործին մասնակցող անձանց իրավունքներից, տվյալ դեպքում՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունքից օգտվում են այն դեպքում, երբ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 11.01.2011 թվականի թիվ ՄԴՈ-932 որոշմամբ կարևորելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, թե որ իրավական ակտով կամ ակտերով սահմանված կանոններն են ենթակա կիրառման սնանկության գործերով դատավարական կարգի նկատմամբ, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ հաշվի առնելով սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող առանձին վարույթների բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ օրենսդիրը նշված վարույթներից առանձնացրել է երկուսը, և միայն այդ վարույթներով կայացված դատական ակտերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր: Խոսքը վերաբերում է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ, և սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին: Օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով **սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի** բողոքարկելիությանը, նշել է, որ օրենսդիրը, ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական

ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն: Այդ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու, դիմումը վերադարձնելու, պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու, պահանջների վերջնական ցուցակը հաստատելու, պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինակաւորությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու, սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու, պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին որոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից իրավաչափ մոտեցում է ցուցաբերվել՝ կապված սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը բողոքարկելի համարելու հետ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հիմք ընդունելով նշված իրավական կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին Դատարանի որոշումը նախկին իրավական կարգավորման շրջանակներում դիտում է ոչ թե որպես գործն ըստ էության լուծող, այլ **միջանկյալ դատական ակտ**, որը Նախկին օրենսգրքի համաձայն՝ կարող էր բողոքարկվել միայն գործին մասնակցող անձանց կողմից:

Անդրադառնալով պահանջների հաստատման գործընթացին գրավատուի մասնակցության հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովված են համարվում ապահովված իրավունքով ծանրաբեռնված պահանջները: Ապահովված պարտատերեր են համարվում ապահովված իրավունք ունեցող անձինք՝ այդ պահանջների մասով: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքով, ապա այդ անձն **իրավունք ունի դադարեցնելու** իր գույքով պահանջի ապահովումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը.

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ երրորդ անձ գրավատուի, երաշխավորի կամ երաշխիք տվող անձի՝ պարտապանի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջ ձեռք բերելու դեպքում այդ **պահանջը ենթակա է բավարարման**՝ որպես նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» ենթակետով նախատեսված պահանջ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատե-

րերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների նախնական ցուցակում՝ նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ ետօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և **հրապարակում է** իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, **կառավարիչը, պարտապանը և պարտատերերը** նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը ետօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ): Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատավորը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, հրավիրում է դատական նիստ, որի տեղի և ժամանակի մասին կառավարիչին, պարտապանին և պարտատերերին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլով՝ նիստից առնվազն երեք օր առաջ տրվող հայտարարությամբ կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առարկությունների քննարկման արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է սնանկության գործով ներկայացվող պահանջների հաստատման որոշակի ընթացակարգ: Օրենսդիրը նաև նախատեսել է որոշակի երաշխիքներ երրորդ անձի համար, ում պատկանող գույքով ապահովված է պարտատիրոջ պահանջը: Մասնավորապես նախատեսվել է իր գույքով պահանջի ապահովումը դադարեցնելու հնարավորություն՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ վճարում կատարելով: Կարևոր երաշխիք է նաև այն, որ երրորդ անձին պատկանող գույքի հաշվին պարտատիրոջ պահանջը բավարարվելու դեպքում երրորդ անձն ընդգրկվում է պարտատերերի կազմում:

Անդրադառնալով պահանջների հաստատման փուլում երրորդ անձի՝ տվյալ դեպքում գրավատուի մասնակցությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ենթակա են կիրառման ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից արտահայտված հետևյալ դիրքորոշումները:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: (...)

Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության թույլատրելի սահմանների վերաբերյալ կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- 1) միջամտությունը նախատեսված է օրենքով,
- 2) միջամտությունը բխում է հանրային շահից,
- 3) միջամտությունը բավարարում է համաչափության պահանջներին:

Այսպես, ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին և կարևորագույն պահանջն այն է, որ գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ հանրային իշխանության միջամտությունը պետք է հիմնված լինի օրենքի վրա. այս պահանջը բխում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկի՝ իրավունքի գերակայության էությունից (*Կոն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 79-րդ կետ*): Հետևաբար առաջին պայմանը ենթադրում է ոչ միայն ներպետական օրենսդրության շրջանակներում սեփականության իրավունքի տվյալ սահմանափակումը նախատեսող օրենքի առկայությունը, այլ նաև այդ օրենքի համապատասխանությունն իրավունքի գերակայության սկզբունքից բխող որոշակի որակական հատկանիշների (*Կոն, James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 67-րդ կետ*):

Սեփականության իրավունքի իրականացման միջամտության իրավաչափության երկրորդ պայմանի համաձայն՝ այդ միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից, որի գնահատման հարցում հանրային իշխանության մարմիններն օժտված են որոշակի հայեցողությամբ (*Կոն, James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, 46-րդ կետ*):

Սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության իրավաչափության երրորդ պայմանը նախատեսում է, որ միջամտությունը պետք է ապահովի արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (*Կոն, Sporrong and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 23.09.1982 թվականի վճիռը, 69-րդ կետ*): Մասնավորապես, գույքից անարգել օգտվելու իրավունքի ցանկացած միջամտության դեպքում կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև պետք է գոյություն ունենա համաչափության որոշակի ողջամիտ հարաբերակցություն (*Կոն, Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1995 թվականի վճիռը, 32-րդ կետ*): Եվրոպական դատարանի գնահատմամբ նման բարենպաստ հավասարակշռության հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ սեփականության իրավունքի միջամտության պատճառով սեփականատերն ստիպված է կրել անհամաչափ, ավելորդ և

չափազանց մեծ ծանրություն (*սրեն, The Former King of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, 89-րդ կետը*):

Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ թեև «Մսանկության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի պարտավորեցնում սնանկության գործով կառավարչին՝ ապահովված պահանջների դեպքում ծանուցելու նաև երրորդ անձանց, ում գույքով է ապահովված համապատասխան պահանջը, իսկ «Մսանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է միայն **կառավարչի, պարտապանի և պարտատերերի** կողմից պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություն ներկայացնելու հնարավորություն, այդուհանդերձ անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ երրորդ անձը (մասնավորապես գրավատուն) պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկացված լինելու ներկայացված պահանջի մասին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առարկություն՝ նկատի ունենալով, որ ապահովված պահանջի հաստատումն ուղղակիորեն առնչվում է երրորդ անձի սեփականության իրավունքին և այդ իրավունքի դատական պաշտպանությանը:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը համապատասխանում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 19.07.2016 թվականի թիվ ՍԴՈ-1294 որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը: Նշված որոշմամբ քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի (Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը) սահմանադրականությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես կարևորել է, որ օրենսդրի կողմից գրավատուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը **նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը**: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն տրամաբանությունն է գործում նաև մասնավորապես գրավով ապահովված պահանջը հաստատելու գործընթացում: Գրավատուն պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկանալու սնանկության վարույթում իր գույքով ապահովված պահանջ ներկայացված լինելու վերաբերյալ:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև մամուլի միջոցով երրորդ անձի ծանուցման՝ իրապես ծանուցված լինելու հնարավորությանը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի 27.01.2015 թվականի թիվ ՍԴՈ-1189 որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ.

«բոլոր այն պարտավորությունները, ովքեր օբյեկտիվ պարտավորություններով չեն ծանոթացել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հրապարակված հայտարարությանը, հետագայում դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության հնարավորություն պետք է ունենան: Հակառակ պարագայում ոչ միայն ուրնահարվում է [2005 թվականի փոփոխություններով] ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված նրանց իրավունքները, այլև խախտվում են համամասնականության և համաչափության սահմանադրական սկզբունքները՝ [«Մսանկության մասին» ՀՀ] օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված բացառությունների առումով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ շահագրգիռ սուբյեկտների կողմից սնանկության գործընթացի մասին պարզաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* / պայման, առանց որի հնարավոր չէ/ կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյու-

նավեր պաշտպանությունը: Ուստի ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սնանկության գործընթացում գրավող սոբյեկտի (պարտապանի) բոլոր պարտավորների հայտնաբերմանը և վերջիններիս՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի **արդյունավետ ծանուցման և պարտավորությունների գրանցման ընթացակարգ**, որը գործնականում կրացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները: Խնդիրն այն է, որ պարտավորելը պարզաճ ծանուցում պետք է սրանս սնանկության վարույթի բացման և պահանջներ ներկայացնելու անհրաժեշտության մասին: Իսկ պարտապանը պետք է օրենքով սահմանված կարգով հստակ ու ամբողջական տեղեկատվություն ներկայացնի իր պարտավորությունների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված դիրքորոշումը կիրառելի է նաև պահանջների հաստատման գործընթացում գրավատուների տեղեկացվածության վերաբերյալ: Եթե օբյեկտիվորեն գրավատուն հնարավորություն չի ունեցել տեղեկացված լինելու սնանկության վարույթում ներկայացված պահանջի վերաբերյալ, ապա վերջինիս պետք է տրվի հնարավորություն ներկայացնելու իր առարկությունները ներկայացված պահանջի վերաբերյալ: Հակառակ իրավական դիրքորոշման պարագայում սահմանափակվում է ոչ միայն անձի սեփականության, այլ նաև դատական պաշտպանության իրավունքը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պարտապան Գարիկ Իսրայելյանի կամավոր սնանկության դիմումը բավարարվել է և Դատարանի 16.03.2017 թվականի վճռով վերջինս ճանաչվել է սնանկ (**գործի հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 11-17**):

Դատարանի 07.07.2017 թվականի որոշմամբ հաստատվել է Գարիկ Իսրայելյանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը, որում որպես պարտատերեր նշվել են «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն և «ՖԻՆԲԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն: «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի պահանջը ցուցակում ներառվել է որպես Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի անշարժ գույքի գրավով ապահովված պահանջ (**գործի հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 84-85**):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2017 թվականի որոշմամբ թիվ ԵԿԴ/2691/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի Անահիտ Քարիմյանի, Աշոտ Տոնոյանի ընդդեմ «Արարատբանկ» ԲԲԸ-ի, երրորդ անձ Գարիկ Իսրայելյանի՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ըստ ընդդատության հանձնվել է սույն գործը քննող դատարանին (**գործի հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 16**):

Դատարանի 20.12.2017 թվականի որոշմամբ մերժվել է Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի ներկայացուցչի միջնորդությունը՝ «Արարատբանկ» ԲԲԸ-ի պահանջի քննությունը կասեցնելու մասին այն հիմնավորմամբ, որ վիճարկվող պահանջն արդեն իսկ հաստատված է 07.07.2017 թվականի որոշմամբ (**գործի հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 19**):

Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի՝ որպես գործին մասնակից չդարձված անձանց ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք Դատարանի 07.07.2017 թվականի որոշման դեմ: Վերաքննիչ բողոք ներկայացվել է այն հիմնավորմամբ, որ Գարիկ Իսրայելյանի գույքի կազմում ներառված է նաև բողոքաբերներին պատկանող գույք, իսկ «Արարատբանկ» ԲԲԸ-ի պահանջը գրանցվել է որպես բողոքաբերներին պատկանող անշարժ

գույքի գրավով ապահովված պահանջ: Մինչդեռ բողոքաբերները չեն ներգրավվել գործի կամ առնվազն «Արարատբանկ» ԲԲԸ-ի պահանջի քննությանն այն դեպքում, երբ 07.07.2017 թվականի որոշումը շոշափում է նրանց իրավունքները, իսկ «Արարատբանկ» ԲԲԸ-ի գրավի իրավունքի ծագման հիմք հանդիսացող գործարքը վիճարկվում է դատական գործի շրջանակներում (**գործի հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 9-15**):

Վերաքննիչ դատարանը 19.02.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ Անահիտ Քարինյանը և Աշոտ Տոնոյանը Դատարանի 07.07.2017 թվականի որոշումը, որը հանդիսանում է միջանկյալ դատական ակտ, բողոքարկել են որպես գործին մասնակից չդարձված անձինք, մինչդեռ Նախկին օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձված անձինք վերաքննության կարգով կարող են բողոքարկել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, որոնք կայացվել են նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Այսինքն՝ 07.07.2017 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացրել են գործին մասնակից չդարձված անձինք, ովքեր սույն դեպքում դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունեն (**գործի հավելվածի հատոր 2-րդ, գ.թ. 30-31**):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը գործին մասնակից չդարձված և երրորդ անձ հանդիսացող գրավատուների կողմից բողոքարկելու հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալը.

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն (...) իրավական պետություն է:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու **հիմնական իրավունքների և ազատությունների** հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ **որպես անմիջականորեն գործող իրավունք**:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի

(առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 18.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-652, 16.11.2006 թվականի թիվ ՍԴՈ-665, 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրոյթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար **նորմատիվ իրավական բավարար նախադրյալների** ստեղծումն ու զարգացումը հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: ՀՀ Սահմանադրական դատարանը միաժամանակ կարևորել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և հատկապես դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ **այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը**: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրեն, Ashingdane v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպական դատարանը միաժամանակ արտահայտել է այնպիսի իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները չեն կարող համարվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանող, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ և **առկա չէ ողջամիտ հարաբերակցություն՝ օգտագործվող միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև** (*յրեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 55*):

Ընդ որում, Եվրոպական դատարանի կողմից հստակ ձևավորված նախադեպային իրավունքը պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե դրանք ստեղծվել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում նաև՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից (*յրեն, Kudla v. Poland գործով Եվրոպական դատարանի 20.10.2000 թվականի վճիռ, կետ 122*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ

Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յոեն, Մուսաննա Արարայրի Միրզոյանն *ընդդեմ Մուսաննա Միրզայանի Միրզոյանի թիվ ԱՐԱԳ/0170/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Նախկին օրենսգրքի համաձայն՝ գործին մասնակից չդարձված անձինք կարող էին բողոքարկել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը, այդուհանդերձ, նկատի ունենալով, որ 2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածով Վճռաբեկ դատարանին վերապահվել է նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու լիազորություն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավատու հանդիսացող Անահիտ Քարիմյանին և Աշոտ Տոնոյանին պահանջների վերջնական ցուցակը հաստատելու որոշումը բողոքարկելու հնարավորություն տալը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և համապատասխանաբար ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի կողմից բացահայտված անձի դատական պաշտպանության իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ բողոքարկվող դատական ակտն ուղղակիորեն շոշափում է Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի սեփականության իրավունքը:

Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ նախորդ օրենսդրական կարգավորումը փոփոխվել է 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ **կայացվել է դատական ակտ:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով թվարկվում են առաջին ատյանի դատարանի՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը: Նույն մասի 15-րդ կետի համաձայն՝ բողոքարկման ենթակա են նաև այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

Հետևաբար գործող կարգավորման պայմաններում գործին մասնակից չդարձված անձինք կարող են բողոքարկել նաև պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշումը՝ նկատի ունենալով, որ վերջինս «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված բողոքարկման ենթակա դատական ակտ է:

ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է **մարդու և**

քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (*տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը*):

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը, կարևորելով օրենքի նկատմամբ իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունը, արձանագրում է, որ անհրաժեշտ է Անահիտ Քարիմյանին և Աշոտ Տոնոյանին վերապահել Դատարանի 07.07.2017 թվականի որոշումը բողոքարկելու հնարավորություն՝ նկատի ունենալով, որ հակառակ դեպքում սահմափակվում են վերջիններիս սեփականության և դատական պաշտպանության իրավունքները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու լիազորությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության՝ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Անահիտ Քարիմյանի և Աշոտ Տոնոյանի վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցը քննարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.02.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0563/02/16
Նախագահող դատավոր՝ Ս. Թորոսյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Տ. Նազարյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0563/02/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող և զեկուցող

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
Մ. ԴՐՄԵՅԱՆ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Ն. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Վահան Տերյանի ներկայացուցիչ Սյուզաննա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Ժաննա Տերյանի ընդդեմ Վահան Տերյանի՝ ամուսնալուծության և ալիմենտի բռնագանձման պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Վահան Տերյանի ընդդեմ Ժաննա Տերյանի, երրորդ անձ Ավան վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ երեխայի բնակության վայրը սահմանելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը.

Դիմելով դատարան՝ Ժաննա Տերյանը պահանջել է իրեն ամուսնալուծել և Վահան Տերյանից բռնագանձել նրա վաստակի կամ այլ եկամտի 1/3-ը՝ որպես իր խնամքի տակ գտնվող երեխաներ՝ Հրանտ Վահանի Տերյանի և Դավիթ Վահանի Տերյանի համար օրենքով նախատեսված ալիմենտ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վահան Տերյանը պահանջել է երեխայի՝

Հրանտ Վահանի Տերյանի բնակության վայրը սահմանել Երևան քաղաքի Ավան-Առինջ թիվ 3/1-29 հասցեն:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.02.2017 թվականի որոշմամբ Վահան Տերյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.10.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Բաբայան) (այսուհետ՝ Դատարան) 12.12.2017 թվականի որոշմամբ կատարողական թերթ տրամադրելու մասին Վահան Տերյանի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.01.2018 թվականի որոշմամբ Վահան Տերյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վահան Տերյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ, 144-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, հաշվի չի առել, որ օրինական ուժի մեջ մտած վճռով սահմանվել է իր և իր երեխաների միջև տեսակցության կարգ՝ համապատասխան տեսակցության օրերով, որը կամովին չկատարելու դեպքում կարող է կատարվել հարկադիր կարգով, ուստի վճռի կատարման նպատակով կողմին պետք է տրամադրվեր կատարողական թերթ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերաբերել է իր իրավունքի իրականացմանը: Մինչդեռ ստորադաս դատարանները, կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելով և հետագայում այդ մերժման դեմ բերված վերաքննիչ բողոքը, բողոքարկման ոչ ենթակա ակտի դեմ բերված լինելու հիմքով, վերադարձնելով, վերաքննիչ բողոք բերած անձին զրկել են իրեն վերաբերող դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակել են նրա դատական պաշտպանության իրավունքը՝ խաթարելով այդ իրավունքի բուն էությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում է կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին Դատարանի որոշման բողոքարկման ենթակա չլինելու եզրահանգման իրավական հիմնավորումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 11.01.2018 թվականի որոշումը և բողոքը համարել վարույթ ընդունված»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական հնարավորության բացակայության պատճառով կարող է արդյո՞ք սահմանափակվել անձի դատական պաշտպանության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացումն ապահովելու խնդիրներին և այդ կապակցությամբ հայտնել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անհանգստացված է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության

պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

Մեկ այլ, այն է՝ 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 18.07.2013 թվականի թիվ ՍԴՈ-1037 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, (2005 թվականի փոփոխություններով) ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարչության արդար, հրապարակային և արագ բնույթագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յոեն, Kreuz v. Poland գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Սահմանելով դատարանի մատչելիության իրավունքի՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը լինելու հանգամանքը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յոեն 'u, Ashingdane v. The United Kingdom*,

թիվ 8225/78 գանգադրով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրեն, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28*):

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (*յրեն՝ ս, ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289*) կարևորելով իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, նաև արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որի կարևոր բաղադրիչներից մեկն, ի թիվս այլնի, բողոքարկման իրավունքն է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտերի բողոքարկման դատավարական ինստիտուտն իրավական այնպիսի միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը:

Բողոքարկման իրավունքի վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված հարցադրմանը՝ Վճռաբեկ

դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել միայն վերաքննության կարգով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորումներով քաղաքացիական դատավարության շրջանակներում նախատեսել էր առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող բոլոր դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, մինչդեռ միջանկյալ դատական ակտերի համար օրենսդիրը սահմանել էր անմիջական բողոքարկման հնարավորություն միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված լինելու դեպքերում, ինչն իր հերթին չէր բացառում միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկումը:

Անդրադառնալով սույն վճռաբեկ բողոքում բարձրացված՝ կատարողական թերթի տրամադրումը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա չէր որևէ կանոնակարգում կատարողական թերթի տրամադրումը մերժելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավական հնարավորության վերաբերյալ: Ըստ այդմ էլ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերը նշված հարցին անդրադառնալ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լույսի ներքո: Այսպես, կատարողական վարույթի հարուցման հիմքում ընկած է կատարողական թերթը, որը տրվում է դատական ակտը կայացրած առաջին ատյանի դատարանի կողմից: Կատարողական թերթի տրամադրումը նպատակ ունի ապահովել դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացը, ըստ այդմ էլ՝ այն ոչ միայն երաշխավորում է դատական ակտի պարտադիրության սկզբունքը, այլ նաև ապահովում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրականացումը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ Եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի պարտադիր կատարմանը, որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասի, նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վստահ կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս (*յուև, Բուրդոն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի գործով*

Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):

Ի հավելումն վերոգրյալի՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարանի) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ այն դեպքում, երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լսված լինելու իրավունք: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը:

Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում անդրադառնալով առաջին ատյանի դատարանի որոշ դատական ակտերի բողոքարկման հարցին, արձանագրել է, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (իրավահարաբերության ծագման պահին գործող) ինչպես կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին որոշման, այնպես էլ քաղաքացիական դատավարության շրջանակներում վճռի հարկադիր կատարման հարցերին առնչվող՝ առաջին ատյանի դատարանի այլ դատական ակտերի բողոքարկման վերաբերյալ հատուկ իրավակարգավորումներ նախատեսված չեն: Մինևույն ժամանակ հարկ է նաև նշել, որ (իրավահարաբերության ծագման պահին գործող) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում բացակայում է կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու որոշման բողոքարկումն արգելող նորմ»: Միաժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարել դիմողի (հայցվորի) քաղաքացիաիրավական պահանջը: Եթե կատարողական թերթը պահանջվում է գործն ըստ էության լուծող դատական ակտի բավարարված մասով, իսկ այն կազմում է այդ դատական ակտի օրգանական մասը, հետևաբար այն ենթարկվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրենքով նախատեսված բողոքարկման ընդհանուր կանոնին (*տես ՀՀ սահմանադրական դատարանի 13.12.2016 թվականի թիվ ՄԴՈ-1330 որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 21.10.2016 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով բավարարվել է Ժաննա Տերյանի հայցը, իսկ Վահան Տերյանի հակընդդեմ հայցը մերժվել է: Միաժամանակ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով վճռվել է Հրանտ Վահանի Տերյանի, ծնված՝ 06.11.2004 թվականին, և Դավիթ Վահանի Տերյանի, ծնված՝ 11.11.2008 թվականին, բնակության վայր սահմանել մոր՝ Ժաննա Տերյանի (Հարությունյան) բնակության վայրը՝ ք. Երևան, Ավան-Առինջ թաղ. 1 մկշ. 3/1շ. բն. 29, հոր՝ **Վահան Տերյանի հետ անարգել տեսակցելու և շփվելու իրավունքով, իսկ յուրաքանչյուր օրացուցային շաբաթ՝ ուրբաթ և շաբաթ օրերին գիշերակացով, հոր՝ Վահան Տերյանի բնակության վայրում (հատոր 2-րդ, գ.թ. 22-32):**

Վահան Տերյանը 09.12.2017 թվականին դատարան է ներկայացրել դիմում՝ կատարողական թերթ տրամադրելու մասին (**հատոր 2-րդ, գ.թ. 108-109**):

Դատարանը 12.12.2017 թվականի որոշմամբ մերժել է կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը՝ պատճառաբանելով, որ « (...) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2016 թվականի թիվ ԵԱՆԴ/0563/02/16 վճիռն օրինական ուժ է ստացել, որի համաձայն՝ հայցն ամբողջությամբ բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցն ամբողջությամբ մերժվել է, այսինքն՝ պատասխանողը (հակընդդեմ հայցով հայցվորը) չի հանդիսանում թիվ ԵԱՆԴ/0563/02/16 քաղաքացիական գործով պահանջատեր և հակընդդեմ հայցն ամբողջությամբ մերժվելու պայմաններում առկա չէ որևէ պարտականություն, որը ենթակա է հարկադիր կատարման»:

Վերաքննիչ դատարանը, 11.01.2018 թվականի որոշմամբ վերադարձնելով Վահան Տեյյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ « (...) բողոք բերած անձը բողոքարկում է Դատարանի՝ կատարողական թերթ տրամադրելու մասին դիմումը մերժելու որոշումը, մինչդեռ նշված որոշումը բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ նորմ օրենքով, մասնավորապես՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ բողոք կարող է բերվել առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ»: Միաժամանակ որոշմամբ արձանագրվել է, որ վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով (**հատոր 2-րդ, գ.թ. 125**):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Օրենսդիրը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորելով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտերի հետ կապված իրավահարաբերությունները, չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա բողոքարկելու կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը՝ դրանով իսկ սահմանափակելով դրա օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը: Մինչդեռ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 13.12.2016 թվականի թիվ ՍԴՈ-1330 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ վերջինիս առկայությունն անհրաժեշտություն է արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համատեքստում, որպիսի պայմաններում կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը ենթակա է վերաքննության կարգով բողոքարկման: Ընդ որում, նշված որոշումը ենթակա է բողոքարկման գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կանոններով: Վճռաբեկ դատարանի նշված հետևությունը բխում է ՀՀ սահմանադրական դատարանի 13.12.2016 թվականի թիվ ՍԴՈ-1330 որոշման մեջ արտահայտված իրավական վերլուծությունից, ըստ որի՝ կատարողական թերթը կազմում է գործն ըստ էության լուծող դատական ակտի օրգանական մասը, հետևաբար այն ենթարկվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրենքով նախատեսված բողոքարկման ընդհանուր կանոնին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին Դատարանի որոշման բողոքարկման օրենսդրական

հնարավորության բացակայության պատճառով անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումն ու այդ սահմանափակմամբ հետապնդվող նպատակը չեն կարող լինել իրավաչափ, քանի որ չեն ապահովում դատարանի մատչելիության, արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու ու արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից օգտվելու հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարողական թերթ տրամադրելու դիմումը մերժելու մասին Դատարանի որոշման բողոքարկման՝ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված սահմանափակումը հանգեցրել է Վահան Տերյանի դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակմանը՝ խաթարելով այդ իրավունքի բուն էությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այդ սահմանափակումը չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, քանի որ չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Արդյունքում Վահան Տերյանը զրկվել է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից, քանի որ գործնականում չի ապահովվել բողոքարկման ընթացակարգի միջոցով ենթադրյալ դատական սխալի բացահայտումը և ուղղումը:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, 11.01.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելով, որպես վերադարձման հիմք արձանագրել է միայն իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել նույն դատարան՝ նոր քննության, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մյուս պայմանների առկայությունը պարզելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.01.2018 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ3/0186/05/16
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ3/0186/05/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի սեպտեմբերի 12-ին

քննարկելով ըստ հայցի ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կո-
միտեի (այսուհետ՝ Կոմիտե) ընդդեմ Արկադի Բարսեղյանի՝ 14.04.2016 թվականի թիվ 33/12305
փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքներից
26 կիլոգրամի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորեցնելու պահանջի
մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.11.2016 թվականի «Վե-
րաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Կոմիտեի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դարավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է պարտավորեցնել Արկադի Բարսեղյանին
ներկայացնելու 14.04.2016 թվականի թիվ 33/12305 փոխադրման ամփոփագրով Հայաստանի
Հանրապետություն ներմուծված ապրանքներից 26 կիլոգրամի վերաբերյալ հայտարարա-
գիր:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.10.2016
թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.11.2016

թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 10-րդ հոդվածը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մաքսային իրավունքի ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա դրված պարտականությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջն ակնհայտորեն բխում է հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա է վարչական դատարանին: Փաստորեն, սույն գործի հիմքում ընկած վեճն ունի հանրային բնույթ և բացի վարչական դատարանից որևէ այլ դատարանի ենթակա լինել չի կարող: Հետևաբար Կոմիտեի հայցադիմումի ընդունումը ենթակա չէր մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 28.11.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ դատարանի պարզապես անտարբերությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու վերաբերյալ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցերի դատական ենթակայության հարցի մասին, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրմանը. ֆիզիկական անձին մաքսային հայտարարագիր ներկայացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ վարչական մարմնի կողմից ներկայացված հայցը ենթակա է արդյոք դատարանի քննությանը:

21.02.2007 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած հարցի՝ դատարանի իրավասությանը ենթակա լինելը որոշում է դատարանը՝ օրենքի հիման վրա:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանն ըստ

էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (...), Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանում (...) և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում (...) ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանը՝ որպես իրավաբանական գործեր քննող և լուծող մարմին, օժտված չէ համընդհանուր իրավագրությամբ և իր գործառնություններին ու խնդիրներին համապատասխան կարող է քննել և լուծել միայն իր իրավասությանը հանձնված գործերը: Այս հանգամանքն առաջացնում է, մի կողմից, դատարանի, իսկ մյուս կողմից, իրավաբանական գործեր քննելու և լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների (օրինակ՝ վարչական մարմիններ, առևտրային արբիտրաժ և այլն) իրավասությունը հստակորեն սահմանազատելու անհրաժեշտություն: Դատարանի և իրավաբանական գործեր քննելու ու լուծելու իրավասություն ունեցող այլ մարմինների իրավասությունը տարանջատելիս կիրառվում է «ենթակայություն» իրավաբանական եզրույթը. ենթակայությունն իրավաբանական գործերի այնպիսի հատկանիշ է, որը ցույց է տալիս տվյալ գործը քննելու և լուծելու իրավասություն ունեցող կոնկրետ մարմին (սուբյեկտին): Ըստ այդմ, այն գործերը, որոնց քննությունն ու լուծումն օրենքով հանձնված է դատարանի իրավասությանը, համարվում են դատական ենթակայության գործեր:

Փաստորեն, իրավունքի սուբյեկտները կարող են դատարան դիմել միայն այն դեպքում, երբ դատարանի առջև վերջիններիս բարձրացրած հարցը (որպես կանոն իրավունքի մասին վեճը) ենթակա է քննության և լուծման դատարանի կողմից: Այդ իսկ պատճառով օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանել է, որ դատարանը պարտավոր է մերժել հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ «*հայցը ենթակա չէ դատարանում քննության*» արտահայտության նշանակությունը հանգում է հետևյալին. վարչական դատարանում գործ չի կարող հարուցվել, եթե այդ գործի հիմքում ընկած վեճը

(հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը, հայցադիմումով դատարանի առջև բարձրացված հարցը) ենթակա չէ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին ատյանի որևէ (ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված) դատարանում քննության: Այլ կերպ ասած՝ նշված իրավադրույթով սահմանված հիմքով հայցադիմումի ընդունումը մերժվում է այն դեպքում, երբ դատարան դիմող սուբյեկտը հայց հարուցելու իրավունք առհասարակ չունի, իսկ դատարանն իրավասու չէ լուծել իր առջև բարձրացված տվյալ վեճը: Եթե գործը ենթակա չէ դատարանին, ապա դատարան դիմող անձը հայց հարուցելու իրավունք չունի, իսկ դատարանն իրավասու չէ խախտել այլ մարմինների իրավասությունը և լուծել նրանց վերապահված գործերը: Նման իրավակարգավորումը կոչված է բացառելու դատարանների իրավասությանը չհանձնված վեճերի քննությունը և լուծումը դատարանների կողմից:

Այսպիսով, անձի կողմից դատարանի առջև բարձրացված հարցի՝ դատարանի քննությանը ենթակա լինելու հանգամանքը հանդիսանում է հայց հարուցելու իրավունքի ընդհանուր դրական նախադրյալ, որի առկայության դեպքում միայն իրավունքի սուբյեկտը կարող է դիմել դատարան: Հակառակ դեպքում, այսինքն՝ գործը դատարանին ենթակա չլինելու դեպքում, այդ սուբյեկտը չի կարող հայց հարուցել դատարանում, և դատարանը պարտավոր է վարույթ չընդունել ներկայացված հայցադիմումը (*տե՛ս, Գագիկ Մաթևոսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության վարչադատավարական կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, որի 3-րդ հոդվածն ամրագրում է այն հարցերի շրջանակը, որոնցով վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան: Այդ դեպքերից մեկը սահմանված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և հանգում է հետևյալին. *վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք կարող են դիմել վարչական դատարան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին*: Նշված օրենսդրական կարգավորումը սահմանում է վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացված հայցի՝ դատական ենթակայության հատուկ կանոն, որի համաձայն՝ այդ հայցը կարող է ենթակա լինել դատարանում քննության հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցի առարկան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջն է,

2) վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց զրկելու կամ նրանց վրա վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պահանջվող պարտականությունները դնելու իրավասությունն օրենքով վերապահված է դատարանին:

Փաստորեն, վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ

նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու հայցը ենթակա է դատարանում քննության միայն այն դեպքում, երբ օրենքով դատարանն օժտված է այդ հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գրկելու կամ այդ հայցով պահանջվող պարտականությունները նրանց վրա դնելու իրավասությամբ: Հակառակ պարագայում, այսինքն՝ այն դեպքում, երբ որևէ օրենքով դատարանին հատուկ վերապահված չէ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գրկելու կամ այդ հայցով պահանջվող պարտականությունները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա դնելու իրավասություն, ապա վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից գրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու հայցը ենթակա չէ դատարանում քննության:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացվող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից գրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու հայցը դատարանում քննության ենթակա լինելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով օրենսդիրը սահմանել է պարտադիր պայման, այն է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքներից գրկելու կամ նրանց վրա պարտականություններ դնելու իրավասությունն օրենքով դատարանին վերապահված լինելը: Ուստի վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից նման հայց ներկայացնելիս պետք է առկա լինի նաև այն իրավական հիմքը, որի համաձայն՝ այդ հայցով պահանջվող իրավունքներից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գրկելու կամ այդ հայցով պահանջվող պարտականությունները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա դնելու իրավասությունն օրենքով վերապահված է դատարանին: Հակառակ պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից գրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արկադի Բարսեղյանը 14.04.2016 թվականի թիվ 33/12305 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 800 կիլոգրամ բեռ (ներմուծված բեռի քաշը փոխադրման ամփոփագրում նշված է 500 կիլոգրամ, սակայն ըստ Կոմիտեի՝ այն փաստացի կազմել է 800 կիլոգրամ), որը հանձնվել է ժամանակավոր պահպանության 2 ամիս ժամկետով: Այդ բեռից 774 կիլոգրամի համար սահմանված ժամկետում ներկայացվել է մաքսային հայտարարագիր, իսկ մնացած 26 կիլոգրամ ապրանքի համար սահմանված ժամկետում մաքսային հայտարարագիր չի ներկայացվել: Նշված փաստի առթիվ 23.06.2016 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, և Կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 13.07.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80/10 որոշմամբ Արկադի Բարսեղյանը տուգանվել է 50.000 ՀՀ դրամով՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման (սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը) կատարման համար (**հատոր 1-ին, գ.թ. 10-16**):

Այնուհետև Կոմիտեն դիմել է վարչական դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Արկադի Բարսեղյանին ներկայացնելու 14.04.2016 թվականի թիվ 33/12305 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքներից 26 կիլոգրամի վերաբերյալ մաքսային հայտարարագիր (**հատոր 1-ին, գ.թ. 4-6**):

Դատարանը 10.10.2016 թվականի որոշմամբ մերժել է Կոմիտեի հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով: Դատարանը որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Արկադի Բարսեղյանը 14.04.2016 թվականի Հայաստանի Հանրապետություն ներմուծված 26 կիլոգրամ ապրանքի համար սահմանված ժամկետում մաքսային հայտարարագիր չներկայացնելու համար ենթարկվել է վարչական տույժի և օրենքի ուժով շարունակում է կրել մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը: Մինչդեռ օրենքով վարչական դատարանին վերապահված չէ Արկադի Բարսեղյանի վրա մաքսային հայտարարագիր ներկայացնելու լրացուցիչ պարտականություն դնելու իրավագործություն, հետևաբար Կոմիտեի հայցը ենթակա չէ դատարանում քննության (**հատոր 1-ին, գ.թ. 20-21**):

Վերաքննիչ դատարանը մերժել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի 10.10.2016 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է անփոփոխ՝ ըստ էության հիմնավոր համարելով Դատարանի վերոգրյալ պատճառաբանությունը (**հատոր 2-րդ, գ.թ. 35-39**):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արկադի Բարսեղյանի կողմից խնդրո առարկա ապրանքների ներմուծման պահին Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով, որի 157-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրվում են միության մաքսային օրենսգրքի 27-րդ և 47-50-րդ գլուխներին, Միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և նույն օրենքին համապատասխան*: Արկադի Բարսեղյանի կողմից խնդրո առարկա ապրանքների ներմուծման պահին գործում էր Մաքսային միության մաքսային օրենսգիրքը, որն ընդունվել է 27.11.2009 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 02.01.2015 թվականին և ուժը կորցրել է 01.01.2018 թվականին: Ներկայումս այդ օրենսգրքին փոխարինելու է եկել 11.04.2017 թվականին ընդունված Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին: Այդ իսկ պատճառով սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ միայն իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի՝ մաքսային հայտարարագրմանն առնչվող վերաբերելի դրույթների վերլուծությանը՝ նպատակ ունենալով պարզել այն հարցը, թե ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող այդ միջազգային պայմանագրով կամ այլ իրավական ակտերով դատարանին վերապահված է արդյոք մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա դնելու իրավասություն:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաք-

սային օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հայտարարագիրը սահմանված ձևով կազմված փաստաթուղթ է, որը պարունակում է ապրանքների, ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ տվյալներ և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են ապրանքների բացթողման համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի՝ «Ապրանքների մաքսային հայտարարագրումը» վերտառությամբ 27-րդ գլխի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման՝ մաքսային ընթացակարգով ձևակերպման կամ նույն օրենսգրքին համապատասխան սահմանված այլ դեպքերում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մինչև ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալը, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար անհրաժեշտ ապրանքների մաքսային հայտարարագրման և մաքսային այլ գործառնություններ իրականացնելու ժամանակ հայտարարատուն պարտավոր է՝ (1) կատարել ապրանքների մաքսային հայտարարագրում (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարատուն, Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում նույն օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները չկատարելու (...) համար (...):

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար հայտարարատուն պարտավոր է ներկայացնել այդ ապրանքների մաքսային հայտարարագիր, որը պարունակում է ապրանքների ու ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ տվյալներ և այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են ապրանքների բացթողման համար: Ընդ որում, որպես կանոն, Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի մինչև ապրանքների ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային սահմանը հատող անձանց համար ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրման պարտականության նախատեսումն ինքնանպատակ չէ: Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը, ըստ էության, մաքսային սահմանը հատող անձի կողմից մաքսային մարմիններին որոշակի տեղեկատվություն տրամադրելու օրենսդրորեն սահմանված եղանակ է: Նման իրավակարգավորման նպատակը հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու անձի սահմանադրաիրավական պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովումն է, քանի որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները հայտարարագրելու միջոցով լուծվում է տվյալ ապրանքի կամ տրանսպորտային միջոցի ներմուծման կամ արտահանման համար գանձվող մաքսատուրքի վճարման հար-

ցը, ինչպես նաև պարզվում է գանձման ենթակա մաքսատուրքի չափը (*տե՛ս, ՀՀ կառավարության առնչությամբ պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Վահե Հարությունյանի և Վահե Հարությունյանի ընդդեմ ՀՀ կառավարության առնչությամբ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/5170/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքների մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դրվում է իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի ուժով, և դրա համար որևէ մարմնի կողմից հատուկ որոշում կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է: Այլ կերպ ասած՝ ապրանքների մաքսային ընթացակարգով ձևակերպման կամ իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան սահմանված այլ դեպքերում հայտարարատուն կրում է այդ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, որը վերջինիս վրա ինքնըստինքյան դրվում է այդ միջազգային պայմանագրի ուժով՝ առանց որևէ հանրային-իշխանական մարմնի, այդ թվում նաև՝ դատարանի կողմից հատուկ անհատական իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության: Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքը սահմանել է, որ այդ պարտականությունը չկատարելու համար հայտարարատուն կրում է Մաքսային միության անդամ երկրների ազգային օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող պատասխանատվությունը սահմանված է ՀՀ մաքսային օրենսգրքով (194-րդ և 203-րդ հոդվածներ): Մաքսային կանոնների վերոգրյալ խախտման համար ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցը հանդիսանում է վարչական տույժի տարատեսակ, իսկ նույն օրենսգրքի 38-րդ գլխի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝ նույն գլխին չհակասող մասով: Իր հերթին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: Վերոգրյալից հետևում է, որ սահմանված ժամկետում հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու համար վարչական տույժի ենթարկվելը հայտարարատուին չի ազատում իրավահարաբերության ծագման պահին գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների մաքսային հայտարարագիրը ներկայացնելու պարտականությունից:

Փաստորեն, իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքը, սահմանելով հայտարարատուի՝ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը, չի նախատեսել որևէ կարգավորում դատական կարգով այդ պարտականությունը կատարելուն անձին հարկադրելու վերաբերյալ: Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դատական կարգով դնելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում նախատեսված չէ նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով կամ այլ միջազգային պայմանագրերով: Փոխարենը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքը սահմանել է,

որ այդ պարտականությունը չկատարելու համար հայտարարատուն կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իրավահարաբերության ծագման պահին մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներում և միջազգային պայմանագրերում (մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքում) գոյություն չունի այնպիսի իրավակարգավորում, որի համաձայն՝ ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դնելու իրավասությունը վերապահված է դատարանին: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դատարանն իրավահարաբերության ծագման պահին մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներով և միջազգային պայմանագրերով (մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով) օժտված չէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն դնելու իրավասությամբ: Հետևաբար ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը հայտարարատուի վրա դնելու իրավասությունն օրենքով դատարանին վերապահված լինելու իրավական հիմք գոյություն չունի: Ասվածն էլ իր հերթին նշանակում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վրա ապրանքների մաքսային հայտարարագիր ներկայացնելու պարտականություն դնելու վերաբերյալ վարչական մարմինների կողմից ներկայացված հայցը ենթակա չէ քննության դատարանում:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ 14.04.2016 թվականի թիվ 33/12305 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքներից 26 կիլոգրամի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելուն Արկադի Բարսեղյանին պարտավորեցնելու պահանջի մասին Կոմիտեի կողմից ներկայացված հայցը ենթակա չէ քննության դատարանում, քանի որ սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ Արկադի Բարսեղյանի վրա նման պարտականություն դնելու իրավասությունն իրավահարաբերության ծագման պահին մաքսային հայտարարագրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներով և միջազգային պայմանագրերով (մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքով) վերապահված չէ դատարանին: Հետևաբար սույն գործով Կոմիտեի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը ենթակա էր մերժման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված՝ հայցը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով, ինչն էլ իրավացիորեն արձանագրվել է ստորադաս դատարանների կողմից:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ սույն գործով Դատարանը, մերժելով 14.04.2016 թվականի թիվ 33/12305 փոխադրման ամփոփագրով Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքներից 26 կիլոգրամի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելուն Արկադի Բարսեղյանին պարտավորեցնելու պահանջի մասին Կոմիտեի հայցադիմումի ընդունումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի այդ որոշումը, կայացրել են ըստ էության ճիշտ դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ

է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ստորադաս դատարանի միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.11.2016 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵՆԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/5719/05/16
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5719/05/16
2018թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ն. ՏԱՎԱՐԱՅՅԱՆԻ

2018 թվականի հունիսի 01-ին

քննարկելով ըստ հայցի «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձինք «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Դանսիս» ՍՊԸ-ի, Վաղարշակ Համբարձումյանի՝ «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի անվամբ թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման ատ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն պահանջել է ճանաչել «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի անվամբ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 48 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման ատ ոչինչ լինելը և վերացնել հետևանքները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 17.05.2017 թվականի որոշմամբ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին «Արտադրա-տպագրա-

կան» ՓԲԸ-ի միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.07.2017 թվականի որոշմամբ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 17.05.2017 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը վերացվել է. հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի միջնորդությունը բավարարվել է, և արգելվել է Կոմիտեին ու «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին կատարելու Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողություններ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ, որ հերքելու փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցի ապահովման միջոցները ենթակա են կիրառման միայն կատարում պահանջող դատական ակտերի առնչությամբ: Հետևաբար, եթե դատական ակտը չի ենթադրում կատարում, ապա դատական ակտի կատարման անհնարինության կամ կատարման գործընթացի դժվարացման մասին խոսք լինել չի կարող, ըստ այդմ նաև՝ բացակայում է հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ սույն գործով առկա չէ որևէ ապացույց կամ փաստական հիմնավորում, որը կարող է վկայել այն մասին, որ հայցի ապահովման միջոցի չկիրառումը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը: Հետևաբար թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջը բավարարելու դեպքում անգամ կայացվելիք դատական ակտի կատարման անհնարինության կամ կատարման գործընթացի դժվարության, այսինքն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերի առկայության մասին Վերաքննիչ դատարանի հետևություններն անհիմն են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» 14.07.2017 թվականի որոշումը և «օրինական ուժ տալ Դատարանի 17.05.2017 թվականի որոշմանը»:

2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ հայցի ապահովման միջոցները կարող են կիրառվել նաև ճանաչման հայցի դեպքում և այն չի սահմանափակում կատարում ենթադրող և կատարում չենթադրող պահանջներ ունեցող գործերի քննության ընթացքում հայցի ապահովման միջոց ձեռնարկելու հնարավորությունը: Հայցի ապահովումը դատարանի կողմից կիրառվող օրենքով նախատեսված դատավարական

միջոցներն են, որոնց նպատակն է հայցը բավարարելու դեպքում երաշխիքներ ապահովել հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար, քանի որ արդարադատությունը կկրի երևակայական բնույթ, եթե դատական ակտը մնա անկատար:

Տվյալ դեպքում «Արտադրա-Տպագրական» ՓԲԸ-ն Դատարան ներկայացված հայցադիմումով խնդրել է ճանաչել Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 48 հասցեի 3704,7քմ մակերեսով անշարժ գույքի նկատմամբ գրանցված «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման (սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2753194 վկայական) առ ոչինչ լինելը և վերացնել հետևանքները, ուստի հայցի ապահովման միջոց չձեռնարկելը կարող է հետագայում անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, քանի որ վիճելի անշարժ գույքի նկատմամբ կարող է կատարվել ցանկացած, այդ թվում՝ օտարման, գրավադրման գործողություն, ինչի հետևանքով հայցի բավարարման դեպքում խոչընդոտներ կստեղծվեն դատական ակտի կատարման առումով:

3. Վճռաբեկ դատարանի պարտավորությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերի շրջանակներում հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու իրավական հնարավորության վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը միաժամանակ պայմանավորված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ սույն վճռաբեկ բողոքը ներկայացնելու և վարույթ ընդունելու պահին գործող խմբագրությամբ 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. հայցի ապահովման ինստիտուտը կիրառելի է արդյո՞ք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ճանաչման հայցի հիման վրա հարուցված գործերով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովումը դատարանի կողմից կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց է, որի նպատակն է ներկայացված հայ-

ցի հնարավոր բավարարման դեպքում կայացվելիք դատական ակտի կատարման համար երաշխիքներ սահմանելը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարինության հանգամանքը (*յուն'ս*, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուրների կոմիտեի Սպան-դարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալնես Բոնաթրաքչն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/3511/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը: Ուստի հայցի ապահովման միջոց ձեռնարկելիս դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնի գործում առկա բոլոր այն հանգամանքերը, որոնք հիմնավորում են հայցի ապահովում չձեռնարկելու պարագայում դատական ակտի կատարման անհնարինությունը կամ դժվարացումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է վարչական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտի կիրառության շրջանակներն ու հիմքերը: Այսպես, նշված իրավադրույթի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հայցի ապահովումը կիրառվում է օրենքով հստակ կանխորոշված հետևյալ հայցատեսակների հիման վրա հարուցված գործերով.

- 1) պարտավորեցման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդված),
- 2) գործողության կատարման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդված),
- 3) ճանաչման հայց (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդված):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարությունում հայցի ապահովման միջոցները կարող են կիրառվել վերը թվարկված հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի բնության շրջանակներում՝ անկախ տվյալ հայցապահանջի բնույթից: Այսինքն՝ օրենսդրի տեսանկյունից հայցի ապահովման միջոց կիրառելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, թե տվյալ գործի հարուցման համար հիմք հանդիսացող հայցն ունի ճանաչողական, թե կատարողական բնույթ: Փաստորեն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե ներկայացված հայցապահանջների բնույթը, այլ հայցի ապահովման միջոց կիրառելու՝ օրենսդրի կողմից սահմանված հիմքերի առկայությունը, այսինքն՝ նման միջոցներ չձեռնարկվելու դեպքում դատական ակտի կատարումն անհնարին դարձնելու կամ դժվարացնելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ճանաչման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է ճանաչել «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի անվամբ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 48 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը և վերացնել հետևանքները: Գործի քննության ընթացքում «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն միջնորդել է ձեռնարկել հայցի ապահովման միջոց՝ արգելել Կոմիտեին և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին կատարելու Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ցանկացած, այդ թվում՝ օտարման և գրավադրման, գործողություններ: «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն իր միջնորդությունը պատճառաբանել է այն փաստարկով, որ մինչև սույն դատական գործի ավարտը նշված անշարժ գույքը կարող է օտարվել, գրավադրվել կամ գույքի նկատմամբ կարող են կատարվել այլ գործողություններ, ինչի հետևանքով ներկայացված հայցի բավարարման դեպքում խոչընդոտներ կստեղծվեն դատական ակտի կատարման համար (**գործի հավելված, հատոր 1-ին, գ.թ. 2-7, 217-218**):

Դատարանը մերժել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի միջնորդությունը՝ նշելով, որ «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի անվամբ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 48 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի բավարարման վերաբերյալ դատական ակտը կատարում չի պահանջում, ուստի օբյեկտիվորեն չի կարող ծագել նաև դրա կատարման անհնարինություն կամ կատարման գործընթացի դժվարացման հավանականություն: Հետևաբար Դատարանը գտել է, որ սույն գործով հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է (**գործի հավելված, հատոր 1-ին, գ.թ. 221-223**):

Վերաքննիչ դատարանը բավարարել է «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի վերաքննիչ բողոքը և վերացնելով Դատարանի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը՝ բավարարել է հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի միջնորդությունը՝ արգելելով Կոմիտեին ու «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին կատարելու Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողություններ:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ ճանաչման հայցի դեպքում հայցի ապահովման միջոցները կիրառելի են, քանի որ այդ հայցատեսակն օրենսդրի կողմից ներառված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասում: Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ սույն գործում առկա տեղեկություններով հաստատվում է, որ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը տարբեր գործարքների հիման վրա «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ից անցել է «Դանսիս» ՍՊԸ-ին, վերջինից էլ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին: Նշված տվյալների հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ մինչև սույն գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ գրավադրման գործողություններ կրկին կատարելը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել այդ դատական ակտի կատարումը (**գործի հավելված, հատոր 2-րդ, գ.թ. 44-50**):

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում

է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ «Պրոմթեյ բանկ» ՓԲԸ-ի անվամբ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 48 հասցեի անշարժ գույքի նկատմամբ թիվ 2753194 սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ հիմնական հայցապահանջը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հանդիսանում է ճանաչման հայց: Հետևաբար սույն գործով կարող են կիրառվել հայցի ապահովման միջոցներ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ հայցի ապահովման միջոց կարող է կիրառվել պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցատեսակներից որևէ մեկի հիման վրա հարուցված գործերի դեպքում՝ անկախ տվյալ հայցապահանջի բնույթից: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հայցի ապահովման ինստիտուտը կիրառելի է սույն գործով ներկայացված հայցատեսակի շրջանակներում:

Մինևույն ժամանակ անդրադառնալով սույն գործով հայցի ապահովման միջոց կիրառելու իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են: Այսպես, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումն արգելվել է որևէ կերպ չի կարող նպաստել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարմանը, իսկ նշված միջոցները չձեռնարկվել չի կարող խոչընդոտել կամ անհնարին դարձնել այդ դատական ակտի կատարումը:

Նախ՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն գործով «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ն, ներկայացնելով հայցի ապահովում կիրառելու միջնորդություն, չի ներկայացրել որևէ փաստական հիմք կամ հիմնավորում, որը կարող է վկայել այն մասին, որ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը չարգելվել է կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի միջնորդությունը, ևս չի մատնանշել որևէ փաստական հիմնավորում այն մասին, որ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը չարգելվել է կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու հիմքերի առկայության մասին Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը հիմնված է այն փաստարկի վրա, որ մինչև սույն գործի հարուցումը Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքը տարբեր գործարքների միջոցով «Պրոմթեյ բանկ» ՓԲԸ-ից անցել է «Դանսիս» ՍՊԸ-ին, վերջինից էլ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործի հարուցումից առաջ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերերի փոփոխությունը չի կարող բավարար հիմք հանդիսանալ հայցի ապահովման միջոցի շրջանակներում այդ անշարժ գույքի նկատմամբ օտար-

ման և գրավադրման գործողությունների կատարումն արգելելու համար, քանի որ հայցի ապահովման միջոցի կիրառումն ուղղված է ապագայում կայացվելիք դատական ակտի կատարման ապահովմանը և չի կարող պայմանավորված լինել վիճելի գույքի առնչությամբ տարբեր սուբյեկտների կողմից նախկինում կնքված գործարքների ուժով այդ գույքի սեփականատերերի փոփոխությամբ:

Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օտարման և գրավադրման գործողությունների կատարումը կամ չկատարումը չի կարող առնչվել նշված անշարժ գույքի նկատմամբ «Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչելու վերաբերյալ դատական ակտի կատարման հետ: Նշված դատողության համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված իրավակարգավորումների բովանդակությունը: Այսպես, նշված օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտը չկատարելը չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն այն անձանց համար, ում հասցեագրված է: Առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Փաստորեն, սեփականության իրավունքի պետական գրանցման առ ոչինչ լինելը ճանաչող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որով ըստ էության հաստատվում են առ ոչինչ վարչական ակտի՝ ընդունման պահից իրավաբանական ուժ չունենալու և կատարման կամ կիրառման ենթակա չլինելու հանգամանքները, ինքնին պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, իսկ առ ոչինչ ճանաչված վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետևաբար սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարման հնարավորության և Երևան քաղաքի Իսակովի պողոտա թիվ 48 (48/5) հասցեում գտնվող անշարժ գույքի օտարման կամ գրավադրման արգելքի միջև իրավաբանական կապ առկա չէ: Այսինքն՝ սույն գործով «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի կողմից պահանջվող հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդության բավարարման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, քանի որ տվյալ դեպքում առկա չեն բավարար փաստական հիմքեր առ այն, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել սույն գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը: Այսպիսով, թեև Դատարանը սխալ է պատճառաբանել հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի միջնորդությունը մերժելու վերաբերյալ իր որոշումը, այդուհանդերձ եկել է ճիշտ եզրահանգման հայցի ապահովման միջոց ձեռնարկելու հարցի դատավարական ելքի վերաբերյալ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա չեն եղել բավարար հիմքեր Դատարանի 17.05.2017 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները՝ ճանաչման հայցի դեպքում հայցի ապահովման միջոցի առհասարակ կիրառելի լինելու մասով, մասնակի հաստատվում են, իսկ վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները՝ սույն գործով հայցի ապահովման միջոց ձեռնարկելու իրավաչափության մասով, հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.07.2017 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. ՀՀ վարչական դատարանի 17.05.2017 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ՀՈՒՆՎԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018

ՀԱՏՈՐ XII

Տպագրված է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում
(Time to Print օպերատիվ տպագրության սրահ)

ՀՀ, ք. Երևան 0001, Խանջյան 15/55
Հեռ.՝ (+374) 10 547 656, 11 547 656, 99 547 656
Էլ. փոստ՝ info@task.am